Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Հարգելի՛ ընթերցող,

«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» **(ԱԵԳՄՄ)** հասարակական կազմակերպությունն իր գործունեության յոթուկես տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող **«Արցախի էլեկտրոնային գրադարան»** կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:

Ներկայումս կայքում առկա նյութերի քանակն անցել է 12.100-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 5.770-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱՐ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» **(UYSSA)** NGO has initiated more than four dozen programs during the seven and a half years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 12.100, and the number of authors of materials - 5.770.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!

Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» **(ОМУСА)** в течение своей семи с половиной лет деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 12.100, а количество авторов материалов - 5.770.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ ◈ SCIENTIFIC ARTSAKH ◈ НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(14), 2022

ISSN 2579-2652

«ԱՐՑԱԽ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«HI-AM» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(14), 2022

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(14), 2022

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը զետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The journal **«Scientific Artsakh»** is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The journal **«Scientific Artsakh»** is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2022

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկ Աբրահամ ՄԱԼԽԱՍՅԱՆ, աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր **(Նյու Յորք, ԱՄՆ)**
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ամիթ ՉԱԲՐԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Նյու Յորք, ԱՄՆ)**
Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր **(Նյուրենբերգ, Գերմանիա)**
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Քրիստիան դը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Լոնդոն, Մեծ Բրիտանիա)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(14), 2022, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2022, 284 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2022 թ. 3-րդ (14-րդ) համարի տպագրությանն աջակցել են «Hi-Am» բարեգործական հիմնադրամը և Սերգեյ Գևորգյանը (ք.Օտտավա, Կանադա):

ISSN 2579-2652 (Print)
ISSN 2738-2672 (Online)

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), 2018-2022

Published by the Yerevan State University Academic Council Decision.

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the Journal «Scientific Artsakh».

EDITORIAL COUNCIL

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D. in Philology, Associate Professor

Members:
Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Amit CHHABRA, Doctor of Law, Professor **(New York, USA)**
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Manuk Abraham MALKHASYAN, Doctor of Theology, Professor **(New York, USA)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor
Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) **(Nuremberg, Germany)**
Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor
Christian de VARTAVAN, Doctor of History **(London, Great Britain)**
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, №3(14), 2022, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2022, 284 pages.

The publication of the 3rd (14th) 2022 Journal «Scientific Artsakh» was supported by «Hi-Am» Charity Foundation and Serguei Guevorkian (Ottawa, Canada).

Издается решением учёного совета Ереванского государственного университета.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах».

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук **(Лондон, Великобритания)**
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, доктор культурологии, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Манук Авраам МАЛХАСЯН, доктор богословия, профессор **(Нью-Йорк, США)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук **(Нюрнберг, Германия)**
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Рубен САФРАСТЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор
Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор **(Нью-Йорк, США**

Научный Арцах, №3(14), 2022, Ереван, Издательство «АРЦАХ», 2022, 284 страниц.

Публикация 3(14) номера 2022 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии благотворительного фонда «Hi-Am» и Сергея Геворкяна (г.Оттава, Канада).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS СОДЕРЖАНИЕ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Էդգար Էլբակյան, Ալեքսան Հակոբյան. Արցախի Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարի զեկուցագիր-տեղեկանքը՝ որպես շրջանի վերաբնակեցման պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուր (հայերեն)……10
Edgar Elbakyan, Aleksan Hakobyan. A Report by the Head of Kashatagh Province of Artsakh as a Primary Source for Repopulation Process History (in Armenian)
Эдгар Элбакян, Алексан Акопян. Доклад главы Кашатахксой районной администрации Республики Арцах как первоисточник по истории переселения (на армянском)

Արմեն Խաչիկյան. Ժողովրդագրական մարտահրավերները ՀՀ և Արցախի պաշտպանական հնարավորությունների համատեքստում (հայերեն)……20
Armen Khachikyan. Demographic Challenges in the Context of RA and Artsakh Defense Capabilities (in Armenian)
Армен Хачикян. Демографические вызовы в контексте обороноспособности РА и Арцаха (на армянском)

Գայանե Հովհաննիսյան. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները 1940-1950-ական թթ. (հայերեն)……35
Gayane Hovhannisyan. Factors Determining the Demographic Picture of the Nagorno-Karabakh Autonomous Region (1940s-1950s) (in Armenian)
Гаяне Оганнисян. Факторы, определяющие демографическую картину Нагорно-Карабахской Автономной Области в 1940-1950-х годах (на армянском)

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Հայկ Մկրտչյան. Հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու որոշ հիմնախնդիրները ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում (հայերեն)……49
Hayk Mkrtchyan. The Criminal Characteristics of Causing Damage to a Person who Committed an Illegal Offense in the Context of the New Criminal Code of the Republic of Armenia (in Armenian)
Айк Мкртчян. Уголовно-правовая характеристика причинения вреда лицу, совершившему противоправное деяние в контексте нового уголовного кодекса Республики Армения (на армянском)

Էդգար Ավետիսյան. Հատուկ տեղեկատվության ազատության ապահովումն ու պաշպանությունը ՀՀ-ում եվրոպական և միջազգային չափորոշիչների լույսի ներքո (հայերեն)……58
Edgar Avetisyan. Ensuring and Protecting Freedom of Special Information in RA in the Light of European and International Standards (in Armenian)
Эдгар Аветисян. Обеспечение и защита свободы специальной информации в РА в свете европейских и международных стандартов (на армянском)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Կատերինա Ալթունյան. Պետության զարգացման հնարավորությունների և էլիտայի որակի չափման գլոբալ ցուցիչը(հայերեն)……..……..……..68
Katerina Altunyan. Global Index for Measuring State Development Opportunities and Elite Quality (in Armenian)
Катерина Алтунян. Глобальный индекс для измерения возможностей развития государства и качества элиты (на армянском)

Տիգրան Հարությունյան. Պաշտպանական քաղաքականության ներառումը ՀՀ անվտանգային համակարգում(հայերեն)……..……..78
Tigran Harutyunyan. Inclusion of Defence Policy in the Security System of the Republic of Armenia (in Armenian)
Тигран Арутюнян. Включение оборонной политики в систему безопасности Республики Армения (на армянском)

Գևորգ Ղուկասյան. Էթնիկ լոբբինգը, որպես անդրազգային դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը (հայերեն)……..……..88
Gevorg Ghukasyan. Ethnic Lobbying as a Transnational Actor: the Challenge of the Duality of Diaspora Elites (in Armenian)
Геворг Гукасян. Этнический лоббизм как транснациональный актор: проблема двойственности элит диаспоры (на армянском)

Գոռ Պետրոսյան. Վրաստանի շուրջ ձևավորված պատժամիջոցային հանգույցի ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջայնացման գործընթացի վրա (հայերեն)……106
Gor Petrosyan. The Impact of the Sanctions Knot around Georgia on the Regionalization Process in the South Caucasus (in Armenian)
Гор Петросян. Влияние санкционного узла вокруг Грузии на процесс регионализации на Южном Кавказе (на армянском)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Տաթևիկ Մանուկյան. Քրդական գործոնը Թուրքիայի սիրիական քաղաքականության առանցքում. անփոփոխ նկրտումներ, փոխակերպվող առաջնահերթություններ (հայերեն)……..113
Tatevik Manukyan. Kurdish Factor in the Framework of the Syrian Policy of Turkey. Constant Ambitions, Changing Priorities (in Armenian)
Татевик Манукян. Курдский фактор в основе сирийской политики Турции. неизменные амбиции, трансформирующиеся приоритеты (на армянском)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Սոնա Հակոբյան. Անգլերենի ստանդարտացված թեստավորումների առանձնահատկությունների և ՀՀ-ում դրանց նախապատրաստական դասընթացների արդյունավետ կազմակերպման մեթոդաբանության շուրջ (հայերեն)……..……134
Sona Hakobyan. English Standardized Tests and Guidelines of Organizing Effective Preparatory Courses in the Republic of Armenia (in Armenian)

Сона Акопян. Стандартизированные тесты по английскому языку и методы организации эффективных подготовительных курсов в Республике Армения (на армянском)

Լալա Գրքիկյան. Ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը (հայերեն)……146
Lala Grkikyan. Univalent Intransitive Verbs with Objective Valency in Modern Armenian (in Armenian)
Лала Гркикян. Одновалентные непереходные глаголы с объектной валентностью в современном армянском языке (на армянском)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Քրիստինե Մելքումյան. Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» դասագիրքը (1788 թ.) (հայերեն)……...157
Kristine Melkumyan. Kleopatra Sarafyan’s Textbook «The Book Called the Key Knowledge» (1788) (in Armenian)
Кристине Мелкумян. Учебник Клеопатры Сарафян «Книга, призывающая к ключевой науке» (1788г.) (на армянском)

Սիրանուշ Փարսադանյան. Հայկ Նահապետի կերպարը Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններում (հայերեն)……..……164
Siranush Parsadanyan. The Image of Hayk Nahapet in the Works of Hovhannes Vanandetsi (in Armenian)
Сирануш Парсаданян. Образ Айка Наапета в творчестве Ованеса Ванандеци (на армянском)

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

Արսեն Լոքյան, Սվետլանա Բաղդասարյան. «Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունների և իմաստային տարբերակվածության շուրջ (հայերեն)……173
Arsen Lokyan, Svetlana Baghdasaryan. «Combat Activity» and «Combat Ability»: Application, Specifics and Semantic Differentiation (in Armenian)
Арсен Локян, Светлана Багдасарян. О специфике и семантической дифференциации терминов «боевая активность» и «боеспособность» (на армянском)

Սիլվի Թարջումանյան. Ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց կենսա-իմաստային կողմնորոշումների և ինքնագնահատականի փոխհարաբերակցությունը (անգլերեն)……..……184
Silvi Tarjumanyan. The Interrelationship of Meaning-Life Orientations and Self-Esteem among People with Parental Deprivation (in English)
Сильви Тарджуманян. Взаимосвязь смысложизненных ориентаций и самооценки у людей с родительской депривацией (на английском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Սուրեն Ավետիսյան, Վարդուշ Գյոզալյան. Մարդկային զարգացման՝ կրթական բաղադրիչով պայմանավորված հիմնախնդիրները ՀՀ-ում (հայերեն)……...191
Suren Avetisyan, Vardush Gyozalyan. Human Development Problems in RA Caused by Educational Component (in Armenian)
Сурен Аветисян, Вардуш Гёзалян. Проблемы человеческого развития в РА обусловленные образовательным составляющим (на армянском)

Քրիստինե Արշակյան. Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները (հայերեն)……...……204
Kristine Arshakyan. The Effects of Components and Development Challenges of the Armenian Startup Ecosystem (in Armenian)
Кристине Аршакян. Влияние компонентов армянской стартап-экосистемы и проблемы ее развития (на армянском)

Լուսինե Ծպնեցյան. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատումը (հայերեն)……223
Lusine Tspnetsyan. Quantitative Assessment of the Influence of Factors Determining the Competitiveness of Agriculture in the Republic of Armenia (in Armenian)
Лусине Цпнецян. Количественная Оценка Влияния Факторов, Обуславливающих Конкурентоспособность Сельского Хозяйства Республики Армения (на армянском)

Լիլիթ Մանուկյան. Տաղանդների կառավարման համակարգի առանձնահատկությունները ՀՀ առևտրային բանկերում (հայերեն)……232
Lilit Manukyan. Features of the Talent Management System In Commercial Banks of the Republic of Armenia (in Armenian)
Лилит Манукян. Особенности системы управления талантами в коммерческих банках Республики Армения (на армянском)

Մարտին Տոնիկյան. Բանկային համակարգում ակտիվների որակի դետերմինանտները (ռուսերեն)……..246
Martin Tonikyan. Asset Quality Determinants in Banking System (in Russian)
Мартин Тоникян. Детерминанты качества активов в банковской системе (на русском)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Վարդուհի Սարգսյան. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների որոշ արդի հիմնախնդիրները (հայերեն)……258
Varduhi Sargsyan. Some Current Problems of RA Penitentiary Institutions (in Armenian)
Вардуи Саргсян. Некоторые текущие проблемы уголовно-исполнительные учреждений РА (на армянском)

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, РЕЦЕНЗИИ, REVIEWS

Թեհմինա Մարության. «Գրականագիտական ուսումնասիրություններ. Ա» (Ե., ՎՄՎ-Պրինտ հրատ., 2022թ., 303 էջ (հայերեն)……271

А. Авчян, В. Восканян, Учебник Талышского языка, Ереван, Издательство ЕГУ, 2022, 214 С. (на русском)……..……276

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները ……..…278
The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH» ……..……280
Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»……..……281

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ԱՐՑԱԽԻ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ-ՏԵՂԵԿԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ* [1]

ՀՏԴ 94 (930.25) *10.52063/25792652-2022.3.14-10*

ԷԴԳԱՐ ԷԼԲԱԿՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
ՀՀԻ ռազմավարական հետազոտությունների
ԳՀ լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
elbakyan.edgar@ysu.am

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
jakobialex@yahoo.com

Սույն հոդվածը քննության է առնում Քաշաթաղի շրջանի և վերաբնակեցման պատմությանը վերաբերող մի սկզբնաղբյուրային նշանակության փաստաթուղթ: Վերջինս զեկուցագիր-տեղեկանք է, որ կազմվել է 2003 թ. մայիսին շրջանի վարչակազմի ղեկավար Ալեքսան Հակոբյանի կողմից և վերնագրված է՝ «Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների ժամանակավոր գրանցումները շարունակելու արդյունավետության մասին»: Փաստաթուղթը կցվել է կառավարության որոշման նախագծին՝ որպես փորձագիտական-ապացուցողական հիմնավորում: Ժամանակավոր գրանցումը թույլ էր տալիս վերաբնակչին պահպանել նախորդ գրանցման վայրում գրանցումը՝ զուգահեռաբար ստանալով ժամանակավոր գրանցում նոր վայրում: Այս կարգը գործում էր միայն Քաշաթաղի շրջանում և ընկած էր եղել վերջինիս ստեղծման հիմքում՝ որպես վերաբնակեցման գործիքակազմի մաս: Պատմական այս ժամանակաշրջանում, երբ փոխվում էր Քաշաթաղի շրջանի դե-ֆակտո վարչական կարգավիճակն Արցախի և Հայաստանի Հանրապետությունների ընդհանուր կառուցվածքում՝ տանելով դեպի շրջանի լիակատար ինկորպորացիա արցախյան վարչատարածքային և ներպետական համակարգին, քննարկվում էր վերաբնակիչներին տրվող ժամանակավոր գրանցման համակարգը չեղարկելու հարցը:

* Հոդվածը ներկայացվել է 14.09.2022թ., գրախոսվել՝ 19.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-074 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հոդվածի նպատակն է բացահայտել հետազոտության օբյեկտ հանդիսացող փաստաթղթի վարչական-բյուրոկրատական, ինչպես նաև քաղաքական նշանակությունը: Հոդվածի հետազոտական խնդիրները կոչված են պատասխանելու այն հարցերին, թե ինչ պայմաններում է կազմվել այդ փաստաթուղթը, ինչ վիճակագրական տվյալներ է պարունակում վերաբնակեցման պատմության համար և ինչ քաղաքական խնդիրներ լուծելու համար է ստեղծվել:

Մեր կողմից որդեգրված համակարգային և խոսույթային վերլուծության մեթոդները թույլ են տվել քաղաքագիտության և սոցիոլոգիայի դիտանկյուններից վերհանելու պատմական մեծ համատեքստում այս փաստաթղթի դերը, դրանում արծարծված համատեքստային դրսևորումները, ինչպես նաև վիճակագրական սկզբնաղբյուրի նշանակությունը:

Հետազոտության արդյունքում ցույց է տրվում, որ փաստաթուղթն ունի ապացուցողական-ջատագովաբանական նշանակություն և կոչված է պատմական անցյալի արժևորման միջոցով լեգիտիմացնելու վերաբնակեցման հետ կապված քաղաքական ագենտներին:

Հիմնաբառեր՝ *վերաբնակեցում, Քաշաթաղի շրջան, ժամանակավոր գրանցում, Շահումյանի շրջան, Բերձոր, Քարվաճառ, լեգիտիմություն, իշխանափոխություն:*

Մուտք

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից և ծավալված ռազմական գործողություններից հետո հայկական կողմի փաստացի ենթակայության և 2006 թ.-ից ներպետական օրենսդրությամբ արցախյան իրավազորության տակ անցան նախկին Ադրբեջանական ԽՍՀ Քյալբաջարի, Լաչինի, Ղուբաթլուի, Զանգելանի (ամբողջությամբ), Ջաբրայիլի, Ֆիզուլու և Աղդամի (մասնակի) շրջանների տարածքները: Այս տարածքներից Քյալբաջարի տեղում (որոշ փոփոխություններով) ձևավորվեց Շահումյանի (Քարվաճառի) շրջանը, իսկ Լաչինի, Ղուբաթլուի և Զանգելանի շրջանները միավորվեցին Քաշաթաղի շրջանի տարածքի մեջ, որ կազմավորվել է 1993 թ. դեկտեմբերի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ (ԼՂՀ ՊՊԿ հ. 335 որոշում): Մեկ օր անց՝ դեկտեմբերի 3-ին, ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի[1] որոշմամբ Քաշաթաղի շրջանում ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ նշանակվեց Ալեքսան Հակոբի Հակոբյանը (նույն տեղում): Քաշաթաղի շրջանի կենտրոնը դարձավ վերանվանված Բերձոր քաղաքը:

Սկսած 1992 թ.-ից սպորադիկ, իսկ 1994 թ.-ից ՀՀ կառավարության մասնակցությամբ մեկնարկեց գերազանցապես ՀՀ բնակավայրերից դեպի Քաշաթաղի, ապա նաև Շահումյանի (Քարվաճառի) շրջաններ բնակչության վերաբնակեցումը: Այս գործընթացի արդյունքում նշված երկրամասերում հիմնվել են 100-ից ավելի նոր գյուղեր և 5 նոր քաղաքներ: 2000-ական թվականների սկզբից պայմանավորված մի կողմից՝ ՀՀ-ում բնակչության կենսամակարդակի ընդհանուր բարձրացմամբ, ինչպես նաև քաղաքական սերնդափոխությամբ, փոփոխվում են վերաբնակեցման գործընթացի հանդեպ ռազմավարական մոտեցումները, ծայր է առնում նոր վերաբնակիչների զանգվածային արտահոսք դեպի հին բնակության շրջաններ: Հետագա տարիներին զանգվածային վերաբնակեցման գործընթացը հիմնականում փոխարինվել է «տեղային» լուծումներով, այն է՝ ըստ տեղերում առկա որակավորված մասնագետների պահանջարկի թիրախային հրավերներով: 2020 թ.

[1] ԼՂՀ ՊՊԿ – ճգնաժամային կառավարման բարձրագույն մարմին Արցախում 1992-1994 թթ.: Կազմված էր 7 անդամից, նախագահն էր Ռոբերտ Քոչարյանը:

Արցախյան երրորդ պատերազմի (սեպտեմբերի 27 – նոյեմբերի 9) արդյունքում ՀՀ-ՌԴ-ԱՀ ղեկավարների եռակողմ գրավոր հայտարարության դրույթներով և դրանից հետո այդ տարածքներն ամբողջությամբ անցել են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ, իսկ բնակչությունը ենթարկվել է էթնիկ զտման և տեղահանության:



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 1993թ. հ.335

Ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին:

Ի կատարումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության 1993 թվականի դեկտեմբերի 3-ի ,,Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմում Քաշաթաղի շրջան ստեղծելու մասին,, որոշման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեն ո ր ո շ ու մ է՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ նշանակել Ալեքսան Հակոբի Հակոբյանին:

2. Հաստատել ԼՂՀ Քաշաթաղի շրջանում ԼՂՀ ՊՊՆ լիազոր ներկայացուցչի կառուցվածքը /կցվում է/:

ԼՂՀ ՊՊՆ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԼՂՀ ՆԽ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ Վ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Նկար 1. **«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի որոշումը**

1993-2004 թթ. տարիները համընկնում են Ա. Հակոբյանի ղեկավարման շրջանին և բնորոշվում են որպես զանգվածային վերաբնակեցման քաղաքականություն: Մեր ձեռքի տակ առկա «Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների ժամանակավոր գրանցումները շարունակելու արդյունավետության մասին» զեկուցագիր-տեղեկանքը,

որը հեղինակել է Ա. Հակոբյանը և թվագրված է 2003 թ. մայիսի 20, պահպանվում է հեղինակի անձնական արխիվում և անգնահատելի տեղեկություններ է պարունակում այդ տարիներին վերաբնակեցման և Քաշաթաղի ճակատագրի շուրջ ներէլիտար քննարկումների վերհանման տեսանկյունից: Պատմական այս շրջանում, երբ փոխվում էր Քաշաթաղի շրջանի դե-ֆակտո վարչական կարգավիճակն Արցախի և Հայաստանի Հանրապետությունների ընդհանուր կառուցվածքում՝ տանելով դեպի շրջանի լիակատար ինկորպորացիա արցախյան վարչատարածքային և ներպետական համակարգին, քննարկվում էր վերաբնակիչներին տրվող ժամանակավոր գրանցման համակարգը չեղարկելու հարցը: Ժամանակավոր գրանցումը թույլ էր տալիս վերաբնակչին՝ պահպանել նախորդ գրանցման վայրում գրանցումը՝ զուգահեռաբար ստանալով ժամանակավոր գրանցում նոր վայրում: Այս կարգը գործում էր միայն Քաշաթաղի շրջանում և ընկած էր եղել վերջինիս ստեղծման հիմքում՝ որպես զանգվածային վերաբնակեցման գործիքակազմի մաս: Մենք քաղաքագիտության և սոցիոլոգիայի տեսանկյուններից համակարգային և խոսույթային վերլուծության ենք ենթարկել այս փաստաթուղթը՝ նպատակ ունենալով վերջինիս մեջ ամփոփված տեղեկությունների միջոցով լույս սփռել Քաշաթաղի պատմության առաջին շրջանի վրա:

Քննարկում և արդյունքներ

Հետազոտության առարկա հանդիսացող փաստաթղթի համակողմանի ուսումնասիրությունն անհնար է առանց այն մեծ համատեքստը ձևավորող քաղաքական իրակությունների քննության, որոնք ներկայացնում են տվյալ փաստաթղթի, այսպես ասած, «դարաշրջանը»: Այդ իրակությունները երկշերտ են և պայմանավորված են առաջին մակարդակում 1998 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած խաղաղ, արտահերթ իշխանափոխությամբ և երկրորդ մակարդակում՝ Քաշաթաղի շրջանի վրա այդ իշխանափոխության թողած ազդեցությամբ: Այսպես՝ չնայած շրջանն ի սկզբանե Արցախի կազմում էր՝ ընդհուպ մինչև 2002 թ.-ը, ֆինանսավորումն իրականացվում էր առավելապես ՀՀ-ից: Համապատասխանաբար ֆինանսական հաշվետվությունը ևս ներկայացվում էր ՀՀ-ին, իսկ վարչականը՝ Արցախին: 2002 թ.-ից ֆինանսավորումը ևս սկսել է իրականացվել Ստեփանակերտից (Հարցազրույց Ա. Հակոբյանի հետ): Այս փոփոխությունները տեղի էին ունենում հայաստանյան՝ վերը հիշատակված իշխանափոխության արդյունքում՝ պետականության հետագա և նորովի ինստիտուցիոնալացման համաշարում, որի պայմաններում Քաշաթաղն իր ոչ ստանդարտ կարգավիճակով ընկալվում էր որպես «համակարգից դուրս»:

Պատմա-քաղաքագիտական գրականության մեջ կա համաձայնություն առ այն, որ արտահերթ կամ հեղափոխական իշխանափոխությունները հանգեցնում են ոչ միայն իշխող անձանց վերնախավի, այլև ամբողջ քաղաքական, իսկ երբեմն էլ՝ հասարակական հանրակարգերի (ինստիտուտների) փոփոխությանը (Tiruneh 2; Lachapelle et al. 8-9): 1998թ. Հայոց համազգային շարժում կուսակցությանը քաղաքական լուսանցք մղած լինելով՝ նոր իշխանությունը վերջինիս գործուն անդամ Ա. Հակոբյանին և նրա ղեկավարած Քաշաթաղի շրջանն ու դրան բնորոշ յուրահատկությունները համարում էր պետականության նոր կարգերին ոչ համահունչ:

Ահա այսպիսի համաշարում խոսքի առարկա փաստաթուղթն ընթացիկ վարչարարական նշանակությունից զատ՝ վերածվում է մի յուրատեսակ ջատագովաբանական տրակտատի, որի նպատակը սեփական ճշմարտացիության և սեփական լեգիտիմության հավաստումն է: Վերջինս իրականացվում է անցյալին կատարվող պարբերական հղումներով՝ կառուցարկելով յուրատեսակ «լեգիտիմություն ժառանգության միջոցով» տեսակերպ: Վերջինիս պարագայում արժևորվում են քաղաքական ագենտի՝ անցյալում կատարած արարքները, քայլերն ու ծրագրերը՝ դրանից բխեցնելով ներկայում և ապագայում իր ղեկավարելու

ճշմարտացիությունն ու նպատակահարմարությունը, այն է՝ լեգիտիմությունը (օրինակարգությունը): Ըստ որում՝ հաճախ այդ լեգիտիմությունը հայցվում է հենց լեգիտիմացման աղբյուր ներկայացվող անցյալի ժառանգության պաշտպանության և շարունակման համար: Այս պարագայում առաջնային նշանակություն է ստանում տեքստերի, պատումի (նարատիվ) և խոսույթի (դիսկուրս) մակարդակում և հանրային հիշողության մեջ այդ ժառանգությունն արժևորելը:

Ասվածն ամբողջությամբ համահունչ է հանրային հիշողության կառուցարկման և պատմական դրվագների միջոցով առաջնորդության հիմնավորման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսական հիմնադրույթների հետ: Այսպես՝ Վորվիկի համալսարանի բիզնես դպրոցի հանրային առաջնորդության մասնագետ Քեյթ Գրինտը կարծում է, որ հնագույն ժամանակներից սկսած՝ առաջնորդության մասին մեր պատկերացումները հիմնված են գրավոր տեքստերի վրա, որից բխում է ուղիղ կապը գրավոր տեքստի և առաջնորդության ընկալման միջև՝ լինի դա ռազմական առաջնորդների, թե քաղաքական խմբերի դեպքում (Grint 3): Ավելին՝ նույն հեղինակի կարծիքով՝ հենց պատմական դրվագների միջոցով է տարորոշվում լավ և վատ առաջնորդությունը (Jimenez-Luque 2): Իսկ արդեն պատմական դրվագների շուրջ հանրային հիշողությունը և ընկալումները ձևավորվում են սոցիալական ագենտների միջև փոխշփումների, այդ թվում՝ մրցակցության արդյունքում՝ հաշվի առնելով, որ վերջին ատյանի ճշմարտություն լինելու համար շատ հաճախ պայքարում են մեկից ավելի «ճշմարտություններ» (Fairhurst and Grant 174): Այս սոցիալ-կոնստրուկտիվիստական հիմնադրույթից էլ հենց բխում է, որ լինելով սոցիալական կերտածո՝ պատմական հիշողությունը կարող է ազդել ներկայի և ապագայի վրա՝ վերածվելով կամ ստատուս քվոյի պահպանման, կամ փոփոխության հարուցման աղբյուրի (Jimenez-Luque 2): Մեր կողմից հետազոտվող փաստաթղթի դեպքում համաձայն Ա. Խիմենես-Լուկեի տեսական ձևակերպման՝ ստատուս-քվոյի և փոփոխության պայքարի պայմաններում փորձ է արվում պատմական փաստերի շուրջ գրավոր հիշողության և «լեգիտիմություն ժառանգության միջոցով» տեսակերպի կառուցարկման շնորհիվ պահպանել ստատուս-քվոն, այն է՝ ժամանակավոր գրանցումների համակարգը:

Դա արվում է ինչպես անցյալի օրենսդրական ակտերին կրկնվող հղումներով («*վերաբնակեցման կառավարական մայր որոշումների … դրույթներով…*», «*… մեր երկրի բարձրագույն ղեկավարության կողմից* ***խորապես մտածված և սահմանված կարգով*** (ընդգծումը մերն է – Է.Է., Ա.Հ.), *1994 թ. փետրվարի 7-ի հմր 68գ կառավարական որոշման 5-րդ կետի համաձայն*»), այնպես էլ փաստարկումների հերթագա թվարկումով: Փաստարկումների հիմնական տեսակը գործառնական բնույթի է՝ նպատակ ունենալով ցույց տալ պաշտպանվող համակարգի՝ վերաբնակեցման գործում ունեցած և ունենալիք արդյունավետությունը: Այսպես՝ «*Ժամանակավոր գրանցումն առաջին հերթին ունի աշխատանքային մեխանիզմի նշանակություն: Վերաբնակչին այն թույլ է տալիս իր բնավորվելու վերջնական վճիռը կայացնել ոչ թե նոր բնակության վայր տեղափոխվելուց առաջ, ինչպես որ, փաստորեն, ստիպված են անել ԼՂՀ այլ շրջանների վերաբնակիչները մշտական գրանցման պատճառով (դրա բոլոր բացասական հետևանքներով), այլ տեղափոխվելուց հետո՝ վերաբնակեցման սկզբնական՝ բնավորման փուլում, ինչքան էլ որ դա երկար տևի*»,– նշված է փաստաթղթում: Այս փաստարկումների շարքում հեշտ է հանդիպել նաև ԽՍՀՄ շրջանից եկող և 1990-ական թթ. շարունակվող պատերնալիստական պետականաշինության ոգուն բնորոշ հիմնավորումներ: Դիցուք՝ «*… ժամանակավոր գրանցումը նաև ամենակարևորն է արտոնությունների շարքում, քանի որ արձանագրում է վերաբնակեցման նկատմամբ պետության որոշակի վերաբերմունքը: Հենց դա է ցույց տալիս, որ պետությունը վերաբնակեցման պատասխանատվությունը չի թողնում միայն վերաբնակչի վրա, այլ շարունակաբար պահում է իր ձեռքում: Դրանով է նա համոզում վերաբնակչին, որ անկախ նրանից, թե*

վերջինս երբ է կայացնելու վերջնական բնավորման իր կամավոր վճիռը (մշտական գրանցման ակտով), ինքը՝ պետությունը, վերաբերվում է նրան անվերապահ «ավանսային» հարգանքով և օժտում նոր բնակավայրի քաղաքացու բոլոր իրավունքներով… Սրանով է փոխհատուցվում այն օբյեկտիվ ու մարդկայնորեն հասկանալի մինուսը, որը սպառնում է վերաբնակեցման պատվավոր պատասխանատվություն ստանձնած հայ մարդուն: Սա է ամենակարևորը, որը վերաբնակեցման գործը դարձնում է իրոք կամավոր, որը վերաբնակեցվողին տունը և առաջին արտոնությունները ստանալուց հետո չի գցում «թակարդն ընկածի» վիճակի մեջ և այդպիսով դարձնում վախեցած ու բողոքավոր… Սա է առավել ևս, որ հնարավորություն է տալիս վերաբնակչին և ինչ-որ չափով հոգեբանորեն ստիպում նրան ապրել ու անձնական անսպառ ներդրումներ կատարել այն ծանր քաշաթաղյան պայմաններում, երբ հատկացվող տունն իրականում կիսաավերակ է, իսկ կոմունիկացիաներն ու կրթա-մշակութային ենթակառուցվածքները՝ դեռ նոր-նոր ստեղծվող»:

Հաշվի էր առնվում նաև կարճաժամկետ օգուտի և երկարաժամկետ վնասի փոխհարաբերակցությունը. «*Բոլոր դեպքերում՝ վերաբնակեցման տեսությունը պահանջում է պահպանել չբնավորվող վերաբնակների ետ վերադարձի հեշտացված մեխանիզմներ, որոնք պիտի հնարավորին չափ բացառեն վերաբնակվելու պատասխանատվության նկատմամբ տագնապը և դրանով վերաբնակեցման գործընթացի մեջ ներառվելու դաշտ ստեղծեն հասարակության բոլոր խավերի ու խմբերի համար… Մյուս կողմից՝ ետ վերադարձի հեշտացված պայմանները պետք է բավարար լինեն, որպեսզի չհաջողված (չբնավորված) վերաբնակիչների պատճառով հայկական հասարակության մեջ չառաջանա բողոքի կամ անբարյացակամության միտում վերաբնակեցման պետական (թեկուզ և գաղտնի կամ քիչ ռեկլամվող) ծրագրի ու աշխատանքների նկատմամբ: Իսկ ժամանակավոր գրանցումը, ինչպես ասվեց, դրա ամենակարևոր գրավականն է*»: Ասելիքն առավել հիմնավոր դարձնելու համար ներկայացվում էին նաև իրավաքաղաքական փաստարկներ առ այն, որ «*մշտական գրանցումը … սահմանադրական պարտադիր նորմ չէ*», և որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջազգային դիվանագիտական չլուծվածության պարագայում ժամանակավոր գրանցումն ավելի ճկուն և արդյունավետ մեխանիզմ է «*և՛ ներքին ու արտաքին շրջանառության տեսանկյունից, և՛ վերաբնակչի մարդկային իրավունքների հաշվառման տեսանկյունից (անձի, բնակավայրի և սերունդների հնարավոր առավելագույն անվտանգության իրական երաշխիք)*»:

Է. Էլբակյանի առաջ քաշած «լեգիտիմություն ժառանգության միջոցով» տեսական մոտեցումը կարող ենք համարել Պրինստոնի և Թել-Ավիվի համալսարանների քաղաքագետ Ուրիել Աբուլոֆի ներկայացրած բացասական քաղաքական լեգիտիմության ենթատեսակ: Ըստ հեղինակի՝ բացասական քաղաքական լեգիտիմությունը վերաբերում է լեգիտիմության օբյեկտին, պարզ ասած՝ այն պատասխանում է «ի՞նչն է լեգիտիմ» հարցին, ոչ թե «ո՞վ է լեգիտիմացնողը», որն արդեն դրական քաղաքական լեգիտիմության տիրույթում է (Abulof 2): Մեր կողմից հետազոտվող փաստաթղթում կարմիր թելի պես անցնում է այդ ինքնալեգիտիմացնող մոտիվն առ այն, վերաբնակեցումը լեգիտիմ է, իսկ դրա համար արդյունավետ է ժամանակավոր գրանցման համակարգի պահպանումը: Հասկանալով, որ վերջինիս վերացումը դոմինոյի էֆեկտով կարող է կանգնեցնել նաև բուն վերաբնակեցման գործընթացը, որն էլ զուգահեռաբար կասկածի տակ կդնի իր լեգիտիմությունը՝ որպես շրջանի հիմնադիր-վերաբնակեցնողի՝ հեղինակը փաստաթղթի վերջում զգուշացնում է. «*Անհրաժեշտ է անընդհատ պահպանել Քաշաթաղի շրջանի՝ հենց վերաբնակեցվող կարգավիճակը: Մշտական գրանցում ունեցողների կողքին պետք է անընդհատ շարունակեն լինել ժամանակավոր գրանցումով քաղաքացիներ: Պետք է շարունակվեն վերականգնման աշխատանքները հենց որպես վերաբնակեցվող*

տարածքի աշխատանքներ: Վերաբնակեցման դադարեցումը կամ ավարտը (վերջակետը) ներքին և արտաքին խնդիրների ծագումով է հղի»:

Խոսքի առարկա փաստաթուղթն ունի նաև կարևոր սկզբնաղբյուրային-վիճակագրական նշանակություն վերաբնակեցման պատմության ուսումնասիրման համար: Պահպանված վիճակագրական տվյալները թույլ են տալիս պատկերացում կազմել 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին վերաբնակեցման տեմպերի, վերաբնակիչների թվաքանակի և պետականորեն հատկացվող բյուջետային միջոցների մասին: Այսպես՝ փաստաթղթում առկա վիճակագրական հիշատակումներից հնարավոր է դառնում վերականգնել վերաբնակեցման առավել ակտիվ փուլում՝ 1997-2003 թթ. Քաշաթաղի շրջանի վարչակազմի տրամադրության տակ դրված կապիտալ շինարարության բյուջեն:

տարի	բյուջե	աճ
1997	250.000.000 դրամ	*տվյալը բացակայում է*
1998	290.000.000 դրամ	≈18%↑
1999	320.000.000 դրամ	9.375%↑
2000	310.000.000 դրամ	≈-3.2%↓
2001	310.000.000 դրամ	0%
2002	375.000.000 դրամ	≈17.3%↑
2003	375.000.000 դրամ	0%

***Աղյուսակ 1.* Քաշաթաղի շրջանի կապիտալ շինարարության բյուջեն 1997-2003 թթ.**

1999 թ.-ից հետո բյուջեի՝ քննվող շրջանում միակ անկումը 2000 թ.-ին, ապա կայունացումը նույն չափով 2001 թ.-ին բացատրվում են 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ շենքում տեղի ունեցած ահաբեկչությանը հաջորդած քաղաքական ճգնաժամով և անորոշությամբ, որի հաղթահարումից հետո, սակայն, ինչպես տեսնում ենք, աճի տեմպը վերականգնվել է, իսկ անվանական արժեքով բյուջեն հասել է քննվող շրջանի պատմական առավելագույնին: Այս բյուջեի ⅓ (մեկ երրորդը) մշտապես հատկացվել է շրջանի վերականգնման աշխատանքներին (հաղորդակցությունների կառուցմանը, հիմնարկա-դպրոցաշինությանը), իսկ ⅔-ը (երկու երրորդը)՝ անհատական տների կառուցմանը: Այդ վերջին նպատակի համար տրամադրվող գումարի շուրջ ⅔-ով տարեկան վերականգնվել է 60-70 տուն և բնակարան, իսկ մնացյալ ⅓-ն անհատական պայմանագրերով և կատարված աշխատանքի դիմաց օգտագործված շինանյութի արժեքի չափով վճարվել է կիսաավերակ շինությունը սեփական ուժերով բնակելի վիճակի հասցրած վերաբնակիչներին: Կապիտալ շինարարության այսօրինակ տեսակերպի, այն է՝ պետություն-վերաբնակիչ համագործակցության պայմաններում 1 տան ծախսը հասնում էր շուրջ 250.000-370.000 դրամի: Համեմատության համար նշենք, որ 1998 թ. ազատագրված հայրենիքի վերաբնակեցվող մեկ այլ շրջանում՝ Քարվաճառում[1], 200 տան նախագծա-նախահաշվային փաստաթղթերով կառուցման համար ծախսվել է 400.000.000 դրամ, այսինքն՝ 1 տան համար 2.000.000 դրամ: Քաշաթաղի դեպքում հաշվարկները ցույց էին տալիս, որ ոչ մեծ տան նախագծա-նախահաշվային փաստաթղթերով կառուցումը կարող էր արժենալ 2.500.000-3.500.000 դրամ: Այսպիսով՝ ընտրված տեսակերպի պայմաններում տնտեսումը կազմում էր շուրջ 10%: Փաստաթղթի կազմման ժամանակ Քաշաթաղում կար 106 բնակավայր, որից 71-ը՝ համայնք, 3-ը՝ քաղաք (Բերձոր, Կովսական, Միջնավան), և շուրջ 12300 բնակիչ: Բնակելի ֆոնդի 25%-ը բարվոք տներ էին՝ թվով շուրջ 1000, մնացյալը հարմարեցված էին բնակության համար:

[1] Տեղին է հիշատակել, որ Քարվաճառի շրջանի վերաբնակեցված անդրանիկ չորս գյուղերը նույնպես ծնունդ են Քաշաթաղի շրջանի վարչակազմի ջանքերի: Դրանք են Թութխուն գետի ձորակի Ճումեն, Զուար, Թութխուն, Խնձորեկ (հետագայում՝ Հավսաթաղ) գյուղերը:

Եզրակացություն

«Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների ժամանակավոր գրանցումները շարունակելու արդյունավետության մասին» զեկուցագիր-տեղեկանքի (20.05.2003թ.) սկզբնաղբյուրային և քաղաքագիտական հետազոտությունը ցույց է տալիս, որ վերջինս, կազմված լինելով Հայաստանի Հանրապետությունում իշխանության անցման՝ տրանզիցիայի ժամանակներում, որ բնորոշ են անցյալի վերատեսության դրսևորումներով, նպատակ ունի կանխելու այդ վերատեսության կիրարկումը վերաբնակեցման հարցում: Որպես այդ նպատակին հասնելու միջոց է ընտրված զանգվածային վերաբնակեցման համար հիմնարար համարվող ժամանակավոր գրանցումների համակարգի վերատեսության կանխումը: Մեր հետազոտական եզրակացությունները համապատասխանում են քաղաքական լեգիտիմության և հիշողության տեքստային կառուցարկման վերաբերյալ քաղաքագիտական և սոցիոլոգիական գրականության մեջ ներկայումս շրջանառվող հիմնական տեսական մոտեցումներին:

Խնդրո առարկա փաստաթուղթը, պարունակելով վիճակագրական տեղեկություններ Քաշաթաղի շրջանի 1997-2003 թթ. կապիտալ շինարարության բյուջեի, գյուղերի, քաղաքների և բնակչության թվի մասին, ունի արժեքավոր սկզբնաղբյուրային նշանակություն այդ ժամանակաշրջանում շրջանի վերաբնակեցման պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էլբակյան, Էդգար. Խորքային հարցազրույց Ալեքսան Հակոբյանի հետ, Երևան, 25.10.2018 թ.:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտե. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին» հ. 335 որոշում. 3 դեկտեմբերի 1993 թ., Ստեփանակերտ, Արցախի Հանրապետության կառավարության արձանագրային բաժնի արխիվ
3. Abulof, Uriel. "'Can't buy me legitimacy': the elusive stability of Mideast rentier regimes", *Journal of International Relations and Development*, 2015, (1-25), doi:10.1057/jird.2014.32.
4. Fairhurst T. Gail, and Grant David. "The Social Construction of Leadership: A Sailing Guide", *Management Communication Quarterly*, 24(2) 171-210, DOI: 10.1177/0893318909359697.
5. Grint Keith. "A history of leadership". In: Bryman A, Collinson D, Grint K, et al. (eds). The Sage Handbook of Leadership. *Thousand Oaks, CA: Sage*, 2011.
6. Jimenez-Luque, Antonia. "Reframing the past to legitimate the future: Building collective agency for social change through a process of decolonizing memory", *Leadership 2021*, Vol. 0(0) 1–20, DOI: 10.1177/1742715021999892.
7. Lachapelle, Jean, et al. "Social revolution and authoritarian durability", *World Politics*, 1-44, 2020, doi: 10.1017/S0043887120000106.
8. Tiruneh, Gizachew. "Social Revolutions: Their Causes, Patterns, and Phases", *SAGE Open*, 4(3), 2014, https://doi.org/10.1177/2158244014548845.

WORKS CITED

1. Abulof, Uriel. "'Can't buy me legitimacy': the elusive stability of Mideast rentier regimes", *Journal of International Relations and Development*, 2015, (1-25), doi:10.1057/jird.2014.32.
2. Elbakyan, Edgar. Xorkʻayin harċazruyċ Alekʼsan Hakobyani het, Yerevan, [In-depth interview with Aleksan Hakobyan] 25.10.2018. (In Armenian)

3. Fairhurst T. Gail, and Grant David. “The Social Construction of Leadership: A Sailing Guide”, *Management Communication Quarterly*, 24(2) 171-210, DOI: 10.1177/0893318909359697.

4. Grint Keith. “A history of leadership”. In: Bryman A, Collinson D, Grint K, et al. (eds). The Sage Handbook of Leadership. *Thousand Oaks, CA: Sage*, 2011.

5. Jimenez-Luque, Antonia. “Reframing the past to legitimate the future: Building collective agency for social change through a process of decolonizing memory”, *Leadership 2021*, Vol. 0(0) 1–20, DOI: 10.1177/1742715021999892.

6. Lachapelle, Jean, et al. “Social revolution and authoritarian durability”, *World Politics*, 1-44, 2020, doi: 10.1017/S0043887120000106.

7. Lernayin Ġarabaġi Hanrapetowt‘yan Paštpanowt‘yan petakan komite. «Lernayin Ġarabaġi Hanrapetowt‘yan K‘ašataġi šrǰanowm Lernayin Ġarabaġi Hanrapetowt‘yan Paštpanowt‘yan petakan komitei liazor nerkayaćućič nšanakelow masin» h. 335 orošowm, Stepanakert, Arċaxi Hanrapetut‘yan karavarowt‘yan arjanagrayin bažin [State Defence Committee of Nagorno-Karabakh Republic. No. 335 decree on “Appointing a Pplenipotentiary Rrepresentative of State Defence Committee in Kashatagh province of Nagorno-Karabakh Republic”] 03.12.1993. (In Armenian)

8. Tiruneh, Gizachew. “Social Revolutions: Their Causes, Patterns, and Phases”, *SAGE Open*, 4(3), 2014, https://doi.org/10.1177/2158244014548845.

A REPORT BY THE HEAD OF KASHATAGH PROVINCE OF ARTSAKH AS A PRIMARY SOURCE FOR REPOPULATION PROCESS HISTORY

EDGAR ELBAKYAN
Yerevan State University, Institute for Armenian studies,
Center for Strategic Research, Research Fellow;
Yerevan, The Republic of Armenia

ALEKSAN HAKOBYAN
NAS RA, Institute of Oriental Studies,
Department of Christian Orient, Head;
Doctor of History,
Yerevan, The Republic of Armenia

This article discusses a primary source associated with the history of the Kashatagh region and the resettlement process there. The document is a report written in May 2003 by the head of the regional administration, Aleksan Hakobyan. The document is entitled “On the Effectiveness of Continuing the Temporary Registration of Resettlers in the Kashatagh Region”. The document was attached to the draft government decree as an expert justification. Temporary registration allowed resettlers to keep the registration in the old place of inhabitance, while simultaneously receiving temporary registration in the new place. This procedure was in act only in the Kashatagh region and formed the basis for its creation as part of the resettlement toolkit. In the historical period under review, when the actual administrative status of the Kashatagh region in the general structure of the Republic of Artsakh and the Republic of Armenia was changing, which led to the full inclusion of the region in the Artsakh administrative-territorial and intrastate system, the issue of abolishing the system of temporary registration of resettlers was discussed.

The methods of systematic and discursive analysis adopted by us made it possible to highlight the role of this document in a large historical context, the contextual

manifestations discussed in it, as well as the statistical significance of this source from the point of view of political science and sociology.

As a result of the study, it is shown that the document has an evidence-apologetic value and is designed to legitimize political agents associated with the resettlement process through an assessment of the historical past.

Keyword: *Kashatagh region, resettlement, temporary registration, Shahumyan region, Berdzor, Karvachar, legitimacy, power change.*

ДОКЛАД ГЛАВЫ КАШАТАХКСОЙ РАЙОННОЙ АДМИНИСТРАЦИИ РЕСПУБЛИКИ АРЦАХ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ ПЕРЕСЕЛЕНИЯ

ЭДГАР ЭЛБАКЯН
младший научный сотрудник центра стратегических исследований
института арменоведческих исследований
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

АЛЕКСАН АКОПЯН
заведующий отделом Христианского Востока
Института Востоковедения НАН РА,
доктор исторических наук,
г. Ереван, Республика Армения

В данной статье рассматривается первоисточник, связанный с историей Кашатахского района и процесса переселения. Документ представляет собой отчет-справку, написанный в мае 2003 году главой районной администрации Алексаном Акопяном. Документ озаглавлен «Об эффективности продолжения временной регистрации переселенцев в Кашатахском районе» и был приложен к проекту постановления правительства в качестве экспертного обоснования. Временная регистрация позволяла переселенцу сохранять регистрацию в прежнем месте регистрации, одновременно получая временную регистрацию на новом месте. Этот порядок действовал только в Кашатахском районе и лег в основу его создания как части переселенческого инструментария. В рассматриваемый исторический период, когда фактический административный статус Кашатахского района в общей структуре Республики Арцах и Республики Армения менялся, что привело к полному включению района в Арцахскую административно-территориальную и внутригосударственную систему, обсуждался вопрос об отмене системы временной регистрации переселенцев.

Принятые нами методы систематического и дискурсивного анализа позволили выделить роль этого документа в большом историческом контексте, обсуждаемые в нем контекстуальные проявления, а также статистическую значимость этого источника с точки зрения политической науки и социологии.

В результате исследования показано, что документ имеет доказательно-апологетическое значение и призван легитимизировать политических агентов, связанных с процессом переселения, через оценку исторического прошлого.

Ключевые слова: *Кашатахский район, переселение, временная регистрация, Шаумяновский район, Бердзор, Карвачар, легитимность, смена власти.*

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ* [1]

ՀՏԴ 308 *10.52063/25792652-2022.3.14-20*

ԱՐՄԵՆ ԽԱՉԻԿՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ,
Բրյուսովի անվան պետական համալսարանի հանրային հաղորդակցության
տեխնոլոգիաների գիտաուսումնական կենտրոնի դասախոս,
«Արար» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի տնօրեն,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armkhachikyan@gmail.com

2020թ. պատերազմը ոչ միայն զգալի կորուստներ պատճառեց Արցախին և ՀՀ-ին, այլև ստիպեց վերաիմաստավորել ռազմավարական առաջնահերթությունները:

Սույն հոդվածի խնդրո առարկա են ժողովրդագրական հիմնախնդիրներն Արցախի և Հայաստանի պաշտպանական հնարավորությունների համատեքստում: Վերլուծության մեթոդական հիմք են հանդիսացել պաշտոնական վիճակագրական տվյալները, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, պաշտոնատար անձանց հրապարակումները:

Քննության են առնվում Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի Հանրապետությունների ժողովրդագրական վիճակի վերաբերյալ տվյալները պատերազմի հետևանքների պայմաններում, ինչպես նաև Հայկական բանակի և թիրախային-համեմատելի երկրների մոբիլիզացիոն հնարավորությունները, զինծառայության նկատմամբ վերաբերմունքն ու վարկանիշը: Ադրբեջանում 20-54 տարեկան տղամարդկանց թվաքանակը շուրջ 3.6 անգամ գերազանցում է հայկական երկու հանրապետությունների համապատասխան թվաքանակին: Ըստ միջազգային ինդեքսավորման տվյալների՝ պատերազմի պայմաններում Հայաստանի մշտական բնակչության 8.7%-ն ընդգրկվում է մոբիլիզացիոն ռեսուրսում, մինչդեռ Ադրբեջանի դեպքում ցուցանիշը 4.6% է: Մոբիլիզացիոն ռեսուրսի ձևավորման հարցում, այդ թվում՝ կամավորության սկզբունքով բանակը համալրելիս որոշիչ է զինծառայության նկատմամբ վերաբերմունքը, որը ձևավորում է մոբիլիզացիայի մասնակցության նկատմամբ մոտիվացիան: Հայկական բանակի վարկանիշը զգալի անկում է ապրել, ինչը անխուսափելիորեն բացասաբար է ազդելու պաշտպանական մարտահրավերներին դիմագրավելու հարցում, մոտ 35%-ով նվազել է բանակի նկատմամբ դրական գնահատականը: Այսպիսով՝ անհրաժեշտ է ռազմավարական և օպերատիվ մակարդակներում հստակեցնել և սահմանել մեր երկրի անվտանգության ապահովման և պաշտպանության իրականացման մոդելը, որի հիման վրա

* Հոդվածը ներկայացվել է 19.09.2022թ., գրախոսվել՝ 12.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

[1] Ծանոթագրություն: Հետազոտությունն իրականացվել է Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A273 ծածկագրով «Ժողովրդագրական անցման ներկա փուլը Հայաստանի Հանրապետությունում (2020 թ. Արցախյան II պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցության գնահատմամբ)» գիտական նախագծի շրջանակներում:

կձևավորվեն սահմանագծի պաշտպանության ապահովման համակարգն ու գործողությունները:

Հիմնաբառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, Արցախ, ժողովրդագրություն, անվտանգային համակարգ, զինծառայություն, բանակի հեղինակություն, ռազմական ներուժ, մոբիլիզացիոն ռեսուրս:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի և Արցախի անվտանգության հարցում հսկայական ազդեցություն ունեցավ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը, որը բազմակողմանի աղետալի հետևանքներ առաջացրեց ոչ միայն անվտանգային համակարգում, այլև սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ համակարգերում: Պատերազմը ոչ միայն զգալի կորուստներ ու վնասներ պատճառեց Արցախի ու Հայաստանի Հանրապետություններին, այլև ստիպեց վերաիմաստավորել և վերաձևակերպել բոլոր ոլորտների ռազմավարական ուղղությունները, առաջնահերթություններն ու պետական քաղաքականությունը: Այս առումով խիստ կարևոր է ուսումնասիրել ժողովրդագրական պատկերը, ռիսկերն ու մարտահրավերները, ընդ որում, անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել անվտանգության ապահովման և պաշտպանական հնարավորությունների տեսանկյունից ուսումնասիրությանը:

Անվտանգության համակարգի պաշտպանական մեխանիզմներում կարևորագույն դեր ունի մարդկային ռեսուրսը՝ թե՛ որակական, թե՛ քանակական տեսանկյունից: Հաշվի առնելով հարևան թշնամական երկրի դեմոգրաֆիական համեմատաբար նպաստավոր պայմանները՝ պետք է առավելագույնս արդյունավետ կերպով կիրառել պահեստազորային տարիքի բնակչության մոբիլիզացիոն հնարավորությունները:

Հոդվածի **նպատակն է՝** ժողովրդագրական մարտահրավերները վերլուծել ՀՀ և Արցախի պաշտպանական հնարավորությունների համատեքստում, **խնդիրներն** են՝ համապատասխան ժողովրդագրական տվյալների վերլուծությունը, նաև պատերազմից հետո հայկական բանակի ռազմական ներուժը և մոբիլիզացիոն հնարավորությունները, ինչպես նաև զինծառայության անցնելու միտումներն ու բանակի հեղինակության դինամիկան՝ զինված ուժերի համալրման տեսանկյունից:

Քննարկում և արդյունքներ

Հոդվածում քննարկվում և արդյունքներ են ստացվում ներքոնշյալ այնպիսի հիմնահարցերի ուսումնասիրության միջոցով, ինչպիսիք են՝ Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի Հանրապետությունների սեռատարիքային կազմի, պահեստազորային տարիքի տղամարդկանց թվակաքանակը, 44-օրյա պատերազմի և տեղահանությունների հետևանքով Արցախի ժողովրդագրական իրավիճակը, Հայկական բանակի և համեմատելի երկրների զինված ուժերի ակտիվ և մոբիլիզացիոն ռեսուրսերի թվաքանակն ու համամասնությունը, բանակի հեղինակության դինամիկան, զինծառայության նկատմամբ վերաբերմունքը:

2021 թ. փետրվարի 5-ին հրապարակվել են նախորդ տարվա սոցիալ-տնտեսական վիճակն արտահայտող ցուցանիշները, այդ թվում՝ ժողովրդա-գրական իրավիճակը: Ըստ այդմ՝ 2020 թ. ՀՀ-ում գրանցվել է 36.448 ծնունդ և 35.371 մահ («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին» 149) ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020)[1]: 2021 թ. մարտի 5-ին հրապարակվել են 2021 թ.

[1] Ծանոթագրություն: Հետազոտող Միքայել Մալխասյանը պաշտոնական վիճակագրության տվյալները համեմատելիս նկատել է մի ցավալի փաստ. 2020 թ. բնական հավելաճի նախնական +1077 և այնուհետև +183 տվյալները աճյունների նույնականացումից

հունվարի ժողովրդագրական ցուցանիշները՝ 2.795 ծնված և 3.295 մահացած (որից 390-ը՝ COVID-19-ից), հետևաբար բնական հավելաճը բացասական է՝ -500 («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին» 11):

2022թ. ապրիլի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովում ասաց, որ 44-օրյա պատերազմի զոհերի թիվն այսօրվա դրությամբ 3.825 է, իսկ ըստ ՀՀ քննչական կոմիտեի մարտի 21-ին հրապարակած տվյալների՝ զոհերի թիվը 3.822 էր, անհայտ էր 187 զինծառայողի և 21 քաղաքացիական անձի գտնվելու վայրը (Ազատություն ռադիոկայան): Այսպիսով՝ չնայած 2020թ.-ի պատերազմի հետևանքով Արցախի բնակչության թվաքանակի վերաբերյալ վերը նշված տվյալների շեղումներին՝ այնուամենայնիվ, պատերազմի աղետալի ազդեցությունն առավել քան ակներև է:

Գծապատկեր 1-ում ներկայացվում է ՀՀ բնակչության սեռատարիքային կազմը 2011 և 2021 թվականների համեմատությամբ, որտեղ ակնհայտորեն երևում է 15-ից 29 տարեկան բնակչության կազմի շեշտակի անկումը, ինչը նվազեցնում է տվյալ տարիքում գտնվող անձանց զինված ուժերի պահեստազորում ներգրավման հնարավորությունները և մասնակցությունը պատերազմական գործողություններին: Հարկ է ընդգծել, որ չնայած վերջին տարիներին կանանց՝ զինծառայության մեջ ընդգրկվելու հնարավորությունների ընդլայնման քաղաքականությանը, այնուամենայնիվ, բանակի մարդկային ռեսուրսի հիմնական և գերակշիռ մասը շարունակում են լինել տղամարդիկ:



Գծապատկեր 1. ՀՀ բնակչության սեռատարիքային բուրգը 2011 և 2022 թթ. տարեսկզբին (տոկոսով ընդամենի նկատմամբ)[1]

հետո վերահաշվարկվելու և դառնալու է -67: Այսպիսով, 2020 թ. ՀՀ բնակչության բնական աճը բացասական է եղել, արդեն փաստվում է պաշտոնական վիճակագրության հիման վրա հաշվարկով:

[1] Աղբյուր. ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 37:

Աղյուսակ 1-ում որպես պոտենցիալ բանակի մարդկային ռեսուրս դիտարկվել է **տղամարդկանց պահեստազորային տարիքը**, այն է պարտադիր ժամկետային զինծառայության ավարտից՝ 20 տարեկանից մինչև պահեստազորային սահմանային տարիքը՝ 55 տարեկան (Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք): Այսպիսով՝ պարզ է դառնում, որ 20-55 տարեկան բնակչության ցուցանիշը տարեցտարի նվազում է՝ 2021թ.-ին հասնելով 672.9 հազար մարդու, որոնք պատերազմի դեպքում հայկական բանակի պահեստազորը համալրելու հնարավորություն կունենան:

ՀՀ տղամարդկանց տարիքային կազմը, 1,000 մարդ	**2018**	**2019**	**2020**	**2021**
Ընդամենը	1,408.2	1,401.8	1,397.0	1,398.1
0-4 տ.	107.5	104.7	100.6	97.6
5-9 տ.	111.8	112.1	111.6	110.7
10-14 տ.	99.7	102.2	105.8	108.8
15-19 տ.	87.6	87.7	89.5	91.7
20-24 տ.	**97.8**	**92.7**	**88.9**	**86.0**
25-29 տ.	**126.1**	**119.7**	**111.9**	**104.4**
30-34 տ.	**124.7**	**124.6**	**123.7**	**125.7**
35-39 տ.	**105.6**	**109.5**	**113.2**	**116.3**
40-44 տ.	**84.1**	**86.0**	**89.2**	**93.6**
45-49 տ.	**74.9**	**74.2**	**74.8**	**76.7**
50-54 տ.	**80.9**	**75.7**	**71.3**	**70.2**
55-59 տ.	96.7	94.1	89.8	84.0
60-64 տ.	74.8	79.6	82.8	86.5
65-69 տ.	51.1	53.8	57.4	59.7
70-74 տ.	24.6	27.9	32.0	35.8
75-79 տ.	29.6	25.2	21.2	17.1
80+ տ.	30.7	32.1	33.3	33.3
20-54 տարեկան	**694.1**	**682.4**	**673.0**	**672.9**

Աղյուսակ 1. Տղամարդկանց տարիքային կազմը 2021 հունվարի 1-ի դրությամբ, 1000 մարդ

Այսպիսով՝ վերը բերված վիճակագրական տվյալները արձանագրում են զինապարտության տարիքի տղամարդկանց թվաքանակի զգալի նվազում, որն ուղղակի ազդեցություն ունի խաղաղ և պատերազմական ժամանակներում մոբիլիզացիոն ռեսուրսի հավաքագրման վրա:

Պաշտպանական հնարավորությունների համատեքստում սույն հոդվածում առաջնային ենք համարել ուսումնասիրել **Արցախի ժողովրդագրական պատկերը՝** հետհայացք նետելով նաև մինչպատերազմական ժողովրդագրական ցուցանիշներին:

2020թ. հունվարի 1-ի դրությամբ Արցախի մշտական բնակչության թվաքանակը կազմել է 148.8 հազ. մարդ և 2019թ. տարեսկզբի համեմատ ավելացել է 0.5 տոկոսով: Մինչպատերազմական Արցախի տարածքը կազմում էր 11,803 կմ² է, խտությունը 12.6 մարդ /կմ^2 էր կազմում («Արցախի ժողովրդագրական ժողովածու 2020», 9):

Հատկանշական է, որ 2020թ. տարեսկզբին հաստատվել էին ԱՀ պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը, որի զգալի գործողությունները 2020թ. 44-օրյա պատերազմից հետո կարիք ունեն վերանայման,

սակայն դեռևս համապատասխան քայլեր չեն կատարվել («Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» *Արցախի Հանրապետության կառավարություն որոշում*): Այսպիսով՝ մինչպատերազմական Արցախն արդեն իսկ ժողովրդագրական բավականին խնդրահարույց պատկեր ուներ, իսկ 2020թ. պատերազմի հետևանքով իրավիճակն ավելի սրվեց, քանզի Արցախում մշտական բնակչության կառուցվածքի ու թվաքանակի փոփոխություն եղավ:

Միևնույն ժամանակ, առավել խրթին է դարձել այսօրինակ տվյալների ուսումնասիրությունը և ի հայտ է եկել ժողովրդագրական տվյալների հասանելիության սահմանափակում, քանզի Արցախի վիճակագրական կոմիտեն 2020 թվականից ի վեր իր հրապարակումներում չի ներառում բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Այնուամենայնիվ, սույն հոդվածում փորձենք որոշակիորեն անդրադարձ կատարել դրանց՝ հիմք ընդունելով պաշտոնական հայտարարություններն ու հասանելի աբյուրների տեղեկատվությունը: 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանվածների ու հետ վերադարձածների քանակը միանշանակ հաշվարկված չէ. ՌԴ պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը տեղահանվածներից 46.998-ը, իսկ 2021 թ. փետրվարի 24-ի դրությամբ՝ արդեն 52.700-ը վերադարձել է Արցախի՝ ՌԴ խաղաղապահ ուժերի ներկայության հատված: Արցախի նախագահի խոսնակը հաստատում է՝ վերադարձել է 95. 000 հոգի (Սիվիլնեթ): Իսկ դեռևս պատերազմի ժամանակ՝ 2020 թ. հոկտեմբերի 24-ին, ՀՀ արտգործնախարար Ձոհրաբ Մնացականյանը հայտարարեց, որ Արցախից 90.000 մարդ է տեղահանվել (ՀՀ ԱԳՆ): Ըստ Արցախի Հանրապետության ՄԻՊ գրասենյակի տվյալների՝ 44-օրյա պատերազմում զոհվել է Արցախյան հաշվառում ունեցող 742 զինծառայող, իսկ 45-ը մինչ օրս համարվում է անհետ կորած: Սպանվել է 80 քաղաքացիական անձ, որոնցից 38-ը՝ գերեվարման մեջ, անհետ կորած է համարվում 20 քաղաքացիական անձ (ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայքէջ): Ի կատարումն ՀՀ, ՌԴ և ԱդՀ ղեկավարների միջև նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ստորագրված եռակողմ հայտարարության՝ 2020 թ. դեկտեմբերի 9-ին հրապարակվել է Արցախի տարածքից Ադրբեջանին հանձնվող բնակավայրերի ցանկը՝ 118 համայնքներ՝ 182 բնակավայրերով (Քաշաթաղի շրջան՝ 50 համայնքներ՝ 92 բնակավայրերով) (Մալխասյան և ուրիշներ 145): Կորսված բնակավայրերի ցանցի բնակչությունը հաշվելու դեպքում պարզ է դառնում, որ մոտ 40.000 մարդ մնացել է անտուն:

Բնակավայրերի քանակի կրճատումն ուղեկցվում է բնակֆոնդի սահմանափակ տարողունակության հանգամանքով, ինչպես նաև Արցախի անվտանգության առօրեական խնդիրներով՝ արդյունքում հանգեցնելով տեղահանվածների հետվերադարձի ապահովման լրջագույն խոչընդոտների:

Աղյուսակ 2-ում որպես Արցախի պաշտպանության բանակի պոտենցիալ մոբիլիզացիոն ռեսուրս դիտարկվել է պահեստազորային տարիքի տղամարդկանց թվաքանակը, որը 2020 թվականին եղել է 34,426, ընդ որում, 2018-2020թթ. արձանագրվել է որոշակի աճ (Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն 8):

Արցախի տղամարդկանց տարիքային կազմը	2018	2019	2020
Ընդամենը	**71,758**	**72,362**	**72,935**
0-4	6,637	6,536	6,294
5-9	6,873	6,982	6,878
10-14	5,534	5,672	6,098
15-19	5,441	5,502	5,488

20-24	**5,006**	**5,073**	**5,123**
25-29	**6,360**	**6,028**	**5,715**
30-34	**6,020**	**6,116**	**6,176**
35-39	**5,217**	**5,448**	**5,654**
40-44	**4,359**	**4,535**	**4,793**
45-49	**3,458**	**3,498**	**3,567**
50-54	**3,551**	**3,481**	**3,398**
55-59	3,839	3,791	3,703
60-64	3,098	3,290	3,493
65-69	2,278	2,299	2,364
70-74	1,182	1,428	1,662
75-79	1,249	1,024	881
80-84	1,023	1,004	1,001
85+	633	655	647
20-54 տարեկան	**33,971**	**34,179**	**34,426**

Աղյուսակ 2. Արցախի Հանրապետության տղամարդ բնակչության տարիքային կազմը

Հաշվի առնելով 2020 թ.-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն ու դրանից հետո պարբերական ռազմական ագրեսիաներն ու սադրանքները, ինչպես նաև դրանց ուղեկցող ռազմատենչ հայտարարությունները՝ հարկ ենք համարում որպես հիմնական անվտանգության սպառնալիք դիտարկել Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերին և ուսումնասիրությունը կենտրոնացնել այդ երկրի ժողովրդագրական տվյալների հետ զուգադրության մեջ:

Անհրաժեշտ է արձանագրել շատ կարևոր ու մտահոգիչ փաստ, որ Ադրբեջանն իր վիճակագրական հաշվետվություններում ներառում է նաև Արցախին վերաբերող տվյալները, որն արձանագրված է նաև Ադրբեջանի վիճակագրական կոմիտեի հրապարակած մեթոդաբանական պարզաբանումներում (Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտե): Սույն հոդվածում ներկայացված տվյալները վերլուծելիս մշտապես հաշվի կառնենք այս գործոնը:

Համեմատական վերլուծության համար

Աղյուսակ **3**-ում ներկայացված է վերջին տարիներում Ադրբեջանի Հանրապետության տղամարդ բնակչության տարիքային բաշխումը:

Ադրբեջանի տղամարդ բնակչության տարիքային կազմը, 1,000 մարդ	2018	2019	2020	2021	2022
Ընդամենը	4,938.0	4,982.4	5,028.0	5,053.8	5,074.5
0-4	401.7	385.3	371.0	351.5	328.5
5-9	403.7	414.2	423.4	423.9	415.9
10-14	309.3	318.3	332.6	353.7	380.1
15-19	325.7	322.9	316.4	311.9	310.4
20-24	**399.1**	**379.7**	**361.1**	**344.8**	**330.3**
25-29	**466.1**	**457.6**	**449.2**	**434.3**	**418.8**
30-34	**446.6**	**459.1**	**465.9**	**469.2**	**468.3**
35-39	**381.0**	**393.2**	**406.0**	**417.5**	**432.2**
40-44	**313.8**	**325.1**	**337.6**	**351.7**	**363.4**
45-49	**319.1**	**310.8**	**306.4**	**303.0**	**306.9**
50-54	**323.9**	**323.8**	**322.1**	**321.2**	**316.2**

55-59	315.5	321.3	322.6	319.1	317.0
60-64	209.3	232.7	254.0	274.3	286.8
65-69	130.9	138.4	149.5	159.2	173.8
70 և ավելի	192.5	200.2	210.1	218.6	225.9
20-54 տարեկան	**2,650**	**2,649**	**2,648**	**2,642**	**2,636**

Աղյուսակ 3. Ադրբեջանի Հանրապետության տղամարդ բնակչության տարիքային կազմը

Դեռևս 2018-2020թթ. 20-54 տարեկան տղամարդկանց շրջանում արտահայտվում է թվաքանակի որոշակի նվազում, իսկ 2021-2022թթ.-ին նվազումն առավել քան զգալի է, 2018-ի համեմատ նվազումը կազմել է շուրջ 14 հազար, ինչում ակնհայտորեն արտահայտվում են պատերազմի և կորոնավիրուսի կորուստները (Ադրբեջանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտե):

Այնուամենայնիվ, ամփոփելով 20-54 տարեկան տղամարդկանց բնակչության թվաքանակները՝ ստացվում է՝ Հայաստանում՝ շուրջ 673 հազար, Արցախում՝ շուրջ 34 հազար, իսկ հաշվի առնելով Ադրբեջանի հաշվարկման վերընշված մեթոդաբանական պարզաբանումը՝ կստացվի շուրջ 2,6 մլն: Այսպիսով՝ Ադրբեջանի 20-54 տարեկան տղամարդկանց թվաքանակը շուրջ 3.6 անգամ գերազանցում է հայկական երկու հանրապետությունների համապատասխան թվաքանակին:

Մոբիլիզացիոն ռեսուրսների ուսումնասիրության նպատակով քննության առնենք միջազգային ինդեքսավորման տվյալները, որոնք հնարավորություն են տալիս համեմատության մեջ դիտարկել Հայաստանի մոբիլիզացիոն ընդհանուր ռեսուրսը, ակտիվ զինուժն ու վերջիններիս համամասնությունը բնակչության մեջ:

Աղյուսակ 4-ում ներկայացված է որոշակիորեն համեմատելի 4 երկրների ակտիվ զինուժի և մոբիլիզացիոն ընդհանուր ռեսուրսի թվաքանակը, ինչպես նաև դրանց հարաբերակցությունը բնակչության թվին՝ արտահայտած տոկոսով:

Երկիր	Ակտիվ զինուժ	Մոբիլիզացիոն ընդհանուր ռեսուրս	Մշտական բնակչություն	Ակտիվ զինուժ/ բնակչություն	Մոբ. ռեսուրս/ բնակչություն
Հայաստան	44,800	259,100	2,961,900	1.60%	8.7%
Ադրբեջան	126,950	471,950	10,345,074*	1.20%	4.6%
Լիբանան	60,000	80,000	5,489,739	1.20%	1.5%
Վրաստան	20,650	26,050	3,744,385	0.60%	0.7%

Աղյուսակ 4. Որոշ երկրների զինուժի ռեսուրսն ու բնակչության հարաբերակցությունը

Այսպիսով՝ ըստ ներկայացված տվյալների՝ պատերազմի պայմաններում Հայաստանի մշտական բնակչության 8.7%-ը ընդգրկվում է մոբիլիզացիոն ռեսուրսում, մինչդեռ Ադրբեջանի դեպքում այս ցուցանիշը 4.6% է, ինչը ցույց է տալիս, որ պաշտպանական հնարավորությունների տեսանկյունից Հայաստանի ժողովրդագրական իրավիճակն առավել բարդ խնդիր է առաջացնում մոբիլիզացիոն ռեսուրսի ձևավորման համար (World Population Review): Այս պայմաններում պահանջվում է միլիտարիզացիոն մեխանիզմների առավելագույնս արդյունավետ ներդրում և կիրառում:

Պաշտպանական հնարավորությունների համատեքստը շատ լայն է և ներառում է ռազմավարական, քաղաքական, տնտեսական, ռազմատեխնիկական, իրավական, պատմական, սոցիոմշակութային և այլ ոլորտներ: Ժողովրդագրական հիմնախնդիրները նույնպես ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ և առաջընթաց ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր գործոններն ու

առանձնահատկությունները: Տվյալ պարագայում մոբիլիզացիոն ռեսուրսի ձևավորման, այդ թվում՝ կամավորության սկզբունքով բանակի համալրման գործում որոշիչ է **զինծառայության նկատմամբ վերաբերմունքը, բանակի վերաբերյալ գնահատականն ու վարկանիշը**, որոնք էլ ի վերջո ձևավորում են պատերազմական պայմաններում մոբիլիզացիայի մասնակցության նկատմամբ մոտիվացիան: Ուստի ժողովրդագրական ցուցանիշներից զատ պաշտպանական համակարգում բավարար քանակական ներգրավում ապահովելու համար անհրաժեշտ է նաև զինվորական ծառայության վերաբերյալ դրական վերաբերմունք, բանակի համալրման գրավիչ մոդել, բանակի բարձր հեղինակություն և համապատասխան սոցիալ-տնտեսական երաշխիքներ:

Գծապատկեր 2-ում ներկայացվում է ՀՀ ՊՆ N զորամասում պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում անցկացված ուսումնասիրության տվյալները, ըստ որի՝ հարցվածների ավելի քան 90%-ը չի ցանկանա անցնել պայմանագրային և սպայական զինծառայության: Նաև նշենք, որ ամենաբարձր պատրաստակամությունը արտահայտվում է գյուղական բնակավայրերում, որտեղ 6.5%-ը կցանկանար անցնել պայմանագրային, իսկ 2.7%-ը սպայական զինծառայության (Գապարյան և Խաչիկյան):



Գծապատկեր 2. Վերաբերմունքը պայմանագրային զինծառայության նկատմամբ՝ ըստ բնակավայրի տիպի

Պայմանագրային և սպայական ծառայության անցնելու ցանկության այս ցուցանիշները ևս բանակի նկատմամբ վերաբերմունքի պրակտիկ դրսևորումներ են: Առկա են պայմանագրային զինծառայության ու սպայական մասնագիտական հեղինակության ապահովման մարտահրավերներ, որոնք զգալիորեն կարող են ազդել նաև համալրման արդյունավետության վրա:

Ժողովրդագրական մարտահրավերներին զուգահեռ առկա են բանակի վերաբերյալ հանրային կարծիքի և հեղինակության ապահովման հիմնախնդիրներ, որոնք ևս լրջագույն սպառնալիք են պատերազմական իրավիճակում մոբիլիզացիոն ռեսուրսի ձևավորման և ռազմական գործողություններում ներգրավելու տեսանկյունից:

Գծապատկեր 3-ում ներկայացված է Հայկական բանակի գնահատականը հայաստանցիների շրջանում: Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից հայ հասարակության շրջանում պարբերաբար կատարվում են հետազոտություններ, որոնց արդյունքներով՝ 2018թ.-ի իշխանության փոփոխությունից հետո հուլիս-օգոստոս ամիսներին բանակը հարցվողների 74%-ի շրջանում դրական գնահատականի էր արժանացել՝ զիջելով միայն վարչապետի գրասենյակի վարկանիշին (դրական վարկանիշը՝ 82%) (Public Opinion Survey, IRI, 2018), 2018թ.-ի աշնանը 81% էր (Public Opinion Survey, IRI, 2018), 2019-ի մայիսին 80% (Public Opinion

Survey, IRI, 2019), 2019թ.-ի աշնանը՝ 91% (Public Opinion Survey, IRI, 2019): Պատերազմից հետո զգալիորեն նվազեց բանակի վարկանիշը, մասնավորապես 2021թ.-ի փետրվարին բանակի գնահատականը 73% էր (Public Opinion Survey, IRI, 2021), 2021 դեկտեմբերին զինված ուժերի աշխատանքով բավարարվածությունը 58% էր (Հանրային կարծիքի ուսումնասիրություն, ՄՀԻ, 2021) :

Այնուհետև որոշակի մեթոդաբանական փոփոխություններից[1] հետո 2022թ.-ի դեկտեմբերին հարցվողների շրջանում զինված ուժերի գոհունակությունը 58% էր, բանակի ղեկավարությանը՝ 40% (Հանրային կարծիքի ուսումնասիրություն, IRI, 2021), իսկ արդեն 2022 թ. հունիսին՝ 41% (Հանրային կարծիքի ուսումնասիրություն, IRI, 2021):



Գծապատկեր 3. Բանակի գործունեության վարկանիշը Հայաստանում

Դիտարկենք նաև այլ երկների զինված ուժերի վերաբերյալ գնահատականը: Ըստ Pew Research Center-ի կողմից հասարակական-պետական ինստիտուտների գործունեության վերաբերյալ իրականացրած ուսումնասիրության՝ Ֆրանսիայում զինված ուժերին վստահում են հարցվածների 84 %-ը, Գերմանիայում՝ 70 %-ը, Իսպանիայում՝ 66 %-ը, ԱՄՆ-ում՝ 80 %-ը (Johnson):

Ելնելով վերոգրյալից՝ արձանագրենք, որ հայկական բանակի վարկանիշը զգալի անկում է ապրել, ինչը անխուսափելիորեն բացասաբար է ազդելու պաշտպանական մարտահրավերներին դիմագրավելու հարցում, ընդ որում, մոտ 35%-ով նվազել են բանակի նկատմամբ դրական գնահատական տվող հայաստանցիները:

Այս ամենն իր ուղղակի և անուղղակի ազդեցությունն է ունենալու բանակի համալրման գործընթացի բոլոր բաղադրիչների վրա, ընդ որում, համալրման գործընթացում ևս ի հայտ են եկել բազմաթիվ մարտահրավերներ:

[1] ***Ծանոթագրություն:*** 2021թ. դեկտեմբերի հարցման մեջ հարցը փոխվել է՝ «Որքանո՞վ եք բավարարված հետևյալ պետական մարմինների աշխատանքով», իսկ կատեգորիան՝ «Զինված ուժեր» և «Բանակի ղեկավարություն», իսկ 2022թ. հունիսի հարցման մեջ հարցը փոխվել է՝ «Որքանո՞վ եք բավարարված կամ չբավարարված հետևյալ նախարարությունների աշխատանքով», իսկ կատեգորիան՝ «պաշտպանության նախարարություն»:

Պատերազմից հետո անխուսափելիորեն իրականացվել է Արցախի ՊԲ ռազմավարական խնդիրների վերանայում, ըստ այդմ էլ նաև առաջնագծի պաշտպանական մեխանիզմների փոփոխություն: Արցախյան երկրորդ պատերազմից հետո ձևավորված սահմանագծի պայմաններում անհրաժեշտ ռազմական մարդկային ներուժը վերահաշվարկի կարիք ունի հատկապես սահմանի երկարության ավելացման դեպքում, ինչպես նաև Արցախի պաշտպանության բանակի կառուցվածքային փոփոխությունների համատեքստում:

Արցախի Պաշտպանության բանակի մարդկային ռեսուրսները բաղկացած են եղել պարտադիր ժամկետային զինծառայություն իրականացնող անձնակազմից, ինչպես նաև սպայակազմից և պայմանագրային զինծառայողներից: Հարկ է ընդգծել, որ 2022 թվականի ամառային զորացրումից հետո այլևս ՀՀ-ից դադարեցվեց դեպի Արցախ պարտադիր ժամկետային զինծառայության զորակոչը: Արցախի ՊԲ-ի թափուր հաստիքները համալրվում են պայմանագրային զինծառայողների միջոցով (Tert.am): Միևնույն ժամանակ կպահպանվի ՀՀ քաղաքացիների համար Արցախում սպայական ու պայմանագրային զինծառայություն իրականացնելու հնարավորությունը:

2020թ. պատերազմի հետևանքով շփման գծի ահռելի փոփոխություններ են տեղի ունեցել, որի արդյունքում տարբեր տվյալներով շուրջ 500 կիլոմետրը նոր սահմանագիծ է, ինչն անհրաժեշտ է ապահովել պաշտպանական մեխանիզմներով, հատկապես զինվորական մարդկային ռեսուրսով: Սույն հոդվածի մշակման ընթացքում ՀՀ Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի սահմանամերձ հատվածներում տեղի ունեցան եռօրյա պատերազմական գործողություններ, որի ընթացքում ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետևանքով զոհվածների և անհետ կորածների թիվը հասնում է 207-ի, այդ թվում՝ զոհվել է քաղաքացիական 3 անձ, 2 քաղաքացիական անձի գտնվելու վայրը համարվում է անհայտ, վիրավորվել է 293 զինծառայող, 7 քաղաքացիական անձ, գերեվարվել է 20 զինծառայող (ՀՀ ԱԽ գրասենյակ):

Եզրակացություն

Այսպիսով՝ նախևառաջ անհրաժեշտ է ռազմավարական և օպերատիվ մակարդակներում հստակեցնել և վերասահմանել մեր երկրի անվտանգության ապահովման և պաշտպանության իրականացման մոդելը, որի հիման վրա էլ կձևավորվի սահմանագծի պաշտպանության ապահովման համակարգն ու գործողությունները:

Ամփոփելով հոդվածում ներկայացված տվյալներն ու համեմատական վերլուծության արդյունքները՝ անկիայտ են դառնում ժողովրդագրական լրջագույն մարտահրավերները, որոնք չափազանց բարդացնում են հայկական երկու հանրապետությունների պաշտպանական համակարգը, ինչպես նաև անվտանգային սպառնալիքներ են ստեղծում բնակչության խաղաղ գոյատևման համար՝ բնակիչներին դնելով տեղահանության վտանգի առջև:

Հաշվի առնելով հայկական բանակի պաշտպանական հնարավորությունների՝ ժողովրդագրական հիմնախնդիրներով պայմանավորված սահմանափակվածությունը՝ անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակում ակտիվորեն բարելավել մոբիլիզացիոն մեխանիզմները՝ շեշտը դնելով մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման և բանակի համալրման գործընթացի բարեփոխման վրա: Ի վերջո, պաշտպանական մեխանիզմների զարգացման և ռազմական ներուժի վերականգնման արդյունքում կձևավորվի անվտանգային միջավայր, ինչն էլ իր հերթին ժողովրդագրական իրավիճակի բարելավման կարևոր նախադրյալներից է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ *վիճակագրական կոմիտե*, Երևան 2020, էջ 149:
2. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին. Տեղեկատվական ամսական զեկույց», ՀՀ *վիճակագրական կոմիտե*, Երևան, 2021, էջ 11:
3. 44-օրյա պատերազմի զոհերի թիվն այսօրվա դրությամբ 3 հազար 825 է. վարչապետ, *Ազատություն ռադիոկայան*, https://www.azatutyun.am/a/31801316.html, 20.09.22.
4. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2021, ՀՀ *վիճակագրական կոմիտե*, Երևան, 2021, էջ 37:
5. Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք, ՀՀ *Ազգային ժողով*, Երևան, 2017, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5937#4.7.
6. Արցախի ժողովրդագրական ժողովածու 2020, *Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն*, Ստեփանակերտ, 2020, էջ 9:
7. «Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին», *Արցախի Հանրապետության կառավարություն որոշում, ԱՀ ազգային ժողով,* Ստեփանակերտ, 2020թ, http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=18469.
8. Արցախի նախագահի խոսնակը հաստատում է՝ վերադարձել է 95 000 հոգի, *Սիվիլնեթ,* https://www.civilnet.am/news/473692/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0%D5%AB-%D5%AD%D5%B8%D5%BD%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7%D5%9D-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%A5%D5%AC-%D5%A7-95-000-%D5%B0%D5%B8%D5%A3%D5%AB/, 25.06.2022 թ.
9. Զոհրաբ Մնացականյանի հարցազրույցը Դոյչե Վելլեին, ՀՀ *ԱԳՆ,* https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/21/FM_ZM_Deutsche/10577, 25.06.2022թ.
10. ՀՀ *ազգային ժողովի պաշտոնական կայքէջ,* http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15183&year=2021&month=9&day=29&fbclid=IwAR0DJ4tllLDGixf3pFbeT7-Vim5wCZxEy0JzpbXa2uUnoDHb9RqwWqam350&lang=arm&enc=utf8, 25.06.2022թ.
11. Մալխասյան Միքայել, Խաչիկյան Արմեն, Տ. Աբրահամ քհն. Մալխասյան, Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճը ժողովրդագրական անցման արդի փուլի համատեքստում. միտումներ և մարտահրավերներ. *Հայագիտության հարցեր հանդես 1 (22) Երևան, ԵՊՀ հրատարակչություն*, 2021, էջ 145:
12. Մշտական բնակչության սեռատարիքային կազմը, *Արցախի Հանրապետության բնակչությունը 2020,* Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ, 2020, էջ 8
13. Գապարյան Խ., Խաչիկյան Ա., ՀՀ ՊՆ N զորամասի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրություն (*ՀՀ ՊՆ ԱՀՏԱ վարչության, «ԱՐԱՐ» հիմնադրամի, «ԲՐԵՎԻՍ» հետազոտական ընկերության և «ԻՆԹՐԱ» հոգեկան առողջության կենտրոնի համագործակցությամբ*), Երևան, 2019
14. *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, IRI, փետրվար* 2021,

https://www.iri.org/wp-content/uploads/2021/03/armenian_presentation_final_16.03.2021.pdf:

15. Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Դեկտեմբեր 2021, *ՄՀԻ Հարցումների հետազոտության կենտրոն,* Center for Insights in Survey Research:

16. *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, IRI,* դեկտեմբեր 2021, https://www.iri.org/resources/public-opinion-surveyresidents-of-armenia/:

17. *Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, IRI,* հունիս 2022, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2022/:

18. Նպատակ ունենք ժամկետային զինծառայողներին հանել ՊԲ առաջնագծից. Սահակ Սահակյան, *tert.am,* հղումը՝ https://www.tert.am/am/news/2022/06/28/sahakyan/3816876, 28.06.22թ.:

19. Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի հայտարարությունը, *ՀՀ ԱԽ գրասենյակ,* https://seco.am/information/announcements/47?lang=hy, 20.09.22թ.:

20. Courtney Johnson. Trust in the military exceeds trust in other institutions in Western Europe and U.S. "*Pew Research Center*", 4 September 2018 https://www.pewresearch.org/fact-tank/2018/09/04/trust-in-the-military-exceeds-trust-in-otherinstitutions-in-western-europe-and-u-s/15/.

21. Methodological explanations, *The State Statistical Committee of the Republic of Azerbaijan*, https://stat.gov.az/source/demography/?lang=en, Baku, 2022.

22. Population by sex and age groups, *The State Statistical Committee of the Republic of Azerbaijan,* https://stat.gov.az/source/demography/?lang=en, Baku, 2022.

23. *Public Opinion Survey: Residents of Armenia, IRI,* July 23–August 15, 2018, https://www.iri.org/wp-content/uploads/2018/10/2018.10.9_armenia_poll_presentation.pdf

24. *Public Opinion Survey: Residents of Armenia, IRI,* October 9–29, 2018, https://www.iri.org/wp-content/uploads/2019/07/armenia_poll_may_2019_final.pdf

25. Public Opinion Survey: Residents of Armenia, *IRI, Center for Insights in Survey Research,* September–October 2019, https://www.iri.org/wp-content/uploads/2019/12/iri_poll_armenia_september-october_2019.pdf

26. Public Opinion Survey: Residents of Armenia, *IRI, Center for Insights in Survey Research*, September–October 2019, https://www.iri.org/wp-content/uploads/2019/12/iri_poll_armenia_september-october_2019.pdf

27. World Population Review 2022, https://worldpopulationreview.com/country-rankings/military-size-by-country, 25.06.2022

WORKS CITED

1. Hayastani Hanrapetut'yan sots'ial-tntesakan vichaky 2020, hunvar-dektemberin, HH vichakagrakan komite, Yerevan,[Socio-economic situation of the Republic of Armenia in 2020 January-December, RA Statistical Committee], 2020, ej 149 (In Armenian)

2. Hayastani Hanrapetut'yan sots'ial-tntesakan vichaky 2021 t' hunvarin. Teghekatvakan amsakan zekuyts'», HH vichakagrakan komite, Yerevan, [Socio-economic situation of the Republic of Armenia in 2021 in January. Informational monthly report, RA Statistical Committee], 2021, ej 11 (In Armenian)

3. 44-orya paterazmi zoheri t'ivn aysorva drut'yamb 3 hazar 825 e. varch'apet, Azatut'yun rradiokayan,[As of today, the number of victims of the 44-day war is 3,825. Prime Minister] https://www.azatutyun.am/a/31801316.html, 20.09.22 (In Armenian)

4. Hayastani zhoghovrdagrakan zhoghovatsu 2021, HH vichakagrakan komite, Yerevan, [Demographic collection of Armenia 2021, RA Statistical Committee], 2021, ej 37 (In Armenian)

5. Zinvorakan tsarrayut'yan yev zintsarrayoghi kargavichaki masin HH orenk', HH Azgayin zhoghov, Yerevan, [Law of the Republic of Armenia on Military Service and the Status of Servicemen, National Assembly of the Republic of Armenia] 2017, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5937#4.7 (In Armenian)

6. Arts'akhi zhoghovrdagrakan zhoghovatsu 2020, Arts'akhi Hanrapetut'yan azgayin vichakagrakan tsarrayut'yun, Step'anakert, [Demographic collection of Artsakh 2020, National Statistical Service of the Republic of Artsakh], 2020, ej 9 (In Armenian)

7. Arts'akhi Hanrapetut'yan petakan zhoghovrdagrakan k'aghak'akanut'yan hayets'akargi irakanats'umn apahovogh 2020-2022 t'vakanneri tsragiry yev mijots'arrumneri ts'anky hastatelu masin, Arts'akhi Hanrapetut'yan karravarut'yun voroshum, AH azgayin zhoghov, Step'anakert, [On approving the 2020-2022 program and the list of measures ensuring the implementation of the concept of the state demographic policy of the Republic of Artsakh], 2020t',http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=18469, 25.09.22, (In Armenian)

8. Arts'akhi nakhagahi khosnaky hastatum e` veradardzel e 95 000 hogi, Sivilnet', [Artsakh president's spokesperson confirms that 95,000 people have returned], https://www.civilnet.am/news/473692, 25.06.2022t'. (In Armenian)

9. Zohrab Mnats'akanyani harts'azruyts'y Doych'e Vellevn, HH AGN, [Zohrab Mnatsakanyan's interview with Deutsche Welle], https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/21/FM_ZM_Deutsche/10577, 25.06.2022t'. (In Armenian)

10. HH azgayin zhoghovi pashtonakan kayk'ej, [Official website of the RA National Assembly], http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15183&year=2021&month=9&day=29&fbclid=IwAR0DJ4tlILDGixf3pFbeT7-Vim5wCZxEy0JzpbXa2uUnoDHb9RqwWqam350&lang=arm&enc=utf8, 25.06.2022t'. (In Armenian)

11. Mik'ayel Malkhasyan, Armen Khach'ikyan, T. Abraham k'hn. Malkhasyan, Hayastani Hanrapetut'yan bnakch'ut'yan bnakan achy zhoghovrdagrakan ants'man ardi p'uli hamatek'stum. mitumner yev martahraverner, Hayagitut'yan harts'er handes 1 (22) Yerevan, YePH hratarakch'ut'yun,[The natural growth of the population of the RA in the context of the current stage of the demographic transition. trends and challenges, Armenian Studies Issues Journal 1 (22)], 2021, ej 145 (In Armenian)

12. Mshtakan bnakch'ut'yan serratarik'ayin kazmy, Arts'akhi Hanrapetut'yan bnakch'ut'yuny 2020, Arts'akhi Hanrapetut'yan azgayin vichakagrakan tsarrayut'yun, Step'anakert, [Sex-age composition of the permanent population, Population of the Republic of Artsakh 2020],2020, ej 8 (In Armenian)

13. KH. Gaparyan, A. Khach'ikyan, HH PN N zoramasi sots'ial-hogebanakan khndirneri usumnasirut'yun (HH PN AHTA varch'ut'yan, «ARAR» himnadrami, «BREVIS» hetazotakan ynkerut'yan yev «INT'RA» hogekan arroghjut'yan kentroni hamagortsakts'ut'yamb), Yerevan, [Study of socio-psychological problems of the N military unit of the RA Ministry of Defense], 2019 (In Armenian)

14. Hanrayin kartsik'i usumnasirut'yun. Hayastani arrka bnakch'ut'yun, IRI, p'etrvar, [Public Opinion Survey: Residents of Armenia] 2021, https://www.iri.org/wp-content/uploads/2021/03/armenian_presentation_final_16.03.2021.pdf (In Armenian)

15. Hanrayin kartsik'i usumnasirut'yun. Dektember 2022, MHI Harts'umneri hetazotut'yan kentron, [Public Opinion Survey: Residents of Armenia, Center for Insights in Survey Research], (In Armenian)

16. Hanrayin kartsik'i usumnasirut'yun. Hayastani arrka bnakch'ut'yun, IRI, dektember, [Public Opinion Survey: Residents of Armenia] 2021, https://www.iri.org/resources/public-opinion-surveyresidents-of-armenia/, (In Armenian)

17. Hanrayin kartsik'i usumnasirut'yun. Hayastani arrka bnakch'ut'yun, IRI, hunis, [Public Opinion Survey: Residents of Armenia] 2022, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2022/, (In Armenian)

18. Npatak unenk' zhamketayin zintsarrayoghnerin hanel PB arrajnagtsits'. Sahak Sahakyan, [We aim to remove conscripts from the front line of the Armed Forces] 2022, https://www.tert.am/am/news/2022/06/28/sahakyan/3816876, 25.09.22, (In Armenian)

19. Hayastani Hanrapetut'yan Anvtangut'yan khorhrdi haytararut'yuny, HH AKH grasenyak, [Statement of the Security Council of the Republic of Armenia, RA Security Council Office], 2022, https://seco.am/information/announcements/47?lang=hy, 25.09.22 (In Armenian)

DEMOGRAPHIC CHALLENGES IN THE CONTEXT OF RA AND ARTSAKH DEFENSE CAPABILITIES

ARMEN KHACHIKYAN
Yerevan State University, Chair of Applied Sociology, Ph.D Student,
Brusov State University, Scientific and Educational Center
of Public Communication Technologies, Lecturer;
«Arar» Civilizational Research Foundation, Executive Director;
Yerevan, The Republic of Armenia

2020 The 44-day war not only caused significant losses and damages to the republics of Artsakh and Armenia, but also forced to rethink and reformulate the strategic directions and priorities of all spheres.

The subject of this article are the demographic problems in the context of the defense capabilities of Artsakh and Armenia.

The basis for the method of demographic data analysis is official statistical data, results of sociological research, publications of officials and state bodies, etc.

The article examines the data on the demographic situation of the republics of Armenia, Artsakh and Azerbaijan and their analysis in the conditions of the consequences of the 44-day war, as well as the mobilization capabilities of the Armenian army and targeted-comparable countries, the attitude and rating towards military service. The number of men aged 20-54 in Azerbaijan is about 3.6 times higher than the corresponding number of the two Armenian republics. According to international indexing data, 8.7% of the permanent population of Armenia is included in the mobilization resource, while in the case of Azerbaijan, this indicator is 4.6%.

The attitude towards the military service, the evaluation and ranking of the army, which ultimately form the motivation to participate in the mobilization in war conditions, are decisive for the formation of the mobilization resource, including the recruitment of the army on the principle of volunteerism. The rating of the Armenian army has experienced a significant decline, which inevitably has a negative impact on coping with defense challenges, and the number of Armenians who give a positive assessment of the army has decreased by about 35%. Thus, it is necessary to clarify and define the model of implementation of security and protection of our country at the strategic and operational levels, on the basis of which the border protection system and actions will be formed.

Keywords: *Republic of Armenia, Artsakh, demography, security system, military service, army reputation, military potential, mobilization resource.*

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ВЫЗОВЫ В КОНТЕКСТЕ ОБОРОНОСПОСОБНОСТИ РА И АРЦАХА

АРМЕН ХАЧИКЯН
аспирант кафедры прикладной социологии
Ереванского государственного университета,
преподаватель Научно-образовательного центра технологий общественных коммуникаций государственного университета имени В. Брюсова,
исполнительный директор Фонда цивилизационных исследований «Арар»,
г. Ереван, Республика Армения

44-х дневная война 2020 года не только нанесла значительные потери и ущерб республикам Арцах и Армения, но и заставила переосмыслить и переформулировать стратегические направления и приоритеты всех сфер их функционирования.

Предметом данной статьи являются демографические проблемы в контексте обороноспособности Арцаха и Армении.

В основу метода анализа демографических данных положены официальные статистические данные, результаты социологических исследований, публикации официальных лиц и государственных органов и т.п.

В статье рассматриваются данные о демографическом положении республик Армения, Арцах и Азербайджан и их анализ в условиях последствий 44-дневной войны, а также мобилизационные возможности армянской армии и целенаправленно-сопоставимых стран, отношение и рейтинг к службе в армии. Количество мужчин в возрасте 20-54 лет в Азербайджане примерно в 3,6 раза превышает соответствующее количество в двух армянских республиках. По данным международной индексации, в мобилизационный ресурс включено 9,3% постоянного населения Армении, в то время как в случае Азербайджана этот показатель составляет 4,6%.

Отношение к воинской службе, оценка и ранжирование армии, формирующие в конечном итоге мотивацию к участию в мобилизации в условиях войны, являются определяющими для формирования мобилизационного ресурса, в том числе комплектования армии по принципу добровольчества. Рейтинг армянской армии значительно снизился, что неизбежно негативно сказывается на решении оборонных задач, а число армян, дающих положительную оценку армии, уменьшилось примерно на 35%. Таким образом, необходимо уточнить и определить модель реализации безопасности и защиты нашей страны на стратегическом и оперативном уровнях, на основе которой будут формироваться система и действия по охране границы.

Ключевые слова: *Республика Армения, Арцах, демография, система безопасности, военная служба, репутация армии, военный потенциал, мобилизационный ресурс.*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 1940-1950-ԱԿԱՆ ԹԹ.*

ՀՏԴ 941 *10.52063/25792652-2022.3.14-35*

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի
Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների
ուսումնասիրության բաժնի գիտաշխատող,
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի
հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gayane.s.hovhannisyan.1994@mail.ru

Հոդվածի նպատակն է բացահայտել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող հիմնական գործոնները 1940-1950-ական թվականներին: Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել ինքնավար մարզում Հայրենական պատերազմի, ադրբեջանական բնակչության վերաբնակեցման, 1949 թ. հայ բնակչության աքսորի ժողովրդագրական հետևանքները, ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանում ադրբեջանական իշխանությունների կողմից մարզում իրագործվող ժողովրդագրական անուղղակի քաղաքականության դրսևորումները:

Հետազոտությունն իրականացվել է արխիվային փաստաթղթերի, վիճակագրական աղբյուրների, համամիութենական մարդահամարների, մասնագիտական գրականության հիման վրա: Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք արխիվային վերլուծության, պատմականության և նկարագրական մեթոդները:

Ուսումնասիրելով թեման՝ եկել ենք այն եզրակացության, որ 1940-1950-ական թթ. ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը վերաբերում է համամիութենական ռազմաքաղաքական գործընթացներին և ներառում է Հայրենական պատերազմի ժողովրդագրական կորուստներն ու հետևանքները, ինչպես նաև 1949 թ. Խորհրդային Միության բարձրագույն իշխանությունների կողմից կազմակերպված հայ բնակչության զանգվածային աքսորը: Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների երկրորդ խմբի մեջ են մտնում ադրբեջանական իշխանությունների այնպիսի ձեռնարկումները, ինչպիսիք էին պատերազմական տարիներին և հետպատերազմյան շրջանում մարզի աշխատուժի հավաքագրումները, հետպատերազմյան տարիներին ադրբեջանական բնակչության վերաբնակեցումները ինքնավար մարզի տարածքում, ադրբեջանական գյուղերի ձևավորումը, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դանդաղեցումը:

Հիմնաբառեր՝ *Հայրենական պատերազմ, ժողովրդագրական հետևանքներ, 1949 թ. հայ բնակչության աքսոր, ադրբեջանական բնակչության վերաբնակեցում, աշխատուժի հավաքագրումներ, ժողովրդագրական քաղաքականություն, ժողովրդագրական պատկեր:*

---

* Հոդվածը ներկայացվել է 20.07.2022թ., գրախոսվել՝ 16.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Ներածություն

1940-1950-ական թթ. տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ և գործընթացներ, որոնք իրենց ազդեցությունն ունեցան Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերի վրա: Դրանց մի մասը ադրբեջանական իշխանությունների կողմից շարունակվող ժողովրդագրական քաղաքականության դրսորևումներ էին, իսկ մյուս մասը՝ այս կամ այն չափով ազդեցություն ունեցան նաև միութենական այլ հանրապետությունների և ինքնավարությունների վրա: Քննարկվող ժամանակահատվածում ինչպես ամբողջ Խորհրդային Միության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների շարքում առաջին հերթին պետք է անդրադառնալ Հայրենական պատերազմին և դրա հետևանքներին:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայրենական պատերազմում և դրա ժողովրդագրական հետևանքները

Ինչպես հայտնի է, 1941 թ. հունիսի 22-ի լուսաբացին սկսվեց Խորհրդային Միության Հայրենական պատերազմը, որը պահանջում էր երկրի ինչպես նյութական, այնպես էլ մարդկային ռեսուրսների մոբիլիզացիա: Պատերազմի սկզբնական շրջանում Կարմիր բանակի ռազմական անհաջողությունները և հսկայական մարդկային կորուստները խորհրդային ռազմաքաղաքական ղեկավարության համար առաջնահերթ դարձրեցին բանակի համալրման խնդիրը: Այդ նպատակով մասշտաբային զինակոչերի և զորահավաքների վերաբերյալ Պաշտպանության պետական կոմիտեն 1941-1942 թթ. ընդունեց մի շարք հրամաններ (Безугольный 102):

Անդրադառնալով պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից զորակոչված հավաքակազմին՝ հարկ է նշել, որ զորակոչվածների և անվերադարձ կորուստների վերաբերյալ առաջին և առ այսօր միակ վիճակագրական տվյալները ներկայացրել է պատմաբան Շ. Մկրտչյանը: Ըստ նրա՝ Հայրենական պատերազմի տարիներին ինքնավար մարզից ռազմաճակատ է մեկնել 45056 մարդ, որից 1850-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ (Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին 112):

Քննարկելով ԼՂԻՄ մասնակցության խնդիրը Հայրենական պատերազմին՝ պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Բանն այն է, որ ծագումով Լեռնային Ղարաբաղից մեծաթիվ հայեր մասնակցել են Հայրենական պատերազմին՝ զորակոչվելով Ադրբեջանի այլ շրջաններից՝ մասնավորապես Բաքվից: Ինչպես հայտնի է, 1920-ական թթ.-ից սկսած ԼՂԻՄ հայ բնակչությունը (հիմնականում արական սեռի) արտամղվում էր Ադրբեջանի արդյունաբերական տարբեր քաղաքներ: Այսպես՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով՝ Բաքվում հայ առկա բնակչության թվաքանակը կազմում էր 118650 մարդ, Կիրովաբադում՝ 27676 մարդ (Всесоюзная перепись населения 1939 г.): Նրանց մեջ մեծաթիվ էին նաև ծագումով Լեռնային Ղարաբաղի հայերը, որոնք խորհրդային բանակ զորակոչվել են այդ քաղաքներից: Ըստ հետազոտող Վ. Ղազարյանի՝ միայն Բաքվից զորակոչվել են ծագումով Ղարաբաղից 12 հազար հայ, Ադրբեջանի այլ վայրերից՝ ևս 3 հազարը (Об участии армян НКАО и Азербайджана…): Ըստ պատմաբան Յու. Բաղդասարյանի տվյալների՝ ամբողջ Ադրբեջանից պատերազմին մասնակցել են շուրջ 130 հազար հայ (130): Նշենք, որ ըստ նախապատերազմյան 1939 թ. մարդահամարի՝ ադրբեջանցիները կազմում էին երկրի բնակչության կեսից փոքր ինչ ավելին՝ 58.4%-ը (1870471 մարդ): Երկրորդ տեղում բնակչության թվաքանակով ռուս բնակչությունն էր՝ 16.5% (528318 մարդ), ապա հայ բնակչությունը՝ 12.1% (388025 մարդ) (Всесоюзная перепись населения 1939 г.): Ադրբեջանի առկա բնակչությունում մեծաթիվ էին նաև

լեզգիները, թալիշները, թաթարները, հրեաները և այլ ժողովուրդներ: Բնականաբար, Հայրենական պատերազմի ժամանակ Ադրբեջանից խորհրդային բանակ զորակոչվածների մեջ մեծաթիվ են եղել վերոհիշյալ ազգությունների ներկայացուցիչները: Նշենք նաև, որ որոշ տվյալներով Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող լեզգիների, քրդերի ու թալիշների մոբիլիզացման մակարդակը գերազանցում էր այդ էթնիկ հանրույթների թվաքանակի 30%-ը: Նույն տվյալների համաձայն՝ ադրբեջանցիների մոբիլիզացման առավելագույն մակարդակը եղել է 13% (Мелик-Шахназарян и Хачатрян 23):

Ինչ վերաբերում է ԼՂԻՄ անվերադարձ կորուստների թվաքանակին, ապա ըստ ԼՂԻՄ վիճակագրական վարչության 1969 թ. հրատարակած վիճակագրական ժողովածուի՝ 1945 թ. ԼՂԻՄ բնակչության թվաքանակը կազմում էր 135.7 մարդ (*Нагорный Карабах за годы советской власти* 26): Այսինքն՝ 1939-1945 թթ. ինքնավար մարզի բնակչության թվաքանակը բացարձակ թվով նվազել էր 15.1 հազարով: 1940-1945 թթ. կտրվածքով ինքնավար մարզի բնակչության թվաքանակի նվազումը կազմում է ավելի քան 20 հազար մարդ[1]: Սա, իհարկե, զուտ թվաբանական տարբերությունն է: Եթե նկատի ունենանք հիշյալ ժամանակաշրջանում ծնվածների թվաքանակը, ապա մարզի կորուստներն ավելի մեծ կլինեն: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այս թվաքանակում ներառված են ինչպես պատերազմի մարդկային կորուստները, այնպես էլ բնական մահացության ցուցանիշները, որոնք պատերազմական շրջանում առավել բարձր են լինում՝ հիվանդությունների և կենսապայմանների վատթարացման հետևանքով:

Հայրենական պատերազմում ինքնավար մարզի բնակչության լայնածավալ մասնակցությունն ու մեծաքանակ անվերադարձ կորուստները բացասական հետևանքներ ունեցան մարզի հետագա ժողովրդագրական գործընթացների վրա: Պատերազմի ուղղակի հետևանքներից առաջինը մարզի բնակչության թվաքանակի խիստ կրճատումն էր անվերադարձ կորուստների, ծնելության մակարդակի նվազման և մահացության մակարդակի աճի հետևանքով: Հետպատերազմյան առաջին՝ 1959 թ. մարդահամարի տվյալներով մարզի բնակչության թվաքանակը կազմում էր 130406 մարդ, ինչը նշանակում էր, որ մարզի բնակչությունը նախապատերազմյան 1939 թ. մարդահամարի համեմատությամբ նվազել էր բացարձակ թվով 20431-ով կամ 13.5%-ով (հաշվարկները կատարված են ըստ հետևյալ սկզբնաղբյուրների տվյալների. *Численность населения СССР на 17-января 1939 г.* 215; *Итоги Всесоюзной переписи населения 1959 года* 12): Հատկանշական է, որ ԼՂԻՄ բնակչության նախապատերազմյան թվաքանակը (ավելի քան 150 հազար մարդ) վերականգնվեց միայն 1970-ական թթ. սկզբներին (Արցախի Հանրապետության արխիվ, *ֆ. 142, ց. 4, գ. 90, թ. 48*): Հայրենական պատերազմը մեծ վնաս հասցրեց նաև բնակչության առողջությանը՝ բարձրացնելով մահացության ցուցանիշները: Պատերազմական պայմաններում օրգանիզմի ընդհանուր թուլացումը նպաստում էր տարատեսակ հիվանդությունների աճին: 1959 թ. տվյալներով ԽՍՀՄ քաղաքներում 1940 թ. համեմատությամբ նկատվում էր մի շարք հիվանդությունների աճ (Поляков и др.): Հետպատերազմյան ժողովրդագրական այս միտումը բնութագրական էր նաև ինքնավար մարզին, որտեղ մինչև 1950-ական թթ. կեսերը ևս բավականին բարձր էր մահացության մակարդակը (*Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах* 39): Պատերազմի ժողովրդագրական հետևանքներից էր հետպատերազմյան շրջանում սեռային կազմում իգական բնակչության զգալի գերակշռությունը, ինչպես նաև բնակչության ժողովրդագրական ծերացման գործընթացը:

[1] 1940 թ. ԼՂԻՄ բնակչության թվաքանակը հաշվարկվում է 156 հազար մարդ. տե՛ս *Народное хозяйство Азербайджанской ССР к 60-летию Великого Октября* 9.

1948-1953 թթ. Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցման դրսևորումները ԼՂԻՄ-ում և դրա ժողովրդագրական հետևանքները

Քննարկվող ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր ժողովրդագրական գործընթացներից էր Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումն Ադրբեջանի Կուր-Արաքսյան հարթավայր: 1947 թ. դեկտեմբերի 3-ին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարներ Գ. Հարությունյանը և Մ. Ջ. Բաղիրովը համատեղ նամակով դիմեցին Ստալինին՝ հանդես գալով Հայաստանում բնակվող ադրբեջանական բնակչության վերաբնակեցման առաջարկությամբ (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 1, g. 27, գ. 47, թթ. 137-138*): Որպես գործընթացի կազմակերպման հիմնավորում ներկայացվում էր Ադրբեջանում Մինգեչաուրի համակարգի իրագործման հետևանքով նոր հողատարածությունների յուրացման և բամբակային շրջանների կոլտնտեսություններում աշխատուժի պակասը, ինչպես նաև այդ շրջաններում բամբակի բերքատվության բարձրացման նպատակով բնակչության թվաքանակի ավելացման անհրաժեշտությունը: Չուգահեռաբար, հայկական կողմի համար վերաբնակեցումը մեծապես կհեշտացներ արտասահմանից վերադարձող հայերի ընդունումը: Ադրբեջանցիների վերաբնակեցման հետևանքով ազատվող հողերը և բնակարանները կարող էին օգտագործվել հայրենադարձվածների բնակեցման համար (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 1, g. 27, գ. 47, թ. 137*): Նամակի հիման վրա ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1947 թ. դեկտեմբերի 23-ին ընդունեց «Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ Կուր-Արաքսյան հարթավայր կոլտնտեսականների և այլ արդբեջանական բնակչության վերաբնակեցման մասին» որոշումը (Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 113, g. 29, գ. 179, թթ. 38-40*):

Ադրբեջանական բնակչության վերաբնակեցումն իր դրսևորումներն ունեցավ նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում: Մասնավորապես, ըստ ԼՂԻՄ մարզկոմի քարտուղար Աբրամովի կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովի 1949 թ. հունվարյան տեղեկագրի՝ 1948 թ. օգոստոսին Հայկական ԽՍՀ Վեդիի շրջանից ԼՂԻՄ Մարտունու շրջան են վերաբնակեցվել 131 ադրբեջանական տնտեսություն կամ 570 մարդ, որոնցից 86 տնտեսություն (355 մարդ) հաստատվել է նույն շրջանի Գիշի գյուղում, 25 տնտեսություն (120 մարդ)՝ Խնուշինակում, 17 տնտեսություն (82 մարդ)՝ Գյուլեթ Ճարտարում, 3 տնտեսություն (13 մարդ)՝ Մուղանլու գյուղում (Արցախի Հանրապետության արխիվ, *ֆ. 250, g. 10, գ. 13, թ. 11*): Ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը նպատակ ուներ փոխելու մարզի էթնոժողովրդագրական պատկերը՝ մանավանդ, եթե ուշադրություն դարձնենք այն փաստին, որ վերբնակեցվող ադրբեջանական բնակչությունը գլխավորապես բնակեցվում էր մարզի հայաբնակ բնակավայրերում (Ուլուբաբյան 258; Газарян, Имела ли место депортация азербайджанцев…; Харатян 28): Ըստ Վ. Ղազարյանի՝ 1948-1950 թթ. ինքնավար մարզի գյուղերում հաստատվել են ավելի քան 4000 ադրբեջանցի, որոնցից 1.2 հազարը Շուշի քաղաքում և Շուշիի շրջանում (Имела ли место депортация азербайджанцев…): Ադրբեջանցիների վերաբնակեցման հետևանքով ինքնավար մարզում առաջացան մի շարք ադրբեջանաբնակ գյուղեր, մասնավորապես Ստեփանակերտի շրջանում Հասանաբադ, Յալոբաքենդ, Ջավադլար, Շուշիի շրջանում՝ Խանլիքփայա (Խանլըգփայա), Խանալի, Չայքենդ, Իմամկուլիլար, Լեսնոյե և այլն (Газарян, Имела ли место депортация азербайджанцев…): Ադրբեջանական վերաբակիչները հաստատվել են նաև Ստեփանակերտից ոչ հեռու գտնվող Դաշբուլաղ, Կիրկիջան, Ջամիլլու և այլ գյուղերում: Հետպատերազմյան տարիներին ադրբեջանցիներ են վերաբնակեցվել նաև Ասկերանում, Հադրութի շրջանի Տյաք

գյուղում (Բալայան, *Արցախի հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր* 31, 163):

Ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը Լեռնային Ղարաբաղում վճռորոշ նշանակություն ունեցավ մարզի ժողովրդագրական գործընթացներում: Այն նպաստեց մարզի էթնիկ կազմի փոխակերպմանը հօգուտ ադրբեջանական բնակչության: Հետպատերազմյան 1959 թ. մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ բոլոր էթնիկ հանրույթներից միայն ադրբեջանական բնակչությունն էր արձանագրել 28% (բացարձակ թվով 3942 մարդ) աճ նախապատերազմյան մարդահամարի համեմատությամբ (Всесоюзная перепись населения 1939 г.; Всесоюзная перепись населения 1959 г.):

1949 թ. հայ բնակչության աքսորը ԼՂԻՄ-ից և դրա ժողովրդագրական հետևանքները

Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացների վրա ազդեցություն ունեցող հաջորդ իրադարձությունը հայ բնակչության 1949 թ. զանգվածային աքսորն է: ԽՍՀՄ Պետական անվտանգության նախարարի կողմից 1949 թ. մայիսի 28-ին ընդունվում է «Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ և ՍԱ ծովի առափնյա տարածքների թուրքական քաղաքացիների, քաղաքացիության չունեցող թուրքերի, խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին թուրքահպատակների, հունահպատակների, ներկայումս քաղաքացիություն չունեցող նախկին հունահպատակների, խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին հունահպատակների և դաշնակների՝ իրենց ընտանիքներով աքսորի մասին» որոշումը (Харатян 36):

Հայ բնակչության զանգվածային աքսորը տեղի է ունեցել 1949 թ. հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը: Ադրբեջանի Ներքին գործերի նախարար Յակուբովը 1941 թ. հուլիսի 1-ի ԽՍՀՄ Ներքին գործերի փոխնախարարին ուղարկած նամակում նշում է, որ Պետական անվտանգության մարմինների կողմից ընդունվել է 750 աքսորյալ ընտանիք՝ 3058 մարդ, այդ թվում՝ «հույներ»՝ 323, «դաշնակցականներ»՝ 1045, «թուրքեր»՝ 1690: Ըստ Ադրբեջանի ՆԳՆ նախարարի՝ աքսորյալ հավաքակազմին ընդունել են երկու կայարաններում՝ Կիրովաբադի և Ալյաթի (Харатян 42-43): Նկատենք, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից աքսորվածները վկայում են, որ իրենց գնացք են նստեցրել Եվլախ ու Հորադիզ կայարաններում, որոնց մասին աքսորի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերում տեղեկություններ չկան (Газарян, Депортация армян из НКАО...): Այն, որ ԼՂԻՄ-ից հայ աքսորականներով համալրվում էին Խորհրդային Հայաստանից եկած գնացքակազմերը, վկայում են նաև հենց աքսորյալները (Харатян 44-45): Հետազոտող Ն. Աբլաժայի տվյալներով՝ Ադրբեջանից «դաշնակցականները» աքսորվել են № 97107 և № 97111 գնացքակազմերով (Аблажей, *Армянская депортационная кампания 1949 года* 182): Հ. Խառատյանի կարծիքով՝ քանի որ № 97107 գնացքակազմը Խորհրդային Հայաստանից մեկնումի պահին ունեցել է 1204 հոգի, իսկ տեղ հասել 1039-ով, ապա այն չէր կարող համալրված լինել Ադրբեջանում կամ որևէ այլ վայրում (Харатян 42-43): Ինչ վերաբերում է № 97111 գնացքակազմին, ապա Ալթայի երկրամասի Ներքին գործերի նախարարության արխիվում պահպանվող գնացքակազմերի ցուցակներում № 97111 գնացքակազմի մեկնակետի տողում նշված է «Հայկական ԽՍՀ Ջաջուռ կայարան, ԼՂԻՄ Ադրբեջանական ԽՍՀ» (Аблажей, *Депортация армян в Алтайский край в 1949 г.* 49), ինչը միակ տեղեկությունն է պաշտոնական փաստաթղթերում ինքնավար մարզից աքսորի մասին: Հետազոտողների կարծիքով՝ իրականում Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանից աքսորյալ հայերի թվաքանակը բավականին մեծաթիվ է, սակայն դրանք չեն պահպանվել կամ չեն հայտնաբերվել արխիվներում և պաշտոնական փաստաթղթերում (Газарян, Депортация армян из НКАО...; Харатян 40-43):

Անդրադառնալով ինքնավար մարզում հայ բնակչության աքսորի կազմակերպմանը՝ նշենք, որ ըստ Շ. Մկրտչյանի՝ 1949 թ. հունիսի 13-ի գիշերը Ստեփանակերտում տեղակայված զորամասի ակումբում կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Ս. Աբրամովի գլխավորությամբ տեղի է ունեցել մարզի կուսակցական ակտիվի խիստ գաղտնի ժողով: Այստեղ Զաիլովը հայտնում է, որ գիշերը պետք է կալանավորվեն և արտաքսվեն նախկինում դաշնակցական կառավարության կազմում, ինչպես նաև գերմանական գերության մեջ եղած անձինք՝ իրենց ընտանիքներով (Մկրտչյան, *Արցախյան գրառումներ* 28):

Բացառությամբ որոշ բնակավայրերի՝ հայ բնակչության աքսորը իրագործվել է ինքնավար մարզի ամբողջ տարածքում: Գյուղերից հիմնականում աքսորվել է 3-4 ընտանիք, հազվադեպ՝ 2, հաճախ՝ 5-7 ընտանիք (Газарян, Депортация армян из НКАО…): Վ. Ղազարյանի հաշվարկներով՝ միայն ԼՂԻՄ-ից աքսորվել է ավելի քան 3000 հայ: Ըստ հետազոտողի՝ ամբողջ Ադրբեջանից աքսորված հայության թվաքանակը հաշվելու համար այս թվաքանակին պետք հավելել մեկ գնացքակազմ (միջինում բաղկացած 1330 անձից) Բաքվից և մեկ գնացքակազմ Կիրովաբադի կայարանից (Газарян, Депортация армян из НКАО…): Հ. Խառատյանի նվազագույն հաշվարկներով Ադրբեջանից աքսորված «դաշնակցականների» թիվը (առանց Բաքու և Կիրովաբադ քաղաքների) եղել է շուրջ 2400 մարդ (Харатян 45):

1949 թ. հայ բնակչության աքսորը նպաստեց ինքնավար մարզի բնակչության էթնիկ պատկերի փոխակերպմանը: Աքսորի ենթարկվել է մարզի միայն հայ բնակչությունը, գործընթացը չի տարածվել մարզի մյուս էթնիկ հանրույթների վրա՝ բացասական ազդեցություն ունենալով հայ բնակչության թվաքանակի և տեսակարար կշռի վրա: Բռնաքսորը՝ ժողովրդագրական պատկերը պայմանավորող այլ գործոնների համակցությամբ, նպաստեց մարզի բնակչության ընդհանուր թվաքանակում հայ բնակչության բացարձակ ու հարաբերական ցուցանիշների նվազմանը:

Ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները ԼՂԻՄ-ում և դրանց հետևանքները

Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող հաջորդ կարևոր գործոնը ադրբեջանական իշխանությունների կողմից շարունակվող ժողովրդագրական անուղղակի քաղաքականությունն էր: Մասնավորապես իշխանություններն ադրբեջանական քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններում աշխատուժի պակասը լրացնում էին ԼՂԻՄ-ից հայ բնակչության (հատկապես երիտասարդների) կազմակերպված ներհոսքով (Շ. Աբրահամյան 41; Բալայան, *Դրվագներ արցախահայության*… 233):

Սկզբնաղբյուրներում պահպանվել են տվյալներ Հայրենական պատերազմի ժամանակ իշխանությունների կողմից մարզի աշխատուժի հավաքագրումների և արդյունաբերական կենտրոններ ուղարկելու մասին (Հ. Աբրահամյան 207-208): Ըստ հետազոտող Հ. Աբրահամյանի՝ միայն 1942-1943 թթ. ինքնավար մարզից արտամղվել 14-18 տարեկան առնվազն 800 երիտասարդ (208): Մարզից հավաքագրումները կատարվում էին ադրբեջանական կառավարության համապատասխան որոշումներով: Մասնավորապես 1942 թ. հուլիսի 20-ին Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի և կոմկուսի կենտկոմի կողմից ընդունվել է «1942 թ. Ադրբեջանական ԽՍՀ ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներում պետական աշխատանքային ռեզերվների պատրաստման մասին» որոշումը (*Азербайджанская ССР в период Великой Отечественной войны* 338): Դրանով պարտավորեցվում էր Նախիջևանի ԻԽՍՀ ժողկոմխորհին, ԼՂԻՄ մարզգործկոմին, քաղաքային և շրջանային գործկոմներին ֆաբրիկագործարանային ուսուցման դպրոցներ հավաքագրվողներին բաշխել ըստ շրջանների, կոլտնտեսությունների և

գյուղխորհուրդների, ինչպես նաև լայն քարոզչական աշխատանքներ տանել հատկապես իգական բնակչության շրջանում (*Азербайджанская ССР в период Великой Отечественной войны* 339): Հաջորդ նման որոշումը Ադրբեջանի Ժողկոմխորհի և կոմկուսի կենտկոմի 1942 թ. նոյեմբերի 16-ի «Ադրբեջանի արհեստագործական ուսումնարանների համար քաղաքային և կոլտնտեսական երիտասարդների հավաքագրման մասին» հրամանն էր (*Азербайджанская ССР в период Великой Отечественной войны* 345-347):

Ադրբեջանական իշխանությունների հավաքագրումների քաղաքականությունն ավելի ուժգնացավ հետպատերազմյան շրջանում: Հայրենական պատերազմից հետո Ադրբեջանում լայն թափ ստացավ քաղաքաշինությունը, արդյունաբերական և էներգետիկ նոր կենտրոնների ստեղծումը: Մասնավորապես հետպատերազմյան շրջանում տեղի ունեցավ Մինգեչաուր քաղաքի, հիդրոէլեկտրակայանի և Սումգայիթ քաղաքի կառուցումը, ինչի հետևանքով ինքնավար մարզից հարյուրավոր երիտասարդներ ուղարկվեցին այնտեղ՝ որպես բանվորական ուժ (Շ. Աբրահամյան 42; Բալայան, *Դրվագներ արցախահայության…* 233; Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղ…* 161; Ուլուբաբյան 253-254):

Հավաքագրումների հետևանքով ադրբեջանական արդյունաբերական շրջաններում աշխատանքի անցած ղարաբաղցիներից շատերն այլևս չէին վերադառնում ինքնավար մարզ, այլ հաստատվում էին իրենց բնակության նոր վայրերում՝ որպես տեղի մշտական բնակիչներ: Հետևաբար փոփոխության էին ենթարկվում ԼՂԻՄ բնակչության թվաքանակը, էթնիկ և սեռատարիքային կազմը: Հատկանշական է, որ քննարկվող ժամանակաշրջանում իրագործվող հավաքագրումների հետևանքով մարզից արտամղվեց ոչ միայն արական, այլ նաև իգական բնակչությունը: Այս խմբի արտահոսքը տեղի էր ունենում նաև ամուսնության հետևանքով (Շ. Աբրահամյան 42): Նշենք նաև, որ հատկապես Հայրենական պատերազմի ժամանակ հավաքագրվողների տարիքային շեմը բավականին ցածր էր (14-18 տարեկան), ինչը նշանակում էր, որ մարզից դուրս էր մղվում ապագա վերարտադրողական շրջափուլի հավաքակազմը: Արական և իգական վերարտադրողական տարիքի բնակչության արտահոսքը ավելի դանդաղեցրեց մարզի բնական աճի տեմպերը:

Ինչ վերաբերում է քննարկվող ժամանակաշրջանում մարզում իրագործվող տնտեսական քաղաքականությանը, ապա հետազոտողները ընդգծում են մարզի ընդհանուր տնտեսական զարգացման անբավարար մակարդակը, մարզի տնտեսական կյանքի զարգացման արգելակման միջոցով հայության արտահոսքն արագացնելու և դրան «բնական» ընթացք տալու համար ադրբեջանական կառավարության նպատակադիր քաղաքականությունը: Ադրբեջանական իշխանությունները չնչին կապիտալ հատկացումներ էին կատարում մարզի տնտեսական զարգացման համար (Мирзоян 43-53): Հետազոտող Շ. Աբրահամյանը հատկապես ընդգծում է արտադրական ձեռնարկությունների կառուցման և շինարարական աշխատանքների ծավալների տարբերությունը ԼՂԻՄ-ի և հարևան ադրբեջանական շրջանների միջև (Շ. Աբրահամյան 41-43): Հետպատերազմյան շրջանում փակվեցին մարզի բնակչության համար աշխատատեղ հանդիսացող մի շարք ձեռնարկություններ (Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղ…* 87):

Հայրենական պատերազմից հետո թեև որոշակի գործընթացներ ծավալվեցին, սակայն մարզի գյուղատնտեսության զարգացման ցածր տեմպերը շարունակվում էին (Հ. Աբրահամյան 158-177; Շ. Աբրահամյան 44): Ցածր էին ցուցանիշները նաև շինարարության բնագավառում (Հ. Աբրահամյան 142-143): Բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումները ԼՂԻՄ-ում 1950-ական թթ. տասն անգամ ավելի ցածր էին համաադրբեջանական ցուցանիշից (*Нагорный Карабах* 49):

Հետազոտողների կարծիքով՝ ադրբեջանական իշխանությունների՝ մարզի տնտեսական զարգացման արգելակման քաղաքականությունը միտումնավոր բնույթ

էր կրում՝ մարզը ադրբեջանական քաղաքների համար բանվորական աշխատուժի մատակարարման «հենակետ» դարձնելու համար (Շ. Աբրահամյան, 44, Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղ… 160-161): Նման ձևով ադրբեջանական կողմն առաջացնում էր գործազրկություն՝ մարզի սոցիալ-տնտեսական ծանր դրության, անբավարար կենսապայմանների հետևանքով հանգեցնելով հայկական աշխատուժի ուղղորդմանը դեպի ադրբեջանական շրջաններ:

ԼՂԻՄ-ում դաշտային աշխատանքներ իրականացրած ազգագրագետ Ա. Տեր-Սարգսյանցն իր հետազոտությունում ևս արձանագրում է, որ ԼՂԻՄ բնակչության միգրացիոն գործընթացները նկատելիորեն սրվել էին Հայրենական պատերազմից հետո (Тер-Саркисянц 154): Ընդ որում, հետազոտողը առանձնացնում է մարզի բնակչության ինչպես «աշխատանքային միգրացիան», այնպես էլ կրթություն ստանալու նպատակով երիտասարդների շրջանում ծավալված տեղաշարժերը: Մասնավորապես, եթե նախապատերազմյան շրջանում ԼՂԻՄ բնակիչները հիմնականում արտագաղթում էին դեպի Ադրբեջան և Կենտրոնական Ասիայի քաղաքներ (նման արտագաղթի հիմնական դրդապատճառներն էին քաղաքում մասնագիտություն և աշխատանք ձեռք բերելը, աշխատանքային պայմանների բարելավումը, բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների համար՝ մասնագիտությամբ աշխատելու ցանկությունը), ապա հետպատերազմյան շրջանում կապված արդյունաբերության աճի և Հայկական ԽՍՀ մշակույթի ծաղկման հետ՝ ուժեղացավ արցախահայության հոսքը նաև դեպի Հայաստան՝ հիմնականում մայրենի լեզվով կրթություն ստանալու համար: Արտագաղթի ծավալները զգալի էին հատկապես գյուղական բնակչության շրջանում:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ադրեջանական իշխանությունների կողմից մարզի էթնիկ պատկերի փոխակերման «գործիք» դարձավ տնտեսության ճյուղերից մեկը՝ անասնապահությունը, մասնավորապես՝ ոչխարաբուծությունը: Չնայած մարզի արոտավայրերի, կերապաշարների անբավարարությանը՝ ադրբեջանական իշխանությունները նպատակադիր կերպով մարզում զարկ տվեցին անասնաբուծության այս ճյուղի զարգացմանը՝ նպատակ ունենալով մարզը բնակեցնել անասնապահ-ադրբեջանցիներով (Հ. Աբրահամյան 172; Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղ…* 171-172):

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ադրբեջանական իշխանությունների կողմից մարզի նկատմամբ իրագործված ժողովրդագրական քաղաքականության անուղղակի դրսևորումները (հավաքագրումներ, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով ծավալված արտագաղթ, ադրբեջանցիների վերաբնակեցում) նպաստեցին մարզի բնակչության թվաքանակի, էթնիկ պատկերի և սեռատարիքային կազմի փոխակերպմանը: Սույն հոդվածում քննարկված գործոնների ազդեցությամբ 1959 թ. մարդահամարի արդյունքներով հայ բնակչության նվազումը նախապատերազմյան թվաքանակի նկատմամբ բացարձակ թվով կազմել էր 22747 մարդ կամ 17.1% (*Всесоюзная перепись населения 1939 г.; Всесоюзная перепись населения 1959 г.*):

Եզրակացություն

Ամփոփելով սույն հետազոտության արդյունքները՝ գալիս ենք այն եզրակացության, որ 1940-1950-ական թթ. ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորված էին ինչպես Խորհրդային Միության ռազմաքաղաքական գործընթացներով, այնպես էլ ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող քաղաքականությամբ: Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների առաջին խումբը վերաբերում է համամիութենական ռազմաքաղաքական գործընթացներին և ներառում է Հայրենական պատերազմի ժողովրդագրական կորուստներն ու հետևանքները, ինչպես նաև 1949 թ. ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների կողմից կազմակերպված հայ բնակչության

զանգվածային աքսորը: Գործոնների այս խումբը իր ազդեցությունն ունեցավ հատկապես մարզի բնակչության թվաքանակի, բնական աճի, սեռատարիքային կառուցվածքի վրա:

Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների մյուս խմբի մեջ են մտնում ադրբեջանական իշխանությունների այնպիսի ձեռնարկումները, ինչպիսիք էին՝ հետպատերազմյան տարիներին ադրբեջանական բնակչության վերաբնակեցումներն ինքնավար մարզի տարածքում, ադրբեջանական գյուղերի ձևավորումը, մարզի աշխատուժի հավաքագրումները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դանդաղեցումը: Նման քաղաքականությունը միտված էր մարզի էթնիկ կազմի փոխակերպմանը: Միջմարդահամարային ժամանակաշրջանում (1939-1959 թթ.) բացարձակ թվաքանակի և հարաբերական ցուցանիշի նվազում էին արձանագրել մարզի բոլոր էթնիկ հանրույթները՝ բացառությամբ ադրբեջանցիների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան, Հրանտ. *Մարտնչող Արցախը. 1917-2000. Գիրք Բ. 1923-1985*. Զանգակ, Երևան, 2005:
2. Աբրահամյան, Շահեն. *Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում.* «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2003:
3. Արցախի հանրապետության արխիվ, *ֆ. 250, ց. 10, գ. 13, թ. 11:*
4. --- *ֆ. 142, ց. 4, գ. 90, թ. 48:*
5. Բալայան, Վահրամ. *Արցախի հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր*. Զանգակ, Երևան, 2020:
6. ---. *Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ).* «Սոնա» գրահրատարակչություն, Ստեփանակերտ, 2012:
7. Բաղդասարյան, Յուրի. *Բաքուն և հայերը, հակահայկական քաղաքականությունն ու հայերի էթնիկական մաքրումը Ադրբեջանում.* Լուսակն, Երևան, 2014:
8. Հայաստանի Ազգային Արխիվ, *ֆ. 1, ց. 27, գ. 47, թթ. 137-138:*
9. --- *ֆ. 1, ց. 27, գ. 47, թ. 137*:
10. --- *ֆ. 113, ց. 29, գ. 179, թթ. 38-40:*
11. Մկրտչյան, Շահեն. *Արցախյան գրառումներ (փաստավավերագրական ժողովածու)*. Երևան, Նոյյան տապան, 2001:
12. Մկրտչյան, Շահեն. *Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան.* «Ազատ Արցախ» հրատարակչություն, Ստեփանակերտ, 2003:
13. ---. «Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին». *Բանբեր Հայաստանի արխիվների*, N 1, Երևան, 1985, 111-127:
14. Ուլուբաբյան, Բագրատ. *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*. «Մ. Վարանդեան» հրատարակչություն, Երևան, 1994:
15. Аблажей, Наталья. «*Армянская депортационная кампания 1949 года».* Депортация армян 14 июня 1949 года. Сборник документов и материалов. Новосибирск, «Наука», 2016, 173-191.
16. Аблажей, Наталья. «Депортация армян в Алтайский край в 1949 г.». *Гуманитарные науки в Сибири*, № 1, 2011, 47-53.
17. *Нагорный Карабах: Историческая справка.* Ереван, Издательство АН Армянской ССР, 1988.

18. *Азербайджанская ССР в период Великой Отечественной войны (1941-1945 гг.). Сборник документов и материалов в двуйх томах.* Том II. Азербайджанское Государственное Издательство, Баку, 1977.

19. Безугольный, Алексей. *Национальный состав Красной Армии 1918-1945: Историко-статистическое исследование*. Центрполиграф, Москва, 2021, http://loveread.ec/read_book.php?id=95095&p=102. Доступно: 10.07.22.

20. «Всесоюзная перепись населения, 1959 г.: Городское и сельское население областей республик СССР (кроме РСФСР) по полу и национальности». *Демоскоп,* http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_59.php?reg=76. Доступно: 10.07.22.

21. «Всесоюзная перепись населения, 1939 г.: Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР, Азербайджанская ССР. Бакинский гс». *Демоскоп,* http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=679. Доступно: 10.07.22.

22. «Всесоюзная перепись населения, 1939 г.: Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР. Азербайджанская ССР. Нагорно-Карабахская Авт. Обл». *Демоскоп,* http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=760. Доступно: 10.07.22.

23. *Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги*. Наука, Москва, 1992.

24. Газарян, Валерий. «Депортация армян из НКАО и Азербайджана в июне 1949 года. Независимое исследование». *Центр поддержки русско-армянских стратегических и общественных инициатив*, 15 июня 2017, https://russia-armenia.info/node/39452. Доступно: 10.07.22.

25. ---. «Имела ли место депортация азербайджанцев из Армении в советские годы?». *Regnum,* 12 мая 2013, https://regnum.ru/news/society/1657402.html. Доступно: 10.07.22.

26. ---. «Об участии армян НКАО и Азербайджана в Великой Отечественной войне». *Центр поддержки русско-армянских стратегических и общественных инициатив*, 6 мая 2021, https://russia-armenia.info/node/75368. Доступно: 10.07.22.

27. *Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник*. ЦСУ СССР Статистическое Управление Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР, Степанакерт, 1963.

28. *Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР*. Госстатиздат, Москва, 1962.

29. Мелик-Шахназарян, Левон, Хачатрян, Ашот. *Этнополитика Азербайджана.* Де-Факто, Ереван, 2007.

30. Мирзоян, Бениамин, «Нагорный Карабах (Размышления над статистикой)». *Լրաբեր հասարակական գիտությունների*, N 7, Երևան, 1988, 43-56:

31. *Нагорный Карабах за годы советской власти (Краткая статистическая сборник)*. Статуправление НКАО, Степанакерт, 1969.

32. *Народное хозяйство Азербайджанской ССР к 60-летию Великого Октября. Юбилейный статистический ежегодник.* Азербайджанское Государственное Издательство, Баку, 1977.

33. Поляков, Юрий и др. ««Демографическое эхо» войны». *Научно-просветительский журнал Скепсис,* https://scepsis.net/library/id_1260.html. Доступно: 10.07.22.

34. Тер-Саркисянц, Алла. «*Современные этнические процессы у армян Нагорного Карабаха».* Արցախի ժողովրդագիտությունը, Ազգագրություն, հատոր 4 (4), Ստեփանակերտ, 2020, 150-210:

35. Харатян, Грануш. *Выселение армян «навечно» 1949 года. Анализ и архивные документы.* Издательство Института Археологии и Этнографии, Ереван, 2020.

36. *Численность населения СССР на 17-января 1939 г.: По районам, районным центрам, городам, рабочим поселкам и крупным сельским населенным пунктам*. Госпланиздат, Москва, 1941.

WORKS CITED

1. Ablazhej, Natal'ja. «*Armjanskaja deportacionnaja kampanija 1949 goda*». Deportacija armjan 14 ijunja 1949 goda. Sbornik dokumentov i materialov. Novosibirsk, 173-191 *["Armenian Deportation Campaign of 1949"*. Deportation of Armenians on June 14, 1949. Collection of documents and materials. Novosibirsk, pp. 173-191] 2016. (in Russian)

2. Ablazhej, Natal'ja. «Deportacija armjan v Altajskij kraj v 1949 g.». *Gumanitarnye nauki v Sibiri*, № 1, 2011, 47-53, ["*Deportation of Armenians to the Altai in 1949".* № 1, 2011, pp. 47-53]. (in Russian)

3. Abrahamyan, Hrant. *Martnchogh Arcaxy'. 1917-2000. Girq B. 1923-1985.* Erevan, [*Fighting Artsakh: 1917-2000. Book B. 1923-1985.* Yerevan] 2005. (In Armenian)

4. Abrahamyan, Shahen. *Azgayin qaghaqakanut'yuny' Ler'nayin Gharabaghum.* Erevan, [*National Policy in Nagorno-Karabakh*. Yerevan] 2003. (In Armenian)

5. *Azerbaidzhanskaia SSR v period Velikoi Otechestvennoi voiny (1941-1945 gg.). Sbornik dokumentov i materialov v dvuikh tomakh.* Tom II. Baku, [*Azerbaijan SSR during the Great Patriotic War (1941-1945). Collection of Documents and Materials in Two Volumes. Volume II*. Baku] 1977. (in Russian)

6. Baghdasaryan, Yuri. *Baqun ev hayery, hakahaykakan qaghaqakanut'yunn ev hayeri e't'nikakan maqrumy' Adrbejanum*. Erevan, [*Baku and Armenians, Anti-Armenian policy and Ethnic Cleansing of Armenians in Azerbaijan.* Yerevan] 2014. (In Armenian)

7. Balayan, Vahram. *Arcaxi hanrapetut'yan bnakavayreri patmut'yan urvagc'er*. Erevan, [*Outlines of the History of the Settlements of the Republic of Artsakh.* Yerevan] 2020. (In Armenian)

8. ---. *Drvagner arcaxahayut'yan azatagrakan payqari ev petakanakertman patmut'yan (1813-2007 tt.)*. Step'anakert, [*Episodes of the liberation struggle and statehood history of Armenians of Artsakh*. Stepanakert] 2012. (In Armenian)

9. Bezugolniy, Aleksei. *Natcionalniy sostav Krasnoi Armii 1918-1945: Istoriko-statisticheskoe issledovanie*. Moskva, [*The National Composition of the Red Army (1918-1945): A Historical and Statistical Study.* Moscow. 2021, http://loveread.ec/read_book.php?id=95095&p=102. Accessed: 10.07.22] (in Russian)

10. *Chislennost naseleniia SSSR na 17-ianvaria 1939 g.: Po raionam, raionnym tcentram, gorodam, rabochim poselkam i krupnym selskim naselennym punktam.* Moskva, [*The Population of the USSR on January 17, 1939: By Districts, Regional Centers, Cities, Boroughs and Large Rural Settlements*. Moscow] 1941. (in Russian)

11. *Dostizheniia Sovetskogo Nagornogo Karabakha za 40 let v tcifrakh. Statisticheskii sbornik*. Stepanakert, [*Achievements of the Soviet Nagorno-Karabakh for 40 years in Numbers. Statistical Collection*. Stepanakert] 1963. (in Russian)

12. Gazarian, Valeriy. «Deportatciia armian iz NKAO i Azerbaidzhana v iiune 1949 goda. Nezavisimoe issledovanie». *Tcentr podderzhki russko-armianskikh strategicheskikh i obshchestvennykh initciativ*, 15 iiunia 2017, ["Deportation of Armenians from the NKAR and Azerbaijan in June 1949. Independent research" https://russia-armenia.info/node/39452. Accessed: 10.07.22] (in Russian)

13. ---. «Imela li mesto deportatciia azerbaidzhantcev iz Armenii v sovetskie gody?». *Regnum,* 12 maia 2013, ["Did the Deportation of Azerbaijanis from Armenia Take Place During the Soviet years?" https://regnum.ru/news/society/1657402.html. Accessed: 10.07.22] (in Russian)

14. ---. «Ob uchastii armian NKAO i Azerbaidzhana v Velikoi Otechestvennoi voine». *Tcentr podderzhki russko-armianskikh strategicheskikh i obshchestvennykh initciativ*, 6 maia 2021, ["On the Participation of the Armenians of the NKAR and Azerbaijan in the Great Patriotic War". https://russia-armenia.info/node/75368. Accessed: 10.07.22] (in Russian)

15. Hayastani Azgayin Arxiv. *f. 1, c. 27, g. 47, t't'*. 137-138. [National Archive of Armenia. *f. 1, I. 27, c. 47, p. 137-138*]. (In Armenian)

16. --- *f. 1, c. 27, g. 47, t'. 137.* [*f. 1, I. 27, c. 47, p. 137*]. (In Armenian)

17. --- *f. 113, c. 29, g. 179, t't'. 38-40* [*f. 113, I. 29, c. 179, p. 38-40*]. (In Armenian)

18. *Itogi Vsesoiuznoi perepisi naseleniia 1959 goda. Azerbaidzhanskaia SSR*, Moskva, [*Results of the All-Union Population Census of 1959. Azerbaijan SSR*. Moscow] 1962. (in Russian)

19. Kharatian, Granush. *Vyselenie armian «navechno» 1949 goda. Analiz i arkhivnye dokumenty*. Erevan, [*Deportation of Armenians "forever" (1949). Analysis and archival documents.* Yerevan] 2020. (in Russian)

20. Ler'nayin Gharabaghi hanrapetut'yan arxiv, *f. 250, c. 10, g. 13, t'. 11*, [National Archive of the Republic of Artsakh, *f. 250, I. 10, c. 13, p. 11*] (In Armenian)

21. --- *f. 142, c. 4, g. 90, t'. 48.* [*f. 142, I. 4, c. 90, p. 48*]. (In Armenian)

22. Melik-Shakhnazarian, Levon, Khachatrian, Ashot. *Etnopolitika Azerbaidzhana*. Erevan, [*Ethnopolitics of Azerbaijan*. Yerevan] 2007. (in Russian)

23. Mirzoian, Beniamin. «Nagorniy Karabakh (Razmyshleniia nad statistikoi)». *Lraber hasarakakan gitut'yunneri*, N 7, Erevan, 1988, 43-56, ["Nagorno-Karabakh (Reflections on statistics)". *Bulletin of Social Science*s, N 7, Yerevan, 1988, 43-56] (in Russian)

24. Mkrtchyan, Shahen. Arcaxyan grar'umner (p'astavaveragrakan jhoghovacu). Erevan, [Artsakh notes: documentary collection] 2001. (In Armenian)

25. Mkrtchyan, Shahen. *Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian.* Stepanakert, [*Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan*. Stepanakert] 2003. (In Armenian)

26. ---. «Ler'nayin Gharabaghy' Hayrenakan mec' paterazmi tarinerin». *Banber Hayastani arxivneri*, N 1, Erevan, 1985, 111-127, ["Nagorno Karabakh during the Great Patriotic War". Bulletin of A*rmenian Archives*, №. 1, Yerevan 1985, pp. 111-127]. (In Armenian)

27. *Nagorniy Karabakh: Istoricheskaja spravka*. Erevan, [Nagorno-Karabakh: Historical background] 1988. (in Russian)

28. *Nagorniy Karabakh za gody sovetskoi vlasti (Kratkaia statisticheskaia sbornik*). Stepanakert, [*Nagorno-Karabakh during the Years of Soviet Power (Short statistical collection*). Stepanakert] 1969. (in Russian)

29. *Narodnoe khoziaistvo Azerbaidzhanskoi SSR k 60-letiiu Velikogo Oktiabria. Yubileiniy statisticheskii ezhegodnik*. Baku, [*The National Economy of the Azerbaijan SSR to the 60th Anniversary of the Great October Revolution. Anniversary Statistical Yearbook*. Baku] 1977. (in Russian)

30. Poliakov, Yurii i dr. ««Demograficheskoe ekho» voiny». *Nauchno-prosvetitelskii zhurnal Skepsis*, ["The Demographic Echo" of War. https://scepsis.net/library/id_1260.html. Accessed: 10.07.22] (in Russian)

31. Ter-Sarkisyanc, Alla. «*Sovremennye etnicheskie processy u armjan Nagornogo Karabakha*». Arcaxi jhoghovrdagitut'yuny', Azgagrut'yun, hator 4 (4), Stepanakert,

["Modern Ethnic Processes among the Armenians of Nagorno-Karabakh". Demography of Artsakh. Ethnography. Volume 4 (4). Stepanakert] 2020. (in Russian)

32. Ulubabyan, Bagrat. *Arcaxi patmut'yuny' skzbic minchev mer o'rery'.* Erevan [*The History of Artsakh from the Beginning to the Present Day*. Yerevan] 1994. (In Armenian)

33. *Vsesoiuznaia perepis naseleniia 1939 goda*: *Osnovniye itogi.* Moskva, [*All-Union population census of 1939: Main results.* Moscow] 1992. (in Russian)

34. «Vsesoiuznaia perepis naseleniia, 1939 g.: Natcionalniy sostav naseleniia raionov, gorodov i krupnykh sel soiuznykh respublik SSSR. Azerbaidzhanskaia SSR. Bakinskii gs». *Demoskop* ["All-Union population census, 1939: National composition of the population of districts, cities and large villages of the Union Republics of the USSR, Azerbaijan SSR. Baku ss". Demoscope. http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=679. Accessed: 10.07.22] (in Russian)

35. «Vsesoiuznaia perepis naseleniia, *1939 g.:* Natcionalniy sostav naseleniia raionov, gorordov i krupnykh sel soiuznykh respublik SSSR. Azerbaidzhanskaia SSR. Nagorno-Karabakhskaia Avt. Obl». *Demoskop.* "[All-Union population census, 1939*:* National composition of the population of districts, cities and large villages of the Union republics of the USSR. Azerbaijan SSR. Nagorno-Karabakh Aut. Region" *Demoscope*. http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=760. Accessed: 10.07.22] (in Russian)

36. «Vsesoiuznaia perepis naseleniia, 1959 g.: Gorodskoe i selskoe naselenie oblastei respublik SSSR (krome RSFSR) po polu i natcionalnosti». *Demoskop* ["All-Union Population Census, 1959*:* Urban and Rural Population of the Regions of the Republics of the USSR (except for the RSFSR) by Sex and Nationality". http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_59.php?reg=76. Accessed: 10.07.22] (in Russian)

FACTORS DETERMINING THE DEMOGRAPHIC PICTURE OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION (1940s-1950s)

GAYANE HOVHANNISYAN

«The Armenian Genocide Museum-Institute» Foundation,
the Department of the Study of Armenian Repressions in Artsakh,
Nakhichevan and Azerbaijan, Researcher;
Yerevan State University, Faculty of History,
Chair of the History of Armenia, Ph.D. Student,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of the article is to identify the main factors determining the demographic picture of Nagorno-Karabakh in the 1940s-1950s. The objectives of the study are to present the demographic consequences of the Patriotic War, the resettlement of the Azerbaijani population and the deportation of the Armenian population in 1949. One of the objectives of the study is to present the manifestations of the indirect demographic policy pursued by the Azerbaijani authorities in the region.

The study was conducted on the basis of archival documents, statistical sources, all-Union censuses, and professional literature. In the course of the study, the methods of archival analysis, historicism, descriptive and narrative analysis were used.

Studying the topic, we came to the conclusion that in the 1940s-1950s. the factors determining the demographic processes of Nagorno-Karabakh can be divided into two groups. The first group refers to all-Union military-political processes and includes the demographic losses and consequences of the Patriotic War, as well as deportation of the

Armenian population in 1949. Another group of factors determining the demographic picture of the region includes the initiatives of the Azerbaijani authorities, such as the resettlement of the Azerbaijani population in the territory of the autonomous region, the formation of Azerbaijani villages, the recruitment of the labor force of the region, the slowdown of the socio-economic development of the region.

Keywords: *Patriotic war, demographic consequences, deportation of Armenians (1949), resettlement of the Azerbaijani population, labor recruitment, demographic policy, demographic picture.*

ФАКТОРЫ, ОПРЕДЕЛЯЮЩИЕ ДЕМОГРАФИЧЕСКУЮ КАРТИНУ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ В 1940-1950-Х ГОДАХ

ГАЯНЕ ОГАННИСЯН
исследователь отдела изучения репрессий армян в Арцахе, Нахичеване и Азербайджане фонда «Музея-института Геноцида армян», аспирантка кафедры армянской истории факультета истории Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

Цель статьи – выявить основные факторы, определявшие демографическую картину Нагорного Карабаха в 1940-1950-е гг. Одной из задач исследования является изучение демографических последстви Отечественной войны, переселения азербайджанского населения и депортации армянского населения в 1949 г. Следующая задача – представить проявления опосредованной демографической политики, проводимой властями Азербайджана в области.

Исследование проводилось на основе архивных документов, статистических источников, всесоюзных переписей, специальной литературы. В ходе исследования использовались методы архивного анализа, историзма, описательного и нарративного анализа.

Изучая тему, мы пришли к выводу, что в 1940-1950-е гг. факторы, определяющие демографические процессы в Нагорном Карабахе, можно разделить на две группы. Первая группа относится к общесоюзным военно-политическим процессам и включает в себя демографические потери и последствия Отечественной войны, а также массовую депортацию армянского населения в 1949 г.. Другая группа факторов, определяющих демографическую картину области, включает в себя такие инициативы азербайджанских властей, как переселение азербайджанского населения на территорию автономной области в послевоенные годы, набор рабочей силы области, замедление социально-экономического развития региона.

Ключевые слова: *Отечественная война 1941-1945 гг., демографические последствия, депортация армян в 1949 году, переселение азербайджанского населения, набор рабочей силы, демографическая политика, демографическая картина.*

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՌՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ՀՏԴ 343.2/7 *10.52063/25792652-2022.3.14-49*

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Մովսես Խորենացու անվան համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
haykamkrtchyan@gmail.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել հակաիրավական ոտնձգություն կատարած անձին վնաս պատճառելու ինստիտուտի քրեաիրավական որոշ առանձնահատկությունները, դրա տեղը արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների շարքում, դրա տարբերությունը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքներից: Հանցավորության կանխման կարևոր քրեաիրավական ինստիտուտներից է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը: Նշված ինստիտուտի կիրառման օրինաչափության պայմանների ու հատկանիշների վերհանումը կոչված է երաշխավորելու և պաշտպանելու անձին, ով կանխում է հանցանքը անհիմն քրեական պատասխանատվության ենթարկվելուց:

ՀՀ քրեական նախկին և նոր օրենսգրքերում այս ինստիտուտի ներառումը զգալիորեն լուծել է այն օրենսդրական բացը, որն առաջանում էր իրավակիրառ պրակտիկայում, քանի որ կիրառվում էր անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, որն էլ շատ դեպքերում չէր համապատասխանում դեպքի փաստական հանգամանքներին: Նոր օրենսդրության մոտեցումներն անհրաժեշտություն են ստեղծում համակարգային առումով ուսումնասիրել փոփոխություններն ու դրանց արդյունքում առաջացած իրավական հետևանքները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են մասնավոր գիտական մեթոդներ՝ համեմատական-իրավական, ձևական իրավաբանական վերլուծության: Աշխատանքում կիրառվել են ընդհանուր տրամաբանական մեթոդները:

Հոդվածում հանգել ենք այն եզրակացության, որ տվյալ ինստիտուտի սահմանումն առավել ներառական դարձնելու անհրաժեշտություն կա: Մասնավորապես անհրաժեշտ է ընդգծել քննարկվող ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը՝ պատճառվող վնասի իրավաչափության հիմքերն ու պայմանները, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել վնաս պատճառելու թույլատրելի սահմանները: Փորձ է կատարվել ներկայացնելու նոր խմբագրությամբ սահմանում: Նոր օրենսդրության իրողությունների

* Հոդվածը ներկայացվել է 10.08.2022թ., գրախոսվել՝ 10.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

պայմաններում անհրաժեշտ ենք համարում առանձին ինստիտուտների բաղդատված ուսումնասիրությունը, որն ուղղված է ինչպես պրակտիկայի զարգացմանը, այնպես էլ գիտատեսական հենքի հարստացմանը:

Հիմնաբառեր՝ *քրեական, վնաս պատճառել, հանցանք, արարք, օրենսգիրք, արգելված, օրենսդրական բաց:*

Ներածություն

2021թ. հուլիսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ են գտել կառուցակարգային և ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնք մեծ մասամբ համապատասխանեցվել են Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին, միջազգային ստանդարտներին և չափորոշիչներին (այսուհետ՝ Օրենսգիրք): Փոփոխության են ենթարկվել նաև արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները: Օրենսգրքի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հեղինակների կողմից խորը ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները, որոնց հիման վրա իրականացվել են փոփոխությունները:

Հեղինակների կողմից և Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ հրատարակվել է քրեական նոր օրենսգրքի հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց:

Այնուամենայնիվ, հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցը չի կարելի համարել բավարար և սպառիչ ուսումնասիրություն, ավելին՝ այն ոչ միայն չի բացառում, այլև նպաստում է հետագայում առանձին ինստիտուտների՝ առավել մանրակրկիտ քննությանը: Անհրաժեշտ է հստակեցնել որոշ սահմանումներ ու եզրույթներ: Իբրև քննարկման առարկա ենք առել **հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը** (ՀՀ քրեական նոր օրենսգիրք):

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված հակահիրավական ոտնձգություն կատարած անձին վնաս է պատճառել նրան իրավասու մարմիններին հանձնելու կամ նոր հակահիրավական արարքը կանխելու նպատակով բռնելիս, եթե տվյալ իրադրությունում բացակայել են բռնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները, կամ դրանց առկայությունը չի գիտակցվել և չէր կարող գիտակցվել բռնողի կողմից, և դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում թույլ չի տրվել:

Հոդվածի էությունից պարզ է դառնում, որ հակահիրավականությունը վերաբերում է ոչ միայն քրեահիրավական արարքներին, այլև բնորոշ է իրավունքի այլ ճյուղերում իրավախախտումներին կամ հակաօրինականությանը:

Հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու քրեահիրավական բնութագիրը ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում

Վերոհիշյալ հոդվածի կիրառումն ըստ էության ուղղված է խրախուսելու մարդկանց վարքագիծը հանցավորության դեմ պայքարում՝ հանրորեն օգտակար վարքագիծ դրսևորելով պաշտպանել իրենց իրավունքները, օրինական շահերը: Սակայն անթույլատրելի է այդ պաշտպանությունն ընկալել բացարձակության մեջ:

Հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու օբյեկտիվ հիմքը հանդիսանում է նրա կողմից հանցանքի կատարումը և փորձը՝ խուսափելու իրավապահ մարմիններին ներկայանալը: Անձի կողմից հանցանքի կատարման փաստի վկայության համար պետք է առկա լինեն անհերքելի փաստական

հանգամանքներ: Դրա մասին կարող են վկայել, օրինակ՝ հետքերը, ցուցմունքները, հանցագործության գործիքները, առարկաները և այլ փաստական հանգամանքները: Հանցանքը տվյալ անձի կողմից կատարելու փաստը կարող է հավաստվել լուսանկարների միջոցով:

Հանցանք կատարած անձին վնաս պատճառելու իրավաչափության համար անհրաժեշտ են որոշակի պայմանների առկայություն՝

- Վնասը պատճառվում է բացառապես հանցանք կատարած անձին:
- Վնասը պատճառվում է սահմանափակ ժամանակահատվածում:
- Վնասի պատճառումը հանդիսանում է հարկադրված միջոց:
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի վնաս պատճառել:
- Վնասի պատճառմանը պետք է հետևի կոնկրետ նպատակ, որը նախատեսված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածով:
- Վնաս պատճառելիս չպետք է թույլ տրվի դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում:

Այն պահանջը, որ վնասը պետք է պատճառվի միայն հանցանք կատարած անձին, այլ ոչ թե այլ անձանց, նշանակում է, որ եթե հանցանքը կատարել է անմեղսունակ անձը կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձը, ապա նման պարագայում բացակայում է 33-րդ հոդվածով նախատեսված բացառող հանգամանքը: Եթե այդ անձանց կողմից հանցանք կատարելուց հետո այնուամենայնիվ հարկադրված պատճառվում է վնաս, որպեսզի նրանց մեկուսացնեն կամ ներկայացնեն վարույթ իրականացնող մարմնին, ապա այս պարագայում առկա է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ: Վերոգրյալ հոդվածի դրույթները չեն տարածվում այնպիսի իրավիճակների վրա, ինչպես օրինակ՝ հանցանքը կանխելու պահին անձը գտնվում է մոտակայքում և նրան նույնպես պատճառվում է վնաս, օրինակ՝ հրազենի գործադրմամբ հանցանքը կանխելու պահին: Նման իրավիճակում արարքը որակել Օրենսգրքի 33-րդ հոդվածով, այդքան էլ ճիշտ չէ: Տվյալ իրավիճակում արարքը պետք է որակել կա՛մ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված, կա՛մ հիմնավորված ռիսկ, կա՛մ էլ անզգուշությամբ կատարված հանցանք:

Վնաս պատճառելու իրավունքը հանցանք կատարած անձին բռնելիս առաջանում է նրա կողմից հանցանքը սկսելու և բռնվելուց խուսափելու պահից, այլ ոչ թե օրինական ուժի մեջ մտած դատավճռից հետո:

Կարևոր հանգամանք է հանցանքը կանխողի սուբյեկտիվ ընկալումը, այսինքն՝ այն փաստի գիտակցումը, որ նա հանցանք կատարած անձին բռնելիս վնաս է պատճառում վերջինիս: Սա նշանակում է, որ հանցանքը կանխողը պետք է վստահ լինի, որ կատարվել է հանցանք, այլ ոչ թե վարչական իրավախախտում կամ էլ ընդհանրապես տվյալ պարագայում հանցակազմ առկա չէ: Նման վստահություն պետք է առկա լինի, եթե անձն անձամբ է ականատես եղել հանցանքին: Չպետք է բացառել նաև այնպիսի իրավիճակներ, երբ անձը, օգտվելով իր հանցանքը կանխելու իրավունքից, հիմնավորված ենթադրել է, որ վնաս է պատճառում հանցանք կատարած անձին, բայց հետագայում դատարանը գալիս է այն եզրահանգման, որ հանցանք կատարած անձն անմեղսունակ է: Տվյալ պարագայում, եթե վնաս պատճառողը հիմնավոր փաստարկներ է բերում, որ տվյալ իրավիճակում չէր գիտակցել և չէր էլ կարող գիտակցել դրա մասին, ապա նա քրեական պատասխանատվության չի ենթարկվի:

Կարող են լինել իրավիճակներ, երբ տեղեկությունը հանցանքի վերաբերյալ ձեռք է բերվում երրորդ անձից: Նման պարագայում ականատեսներն իրենք կարող են խեղաթյուրել օբյեկտիվ իրականությունը հանցանք կատարած անձի մասին:

Տեսաբան Խալիկովը, անդրադառնալով հիմնախնդրին, նշում է՝ բռնել թույլատրվում է միայն մեղսունակ, ֆիզիկական անձին, ով հասել է քրեական օրենքով սահմանված պատասխանատվության տարիքին (Халиков 25): Չնայած Խալիկովը

այդ հարցը քննարկել է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի համատեքստում, որում, սակայն, անդրադարձ կա մեր կողմից ուսումնասիրվող թեմային:

Տեսաբան Դիդենկոն հակառակ կարծիքին է: Նա կարծում է, որ վնաս պատճառելու միջոցով հանցանքի կանխումը կարող է դրսևորվել նաև այն անձանց նկատմամբ, որոնք ունակ չեն գիտակցել իրենց գործողությունները: Նրա կարծիքով՝ այդ պարագայում հանցանքը կանխողը ևս գործում է իրավաչափ, քանի որ պաշտպանում է պետության շահերը, կանխում է անձանց կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը (Диденко 72):

Խալիկովի տեսակետն ի հայտ է գալիս քրեական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ պաշտպանության և նոր խմբագրությամբ սահմանված հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտների վերլուծությունից:

Տեսաբանների մեկ այլ խումբ, որոնցից է Տկաչենկոն, կարծում են, որ բռնելու պահին կանխողը չի կարող վստահ լինել ոչ միայն այն հանգամանքի վրա, որ կատարվում է հանցանք, այլ նաև անձի մեղավորության մեջ (Ткаченко 321-322)**:** Նրա կարծիքով՝ անձի վերաբերյալ պետք է պարտադիր առկա լինի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, միայն այդ դեպքում կիրառելի կլինեն քննարկվող ինստիտուտի նորմերը: Մենք համամիտ չենք արտահայտված տեսակետի հետ: Կարծում ենք, որ, եթե առաջնորդվենք այս կանխավարկածով, ապա կստացվի, որ ցանկացած անձ կարող է մտնել, օրինակ, բնակարան կամ բանկ՝ քրեական օրենքով արգելված արարք կատարելու մտադրությամբ և, վստահ լինելով, որ քրեական պատասխանատվության չի ենթարկվի, դիմել փախուստի:

Որոշ տեսաբաններ կարծում են, որ հրամայական պետք չէ մեկնաբանել այդ ինստիտուտը: Միանշանակ նրանց կողմից ընդունվում է այն հանգամանքը, **որ հանցանք կատարած անձին բռնել** տերմինի ուղղակի մեկնաբանման արդյունքում կարելի է միայն այն անձի նկատմամբ, ով դիմել է փախուստի դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց կամ քրեակատարողական հիմնարկից: Մնացած դեպքերում խոսքը գնում է այն անձին բռնելու մասին, ով կասկածվում է քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարման մեջ (Ռուսաստանի քրեական օրենսգիրք):

Սակայն նշված սահմանման մեջ առկա բացը, որը նաև մեր օրենսգրքում է առկա, ավելի շատ իրավաբանական տեխնիկայի խնդիր է, չի նշանակում, որ քննարկման առարկա հանդիսացող նորմի կիրառումը ընդհանրապես պետք է բացառել:

Համակարծիք ենք այն տեսաբանների հետ, որոնք հնարավոր են համարում հանցանք կատարած անձին վնաս պատճառելը՝ չնայած այն հանգամանքին, որ վերջինիս վերաբերյալ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, սակայն կան հիմնավոր փաստեր նրա կողմից քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարման մասին:

Վերլուծվող ինստիտուտի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վնասը, որը հասցվում է անձին, կախված է կոնկրետ հանցանքի բնույթից և վտանգավորության աստիճանից: Օրինակ՝ վնաս պատճառելու միջոցով անձին բռնելը կիրառելի չէ նամակագրության կամ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության հրապարակման և նմանատիպ արարքների դեպքում: Սովորաբար այդ ինստիտուտը կիրառվում է այն դեպքերում, երբ խոսքը գնում է, օրինակ, գողության, սպանության և նմանատիպ հանցանքների դեպքում, որոնք ունեն բարձր հանրային վտանգավորություն: Այսպես օրինակ՝ եթե անձը սպանել է երկու կամ ավելի անձանց և փորձում է թաքնվել, իսկ իրավապահ մարմնի աշխատակիցը կիրառել է հրազեն նրան բռնելու նպատակով, որի արդյունքում զրկում է հանցավորին կյանքից, ապա նման իրավիճակում նշված ինստիտուտի կիրառումը կհամարվի իրավաչափ, քանի որ կատարվել էր առանձնապես վտանգավոր հանցագործությունը:

Նշված ինստիտուտի կիրառման իրավաչափության մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք այլ հանգամանքներ, օրինակ՝ տարիքը, ֆիզիկական զարգացվածությունը, կատարողների քանակը և այլն: Հանցանք կատարած անձին բռնելը պետք է դիտարկել նրան ազատությունից զրկելու եղանակներից մեկը: Անձի ազատություն տերմինն ունի բարդ կառուցվածք, որն իր մեջ ընդգրկում է՝ սոցիալ-տնտեսական, հոգևոր, քաղաքական և անձնական ազատությունը: Հանցանք կատարած անձին բռնելու ընթացքում սահմանափակվում է նրա անձնական ազատությունը, այսինքն՝ ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու, ժամանակը տնօրինելու և այլն:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածը նաև սահմանում է, որ չպետք է թույլ տրվի **անհրաժեշտ միջոցների սահմանազանցում**: Այսպիսով՝ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը կհանդիսանա իրավաչափ միայն այն դեպքում, եթե հասցված վնասը չի համապատասխանում արարքի և այն կատարող անձի վտանգավորությանը: Նշված միջոցների սահմանազանցման պարագայում այս ինստիտուտը կորցնում է հանրային օգտակարությունը և դառնում է հակահիրավական: Նման իրավիճակը հանգեցնում է քրեական պատասխանատվության:

Իրավաբանական գրականության մեջ բացակայում է միասնական մոտեցում բարձրացված հիմնահարցերի շուրջ: Անդրադարձ այս խնդրին կատարել է տեսաբան Կուդրյավցևը: Նա կարծում է, որ պատճառված վնասը կհամարվի ոչ համարժեք, եթե քրեորեն պատժելի արարք կատարողին կարելի էր վնասազերծել ավելի մեղմ միջոցներով, քան այն վնասը, որ պատճառվել է նրան բռնելիս (Кудрявцев 131):

Ուսումնասիրվող ինստիտուտի սահմանազանցման որակման համար նաև կարևոր է բացահայտել փաստական հանգամանքները, որոնց բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունը հնարավորություն կտա ամբողջական պատկեր կազմել այս կամ այն իրավիճակի մասին: Դա վերաբերում է այնպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներին, ինչպիսիք են՝ ժամը (երեկոյան, առավոտյան և այլն), վայրը (քաղաքը, անտառածածկ տարածք կամ դաշտավայր), եղանակային պայմանները (անձրև, քամի, ձնաբուք), հանցանքը կանխողի և հանցանք կատարողի ֆիզիկական առանձնահատկությունները և այլն:

Տեսաբան Բաուլինն առանձնացնում է երկու խումբ փաստական հանգամանքներ՝

1. համեմատապես բարենպաստ հանգամանք, երբ անձը ֆիզիկական ուժի առումով ունի ակնհայտ առավելություն հանցանք կատարողի նկատմամբ,

2. ոչ բարենպաստ իրավիճակ կամ փաստական հանգամանք, երբ անձի և հանցանք կատարողի միջև առկա է հավասարություն ֆիզիկական ուժի առումով, ինչպես նաև այն դեպքերում, երբ հանցանք կատարողն ունի առավելություն (Баулин 366):

Հանցանքը կանխելու պահին անձն ի վիճակի չէ պարզելու՝ արդյոք արարքը կատարվում է դիտավորությամբ, թե անզգուշությամբ, թե ընդհանրապես բացակայում է մեղքը: Շատ դեպքերում հանցանքը կանխողը կարող է միայն ընկալել արարքը և դրա վտանգավորության աստիճանը, այսինքն՝ օբյեկտիվ պատճառները:

Սրա հետ միաժամանակ դժվարություն է առաջացնում որակելու՝ որքանո՞վ են էական կատարվող հանցանքի համատեքստում հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը (Савинов 54): Արդարացիորեն իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ հանրային վտանգավորությունը **չի կարելի վերագրել զգայական ընկալմանը:** Սա այն չափանիշն է, որը խիստ գնահատողական է: ՀՀ քրեական նոր օրենգիրքը ևս հրաժարվել է **հանրային վտանգավորություն** տերմինից՝ դրա փոխարեն օգտագործելով **հակահիրավականություն** տերմինը:

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ *հանցագործություն չի համարվում անձին վնաս պատճառելը, ով կատարել է*

հանցագործություն, նրան բռնելու և իրավապահ մարմիններին հանձնելու համար և նրա կողմից նոր հանցագործությունները կանխելուն, եթե այլ եղանակներով նման անձին վնասազերծելը անհնար է, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ միջոցների սահմանազանցում (ՌԴ քրեական օրենսգիրք):

Ինչպես տեսնում ենք ՌԴ և ՀՀ քրեական նոր օրենսգրքերի սահմանումները գրեթե համանման են, բայց ի տարբերություն ՀՀ օրենսդրության՝ կիրառված չէ **հակահիրավական արարք** տերմինը, այլ նշվում է **հանցագործություն կամ հանցանք**, որն էլ տարածական մեկնաբանման առիթ չի տալիս:

Կարծում ենք՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի հակահիրավական բառը կարելի է փոխարինել **քրեական օրենսգրքով արգելված** բառերով: Հասկանալի է, որ արարքը համարվում է հանցանք միայն, եթե առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, սակայն հրամայական պետք չէ մեկնաբանել այս ինստիտուտը:

Եզրակացություն

Առաջարկում ենք ՀՀ քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *Քրեական պատասխանատվության ենթակա չէ, այն անձը, որը* ***քրեական օրենսգրքով արգելված արարք*** *կատարած անձին վնաս է պատճառել նրան իրավասու մարմիններին հանձնելու կամ* ***սույն օրենսգրքով արգելված նոր արարքը*** *կանխելու նպատակով բռնելիս, եթե տվյալ իրադրությունում բացակայել է բռնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները, կամ դրանց առկայությունը չի գիտակցվել և չէր էլ կարող գիտակցվել բռնողի կողմից, և դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում թույլ չի տրվել:*

Նոր սահմանման մեջ բացակայում է **հանցանք** բառը, որպեսզի բացառվեն դրա հասկացութային մեկնաբանման դժվարությունները:

Միաժամանակ նշվում է արարք բառը, որը հանդիսանում է հանցանքի պարտադիր հատկանիշ, իսկ **քրեական օրենսգրքով արգելված** տերմինը հստակ արձանագրում է, որ արարքը վերագրվում է ոչ թե բոլոր իրավախախտումներին (հակահիրավական արարքներին), այլ միայն հանցանքներին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է պնդել, որ քննարկվող ինստիտուտը կարևոր սոցիալ-իրավական տարր է հասարակական հարաբերություններում: Այն հանցավորության դեմ պայքարի հիմնական ինստիտուտներից մեկն է, որը կոչված է օգնելու օրինապաշտ քաղաքացիներին՝ ունենալու ակտիվ դերակատարություն անձի, հասարակության, պետության շահերի պաշտպանության համար: Սակայն նման իրավիճակի քննարկումը կլինի տեղին միայն որոշակի կանոնների խիստ առկայության պարագայում: Հակառակ դեպքում նման գործողությունը, որը կատարվում է բռնողի կողմից, կդիտվի քրեորեն պատժելի: Միաժամանակ, քանի որ օրենսդիրը շնորհում է անձանց որոշակի խմբին, այդ թվում՝ նաև իրավապահ մարմինների աշխատակիցներին լրացուցիչ իրավունքներով՝ զենքի կիրառումը, ապա նրանց գործողությունների իրավաչափության գնահատման չափորոշիչները կրում են յուրահատուկ բնույթ:

Սակայն այդ ինստիտուտի լիարժեք իրացումն ապահովելու համար այն պիտի լինի նվազ խոցելի և առավել ներառական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ քրեական նոր օրենսգիրք.* Ուժի մեջ մտնելու ժամկետը 01.07.2022*:* https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165138

2. *Քրեական նոր օրենսգրքի հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց* (https://rm.coe.int/new-criminal-code-guidelinearm/1680a72c57?fs=e&s=cl).

3. Баулин, Юрий. *Уголовно-правовые проблемы учения об обстоятельствах, исключающих преступность (общественную опасность и противоправность) деяния:* Дисс. … д-р юрид наук, Харьков, 1991, 366.

4. Диденко, Виктор. *Правомерность причинения вреда преступнику при задержании.* учеб. Пособие/ В.П.Диденко.-Киев: Н.И и РИО Киев.высш.шк.МВД СССР,1984.-72.

5. Кудрявцев, Владимир. *Правовое поведение: норма и патология.* М., 1982, 131.

6. Российское уголовное право. Общая часть/ Под. Ред. В. Н. Кудрявцева, А. В. Наумова. С. 248; Сидоров Б.В. Причинение вреда при задержании преступника// Сов. Юстиция. 1990. N0 3, 24. 25.

7. Савинов, Андрей. *Причинение вреда при задержании лица, совершившего преступление, как обстоятельство, исключающее преступность деяния*: Дисс. … юрид. Наук. -М., 2002, . 54.

8. Ткаченко, Василий. *Уголовное право, Общая часть/Отв. Ред.Б.В.Здравомыслов.* М.,1996, 321,322.

9. Уголовный кодекс Российской Федерации" от 13.06.1996 N 63-ФЗ (ред.от14.07.2022, с изм. От 18.07.2022) (с.изм, и доп.,вступ. в. силу с 25.07.2022), www.consultant.ru/.

10. Халиков, Аслям. *Необходимая оборона по советскому уголовному праву:* автореф.дис. …канд юрид наук: 12.00.08/ Н. Халиков.- Алмм-Ата, 1970.-25.

WORKS CITED

1. HH k'reakan nor orensgirk', uzhi mej mtnelu zhamkety 01.07.2022. [New Criminal Code of RA, effective date 07.01.2022], (In Armenian).

2. K'reakan nor orensgrk'i hayets'akargayin motets'umneri yev nor institutneri meknabanman ughets'uyts', [A Guide to Conceptual Approaches and Interpretation of New Institutions of the New Criminal Code]. (In Armenian).

3. Baulin, Yuriy. Ugolovno-pravovyye problemy ucheniya ob obstoyatel'stvakh, isklyuchayushchikh prestupnost' (obshchestvennuyu opasnost' i protivopravnost') deyaniya: Diss. … d-r yurid nauk, Khar'kov. 1991, 366. [Criminal-legal |Problems of the Doctrine about the Circumstances Excluding Crime (Social Danger and Wrongfulness) of the act: Diss. … Doctor of Law, Kharkiv. 1991, 366.] (In Russian)

4. Didenko, Viktor. Pravomernost' prichineniya vreda prestupniku pri zaderzhanii: ucheb. Posobiye/ V.P.Didenko.-Kiyev: N.I i RIO Kiyev.vyssh.shk.MVD SSSR, 1984.-72.[The Legitimacy of Causing Harm to a Criminal during Detention: textbook. Allowance / V.P.Didenko.-Kyiv: N.I and RIO Kiev.higher school of the Ministry of Internal Affairs of the USSR, 1984.-72.), (In Russian)

5. Kudryavtsev, Vladimir. Pravovoye povedeniye: norma i patologiya. M., 1982, 131.[Vladimir. Legal Behavior: Norm and Pathology. M., 1982, 131.] (In Russian)

6. Rossiyskoye ugolovnoye pravo. Obshchaya chast'/ Pod. Red. V. N. Kudryavtseva, A. V. Naumova.S. 248; Sidorov B.V. Prichineniye vreda pri zaderzhanii prestupnika// Sov. Yustitsiya. 1990. N0 3, 24. 25. [Russian Criminal Law. General part / Under. Ed. V. N. Kudryavtseva, A. V. Naumova.S. 248; Sidorov B.V. Causing Harm during the Arrest of a Criminal // Sov. Justice. 1990. No. 3, 24. 25.] (In Russian)

7. Savinov, Andrey. Prichineniye vreda pri zaderzhanii litsa, sovershivshego prestupleniye, kak obstoyatel'stvo, isklyuchayushcheye prestupnost' deyaniya: Diss. …

yurid. Nauk. -M., 2002, . 54. [Causing Harm during the Arrest of a Person who Committed a Crime, as a Circumstance Excluding the Criminality of the Act: Diss. … legal Sciences. -M., 2002, . 54.] (In Russian)

8. Tkachenko, Vasiliy. Ugolovnoye pravo, Obshchaya chast'/Otv. Red.B.V.Zdravomyslov.M.,1996, 321,322.[Criminal law, General part / Resp. Ed. B.V. Zdravomyslov. M., 1996, 321,322.] (In Russian)

9. Ugolovnyy kodeks Rossiyskoy Federatsii" ot 13.06.1996 N 63-F3 (red.ot14.07.2022, s izm. Ot 18.07.2022) (s.izm, i dop.,vstup. v. silu s 25.07.2022),[Criminal Code of the Russian Federation " dated 06/13/1996 N 63-F3 (as amended on 07/14/2022, as amended on 07/18/2022) (as amended, and additional, effective from 07/25/2022] (In Russian)

10. Khalikov, Aslyam. Neobkhodimaya oborona po sovetskomu ugolovnomu pravu: avtoref.dis. …kand yurid nauk: 12.00.08/ N. Khalikov.- Almm-Ata, 1970.-25. [Necessary Defense in Soviet Criminal Law: Abstract of the thesis. ... Candidate of Law Sciences: 12.00.08 / N. Khalikov.- Almm-Ata, 1970.-25] (In Russian)

THE CRIMINAL CHARACTERISTICS OF CAUSING DAMAGE TO A PERSON WHO COMMITTED AN ILLEGAL OFFENSE IN THE CONTEXT OF THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

HAYK MKRTCHYAN
Movses Khorenaci University, Chair of Law.
Ph.D. in Law,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of the article is to study and identify the criminal law features of the institution of harming the person who committed illegal harassment. Its place in legal institutes among the circumstances excluding the criminality of the act, also its difference from other circumstances excluding the criminality of the act. One of the important criminal law institutions for the prevention of crime is to cause harm while catching a person who has committed a crime.

Highlighting the conditions and features of the pattern of application of the mentioned institution is meant to guarantee and protect the person who prevents the crime from being unjustly prosecuted. The inclusion of this institute in the former and new criminal codes of the Republic of Armenia significantly solved the legislative gap that arose in law enforcement practice, because the institution of necessary protection was applied. In many cases it did not correspond to the factual circumstances of the case.

During the research, private scientific methods were used: comparative-legal, formal legal analysis, historical methods. The work also used general logical methods: induction, deduction.

Summing up, it is necessary to make certain changes in the definition of this institution. In particular, the socio-legal nature of the given institution, the bases and conditions of the legality of the damage caused, the permissible limits of causing damage should be clarified.

Key words: *crime, cause damage, criminal, code, prohibited, act, legislative gap.*

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРИЧИНЕНИЯ ВРЕДА ЛИЦУ, СОВЕРШИВШЕМУ ПРОТИВОПРАВНОЕ ДЕЯНИЕ В КОНТЕКСТЕ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АЙК МКРТЧЯН
преподаватель кафедры юриспруденции
университета имени Мовсеса Хоренаци,
кандидат юридических наук,
г. Ереван, Республика Армения

Цель статьи заключается в изучении и выявлении уголовно-правовых особенностей института причинения вреда лицу, совершившему противоправное действие, его места среди обстоятельств, исключающих преступность деяния, а также его отличие от других обстоятельств, исключающих преступность деяния. Одним из важных уголовно-правовых институтов профилактики преступлений является причинение вреда при поимке лица, совершившего преступление. Выделение условий и особенностей порядка применения указанного института призвано гарантировать и защитить лицо, препятствующее преступлению, от несправедливого привлечения к ответственности.

Включение этого института в прежний и новый уголовные кодексы РА существенно устранило законодательный пробел, возникший в правоприменительной практике, поскольку применялся институт необходимой обороны, который во многих случаях не соответствовал фактическим обстоятельствам преступления.

В ходе исследования использовались сравнительно-правовой, формально-правовой анализ, исторические методы. В работе также использовались общелогические методы индукции и дедукции.

В статье мы приходим к выводу о необходимости внесения изменений в определение данного института. В частности, следует уточнить социально-правовую природу данного института, основания и условия правомерности причинения вреда и допустимые пределы причинения вреда.

Ключевые слова: *причинения вреда, кодекс, деяние, запрещенный, уголовное, преступление, пробел в законодательстве.*

ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

ՀՏԴ 342.7 *10.52063/25792652-2022.3.14-58*

ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանում Եվրոպական համալսարանի միջազգային հարաբերությունների և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
edgaravetisyan96@gmail.com

Հետազոտությունը վերաբերում է հանրային մարմիններից տեղեկություն ստանալու հիմնական իրավունքն ընդգրկող հատուկ տեղեկատվության ազատությանը: Նշված իրավունքի երաշխավորման շրջանակում ձևավորվել են որոշակի չափորոշիչներ, որոնք ուղղորդում են այս իրավունքի ապահովումը:

Հոդվածի շրջանակում ներկայացվում է միջազգային ու եվրոպական իրավական մոտեցումների լույսի ներքո ՀՀ-ում հատուկ տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման ու պաշտպանության շուրջ առաջացող որոշ խնդիրների վերհանման նպատակը: Այդ նպատակին հասնելու համար նախ անդրադարձ է կատարվում այս հիմնական իրավունքի իրավական հիմքին, դրա վերաբերյալ տեսական որոշ մեկնաբանություններին, առանձնացվում են միջազգային ու եվրոպական իրավական մոտեցումները ու դրանց համադրումը ՀՀ-ում գործող օրենսդրական մոտեցումներին:

Ուսումնասիրությունն իրականացվել է վերլուծության ու համադրության գիտական մեթոդների կիրառմամբ:

Մանրամասն անդրադարձ է կատարվում հանրային մարմիններից տեղեկություն ստանալու գործընթացին, դրա շրջանակում բողոքարկման իրավունքին ու դրա սահմանափակման հարցերին: Վերջինս ցույց է տալիս, որ հատուկ տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում առկա են որոշ խնդիրներ, որոնք կարող են առաջացնել այս հիմնական իրավունքի հնարավոր խախտում: Հետազոտության արդյունքում ներկայացվում են առաջ քաշված իրավական խնդիրների լուծման տարբերակներ, որոնք կնպաստեն այս հիմնական իրավունքի ապահովմանն ու պաշտպանությանը:

Հիմնաբառեր՝ *հատուկ տեղեկատվության ազատություն, հիմնական իրավունք, Սահմանադրություն, չափորոշիչ, միջազգային չափորոշիչ, եվրոպական չափորոշիչ, տեղեկության ստացում, հանրային մարմին, բողոքարկում, իրավունքի սահմանափակում:*

Ներածություն

Ժամանակակից ժողովրդավարական պետությունների համար գաղտնիք չէ, որ պահվող տեղեկության առավելագույն հրապարակայնությունից է կախված իրենց

* Հոդվածը ներկայացվել է 12.09.2022թ., գրախոսվել՝ 22.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

նկատմամբ վստահությունը: Ինչպես նշում է ՄԱԿ-ի Հաղորդակցության և տեղեկատվության գծով գլխավոր տնօրենի օգնական Ա. Խանը՝ տեղեկատվության ազատ հոսքի համար պետք է ընդունված լինի այն սկզբունքը, որ պետական մարմինները տեղեկություն են պահում ոչ թե իրենց, այլ հանրության անունից (Mendel 1): Արտահայտման ազատության ընդհանուր տեսական նկարագրությունը հեշտ է ներկայացնել և հասկանալ. ժողովրդավարական կառավարությունից պահանջվում է, որ այն քաղաքացիները, որոնք ընտրում են իրեն, հնարավորություն ունենան գնահատել իր կատարողականը (Alexander 136):

Ինչպես հղում անելով մեքսիկացի իրավագետ Վիլանուևային՝ նշում է Ջ. Աքերմանը՝ տեղեկատվության ազատությունը բաղկացած է երեք տարրից՝ տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունք, տեղեկացնելու իրավունք և տեղեկացված լինելու իրավունք (Ackerman 89): Մեր քննարկման առարկան՝ հատուկ տեղեկատվության ազատությունը, հանդիսանում է տեղեկություններ ստանալու և տեղեկացված լինելու իրավունքներն ապահովողը:

Հատուկ տեղեկատվության ազատության իրավական հիմքը

Հատուկ տեղեկատվության ազատությունը ՀՀ իրավական համակարգում հիմնադրվում է Սահմանադրության՝ «Տեղեկություններ ստանալու իրավունքը» վերտառված 51-րդ հոդվածով՝ *Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք*:

Սահմանադրահիրավական նորմի ուսումնասիրության և հատուկ տեղեկատվության ազատության՝ որպես մարդու իրավունքի էության համադրումը ցույց է տալիս, որ հատուկ տեղեկատվության ազատությունը պետության համար առաջացնում է պոզիտիվ պարտականություն՝ դրսևորելով դրական վարքագիծ տրամադրելու անհրաժեշտ տեղեկությունը: Հատուկ տեղեկության ստացման իրավունքի իրացման իրավահարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ ՏԱ օրենք) (Սահմանադրության 51-րդ հոդվածի 3-րդ մաս):

ՀՀ օրենսդրությամբ անձի՝ հատուկ տեղեկատվության ազատությունը երաշխավորող հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքի ուսումնասիրության ու խնդիրների վերհանման համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ միջազգային և եվրոպական չափորոշիչ-սկզբունքներին: Իրավական որոշակիությունը կարող է երաշխավորվել միայն այն դեպքում, եթե շոշափելի չափորոշիչներ ամրագրվեն (Bovens 323): Այսպես, մեծբրիտանական «ԱՐՏԻԿԼ 19» ընկերությունը[1] և Թ. Մենդելը (Mendel 31) ամփոփում ու առանձնացնում են միջազգային այնպիսի սկզբունքներ (ARTICLE 19 4), որոնք ուղղված են ապահովելու ու պաշտպանելու անձի տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի մաս հանդիսացող հատուկ տեղեկատվության ազատությունը: Վերջիններս կդիտարկվեն եվրոպական իրավական չափորոշիչների, այդ թվում՝ «Պաշտոնական փաստաթղթեր մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՊՓՄ կոնվենցիա) և այլ իրավական, դատական ակտերի, իսկ դրանք էլ իրենց հերթին՝ ՀՀ-ում տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման ու պաշտպանության շուրջ առաջացող իրավակարգավորումների լույսի ներքո:

[1] «ARTICLE 19»-ը բրիտանական ընկերություն է, որը զբաղվում է արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանությամբ և առաջխախացմամբ: Այն հիմնադրվալ է 1987թ.-ին և անունը ստացել է համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի համապատասխան 19-րդ հոդվածից:

Տեղեկատվության մատչելիությունն ապահովող գործընթացները

Տեղեկություն ստանալու համար դիմումները պետք է քննվեն արագ և բարեխիղճ կերպով, իսկ տեղեկատվության տրամադրման յուրաքանչյուր մերժում պետք է ենթակա լինի բողոքարկման: Տեղեկություն ստանալու համար ներկայացված դիմումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգն ընդգրկում է երեք տարբեր մակարդակներ՝ համապատասխան տեղեկատվությունը տնօրինող պետական մարմնի կողմից որոշման կայացում, կատարված որոշման բողոքարկում անկախ վարչական մարմնին և բողոքարկում դատական կարգով:

Այս սկզբունքն արտացոլված է նաև ՏԱ օրենքում, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներից է համարվում տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը: Տեղեկատվություն ստանալու՝ քաղաքացիների իրավունքի ապահովման նպատակով բոլոր պետական մարմինները պարտավոր են ստեղծել բաց, մատչելի ներքին մեխանիզմներ, մասնավորապես՝ պետք է ունենան հատուկ իրավասություններով օժտված մարմին կամ պաշտոնատար անձ, որը պետք է իրականացնի տեղեկատվություն ստանալու համար ներկայացված դիմումների քննություն և ապահովի տեղեկատվության մատչելիության մասին օրենքի պահանջների կատարումը: Նշված ընթացակարգերի շրջանակում կառանձնացնենք դրանց ապահովման առանցքային պայմանները:

1. ՏԱ պաշտոնատար անձ. ՏԱ օրենքն ընգծում է տեղեկատվության ազատության ապահովման հատուկ գործառույթն ունեցող պաշտոնատար անձին: Բուլղարիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Կանադայի փորձը ՏԱ բնագավառում ուսումնասիրելիս պարզվել է, որ գրեթե բոլոր պետական մարմիններն ունեն հանրության հետ կապերի և տեղեկատվության/մամլո առանձին վարչություններ (կամ ՏԱ պատասխանատու հատուկ պաշտոնյաներ): Դրանցից առաջինը պատասխանատու է տվյալ մարմնից դեպի հանրություն տեղեկությունների հոսքի համար, որի նպատակն է խթանել (գովազդել) այդ մարմնի գործառույթներն ու գործունեությունը: Երկրորդը պատասխանատու է ՏԱ հարցումներ ընդունելու և դրանց պատասխանելու, ինչպես նաև ՏԱ օրենքներով պահանջվող տեղեկությունները հրապարակելու համար: Վերոհիշյալ բոլոր երկրներում գործում է ՏԱ հարցերով հատուկ օմբուդսման կամ ՏԱ հանձնակատար, որը մի կողմից՝ քաղաքացիներին օգնում է պետական մարմիններում պահվող տեղեկությունները ձեռքբերելու գործում, մյուս կողմից՝ պետական պաշտոնյաներին աջակցում է իր խորհուրդներով այն դեպքերում, երբ վերջիններս դժվարանում են պահանջվող տեղեկությունները տրամադրելու մասին որոշումներ կայացնել: Քաղաքականապես և ֆինանսապես անկախ այս մարմինը պետական մարմինների (ՏԱ համար պատասխանատուների) և հանրության միջև կապող օղակի դեր է խաղում՝ փորձելով արդյունավետ լուծել դրանց միջև առաջացած խնդիրները՝ առանց ժամանակ ու ֆինանսական միջոցներ վատնելու (ԵԱՀԿ Երևանի գրասենյակ և «Ինֆորմացիայի ազատության» կենտրոն ՀԿ 14):

Ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի՝ Ադրբեջանում գոյություն ունի տեղեկատվության ազատության պահանջների համապատասխանությունը վերահսկող անկախ վերահսկիչ մարմին, այն է՝ Մարդու իրավունքների պաշտպանը: Այնուամենայնիվ, այդ ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն «de facto» արդյունավետ մեխանիզմ չէ («Թրանսփարենս Ինթերնեշնլի Հայաստան» ՀԿ և Չեխիայի արտաքին գործերի նախարարություն 17): Ուսումնասիրելով ՀՀ-ի մի շարք հանրային մարմինների կանոնադրությունները՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում գրեթե բոլորն ունեն տեղեկատվության տրամադրմամբ զբաղվող առանձին մարմիններ, որոնք ներառված են մեծ մասամբ տվյալ հանրային մարմնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության» կամ համանման ստորաբաժանման

մեջ, իսկ վարչության կամ առանձին ստորաբաժանման բացակայության դեպքում այն իրականացնում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձը[1]:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում չկա առանձին մի մարմին, որը կզբաղվի հենց տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման վերահսկմամբ: Այդ պարտականությունը դրված է ինչպես վարչապետի («Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *Վարչապետը Կառավարության աշխատակարգով սահմանված կարգով ապահովում է հանրությանը Կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար փոխանցումը*), այնպես էլ կոնկրետ հանրային մարմինների վրա: Կարծում ենք՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է առանձին մարմնի կազմավորումը, որը վերահսկողություն կիրականացնի հանրային մարմինների կողմից անձի հատուկ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի ապահովման նկատմամբ, ինչպես նաև կիրականացնի դրանց ընթացքում քաղաքացիների ներկայացրած բողոքների քննությունը:

2. Հարցման ներկայացման ու քննարկման կարգը. ՏԱ օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է հարցում ներկայացնելու և քննարկելու կարգը, որը կարող է լինել գրավոր կամ բանավոր: Հայաստանի և Ադրբեջանի ազգային օրենքներով թույլատրվում է տեղեկատվության ձեռքբերման հարցում ներկայացնել թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով: Մինչդեռ Վրաստանում տեղեկատվության մատչելիությամբ շահագրգիռ անձինք պետք է պարտադիր գրավոր ձևով հարցում ներկայացնեն համապատասխան մարմնին. դրույթ, որ որոշ չափով սահմանափակում է տեղեկատվության ազատությունը («Թրանսպարենս Ինթերնեշնլի Հայաստան» ՀԿ և Չեխիայի արտաքին գործերի նախարարություն 7):

ՊՔՄ կոնվենցիան նախատեսում է հատուկ տեղեկատվության ազատության իրավունքի իրացման շրջանակում պետության կողմից անձի՝ անանուն մնալու իրավունքն ապահովելու հնարավորությունը (4-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ ՀՀ-ում տեղեկության գրավոր հարցման մեջ դիմողի անուն-ազգանունը նշված չլինելը հիմք է հարցմանը չպատասխանելու համար (ՏԱ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր), մինչդեռ կարծում ենք, որ այն դեպքերում, երբ դիմողի անուն-ազգանունը կամ այլ տվյալը որևէ կերպ կապված չէ և չի խոչընդոտում հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրմանը, ապա պետք է խուսափել լրացուցիչ օրենսդրական խոչընդոտներից, որոնք այս պարագայում ձևական բնույթ կարող են կրել, և օրենսդրությամբ ապահովել անանուն մնալու իրավունքի իրացմամբ անանուն հարցում կատարելու հնարավորությունը:

3. Տեղեկություն տնօրինող իրավասու մարմին. տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման վերաբերյալ հետաքրքիր գործընթաց է նախատեսված ՏԱ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասում, ըստ որի՝ *եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:* Համարելով, որ այս դրույթն իրենից ներկայացնում է կարևոր երաշխիք, քանի որ ընդգծում է քաղաքացու նկատմամբ հանրային մարմնի կողմից պարտավորվող աջակցություն, այնուամենայնիվ կարծում ենք, որ պետք է նշված «աջակությունը» հասցնել առավելագույնի: Ավելի մանրամասն, մի շարք իրավագետներ, այդ թվում՝ Վ. Խրոպանյուկը (Խրոպանյուկ 63), Մ. Մուրադյանը

[1] Տե՛ս օրինակ՝ Վարչապետի աշխատակազմ՝ https://www.gov.am/am/staff-structure/, ՀՀ արդարադատության նախարարություն՝ http://moj.am/staff/structure_of_the_ministry, Շիրակի մարզպետարան՝ http://shirak.mtad.am/texekatvutyun/, Աշտարակի համայնքապետարան՝ http://www.ashtarak.am/Pages/CustomPage/?CustomPageID=3:

(Մուրադյան և այլք 76), Ա. Վաղարշյանը (Վաղարշյան 163), պետության հասկացությունն ու հատկանիշները ներկայացնելիս ընդգծում են դրա միասնականությունը, ըստ որի՝ պետությունը միասնական մարմին է: Կարծում ենք, որ պետության միասնականությունը պետք է արտացոլվի նաև խնդրո առարկայի վրա այն առումով, որ պետությունը պետք է հանդես գա որպես հատուկ տեղեկություն կրող մեկ միասնական մարմին: Վերջինից կհետևի՝ եթե տեղեկություն ստանալու դիմումով պահանջվող տեղեկությունը չգտնվի պետական մարմնի այն ստորաբաժանման մոտ, որին հասցեագրված է դիմումը, պետք է վերջինս ինքը նախաձեռնի նշված դիմումի փոխանցումը պահանջվող տեղեկությունը տնօրինող մարմնին՝ դրա մասին հայտնելով նաև դիմումատուին: Նշված ընթացակարգով կարծում ենք՝ շատ ավելի կապահովվի հատուկ տեղեկության ստացման գործընթացում պետության լիակատար աջակցությունը, ուստի առաջարկում ենք քննարկվող հոդվածը վերախմբագրել հետևյալ կերպ. «*եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ դիմումն ուղարկում է պահանջվող տեղեկատվությունը տնօրինող մարմնին (այդ թվում՝ արխիվին)՝ դրա մասին եռօրյա ժամկետում տեղեկացնելով դիմումատուին:*»:

Բողոքարկումը

Օրենքը պետք է երաշխավորի տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին պետական մարմնի կայացրած որոշումը անկախ մարմնին բողոքարկելու անձի իրավունքը: ՏԱ օրենքը սահմանում է, որ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան: ՀՀ-ում, թեև ՏԱ օրենքը հստակ նախատեսում է, սակայն մինչ օրս ներդրված չէ լիազորված պետական կառավարման մարմին, որը կքննի տեղեկատվության տրամադրման որոշման դեմ բերված բողոքները: Դրանք այժմ փաստացի քննվում են միայն վերադասության կամ դատական կարգով:

Հետաքրքիր է, որ ՀՀ Մարդու իրավունքների նախկին պաշտպան Կ. Անդրեասյանի նախաձեռնությամբ 2011 թվականին հիմնադրվել է Տեղեկատվական վեճերի խորհուրդը (ՏՎԽ), որի նպատակն է եղել պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը՝ այդ իրավունքների իրացման ընթացքում ծագող դատական վեճերի դեպքերում փորձագիտական եզրակացություններ հրապարակելով, որոնք հիմնված են ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և էթիկայի նորմերի վրա: ՏՎԽ պաշտոնական կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բավականին հետաքրքիր վեճեր է քննարկել (թվով մոտ 60 վեճ) սակայն 2016թ.-ից հետո քննված վեճեր չկան. հավանաբար խորհրդի գործունեությունը դադարեցված է: Թեև ՏՎԽ-ն պաշտոնական բնույթ չուներ և վեճի արդյունքում տրամադրում էր կողմերի համար ոչ պարտադիր եզրակացություն, սակայն նման մոդելը տեղեկատվական վեճերի քննման արագ ու արդյունավետ տարբերակ կարող էր համարվել:

Բողոքարկման կարևորությունն ընդգծվել է նաև ՊՓՄ կոնվենցիայով, ըստ որի՝ հարցում ներկայացնողը միշտ պետք է ունենա արագացված և ոչ ծախսատար բողոքարկման ընթացակարգերի հնարավորություն, մինչդեռ ՀՀ-ում առկա իրավիճակով որևէ կերպ չի ապահովվում բողոքարկման գործուն միջոցները: Այսպես, նման վեճերը մեծամասամբ քննվում են դատական կարգով, որում չկա սրա վերաբերյալ արագացված քննության արտոնյալ պայմաններ, իսկ ծանրաբեռնված դատական համակարգի միջոցով պահանջվող տեղեկության ստացումը երկարաժամկետ գործընթաց է ունենում, և պահանջվող տեղեկությունը, միանշանակ, այդ ընթացքում կորցնում է արդիականությունը: Պետք է արձանագրել, որ այս պայմաններն անմիջական վտանգ են ստեղծում անձի հատուկ տեղեկատվության

ազատության ապահովման համար, և առաջարկել՝ ստեղծել նման վեճերը քննող հատուկ մարմին, որի կողմից արտադատական կարգով ավելի պրոֆեսիոնալ քննության կենթարկվի մարդու տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի շուրջ առաջացող վեճերը (բողոքարկումները), և որոնց որոշումները դատարանի կողմից հաստատվելուց հետո կողմերի համար պարտադիր կդառնան, ինչպես նաև դատավարական օրենսդրությունում նախատեսել այս վեճերի քննության արագացված ընթացակարգեր:

Տեղեկատվության ազատության սահմանափակման սպառիչ ցանկ

Հատուկ տեղեկատվության ազատության կարևորությունն ընդգծելու համար չենք չափազանցնի և կներկայացնենք տեղեկությունների հրապարակման ենթակա լինելու կանխավարկածը, ըստ որի՝ հանրային մարմիններին ուղղված տեղեկատվություն ստանալու բոլոր դիմումները պետք է բավարարվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանրային մարմինը հիմնավորում է, որ տվյալ տեղեկությունը դասվում է տեղեկատվության թափանցիկության սկզբունքի բացառությունների թվին: Այսինքն՝ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում:

Այսպես՝ ՊՓՄ կոնվենցիայի համաձայն՝ սահմանափակումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում և համաչափ ու նպատակամղված լինեն պաշտպանելու այնպիսի շահեր, ինչպիսիք են՝ ազգային անվտանգությունը, պաշտպանությունը և միջազգային հարաբերությունները, հանրային անվտանգությունը, քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը և դատական կարգով հետապնդումը, անձի մասնավոր կյանքը և մյուս օրինական շահերը և այլն: Ընդ որում՝ Կոնվենցիան նախատեսում է երկու իրավիճակ, երբ պաշտոնական փաստաթուղթ ստանալու հարցումը կարող է մերժվել, եթե, չնայած պետական մարմնի ցուցաբերած օժանդակությանը, հարցումն այնքան անորոշ է ձևակերպված, որ չի հասկացվում, թե ինչ պաշտոնական փաստաթղթի մասին է խոսքը կամ եթե հարցումն ակնհայտորեն անհիմն է (հոդված 5):

Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է տեղեկատվության ազատության ու դրա սահմանափակման խնդիրներին: Այսպես, Եվրոպական դատարանը հաստատել է, որ տեղեկատվություն ստանալու ազատությունը պետության համար չի կարող պարտադրանք հանդիսանալ այնպիսի տեղեկատվության դեպքում, որը համարվում է զինված ուժերի, հետախուզական ծառայության և ոստիկանության վերաբերյալ ցանկացած գաղտնի տեղեկություն պարունակող փաստաթուղթ: Դատարանը տեղեկատվության ազատության իրավունքի խախտում չի արձանագրել ու գտել է, որ ատոմակայանի մասին բացառապես տեխնիկական տեղեկատվությանը հասու լինելը հանրային հետաքրքրության խնդիր չէ, իսկ այլ որոշմամբ էլ հաստատել է պետության կողմից տեղեկության ստացման իրավունքի խախտում, քանի որ վերջինս, հաշվի չառնելով առողջությանը սպառնացող վտանգը, դիմողին բավարար տեղեկություն չի տրամադրել ո՛չ բնակության վայրում գտնվող քիմիական գործարանի առկայության, ո՛չ էլ պատահարի դեպքում էվակուացիայի պլանների մասին:

Ուսումնասիրելով տեղեկատվության ազատության, մասնավորապես հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքի վերաբերյալ ՀՀ-ում առկա դատական պրակտիկան՝ պարզ է դառնում, որ տեղեկատվություն տնօրինողը հաճախ խուսափում է տեղեկատվություն տրամադրել՝ այն ՏԱ օրենքի 8-րդ հոդվածի հիմքերը տարբեր կերպ մեկնաբանելով՝ առանց հիմնավորելու դրանք (օրինակ՝ թիվ ՎԴ/1250/05/20, ՎԴ/8655/05/18, ՎԴ/0214/05/15 և այլ վարչական գործեր), մինչդեռ տեղեկատվություն փնտրողին պետք է տրվի պատշաճ՝ լրիվ և սպառիչ պատասխան:

Վերջիններիս հետ, միաժամանակ, հաշվի առնելով տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պատասխանատվություն նախատեսելու սահմանադրահիրավական պահանջը՝ կարծում ենք, որ այս առումով տեղեկությունների տրամադրման անհիմն մերժումների կանխումը տեղեկության մերժման որոշումների հիմնավորվածության ու պատճառաբանվածության մակարդակի բարձրացման մեջ է: Այսպես, քննարկվող իրավունքի սահմանափակումը ունի նպատակ ու հիմքեր, որոնցից առաջինը նախատեսված է մայր օրենքում, երկրորդը՝ հասարակ: Հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափությունը կախված է հիմքի ու նպատակի միաժամանակյա առկայությունից կամ այլ կերպ ասած՝ սահմանափակման համար ընտրված միջոց-հիմքը պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար (համաչափության սկզբունք): Հետևաբար տեղեկության տրամադրման մերժումները պետք է հիմնավորվեն և պատճառաբանվեն ոչ թե միայն դրա հիմքը (ՏԱ օրենքի 8-րդ հոդվածի համապատասխան կետը) ուղղակի նշելով, այլ յուրաքանչյուր դեպքում նաև դրա սահմանադրահիրավական նպատակն ընդգծելով:

Ստացվում է, որ եթե հանրային մարմինները, հղում կատարելով ՏԱ օրենքի 8-րդ հոդվածի հիմքերին, մերժում են որևէ տեղեկության տրամադրումը, ապա պետք է հիմնավորեն նաև, որ մերժման կոնկրետ հիմքը վնաս է հասցնում կամ կարող է հասցնել հանրային շահերին կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը (Սահմանադրության 51-րդ հոդվածի 2-րդ մաս), հակառակ դեպքում՝ հանրային մարմնի կողմից տեղեկատվության տրամադրման մերժումն անհիմն ու չպատճառաբանված կլինի:

Եզրակացություն

Հատուկ տեղեկատվության ազատության շուրջ տեսությունում և միջազգային իրավական ակտերում առանձնացված սկզբունք-չափորոշիչների ուսումնասիրումը և ՀՀ համապատասխան օրենսդրության հետ համեմատությունը թույլ տվեց երևան հանել սույն ոլորտում ՀՀ-ում առկա որոշ իրավական խնդիրներ, ինչպես նաև առաջ քաշել դրանց լուծման տեսահիրավական տարբերակներ:

Ամփոփելով հետազոտությունը՝ պետք է արձանագրենք, որ արդյունքում մատնանշված խնդիրների լուծման համար առաջարկվեց՝

- նախաձեռնել հանրային մարմինների կողմից անձի հատուկ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի ապահովման նկատմամբ վերահսկողություն իրականացնող և դրա շուրջ վեճերը քննող մարմնի ստեղծում կամ նման վեճերի դատական քննության արագացված ընթացակարգեր,
- որոշ դեպքերում օրենսդրությամբ ապահովել անանուն մնալու իրավունքի իրացմամբ անանուն հարցում կատարելու հնարավորությունը,
- քննարկվող իրավունքի շրջանակում պետությանը դիտարկել մեկ ընդհանուր սուբյեկտ, ըստ որի՝ եթե տեղեկություն ստանալու դիմումով պահանջվող տեղեկությունը չգտնվի պետական մարմնի այն ստորաբաժանման մոտ, ում հասցեագրված է դիմումը, պետք է վերջինս ինքը նախաձեռնի նշված դիմումի փոխանցումը պահանջվող տեղեկությունը տնօրինող մարմնին՝ դրա մասին հայտնելով նաև դիմումատուին,
- տեղեկության տրամադրման մերժման որոշումների համար նախատեսել պատճառաբանության բարձր չափանիշ, որի դեպքում հանրային մարմինը պետք է հիմնավորի տեղեկության տրամադրումը մերժելու սահմանադրական նպատակների առկայությունն ու հնարավորությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԵԱՀԿ Երևանի գրասենյակ և «Ինֆորմացիայի ազատության» կենտրոն ՀԿ. *«Տեղեկատվության ազատության ոլորտում վերապատրաստման կարիքների գնահատում».* Երևան, 2008:
2. «Թրանսպարենս Ինթերնեշնլի Հայաստան» ՀԿ և Չեխիայի արտաքին գործերի նախարարություն. *«Տեղեկատվության ազատությունը հարավկովկասյան երկրներում: ձեռնարկ»*. Երևան, 2012:
3. Խրոպանյուկ, Վալենտին. *«Պետության և իրավունքի տեսություն», (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով)*. թրգ. Խ. Հարությունյան, Երևանի Գիտակ համալսարան, «Գոշ» հրատարակչություն, Երևան, 1997:
4. «Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ», Հեղ. խումբ՝ Մ. Մուրադյան, Ա. Ղամբարյան և այլք.-3-րդ լրամշակված հրատ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2018:
5. *«Պետության և իրավունքի տեսություն-1 (դասախոսություններ)»*, ԵՊՀ, Երևան: Հեղինակային հրատարակություն, 2013:
6. Mendel, Toby. *“Freedom of Information: A Comparative Legal Survey”*. UNESCO: Paris, 2008:
7. Alexander, Larry. *“Is There a Right of Freedom of Expression?”*. , University of San Diego, Cambridge University Press, New York, 2005:
8. Ackerman, John M.,and Irma E. Sandoval-Ballesteros. *Administrative law review: The Global Explosion of Freedom of Information Laws*. Volume 58, Number 1, Washington College of Law, American University, 2006:
9. Bovens, Mark. *“Information Rights: Citizenship in the Information Society”*, Law & Public Administration, Utrecht University; The Journal of Political Philosophy: Volume 10, Number 3, Malden, Massachusetts, USA, 2002.
10. *“The Public's Right to Know: Principles on Freedom of Information Legislation”*, ARTICLE 19, London, 2016.
11. Sdružení Jihočeské Matky v. the Czech Republic, ECHR, 10 July 2006:
12. Սիրբուն և այլք ընդդեմ Մոլդովայի, ՄԻԵԴ, 16.06.2004:
13. Գուերրան ընդդեմ Իտալիայի, ՄԻԵԴ, 29.06.1996:
14. Թիվ ՎԴ4/0063/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում, 12.03.2010:

WORKS CITED

1. Administrative Law Review: The Global Explosion of Freedom of Information Laws, John M. Ackerman, Irma E. Sandoval-Ballesteros, Volume 58, Number 1, Washington College of Law, American University, 2006:
2. Freedom of Information: A Comparative Legal Survey, Toby Mendel, UNESCO: Paris, 2008:
3. Guerran y'nddem Italiayi, MIED [Guerra and Others v. Italy, ECHR], 29.06.1996. (In Armenian)
4. Information Rights: Citizenship in the Information Society, Mark Bovens, Law & Public Administration, Utrecht University; The Journal of Political Philosophy: Volume 10, Number 3, Malden, Massachusetts, USA, 2002:
5. Is There a Right of Freedom of Expression?, Larry Alexander, University of San Diego, Cambridge University Press, New York, 2005:
6. Muradyan, Manuk ev urishner. *Petut'yan ev iravunqi tesut'yun: Usumnakan d'zer'nark*. 3-rd lramshakvat's hrat., Lusabats hratarakchatun, Erevan. [*Theory of Law and State.Textbook*. 3rd revised publishing, Yerevan] 2018. (In Armenian)

7. Petut'yan ev iravunqi tesut'yun, (2-rd hratarakut'yun, lracumnerov, ughghumnerov) V. N. Xropanyuk, t'rg. X. Harut'yunyan, Erevani Gitak hamalsaran, Gosh hratarakchut'yun, Erevan. [Theory of State and Law, Yerevan] 1997. (In Armenian)

8. Petut'yan ev iravunqi tesut'yun-1 (dasaxosut'yunner), EPH, Erevan: Heghinakayin hratarakut'yun. [State and Law Theory-1 (lectures), Yerevan] 2013. (In Armenian)

9. Sdružení Jihočeské Matky v. the Czech Republic, ECHR, 10 July 2006:

10. Sirbun ev aylq y'nddem Moldovayi, MIED [Sirbu and others v.Moldova, ECHR], 16.06.2004. (In Armenian)

11. Teghekatvut'yan azatut'yan olortum verapatrastman kariqneri gnahatum, EAHK Erevani grasenyak ev «Informaciayi azatut'yan» kentron HK, Erevan. [Freedom of Information Training Needs Assessment, Yerevan] 2008. (In Armenian)

12. Teghekatvut'yan azatut'yuny' haravkovkasyan erkrnerum: d'er'nark, T'ransp'arens Int'erneshnli Hayastan HK ev Chexiayi artaqin gorc'eri naxararut'yun, Ereva. [Freedom of Information in South Caucasian countries: Handbook, Yerevan], 2012. (In Armenian)

13. The Public's Right to Know: Principles on Freedom of Information Legislation", ARTICLE 19, London, 2016:

14. T'iv VD4/0063/05/09 varchakan gorc'ov HH vtwr'abek datarani oroshum, 12.03.2010 Tthe decision of the RA Court of Cassation on the administrative case VD4/0063/05/09]. (In Armenian)

ENSURING AND PROTECTING FREEDOM OF SPECIAL INFORMATION IN RA IN THE LIGHT OF EUROPEAN AND INTERNATIONAL STANDARDS

EDGAR AVETISYAN

European University in Armenia, Faculty of International Relations and Law,
Chair of Law, Ph.D.Student,
Yerevan, The Republic of Armenia

The research concerns the special freedom of information covering the basic right to receive information from public authorities. Within the framework of guaranteeing the mentioned right, certain non-determinations have been formed, which guide the provision of this right.

In the framework of the article, in the light of international and European legal approaches, the purpose of highlighting some problems arising around the provision and protection of the right to freedom of special information in RA is presented. To achieve this goal, first, the legal basis of this basic right is referred to, some theoretical interpretations about it, the international and European legal approaches are distinguished and their comparison with the legislative approaches in the RA case. The study was conducted using scientific methods of analysis and combination.

A detailed reference is made to the process of receiving information from public bodies, the right to appeal within its framework and the issues of its limitation. The latter shows that there are some problems in the RA legislation regarding the freedom of special information, which may cause a possible violation of this basic right. As a result of the research, some options for solving the legal problems are presented, which will contribute to the provision and protection of this basic right.

Keywords: *special freedom of information, fundamental right, Constitution, standard, international standard, European standard, getting information, public body, appeal, limitation of right.*

ОБЕСПЕЧЕНИЕ И ЗАЩИТА СВОБОДЫ СПЕЦИАЛЬНОЙ ИНФОРМАЦИИ В РА В СВЕТЕ ЕВРОПЕЙСКИХ И МЕЖДУНАРОДНЫХ СТАНДАРТОВ

ЭДГАР АВЕТИСЯН
аспирант кафедры юриспруденции
факультета международных отношений и юриспруденции
Европейского университета в Армении,
г. Ереван, Республика Армения

Исследование касается проблемы особой свободы информации, охватывающей основное право на получение информации от органов государственной власти. В рамках обеспечения указанного права,которыми руководствуется обеспечение этого права, сформировались определенные погрешности.

В данной статье в свете международно-правовых подходов поставлена цель освещения некоторых проблем, возникающих вокруг обеспечения и защиты права на свободу специальной информации в РА. Для достижения этой цели упоминается правовая основа этого основного права, некоторые теоретические толкования по этому поводу, выделяются международно-правовой и европейский подходы и их сравнение с законодательными подходами в деле РА.

Исследование проводилось с использованием научных методов анализа и комбинации.

Подробно рассматривается процесс получения информации от государственных органов, право на обжалование в его рамках и вопросы его ограничения. Последнее свидетельствует о том, что в законодательстве РА имеются некоторые проблемы в отношении свободы специальной информации, что может привести к возможному нарушению этого основного права. В результате исследования представлены некоторые варианты решения правовых проблем, которые будут способствовать обеспечению и защите данного основного права.

Ключевые слова: *особая свобода информации, основное право, Конституция, стандарт, международный стандарт, европейский стандарт, получение информации, государственный орган, обжалование, ограничение права.*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԷԼԻՏԱՅԻ ՈՐԱԿԻ ՉԱՓՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՑՈՒՑԻՉԸ*

ՀՏԴ 352.075 (479.25) *10.52063/25792652-2022.3.14-68*

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
հանրային կառավարման ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
katya.altunyan@ysu.am

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ու համակողմանիորեն ներկայացնել քաղաքագիտական խոսույթում ներդրված գլոբալ նոր ֆենոմենը, որը կոչվում է էլիտայի որակի ցուցիչ (ինդեքս): Հաշվի առնելով, որ պետության զարգացման հնարավորությունները գնահատելու գլոբալ ցուցիչը ոչ պատահականորեն ներկայացվեց համավարակով համակված աշխարհին, կարծում ենք, որ այն ազդարարեց որոշակի նոր իրողությունների մասին:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ համավարակն ու աշխարհաքաղաքական ցնցումները, գլոբալ մարտահրավերներին դիմակայելու նպատակով ազդարարում են նոր որակի էլիտաների ձևավորման անհրաժեշտության մասին: Ըստ այդմ, սույն գիտական վերլուծության առանցքում դրված խնդիրն է էլիտայի տիպերի ու դրանց դերի վերաարժևորման, ինչպես նաև էլիտայի գործունակության մոդելի փոփոխության ուսումնասիրությունը պետության քաղաքատնտեսական չափումների համատեքստում: Հավելենք նաև, որ հոդվածում գիտական ապարատի միջոցով ու մեթոդաբանական գործիքակազմով փորձ է արվել բացատրել էլիտայի որակի գլոբալ ցուցիչը՝ հիմնվելով պետությունների վարկանշային սանդղակի տարբեր առանցքների վրա:

Ուսումնասիրությունը կատարվել է 2020 թվականից հրապարակվող էլիտայի որակի գլոբալ ցուցիչի ամենամյա զեկույցներում ամփոփված տվյալների, պետության ներուժը և էլիտայի որակական հատկանիշները համադրող բազմաշերտ չափանիշների հենքի վրա:

Կատարված ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ պետության զարգացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով ձևավորվող էլիտաները գործում են արժեքներ ստեղծելու, արդյունահանելու և բաշխելու մոդելով, ինչը դրանց ռազմավարական նշանակություն է տալիս:

* Հոդվածը ներկայացվել է 15.08.2022թ., գրախոսվել՝ 18.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Հիմնաբառեր՝ *էլիտայի որակի գլոբալ ցուցիչ (ինդեքս), պետություն, արդիականացում, արժեք, արժեք ստեղծելու բարոմետր, քաղաքատնտեսություն, հանրային (պետական) կառավարում, որակյալ էլիտա, պետությունների վարկանշային սանդղակ, ինստիտուտներ:*

Նախաբան

Պետության արդյունավետ կառավարման և իշխանության իրացման արդի խնդիրների համատեքստում լայնորեն ընդլայնվում է էլիտաների ուսումնասիրության գործիքակազմը: Նման գործիք է հարաբերականորեն վերջերս քաղաքագիտական խոսույթ ներդրված **«Էլիտայի որակի գլոբալ ցուցիչը»**, որն առաջին անգամ վերլուծեց համավարակի պատճառով պետությունների տնտեսական ակտիվության անկման ու սոցիալ-քաղաքական կյանքի ամայացման պատճառները ողջ աշխարհում: Ինչպես աշխարհի գրեթե բոլոր պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տնտեսական ու քաղաքական գործընթացների վրա ազդելու էլիտաների հնարավորությունների անհավասարությունը դառնում է ավելի խորը և ակնբախ: Հայաստանի՝ իբրև զարգացող պետության արդիականացման՝ սկզբից ի վեր կայուն քաղաքական համակարգ ու տնտեսական զարգացման ռազմավարական մոդել ունենալու խնդիրները մնում են այժմեական: Այդ խնդիրների համատեքստում էլ կարևորել ենք պետության զարգացման հնարավորությունների ու էլիտայի որակի գլոբալ ցուցիչի էությանն անդրադարձը՝ հիմնավորելով դրանց փոխկապվածության մասին թեզը:

Պետության զարգացման հնարավորությունների և որակյալ էլիտայի միջև փոխկապվածության մասին գրել է ավելի վաղ անցումագիտության տեսաբան **Ա. Պշևորսկին՝** կիրառելով «**տնտեսական բարեփոխումների քաղաքական շարժընթաց**» հասկացությունը (Пшеворский 15-18): Տեսաբանը նշում է, որ պետության արդիականացման սկզբնական փուլում հատկապես չափազանց կարևոր է էլիտաների համախմբում, ընդհանուր արժեհամակարգ ունենալը, որը մեծ հաշվով նշանակում է ունենալ որակյալ էլիտա: Վերոնշյալի առումով տնտեսական բարեփոխումների քաղաքական շարժընթացը ՀՀ-ում անգամ ոչ խորքային վերլուծության պարագայում փաստում է, որ պետությունն անցել է համակարգային անկայունության բազմաշերտ փուլերով: Այդ փուլերի ընթացքում ՀՀ էլիտային չի հաջողվել պետության տնտեսական համակարգը, սեփականության ձևերը, ռեսուրսների բաշխման կառուցակարգերն ու զարգացման ռազմավարությունները գործարկել ի շահ հասարակության բոլոր անդամների կյանքի բարելավման: Այդ գործընթացն ավելի նմանվել է քաղաքական ու տնտեսական ինքնակարգավորվող համակարգի, որը պարբերաբար ընկնում է ծայրահեղությունների մեջ (Ալթունյան 146):

Գլոբալ ցուցիչի քաղաքատնտեսական բնույթը

Պետության զարգացման հնարավորությունները չափող էլիտայի որակի գլոբալ ցուցիչն ունի քաղաքատնտեսական չափումներ, որոնք բաժանվում են ենթացուցիչների (ավելի մանրամասն տե՛ս *Գծապատկեր 1*), իսկ վերջիններս էլ վերլուծվում են բազում հենասյուների (անգլ. pillars) հիման վրա: Գծապատկերում նշված **քաղաքական չափումը** ընդհանուր առմամբ վերաբերում է քաղաքական իշխանության բնույթի, էլիտայի անդամների արժեբանական հիմքերի, նրանց բանիմացության ու կառավարչական հմտությունների տիրապետման և այլ հատկանիշների գնահատմանը:



Գծապատկեր 1. Գլոբալ ցուցիչի կառուցվածքը.
Ենթացուցիչների մատրիցա

Գլոբալացվող աշխարհում վերոթվարկյալ հատկանիշների արժևորումը պայմանավորված է պատասխանատու կառավարման անհրաժեշտությամբ: Նման մի պնդում է առաջ քաշել արդի հանրային (պետական) կառավարման համակարգի հիմնադիր-տեսաբան **Փ.Դրաքերը**: Գլոբալացման պայմաններում ազգային պետության մակարդակում գործառնող որակյալ էլիտա ասելով՝ Փ.Դրաքերը բառացիորեն նկատի ունի պատասխանատու գործերը հաջողությամբ կատարելու համար գիտելիք, արժեքաբանություն և փորձ ունեցող մարդկանց խումբը (Drucker 146): Բացի քաղաքականից, վերոնշյալ գծապատկերում նշվում է նաև **տնտեսական չափումը,** որն առաջին հերթին ենթադրում է պետության տնտեսությունը դիվերսիֆիկացնելու, ձեռնարկատիրական միջավայրը լավարկելու, հանրային ծառայությունների հասանելիությունն ապահովելու և ընդլայնելու, բնակչության կենսամակարդակն ու հանրային (պետական) ռեսուրսներն ավելացնելու հնարավարությունների գնահատում: Եվ ուրեմն գծապատկերի բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ բարձրորակ էլիտային հատկանշական է պետության զարգացման հնարավորությունները կամ այսպես կոչված «**քաղաքատնտեսական կարկանդակը**» մեծացնելու իմացություններին ու կարողություններին տիրապետելը: Շարունակելով նախորդ միտքը՝ հարկ է նշել, որ քննարկվող գլոբալ ցուցիչը պետության զարգացման հնարավորությունները վերլուծող և այլ միջազգային ցուցիչների համեմատությամբ տարբերվում է իր հսկայածավալ ու բազմատեսակ տվյալների համակցվածությամբ: Ըստ այդմ, ի սկզբանե պետությունների վարկանիշային ցուցակը կազմվել է միջազգային կազմակերպությունների ու ազգային ինստիտուտների տրամադրած կումուլյատիվ տվյալների լայն հենքի հիման վրա, որոնք պետության քաղաքատնտեսական ներուժի գնահատման բարդ պատկեր են ստեղծում (“Elite Quality Report - 2020” 3): Թեև գլոբալ ցուցիչն իրենից ներկայացնում է բազմաշերտ տվյալների բարդ համակարգ, այդուհանդերձ, այն բավական լուրջ գիտական հենքի վրա է նախագծվել: Այս իմաստով, Սբ. Գալլենի համալսարանի (Universität St. Gallen) հետազոտական խումբը գլոբալ մարտահրավերների լույսի ներքո գիտականորեն հիմնավորել է էլիտայի վերարժևորված ընկալումների տարածման անհրաժեշտությունն ու «էլիտա» եզրույթի արդի սահմանումը:

Էլիտայի վերարժևորումն ու արդի սահմանումը

Գլոբալ մարտահրավերներին դիմակայելու համար պետության զարգացման քաղաքատնտեսական հնարավորությունները մեծացնելու կարևոր պայման է էլիտաների գործառնության մոդելի ու կառուցակարգերի փոփոխությունը: Տևական ժամանակ գործարկվող «բիզնես-մոդելն» առաջարկվում է փոխարինել «**արժեքներ արարող մոդելով**»: Որդեգրել վերջին մոդելը՝ նշանակում է միավորել համակարգի բիզնես, կրթական ու քաղաքական տարրերը՝ հիմնավորելով, որ պետության զարգացման շարժընթացը որոշում են հենց այս երեք բաղադրիչները: Այդ մոդելով առաջնորդվող էլիտայի գործունակության նպատակը արժեքներ ստեղծելն ու բաշխելն է: Վերջինով պայմանավորված՝ վերարժևորվում է էլիտայի վարքը, մասնավորապես էլիտայի կազմում ընդգրկված մարդկանց առաջնորդելու կառուցակարգերը, մարտահրավերներին դիմակայելու, ինստիտուտներն ու օրենքները հարգելու, ինչպես նաև դրանց տառին ու ոգուն համահունչ գործելու հատկանիշներին տիրապետելը:

Եվ ուրեմն պետության զարգացման հնարավորությունների ավելացմանը միտված մոդելի գործարկման և արժեքներ ստեղծելու հիմքերով էլիտայի կարողությունները գնահատելու արդյունքում գլոբալ ցուցիչի շրջանակներում վերհանվել են չորս՝ «**մրցունակ» (competitive), «տեղեկացված» (enlightened), «ինքնաբավ» (rentier), «մարտնչող» (striving) տեսակի էլիտաներ** (“Elite Quality Report-2021” 32): «**Մրցունակ էլիտաները»** ձևավորվում են տնտեսական առումով ազատ շուկայի պայմաններում, իսկ քաղաքական առումով՝ ընտրապայքարի շրջափուլերով: Այդ կերպ, դրանց բնութագրող հատկանիշներն են արժեքներ ստեղծելու և բաշխելու, հանրային եկամուտներն ավելացնելու, տնտեսական աճը խթանելու և այլ կարողությունները: «**Տեղեկացված էլիտաները**» գերիշխող են հանրային (պետական) կառավարման համակարգերում իրենց բարձր տեղեկացվածության շնորհիվ, ինչը սակայն չի բացառում նրանց մոտ արժեք ստեղծելու միտվածությունը: Այդուհանդերձ, իրենց ձևավորած կոալիցիաների շնորհիվ երկրորդ տեսակի էլիտաները կարողանում են շահավետ ռենտաներ ստանալ տարբեր միջոցներով՝ վերածվելով արտոնյալ խավի: Էլիտաների երրորդ տեսակը կոչվում է «**ռանտյե**», որոնք հակված են շահութաբեր ինստիտուտներ, բայց ոչ երբեք՝ արժեքներ ստեղծելու: Ռանտյե էլիտաները օգտագործում են իշխանությունը արտոնյալ ծառայություններ ու խոշոր եկամուտներ ստանալու համար, այլ կերպ ասած՝ մշտապես փնտրում են ռենտա: Ընդ որում, դրանք զրկում են իշխանության լծակներ չունեցող հասարակության մյուս հատվածներին ազդեցության լծակներից: Վերջին տեսակը «**մարտնչողն**» է, որոնք հանդիպում են անկայուն պետական համակարգերում: Այս տեսակի առանձնահատկությունն այն է, որ էլիտաները ամենևին արժեքների տիրույթում չէ, որ մարտնչում են, այլ մարտնչում են ռենտա ստանալու համար: «Լևիաթան» չունեցող նմանատիպ պետություններում փաստացի փառամոլ (ամբիցիոզ) էլիտաները կատաղի պայքարի մեջ են մտնում միմյանց հետ՝ հետապնդելով սեփական շահերի պաշտպանությունը: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ պետության զարգացման հնարավորություններն ավելացնելու և արժեքներ ստեղծելու չափանիշներով որակապես բարձր են գնահատվում «մրցունակ էլիտաները»: Վերջինս հիմնավորելու է գալիս նաև էլիտայի այն սահմանումը, որը ձևակերպել է միջազգային փորձագիտական խումբը էլիտայի որակի գլոբալ ցուցիչի էության մեջ:

Դասական ու ժամանակակից հայեցակարգերում էլիտայի սահմանումը բխում է հանրային (պետական) կյանքի պատասխանատու սուբյեկտ լինելու փաստից, ապա լրամշակվում որոշումներ ընդունելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու և իշխանությունն իրացնելու նորմատիվ իրավական կողմերով (Ալթունյան 135-143): Գլոբալ ցուցիչը արժևորում է էլիտան գերազանցապես իբրև հանրային (պետական) ռեսուրսներն ավելացնելու կարողությամբ օժտված մարդկանց խումբ: 2020

թվականին պաշտոնական հարթակում էլիտան սահմանվել է հետևյալ կերպ. ***«...հասարակության մարդկային, ֆինանսական ու կապիտալների այլ ձևերը կոորդինացնելու և ավելացնելու կարողություններ ունեցող մարդկանց ընդհանրությունը կոչվում է էլիտա»*** (“What are Elites?”): Հատկանշականն այս սահմանման և էլիտայի որակի գլոբալ ցուցիչի տրամաբանության մեջ այն է, որ էլիտան բացառապես չի նույնացվում հասարակության կազմակերպված փոքրամասնության հետ: Ինչպես իրավացիորեն նշել են Շվեդիայի Գուտենբերգի համալսարանի պրոֆեսորներ **Կ. Դոսթրոմն** ու **Լ. Վանգնեուրդն** իրենց որակական հետազոտություններում, էլիտայի արդի սահմանման առանձնահատկությունն այն է, որ դրա որակը նույնացվում է արժեք ստեղծելու և այն հանրայնորեն տարածելու ցանկության ու կարողունակության հետ (Dahlström and Wängnerud 5): Ըստ հեղինակների՝ կազմակերպված փոքրամասնությունն էլիտա չէ, քանի որ նման փոքրամասնություններ կարող են կենսագործունեություն ծավալել պետության ու հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում: Լրացնելով այս միտքը՝ հետաքիքիր է մեջբերել «Սկոլկովո» բիզնես-դպրոցի նախագահ Ա.Շարոնովի և «Նոր տնտեսական դպրոցի» ռեկտոր Ռ. Ենիկոլոպովի միտքն առ այն, որ պետության ու հասարակության կազմակերպված խմբերը, անշուշտ, ի վիճակի են հարստություն կուտակել, շահութաբեր ինստիտուտներ ստեղծել, բայց արժեքներ ստեղծելու հարցում դրանք թույլ են (“Индекс качества элит”): Ի վերջո, կա ևս մի կարևոր հարցադրում, թե ինչու կազմակերպված խմբերը չեն կարող էլիտա համարվել: Վերոգրյալի վերաբերյալ ուշագրավ հարցադրում է առաջ քաշել Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր **Տ. Աճեմօղլուն՝ «**արդյո՞ք շահութաբեր ինստիտուտներ ստեղծելով, հասարակության կազմակերպված փոքրամասնությունները խթանում են պետության զարգացումը, թե՞ ոչ» (Acemoglu and Robinson 15-16): Աճեմօղլուն հանգում է այն եզրակացության, որ նույնիսկ եթե դրանք խթանում են պետության զարգացումը, նման կազմակերպված խմբերին բարձրորակ էլիտա անվանել չի կարելի: Բարձրորակ էլիտաները պետք է արարել իմանան, և ոչ թե կուտակել:

Կարևորելով վերոնշյալ շեշտադրումները՝ էլիտայի որակի հետազոտության արդյունքում տեսանելի է դառնում ևս մի հետաքրքիր իրողություն: Այդ իրողությունն այն է, որ **բարձրորակ էլիտայի առկայությունը ենթադրում է որակի մասին հանրային ընկալումների ու փաստացի տարվող քաղաքականության արդյունքների համակցում** (“Decentralized Governance” 15-20): Գլոբալ ցուցիչի ամենամյա զեկույցներում պետությունների վարկանշային սանդղակում առավել ցածր ցուցանիշներ ունեն, օրինակ, այն պետությունները, որտեղ համավարակի դեմ վարած քաղաքականությունը գնահատվել է որպես ռեսուրսավատնող ու ոչ արդյունավետ: Տրված հանրային ու պաշտոնական կարծիքների համակցման հիման վրա (այդուհանդերձ, ոչ միայն այդ պատճառով) հրաժարականներ տվեցին առաջանցիկ պետությունների կառավարությունները, մասնավորապես Ճապոնիայում, Միացյալ Թագավորությունում և այլուր: Այսպես՝ Ճապոնիայում սկսված տնտեսական ռեցեսիայի պատճառով հրաժարական տվեց երկար տարիներ պաշտոնավարող վարչապետ Սինձո Աբեն և նրա կառավարությունը (“Синдзо Абе”): Ավելի ուշ հանրային և քաղաքական շրջանակների անվստահության, համավարակի դեմ տարվող քաղաքականության ձախողման, բրիտանական օրենքները չհարգելու և այլ հիմքերով հրաժարական տվեց Միացյալ Թագավորության վարչապետ Բորիս Ջոնսոնը (“UK Prime Minister”): Այս և մի շարք այլ օրինակների ուսումնասիրությունը վերհանում է այն իրողությունը, որ համավարակով պայմանավորված մարդկային ու նյութական կորուստները համեմատաբար քիչ են եղել այն պետություններում, որոնք՝ ա) ունեցել են քաղաքական գլոբալացման բարձր մակարդակ, բ) ցանցային ու թվայնացված համակարգ, գ) ռեսուրսները կոորդինացնելու կարողություններ, դ) արժեքների կայուն ու ներառական համակարգ և այլն: Վերոնշյալից ուղղակիորեն հետևում է, որ առաջանցիկ պետություններում արմատավորված է արժեհամակարգ, ըստ որի

քաղաքական-կառավարչական էլիտան մարմնավորում է պետությունը՝ կրելով պատասխանատվություն զարգացման արժեքաբանության ձևավորման և ապագա սերունդների բարեկեցության ապահովման համար տնտեսական խոշոր ծրագրերի, քաղաքականությունների իրականացման համար:

Առանձնակի կարևորելով էլիտայի՝ պետության ռազմավարական նպատակների ու շահերի պաշտպանության առաքելությունը՝ 2022 թվականին գլոբալ ցուցիչի վերլուծության շրջանակներում ներդրվել է **ապագա սերունդների համար արժեքներ ստեղծելու կարողությամբ օժտված էլիտայի որակը գնահատող բարոմետրը** (անգլ. **NextGen Value Creation Barometer**): Վերջինս սահմանում է, որ ներկայի կարիքները բավարարելու հետ մեկտեղ էլիտան պետք է հոգա ապագա սերունդների ժառանգության մասին: Դրա հնարավորությունը հիմնավորվում է կայուն արժեքների ստեղծման համակարգի միջոցով, որը ենթադրում է կրթական համակարգի զարգացում, տեխնոլոգիական առաջընթաց, խաղաղություն և բարենպաստ կենսապայմաններ ապագա սերունդների համար (“Elite Quality Report 2022” 4-8): Վերը նշված Բարոմետրի վերլուծության հիմքում դրվել են հինգ կարգախմբեր, որոնք են՝ *ա) կայունությունը և բնական կապիտալը (Sustainable and Natural Capital), բ) անաչառ հնարավորությունները (Equitable Opportunities), գ) կրթությունն ու մարդկային կապիտալը (Education and Human Capital), դ) առողջությունն ու բարեկեցությունը (Health and Well-Being), ե) նորարարությունն ու տեխնոլոգիաները (Innovation and Technology):* Ընդհանուր առմամբ վերլուծելով Բարոմետրի կատեգորիաների էությունն ու դրանցով կազմված պետությունների վարկանշային ցուցակը՝ պարզ է դառնում, որ փոքր քաղաքատնտեսություններն ավելի շատ են կարևորում սերունդների ապագան, քան խոշորները: Այսպես՝ առաջատար տասը պետությունների շարքում միայն Միացյալ Թագավորությունն ու Ավստրալիան են, որ ունեն խոշոր քաղաքատնտեսություններ *(ավելի մանրամասն տե՛ս աղյուսակ 1*): Մյուսները համեմատաբար փոքր քաղաքատնտեսական համակարգ ունեցող պետություններ են:

Աղյուսակ 1. Առաջատար պետությունների ցանկն ըստ հաջորդ սերունդների համար արժեք ստեղծելու բարոմետրի

Երկիր	Բարոմետրի վարկա-նշային սանդղակ	Կայունու-թյուն ու բնական կապիտալ	Անաչառ հնարավո-րություններ	Կրթութ-յուն ու մարդ-կային կապիտալ	Առողջություն ու բարեկե-ցություն	Նորարա-ություն ու տեխնոլոգիա
Շվեդիա	1	7	22	4	58	1
Նոր Զելանդիա	2	34	5	3	10	24
Դանիա	3	16	4	8	78	9
Շվեյցարիա	4	9	30	12	40	6
Իսրայել	5	54	23	23	3	2
Նիդեռլանդներ	6	30	8	7	38	12
Միացյալ Թագավորութ.	7	15	36	11	63	4
Ֆինլանդիա	8	21	45	1	67	5
Ավստրալիա	9	51	15	5	34	15
Սինգապուր	10	10	128	22	2	13

Բարոմետրի վարկանշային ցուցակում հայ հանրությանը հետաքրքիր է նաև Հվ. Կովկասի երեք պետությունների դիրքային հորիզոնականն ու տվյալների պատկերը: Հայաստանը զբաղեցնում է 75-րդ հորիզոնականը և համարվում է առաջատարը տարածաշրջանի պետությունների շարքում (“Elite Quality Report 2022” 6): Համեմատության համար նշենք, որ Ադրբեջանը զբաղեցնում է 85-րդ, իսկ Վրաստանը՝ 89-րդ հորիզոնականները (*ավելի մանրամասն տե՛ս աղյուսակ 2*):

Աղյուսակ 2. Հվ. Կովկասի երեք պետություններն ըստ հաջորդ սերունդների համար արժեք ստեղծելու բարոմետրի

Երկիր	Բարոմետրի վարկա-նշային սանդղակ	Կայու-նություն ու բնական կապիտալ	Անաչառ հնարավո-րություններ	Կրթություն ու մարդկային կապիտալ	Առող-ջություն ու բարեկե-ցություն	Նորարա-ություն ու տեխնո-լոգիա
Հայաստան	75	50	137	70	45	83
Ադրբեջան	85	107	62	136	56	70
Վրաստան	89	115	135	71	54	77

Ինչպես տեսնում ենք, քաղաքատնտեսության համատեքստում տարբերակվում են բարձրորակ ու ցածրորակ էլիտաները: Առաջիններն արարում են պետության ու հասարակության համար, մինչդեռ երկրորդներն օգտվում են պետության ռեսուրսներից, արժեքներ ու հնարավորություններ չեն ստեղծում: Այդուհանդերձ, բարձր ու ցածր մակարդակների միջև կա նաև միջին մակարդակը, որը գլոբալ ցուցիչի նախագծման ընթացքում չէր կարող հաշվի չառնվել: Ըստ այդմ, որակական առումով էլիտաները լինում են հինգ՝ ***ա) ամենաբարձր որակի (very high quality elites), բ) բարձր որակի (high quality elites), գ) որակյալ (quality elites), դ) միջին որակի (middle quality elites), ե) հետադիմական (lagging elites) տեսակների*** (“Elite Quality Report 2021” 21): Էլիտաների որակական գնահատումն իրականացվում է իշխանություն-արժեք առանցքում, սակայն էլիտայի/պետության որակական գնահատումն իրականացվում է 101 չափանիշներով՝ սկսած ինստիտուտների կայացումից մինչև ճգնաժամերի կառավարում, ռեսուրսների բաշխում ու վերաբաշխում: Կողք-կողքի դնելով 2021 և 2022 թվականներին աշխարհի հարյուր հիսունմեկ պետությունների շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է նկատել, որ գլոբալ ցուցիչը հրապարակելուց ի վեր **ամենաբարձր որակի էլիտաներ** ունեցող պետությունների ցանկում եղել և մնում են **Սինգապուրը, Շվեյցարիան, Ավստրալիան, Իսրայելը, Նիդեռլանդները, Շվեդիան, Կանադան, Միացյալ Թագավորությունը** և այլն: Ընդգծենք, որ վերոնշյալ որոշ պետություններ բարելավել են իրենց դիրքերը, մյուսները՝ հակառակը: Այսպես օրինակ՝ Միացյալ Թագավորությունը, որպես ամենաբարձր որակի էլիտա ունեցող պետություն, 2022 թ. զբաղեցրել է ութերորդ հորիզոնականը, մինչդեռ 2021թ.-ին երրորդ տեղում էր: Փոխարենը Կանադան, որ 2021 թ. զբաղեցնում էր տասնմեկերորդ տեղը, 2022 թ. յոթերորդ տեղում է (փաստացի բարձր որակի մակարդակից անցնելով ամենաբարձր մակարդակին): **Բարձր որակի էլիտաներ** ունեցող պետություններից առաջատարներն են **Գերմանիան, Ֆինլանդիան, Նոր Զելանդիան, Ճապոնիան, Իռլանդիան** և այլն: Նկատենք, որ պետությունների ամենամեծ խմբերը կազմում են **որակյալ ու միջին որակի էլիտաներ** ունեցող պետությունները: Դրանցում ներառված են հիմնականում **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ԵԱՏՄ որոշ պետություններ**: 2021 թ. վիճակագրությամբ, Հվ. Կովկասի տարածաշրջանի պետությունների շարքում **Հայաստանը միջին որակի էլիտա** ունեցող պետությունների սանդղակում է: 2022 թ. գլոբալ ցուցիչի մասին զեկույցից պարզ է դառնում, որ Վրաստանը նախորդ տարվա համեմատ հետընթաց է գրանցել՝ որակյալ էլիտաների մակարդակից անցնելով միջին որակի մակարդակ և հայտնվել Հայաստանի կողքին (“Elite Quality Report 2022” 45): Ինչ վերաբերում է **հետադիմական էլիտաներ** ունեցող պետություններին, ապա դրանց մեջ են **Աֆրիկյան մայրցամաքի պետությունները, Վենեսուելան, Բոսնյա և Հերցեգովինան, Թունիսը** և այլն:

Եզրակացություն

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- Էլիտայի որակի գլոբալ ցուցիչը ցույց է տալիս, թե էլիտայի գործունեությունն ինչպես է ազդում պետության զարգացման հնարավորությունների վրա: Քաղաքատնտեսությունը, ինչպես դասական տնտեսագիտությունն է պնդում, դրել է արժեքի աշխատանքային տեսության հիմքերը: Ըստ այդմ, բարձրորակ էլիտաները որոշվում են իրենց արժեքներ ստեղծելու, դրանք արդյունահանելու և վերաբաշխելու ռեսուրսներով: Առավել արժեքավոր չափանիշներով, այն է՝ գիտելիքներով, ազդեցիկ, արարչագործ լինելու և այլն, էլիտաները ստանում են ամենաբարձր ցուցանիշները: Շատ կարևոր է հասկանալ, թե էլիտան/պետությունը քաղաքատնտեսության առումով ինչ ներդրում է ունենում զարգացման հնարավորություններն ավելացնելու

տեսանկյունից:

- Պետության զարգացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով ձևավորվող էլիտաները գործում են արժեքներ արարելու մոդելով, ինչը դրանց հաղորդում է ռազմավարական նշանակություն: Քանի որ քաղաքական-կառավարչական էլիտան բացառիկ դեր է խաղում ռազմավարական տեսլականի ձևակերպման ու ինստիտուցիոնալացման գործում, էլիտան ինքը պետք է նախ կրի, ապա արարի պետության զարգացման հնարավորությունները մեծացնող արժեքներ: Այս առումով 2022 թվականին գլոբալ ցուցիչի շրջանակներում ներդրված առանձին՝ սերունդների համար արժեք ստեղծելու մասին բարոմետրը կոչված է խրախուսելու մի արժեհամակարգի ձևավորմանը, ըստ որի՝ «ծառը պետք է տնկվի և ջրվի» անկախ այն հանագամանքից՝ կտեսնես դրա փթթելը, թե՝ ոչ: Ավելին՝ իբրև զարգացման գործընթացների կարևորագույն սիներգետիկ ուժ՝ էլիտան կոչված է ապահովելու տեսլականի գիտական հենքն ու «հնարավորությունների պատուհան» ապագա սերունդների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալթունյան, Կատերինա. *Քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափը*, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2020, ՀՀ ՊԿԱ, Երևան, 2020:
2. Ալթունյան, Կատերինա**.** *Շրջապտույտը՝ քաղաքական էլիտայի արդիականացման պայման*, Լրատու - Մեսրոպ Մաշտոց համալսարան, «Լիմուշ» հրատարակչություն, Երևան, 2021-2 (26), 2021:
3. *Индекс качества элит: как они влияют на экономическое и политическое развитие?* 02 сентября 2020 https://www.skolkovo.ru/expert-opinions/indeks-kachestva-elit-kak-oni-vliyayut-na-ekonomicheskoe-i-politicheskoe-razvitie/ Доступно: 12.08.2022.
4. Пшеворский, Адам. *Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке*, /пер. с анг. под ред. проф. Бажанова А.В./, «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2000.
5. *Синдзо Абэ: экс-премьер Японии, который 27 раз обсуждал с Путиным Курилы***,** 8 июля 2022, https://www.bbc.com/russian/features-62093514 Доступно: 12.08.2022.
6. Acemoglu, Daron and *Robinson J. Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty*, “Crown” Publishers, New York, 2012.
7. *Decentralized Governance, Development Programmes and Elite Capture***,** /ed by Rajasekhar, Devendra Babu, Manjula/, “Springer” publ., Singapore, 2018.
8. Drucker, Peter. *Management Challenges for the 21st Century*, publ. by “HarperBusiness”, New York, 2001.
9. *Elites, Institutions and the Quality of Government***,** /ed. by Carl Dahlström and Lena Wängnerud/, “Springer”, Palgrave Macmillan; 1st ed., New York, 2015.
10. *Elite Quality Report, 2020: 32 Country Scores and Global Rank. Value Creation in Societies: Global Metrics for Long-Term Economic and Human Development*, The Foundation for Value Creation, St.Gallen, Switzerland, publ. by Seismo Press AG, Zurich and Geneva, 2020.
11. *Elite Quality Report, 2021: Country Scores and Global Rankings. Sustainable Value Creation – Fundamental Issues for Society Global Metrics for Long-Term Economic and Human Development*, The Foundation for Value Creation, St.Gallen, Switzerland, publ. by Seismo Press AG, Zurich and Geneva, 2021.
12. *Elite Quality Report 2022: Country Scores and Global Rankings: Sustainable Value Creation. Global Metrics for Long-Term Economic and Human Development*, The Foundation for Value Creation, St.Gallen, Switzerland, publ. by Seismo Press AG, Zurich and Geneva, 2022.

13. *UK Prime Minister Boris Johnson faces leadership crisis over 'partygate'*, 19/01/2022, https://www.france24.com/en/europe/20220119-uk-prime-minister-boris-johnson-faces-leadership-crisis-over-partygate Available: 12.08.2022.

14. *What are Elites? Why Elite Matter? How do we Measure Elites? Measuring Elite Quality: Country Scores & Global Rank* https://elitequality.org/ Available: 12.08.2022.

WORKS CITED

1. Altunyan, Katerina. "Qaxaqakan entranu havaqagrman dzevachape", Hanrayin Karavarum Handes 1/2020, Yerevan, ["The Model of Political Elite Recruitment", Public Administration Scientific Journal 1/2020, Yerevan], 2020. (in Armenian)

2. Altunyan, Katerina. "Shrjaptuyte qaxaqakan elitayi ardiakanacman payman", Lratu Mesrop Mashtots Hamalsaran, "Limush", 2021-2 (26), Yerevan ["Circulation as a Condition for the Political Elite Modernization", Bulletin of Mesrop Mashtots University, "Limush" publ., 2021-2 (26), Yerevan], 2021. (in Armenian)

3. "Indeks kachestva elit: Kak oni vliyayut na ekonomicheskoe i politicheskoe razvitie?", Sentyabr 02, 2020 https://www.skolkovo.ru/expert-opinions/indeks-kachestva-elit-kak-oni-vliyayut-na-ekonomicheskoe-i-politicheskoe-razvitie/ Dostupno 02.08.2022 ["Elite Quality Index: How do They Impact on Economic and Political Development", September 2, 2020, https://www.skolkovo.ru/expert-opinions/indeks-kachestva-elit-kak-oni-vliyayut-na-ekonomicheskoe-i-politicheskoe-razvitie/ Available: 12.08.2022]. (in Russian)

4. Pshevorski, Adam. "Demokratia i rinok. Politicheskie i economicheskie reformi v Vostochnoy Evrope i Latinskoy Amerike", perevod s angl. prof. Bajanova A.V., Rossiyskaya politicheskaya enciklopedia (ROSSPEN), 2000 ["Democracy and Market: Political and Economic Reforms in the Eastern Europe and Latin America", (ROSSPEN), 2000]. (in Russian)

5. "Sindzo Abe. Eks premier Yaponii, kotoriy 27 raz obsujdal s Putinim Kurili", 8 Iyulya 2022 https://www.bbc.com/russian/features-62093514 Dostupno 12.08.2022 ["Shinzo Abe: Prime Minister of Japan, Who Met 27 times with Putin on the Issue of Kuril", July 8, 2022 https://www.bbc.com/russian/features-62093514 Available: 12.08.2022] (in Russian)

GLOBAL INDEX FOR MEASURING STATE DEVELOPMENT OPPORTUNITIES AND ELITE QUALITY

KATERINA ALTUNYAN
Yerevan State University, Chair of Public Administration,
Ph.D. in Political Sciences, Associate Professor,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of the article is to study the new global phenomenon called the elite quality indicator (index). The global index for assessing the state's development opportunities was not accidentally presented to the world overwhelmed by the pandemic.

The current study allows us to claim that the pandemic and geopolitical upheavals are signals of necesity to form new quality elite in order to face global challenges. Accordingly, the main task of this scientific analysis is the re-evaluation of elite types and its role, as well as the study of the change of the elite's performance (functionality) model in the context of the political and economic dimensions of the state. Additionally, an attempt was made to explain the global quality indicator of the elite based on different axes of the rating scale of the states using scientific apparatus and methodological tools.

The study was carried out on the basis of the data summarized in the annual reports of the global elite quality index published since 2020 and multi-layered criteria combining the potential of the state and the quality characteristics of the elite.

Based on the results of conducted study, it is concluded that the elites are forming in order to expand the state's development opportunities within the model of creating, extracting and distributing values, which gives them strategic importance.

Keywords: global elite quality index (index), state, modernization, value, value creation barometer, political economy, public (state) administration, quality elite, rating scale of states, institutions.

ГЛОБАЛЬНЫЙ ИНДЕКС ДЛЯ ИЗМЕРЕНИЯ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ГОСУДАРСТВА И КАЧЕСТВА ЭЛИТЫ

КАТЕРИНА АЛТУНЯН
доцент кафедры государственного управления
Ереванского государственного университета,
кандидат политических наук,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – изучить и всесторонне представить новое глобальное явление, которое получило название показателя (индекса) качества элиты. Учитывая, что глобальный индикатор оценки возможностей развития государства не случайно был представлен миру во время пандемии, полагаем, что он сигнализировал о неких новых реалиях.

Исследование позволяет утверждать, что пандемия и геополитические потрясения сигнализируют о необходимости формирования элит нового качества для противостояния глобальным вызовам. Соответственно, основной задачей данного научного анализа является переоценка типов элиты и ее роли, а также изучение изменения модели производительности (функциональности) элиты в контексте политического и экономического измерений государства. В статье предпринята также попытка объяснить глобальный показатель качества элиты на основе разных осей рейтинговой шкалы государств с использованием научного аппарата и методологического инструментария.

Исследование проведено на основе данных, обобщающих ежегодные отчеты глобального индекса качества элиты, публикуемых с 2020 г., на основе критериев, объединяющих потенциал государства и качественные характеристики элит.

По результатам проведенного исследования делается вывод, что элиты формируются с целью расширения возможностей развития государства в рамках модели создания, извлечения и распределения ценностей, что придает им стратегическое значение.

Ключевые слова: *глобальный индекс качества элиты (индекс), государство, модернизация, стоимость, барометр создания стоимости, политическая экономия, общественное (государственное) управление, качественная элита, рейтинговая шкала государств, институты*.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

ՀՏԴ 355.3 *10.52063/25792652-2022.3.14-78*

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության և միջազգային համագործակցության վարչության պաշպանական քաղաքականության պլանավորման բաժնի պետի տեղակալ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, Ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
t.harutyunyan@mil.am

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել պաշտպանական քաղաքականության բաղադրիչի՝ ՀՀ անվտանգային համակարգում ներառման էվոլյուցիան և վերջինիս ազդեցությունն ու կապը Հայաստանի անվտանգության և պաշտպանության ոլորտներում իրականացվող բարեփոխումների վրա: Վերջինս նախատեսված է պաշտպանական բարեփոխումներով հետաքրքրված ընթերցողների լայն շրջանակի համար և ուղղված է պաշտպանական քաղաքականության ոլորտում գիտելիքների զարգացմանը:

Զինված ուժերի կառուցման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն, ձեռնամուխ լինելով սեփական զինված ուժերի ստեղծմանը, նախապես ընտրում է դրանց այն կառուցվածքը, որով կերաշխավորվի տվյալ պետության անվտանգությունը:

Հոդվածում կիրառել ենք հետազոտության որակական մեթոդաբանությունը՝ հավաքելով և վերլուծելով թեմային առնչվող ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդական աղբյուրները:

Այս համատեքստում է, որ պաշտպանական քաղաքականության ինտեգրումը երկրի ընդհանուր անվտանգության համակարգին առանցքային դեր խաղաց պաշտպանական բարեփոխումների ողջ գործընթացում՝ հզոր խթան հաղորդելով Հայաստանի պաշտպանության և անվտանգության ոլորտներում դոկտրինալ մոտեցման ի հայտ գալուն: Սույն հոդվածում հեղինակն անդրադառնում է պաշտպանական քաղաքականության ներդրման պատմությանը, ժամանակագրությանը, նշանակությանն ու դերին, պաշտ-պանական քաղաքականություն հասկացությանը և Հայաստանի Հանրա-պետության զինված ուժերի ղեկավարման համակարգին և հրամանատա-րական ուղղահայաց փոփոխություններին, պաշտպանական քաղաքակա-նության մշակման, պլանավորման և իրականացման գործընթացին, պաշտ-պանական քաղաքականության փոխկապակցվածությանը համապետական քաղաքականության այլ ճյուղերին:

Զինված ուժերի կառուցումը փոխկապված ու փոխպայմանավորված տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական, ռազմատեխնի-կական և այլ բնույթի միջոցառումների համակարգն է, որ նպատակաուղղված է ազգային շահերի երաշխավորված զինված պաշտպանության նպատակով

* Հոդվածը ներկայացվել է 31.08.2022թ., գրախոսվել՝ 24.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

զինված ուժերի ստեղծմանը, պատրաստմանն ու զարգացմանը: Վերոնշյալ գործընթացը պետք է իրագործվի պետության ռազմական գործունեության ընդհանուր համակարգի շրջանակներում՝ պետության ամբողջ ռազմական կազմակերպվածքի փուլային համալիր կերպափոխմանը համահունչ:

Հաշվի առնելով միջազգային հարթակում և տարածաշրջանում ընթացող խորքային գործընթացները, ինչպես նաև Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքները՝ Հայաստանի Հնարապետությունը մտել է զինված ուժերի վերափոխման և պաշտպանության ոլորտի բարեփոխումների նոր ու վճռորոշ փուլ, որի հաջողությունից է կախված լինելու երկրի հետագա զարգացումը:

Հիմնաբառեր՝ *պաշտպանական քաղաքականություն, պաշտպանության ոլորտ, բարեփոխումներ, Սահմանադրություն, կառավարման մոդել, զինված ուժեր, ազգային շահ:*

1.1 *Պաշտպանական քաղաքականություն հասկացությունը, ՀՀ ԶՈՒ ղեկավարման համակարգը և հրամանատարական ուղղահայացի փոփոխությունները*

«Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը ոչ թե իրավական, այլ քաղաքական-հայեցակարգային կատեգորիա է: Ուստի միջազգային պրակտիկայում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը իրավական հստակ սահմանում չունի: Փոխարենը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում են դրա իրավական հիմքերը (ՀՀ Սահմանադրություն 14, 41, 44, 46, 57, 118, 133, 155): Իրավական միևնույն մոտեցումն է գործում այն մյուս պետություններում, որոնց կառավարման համակարգերը կիրառում են ռազմավարական-քաղաքական (ռազմավարությունների և քաղաքականությունների) պլանավորման սկզբունքը, օրինակ՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլն (Constitution of the United States, I, II):

Քաղաքական-հայեցակարգային առումով «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը կրկին տարբերվում է կառավարման և պլանավորման տարբեր համակարգեր ունեցող պետություններում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ պաշտպանության ոլորտի հիմնական հայեցակարգային փաստաթուղթը ՌԴ ռազմական դոկտրինն է, «պաշտպանական քաղաքականություն» հասկացություն չկա, փոխարենը սահմանում է «ռազմական քաղաքականություն» (военная политика) հասկացությունը՝ հետևյալ կերպ. «*ռազմական քաղաքականություն՝ պետության գործունեությունը ՌԴ պաշտպանության և անվտանգության կազմակերպման և իրականացման, ինչպես նաև նրա դաշնակիցների շահերի ապահովման ուղղությամբ»* (Военная доктрина Российской Федерации 3):

Պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը սահմանելիս «ռազմական» թե «պաշտպանական» տերմինի տարբերությունը պայմանավորված է պետությունների կառավարման և պլանավորման համակարգերի հայեցակարգային մոտեցումների տարբերություններով:

ՀՀ վերանկախացումից ի վեր պետական կառավարման համակարգի փոփոխություններին համընթաց ՀՀ ԶՈՒ ղեկավարման համակարգը և հրամանատարական ուղղահայացը ենթարկվել են փոփոխությունների:

1-ին փուլ

1995թ. Սահմանադրության ընդունմամբ (գործել է մինչև 2005թ. Սահմանադրական փոփոխությունները) Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց այսպես կոչված «նախագահական կառավարման համակարգ»: 1995թ. Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը հանդիսանում էր Զինված ուժերի գլխավոր հրամանատարը (չկար գերագույն գլխավոր հրամանատար հասկացությունը), նշանակում էր ԶՈՒ բարձրագույն

հրամանատարական կազմին և որոշում էր ընդունում Զինված ուժերի օգտագործման մասին: Սահմանադրությունը չէր սահմանում նաև ՀՈՒ չեզոքությունը քաղաքական հարցերում *(նախընտրական գործընթացների և ընտրությունների վրա ազդեցության տեսանկյունից):*

Սույն Սահմանադրության համաձայն, 1997թ. ընդունվեց Պաշտպանության մասին ՀՀ օրենքը, որի հոդված 10-ը սահմանեց ՀՀ ՀՈՒ ղեկավարման համակարգը և հրամանատարական ուղղահայացը: Մասնավորապես, ՀՈՒ ընդհանուր ղեկավարումն իրականացնում էր ՀՀ Նախագահը, իսկ անմիջական ղեկավարումը՝ ՀՀ պաշտպանության նախարարը: ՊՆ-ԳՇ լիազորությունների տարանջատում չկար և ՀՈՒ ԳՇ պետը հանդիսանում էր պաշտպանության նախարարի առաջին տեղակալը: Պաշտպանության մասին ՀՀ օրենքի հոդված 15-ը սահմանում էր, որ Զինված ուժերում և այլ զորքերում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ստեղծումն ու կանոնադրական գործունեությունն արգելվում է:

2-րդ փուլ

2001թ. Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց Եվրոպայի խորհրդին և ստանձնեց մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության ամրապնդման և քաղաքացիական վերահսկողության (այդ թվում՝ Զինված ուժերի նպատմամբ) մի շարք պարտավորություններ: Այդ նպատակով ՀՀ կառավարման համակարգում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերը մասամբ հավասարակշռելու նպատակով 2005թ. տեղի ունեցան սահմանադրական փոփոխություններ, որոնք Հայաստանի Հանրապետությունում նախագահական կառավարման համակարգից անցում կատարեցին կիսանախագահական կառավարման համակարգի և անդրադարձան նաև պաշտպանության ոլորտի վրա:

Մասնավորապես, սահմանվեց գերագույն գլխավոր հրամանատար հասկացությունը: 2005թ. Սահմանադրության 55-րդ հոդվածով սահմանվեց, որ ՀՀ Նախագահը Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է և համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում: Նույն հոդվածում նշվեց, որ պատերազմի ժամանակ Հանրապետության Նախագահը կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին (որը հետագայում օրենսդրությամբ չհստակեցվեց):

Սահմանադրության հոդված 8.2-ը հստակ նշեց, որ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո *(նախընտրական գործընթացների և ընտրությունների վրա ազդեցության տեսանկյունից):*

Միաժամանակ ընդլայնվեցին և հստակեցվեցին Ազգային Ժողովի լիազորությունները: Մասնավորապես, քաղաքական ու ռազմական բնույթ ունեցող միջազգային պայմանագրերը պարտադիր վավերացման ենթակա դարձան Ազգային Ժողովի կողմից: Միաժամանակ, ազգային ժողովին վերապահվեց ՀՀ Նախագահի կողմից հայտարարված ռազմական դրությունը չեղարկելու լիազորություն:

Սահմանադրությամբ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության և քաղաքական հարցերում չեզոքության պահպահման դրույթները կիրառելու նպատակով 2008թ. ընդունվեց Պաշտպանության մասին ՀՀ նոր օրենքը, որով տարանջատվեցին պաշտպանության նախարարության և ՀՈՒ ԳՇ լիազորությունները: Դրա հիմնական նպատակն էր զինվորականներին գործառութային առումով տարանջատել քաղաքական իշխանության ճյուղերից (Նախագահ, կառավարություն՝ ի դեմս պաշտպանության նախարարի և այլն) և նրանց վրա սահմանել քաղաքացիական վերահսկողություն: Զինված ուժերի վրա քաղաքացիական վերահսկողության գործառույթը վերապահվեց Պաշտպանության նախարարին՝ որպես կառավարության անդամի և քաղաքական պաշտոնյայի: Այդ նպատակով պաշտպանության նախարարությունում ներդրվեց նաև

քաղաքացիական հատուկ ծառայություն (ՔՀԾ-ն, ի տարբերություն այսօր գործող քաղաքացիական ծառայության, իր կոչումային համակարգով և գործառութային պարտականություններով, սահմանում էր զինվորական ծառայության հետ հավասարեցված կարգավիճակ), որի նպատակն էր բարձրացնել զինվորականների դերը և պրոֆեսիոնալիզացնել զինվորական ծառայությունը, քանի որ այն պաշտոնները, որոնք պրոֆեսիոնալ ռազմական կրթություն չէին պահանջում, քաղաքացիականացվեցին:

Պաշտպանության մասին ՀՀ օրենքի հոդված 12-ը սահմանեց, որ ԶՈՒ ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ Նախագահը՝ որպես գերագույն գլխավոր հրամանատար, ԶՈՒ անմիջական ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը, իսկ ԶՈՒ կառավարումն իրականացնում է ԶՈՒ գլխավոր շտաբի պետը, որը (առաջին անգամ սահմանվեց) հանդիսանում է ԶՈՒ զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը: Այս նորամուծությունը հաստատեց պաշտպանության նախարարի՝ քաղաքական ու քաղաքացիական լինելու հանգամանքը: Չնայած շարունակվեց պահպանվել Նախագահ-նախարար-ԶՈՒ ԳՇ պետ հրամանատարական ուղղահայացը (ավելացավ ԶՈՒ ԳՇ պետ օղակը), սակայն Պաշտպանության մասին օրենքը չհստակեցրեց ոչ ընդհանուր ղեկավարում-անմիջական ղեկավարում-կառավարում հասկացությունները, ոչ էլ պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատար նշանակելու կարգը և դերը:

Օրենքի հոդված 18-ը արգելեց նաև ոչ միայն Զինված ուժերում և այլ զորքերում կուսակցությունների, միավորումների ու արհեստակցական միությունների ստեղծումը, այլև կուսակցական քարոզչությունը, որը քաղաքական հարցերում չեզոքության պահպանման կարևոր էլեմենտ էր:

3-րդ փուլ

2015թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունը «կիսանախագահական կառավարման համակարգից» անցում կատարեց «խորհրդարանական կառավարման համակարգի», ինչն անդրադարձավ նաև պաշտպանության ոլորտի վրա: Մասնավորապես, ՀՀ նախագահի լիազորությունները բաշխվեցին կառավարության, Ազգային ժողովի և Ազգային անվտանգության խորհրդի միջև:

Սահմանադրության հոդված 155-ը սահմանում է, որ Զինված ուժերը կառավարության ենթակայության ներքո են, իսկ ԶՈՒ կիրառման մասին որոշումն ընդունում է ՀՀ կառավարությունը: Միևնույն ժամանակ մեծացել է Անվտանգության խորհրդի դերը: Սահմանադրության նույն հոդվածի համաձայն՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը (ներառյալ՝ հաստատում է պլանները), իսկ պաշտպանության նախարարն այդ շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը:

Այս դրույթների արդյունքում պետության պաշտպանության կարևորագույն հարցերում անհատական պատասխանատվությունը (օրինակ՝ նախկինում ՀՀ նախագահի) վերափոխվեցին կոլեկտիվ պատասխանատվության (կառավարություն և ԱԽ):

Սահմանադրության հոդված 155-ի 3-րդ կետը արդեն սահմանադրորեն վերահաստատում է նաև, որ ԶՈՒ զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը ԳՇ պետն է, ով ոչ պատերազմական ժամանակ ենթակա է պաշտպանության նախարարին (այս դրույթը աղավաղում է պատերազմական ժամանակ հրամանատարական ուղղահայացը և դուրս է թողնում պաշտպանության նախարարին):

Դեռ ավելին՝ նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (գերագույն գլխավոր հրամանատարի փոխարեն սահմանելով գերագույն հրամանատար, այս

դրույթն իր հերթին չի հստակեցնում, թե ով է գերագույն հրամանատարը խաղաղ ժամանակ, փաստացի պաշտպանության նախարարն է որպես կառավարության անդամ, քանի որ ԶՈՒ-ը գտնվում են կառավարության ենթակայության ներքո և խաղաղ ժամանակ ԶՈՒ ԳՇ պետը ենթարկվում է պաշտպանության նախարարին):

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2017թ. փոփոխությունների է ենթարկվել նաև Պաշտպանության մասին ՀՀ օրենքը: Օրենքում փորձ է արվել մասամբ շտկել պատերազմական ժամանակ հրամանատարական ուղղահայացի անհստակությունը: Մասնավորապես, հոդված 16-ի 3-րդ կետը սահմանում է, որ պատերազմի ժամանակ գլխավոր շտաբի պետի՝ զինված ուժերի գերագույն հրամանատարին ուղիղ ենթակայությունը չի ձևափոխում զինված ուժերի գերագույն հրամանատարի կողմից չկարգավորված հարցերում զինված ուժերի ղեկավարումն իրականացնող և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն ապահովող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ԶՈՒ գլխավոր շտաբի պետի ենթակայությունը:

Միաժամանակ, նույն հոդվածը սահմանում է, որ զինված ուժերի անմիջական հրամանատարը ԶՈՒ ԳՇ պետն է, իսկ 4-րդ կետը նշում է ԶՈՒ ԳՇ պետի նշանակման կոնկրետ ժամկետ (5 տարի):

Զուգահեռաբար վերացվել է հատուկ քաղաքացիական ծառայության ինստիտուտը և ՊՆ անձնակազմն ընդգրկվել է համընդհանուր քաղաքացիական ծառայության համակարգում:

1.2 Պաշտպանական քաղաքականության մշակման, պլանավորման և իրականացման գործընթացը

Պաշտպանական քաղաքականության մշակման, պլանավորման և իրականացման գործընթացը կատարվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

Պաշտպանական քաղաքականության հայեցակարգային (քաղաքական և ռազմաքաղաքական) հիմքերի սահմանումը.

ՊՌՎ գործընթացի արդյունքում անվտանգության միջավայրի գնահատման հիման վրա պաշտպանական քաղաքականության քաղաքական և ռազմաքաղաքական հիմքերն ամրագրվում են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ ռազմական հայեցակարգում և ՊՌՎ Հանրային իրազեկման փաստաթղթերում (ինչպես նաև ՊՌՎ ընթացքում մշակվող մյուս փակ փաստաթղթերում):

Պաշտպանական քաղաքականության պլանավորումը.

Պաշտպանական քաղաքականության պլանավորումն իրականացվում է պլանավորման ղեկավար փաստաթղթերի միջոցով: Այդ նպատակով ՊՌՎ արդյունքում մշակվել և հաստատվել են ԶՈՒ զարգացման պլանը և ՍՏՌ զարգացման պետական ծրագիրը, որոնք ինտեգրվում են ՀՀ կառավարության ծրագրերում՝ սահմանելով առաջնահերթություններ և գերակայություններ:

Պաշտպանական քաղաքականության իրականացումը.

Պաշտպանական քաղաքականությունն իրականացվում է համապետական, միջգերատեսչական և գերատեսչական մակարդակներում:

Իրականացման համապետական մակարդակ.

Այս մակարդակում պաշտպանական քաղաքականությունն իրականացվում և վերահսկվում է ՀՀ կառավարության կողմից՝ իր աշխատակազմի, Ազգային անվտանգության խորհրդի և ՀՀ Նախագահի կողմից նշանակված ՀՀ պաշտպանության նախարարի միջոցով: Համապետական մակարդակում պաշտպանական քաղաքականության իրականացումը սահմանափակվում է ռազմաքաղաքական որոշումների մշակմամբ և կայացմամբ, ինչպես նաև ազգային ու միջազգային հանրությանը դրանց ներկայացմամբ:

Իրականացման միջգերատեսչական մակարդակ.

Այս մակարդակում պաշտպանական քաղաքականությունը պլանավորվում և իրականացվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ կառավարության անդամ հանդիսացող ՀՀ պաշտպանության նախարարի միջոցով, կառավարության աշխատակազմի և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցությամբ: ՀՀ կառավարությունն է մշակում և հաստատում պաշտպանության ոլորտի կամ դրա հետ փոխկապակցված հիմնական ռազմավարությունները, ծրագրերը, օրինագծերը, սահմանում գերակայությունները և այլն:

Իրականացման գերատեսչական մակարդակ.

Այս մակարդակում պաշտպանական քաղաքականության իրականացումն ընդգրկում է պաշտպանության նախարարի (պաշտպանության նախարարության) գործառնական և կառավարչական գործառույթների շրջանակները: Պաշտպանության նախարարն ապահովում է համապետական (որպես ՀՀ վարչապետի առաջարկությամբ ՀՀ Նախագահի կողմից նշանակվող պաշտոնյա) և միջգերատեսչական (որպես ՀՀ կառավարության անդամ) մակարդակներում կայացված որոշումների և հաստատված ծրագրերի համակցումը և իրականացումը ՀՀ ԶՈՒ հրամանատարության միջոցով (որպես ԶՈՒ անմիջական ղեկավարումն իրականացվող պաշտոնյա): Գերատեսչական մակարդակում պաշտպանական քաղաքականության իրականացման համար պատասխանատու է ՊՆ և ԶՈՒ ԳՇ ղեկավար կազմը:

Այսպիսով՝ չնայած պաշտպանական քաղաքականության ուղղությամբ որոշումները կայացվում է ՀՀ կառավարության, պլանավորվում ՀՀ կառավարության և իրականացվում ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ մակարդակում՝ վերաբերվող մասով համադրվելով պետական կառավարման այլ մարմինների հետ, ՀՀ պաշտպանության նախարարը հիմնական դերակատարություն ունի բոլոր երեք մակարդակներում էլ. նախապատրաստում և հաստատման է ներկայացնում ՀՀ Նախագահի ռազմաքաղաքական որոշումները, նախապատրաստում և հաստատման է ներկայացնում ՀՀ կառավարության ծրագրային և հայեցակարգային որոշումները, գերատեսչական մակարդակում ապահովում է դրանց կատարումը և հաշվետվողականությունը:

1.3 *Պաշտպանական քաղաքականության փոխկա-պակցվածությունը համապետական քաղաքականության այլ ճյուղերին.*

Պաշտպանական քաղաքականության պլանավորման ներդրված մշակույթն ի ցույց է դնում դրա փոխկապակցվածությունը համապետական քաղաքականության այն ճյուղերին, որոնք չեն իրականացվում պաշտպանության նախարարության կողմից, սակայն պաշտպանական քաղաքականության շրջանակներում հանդիսանում են համադրման առարկա: Դրանք են

1. Արտաքին քաղաքականությունը, քանի որ դրանից է մեծամասամբ կախված արտաքին անվտանգության միջավայրի ձևավորումը, սպառնալիքների ուժգնացումը կամ մեղմացումը, Զինված ուժերի միջազգային ներգրավումն ու հավաքական պաշտպանության մեխանիզմների զարգացումը: Միաժամանակ հաշվի առնելով ՀՀ սահմանադրության այն եզրույթը, որ ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերն ունեն գերակայություն ազգային օրենքների նկատմամբ (ՀՀ *Սահմանադրություն*), ինչպես նաև այն, որ Ազգային Ժողովի կողմից վավերացվում են այն միջազգային պայմանագրերը, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ (ՀՀ *Սահմանադրություն*), ՀՀ ԱԳՆ միջնորդությամբ անվտանգության ու պաշտպանության ոլորտներում տարբեր միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի նախապատրաստումը, համաձայնեցումը և

ստորագրումը հանդիսանում են (պետք է հանդիսանան) ՀՀ պաշտպանության քաղաքականության քննության առարկա:

2. Տնտեսական (ներառյալ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական) քաղաքականությունը, քանի որ այն պետք է ապահովի պետության պաշտպանունակության համար խիստ անհրաժեշտ տնտեսական զարգացման կայունությունը, պարենային, նյութական և ռազմատեխնիկական ինքնաբավության հնարավորինս բարձր աստիճան, ռազմավարական պաշարների կուտակումը, խթանի ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը և այլն:

3. Ֆինանսատնտեսական քաղաքականությունը, քանի որ պետական ֆինանսական հոսքերով է պայմանավորված զինված ուժերի նյութատեխնիկական ապահովումը և անձնակազմի դրամական բավարարումը:

4. Սոցիալական քաղաքականությունը, քանի որ այն ԶՈՒ գործող և զորացրվող անձնակազմի նկատմամբ պետք է կիրառի միջազգային պրակտիկայում ընդունված սոցիալական առանձնահատուկ կարգավիճակ:

5. Տեղեկատվական քաղաքականությունը, քանի որ այն կարող է դրական կամ բացասական անդրադառնալ ՀՀ ԶՈՒ նկատմամբ հասարակության վստահության աստիճանի վրա, ինչը փոխկապակցված է զորակոչի, զորահավաքի, համալրման, անգամ ֆինանսական ռեսուրսների կարիքների բավարարման հետ (ցածր վարկանիշի դեպքում բարդ կլինի հիմնավորել, թե ինչու է այդքան ռեսուրս հատկացվում պաշտպանության կարիքներին, իսկ բարձր վարկանիշի դեպքում բոլոր ծախսերը հասարակության շրջանում կլինեն արդարացված): Բացի այդ, տեղեկատվական քաղաքականության և այն կանոնակարգող օրենսդրությունից է կախված գաղտնիության ապահովման ռեժիմը և պաշտպանությունը արտաքին տեղեկատվական հարձակումներից:

6. Կրթական քաղաքականությունը, քանի որ հատկապես պարտադիր ժամկետային ծառայություն ունեցող պետություններում այն ապահովում է նախազորակոչային պատրաստությունը և ռազմական կրթության համակարգի միջոցով ԶՈՒ պահանջվող մասնագիտությունների պատրաստումը:

7. Երիտասարդության և սպորտի զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականությունը, քանի որ այն պետք է նպաստի երիտասարդ սերնդի և հատկապես զորակոչային ռեսուրսի առողջության ապահովմանը, պայմանագրային ծառայության հավաքագրման խթանմանը:

8. Գիտական քաղաքականությունը, քանի որ պետության կողմից գիտության ֆինանսավորումը կամ գիտության համար առաջնահերթ ուղղությունների ցանկում պաշտպանության համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ընդգրկումը կարող են մեծապես նպաստել ռազմական արդյունաբերության զարգացմանը (կիրառական գիտության մասով) և ռազմագիտությանը (տեսական գիտության մասով):

9. Դատաիրավական համակարգը, քանի որ ԶՈՒ-ում տեղի ունեցող քրեական հանցագործությունները քննվում և վճիռները կայացվում են քաղաքացիական դատաիրավական համակարգի կողմից, հետևաբար սահմանված պատիժների ձևերն ու տևողությունն ուղղակի փոխկապակցված են ԶՈՒ-ում լուրջ հանցագործությունների վիճակագրության հետ:

10. Քաղաքացիական պաշտպանության ապահովման քաղաքականությունը, քանի որ կայացած քաղաքացիական պաշտպանությունը ռազմական դրության ժամանակ կարող է զգալիորեն թեթևացնել ԶՈՒ պարտականությունները պետության ներսում, անգամ վերացնել տարածքային պաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով պետք է փաստել, որ Արցախյան երկրորդ պատերազմից հետո ի հայտ եկավ անհրաժեշտություն վերանայել զինված ուժերի զարգացման ուղիները: Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքներով քաղված դասերի վերլուծություն հիման վրա, կառավարության 2021-2026թթ. ծրագրի մշակման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել արհեստավարժ բանակին անցմանը, համապատասխան սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրմանը և վերազինմանը, ռազմական գործողությունների պլանավորմանն ու վարման ձևերի վերանայմանը և այլն: ՀՀ զինված ուժերում իրականացվող բարեփոխումների գործընթացը ներառում է ՁՈՒ մարտունակության, անվտանգային համակարգի վերականգնման ուղղությամբ զինված ուժերում իրականացվող կառուցվածքային ու բովանդակային խորքային բարեփոխումներ:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս ակտիվ ռազմական գործողություններ չեն իրականացվում, իրավիճակը մեր տարածաշրջանում շարունակում է մնալ բավականին լարված: **Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգության միջավայրից ելնելով հիմնականում գտնվել, գտնվում է և միջնաժամկետ հեռանկարում գտնվելու է «սպառնալի ժամանակաշրջանի» ռեժիմում:** Ելնելով վերոնշյալից՝ Հայաստանն իր պաշտպանական անվտանգային ակտիվ քաղաքականությամբ պետք է հետամուտ լինի հնարավորինս սեղմ ժամկետներում զինված ուժերում մեկնարկած լայնածավալ ու խորքային բարեփոխումների իրականացմանը՝ նշված գործընթացում ամբողջական կերպով օգտագործելով և արդյունավետորեն կիրառելով պաշտպանական քաղաքականության մեխանիզմների ընձեռած ողջ գործիքակազմը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ՀՀ Սահմանադրություն, 2015*:
2. Scott, Jasper. *The Capabilities-Based Approach in Transforming Defense Capabilities*, Boulder. Lynne Rienner Publishers 2009.
3. Toffler, Alvin**.** *The Third Wave*. Boston, 1984.
4. Baghdassarian, Anoush and Pope Cameron. Why the Nagorno-Karabakh Cease-Fire Won't End the Conflict. *Lawfare*, November 25, 2020.
5. Coffey, Luke. Azerbaijan and Armenia: A Regional Conflict with Global Implications, *The Heritage Foundation*, No. 3542, October 6, 2020.
6. Constitution of the United States; Second Amendment; Article I, Section 8, and Article II, Section 2.
7. Kofman, Michael and Nersisyan, Leonid, The Second Nagorno - Karabakh War, Two Weeks In, *War On the Rocks*, October 14, 2020, *Armed Conflict Survey*, Volume 7, 2021.
8. The Militia Act of 1792, Second Congress, Session I. Chapter XXVIII, May 2, 1792.

WORKS CITED

1. Hayastani Hanrapetutyan Sahmanadrutyun. Hodvats 5, 14, 41, 44, 46, 57,116, 118, 133, 155. [Constitution of the Republic of Armenia. Article 5, 14, 41, 44, 46, 57,116, 118, 133, 155] 2015. (In Armenian)

INCLUSION OF DEFENCE POLICY IN THE SECURITY SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

TIGRAN HARUTYUNYAN
RA Ministry of Defence, Department of Defence Policy and International Cooperation, Defence Policy Planning Division, Deputy Head;
National Academy of Sciences,
Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student;
Yerevan, The Republic of Armenia

The aim of this article is to present the evolution of the inclusion of the defence policy component in the RA security system and its impact and connection on the reforms implemented in the security and defence sectors of Armenia. The latter is intended for a wide range of readers interested in defence reforms and is aimed at developing knowledge in the field of defence policy.

The world experience of building the armed forces shows that each state, setting out to create its own armed forces, first chooses the structure that will guarantee the security of the given state.

The article used the qualitative research methodology, collecting and analyzing both primary and secondary sources related to the topic.

It is in this context that the integration of defence policy into the overall security system of the country played a key role in the entire process of defence reforms, giving a powerful impetus to the reforms, as well as the emergence of a doctrinal approach in the fields of defense and security of Armenia. In this article, the author addresses the history, chronology, significance and role of the introduction of defence policy, the concept of defence policy and the changes in the management system and command vertical of the Armed Forces of the Republic of Armenia, the process of development, planning and implementation of defense policy, the interdependence of defence policy with other branches of national policy.

The construction of the armed forces is the system of interrelated and interdependent economic, socio-political, ideological, military-technical and other measures aimed at the creation, training and development of the armed forces for the guaranteed armed defence of national interests. The above-mentioned process should be implemented within the framework of the general system of the state's military activities, in line with the step-by-step complex transformation of the entire state's military organization.

Taking into account the deep processes taking place on the international stage and in the region, as well as the results of the second Artsakh war, the Republic of Armenia has entered a new and crucial stage of the transformation of the armed forces and the defence sector reforms, on the success of which the future development of the country will depend.

Keywords: *Defence policy, defence sphere, reforms, Constitution, governance model, armed forces, national interest.*

ВКЛЮЧЕНИЕ ОБОРОННОЙ ПОЛИТИКИ В СИСТЕМУ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ТИГРАН АРУТЮНЯН
заместитель начальника отдела планирования оборонной политикидепартамента оборонной политики и международного сотрудничества Министерства обороны Республики Армения, аспирант Института философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения, г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – представить эволюцию включения компонента оборонной политики в систему безопасности РА и его влияние и связь с реформами, осуществляемыми в секторах безопасности и обороны Армении. Последняя предназначена для широкого круга читателей, интересующихся оборонными реформами, и направлена на развитие знаний в области оборонной политики.

Мировой опыт строительства вооруженных сил показывает, что каждое государство, приступая к созданию собственных вооруженных сил, прежде всего выбирает ту структуру, которая будет гарантировать безопасность данного государства.

В статье использовалась методология качественного исследования, собирающая и анализирующая как первичные, так и вторичные источники, связанные с темой.

Именно в этом контексте интеграция оборонной политики в общую систему безопасности страны сыграла ключевую роль во всем процессе оборонных реформ, придав мощный импульс реформам, а также появлению доктринального подхода в области обороны и безопасности Армении. В данной статье автор обращается к истории, хронологии, значению и роли введения оборонной политики, концепции оборонной политики и изменениям в системе управления и командной вертикали Вооруженных Сил Республики Армения, процессу разработки, планирования и реализации оборонной политики, взаимозависимости оборонной политики с другими отраслями государственной политики.

Строительство вооруженных сил представляет собой систему взаимосвязанных и взаимообусловленных экономических, социально-политических, идеологических, военно-технических и иных мероприятий, направленных на создание, подготовку и развитие вооруженных сил для гарантированной вооруженной защиты национальных интересов. Указанный процесс должен осуществляться в рамках общей системы военной деятельности государства, в русле поэтапного комплексного преобразования всей военной организации государства.

Учитывая глубокие процессы, происходящие на международной арене и в регионе, а также итоги второй Арцахской войны, Республика Армения вступила в новый ответственный этап трансформации вооруженных сил и реформирования оборонного сектора, от успеха которого будет зависеть будущее развитие страны.

Ключевые слова: *оборонная политика, оборонная сфера, реформы, Конституция, модель управления, вооруженные силы, национальный интерес.*

ԷԹՆԻԿ ԼՈԲԲԻՆԳԸ, ՈՐՊԵՍ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԷԼԻՏԱՆԵՐԻ ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ*

ՀՏԴ 327.8 *10.52063/25792652-2022.3.14-88*

ԳԵՎՈՐԳ ՂՈՒԿԱՍՅԱՆ
«Հայ դատ» հիմնադրամի ծրագրերի պատասխանատու,
Հայաստանի Հանրապետության
Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gmghukasyan@outlook.com

Սույն աշխատանքի նպատակն է բացահայտել սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ քաղաքական դերակատարումը, որը ենթադրում է հայրենիք-ընդունող պետություն երկճյուղած փոխհարաբերություններ:

Հոդվածում խնդիր է դրվել արդի միջազգային հարաբերություններում հասկանալ էթնիկ լոբբինգի տեղն ու դերը՝ իբրև անդրազգային քաղաքական գործոն:

Հետազոտության նպատակին ու առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու համար կիրառվել են գիտական վերլուծության պատմահամեմատական, կառուցվածքագործառնական ու վարքաբանական մեթոդները:

Եզրահանգվել է, որ Էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունը միտված է ոչ միայն հայրենի պետությանն օժանդակությանը, այլև հայրենի պետության վրա ազդեցությանը: Դրան զուգահեռ էթնիկ լոբբիստական խմբերը նաև կարող են հակադարձ ազդեցության ենթարկվել և՛ հայրենի պետության և՛ ընդունող պետության կողմից: Այդ համատեքստում, այդուհանդերձ, լոբբիստական խմբերը փորձում են պահպանել իրենց համեմատաբար անկախ դերակատարումը:

Էթնիկ լոբբինգի ինստիտուտը հանդես է գալիս իբրև քաղաքական գործընթացի մակրո մակարդակի դերակատար, ինչն ամրապնդվում և զարգանում է անդրազգային քաղաքական կազմավորումների աճող ազդեցության, գլոբալիզացիայի և տեղեկատվահաղորդակցական հնարավորությունների ընդլայնման պարագայում:

Էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, առնչվում է սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերներին: Նմանօրինակ մոտեցումը, ի թիվս այլնի, հիմնավորված է Ս. Հանթինգթոնի այն պնդմամբ, որ «երկքաղաքացիությունը լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի հավատարմությունը»:

Սփյուռքյան էլիտաների ինքնության երկվությունը անխուսափելի մարտահրավեր է, որի հաղթահարումը հնարավոր է երկու ինքնությունների ոչ թե դիխոտոմիայի, այլ կոնվերգենցիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա հավասարապես բավարարել երկու ինքնությունների պահանջմունքները և սպասարկել դրանք՝ չօտարվելով ոչ հայրենի և ոչ ընդունող պետություններից:

* Հոդվածը ներկայացվել է 06.10.2022թ., գրախոսվել՝ 08.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Հիմնաբառեր՝ *լոբբինգ, էթնիկ լոբբինգ, անդրազգային դերակատարներ, հաղորդակցություն, ճնշման խմբեր, հակամարտություններ, սփյուռք, սփյուռքյան էլիտա, էլիտաների երկվություն:*

Մուտք

Արդի տուրբուլենտ քաղաքական գործընթացներում, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճի պայմաններում մեծացել է սփյուռքի՝ որպես քաղաքական ինստիտուտի դերակատարումը: Այն ակնառու դրսևորվում է հայրենիք-ընդունող պետություն փոխհարաբերություններում: Սփյուռքերն աստիճանաբար տեղ ու դեր են ստանձնում գլոբալ կառավարման համակարգում:

Քաղաքական գործընթացներում սփյուռքերի տեղի ու դերի հստակեցմանը նպաստելով՝ անդրազգային քաղաքական կառույցները իրենց դրսևորում են որպես ինքնուրույն խաղացողներ՝ ազդելով պետությունների վրա: Քաղաքական գիտության մեջ ձևավորված մոտեցումն առ այն, որ դրանց գործունեության ուղղությունը հիմնականում միակողմանի է և չունի հակադարձ-միջնորդավորված ազդեցություն (HäGel, Peter, Pauline Peretz, 467–493), վիճարկելի է, քանի որ արդի տուրբուլենտ քաղաքական զարգացումներում աներկբա է անդրազգային քաղաքական դերակատարների բազմաշերտ փոխազդեցությունը:

Սույն աշխատանքի նպատակն է բացահայտել սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ քաղաքական դերակատարումը, որը ենթադրում է հայրենիք-ընդունող պետություն երկճյուղած փոխհարաբերություններ:

Այս պնդմամբ նպատակ ունենք հիմնավորել, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործունեությունը միտված է ոչ միայն ընդունող պետության հետ հարաբերություն-ների զարգացմանը, այլև լոբբինգի միջոցով ազդել նաև հայրենի պետության վրա, ինչպես նաև հակադարձ ազդեցության ենթարկվել և՛ հայրենի պետության և՛ ընդունող պետության կողմից: Այդ համատեքստում, այդուհանդերձ, լոբբիստական խմբերը փորձում են պահպանել իրենց համեմատաբար անկախ դերակատարումը: Իր հերթին հայրենի երկրների կառավարող վերնախավը, որպես պետական իշխանության կրող և քաղաքականության պետականակենտրոն մոդելի կողմնակից, փորձում է օգտվել ստեղծված երկվությունից, ինչպես ազդել, այնպես էլ փոխհարաբերվել անդրազգային քաղաքական դերակատարների հետ: Վերջիններս էլ, առաջնորդվելով քաղաքականության «քաղաքացիական» կողմնորոշիչով, կամ «քաղաքականություն ոչ թե պետության ներսում, այլ ժողովրդի ներսում» (Yossi, Shain 7) սկզբունքով (հայրենի պետության հետ հարաբերություններում) փորձում են պահպանել իրենց ուրույն անկախ դերակատարությունը: Իրենց հերթին ընդունող պետությունները ևս փորձում են քաղաքականապես ազդել էթնիկ լոբբիստական կազմակերպությունների վրա՝ այդպիսով սփյուռքյան էլիտաներին կանգնեցնելով ինքնության երկվության մարտահրավերի առաջ: Ինչպես իրավացիորեն նկատել է Յ. Շեյնը. «Ազգային պետության գաղափարը, անգամ հաջողությամբ իրացվելիս, ի վիճակի չէ դիմացկուն կայունություն ապահովել ինչպես միջազգային, այնպես էլ ներազգային մակարդակում: Ազգային պետությունների աշխարհակարգը կարծես թե ի վիճակի չէ կանխելու քաղաքացիություն չունեցող փոքրամասնությունների կամ անընդհատ առաջացող էթնիկ շրջանակների շարունակական ընդվզումը: Այս էթնիկ պատկանելությունը հավերժ պահանջում է նոր միջոցներ՝ արտահայտելու իրենց ազգային ձգտումը, որպես անկախ քաղաքական սուբյեկտներ՝ ազգային պետությունների առկայությունից անկախ (Yossi, Shain 28)»:

Էթնիկ լոբբինգի ինստիտուտը իր բազմաշերտ ու բազմավեկտոր ազդեցությամբ հայրենի և ընդունող պետությունների համար և՛ հնարավորություն է, և՛

մարտահրավեր: **Այսպիսով՝ կարող ենք փաստարկել, որ էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, առնչվում է սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերներին:** Նմանօրինակ մոտեցումը հիմնավորենք Ս. Հանթինգթոնի այն պնդմամբ, որ «երկքաղաքացիությունը լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի հավատարմությունը»: Հանթինգթոնը նաև նկատում է, որ «Ժողովրդավարության կենսունակությունը կախված է նրանից, թե որքանով են նրա քաղաքացիները հետաքրքրված քաղաքացիական միավորումներով, հասարակական կյանքով և քաղաքականությամբ» (Huntington, Samuel 212):

Ելակետ ընդունելով հանթինգթոնյան մոտեցումը՝ տեղին է նշել, Պ. Հեգելի ու Փ. Պերեցի այն նկատառումը, որ անդրազգային քաղաքական դերակատարների ազդեցության մեծացումը պայմանավորված է հենց քաղաքացիական հասարակության տարաբնույթ ինստիտուտների՝ ոչ կառավարական կազմակերպությունների (NGO), ինչպես նաև այսպես կոչված կառավարական հասարակական կազմակերպությունների (Governmentally Organaized NGOs-GONGO), կառավարական ուղղորդմամբ և նախաձեռնությամբ ձևավորված հասարակական կազմակերպությունների (Governmentally Regulated and Initiated NGOs-GRINGO) և մանիպուլացված հասարակական կազմակերպությունների (MANNGOs) գործունեությամբ (HäGel, Peter, Pauline Peretz 467-493): Դրանով է պայմանավորված այն, որ հիմնականում հենց քաղաքացիական կազմակերպություններն են հանդիսանում էթնիկ լոբբիստական կառույցների համար կազմակերպաիրավական գործունեության հիմնական ձև: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ոչ համայնքային կազմակերպության նույնականացումը որպես լոբբիստական որոշակի դժվարություններ է ենթադրում ընդունող պետության հետ հարաբերություններում՝ բացառությամբ սահմանափակ թվով երկրների, որտեղ լոբբինգը քաղաքական մշակույթի անբաժան մաս է: Տարբեր երկրների ներքին օրենսդրահիրավական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լոբբիստական խմբերի գործունեության համար: Հետևապես կարևոր հանգամանք է սփյուռքի համայնքային կազմակերպությունների՝ ընդունող երկրներում հիմնադրված լինելու փաստը՝ որպես այդ երկրի քաղաքացիների կողմից հիմնադրված քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (grassroots organization): Այս դեպքում էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունները չեն ընկալվում որպես ընդունող պետության տարածքում բացառապես հայրենի պետության շահերը սպասարկող, կամ վերջինիս կողմից հիմնադրված միավորներ և օգտվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օրենսդրահիրավական երաշխիքներից:

Դեռևս Վեսթֆալյան համակարգով պետությանը տրված է ազգային շահը ձևավորելու, մշակելու և իրականացնելու արտոնություն, ինչպես նաև վերապահված է ներկայացնելու միայն իր սահմաններում ապրող մարդկանց շահերը: Հաճախ պետություններն իրենց սփյուռքերին դիտում են որպես ներքին քաղաքականության մաս: Ընդունելով այս մոտեցումը՝ ավելացնենք, որ սփյուռքը, որպես այդպիսին, նաև հանրային քաղաքականության կազմակերպման և արդյունքի գրանցման գործոն է: Նմանօրինակ մոտեցմամբ սփյուռքյան համայնքները հայրենի պետությունների վրա ազդելու կամ վերջիններիս կողմից ազդվելու առավել մեծ հավանականություն են ձեռք բերում: Փոխադարձ ազդեցության այս համամասնությունը կախված է հայրենի պետության և սփյուռքյան կազմակերպական միավորումների ֆինանսատնտեսական ու հասարակական-քաղաքական հնարավորություններից:

Ամեն դեպքում սփյուռքի կողմից հայրենիքի շահերի պաշտպանությունը ներառում է հանրային քաղաքականության գործիքակազմը: Սփյուռքյան լոբբիստական կառույցները ներկայացնում են հայրենի շահի իրենց «տարբերակը», որը կարող է տարբերվել պետության դիրքորոշումից՝ առաջացնելով փոխադարձ

ազդեցություններ: Փոխադարձ ազդեցության աստիճանը կախված է նաև հայրենիք-սփյուռք հարաբերությունների որակից, երկուստեք քաղաքական վերնախավերի, սփյուռքյան կազմակերպությունների և կուսակցությունների՝ հայրենիքում հաստատված լինելու չափից, պետական քաղաքականության մեջ սփյուռքի ներգրավվածության աստիճանից, պետության անվտանգային համակարգում սփյուռքյան կառույցների դերից, հայրենիք-ընդունող պետություն միջպետական հարաբերությունների որակից և այլն:

Ստորև դիտարկենք սփյուռքյան կազմակերպությունների դերակատարությունը: Հայկական, հրեական և այլ սփյուռքերի քաղաքական գործունեությունը թույլ է տալիս ենթադրել, որ երբ գոյություն ունեն ակտիվ սփյուռքեր, դրանք չեն կարող պարզապես դիտարկվել որպես «տնային ընտրողներ» իրենց ընդունող պետության տարածքում: Նրանք հակամարտությունների կարգավորման գործընթացում պետք է ճանաչվեն որպես անկախ դերակատարներ: Այդ սփյուռքները կարծես իրենց հայրենիքի ղեկավարների համար խաղաղ բանակցությունները վերածել են երեք մակարդակ ունեցող գործընթացի, որոնցից մեկը հենց իրենք են: Ընդունող պետությունները և երրորդ կողմերը գիտակցում են սփյուռքի՝ որպես քաղաքական դերակատարների անկախ բնույթը հայրենի հակամարտություններում և փորձում են համապատասխանաբար ազդել դրանց վրա:

Սույն աշխատանքի առջև դրված խնդիրների լուծման համար առաջարկում ենք էթնիկ լոբբինգ-հայրենի պետություն-ընդունող պետություն փոխազդեցության շղթայի յուրաքանչյուր օղակին անդրադառնալ առանձնաբար:

Էթնիկ լոբբինգի բնույթը և ազդեցությունն ընդունող պետության վրա

Էթնիկ լոբբինգը լոբբինգի ինստիտուտի կառուցվածքային մաս է: Երևույթի վերաբերյալ քաղաքական գիտության մեջ առկա են տասնյակ սահմանումներ՝ ինչպես լոբբինգի ընդհանուր ինստիտուտի, այնպես էլ դրա տարատեսակ էթնիկ լոբբինգի վերաբերյալ (Lyon, Thomas P., John W. Maxwell): Լոբբինգի վերաբերյալ գիտական առաջնային ուսումնասիրություններ են կատարել Կ. Բեյմեն, Լ. Միլբրաֆը, ավելի ուշ շարունակեցին Վ. Շենդելենը, Պ. Կոպլը և ուրիշներ: Ըստ Կ. Բեյմեի՝ լոբբինգ նշանակում է «քաղաքական և բյուրոկրատական հնարավորություններում սոցիալական խմբերի, պալատական շրջանակների և ընկերությունների բազմազան բուռն գործունեություն» (Charrad, Kristina 2-3) : Լ. Միլբրաֆը դեռևս 1960 թ. սահմանեց. «Հաղորդակցությունը միակ միջոցն է՝ ազդելու կամ փոխելու ընկալումը: Լոբբինգը, հետևաբար, ամբողջությամբ հաղորդակցական գործընթաց է» (Milbrath, Lester 32-53): Ըստ Վ. Շենդելենի՝ «Լոբբինգը նվազագույնը հանրային իշխանությունների հետ տեղեկատվության ոչ պաշտոնական փոխանակումն է՝ մի կողմից, մյուս կողմից՝ առավելագույնը՝ ոչ պաշտոնական փորձ՝ ազդելու պետական իշխանությունների վրա» (Charrad, Kristina 2-3):

Ավելի ուշ Պ. Կոպլն առաջարկեց նախորդների համեմատ առավել համընդգրկուն սահմանում. «Լոբբինգը շահագրգիռ ներկայացուցիչների միջոցով պետական մարմինների օրենսդրական-վարչական որոշումների փորձն է կամ հաջող ազդեցությունը»: Ազդեցությունը նախատեսում ու ենթադրում է կապի նպատակային օգտագործում օրենսդիր կամ գործադիր մարմինների հետ հարաբերություններում (Koeppl, Peter 69-80):

Ինչ վերաբերում է Էթնիկ լոբբինգին, ապա այն ըստ էության արտահայտվում է ընդունող պետության պետական և տարածքային իշխանության թևերի և հասարակության հետ կատարվող նպատակադրված աշխատանքով, ինչը ենթադրում է հայրենի պետության, ժողովրդի կամ համայնքի համար նպաստավոր որոշումների ընդունում: Հատկանշական է արդի միջազգային հարաբերություններում սփյուռքերի

ազդեցության վերաբերյալ Ս. Հանթինգթոնի այն նկատառումը, որ «հայրենի կառավարությունների հետ սփյուռքերի մոտ հարաբերությունները և համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային երևույթներից մեկն է» (Huntington, Samuel 277): Ի շահ հայրենի ժողովրդի՝ սփյուռքի քաղաքական գործունեության համար հաճախ նույնիսկ նշանակություն չի ունենում հայրենիքի՝ անկախ պետականություն ունենալ-չունենալու հանգամանքը: Ավելին՝ սփյուռքյան քաղաքական էլիտան կարող է գոյություն ունենալ բնիկ ժողովրդի տեղահանություններից հետո և նույնիսկ դառնալ անկախության վերականգնման միջազգային պայքարի շարժիչ ուժ և հայրենի քաղաքական գործընթացներում կենտրոնական դեր զբաղեցնել արդեն անկախությունից հետո (Tololyan, Khachig): Այս ֆենոմենը բացատրելի է սփյուռքյան ղեկավարության՝ հայրենի երկրի քաղաքական վերնախավից տարբեր դիրքորոշումների առկայությամբ և հայրենի շահի տարընկալմամբ, ինչով էլ արտահայտվում է քաղաքական գործընթացում էթնիկ լոբբիստական կառույցների անկախությունը կամ անկախության ձգտումը:

Անկախության ձգտումը էթնիկ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մարտահրավերներից է, քանի որ վերջիններս, բացի հայրենի պետությունների կողմից, ճնշումների են ենթարկվում նաև ընդունող պետությունների կողմից: Երկու բևեռներն էլ ըստ էության փորձում են լոբբիստական խմբերին պահել սեփական արտաքին քաղաքական ուղեծրում: Հետևապես դիվերսիֆիկացված և անկախ քաղաքական գործունեության ձգտումը կենսական անհրաժեշտություն է ստանում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների գործունեության պահպանման և իմաստավորման համար: Ասվածը, սակայն, կասկածի տակ չի դնում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների համագործակցությունը ինչպես ընդունող, այնպես էլ հայրենի պետությունների հետ, ինչին էլ վերաբերում էր Հանթինգթոնի՝ վերը հիշատակված պնդումը: Միգրացիոն հոսքերից բացի, միջազգային հարաբերություններում սփյուռքերի դերի բարձրացման պատճառ է նաև տնտեսական գլոբալիզացիան, գլոբալ հաղորդակցությունների և փոխադրումների զարգացումը: Սրանք հնարավորություն են տալիս սփյուռքերին տնտեսապես, սոցիալականորեն և քաղաքականապես սերտ կապի մեջ մնալ իրենց հայրենի կառավարությունների ու հասարակությունների հետ:

Էթնիկ լոբբիստական կառույցներ ձևավորած սփյուռքերն առաջին հերթին ազդում են հենց ընդունող երկրի արտաքին, երբեմն նաև ներքին քաղաքական գործընթացների վրա, հիմնականում ժողովրդավարական հասարակություններում: Այս երևույթը լավագույնս դրսևորվում է Միացյալ Նահանգներում, որտեղ լոբինգը քաղաքական մշակույթի ուրույն մաս է, և ինչպես պնդում են մի շարք հայտնի հեղինակներ, օրինակ՝ Սամուել Հանթինգթոնը, տարբեր էթնիկ լոբբիները բերել են ամերիկյան արտաքին քաղաքականության ուժի մասնատմանը: Հանթինգթոնը նույնպես բացասաբար է դիտարկում սփյուռքի ազդեցությունը ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա՝ նշելով դեպքեր, երբ սփյուռքները, որոնք աջակցում են իրենց հայրենի կառավարություններին, Միացյալ Նահանգների դեմ, դառնում են հետախուզական աղբյուրներ և ամերիկյան ընտրական գործընթացում կոռուպցիոն ազդեցություն են գործում: Ինչպես առևտրային շահերի դեպքում, ամերիկյան ազգային շահերն ավելի ու ավելի են քայքայվում ԱՄՆ արտաքին քաղաքականության հետևանքով, որը առաջնորդվում է էթնիկ լոբբիստական խմբերի շահերով (Huntington, Samuel 278-288):

Ընդունող պետության համար իրական մարտահրավեր է հայրենի պետության կողմից սփյուռքյան համայնքերի հնարավորությունների օգտագործումը արտաքին հետախուզության շրջանակներում: «Լրտեսությունը,- նկատել է սենատոր Դենիել Պատրիկ Մոյնիհանը,- գրեթե միշտ կապված է սփյուռքի քաղաքականության հետ», և ինչպես 1996 թվականին Պաշտպանության նախարարությունը հայտնել է Կոնգրեսին,

«շատ օտարերկրյա հետախուզական գործակալություններ փորձում են շահագործել ամերիկացիների էթնիկ կամ կրոնական կապերը»: Թոնի Սմիթը պնդում է, որ ամերիկյան սփյուռքների «կազմակերպված ղեկավարությունը» գտնվում է «օտարերկրյա կառավարությունների ուժեղ ազդեցության տակ՝ ընդունելու այնպիսի դիրքորոշումներ, որոնք կարող են հակասել տարածաշրջանում ամերիկյան քաղաքականությանը կամ շահերին: Սփյուռքները կարող են ազդեցություն ունենալ Կոնգրեսում, քանի որ նրանք կարող են ազդել Կոնգրեսի ընտրությունների վրա՝ փող և կամավորներ տրամադրելով իրենց ընկերներին և եռանդուն քարոզչություն իրականացնելով նրանց դեմ, ովքեր դեմ են իրենց քաղաքականությանը (Huntington, Samuel 278):

Այն տեսակետը, թե էթնիկ լոբբին և անդրազգային կապերը սպառնում են պետությունների ներդաշնակությանը, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը, վիճարկելի է, քանի որ էթնիկ լոբբիները համարվում են արևմտյան բազմակարծության մաս կամ որպես հակակշիռ՝ ավանդական քաղաքական էլիտաներին:

Ընդունող երկիր-էթնիկ փոքրամասնություն հարաբերություններում առկա խնդիրները կարող են դուրս գալ զուտ պետական համակարգի հետ հարաբերությունների ոլորտից և առնչվել ընդունող հասարակություններին: Ինչպես նշում է Շեյնը. «Իրենց ընդունող պետության լիբերալ «էթոսը» համադրելով համայնքի էթնոֆոկալ ընկալման հետ՝ էթնիկ խմբերը կարող են մարտահրավեր առաջացնել իրենց հյուրընկալող երկրների էթնոֆոկալ ինքնության համար: Այս երևույթի վերջին օրինակները ինքնության և քաղաքացիության վերաբերյալ վեճերն են Գերմանիայում և Ֆրանսիայում» (Yossi, Shain 20):

Առհասարակ կարելի է եզրահանգել, որ սփյուռքի կողմից էթնիկ լոբբիստական կազմակերպությունների ստեղծումը նպատակ է հետապնդում հայրենի պետության/ժողովրդի կյանքում մեծացնել սփյուռքի դերակատարությունը և այդպիսով նպաստել համազգային խնդիրների լուծմանը:

Էթնիկ լոբբինգի ազդեցությունն ու նշանակությունը հայրենի պետության վրա

Ընդհանուր առմամբ հայրենիք-սփյուռք հարաբերությունները զարգանում են հիմնական երեք ուղղություններով: Կառավարություններն ավելի ու ավելի են դիտարկում իրենց սփյուռքը ոչ թե զուտ որպես պատմազգային արտացոլում, այլ որպես օժանդակության կարևոր հնարավորություն: Երկրորդ՝ սփյուռքներն ապահովում են շարունակական տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական ներդրումներ իրենց հայրենիքներում: Երրորդ՝ սփյուռքները և հայրենիքի կառավարությունները գնալով ավելի են համագործակցում հայրենի երկրի և կառավարության շահերը հյուրընկալ երկրներում առաջ մղելու համար:

Յ. Շեյնը նույնպես առանձնացնում է ազդեցության երեք մակարդակներ՝ նկատելով, որ հայրենիքի արտաքին քաղաքականության վրա սփյուռքի ազդեցության չափը որոշվում է հայրենիքի և սփյուռքի միջև ուժի հավասարակշռությունը կազմող երեք բաղադրիչներով՝ հայրենի երկրի ներքին քաղաքականության կազմաձևում, ազդեցություն հայրենի պետության արտաքին քաղաքական վարքի վրա, ազգային հավաքականության ներառականության ձևավորում (Yossi, Shain 6-7, 53) :

Լինելով հայրենի, հատկապես նորանկախ պետությունների արտասահմանյան հիմնական դոնորը՝ սփյուռքյան կառույցները հայրենի պետություններից առավել մասնակցայնություն են պահանջում: Իր հարցազրույցներից մեկի ժամանակ հայկական սփյուռքի հետազոտող, ականավոր սփյուռքագետ Խ. Թոլոյանը կարծիք է

հայտնել, որ «Նրանք (Հայաստանի իշխանությունները-ԳՂ) սփյուռքահայերից ծառայություն և փող են ուզում, ոչ թե մտքեր կամ կարծիքներ» (Yossi, Shain 104) :

Հայրենի պետության վրա սփյուռքի ազդեցության ոլորտներից մեկն էլ սփյուռքյան էլիտայի ուղղակի ներգրավումն է հայրենի պետությունում որոշումների կայացման գործընթացում: Այս ֆենոմենը մասնավորապես դրսևորվեց հետխորհրդային երկրներում: Արևելյան Եվրոպայում, Լիտվայում, Լատվիայում, Չեխիայում և Լեհաստանում նախագահների տեսքով, Հարավսլավիայում՝ վարչապետի, Հայաստանում՝ արտաքին գործերի առաջին նախարարի միջոցով սփյուռքյան կառույցներն ազդեցություն էին պահպանում իրենց հայրենի պետությունների վրա: Հատկանշական է Զիգնեբ Բժեժինսկու այն միտքը, թե «Լեհաստանի նախագահությունը ստանձնելու առաջարկն իրեն ստիպեց քննել իր անձնական ինքնությունը և եզրակացնել, որ թեև ինքը պատմականորեն և մշակութայնապես լեհ է, բայց քաղաքականապես ամերիկացի է» (Huntington, Samuel 284) :

Էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական ինստիտուտ, հայրենի պետության վրա ազդում է վերջինիս համար միջազգային լոբբինգի իրականացման, հակամարտությունների կարգավորման գործընթացում ներգրավվածության, հայրենիք ուղղվող ֆինանսական միջոցների, հայրենի պետությունների ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կայացման, պետության արդիականացման[1] և այլ ճանապարհներով, որոնց առանձնաբար կանդրադառնանք ստորև:

Էթնիկ լոբբինգ

Էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, շարունակում է մնալ հայրենի պետություններին սփյուռքյան քաղաքատնտեսական օժանդակության գլխավոր ուղին, ինչը միաժամանակ ազդեցության կարևոր գործիք է այլ պետությունների կառավարությունների հետ հարաբերություններում:

Սփյուռքյան կառույցները կարող են վերաճել էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների հիմնականում ազատական բնույթ ունեցող ժողովրդավարական երկրներում, որտեղ խրախուսվում է բազմամշակութայնությունը և կարևորվում քաղաքացիության ինստիտուտը՝ անկախ ազգությունից: Որպես կանոն, էթնիկ լոբբիստական խմբերն էլ ներքին բազմամշակութայնությունը արտաքին քաղաքականության մեջ պրոյեկտելու ջատագովներ են (Smith, Tony): Նրանք ունակ են ժողովրդավարացնելու ավտորիտար հայրենիքների վարչակարգերը (Weiner, Myron) և համաշխարհային տնտեսության մեջ հայրենի տնտեսություններին աջակցող ֆինանսական ուժ են (Naim, Moises): Վերջապես, էթնիկ լոբբիստական կառույցների տիրապետող սփյուռքերն ավելի ընդունակ են խթանել անդրազգային կապերը, կամուրջ հանդիսանալ կամ միջնորդ լինել հայրենի և ընդունող պետությունների միջպետական հարաբերություններում: Իբրև քաղաքական դերակատարներ՝ նրանք ունակ են նույնիսկ միմյանց կապել հայրենի պետության միջազգային և ներքին քաղաքականության ոլորտները:

Դեռևս 2000թ. Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտության արդյունքներով եզրակացվել է, որ հակամարտությանը հաջորդող 5 տարի անց դրա վերսկսման ռիսկը վեց անգամ ավելի մեծ է այն հասարակություններում, որոնք Ամերիկայում ունեն խոշոր սփյուռքեր, քան այն հասարակություններում, որոնք չունեն

[1] Քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացում էթնիկ լոբբինգի դերակատարության մասին առավել մանրամասն տե՛ս **Մարգարյան Մ., Ղուկասյան Գ.,** «Էթնիկ լոբբինգի ինստիտուտը, որպես ՀՀ քաղաքական զարգացման և արդիականացման դերակատար», ՎԵՄ 3 (75), Երևան 2021, էջ 241-262:

ամերիկյան սփյուռքեր (Yossi, Shain 127) : Սա միջազգային հարաբերություններում էթնիկ լոբբիստական խմբերի ազդեցության վերաբերյալ շատ կարևոր ցուցիչ է, ինչի տարբեր դրևսորումներին կանդրադառնանք ստորև՝ խուսափելով լոբբինգի ինստիտուտին և դրա առանձին ենթատեսակ հանդիսացող էթնիկ լոբբինգի վերաբերյալ կառուցվածքային և գործառնական դատողություններից՝ առավել կենտրոնանալով միջազգային հարաբերություններում նրանց ազդեցության և դրա հիմնական ուղղությունների վրա:

Հայրենիք-սփյուռք քաղաքական հարաբերություններում Շեյնն առաջարկում է դիտարկել չորս չափորոշիչներ, որոնց հանրագումարը, ըստ հետազոտողի, պայմանավորում է այդ հարաբերությունների բնույթը. 1. հայրենի պետության/հասարակության թափանցելիություն, 2. հայրենիքի կողմից սփյուռքի ընկալում և հակառակը, 3. սփյուռքի և հայրենի պետության միջև ուժերի հավասարակշռություն, 4. հայրենի պետության արտաքին քաղաքականության շուրջ սփյուռքյան համախմբվածություն (Yossi, Shain 130): Ինչ վերաբերում է հայրենի պետության արտաքին քաղաքական կյանքում սփյուռքյան ներգրավվածությանը՝ Շեյնն առանձնացնում է միջազգային հարաբերություններում սփյուռքյան ակտիվության երեք տիպեր/մակարդակներ: Հաշվի առնելով գիտական գրականության մեջ սփյուռքերի քաղաքական ազդեցության ուսումնասիրությունների խիստ սակավությունը՝ Շեյնի առաջարկած տիպաբանությանն անդրադառնանք ստորև:

Առաջին մակարդակում հեղինակն անդրադառնում է «պասիվ դերակատար» սփյուռքերին: Դրանք այն սփյուռքերն են, որոնք միջազգային հարաբերություններում ներգրավվում են իրենց կամքից անկախ և ոչ որպես հետևանք իրենց գործունեության: Սփյուռքյան միջազգային դերակատարության այս տիպի համար առկա են չորս պատճառներ. 1. սփյուռքերն արտաքին (հայրենի պետության) օժանդակության կարիք ունեն իրենց ընդունող երկրներին դիմակայելու համար, 2. հայրենի պետությունները կարող են ձգտել ներկայացնել պետությունից դուրս բնակվող իրենց հայրենակիցներին՝ երբեմն նույնիսկ անկախ վերջիններիս նման հակվածությունից: Միևնույն ժամանակ այս մոտեցումը հայրենի պետությունների կողմից կարող է նպատակ հետապնդել հյուրընկալ պետությունների վրա քաղաքական լծակներ ձեռք բերելու համար, 3. սփյուռքերը չեն կարողանում վերահսկել իրենց կարգավիճակը՝ որպես հյուրընկալ երկրի լիարժեք մաս և այդպիսով ներգրավվում են հայրենիքի միջազգային գործերում, 4. սփյուռքերի մշակութային-քաղաքական և խորհրդանշական ընկալումն է, ինչի լավագույն դրսևորումը Գերմանիայում հրեական սփյուռքի դերակատարությունն է գերմանահրեական հարաբերություններում:

Միջազգային հարաբերություններում սփյուռքերի դրսևորման՝ Շեյնի առաջարկած երկրորդ տիպը վերաբերում է սփյուռքերի ակտիվ ազդեցությանն ընդունող պետությունների արտաքին քաղաքականության վրա, ինչին արդեն անդրադարձել ենք սույն աշխատանքի համապատասխան հատվածում:

Երրորդ տիպը սփյուռքերի ազդեցությունն է հայրենի պետության արտաքին քաղաքականության վրա, երբ սփյուռքերն իրենց քաղաքական ու տնտեսական կապիտալով, ինչպես նաև ազգային ինքնության յուրովի ընկալմամբ էական ազդեցություն են ունենում հայրենի պետությունների արտաքին քաղաքականության վրա (Yossi, Shain 131-133) :

Ակադեմիական քննարկման մեկ այլ խնդիր է նախադրյալների ու դրդապատճառների այն համախումբը, ինչը հնարավորություն է ստեղծում և մղում սփյուռքերին իրականացնելու էթնիկ լոբբիստական գործողություններ: **Նման գործողությունների համար հիմնական նախադրյալը հյուրընկալ պետության ժողովրդավարական բնույթն է, իսկ դրդապատճառները հիմնված են լինում**

ազգային ինքնության, դրա ընկալման, մեկնաբանման և ըստ այդմ հայրենիքին օժանդակության վրա:

Հայրենի պետության արտաքին քաղաքականության ազդեցությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ դրանից դուրս ապրող հայրենակից-ժողովրդի վրա, արտաքին քաղաքականության առանցքային ազդեցությունը հայրենիքի ապագայի վրա, միջպետական հարաբերությունների համատեքստում սփյուռքյան առանձին համայնքների վրա հայրենի պետության արտաքին քաղաքականության ուղղակի ազդեցությունը, ինչպես նաև սփյուռքյան կազմակերպությունների նեղ-կազմակերպական շահերի վրա հայրենի պետության արտաքին քաղաքականության ազդեցությունը մասնավոր դրդապատճառներ են սփյուռքյան համայնքների կողմից էթնիկ լոբբիստական կառույցների ձևավորման և միջազգային հարաբերություններում ուրույն դերակատարության համար:

Հակամարտությունների կարգավորման գործընթաց

Հայրենի պետությունների՝ միջէթնիկ հակամարտությունների մեջ ներառված լինելու հանգամանքն էական ազդեցություն ունի հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն հարաբերությունների վրա: Թեև սփյուռքերի քաղաքական դերակատարության վերաբերյալ մեծածավալ աշխատանքների առկայությանը, միջէթնիկ հակամարտություններում սփյուռքերի ընդգրկվածության վերաբերյալ մասնավոր աշխատանքները սակավաթիվ են: Այս խնդրում կարևոր է ուշադրություն դարձնել այն ֆենոմենին, որ անդրադառնալով հայրենի պետության միջէթնիկ հակամարտությանը՝ սփյուռքերը որպես կանոն ձևավորում և առաջ են տանում սեփական քաղաքական տեսլականն ու օրակարգը, որը նաև բխում է սփյուռքյան համայնքների ինքնության պահպանության շահերից և օգնում է համայնքի համախմբվածության բարձրացմանը:

Հակամարտությունների կարգավորման վերաբերյալ հայրենի պետության և էթնիկ լոբբիստական խմբերի դիրքորոշումների տարբերությունը կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ միջազգային հարաբերությունների կարգավորումներով պետությունները կաշկանդված են ազգային շահի լավագույնս արտահայտման տեսանկյունից, մինչդեռ էթնիկ լոբբիստական խմբերը կաշկանդված չեն աշխարհակարգի պարտադրած սահմանափակումներով: Մասնավորապես, հաճախակի են դեպքերը, երբ հայրենի պետության և սփյուռքյան համայքների միջև վեճեր են առաջանում ոչ միայն ազգային ինքնության սահմանման, այլ նաև հայրենիքի տարածքային սահմանների տեսլականի շուրջ, որոնք որոշակի ազդեցություն են ունենում միջպետական հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա՝ որպես կանոն երկարացնելով այդ ընթացքը: Համեմատության մեջ եթե դիտենք, սփյուռքերը սովորաբար ավելի մաքսիմալիստական են լինում, քան հայրենի պետության քաղաքական վերնախավը:

Հատկապես հրեական և հայկական սփյուռքերի օրինակով ակնհայտ է, որ համապատասխանաբար իսրայելապաղեստինյան և ղարաբաղաադրբեջանական հակամարտությունների կարգավորման գործընթացում երկու սփյուռքերն էլ հանդես են գալիս որպես ինքնուրույն խաղացողներ, որոնց քաղաքական գործունեությունը զուգահեռ է ընթանում հայրենի պետությունների պետական քաղաքականությանը: Մասնավորապես 1992թ. օգոստոսի 12-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության աջակցության ակտի» 907-րդ ենթաբաժինը (հայտնի որպես 907-րդ բանաձև), որով արգելվում էր Ադրբեջանին ամերիկյան ուղղակի ֆինանսական աջակցությունը, Ղարաբաղյան առաջին պատերազմի արդյունքում Ամերիկայի հայկական սփյուռքում ձևավորված քաղաքական օրակարգ էր, որն իրացվեց Ամերիկայի հայ համայնքի և դրա լոբբիստական կառույցների գործունեությամբ, և որտեղ Հայաստանը որպես այդպիսին մասնակցություն չուներ:

Միջպետական հակամարտություններում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների քաղաքական վարքն ու դրա ազդեցությունը ցույց են տալիս, որ հակամարտությունների լուծումը հաճախ ոչ թե պարզապես երկու, այլ երեք մակարդակ ունեցող գործընթաց է, որտեղ սփյուռքը դառնում է հայրենիքի ղեկավարների, իրենց հայրենիքի հակառակորդների, իրենց հյուրընկալող պետությունների կառավարությունների խաղաղության գործընթացի դերակատար: Այս դեպքում ևս սփյուռքերը փորձում են հանդես գալ որպես ուրույն քաղաքական դերակատարներ՝ չնույնանալով հայրենի պետության հետ և ապահովելով դիվանագիտական մանևրողականություն:

Բանավեճն այն մասին, թե արդյոք սփյուռքյան շրջանակներն իրավունք ունեն հրապարակավ դեմ արտահայտվել հայրենի կառավարությունների պաշտոնական դիրքորոշմանը՝ կապված պատերազմի կամ արտաքին թշնամիների հետ խաղաղության գործարքի գնալու շուրջ, բավական վիճելի է: Բենեդիկտ Անդերսոնի դիտարկմամբ՝ չնայած սփյուռքերն իրենց հայրենի պետությունների համար «գայթակղիչ են համարում ինքնության քաղաքականություն վարելը», «քաղաքացիություն չունեցող այս մասնակցությունն անխուսափելիորեն պատասխանատվություն չի կրում իր կողմից իրականացվող հեռահար քաղաքականության համար» (Anderson, Benedict 3-13):

Թեև օրինաչափորեն առկա երկուստեք խնդիրներին, սփյուռքերը, որպես կանոն, հայրենի պետությունների համար շարունակում են մնալ միջազգային հարաբերություններում վստահելի գործընկերներ: Ընդ որում, այդ գործընկերության մեջ սփյուռքյան համայնքների պահանջը դրսևորվում է ազգային ինքնության ամրապնդման, հայրենի պետության գործերում սփյուռքյան մասնակցայնության մեծացման և այլնի տեսքով, ինչը հայրենի պետության համար առավել նպաստավոր է, քան տարաբնույթ այլ շահերի վրա հիմնված միջպետական համագործակցությունները: Հայրենիք-սփյուռք հարաբերությունները առավել են սերտանում, իսկ առկա խնդիրների վրայից ուշադրությունն առժամանակ վերացարկվում է, երբ հակամարտությունները սրվում են և հայրենիքների համար առաջանում է գոյութենական վտանգ: Այդ պարագաներում սփյուռքյան աջակցությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ հայրենիքի բարեկեցության և նրա գոյության համար, ապահովել ռեսուրսների և զենքի փրկարար օղակ, ծառայել որպես կամավորականների աղբյուր, հանդես գալ որպես քարոզչական հարթակ, լոբբինգով ազդել ընդունող կառավարությունների և միջազգային այլ խաղացողների վրա:

Լինելով շատ ավելի հարուստ, քան իրենց հարազատ երկրներում բնակվող բնակչությունն է, սփյուռքերն ավելի լավ են կարողանում ֆինանսավորել հակամարտություններում ներառված հայրենի պետությունների կարիքները: Ուշագրավ է Փոլ Քոյլերի այն դիտարկումը, որ միջազգային կայունության տեսանկյունից, «քաղաքացիական պատերազմները զսպելու համաշխարհային ջանքերը պետք է կենտրոնանան ոչ միայն սոսկ ապստամբության հիմնավորվածությունը նվազեցնելու վրա», այլ նաև «հարուստ պետությունների կառավարությունները պետք է օրինական սահմաններում պահեն սփյուռքյան կազմակերպությունների վարքագիծը» (Yossi, Shain 115):

Հայրենի պետության ներգրավվածությամբ հակամարտություններում սփյուռքի քաղաքական վարքը որոշվում է հայրենիքի ներսում և դրսում սփյուռքի հետաքրքրությունների և մտահոգությունների փոխկապակցվածությամբ: Հիմնական գործոնն իհարկե ինքնության պահպանման մտահոգությունն է, իսկ արտաքին վտանգը ինքնության պահպանման կարևոր խթան է հանդիսանում: Այլ մտահոգությունների շարքին կարելի է դասել, օրինակ, սփյուռքյան կազմակերպությունների քաղաքական հետաքրքրությունները հատկապես հայրենի կառավարությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև

հակամարտությունների ազդեցությունը սփյուռքյան ֆինանսական միջոցների գոյացման վրա:

Այսպիսով՝ միջպետական հակամարտությունների լուծման ժամանակ հայրենի պետությունները կարող են դիմել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազգակցական դերակատարներին, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել հակամարտության քաղաքական կարգավորմանը, և որոնք հետաքրքրություն ունեն հակամարտության և դրա արդյունքների նկատմամբ:

Ակնհայտ է, որ սփյուռքի դերը հակամարտությունների շարունակականության և հակամարտությունների լուծման գործում կարող է այնքան հզոր լինել, որ հայրենիքի ղեկավարները չկարողանան անտեսել նրանց: Ավելին՝ պետք է լրջորեն դիտարկել այն տեսակետը, որ սփյուռքը և դրա ղեկավարները պարզապես անփույթ ազգայնականներ չեն, նրանք կարող են առավել նպաստավոր դիտանկյունից տեսնել հակամարտության բազմաբնույթ ծալքերը հենց իրենց հեռավորության և միջազգային ներգրավվածության շնորհիվ:

Սփյուռքյան ֆինանսական հոսքեր

Հայրենիք ուղղվող սփյուռքյան ֆինանսական հոսքերը էական նշանակություն ունեն և՛ հայրենի, և՛ ընդունող երկրներում, ինչպես նաև ընդհանրապես միջազգային հարաբերություններում՝ տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային զարգացումների առումով: Գլոբալիզացիայի և հետարդյունաբերական տեխնոլոգիաների արդի աճի պայմաններում, այնուամենայնիվ, մարդիկ շարունակում են հուզականորեն և քաղաքականապես նվիրված մնալ իրենց հայրենակիցների համայնքային կյանքին ու կացությանը: Հայրենիքի հանդեպ սփյուռքի կապը շարունակում է մնալ միջազգային հարաբերությունների առանցքային գործոններից մեկը: Այն սովորաբար արտահայտվում է բացահայտ, հիմնականում ժամանակակից լիբերալ պետություններում, որտեղ հավատարմությունը և՛ ծագման, և՛ ընդունող երկրի նկատմամբ հաջողությամբ համատեղվում են: Ինչպես կտեսնենք սույն աշխատանքի վերջին բաժնում, աշխարհն ավելի հյուրընկալ է դարձել «բազմակի-հավատարմությունների հանդեպ»: Հայրենի երկրները, որոնք նախկինում սահմանափակում էին իրենց ազգականներին՝ ունենալ միայն մեկ քաղաքացիություն, այժմ երկքաղաքացիության հնարավորություն են տալիս: Դրանով հյուրընկալ երկրները նաև իրենց սփյուռքերին հնարավորություն են տվել լայնորեն պահպանել տնտեսական ու քաղաքական կապերը հայրենի երկրներում: Ավելին՝ «երբ միջազգային ֆինանսական շուկաների սահմանափակումների վերացումը զուգորդվում է նոր տեխնոլոգիաների զարգացմամբ, «փողը տուն ուղարկելն» ավելի հեշտ և ավելի էժան է, քան երբևէ» (Naim, Moises 95-97): Հետևաբար սփյուռքյան ֆինանսական հոսքերը հայրենի երկրների համար դառնում են տնտեսական կարևոր ներուժ:

Շեյնն առանձնացնում է սփյուռքյան համայնքներին առնչվող ֆինանսական փոխանցումների երեք մակարդակներ՝ 1. էթնիկ համայնքներից ֆինանսական փոխանցումներ դեպի հայրենիք, 2. փոխանցումներ հայրենիքից դեպի հյուրընկալ պետության էթնիկ համայնքներ, 3. ցանցային փոխանցումներ սփյուռքերի ներսում: Մեզ հետաքրքրող առաջին կետը հեղինակն անվանում է ներէթնիկ-միջպետական փոխանցումներ (Yossi, Shain 36):

Հայրենիք ուղարկվող սփյուռքյան ֆինանսական միջոցները խթանվում են նաև այն պատճառով, որ սփյուռքերը ձգտում են իրենց զգալ որպես հայրենիքի մի մաս և հայրենիքի հետ հարաբերություններում վանել երկվության զգացումը:

Նկատենք, որ հայրենի պետության վրա սփյուռքյան տնտեսական ազդեցությունը պետք է տարանջատել էթնիկ լոբբինգի ֆինանսական

ազդեցությունից, կամ վերջինս դիտել իբրև առաջինի ենթատեսակ: Ըստ այդմ առաջարկում ենք առանձնացնել էթնիկ լոբբինգի դերակատարության երկու մակարդակ՝ 1. այլ պետությունների և հայրենի երկրների հետ ֆինանսական կապերի ուժեղացում, օժանդակությունների, հատկացումների, գործարար շրջանակների ներգրավում, 2. սփյուռքյան համայնքներում էթնիկ լոբբինգ իրականացնող խմբերի ազդեցությունների օգտագործում՝ ուղղակի սփյուռքյան ներգրավումների համար, որոնք հիմնականում ունեն եռամաս կառուցվածք՝ սփյուռքին կապակցված ներդրողներ, սփյուռքին կապակցված կազմակերպությունների ներդրումներ, սփյուռքին կապակցված արտաքին ուղղակի ներդրումներ: Մասնավորապես, ԱՄՆ-ում ամենաակտիվ հայկական և հրեական էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության արդյունք է այն հանգամանքը, որ գոնե մինչև 2000-ականների սկիզբը, Հայաստանն ու Իսրայելը մեկ շնչի բաժնով ԱՄՆ ամենամեծ արտաքին օժանդակություն ստացող երկրներն էին: Նման ֆինանսական օժանդակությունները հնարավոր է լինում ստանալ նաև սփյուռքյան գործիչների՝ խոշոր կորպորացիաների որոշումների կայացման մարմիններում ներգրավված լինելու արդյունքում:

Հայրենիքի վրա սփյուռքյան ֆինանսաքաղաքական ազդեցության ամենաազդեցիկ ոլորտը հատուկ սփյուռքերի համար նախատեսված պետական պարտատոմսերի (diaspora bonds) թողարկումն է: Այս գործընթացի նախաձեռնությունը սակայն, որպես կանոն, գալիս է հենց հայրենի պետություններից, որոնք հրատապ կամ հատուկ ֆինանսական օժանդակություն ստանալու համար դիմում են իրենց սփյուռքերին:

Սփյուռքի պարտատոմսերի ֆենոմենը հարուստ պատմություն ունի: Դրանք գալիս են 1930-ական թթ.-ից՝ Ճապոնիայի և Չինաստանի կողմից արտասահմանում առաջարկվող պարտատոմսերից, ապա շարունակվում են Իսրայելի կողմից 1951թ. առաջարկվող պարտատոմսերով և դարավերջին հասնում են հնդկական պարտատոմսերին: Սփյուռքյան պարտատոմսեր են թողարկել նաև Բանգլադեշը, Ֆիլիպինները, Մեքսիկան, ինչպես նաև Աֆրիկայի, Կենտրոնական և Հարավամերիկյան Ասիայի, Եվրոպայի շատ այլ երկրներ: Քանի որ սփյուռքի պարտատոմսերը բարձրացնում են օրենքի ընտրության, իրավասության, երկակի հավատարմության և քաղաքացիության հարցեր, դրանք բյուրեղացնում են սփյուռքերի կողմից բարձրացված որոշ իրավական խնդիրներ: Ա. Չենդերը նույնիսկ առաջարկում է սփյուռքյան պարտատոմսերի ակադեմիական ուսումնասիրությունը առհասարակ օգտագործել որպես սփյուռքյան մոդելների հետազոտությունների համար: Հեղինակը, ընդգծելով խնդրի իրավական վերլուծության կարևորությունը, սփյուռքի պարտատոմսերը ներկայացնում է որպես կարևոր մեխանիզմ, որով ֆինանսական խնդիրներ ունեցող ժողովուրդները կարող են օգտվել իրենց համեմատաբար հարուստ սփյուռքների հնարավորություններից (Chander, Anupam 1013-1014):

Այդպես, 1998թ. Հնդկաստանի կառավարության կողմից թվով 5 միջուկային զենքերի փորձարկմանը հետևեց այդ երկրի նկատմամբ ԱՄՆ գլխավորած միջազգային պատժամիջոցների արշավը, ինչի արդյունքում հնդկական տնտեսության վիճակը էականորեն վատթարացավ: Ստեղծված իրավիճակի հաղթահարման համար հնդկական կառավարությունը թողարկեց «վերածնվող Հնդկաստան» անվանումը կրող պետական պարտատոմսեր, որոնք հատուկ նախատեսված էին Եվրոպայի և Միացյալ նահանգների հնդկական սփյուռքերի համար: Արդյունքում հավաքվեց ավելի քան 4 մլրդ դոլար, ինչը մեղմացուցիչ նշանակություն ունեցավ տնտեսական ճգնաժամի համար (Chander, Anupam 1013-1014):

Լիովին հաջողված էր նաև Իսրայելական Պետության՝ 1950-ական թթ. պարտատոմսային քաղաքականությունը՝ վարչապետ Դավիթ բեն Գուրիոնի առաջնորդությամբ: Իսրայելի անկախությունն ու ինքնիշխանությունը բարձրացնելու համար 1950թ. սեպտեմբերի 3-ին վարչապետը ամերիկահրեական առաջնորդներին և

իսրայելցի ղեկավարներին ներկայացրեց կառավարության պարտատոմսային քաղաքականությունը, որը Կնեսեթի կողմից օրենսդրական ուժ ստանալուց հետո,մեկնարկեց 1951թ. մայիսին: Վաճառքի արդյունքը 52 մլն դոլար էր: Մինչև 1967թ. Ամերիկայի կողմից գնվել էր 850 միլիոն դոլարի պարտատոմս, իսկ Ամերիկայի հրեական համայնքը «Միացյալ հրեական կոչ» կազմակերպության միջոցով գնել էր 1 մլրդ դոլարի պարտատոմս (Yossi, Shain 56):

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հայրենիք ուղղվող սփյուռքյան ֆինանսական միջոցները էական ազդեցություն կարող են ունենալ ազգային ինքնության զարգացման և հայրենի պետության անկախության ու ինքնիշխանության բարձրացման և միջազգային հարաբերությունների խթանման առումով: Այս դեպքում սփյուռքյան ֆինանսական հոսքերը նաև հանդիսանում են միջազգային հարաբերությունների որոշակի գործոն:

Սփյուռքյան ֆինանսական հոսքերը իրենց բնույթով գլոբալիստական ֆենոմեն են, սակայն հաճախ հակառակ ազդեցություն են ունենում հայրենի պետությունների վրա՝ խթանելով ազգային ինքնության զարթոնք՝ դրանով իսկ փաստելով սփյուռքի կայուն դերն ու ազդեցությունը ազգային պետության պետական կառավարման համակարգում:

Ժողովրդավարացում, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին օժանդակություն

Հայրենի պետության վրա սփյուռքյան քաղաքական ազդեցության գործոններից մեկն էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հայրենի պետության հասարակության վրա ազդեցության փորձերն են՝ վերջինիս շրջանում սփյուռքյան տրամադրություններ և հույզեր գեներացնելու համար: Այս գործընթացը մեծամասամբ իրականացվում է սփյուռքյան ֆինանսական միջոցների և մարդկային ներուժի՝ դեպի հայրենիք ուղորդմամբ: Մանավանդ քաղաքական ներկա զարգացումներում, երբ քաղաքացիական հասարակության ինստիտուտները հաճախ մարտահրավեր են նետում պետական կոնտրոնաձիգ կառավարման համակարգին, քաղաքացիական հասարակության միջոցով սփյուռքյան ազդեցության ընդլայնման գործընթացը զարգացման միտում ունի: Առհասարակ պետք է նկատել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները էթնիկ լոբբիստական կազմակերպությունների կողմից կազմակերպահիրավական գործունեության հնարավորություններ են հանդիսանում և՛ ընդունող երկրում, և՛ հայրենի պետությունում: **Դրանով էթնիկ լոբբինգն իրեն լիարժեքորեն դրևսրում է որպես հանրային քաղաքականության անբաժան մաս:**

Սփյուռքյան համայնքների տարածումը արևմտյան ժողովրդավարական երկրներում նրանց դարձնում է ժողովրդավարացման պոտենցիալ գործակալներ: Եթե սփյուռքի համայնքներն արևմտյան հասարակություններում սոցիալիզացվեն ժողովրդավարական արժեքներով, ապա նրանցից կարելի է ակնկալել, որ կփորձեն նույն արժեքներն արտահանել իրենց հայրենի երկրներ, ժողովրդավարացնել դրանք: Այնուամենայնիվ, այդ գործընթացը բազմաբովանդակ է: Որոշ սփյուռքներ խիստ ազգայնական են, մյուսները համակրանք ունեն ոչ լիբերալ ռեժիմների նկատմամբ, ոմանք լիբերալ ժողովրդավարության վճռական կողմնակիցներ են, իսկ մյուսները լուռ աջակցում են ընտրական բազմակարծությանը, բայց ոչ լիբերալիզմին (Koinova, Maria 42):

Սփյուռքերը կարող են միջոցներ փոխանցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և դառնալ կարևոր գործոններ իրենց հայրենիքում ժողովրդավարական քաղաքական արշավներ վարելու համար:

Հայրենի պետության ազդեցությունը Էթնիկ լոբբինգի ինստիտուտի վրա

Հայրենի պետությունների ազդեցությունը ընդհանրապես սփյուռքերի վրա որպես այդպիսին ավելի մեծ է, քան սփյուռքի՝ էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների վրա, քանի որ վերջիններիս ունեն իրենց քաղաքական օրակարգն ու ռազմավարական նպատակները, որոնք կարող են տարբերվել հայրենի երկրի կառավարության քաղաքականությունից: Օրինակ՝ սփյուռքի վրա հայրենի պետության ազդեցության գործիք կարող է լինել սփյուռքյան կազմակերպություններին խրախուսումը՝ հայրենի երկրի հետ կապերը պահպանելու, դրամական փոխանցումներ ապահովելու կամ հյուրընկալ պետության քաղաքացիներ դառնալու առումով: Նման գործողությունները որքան էլ ազդեցություն ունենան սփյուռքյան համայնքի վրա, այնուամենայնիվ նույն արդյունքը չեն կարող ունենալ էթնիկ լոբբինգի վրա:

Որոշ դեպքերում, ինչպես Չինաստանի, Մեքսիկայի և Հնդկաստանի՝ հայրենիքի կառավարությունները խթանում են տնտեսության ազատական զարգացումը և ձգտում ավելի ներգրավվել համաշխարհային տնտեսության մեջ: Այս ամենը մեծացնում է իրենց սփյուռքի կարևորությունը և ստեղծում մերձեցում՝ սփյուռքների և հայրենիքների միջև ձևավորելով տնտեսական առարկայական շահ (Huntington, Samuel 277-278):

Էթնիկ լոբբինգի ինստիտուտի վրա ընդունող պետության ազդեցությունը որպես սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավեր

Էթնիկ համայնքների ազդեցությամբ, ի շահ վերջիններիս, հայրենի երկրների ընդունված որոշումները մղում են ընդունող պետություններին նույն խողովակով փորձել ազդեցություն ունենալ այլ պետությունների վրա: Մասնավորապես, ինչպես նկատեցինք սույն աշխատանքի համապատասխան բաժնում, արտաքին ուղղակի ֆինանսական աջակցության մասով, շնորհիվ հայկական ու հրեական համայնքների, Հայաստանն ու Իսրայելը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ծավալով ամերիկյան օժանդակության խոշորագույն շահառուներն են: Տրամաբանական է, որ նմանաբնույթ օժանդակությունների, առավել ևս քաղաքական օժանդակությունների պարագայում ընդունող պետությունը պետք է փորձի մեծացնել իր ազդեցությունը այլ պետությունների վրա, նաև համայնքային ղեկավարության ճանապարհով: Պատահական չէ նաև այն, որ միջազգային առաջնորդների ելույթներում պարբերաբար հիշատակվում է այս կամ այն համայնքի դերն ու ստեղծագործ պատմությունը ընդունող երկրում: Նման բնույթի ելույթները կամ հրապարակային տեքստերը շատ են վերաբերում Հայաստանին, Իսրայելին և այլ երկրների, որոնց սփյուռքները ընդունող պետություններում աչքի են ընկնում կայացվածության բարձր մակարդակով:

Գ. Շեֆերը սփյուռքներում առանձնացնում է մասնակցայնության հետևյալ խմբերը՝ առանցքային, մարգինալ և քնած (Sheffer, Gabriel 100), իր հերթին Յ. Շեյնն առանձնացնում է հիմնական անդամներ, պասիվ անդամներ և լուռ անդամներ (Yossi, Shain 130): Հստակ է, որ էթնիկ լոբբինգի պարագայում գործ ունենք սփյուռքյան առանցքային կամ հիմնական անդամների հետ, որոնք էլ ձևավորում եմ սփյուռքյան էլիտա կոչվածը: Այսպիսով՝ եզրահանգենք, որ էթնիկ լոբբինգ իրականացնող անձանց պարագայում գործ ունենք սփյուռքյան էլիտաների հետ, որոնց երկվության մարտահրավերը կքննարկենք ստորև:

Սփյուռքը հաճախ հանդես է գալիս, որպես պատկանելիության էականացման այլընտրանք, այն նաև հնարավորություն է տալիս ապատարածականացնել ինքնությունը (Brubaker, Rogers 12):

Ասվածը առավել խիստ է արտացոլվում սփյուռքյան էլիտաների պարագայում՝ վերջինիս կանգնեցնելով ինքնության երկվության մարտահրավերի առաջ, ինչն էլ նախ և առաջ պայմանավորվում է երկակի քաղաքացիության (dual citizenship) հանգամանքով, քանի որ քաղաքացիության բնորոշ կարգավիճակը քայքայվել է քաղաքացիների և ոչ քաղաքացիների իրավունքների ու արտոնությունների ընդլայնման պարագայում: Քաղաքացիությունը ոչ թե պետության կողմից անհատներին շնորհվող ազգային կարգավիճակ է, այլ անդրազգային իրավունք: Բացի այդ, էլիտաներն ունեն ավելի մեծ անդրազգային հետաքրքրություններ, քան ոչ էլիտաները: Այս հանգամանքը նույնպես կարող է ազեցություն ունենալ էլիտաների ազգային հանձնառությունների և հետաքրքրությունների վրա: Որոշակի վերապահումներով կարելի է համաձայնել Հանթինգթոնի այն պնդմանը, որ «անդրազգային ինստիտուտներում և ցանցերում ներգրավվածությունը ոչ միայն ձևավորում է համաշխարհային վերնախավը, այլև կարևոր է ազգերի ներսում էլիտար կարգավիճակ ձեռք բերելու համար: Ինչ-որ մեկը, ում հավատարմությունը, ինքնությունը զուտ ազգային է, ավելի քիչ հավանական է, որ բարձրանա բիզնեսում, ակադեմիական կյանքում, լրատվամիջոցներում, մասնագիտություններում, քան մեկը, ով անցնում է այս սահմանները»:

Երկակի քաղաքացիությունը համատեղ ծառայում է այն երկրների շահերին, որոնց հետ քաղաքացիաիրավական հարաբերություններով անհատները կապված են: Այն լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի լոյալությունը: Քաղաքացիությունը քիչ կարևորություն է տալիս ինքնությանն ու ավելի կարևորում «հանրային ծառայությունը»: Երկքաղաքացիությունն ունի նաև ավելի գործնական հետևանքներ: Այն խրախուսում է պահպանել և, հնարավոր է, ընդլայնել իրենց պարտավորությունները և ներգրավվածությունը հայրենի երկրներում: Դրանց թվում են տասնյակ միլիարդավոր դոլարների տրանսֆերները, որոնք նրանցից գնում են հարազատներին, բնակավայրերը, բիզնեսները, զարգացման ծրագրերը և այլն: Հանթինգթոնը, ի թիվս այլնի, նաև էթնիկ լոբբինգի իրականացման հնարավորությունն է համարում երկքաղաքացիության աճը (Huntington, Samuel 205-213):

Եզրակացություն

Էթնիկ լոբբինգը արդի քաղաքական գործընթացներում սփյուռքի քաղաքական գործունեության գործառնողն է, այդպիսով այն հանդես է գալիս իբրև քաղաքական գործընթացի մակրո մակարդակի դերակատար, ինչն ամրապնդվում և զարգանում է անդրազգային քաղաքական կազմավորումների աճող ազդեցության, գլոբալիզացիայի և տեղեկատվահաղորդակցական հնարավորությունների ընդլայնման պարագայում: Հայրենի պետությունների՝ սփյուռքյան համայնքներին քաղաքականապես ապավինելու միտումները շարունակական աճ են գրանցում, զուգահեռաբար աճում են ընդունող պետությունների հետաքրքրությունները՝ էթնիկ համայնքների միջոցով վերջիններիս հայրենի կառավարությունների վրա ազդեցություն գործելու համար: Հայրենի պետությունները հաճախ միջամտում են այլ պետությունների ներքին գործերին՝ փորձելով վերջիններիս տարածքում ունենալ կայուն, կազմակերպված ու քաղաքական կշիռ ունեցող համայնքներ: Այսպիսով՝ միջազգային հարաբերությունների սփյուռքյան ոլորտը բավական բազմաշերտ տարածություն է, որտեղ խաչաձևվում են պետությունների ներքին ու արտաքին շահերը:

Այնուամենայնիվ, անկախ քաղաքակրթական միջավայրից, ընունող պետության հասարակական-քաղաքական հարաբերություններից և քաղաքական մշակույթից՝ էթնիկ համայնքները պահպանում են հավաքական ինքնության օբյեկտիվ բաղադրիչներ՝ ընդհանուր պատմություն, հիշողություն, և ամենակարևորը՝

հայրենիքի օբյեկտիվ իրականություն: Հայրենիքը ծառայում է որպես ընդհանուր ազգային ինքնության ֆիզիկական մարմնավորում, և նրա քաղաքական ու տարածքային ճակատագիրը խոր ազդեցություն ունի սփյուռքի սուբյեկտիվ ինքնության վրա: Այսպիսով՝ և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ գործոնները համատեղվում են ազգային ինքնության և անդրազգային համայնքային քաղաքականության ձևավորման համար:

Հետաքրքիր է, որ ինքնության երկվության զգացումի վանումը գլխավորապես դրսևորվում է հայրենի պետությունների հետ հարաբերություններում, մինչդեռ ընդունող երկրի հետ հարաբերություններում այն կամ չի դրսևորվում, կամ հակառակ դրսևորումն է ունենում:

Սփյուռքյան էլիտաների ինքնության երկվությունը անխուսափելի մարտահրավեր է, որի հաղթահարումը հնարավոր է երկու ինքնությունների ոչ թե դիխոտոմիայի, այլ կոնվերգենցիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա հավասարապես բավարարել երկու ինքնությունների պահանջմունքները և սպասարկել դրանք՝ չօտարվելով ոչ հայրենի և ոչ ընդունող պետություններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. HäGel, Peter, Pauline Peretz “States and Transnational Actors: Who’s Influencing Whom?” A Case Study in Jewish Diaspora Politics during the Cold War, European Journal of International Relations Copyright, 2005, Vol. 11(4): 467–493.
2. Yossi, Shain Kinship and Diasporas in International affairs, The University of Michigan, 2007.
3. Huntington, Samuel Who are we?, New York, 2005.
4. Lyon, Thomas P., John W. Maxwell, “Astroturf: Interest Group Lobbying and Corporate Strategy”. Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, 2004.
5. Charrad, Kristina, Lobbying the European Union, Munster, 2009.
6. Milbrath, Lester, Lobbying as a Communication Process, Public Opinion Quarterly 24(1).
7. Koeppl, Peter, ‘‘The Acceptance, Relevance and Dominance of Lobbying the EU Commission-A first-time survey of the EU Commission’s civil servants’’. In: Journal of Public Affairs vol.1 (N.1).
8. Tololyan, Khachig, “Exile Governments in the Armenian Polity”, Yossi Shain, ed., Governments-in-exile in Contemporary World Politics, New York: Routledge, 1991.
9. Smith, Tony, “Foreign Attachments: The Power of Ethnic Groups in The Making of American Foreign Policy”, Harvard University Press, 2002.
10. Weiner, Myron, “International Migration and Security+ Boulder”, Colo+: Westview Press, 1993.
11. Naim, Moises, “The New Diaspora” Foreign Polity (July-August 2002), 95.
12. Anderson, Benedict, “The New World Disorder,” New Left Review 193, 1992.
13. Chander, Anupam., “Diaspora Bonds”, New York University Law Review 76.
14. Koinova, Maria, “Diasporas and Democratization in the Post-communist World”, Communist and Post-Communist Studies 42 (2009).
15. Sheffer, Gabriel, Diaspora Politics at Home Abroad, 2003.
16. Brubaker, Rogers, The “Diaspora” Diaspora, Ethnic and Racial Studies, vol. 28 No. 1 January 2005.

ETHNIC LOBBYING AS A TRANSNATIONAL ACTOR: THE CHALLENGE OF THE DUALITY OF DIASPORA ELITES

GEVORG GHUKASYAN
«Armenian Cause» Foundation, Project manager;
Public Administration Academy of the Republic of Armenia,
Ph.D. Student,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of this work is to reveal the transnational multi-layered political role of the diaspora, particularly the main actor of its political activity - the institution of ethnic lobbying, which implies dual relations between the homeland and the host state.

The article aims to understand the place and role of ethnic lobbying as a transnational political factor in modern international relations.

Historical-comparative, structural-operational and behavioral methods of scientific analysis were used to achieve the goal of the research and the solution of the set problems.

It was concluded that, the activity of ethnic lobby groups is aimed not only at supporting the homeland, but also at influencing. In addition, ethnic lobby groups can also be adversely affected by both the home state and the host state. In that context, however, lobby groups try to maintain their relatively independent role.

The Non-Ethnic Lobbying Institute acts as a macro-level actor of the political process, which is strengthened and developed in the context of the growing influence of transnational political organizations, globalization and the expansion of information communication opportunities.

Ethnic lobbying, as the main actor of the diaspora's political activity, is related to the dualistic challenges of the diaspora elites. A similar approach, among others, is justified by S. Huntington, according whom "dual citizenship legitimizes dual identities and dual loyalties."

The duality of the identity of the Diaspora elites is an unavoidable challenge. The overcoming of that challenge is possible not through the dichotomy, but through the convergence of the two identities, which will make it possible to equally satisfy the demands of both identities and serve them, without alienating them from the non-native and non-host states.

Keywords: *Lobbying, ethnic lobbying, transnational actors, communication, pressure groups, conflicts, diaspora, diaspora elite, duality of elites.*

ЭТНИЧЕСКИЙ ЛОББИЗМ КАК ТРАНСНАЦИОНАЛЬНЫЙ АКТОР: ПРОБЛЕМА ДВОЙСТВЕННОСТИ ЭЛИТ ДИАСПОРЫ

ГЕВОРГ ГУКАСЯН
руководитель проекта Фонда «Ай Дат»,
аспирант Академии государственного управления Республики Армении,
г. Ереван, Республика Армения

Целью данной работы является выявление транснациональной многослойной политической роли диаспоры, в частности, основного актора ее политической деятельности, института этнического лоббирования,

предполагающего параллельные отношения между родиной и принимающим государством.

В статье была поставлена задача понять место и роль этнического лобби в современных международных отношениях как транснационального политического фактора.

Для достижения цели исследования и решения поставленных задач применялись историко-сравнительные, структурно-практические и поведенческие методы научного анализа.

Соответственно, деятельность этнических лоббистских групп направлена не только на поддержку родного государства, но и влияние на него. Кроме того, этнические лоббистские группы также могут подвергаться противоречщему друг другу влиянию как со стороны родного государства, так и принимающего. Тем не менее, в этом контексте лоббистские группы пытаются сохранить свою относительно независимую роль.

В статье сделан вывод о том, что Институт неэтнического лоббирования выступает актором макроуровня политического процесса, который укрепляется и развивается в условиях роста влияния транснациональных политических организаций, в условиях глобализации и расширения информационно-коммуникационных возможностей. Этническое лоббирование как основной актер политической деятельности диаспоры связан с дуалистическими вызовами диаспоральных элит. Подобный подход, среди прочих других, обоснован, по словам С. Хантингтона, тем, что «двойное гражданство узаконивает двойную идентичность и двойную лояльность».

Двойственность идентичностей диаспоральных элит – неизбежный вызов, преодоление которого возможно не через дихотомию, а через сближение двух идентичностей, что позволит в равной степени удовлетворять запросы обеих идентичностей и служить им, не отчуждаясь ни от родного, ни от принимающего государств.

Ключевые слова: *лоббирование, этническое лоббирование, транснациональные акторы, коммуникации, группы давления, конфликты диаспора, диаспоральная элита, дуальность элит.*

ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՎՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ*

ՀՏԴ 327.8 *10.52063/25792652-2022.3.14-106*

ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
Կովկասի ինստիտուտի գիտաշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gorpetrosyanarm@gmail.com

Վերջին տասնամյակների ընթացքում տնտեսական պատժամիջոցները դարձել են միջպետական հարաբերություններում քաղաքական կարևորագույն գործիքներից մեկը, և պատժամիջոցային քաղաքականության կիրառումը կարևոր ազդեցություն է ունեցել Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության ձևավորման գործում:

Ներկայացվող հոդվածի նպատակը Ռուսաստանի և Վրաստանի կողմից միմյանց նկատմամբ պատժամիջոցների կիրառման հետևանքով առաջացած տարածաշրջանային ուժային համամասնության վերափոխման ուսումնասիրությունն է:

Հետազոտության խնդիրն է ռուս-վրացական փոխադարձ պատժամիջոցների հետևանքով Հայաստանի համար առաջացող աշխարհաքաղաքական վտանգների ու սահմանափակումների վերհանումը:

Հոդվածը հիմնված է հետազոտության իրականացման ինչպես քանակական մեթոդների՝ առևտրատնտեսական ու վիճակագրական տվյալների ուսումնասիրություն, այնպես էլ որակական մեթոդների՝ քաղաքական դերակատարների հայտարարությունների բովանդակային վերլուծության համադիր ուսումնասիրման վրա:

Կատարված հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Ռուսաստանի Դաշնության՝ Վրաստանի նկատմամբ կիրառած պատժամիջոցների արդյունքում Ադրբեջանն ու Թուրքիան շեշտակիորեն ավելացրել են տնտեսական ու քաղաքական ազդեցությունը վերջինիս նկատմամբ, իսկ վրաց-աբխազական երկաթուղու փակման հետևանքով Հայաստանը հայտնվել է ամբողջական երկաթուղային շրջափակման մեջ: Նշյալ իրավիճակով պայմանավորված՝ Հայաստանի համար անհնարին է դարձել արևելք-արևմուտք (Ադրբեջան-Թուրքիա) դաշինքին հյուսիս-հարավ (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) դաշինքով հակադրման փորձը: Այսպիսով՝ Հայաստանը զրկվել է Իրանն ու Ռուսաստանը միավորող հանգույց դառնալու և ադրբեջանաթուրքական տանդեմին դիմակայելու արդյունավետ մեխանիզմից:

Հիմնաբառեր՝ *պատժամիջոցներ, սահմանափակումներ, քաղաքական ճնշում, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, միջպետական հարաբերություններ, Հարավային Կովկաս, Հայաստան:*

---

* Հոդվածը ներկայացվել է 20.08.2022թ., գրախոսվել՝ 04.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Նախաբան

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի ամբողջական տնտեսական շրջափակման փորձի ձախողումը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանին հաջողվեց դիվերսֆիկացնել իր լոգիստիկ կապերը արտաքին աշխարհի հետ՝ շնորհիվ իր հյուսիսային հարևան Վրաստանի և հարավային Հարևան Իրանի տարածքով բեռնափոխադրումների կազմակերպման: Այժմ Հայաստանի արտաքին առևտրի 70 և 30 տոկոսը կատարվում է համապատասխանաբար Վրաստանի և Իրանի տարածքներով (Mikaelian 109): Սակայն վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների առկայությամբ պայմանավորված՝ Վրաստանի տարածքով դեպի Ռուսաստան գնացող ցամաքային հիմնական ավտոճանապարհ-ների փակ լինելը մի կողմից, ՌԴ-ի հետ Վրաստանի բարդ աշխարհաքաղաքական հարաբերությունները մյուս կողմից, սահմանափակում են Հայաստանի տնտեսական հնարավորությունները՝ զարգացնելու առևտրատնտեսական կապերը ՌԴ-ի հետ:

1992 թ.-ին փակվեց Վրաստանը Ռուսաստանին կապող երկաթուղու աբխազական հատվածը, որը Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման պայմաններում Հայաստանը Ռուսաստանին կապող միակ երկաթուղային գիծն էր (Хачатрян 89-102): Այսպիսով՝ ամբողջականանում էր Հայաստանի երկաթուղային շրջափակման Ադրբեջանի փորձը: Հարավօսական և աբխազական հակամարտութ-յուններով պայմանավորված՝ Վրաստանն ու Հայաստանը Ռուսաստանին կապող միակ ավտոճանապարհային անցակետը անցնում է Ստեփանծմինդա-Վերին Լարս լեռնային ճանապարհով: Վերջինս գտնվում է բարդ ռելիեֆային պայմաններում և ունի սահմանափակ բացթողման հնարավորություններ, ինչի պատճառով Հայաստանից Ռուսաստան բեռնափոխադրումների կազմակերպման տեսանկյունից պարբերաբար առաջանում են խնդիրներ: Ընդ որում, Լարսի ճանապարհը դժվարանցանելի է լինում և՛ ձմռանը, և՛ ամռանը, որը մի դեպքում պայմանավորված է բնակլիմայական, իսկ մյուս դեպքում գերծանրաբեռնվածության հանգամանքով: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտագնության տեսանկյունից Հայաստանի հյուսիսային հարևան Վրաստանի լարված հարաբերությունները ՌԴ-ի և հակամարտությունը Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի հետ ոչ պակաս կարևոր են, քան Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը:

Քննարկում

Սույն խնդիրը գտնվել է Հայաստանի բոլոր իշխանությունների ուշադրության կենտրոնում, իսկ խնդրի լուծման համար դիտարկվել են մի քանի միջոցներ: Նման միջոցներից առաջինը նպաստելն է Ռուսաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների կարգավորմանը աբխազական երկաթուղու վերագործարկման նպատակով: Այս ուղղությամբ ջանքերն ակտիվացել էին հատկապես 2017թ.-ին, սակայն որևէ շոշափելի արդյունքի չէին հանգեցրել (Առավոտ, 2017թ):

Աբխազական երկաթուղու վերագործարկման շուրջ քննարկման խոսակցությունների հանրայնացումն անգամ վրացական հասարակության կողմից շարունակում է մնալ անընկալելի, ուստի առանց աբխազական հակամարտության կարգավորման երկաթուղու վերաբացման հեռանկարը շարունակում է մնալ ոչ իրականանալի մոտ ապագայում (*Civil Georgia*):

Հաջորդ միջոցը, որի գործարկմամբ հնարավոր է շրջանցել Լարսի անցակետի դժվարությունները, Սև ծովի միջոցով լաստանավային փոխադրումների իրականացումն է: Ընդ որում, սույն միջոցի կիրառմանը փորձել են դիմել Հայաստանի մի քանի կառավարություններ (*ALIQ MEDIA, Armenpress*): Սակայն ռուսական նավահանգիստների ու նավերի նկատմամբ արևմտյան պատժամիջոցների, ինչպես նաև Ուկրաինայում տեղի ունեցող ռազմական գործողությունների ազդեցությունը Սև

ծովում լաստանավային փոխադրումները դարձնում են դժվարամատչելի հայ արտահանողների համար:

Ռուս-վրացական հարաբերություններում պատժամիջոցների դերակատարությունը չի սահմանափակվել միայն աբխազական ու հարավօսական հակամարտությունների հետևանքով նշյալ տարածքների ու Վրաստանի միջև սահմանների ամբողջական փակմամբ: Չնայած ժամանակակից ռուս փորձագետների ու քաղաքական գործիչների կողմից միջազգային քաղաքականությունում միակողմանի պատժամիջոցների կիրառման անթույլատրելիությանը՝ պատժամիջոցները ՌԴ-ի արտաքին քաղաքականության էական գործիք են, իսկ Վրաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների միջոցով ՌԴ-ն ձեռք է բերել հարուստ փորձ:

2003թ.-ին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությունից» հետո վերջինս փոխեց արտաքին քաղաքականությունը և խորացրեց արևմուտքի հետ ինտեգրման գործընթացը: Նախնական շրջանում վրացական իշխանություններն ունեին նաև Ռուսաստանի աջակցությունը, սակայն երկու պետությունների միջև հարաբերություններն աստիճանաբար լարվում էին, իսկ ռուսական իշխանություններն անցում էին կատարում «մտրակ»-ի քաղաքականությանը: Ընդ որում, առաջին հերթին ճնշում էր կիրառվում էներգետիկ ոլորտի նկատմամբ, որը Վրաստանի համար խոցելի, իսկ Ռուսաստանի համար ուժեղ կողմ էր: Արդյունքում 2004-2006թթ.-ին Վրաստանում գազի գինը բարձրացել էր շուրջ 500%-ով՝ 50 ԱՄՆ դոլարից հասնելով 235-ի, իսկ 2006թ.-ի դրությամբ Վրաստանը ՌԴ-ին գազի մատակարարումների դիմաց ստիպված էր վճարել սեփական բյուջեի շուրջ տասը տոկոսի չափ գումար (Newnham 161-170): Բացի էներգակիրներից, ՌԴ-ն սահմանափակում էր նաև վրացական գյուղատնտեսական մթերքների, գինիների ու հանքային ջրերի ներմուծումը (Newnham 161-170): Սակայն ի տարբերության արևմտյան պատժամիջոցների՝ Ռուսաստանի կողմից սահմանափակումները հաճախ ներկայացվում են որպես ոչ թե պատժամիջոցներ, այլ սանիտարական կանոնների չպահպանման հետևանք:

Վրաստանի նկատմամբ ճնշման երրորդ ուղղությունն աշխատանքային միգրանտների նկատմամբ կիրառվող սահմանափակումներն էին՝ վրաստանի քաղաքացիներին ՌԴ մուտքի թույլտվություն չտրամադրելու, արտաքսման ու ֆինանսական փոխանցումների արգելանքի տեսքով: 2006-2008թթ.-ի ընթացքում մի քանի անգամ փակվել էր նաև Լարսի անցակետը, ինչը լրջագույն սպառնալիք էր Հայաստանի պարենային ու տնտեսական անվտանգության համար:

Ռուսաստանի կողմից Վրաստանի նկատմամբ կիրառվող սահմանափակումների արդյունքում վերջինս 2006թ.-ին կորցրեց շուրջ 600 միլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում էր Վրաստանի ՀՆԱ-ի շուրջ 5%-ը (Livny, et al. 175-195): Տնտեսական տեսանկյունից սույն հանգամանքը ռազմավարական նշանակություն ունենալ չէր կարող, քանի որ 2006թ.-ին Վրաստանում ակնկալվում էր ՀՆԱ-ի 13% աճ (Livny, et al. 175-195): Ռուսական սահմանափակումների ցածր արդյունավետությունը գլխավորապես կապված էր Վրաստանին հատկացվող արտաքին՝ արևմտյան ֆինանսատնտեսական աջակցությամբ և հարևան Ադրբեջանի ու Թուրքիայի առկայությամբ: Վերջիններս, օգտվելով Վրաստանից Ռուսաստանի դուրս մղման հանգամանքից, անցան ակտիվ ներդրումների և վրացական շուկայի «գրավման» քաղաքականությանը: 2007թ.-ին շահագործման էր հանձնվել Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, ինչը հնարավորություն էր ընձեռում Վրաստանին՝ հրաժարվելու ռուսական էներգակիրներից կամ նվազեցնելու դրանց տեսակարար կշիռն իր տնտեսությունում: Իսկ արդեն 2008թ.-ին ադրբեջանական SOCAR կազմակերպությունը ձեռք բերեց Վրաստանում գործող գազամատակարարման ցանցերի «առյուծի բաժինը», և այսօր այն փաստացի գերակշռող դիրք ունի վրացական գազի շուկայում (Shiriyev 149-175): Թուրքիան ևս անմասն չի մնացել

Վրաստանում տնտեսական ազդեցության տարածման գործում և հանդիսանում է վերջին տասնհինգ տարիների ընթացքում Վրաստանում կատարած ուղիղ օտարերկրյա ներդրումների առաջատարը (National statistics office of Georgia): Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների վատացումն ուղղակիորեն նպաստեց վրաց-ադրբեջանական և վրաց-թուրքական հարաբերությունների վերափոխմանը ռազմավարական գործընկերության, իսկ Թուրքիայի ու Ադրբեջանի տնտեսական ազդեցության մեծացումը էականորեն թուլացրել է ռուսական տնտեսական ու քաղաքական ազդեցությունը Վրաստանի նկատմամբ:

2012-2013թթ.-ին Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ռուս-վրացական հարաբերությունների լարումն աստիճանաբար թուլանում էր և վերականգնվում էին առևտրատնտեսական կապերը: 2018թ.-ին Վրաստանից Ռուսաստան արտահանման ծավալներն աճել էին տասն անգամ՝ 47 միլիոն դոլարից դառնալով 435 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ Ռուսաստանի հետ առևտրի, զբոսաշրջության և այլ բնագավառների հետ է փոխկապակցված Վրաստանի ՀՆԱ-ի գոյացման շուրջ տասը տոկոսը (*Emerging Europe*): Սակայն վրացական տնտեսության վրա Ռուսաստանի վաղեմի ազդեցության վերականգնումն այլևս գրեթե անհնարին է՝ հաշվի առնելով գլխավորապես ադրբեջանական ու թուրքական տնտեսական ազդեցության գործոնը: Սա է հանդիսանում հիմնական պատճառը, որ 2019թ.-ին տեղի ունեցած ռուս-վրացական հարաբերությունների հերթական լարման փուլում Ռուսաստանի նախագահը կոչ արեց պետական դումային էմբարգո չկիրառել վրացական ապրանքների նկատմամբ (Шанс образумиться? 2019): Վրացական ապրանքների նկատմամբ էմբարգո հայտարարելու միջոցով Ռուսաստանը ամբողջապես կկորցներ իր տնտեսական ազդեցությունը Վրաստանի նկատմամբ՝ չհասնելով որևէ քաղաքական նպատակի իրականացման: Մասնակի տնտեսական ճնշումը՝ գինու, այգեգործական ապրանքների և զբոսաշրջության ոլորտի նկատմամբ սահմանափակումներ մտցնելու միջոցով, հետապնդում էր ոչ այնքան քաղաքական նպատակ, որքան հեղինակության պահպանման:

Վրաստանի նկատմամբ զբոսաշրջային ոլորտի սահմանափակումները, մասնավորապես՝ Ռուսաստանից դեպի Վրաստան թռիչքների չեղարկումը (*Transparency Georgia*), կարճաժամկետ դրական ազդեցություն ունեցավ Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա, բացվեցին նոր չարտերային թռիչքներ դեպի Վրաստանի հանգստյան գոտիներ: Սակայն երկարաժամկետ հեռանկարում ռուս-վրացական հարաբերությունների լարումը հակասում է Հայաստանի ազգային շահերին: Լարսի անցակետի սահմանափակ կարողությունները մի կողմից, մյուս կողմից վրացական նավահանգիստների շրջափակման իրողությունը (*Ազատություն ռադիոկայան*) պատերազմական ժամանակահատվածում և ռուսական նավահանգիստների՝ պատժամիջոցների տակ հայտնվելու ռիսկերը կարող են ապագայում ևս ստեղծել պարենային ու ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներ:

Եզրակացություն

Ռուսաստանի և Վրաստանի միջև երկաթուղային կապի փաստացի բացակայությունը և ավտոճանապարհային կապի սահմանափակությունը, ռուս-վրացական քաղաքական առճակատման հետևանքով ընդհատված և սահմանափակված տնտեսական կապերը ռազմավարական առումով կրճատել են Հայաստանի Հանրապետության կարողություններն ու հնարավորությունները տնտեսապես և քաղաքականապես չեզոքացնելու ադրբեջանաթուրքական մեկուսացման քաղաքականության հետևանքները:

Վրաստանի շուրջ ձևավորված իրավիճակով պայմանավորված հայկական Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի նախագիծը բախվում է Կովկասյան լեռնաշղթայի ճանապարհային արգելապատնեշին: Այսպիսով՝ անհնարին է դառնում

նշյալ տնտեսական ծրագրի կենսագործունեության հեռանկարը: Քաղաքական տեսանկյունից նշյալ իրավիճակով պայմանավորված՝ անհնարին է դարձել արևելք-արևմուտք (Ադրբեջան-Թուրքիա) դաշինքին հյուսիս-հարավ (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) դաշինքով հակադրման փորձերը, իսկ Հայաստանն ու Վրաստանը զրկվել են Իրանն ու Ռուսաստանը միավորող հանգույց դառնալու հնարավորությունից: Այսպիսով՝ փոխվել է տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կարեն Կարապետյանը Վրաստանում աբխազական երկաթգծի այլընտրանքային տարբերակ է քննարկել», Առավոտ, 01.03.2017թ. https://www.aravot.am/2017/03/01/860844/
2. «Հայաստանը փոխում է Վրաստանով անցնող բեռնափոխադրումների ուղին», Ազատություն ռադիոկայան, 17.03.2004, https://www.azatutyun.am/a/1573304.html.
3. «Հայաստան-Վրաստան-Ռուսաստան ուղղությամբ բեռնափոխադրումների սակագները նվազել են», ALIQ MEDIA, 12.04.2017թ, կամ Armenpress «Կառավարությունը կսուբսիդավորվի արտահանման կամ ներմուծման նպատակով Փոթի-Կովկաս լաստանավային հաղորդակցությունը» 24.03.2022թ. https://armenpress.am/arm/news/1078792/
4. Винокуров, Андрей. «Шанс образумиться? Почему Москва не наказала Тбилиси», Gazeta, 09.07.2019, https://www.gazeta.ru/business/2019/07/09/12488245.shtml.
5. Хачатрян, Арутюн. Экономика и полтиика в Республике Армения. в книге ред. Искандарян, Александр. «Диаспора, нефть и розы. Чем живут страны Южного Кавказа», Ереван, 2005г. стр 89-102. Ереван, 2005г.
6. "Georgia's Economic Dependence on Russia: Trends and Threats", Transparency Georgia, 04 May, 2020. https://transparency.ge/en/blog/georgias-economic-dependence-russia-trends-and-threats
7. "Georgia Foreign Direct Investment: Other States: Turkey", National statistics office of Georgia, https://www.ceicdata.com/en/georgia/foreign-direct-investment-by-country/foreign-direct-investment-other-states-turkey
8. "Government Denies Speculations on Abkhaz Railway Talks", Civil Georgia, Tbilisi, 27.02.17, https://old.civil.ge/eng/article.php?id=29889
9. "Russian sanctions against Georgia: How dangerous are they for country's economy?", Emerging Europe, 17.07.2019, https://emerging-europe.com/voices/russian-sanctions-against-georgia-how-dangerous-are-they-for-countrys-economy/
10. Livny, Eric and others. Impact of Russian sanctions on the Georgian economy. Frankfurt am Main, New York 2009.
11. Mikaelian, Hrant. The Karabakh War: Economic cost and consequences. Yerevan, 2018
12. Randall, Newnham. Georgia on my mind? Russian sanctions and the end of the 'Rose Revolution', Journal of Eurasian Studies 6 (2015) 161-170.
13. Shiriyev, Zaur. An Alliance Built on Understanding: The Geopolitics of Georgian-Azerbaijani Relations. in the book edited by Kakachia, Kornely & Jones, Stephen "Georgian Foreign Policy: The Quest for Sustainable Security", K.A.S. (2013), pp 149-175.

WORKS CITED

1. “Hayastan-Vrastan-Rusastan uxxutyamb bernapoxadrumneri sakagnery nvazel en”, [The prices of Cargo Transportation in the Direction of Armenia-Georgia-Russia have Decreased] *ALIQ MEDIA* , April 12, 2017. (In Armenian)

2. “Hayastany pokhum e Vrastanov antsnogh bernapoxadrumneri uxin”, [Armenia Changes its Transportation Route Passing through Georgia. Radio Liberty] *Azatutyun Radiokayan*, May 17, 2004, https://www.azatutyun.am/a/1573304.html: (In Armenian)

3. Khachatryan A.., *Diaspora, neft' i rozy.Chem zhivut strany Juzhnogo Kavkaza*, ed. A. Iskandaryan, Jekonomika i poltiika v Respublike Armenija, [Diaspora, Oil and Roses. What Makes the Countries of the South Caucasus Tick.], Yerevan, 2005, pp. 89-102. (In Russian)

4. “Karen Karapetyany Vrastanum abxazakan erkatgci aylyntranqayin tarberak e qnnarkel”, [Karen Karapetyan Discussed an Alternative Version of the Abkhaz Railway in Georgia".] *Aravot*, march 1, 2017, https://www.aravot.am/2017/03/01/860844/: (In Armenian)

5. Vinokurov, Andrey, “Shans obrazumit'sja? Pochemu Moskva ne nakazala Tbilisi” [A chance to Come to Senses? Why didn't Moscow Punish Tbilisi], July 9, 2019, https://www.gazeta.ru/business/2019/07/09/12488245.shtml. (In Russian)

THE IMPACT OF THE SANCTIONS KNOT AROUND GEORGIA ON THE REGIONALIZATION PROCESS IN THE SOUTH CAUCASUS

GOR PETROSYAN
Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Science, Ph.D. Student,
Caucasus Institute, Researcher;
Yerevan, The Republic of Armenia

In recent decades, the economic sanctions have become one of the most important tools of politics in interstate relations and application of the sanctions policy have had significant impact on the formation of the power balance in the South Caucasus.

The aim of this article is to investigate the transformation of the regional balance of power caused by the imposition of sanctions by Russia and Georgia.

The objective of the study is to identify emerging geopolitical constraints and dangers for Armenia as a result of mutual Russian-Georgian sanctions.

The article is based on a comparative analysis of data obtained with both quantitative methods of research, i.e. the study of trade, economic and statistical data, and qualitative methods, i.e. content analysis of statements by political actors.

Based on the study, the author has concluded that Azerbaijan and Turkey have significantly increased their economic and political influence on Georgia, due to the sanctions imposed by the Russian Federation on Georgia. As a result of the closure of the Georgian-Abkhazian railroad, the railway blockade of Armenia has been completed. In connection with the aforementioned situation, it has become impossible for Armenia to oppose the East-West alliance (Azerbaijan-Turkey) to the North-South alliance (Russia-Georgia-Armenia-Iran). Thus, Armenia has been deprived of the opportunity to become a hub linking Iran and Russia, and lost a mechanism to contain the Azerbaijani-Turkish tandem.

Keywords: *sanctions, restrictions, political pressure, Georgia, Russian Federation, interstate relations, South Caucasus, Armenia.*

ВЛИЯНИЕ САНКЦИОННОГО УЗЛА ВОКРУГ ГРУЗИИ НА ПРОЦЕСС РЕГИОНАЛИЗАЦИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

ГОР ПЕТРОСЯН
аспирант кафедры политологии
факультета международных отношений ЕГУ,
научный сотрудник Института Кавказа,
г. Ереван, Республика Армения

В последние десятилетия экономические санкции стали одним из важнейших инструментов политики в межгосударственных отношениях. Применение санкционной политики оказало важное влияние на формирование баланса сил также и на Южном Кавказе.

Целью представленной статьи является исследование трансформации регионального баланса сил, вызванной введением санкций со стороны России и Грузии.

Задачей исследования является выявление возникаю щих геополитических ограничений и опасностей для Армении в результате взаимных российско-грузинских санкций.

Статья основана на сопоставительном анализе данных, полученных с помощью как количественных методов проведения исследования, таких как изучение торгово-экономических и статистических данных, так и качественных методов, таких как контент-анализ высказываний политических акторов.

В результате проведенного исследования мы пришли к выводу, что Азербайджан и Турция значительно усилили свое экономическое и политическое влияние на Грузию из-за санкций, введенных Российской Федерацией в отношении Грузии, а в результате закрытия Грузино-Абхазской железной дороги Армения оказалась в полной железнодорожной блокаде. В связи с упомянутой ситуацией для Армении стало невозможным противопоставить альянсу Восток-Запад (Азербайджан-Турция) союз Север-Юг (Россия-Грузия-Армения-Иран). Таким образом, Армения лишилась возможности стать узлом, объединяющим Иран и Россию, и механизма сдерживания азербайджано-турецкоǫо тандема.

Ключевые слова: *санкции, ограничения, политическое давление, Грузия, Российская Федерация, межгосударственные отношения, Южный Кавказ, Армения.*

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԻՐԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ. ԱՆՓՈՓՈԽ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ, ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ԱՌԱՁՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ* [1]

ՀՏԴ 327 *10.52063/25792652-2022.3.14-113*

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի
արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի դասախոս,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
tatevik.manukyan@isec.am

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել Սիրիայում քրդական գործոնով պայմանավորված Անկարայի ծավալապաշտական գործողությունների, հավակնությունների և գաղափարաբանության իրական շրջանակն ու բովանդակությունը:

Ուսումնասիրության խնդիրն է ներկայացնել Թուրքիայի սիրիական քաղաքականության հիմնական առանձնահատկություններն ու ընթացիկ փոխակերպումները, հստակեցնել այդ փոխակերպումների իրական հիմքերն ու դրդապատճառները, քննության ենթարկել քրդական գործոնի կարևորությունը սիրիական ճգնաժամում, ինչպես նաև լուսաբանել թուրքական ռազմական ներխուժումների արդյունքում առաջացած նոր իրողությունները Սիրիա-Թուրքիա սահմագծին:

Այս թեմայի ուսումնասիրությունն այսօր չափազանց արդիական է ՀՀ անվտանգային միջավայրի գնահատման տեսանկյունից՝ հաշվի առնելով 2020թ. Արցախյան պատերազմում Թուրքիայի անմիջական ներգրավվածությունը և հետայդու ռազմաքաղաքական ակտիվացումը հարավկովկասյան տարածաշրջանային գործընթացներում, որոնք հիմնովին տեղավորվում են վերջինիս ագրեսիվ ծավալապաշտական քաղաքական օրակարգում: Հոդվածի մեթոդաբանությունը ներառում է պատմավերլուծական և քաղաքագիտական մոտեցումները:

Հոդվածն ամրագրում է, թե ինչպես այդ ռազմական ներխուժումների արդյունքում Թուրքիան, օգտագործելով «քրդական ահաբեկչության» դեմ պայքարի անհրաժեշտությունը, մեծացրեց իր ռազմական, այնուհետև տնտեսական ու գաղափարական ներկայությունը Սիրիայում, տեսլական, որը

* Հոդվածը ներկայացվել է 17.09.2022թ., գրախոսվել՝ 24.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

[1] Հետազոտությունն իրականացվել է Գիտության Կոմիտեի՝ 21T-6A153 ծածկագրով «Քրդական գործոնի աշխարհաքաղաքական կարևորությունը սիրիական ճգնաժամում» թեմատիկ ծրագրի շրջանակներում:

Թուրքիայի նեոօսմանյան քաղաքականության առանցքում է, ինչպես նաև վերացրեց Աֆրինից դեպի Միջերկրական ծով քրդական ուժերի տարածման և կանտոնների միավորման հնարավորությունը:

Հիմնաբառեր՝ *Սիրիա, Թուրքիա, սիրիական ճգնաժամ, քրդական գործոն, «Եփրատի վահան», «Ձիթենու ճյուղ», «Խաղաղության աղբյուր», PKK/PYD/YPG:*

Ներածություն

Սիրիական ճգնաժամի ծավալմանը զուգընթաց Թուրքիայի տարածաշրջանային ծավալապաշտական նկրտումներն ավելի ագրեսիվ և իրագործելի դարձան: Կտրուկ աճեց նաև քրդական գործոնի դերը՝ տարածաշրջանային զարգացումներում և արտաքին ուժային կենտրոնների աշխարհաքաղաքական վերադասավորումների համատեքստում: Քրդական ընդլայնվող հավակնություններն Անկարայի համար հետզհետե վերածեցին լրջագույն խնդրի. ևս մեկ քրդական ինքնավարության կազմավորումն իր սահմանագծին խիստ անհանգստացրեց թուրքական իշխանություններին, որոնք համակարգեցին ռազմաքաղաքական ողջ ներուժն ու գործիքակազմը՝ կազմալուծելու սիրական քրդերի համախմբման գործընթացը: 2016-2019 թթ. Թուրքիան, թիրախավորելով ահաբեկչական հռչակած Քրդստանի աշխատավորական կուսակցությանը, երեք ռազմական ներխուժում իրականացրեց Սիրիայի տարածք՝ («Եփրատի վահան», «Ձիթենու ճյուղ» և «Խաղաղության աղբյուր»), որոնց իրական նպատակը Սիրիայում ուրվագծվող քրդական ինքնավարության կայացման գործընթացը կասեցնելն էր: Այդուհանդերձ, Թուրքիայի՝ Սիրիայի նկատմաբ իրականացվող քաղաքականությունը և դրանում քրդական գործոնի կարևորությունը գնահատելու համար անդրադառնանք այդ քաղաքականության պատմական զարգացման խնդիրներին:

Պատմական նախադրյալներ

Թուրք–սիրիական հարաբերություններն իրենց պատմական զարգացման ընթացքում ունեցել են առանցքային մի շարք հիմնախնդիրներ, որոնք խորապես ազդել են այդ հարաբերությունների զարգացման և կերպափոխման շրջափուլերի վրա, պայմանավորել են դրանց էվոլուցիան: Այդ հիմնախնդիրներից առաջնայինը (որից էլ հետագայում առաջացան մյուսները), թերևս, տիտղասակիր ազգի և իր վասալային վիլայեթի հարաբերակցությունն է, որը մինչև այժմ էլ ընկած է Թուրքիայի՝ Սիրիայի նկատմամբ ընկալումների և իրականացվող քաղաքականության հիմքում:

Առաջին աշխարհամարտի արդյունքում ձևավորված սահմանազատումից հետո՝ 1939թ., Թուրքիայի իշխանություններին հաջողվեց Սիրիայի՝ Ալեքսանդրետի սանջակը (վերանվանվեց Հաթայի նահանգ) (Բայրամյան, Sanjian) միացնել իր տարածքին՝ մարմնավորելով «Ազգային Ուխտում» ամրագրված օսմանյան տարածքների վերամիավորման գործընթացը: Ալեքսանդրետի բռնակցման խնդիրը դարձավ երկու հարևան պետությունների քաղաքական հակասությունների մեկնակետը, որը Սառը պատերազմի տարիներին վերածեց աշխարհաքաղաքական հակամարտության:

Հարևան երկրների միջև մյուս լուրջ հիմանխնդիրը ջուրն է. Թուրքիան մշտապես օգտագործել է Տիգրիս ու Եփրատ գետերի ջրային ռեսուրսների կառավարման հնարավորությունը որպես հզոր լծակ՝ Սիրիայի հետ հարաբերություններում: Ի պատասխան՝ Սիրիայի իշխանությունները, 1980-ական թթ. քաղաքական ապաստան տրամադրելով PKK առաջնորդ Աբդուլլահ Օջալանին,

ջրի խնդիրը հակակշռեցին քրդականով[1] (White 37,38): Ջրօգտագործման խնդրի շուրջ երկու երկրների միջև լարվածությունն ավելի խորացավ, երբ Անկարան սկսեց իրագործել Հարավարևելյան Անատոլիայի նախագիծը (Güneydoğu Anadolu Projesi-GAP) (Daoudy 321; Çarkoglu 60):

Թուրգութ Օզալի վարչապետության վերջին շրջանում նկատվեց թուրք-սիրիական հարաբերություններում առկա լարվածության մեղմացում: Օզալի տնտեսական ազատականացման քաղաքականությունը գրավիչ էր դարձնում հարևան երկրներին, իսկ թուրքական տնտեսական ներթափանցման մեծացումը դիտարկվում որպես հետագա քաղաքական լծակների ապահովում: 1987 թ. վարչապետ Օզալն այցելեց Սիրիա՝ երկկողմ հարաբերությունների բարելավման ակնկալիքով: Ձեռք բերվեց ժամանակավոր համաձայնություն, ըստ որի՝ Թուրքիան համաձայնեց Եփրատից անխափան բաց թողնել 500 խմ ջուր, եթե սիրիական իշխանությունները դադարեն աջակցել PKK-ին: Երկու կողմերը նույնիսկ սահմանների անվտանգության պահպանման համաձայնագիր ստորագրեցին՝ պայմանավորվելով համատեղ պայքարել ահաբեկչության դեմ, ինչպես նաև արտահանձնել ահաբեկչության մեջ կասկածվողներին (Olson 170): Սակայն այս համաձայնագրերը մնացին անկատար: Հակասություններն ավելի խորացան, իսկ երկուստեք մեղադրանքները՝ պայմանավորվածությունների խախտման վերաբերյալ, դարձան առավել հաճախակի:

Թուրք-սիրիական հարաբերություններն իրենց լարվածության գագաթնակետին հասան 1998 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ Անկարան Դամասկոսին սպառնաց պատերազմով, եթե վերջինս շարունակի սատարել քրդերի անջատողական պայքարը: Ռազմական ներխուժումից հնարավոր եղավ խուսափել Եգիպտոսի նախագահ Հ. Մոբարաքի բանակցային առաքելության օգնությամբ: Կողմերի միջև 1998 թ. Ադանայում կնքվեց համաձայնագիր, որը հիմք դրեց թուրք-սիրիական հարաբերությունների ընթացական բարելավմանը (Aykan 174):

2000 թ. հունիսի 12-ին Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի այցը Դամասկոս՝ մասնակցելու Հաֆեզ Ասադի հուղարկավորությանը, նշանավորեց հետագա դիվանագիտական այցերի գործընթացի սկիզբը: Ավելին, այս այցը նախագահ Սեզերի առաջին արտագնա այցն էր պաշտոնը ստանձնելուց հետո[2] (TASAM):

ԱԶԿ-ի սիրիական քաղաքականության սկզբնափուլը. պատմական անցյալի վերաժևորում

2002թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Հանրապետությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին Արդարություն և զարգացում կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) հաղթանակով, որը խորհրդարանում ստացավ տեղերի բացարձակ մեծամասնություն: Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում (այսուհետ՝ ԹԱՄԺ) ներկայություն ունենալու 10 տոկոսանոց ընտրաշեմը գործող կուսակցություններից կարողացավ հաղթահարել միայն Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և ութ անկախ պատգամավոր (Seçim 2002): Ձևավորվեց երկկուսակցական խորհրդարան, ինչը 1949 թ. հետո աննախադեպ երևույթ էր երկրում: Աննախադեպ էր նաև ԱԶԿ-ի՝ միանձնյա իշխանություն

[1] 1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման արդյունքում PKK առաջնորդ Ա. Օջալանն անցավ Սիրիա և, ստանալով նախագահ Հաֆեզ Ասադի աջակցությունը, նախաձեռնեց զինված պարտիզանական պայքար Թուրքիայի դեմ:

[2] 2007 թ. հոկտեմբերի Բաշար ալ- Ասադն Աբդուլլահ Գյուլի պաշտոնական հրավերով Թուրքիա կատարած այցի ընթացքում, ի նշան հարգանքի և երախտագիտության, այցելեց նախկին նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի տուն (TASAM):

ձևավորելու իրողությունը, քանի որ 1987 թ. ի վեր Թուրքիայում միակուսակցական կառավարություն չէր ձևավորվել:

Հետզհետե ամրապնդելով իրենց իշխանությունը՝ ԱԶԿ առաջնորդները վերաձևակերպեցին Թուրքիայի քեմալական արտաքին քաղաքականության տեսլականն ու տեսական- գաղափարաբանական հենքը: ԱԶԿ կառավարման սկզբնափուլում այդ հենքը դարձան Իսմայիլ Ջեմի «Թուրքիան նոր դարաշրջանում» (Cem) և Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորքայնություն» (Davutoğlu) աշխատություններում ձևակերպված գաղափարական բանաձևերը: Այն է՝ «Օսմանյան ժամանակահատվածից ժառանգված հարուստ ինքնության և պատմական ձեռքբերումների» կիրառմամբ «Թուրքիան դուրս բերել դեպի Արևմուտք քեմալական արտաքին քաղաքական ուղեծրից, կենտրոնանալ գլոբալ աշխարհաքաղաքական տեսլականի վրա, որը միևնույն կզուգակցվի կոնկրետ տարածաշրջանային, տնտեսական և մշակութային քաղաքականության վերաձևմամբ և փոխակերմամբ» (Տեր- Մաթևոսյան 43-52):

2000-ական թթ. սկզբում արդեն նկատելի դարձան արտաքին քաղաքական վերադասավորումները, որտեղ Անկարան հավակնում էր տարածաշրջանում դիրքավորվել որպես գլխավոր խաղացող, իսկ սունիի իսլամական աշխարհում՝ աներկբա առաջնորդ: Այս փոխակերպումներն առավել ակներև էին Սիրիայի հետ հարաբերություններում, որը ԱԶԿ արտաքին քաղաքական նոր դոկտրինի յուրատեսակ փորձադաշտը դարձավ (Murariu and Angliţoiu 140) :

ԱԶԿ առաջնորդները ձեռնամուխ եղան դիվանագիտական, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը՝ հիմնվելով Ջեմի և Դավութօղլուի գաղափարաբանության վրա, վերարժևորելով օսմանյան պատմական ընդհանուր անցալը և կրոնական ընդհանրությունները, որ ունեն Թուրքիան և Սիրիան:

2004 թ. հունվարին նախագահ Բաշար-ալ Ասադի[1] այցը Թուրքիա իրավմամբ կարելի է պատմական համարել. 57 տարի ընդմիջումից հետո սա Սիրիայի նախագահի առաջին պաշտոնական այցն էր Անկարա (TASAM): Որոշ փորձագետների կողմից այն աննախադեպ որակվեց, քանի որ այցի ընթացքում նախագահ Ասադը, ստորագրելով առևտրատնտեսական, մաքսային և սահմանային անցակետերի վերաբերյալ համաձայնագրեր, անուղղակիորեն ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը՝ Հաթայ նահանգով (Kaya and Yankaya 44):

Երկկողմ հարաբերությունների բարելավման համար, սակայն, անկյունաքարային դարձավ 2004 թ. դեկտեմբերին վարչապետ Էրդողանի պաշտոնական այցը Դամասկոս, քանզի այն բարձրացրեց երկկողմ հարաբերությունները որակական նոր մակարդակի: Ինչպես հայտարարեց Էրդողանը. «Սիրիայի հետ քաղաքական և տնտեսական հարաբերություններում նոր դարաշրջան սկսվեց» (Bishku 47):

Այցի ընթացքում Էրդողանը քաղաքակրթական ինքնության հռետորական հարց բարձրացրեց. «հնարավո՞ր է արդյոք սիրիացուն տարբերել թուրքից», ապա պատասխանեց, որ «ուզում է սիրիացիներին անվանել ոչ թե ընկերներ, այլ՝ եղբայրներ»՝ (Stein 14) ևս մեկ անգամ վերարժևորելով օսմանյան ընդհանուր անցյալն ու պատմական ժառանգությունը:

Այնուհետև՝ այցն ամփոփող մամուլի ասուլիսում, Թուրքիայի վարչապետն ամրագրեց. «Տարածքային վեճը և ջրի խնդիրն այլևս խոչընդոտ չեն բարիդրացիական հարաբերությունների զարգացման համար: Այսուհետ մեր նպատակը

[1] Բաշար Ալ–Ասադն իշխանության եկավ 2000-ին՝ հոր՝ Հաֆեզ Ալ–Ասադի (1971-2000 թթ.) մահից հետո՝ ինչ–որ իմաստով ժառանգական դարձնելով արդեն իսկ ավտորիտար իշխանության փոխանցման մեխանիզմը:(Մանրամասն տե՛ս Փաշայան 90):

ռազմավարական համագործակցությունն է: Մնացած խնդիրները մոռացված են...» (Akinci):

Նշենք, որ 2002-2009 թթ. երկու երկրների միջև ամենաբարձր մակարդակով իրականացվել է շուրջ 17 դիվանագիտական այց (TASAM): Այս տպավորիչ թվով դիվանագիտական այցերի կարևորությունը թերևս այն էր, որ դրանք իմիտացիոն բնույթ չէին կրում, այլ հակառակը, պատմական ու ռազմավարական նշանակություն ունեին[1]: Երկու երկրներն էլ հետամուտ էին դաշնակցային հարաբերությունների ձևավորմանը և փորձում էին համագործակցել տարածաշրջանային մի շարք հարցերում. «Թուրքիան այսուհետ կշարունակի քայլել նույն ճանապարհով (ինչ՝ Սիրիան)… կիսելով ընդհանուր ճակատագիր, պատմություն և ապագա: Մենք պատրաստվում ենք ձեռք ձեռքի տված քայլել և միասին աշխատել՝ մեր տարածաշրջանը քաղաքակրթության կենտրոն դարձնելու համար»,- վստահեցնում էր Դավութօղլուն (Schenker):

2007 թ. Թուրքիա կատարած իր հերթական այցի ընթացքում տարբեր հանդիպումների ժամանակ (այդ թվում՝ լրագրողների հետ) Սիրիայի նախագահի հայտարարությունները գրեթե մարգարեական էին, և տարիներ անց բումերանգի էֆեկտով վերադարձվեցին Սիրիային: Որպես արաբական երկրի ղեկավար՝ Ասադը լիակատար աջակցություն հայտնեց անդրսահմանային գործողությանը, որը Թուրքիան պատրաստվում էր իրականացնել Իրաքում՝ Քրդաստանի աշխատավորական կուսակցության (այսուհետ՝ PKK) դեմ պայքարի պատրվակով[2]: Նա հայտարարեց, որ սատարում է «թուրքական կառավարությանը PKK ահաբեկչության դեմ իրականացվող գործողություններում՝ որպես Թուրքիայի օրինական իրավունք, և որ ինքը կանգնած է Թուրքիայի թիկունքին, քանզի PKK նույնքան վտանգավոր է Սիրիայի համար» (TASAM): Մեկ այլ հանդիպման ժամանակ նախագահ Ասադը հաստատեց, որ «Սիրիան և Թուրքիան համագործակցում են ներդաշնակ փոխըմբռնմամբ, ինչը կարևոր է տարածաշրջանում կայունության և խաղաղության պահպանման համար, իսկ Հյուսիսային Իրաքում ստեղծվելիք անկախ քրդական պետությունը՝ Մերձավոր Արևելքի կենտրոնում տեղադրված ռումբ կլինի» (TASAM):

Ակնհայտ էր, որ Իրաքում ընթացող գործընթացները լրջորեն մտահոգում էին Սիրիայի նախագահին, իսկ 2004թ. Ղամիշլիի դեպքերից հետո մտավախություն կար, որ սիրիաբնակ քրդերը կարող են արտաքին ներգործության թիրախ դառնալ: Այս համատեքստում Թուրքիայի հետ ռազմավարական փոխգործակցությունը միանգամայն բխում էր Սիրիայի անվտանգային շահերից:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ԱՁԿ-ի՝ Սիրիայի նկատմամբ իրականացվող արտաքին քաղաքականության հիմնական միտումները գնահատելիս կարող ենք արձանագրել, որ դրանք լիովին տեղավորվում էին և՛ Իս. Ջեմի՝ Օսմանյան անցյալի և ժառանգության վերականգնման ծավալապաշտական նկրտումների ռազմավարական մոտեցումներում, և՛ Ա. Դավութօղլուի «զրո խնդիրներ» հարևանների հետ սկզբունքով

---

[1] Սիրիան և Թուրքիան կարողացան հաղթահարել 2005 թ. փետրվարին Լիբանանի վարչապետ Ռ. Հարիրի սպանության հետևանքով առաջացած լարվածությունը: Չնայած ԱՄՆ այդ սպանության մեջ մեղադրում էր Դամասկոսին և որպես դաշակից՝ ակնկալում Անկարայի աջակցությունն այս հարցում, արդուհանդերձ կարևորելով երկկողմ հարաբերությունների դժվարությամբ ձեռք բերված բարելավումը՝ Թուրքիան, հակառակը, աջակցություն ցույց տվեց Սիրիային. 2005թ. ապրիլին նախագահ Ա. Սեզերն այցելեց Դամասկոս (Hale, 152) :

[2] Խոսքը վերաբերում է 2008 թ. փետրվարի 21-ին Թուրքիայի ռազմական արշավին PKK-ի դեմ Հյուսիսային Իրաքում, որը ստացավ «Արև» (թուրք.՝ Güneş Harekatı) անվանումը: Ցամաքային հարձակմանը նախորդեց թուրքական օդուժի ռմբակոծությունները PKK-ի ճամբարների վրա, որոնք սկսվել էին 2007 թ. դեկտեմբերի 16-ից: Դա առաջին հայտարարված ցամաքային ռազմական գործողությունն էր Իրաք 2003 թ. ԱՄՆ-ի գլխավորած ներխուժումից հետո:(TurkceBilgi)

սքողված «փափուկ ուժի» գործիքակազմով ուղեկցվող բազմավեկտոր (առևտրատնտեսական, էթնիկ, կրոնական, մշակութային) քաղաքականության մեջ:

Այդուհանդերձ, մինչև «Արաբական գարնան» իրադարձությունները՝ թուրք սիրիական հարաբերությունները կարելի էր բնութագրել որպես զարգացող ռազմավարական համագործակցություն:

Քրդական հավակնությունները սիրիական ճգնաժամում. դեպի ինքնավարություն

Սիրիայում ներքաղաքական ճգնաժամի խորացմանը համընթաց, աշխարհաքաղաքական, տնտեսական և ռազմական շահերի բախման խաչմերուկում Անկարան փորձեց դուրս գալ տարածաշրջանում ծավալվող գործընթացների նկատմամբ դիտորդի կարգավիճակից և ակտիվ գործունեություն ստանձնել: Սիրիական ճգնաժամի առաջացման սկզբնափուլում վարչապետ Էրդողանը, օգտագործելով նաև անձնական մտերմությունը, փորձեց բանակցել նախագահ Բ. Ասադի հետ՝ «Մուսուլման եղբայրներ» իսլամական կազմակերպության ակտիվիստներին (Սիրիայում գործում էին Թուրքիայի անմիջական հովանավորությամբ, և ԱԶԿ «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման կարևոր բաղադրիչներից էին) Սիրիայի կառավարող իշխանական վերնախավում տեղ հատկացնելու հարցի շուրջ (Salt 88):

Անարդյունք քննարկումներից հետո, երբ Ասադը հրաժարվեց Սիրիայի կառավարման համակարգում որևէ այլ էթնոդավանական միավոր ներառել, Թուրքիան բացահայտորեն ներքաշվեց Սիրիայում ծավալվող ներքաղաքական գործընթացներում (Demirtaş 116):

Կորցնելով Սիրիայի նախագահ Ասադի գործողությունների վերահսկողությունը, ինչն ԱԶԿ առաջնորդներին հնարավորություն կընձեռեր զարգացնել իրենց քաղաքական հետաքրքրությունները Սիրիայում, նրանք շրջվեցին դեպի սիրիական ընդդիմություն՝ Ասադի վարչակարգի տապալման հստակ մտադրությամբ: Անկարան իր տարածքում հիմնեց Սիրիայի Ազատ բանակի ճամբարներ՝ ռազմատեխնիկական, նյութական և ֆինանսական աջակցություն հատկացնելով ընդդիմությանը (Demirtaş 117):

Սիրիայի քրդերը, որոնք կազմում են բնակչության շուրջ 10 տոկոսը, հիմնականում կենտրոնացված բնակվում են երկրի հյուսիսարևելյան հատվածում՝ թուրք-սիրիական սահմանի երկայնքով, ԱԶԿ-ի՝ Ասադի վարչակարգի տապալման ծրագրերում որպես բնակչության ամենախոցելի խավ, առաջնայնություն ձեռք բերեցին: Քրդական գործոնի դերը սիրիական ճգնաժամի ծավալմանը զուգընթաց կտրուկ աճեց: Դա պայմանավորված էր այն ակնհայտ իրողությամբ, որ բացի Թուրքիայից, քրդերով սկսեցին հետաքրքրվել և՛ սիրիական իշխանությունները, և ընդդիմությունը, և՛ ներտարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժային կենտրոնները՝ փորձելով քրդական հոծ համայնքի հնարավորությունները ծառայեցնել ի նպաստ իրենց քաղաքական շահերի:

Միևնույն ժամանակ քրդերը, օգտվելով երկրում առկա ներքաղաքական լարվածությունից, խիզախեցին օգտագործել «բարենպաստ» իրավիճակը հօգուտ իրենց ազգային տեսլականի:

2012 թ. մարտին Սիրիական Քրդստանի Ժողովրդական խորհուրդը, որը կազմավորվել էր Ժողովրդավարական միություն կուսակցության[1] (այսուհետ՝ PYD) և

[1] Ժողովրդավարական միություն կուսակցությունը առավել հայտնի է PYD հապավմամբ, ըստ թուրքական աղբյուրների՝ PKK սիրիական ստորաբաժանումն է՝ Սալիհ Մուսլիմի գլխավորությամբ: (https://pydrojava.org/english/)

Քրդական Ազգային խորհրդի[1] համագործակցությամբ, հայտարարեց ինքնավար «Արևմտյան Քրդստանի» ստեղծման մասին՝ Աֆրին մայրաքաղաքով (REGNUM):

Քրդերի՝ ինքնավարության հավակնությունն Անկարայի համար լրջագույն մարտահրավեր էր. ևս մեկ քրդական ինքնավար կազմավորումն իր սահմանագծին խիստ անհանգստացրեց ԱԶԿ իշխանություններին, որոնք համակարգեցին ռազմաքաղաքական ողջ ներուժը և գործիքակազմը՝ կազմալուծելու սիրական քրդերի համախմբման գործընթացը և փորձելու միավորել նրանց Սիրիայի Ազգային խորհրդին:

Սիրիական ճգնաժամի սկզբնափուլում Միացյալ Նահանգները ևս ակտիվ բանակցում էին Քրդական Ազգային խորհրդի առաջնորդների հետ, հետևողական քայլեր ձեռնարկում քրդերին սիրիական արմատական ընդդիմության հետ մերձեցնելու համար (Backgrounder): Հետագայում՝ Իսլամական պետության (այսուհետ՝ ԻՊ)՝ Սիրիայում ծավալվելման և ներաքաղաղաքական ճգնաժամի խորացմանը զուգընթաց, քրդական ուժերի կարևորությունն ԱՄՆ-ի համար զգալիորեն աճեց՝ դառնալով թուրք-ամերիկյան հարաբերությունների լրջագույն խնդիրներից մեկը:

2012 թ. հուլիսին Կահիրեում տեղի ունեցավ Սիրիայի Ազգային խորհրդի նախաձեռնած համաժողովը, որի օրակարգային հարցերից էր նաև քրդերին ուղղորդելը՝ միանալու սիրիական ընդդիմությանը: Սակայն սիրիական ընդդիմությունը մերժեց քրդերի պահանջը՝ տրամադրել իրենց վարչական ինքնավարության կարգավիճակ հետասադյան Սիրիայում: Արդյունքում քրդական պատվիրակությունը վեճով ու ծեծկռտուքով, սակայն ձեռնունայն լքեց բանակցությունները (REUTERS):

Ակնհայտ էր, որ ինքավարություն ունենալու քրդական հավակնությունները ներսիրիական զարգացումներում անհամատեղելի էին ճգնաժամի մեջ ներքաշված և՛ ներքին, և՛ արտաքին խաղացողների շահերի ու հետաքրքրությունների հետ:

Այդ իսկ պատճառով Սիրիայի նախագահ Բ. Ասադի որոշումը, ըստ որի՝ սիրիական բանակը լքեց քրդաբնակ տարածքները՝ փաստացի իշխանությունը հանձնելով քրդական ուժերին (Иванов 39), թեև հարկադրված, բայց քաղաքական արդյունավետ հաշվարկ էր: Այն սիրիական ճգնաժամի ընթացքում թերևս ամենահաջողված քայլերից էր: Քրդերի վերահսկողության տակ անցան տեղական կառավարման բոլոր էշելոնները՝ Թուրքիային սահմանակից Քոբանի, Աֆրին, Դարիք, Ամուդա և Ժինդիրես բնակավայրերում, որտեղ քրդերն աստիճանաբար ձևավորեցին ինքնիշխան տեղական միավորներ՝ ինքնուրույն իրականացնելով սեփական տարածքների կառավարումը (Crisis Group Middle East Report 3):

Ի հակադրություն սիրիական ընդդիմությանն աջակցելու Անկարայի նախաձեռնություններին՝ Դամասկոսը, որպես հակազդեցության լծակ, վերագործարկեց «քրդական խաղաքարտը»՝ կրկին վերադառնալով իր վաղեմի «գործընկեր» PKK- ին: Սիրիական իշխանությունների և PKK-ի միջև դեռևս 1998 թ. ընդհատված փոխգործակցությունը վերականգնվեց 2012 թ. մարտի 17-ին Քամըշլըում՝ սիրիական հատուկ ծառայությունների և PKK-ի ռազմական ղեկավարության միջև համաձայնագրով (Балмасов)[2]:

---

[1] Քրդական ազգային խորհուրդը, որը ձևավորվել էր դեռեւս 2011 թ. հոկտեմբերին, 16 ռազմաքաղաքական խմբավորումներ միավորող կառույց էր, որը հովանավորվում էր Մասուդ Բարզանու կողմից: Ենթադրվում էր, որ այն պետք է որոշակիորեն վերահսկելի լիներ թուրքական հատուկ ծառայությունների կողմից (Backgrounder):

[2] Ըստ այդ համաձայնագրի՝ սիրիական կողմը PKK–ին խոստացել էր համակողմանի ռազմական և ֆինանսական աջակցություն՝ Թուրքիայի տարածքում, մասնավորապես սիրիական փախստականների ճամբարներում, ահաբեկչական գործողությունների իրականացման դիմաց (Балмасов) :

Ակնհայտ է, որ Դամասկոսին հետագայում հաջողվեց ազատագրել և պաշտպանել երկրի հյուսիսարևելյան շրջանները ԻՊ գրոհայիններից՝ մասամբ նաև PKK-ի և նրա տեղային կառույցի՝ Ժողովրդավարական միություն կուսակցության ու նրա զինյալ ստորաբաժանման՝ Ժողովրդի պաշտպանության ջոկատների (այսուհետ՝ YPG) ռազմական ակտիվության արդյունքում:

2014 թ. հունվարին Սիրիայի քրդերը ինքնավար շրջաններ (կանտոն) հռչակեցին նաև Քոբանին (արաբ. Այն ալ-Արաբ) և Ջիզրեն՝ (Milliyet) հեռահար նպատակ ունենալով, գետանցելով Եփրատը, միավորել դեռևս 2012 թ. ինքնավարություն հռչակած Աֆրինին: Սակայն 2014 թ. սեպտեմբերի 19-ին Քոբանի պաշարումը ԻՊ գրոհայինների կողմից (Գրիգորյան 162-164) շրջադարձային նշանակություն ունեցավ քրդական կանտոնների շուրջ ընթացող զարգացումներում: Այդուհանդերձ, PYD-ի համար կանտոնների՝ աշխարհագրորեն մասնատվածությունը և բնակչության ոչ միատարր կազմը լրջագույն խնդիրներ էին: Առաջինը լուծելու համար քրդերը ստրատեգիական ճանապարհներ էին փնտրում. Քոբանի - Ջեզիրե կանտոնները կամրջելու համար ռազմավարական թիրախ էր սահմանվել Թել Աբյադը, որը PYD/ YPG կարողացան գրավել 2015 թ. հունիսին, իսկ Քոբանի - Աֆրինը միմյանց կապելու համար անհրաժեշտ էր գրավել Ազազը[1]: Երկրորդ խնդիրը լուծելու համար քրդական ուժերը փորձեցին բարելավել հարաբերությունները տեղաբնիկ արաբների և թուրքոմանների հետ (Kerman and Efegil 171):

Սիրիայում քրդական շարժումներն առավել վերահսկելի դարձնելու և PKK-ի ազդեցությունը թուլացնելու նպատակով Թուրքիան ակտիվացրեց իր շփումները Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության նախագահ Մասուդ Բարզանու հետ՝ սիրիական ընդդիմությանը վերջինիս համագործակցության ականկալիքով: Սակայն Անկարայի ջանքերը (մասնավորապես՝ վարչապետ Դավութօղլուի, ինչն էլ որոշ փորձագետների կարծիքով դարձավ Էրդողանի հետ հակասություններից մեկը) ապարդյուն անցան: Սիրիայի տարածքում դե ֆակտո քրդական ինքնավարության կազմավորման իրատեսական հնարավորությունը հետաքրքրեց Իրաքի Քրդստանի առաջնորդին (Yeşil Gazete), քանի որ դա կարող էր սեփական էներգառեսուրսների համար դեպի Միջերկրական ծով այլընտրանքային ճանապարհի հեռանկար բացել:

2016 թ. գարնանը արդեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ քրդերը վերահսկում էին Սիրիայի հյուսիսային՝ Թուրքիային սահմանակից շրջանների հիմնական մասը՝ բացառությամբ Ազազի շրջանի, որտեղ ծավալվել էին Թուրքիայի հովանավորությամբ գործող ընդդիմադիր խմբավորումները, այդ թվում նաև՝ «Ջաբհաթ Ալ-Նուսրայի ճակատը»:

Մարտի 17-ին քրդական ուժերը PYD գլխավորությամբ իրենց վերահսկողության տակ գտնվող շրջաններում հայտարարեցին «Սիրիայի հյուսիսային դաշնային ինքնավար շրջան»[2] կազմավորելու մասին, որն անվանեցին «Ռոժավա» (քրդ.՝

---

[1] Սիրիական կառավարական ուժերը և PYD փորձեցին առաջ շարժվել դեպի Ազազ՝ ազատագրելու այն, սակայն անարդյունք: Ազազի և Քիլիսի միջև ընկած հատվածում 10 -ից ավել փախստականների ճամբար կա: Եվ թերևս բացի աշխարհագրական ռազմավարական դիրքից՝ այս իրողությամբ է պայմանավորված Ազազի կարևորությունը Թուրքիայի համար: (BBC News)

[2] Մարտի 17-ին 30 տարաբնույթ քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների մասնակցությամբ Ռումեյլան քաղաքում (Հասեքե նահանգ), անցկացված համագումարն ուներ «Ժողովրդավար դաշնային Սիրիա՝ ժողովուրդներ համատեղ կյանքի և եղբայրության երաշխիք», որին մասնակցել են 200 պատվիրակներ՝ քրդեր, արաբներ, ասորիներ, չերքեզներ,հայեր: Ամփոփելով համագումարի արդյունքները՝ «Ռոժավայի» արտաքին գործերի պաշտոնական ներկայացուցիչ Իդրիս Նաասան հայտարարել է, որ «քրդերը Սիրիայում անջատողական մտադրություններ չունեն և իրենց վերահսկողության տակ գտվող տարածքները շարունակում են մնալ Սիրիայի աշխարհագրական տարածքի մի անբաժանելի մասը: Ռոժավայի վարչակազմի կառավարման շրջանակը կներառի տնտեսական,

արևմուտք) (FRANCE): Ընդհանրապես, Սիրիայում ճգնաժամի դեռևս սկզբնափուլում PYD-ն թե՛ քրդական հանրույթում, թե՛ միջազգային քննարկումներում սկսեց շահարկել Սիրիայի տարածքում քրդական ժողովրդավարական ինքնավարության (երբեմն նաև՝ համադաշնության) գաղափարը, որը PKK-ի վերջին շրջանի գաղափարախոսության տեսլականն էր (Kamran 2):

Պետք է նշել սակայն, որ քրդերի ժամանակավոր ձեռքբերումների հետնաբեմում առկա էին խորքային հակասություններ և՛ արտաքին կողմնորոշման, և՛ մարտավարական ծրագրերի, և՛ ապագայի տեսլականի շուրջ: Այս հակասությունները լրջագույն խոչընդոտ էին ազգային համախմբման միասնական օրակարգ ձևավորելու համար, ինչը հերթական անգամ հնարավորություն տվեց արտաքին ուժերին՝ խաղարկել քրդական գործոնն իրենց ռազմավարական հետաքրքրություններում[1] :

Քրդական ինքնավարության հռչակումը չընդունվեց նաև Ասադի վարչակարգի կողմից: 2016 թ. օգոստոսին Ժողովրդի պաշտպանության ջոկատների (YPG) հրամանատարությունը հայտնեց, որ սիրիական ճգնաժամի ընթացքում առաջին անգամ Հասեքեում կառավարական օդուժը ռմբակոծել է քրդերի դիրքերը (DW): Կառավարական ուժերի և քրդերի միջև բախումները ցույց տվեցին, որ չնայած ԻՊ դեմ պայքարի և ճգնաժամի հաղթահարման ընդհանուր նպատակերին՝ կողմերի միջև արմատական հակասությունները պահպանվում էին: Մասնավորապես՝ Սիրիայի կառավարությունը փորձեց կանխել քրդական ուժերի բացարձակ ինքնուրույն գործելաոճը, իսկ քրդերն իրենց հերթին՝ լիակատար վերահսկողություն սահմանել իրենց վերահսկողության տակ գտնվող շրջաններում:

Սիրիայի կառավարական բանակի և քրդական ուժերի միջև վերջնական հրադադար հաստատվեց միայն օգոստոսի 24-ին, երբ թուրքական զինուժը Սիրիայի տարածքում սկսեց «Եփրատի վահան» ռազմական գործողությունը:

Թուրքիայի ռազմական ներխուժումները Սիրիա. «Եփրատի վահան»՝ «փափուկ ուժի» փոխակերպումը «կոշտի»

Քրդական ընդլայնվող հավակնություններին ի պատասխան՝ 2015 թ. հունիսի 29-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում հաստատվեց, որ «Թուրքիայի համար Եփրատ գետը «կարմիր գիծ է», և եթե քրդական ուժերը փորձեն հատել գետը և միացնել իրենց վերահսկողության տակ գտնվող երկու կանտոնները՝ Աֆրինը և Քոբանիից արևմուտք ընկած տարածքները, ապա թուրքական զինուժը կմիջամտի» (Çelikaslan 378): Ակտիվորեն շրջանառության մեջ դրվեց Սիրիայի հյուսիսում «անվտանգության գոտի» ստեղծելու հրամայականը:

2016 թ. հուլիսի 15-ի Թուրքիայում ռազմական հեղաշրջման անհաջող փորձ իրականացվեց, ինչի արդյունքում հիմնովին փոխվեց որոշումների կայացման և ներպետական ուժային կենտրոնների հարաբերակցությունը (Kaynar): Զինվորականության դոմինանտությամբ անվտանգային քաղաքականության որոշումների կայացման ու իրագործման նախկին ռազմաբյուրոկրատական համակարգը կորցրեց իր ազդեցությունն ու լծակները՝ հօգուտ նախագահ Էրդողանի հեգեմոն ու անվիճարկելի անձնիշխանության: Ազգային անվտանգության խորհուրդն այդուհետ վերածվեց Էրդողանի որոշումները վավերացնող կառույցի: Կարևոր

պաշտպանական և անվտանգության հարցեր… Իսկ Սիրիան կունենա ապակենտրոնացված, բազմակարծիք ժողովրդավարական կառավարման մոդել» (Иванов 42)

[1] Թուրքիայի հատուկ ծառայությունները «Սալլահ ադ Դինի թռռներ» խորհրդանշական անվամբ քրդերի զինված խմբավորում կազմավորեցին, որը միացավ Անկարայի հովանավորյալ Սիրիական Ազատ բանակին : Այս խմբավորմանը հաջողվեց նույնիսկ Ջարաբլուս -Ազազ հատվածում ընկած որոշ գյուղեր վերահսկողության տակ վերցնել:(Иванов 44)

առաջնահերթություններից մեկը նաև բանակի «առաքելությունների» շրջանակի վերասահմանումն էր (Հովսեփյան 34-37):

Չբավարարվելով Ա. Դավութօղլուի արտաքին «փափուկ ուժի» քաղաքականության «ձեռքբերումներով», հաստատելով որոշումների կայացման բացարձակ մենիշխանություն՝ Ռ. Էրդողանն անցավ «կոշտ ուժի» կիրառման՝ հաստատելու տարածաշրջանում գլխավոր խաղացողի Թուրքիայի գործառույթն ու «ապահովելու» Թուրքիայի տարածքային անվտանգությունը:

«Քրդական սպառնալիքը» Թուրքիայի համար ավելի շոշափելի դարձավ 2015-2016 թթ., երբ «Ժողովրդի պաշտպանության ջոկատները» (YPG), ԱՄՆ գլխավորած միջազգային դաշինքի աջակցությամբ ռազմական հաջողություններ արձանագրեցին ԻՊ-ի դեմ պայքարում՝ ազատագրելով Թել Աբյադ (այնուհետև՝ խախտելով Անկարայի սահմանած «կարմիր գիծը»՝ Եփրատը), Մանբիջ բնակավայրերը՝ նպատակ ունենալով հասնել Ջարաբլուս: Հաշվի առնելով այս տարածքների, ինչպես նաև Ջարաբլուս-Ազազ ճանապարհի ռազմավարական նշանակությունը՝ Թուրքիայի համար հրամայական դարձավ կանխել քրդերի ռազմական առաջխաղացումը:

2016 թ. օգոստոսի 20-ին Գազիանթեփեում տեղի ունեցած ահաբեկչությունը (UNISEF), որի պատասխանատվությունը Թուրքիան դրեց ԻՊ-ի վրա, ճիշտ ժամանակին էր և հարմար պատրվակ էր՝ ռազմական գործողության մեկնարկի և միջազգային հանրության աջակցությունը ստանալու համար:

Հեղաշրջման փորձից հազիվ մեկ ամիս անց՝ 2016 թ. օգոստոսի 24-ին, Թուրքիան հայտարարեց, որ օգտվում է ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածում ամրագրված ինքնապաշտպանության իրավունքից և նախաձեռնեց «Եփրատի վահան» ռազմական ներխուժումը Սիրիա (Kasapoğlu and Ülgen 2):

Անդրադառնալով այդ ներխուժման մեկնարկին՝ նշենք, որ Էրդողանական քարոզչամեքենան երկար ժամանակ հիմնավոր նախապատրաստվում էր դրան: Ժամանակ առ ժամանակ լուրեր էին տարածվում ԻՊ վերահսկողության տակ գտնող սահմանամերձ շրջաններից թուրքական բնակավայրերի հրթիռակոծման, հրետակոծման, խաղաղ բնակչության շրջանում եղած զոհերի մասին՝ հասունացնելով Սիրիայի հյուսիս ներխուժելու և «անվտանգության գոտի» ձևավորելու Թուրքիայի «օրինական իրավունքը» (Kasapoğlu and Ülgen):

Թուրքական զինուժը դեռևս օգոստոսի 22-ին՝ «Եփրատի վահան» ներխուժման մեկնարկից առաջ, սկսեց ռմբակոծել Մանբիջում քրդերի դիրքերը, իսկ արդեն օգոստոսի 24-ին Թուրքիայի ԶՈՒ հատուկ նշանակության ստորաբաժանումները օդուժի աջակցությամբ Ջարաբլուսի շրջանում ցամաքային գործողություններ սկսեցին[1]:

Հիմնավորելով ռազմական գործողության անհրաժեշտությունը՝ Էրդողանը հուլիսի 26-ի ԹԱՄԺ-ի իր ելույթում հայտարարեց, որ պատրաստվում է «արմատախիլ անել ահաբեկչությունը Սիրիայից» (Bouvier): Առանձնակի շեշտադրեց քրդական «ահաբեկչության» վտանգավորությունը Թուրքիայի անվտանգային միջավայրի համար՝ հայտարարելով, որ նպատակ ունի կանգնեցնել «քրդերի առաջխաղացումն ու հավակնությունները, թույլ չտալ, որ Սիրիայի տարածքում առաջացած քրդական երկու միավորումներին իրար կապող միջանցք ստեղծվի, և դրանք կարողանան միավորվել» (Bouvier):

Այդուհանդերձ, միջազգային ասպարեզում «խաղաղարարի» իր վարկանիշն ամրապնդելու, հակաահաբեկչական պայքարում առաջամարտիկ ներկայանալու համար Էրդողանն ամրագրեց ռազմական գործողության հետևյալ հիմնավորումները.

---

[1] «Եփրատի վահան» և «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունների մանրամասները տե՛ս Հ. Գաբրիելյան Թուրքիայի «Եփրատի վահան» գործողությունը» և«Ձիթենու ճյուղ» գործողությունը և Թուրքիայի հեռահար նպատակները» վերլուծություններում: (Գաբրիելյան)

- ապահովել Թուրքիայի սահմանը և չեզոքացնել ԻՊ սպառնալիքներն ու հարձակումները,
- ապահովել սիրիացի փախստականների[1] իրենց երկիր վերադառնալու հնարավորությունը,
- ապահովել Սիրիայի հյուսիսային շրջանների անվտանգությունը:

«Եփրատի վահան» գործողության ժամանակ Անկարան փորձարկեց սեփական արտադրության Բայրաքթար մարտական անօդաչու թռչող սարքերը (Kasapoğlu and Ülgen 9), որոնք ցույց տվեցին իրենց արդյունավետությունը լեռնային բարդ ռելիեֆով տեղանքում՝ մեծապես ազդելով մարտական գործողությունների ընթացքի վրա: Ակնհայտ է, որ մարտունակ և լավ զինված քրդական ջոկատների նկատմամբ միայն ցամաքային գործողություններով հաջողության հասնել հնարավոր չէր լինի, չնայած որ Թուրքիան ռազմական գործողություններում ներգրավել էր PKK-ի դեմ պայքարի փորձառու ստորաբաժանումներ:

2017 թ. մարտի 29-ի Թուրքիայի ԱԱԽ հայտարարեց գործողությունների բարեհաջող ավարտի մասին՝ շեշտելով, որ այդուհանդերձ, թուրքական զորամիավորումները կմնան Սիրիայում՝ «դիմակայելու» քրդական ահաբեկչությանը Աֆրինում և Մանբիջում՝ (SÖZCÜ): Այս հայտարարությամբ Անկարան նախանշեց իր հավակնությունները:

Ընդհանրացնելով միջազգային արձագանքը Թուրքիայի ռազմական ներխուժման վերաբերյալ՝ կարող ենք արձանագրել՝ Միացյալ Նահանգները արձագանքեց միայն, երբ բախումներ սկսվեցին թուրքական զորամիավորումների և իրենց կողմից հովանավորվող քրդական ջոկատների միջև՝ հայտարարելով, որ այդ գործողություններն անընդունելի են և պետք է անհապաղ դադարեցվեն (GlobalSecurity.org): Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա կարծում ենք որ, վերջինիս անմիջական ռազմական ներգրավումը սիրիական հակամարտությունում մեծապես նպաստեց Թուրքիայի նախահարձակ գործողություններին:

Քրդական հարցում Իրանն ավանդաբար կիրառել է երկակի ստանդարտների քաղաքականություն. երկրի ներսում ծայրահեղ անհանդուրժողականությամբ վերաբերելով քրդական ակտիվությանը՝ Իրանը մշտապես օգտագործել է քրդական խաղաքարտը հարևան երկրներում՝ այն ծառայեցնելով ի նպաստ իր քաղաքական շահերի (Նավասարդյան): Այդուհանդերձ, Իրանը սիրիական ճգնաժամի խորացմանը զուգընթաց սկսեց միջնորդավորված, իսկ երբեմն նաև ուղղակի սատարել քրդերին՝ որպես Բաշար Ալ Ասադի վարչակարգի պահպանման երաշխիքներից մեկի:

Իրականում դժվար է պատկերացնել, որ Անկարան Սիրիա ռազմական ներխուժումն իրականացրեց առանց նախնական բազմակողմ համաձայնության, ինչի մասին վկայում է այն փաստը, որ ո՛չ սիրիական կառավարական ուժերը, ո՛չ ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կոալիցիոն ուժերը և ո՛չ էլ ռուսական զինուժը ոչինչ չարեցին ներխուժումը կանգնեցնելու համար՝ քրդական ջոկատներին թողնելով թուրքական ագրեսիայի դեմ հանդիման:

«Ձիթենու ճյուղ» ռազմական ներխուժումը. նեոօսմանականությունն իրողություն

2018թ. հունվարի 20-ին Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբը հայտարարեց Սիրիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Աֆրինի շրջանում «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության մեկնարկի մասին: Այս ներխուժմանը նախորդեց 2018թ. հունվարի 15-ին Վաշինգտոնի հայտարարությունը՝ իր հովանավորյալ արաբ և

[1] Սիրիական ճգնաժամի արդյունքում ավելի քան 5.5 միլիոն մարդ բռնի տեղահանվել և ապաստան են գտել հարևան երկրներում, որից 3մլն 400 հազարը Թուրքիայում (Հարությունյան):

քուրդ ջոկատայիններից 30000-ոց սահմանապահ կորպուս ձևավորվելու և Սիրիայի հյուսիսում տեղակայելու մտադրության մասին (Malbrunot):

Անկարան ընդվզեց այս նախաձեռնության դեմ՝ հակադարձելով, որ այն անմիջականորեն սպառնում է իր սահմանների անվտանգությանը, քանի որ այդ սահմանապահ կորպուսում հիմանականում ներգրավված կլինեն YPG «ահաբեկիչներ»: Թերևս սա դարձավ Սիրիա երկրորդ ռազմական ներխուժման «շարժառիթը»՝ շղարշելով Աֆրինը վերահսկողության տակ առնելու թուրքական ագրեսիայի ծավալապաշտական նկրտումները: «Ձիթենու ճյուղ» արշավի անհրաժեշտությունը հերթական անգամ հիմանվորվեց ահաբեկչության, մասնավորապես՝ «քրդական»՝ PKK/PYD/YPG, պայքարի անհետաձգելիությամբ:

Կարծում ենք, որ մինչ այդ տեղի ունեցած մեկ այլ կարևոր իրադարձություն ևս իր անմիջական ազդեցությունն ունեցավ՝ երկրորդ ներխուժումը նախաձեռնելու Թուրքիայի որոշման վրա: Դա 2017թ. սեպտեմբերի 25-ի Իրաքի Քրդստանի անկախության հանրաքվեն է, որը լրջորեն անհանգստացրեց Անկարային, քանի որ քրդական հավակնություններն արդեն ավելի շոշափելի էին՝ վտանգելով Թուրքիայի անվտանգային միջավայրը: Էներգառեսուրսներով հարուստ երկու քրդական ինքնավարության առկայությունն իր սահմանագծին արդեն իսկ մարտահրավեր էր Թուրքային, իսկ անկախության կայացման դեպքում դրանք մի քանի անգամ սաստկանում էին: Անկարայի համար հրամայական էր խափանել քրդական ծրագրերը, կասեցնել միավորման և դեպի Միջերկրական ծով ելքի հնարավորությունը: Մյուս կողմից՝ արտաքին ուժային խաղացողների ակտիվ ու ուղղակի ներգրավումն ինչպես իրաքյան, այնպես էլ սիրիական ռազմաքաղաքական գործընթացներում էականորեն մեծացնում էր Անկարայի համար անվտանգային միջավայրի խոցելիությունը:

Անդրադառնալով Աֆրինի ընտրությանը՝ նշենք, որ Անկարան այն համարում է իր բնական տարածք, ինչպես հարևան Հաթայ նահանգը (Ալեքսանդրետի սանջակ), իսկ Աֆրինի զավթումը լիովին տեղավորվում է օսմանյան տիտղոսակիր ազգի և իր վասալային վիլայեթների վերամիավորման ծավալապաշտական ընկալումներին:

Հաշվի առնելով Աֆրինի աշխարհագրական առանձնահատկությունները՝ ռազմական գործողությունն իրականացրին թուրքական ռազմաօդային ուժերը (Թուրքիան կենտրոնացրել էր աննախադեպ՝ թվով 72 միավոր F-16 և F-4 մարտական ինքնաթիռներ (Dönmez)) և Անկարայի հովանավորությամբ գործող սիրիական ընդդիմադիր ծայրահեղական կազմավորումները (Սուլթան Մուրադ, Ֆեյլաք ալ-Շամ, Ֆիրքաթ ալ Համզա, Ալ-Ջաբբա ալ-Շամիյա):

«Ձիթենու ճյուղ» ռազմական ներխուժումն ավարտվեց 2018 թ. մարտի 18-ին՝ քրդական ուժերի ծանր պարտությամբ:

Աֆրինի գրավումը հնարավորություն տվեց Թուրքիային վերահսկողություն սահմանել այդ տարածաշրջանի վրա, արևմտյան «գործընկերներին» ցույց տալ իր իրական հնարավորություններն ու հավակնությունները և ապահովել իր ձայնի որոշիչ իրավունքը Սիրիայի ապագայի շուրջ բանակցությունների սեղանին: Նախագահ Էրդողանն այս գործողության ռազմավարական նշանակությունը նույնիսկ համեմատեց Դարդանելի ճակատամարտի հետ՝ հայտարարելով. «Նախկինում մենք դաս տվեցինք նրանց, ովքեր փորձում էին մեզ հաղթել Գալիպոլիում: Այսօր մենք նույնն ենք անում նրանց հետ, ովքեր կասկածի տակ են դնում մեր անկախությունն ու ապագան՝ փորձելով մեր սահմաններին ահաբեկչական պետություն ստեղծել» (YeniBirlik):

Հետևելով Աֆրինի շուրջ զարգացումներին՝ ակնհայտ է դառնում, որ Թուրքիան չի պատրաստվում այն վերադարձնել Սիրիային: 2018 թ. վերջից արդեն Աֆրինը կառավարվում է թուրքական օկուպացիոն վարչակազմի և սուննի իսլամիստական խմբավորումների կոալիցիայի կողմից (Schmidinger 101-103): Քուրդ բնակչության տեղահանմանը զուգահեռ (շուրջ 350.000 (Von Hein)՝ Թուրքիան կազմակերպեց

զանգվածային վերաբնակեցում, որոնց մեծ մասը արաբ ջիհադիստներ են, շատերն էլ՝ օտարերկրյա վարձկաններ, նրանց ընտանիքները (ներառյալ ստրուկներ)՝ Ղուտայից, Դեյր Էզ Զորից և Հալեպից՝ տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը վերաձևավորելու հստակ մտադրությամբ: Աֆրինից սկսեցին լուրեր տարածվել՝ տեղաբնիկ քրիստոնյա և եզդի բնակչության բռնի դավանափոխության, առևանգումների, արտադատական մահապատիժների, ինչպես նաև համատարած ավերածությունների և թալանի մասին (Schmidinger):

Աֆրինի նկատմամբ Թուրքիայի երկարաժամկետ ծրագրերի մասին են վկայում նաև տեղական ինքնակառավարման մարմիններում թուրքական մոդելի ներդրումը, կրոնական էքսպանսիան, ամենուր կախված թուրքական դրոշներն ու Էրդողանի նկարները թուրքական կրթական ծրագրերը ուսումնական բոլոր հաստատություններում (Schmidinger 109):

Անդրադառնալով «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության միջազգային գնահատականներին՝ փաստում ենք, որ թեև սկզբնական շրջանում թե՛ Միացյալ Նահանգները, թե՛ Ռուսաստանն ու Իրանը, որոնք 2017 թ. հունվարի 23-ից համագործակցում էին Թուրքիայի հետ սիրիական ճգնաժամի կարգավորման Աստանայի ձևաչափում, դատապարտեցին Աֆրինի գրավումը և նույնիսկ կոչ արեցին այն վերադարձնել Սիրիային՝ ստանալով ԱԶԿ իշխող վերնախավի կոշտ (երբեմն նաև՝ հեգնական) պատասխանները (Dünya Gazetesi), հարմարվեցին տարածաշրջանային նոր իրողություններին՝ Թուրքիայի (Էրդողանի) ռազմավարական կարևորությունը վեր դասելով հարյուրհազարավոր մարդկանց կյանքերից և խեղված ճակատագրերից:

«Խաղաղության աղբյուր». ռազմական և ռազմավարական հաջողությունների ամրագրում

2019 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարեց Սիրիա երրորդ՝ «Խաղաղության աղբյուր» ռազմական գործողություն սկսելու մասին: Այն հերթական անգամ իրականացվեց Թուրքիայի ռազմաօդային ուժերի և վերջինիս հովանավորությամբ գործող Սիրիայի Ազգային բանակի ու այլ իսլամիստական զինված խմբավորումների համատեղ ուժերով:

Եվ հերթական անգամ թիրախ հայտարարվեց PKK-ն և դրան փոխկապակցված /PYD/YPG քրդական «ահաբեկչությունը»: Որպես ռազմական ներխուժման անհրաժեշտության հիմնավորում՝ այս անգամ առաջ քաշվեց Թուրքիայի սահմանամերձ բնակավարերում հանգրվանած 3մլն 400 հազար փախստականների Սիրիա վերադարձի հնարավորության ապահովումը և «անվտանգ գոտի» ստեղծելու անհետաձգելիությունը (Sabuncuoğlu):

«Խաղաղության աղբյուր» գործողության ծրագրման փուլում ԱՄՆ-ը փորձեց կանխել կամ գոնե հետաձգել թուրքական ռազմական ներխուժումը՝ (միգուցե նաև հաշվի առնելով նախկին երկու ներխուժման ծանր հետևանքները քրդական ուժերի համար) «անվտանգության գոտու» ստեղծման շուրջ Թուքիայի հետ օգոստոսի սկզբին համաձայնագիր կնքելով, որը նախատեսում էր PYD/YPG անձնակազմի և զինտեխնիկայի դուրսբերում թուրքական սահմանից (Dadouch): Մինչ այդ՝ 2018թ. հունիսի 5-ին, Թուրքիային հաջողվեց քրդերին ստիպել զիջել նաև Մանբիջը: Քրդական զինված ջոկատները լքեցին քաղաքը՝ համաձայն Մանբիջի նկատմամբ վերահսկողության վերաբերյալ ամերիկաթուրքական պայմանավորվածության:

Մինչ այդ ԱՄՆ պետքարտուղարությունը, մեղմելու համար Թուրքիայի հետ հարաբերություններում PYD/YPG աջակցելու արդյունքում առաջացած լարվածությունը, 2018 թ նոյեմբերի 6-ին պաշտոնապես հայտարարեց, որ «պարգևատրում» է սահմանել PKK երեք առաջնորդների՝ Մուրադ Քարայըլանի (5 մլն ԱՄՆ դոլլար), Ջեմիլ Բայիքի (4 ԱՄՆ դոլլար) և Դուրան Քալքանի (3 մլն ԱՄՆ դոլլար) վերաբերյալ որևէ տեղեկություն հայտնելու դիմաց (Koru): Սակայն համաձայնագրի

մեջ, ինչպես հետագայում պարզվեց, կային չհստակեցված և վիճելի կետեր, ինչի արդյունքում այն իրականություն չդարձավ: Անորոշությունը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև ԱՄՆ նախագահ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ը դուրս է բերում իր զինված ստորաբաժանումները Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններից: Այս հակասական որոշումը հնարավորություն տվեց Թուրքիային սկսել իր ռազմական ներխուժումը:

Ռազմական ներխուժումն «ազդարարվեց» նախագահ Էրդողանի թվիթերյան գրառմամբ (Sabuncuoğlu):

Չնայած այս ռազմական արշավի հիմնական նպատակներից մեկը հայտարարվեց սիրիացի փախստականների վերադարձի հնարավորության ապահովումը, Մարդու իրավունքների սիրիական դիտորդական կենտրոնի տվյալներով՝ «Խաղաղության աղբյուր» գործողության ընթացքում շուրջ 300 հազար մարդ (հիմնականում՝ քուրդ) բռնի տեղահանվեց (The Syrian Observatory for Human Rights): Ակնհայտ է, որ սիրիացի փախստականների վերաբնակեցման համար ռազմական ուժի միջոցով «անվտանգության գոտի» ձևավորելով՝ Թուրքիան կրկին անգամ քրդական բնակավայրերի ժողովրդագրական պատկերը փոխակերպելու նպատակ է հետապնդում:

Ռազմական ներխուժումից օրեր անց ԱՄՆ պետքարտուղարության պատվիակությունը ժամանեց Անկարա՝ Էրդողանի հետ բանակցությունների[1]: Արդյունքում հոկտեմբերի 17-ին ռազմական գործողությունների դադարեցման համաձայնություն ձեռք բերվեց (TRT Haber):

Հոկտեմբերի 22-ին Թուրքիայի և Ռուսաստանի միջև Սոչիում կնքված համաձայնագիրն ամրագրեց ուժերի նոր վերադասավորումները Սիրիայի հյուսիս-արևելքում: «Խաղաղության աղբյուր» գործողության արդյունքում Ռուսաստանը զորամիավորումներ և զինտեխնիկա տեղակայեց Եփրատից արևելք՝ նախկինում իր ներկայության ու վերահսկողության տարածքից դուրս: Ակնհայտ է, որ քրդական գործոնի վերաբերյալ ռուսական մոտեցումն հետայդու պայմանավորվեց ռուս-թուրքական հարաբերություններով, ինչպես նաև համաձայնություններով, որոնք ձեռք բերվեցին այս երկրների միջև այլ հակամարտության գոտիներում, այդ թվում՝ Արցախում՝ 44-օրյա պատերազմի վերջարդյունքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի սիրիական քաղաքականությունն ունեցել է հակասական շրջափուլեր՝ մի շարք հակասություններով պայմանավորված հակամարտությունից մինչև ընդհանուր պատմական անցյալից «վերագտած եղբայրություն» և ռազմավարական զարգացող համագործակցություն:

Սիրիական ճգնաժամի սկզբնափուլում քրդերին հաջողվեց, չնայած առկա ներքին հակասություններին և քաղաքական նախընտրանքներին, ինքնակազմակերպվել ու Միացյալ Նահանգների աջակցությամբ հաջողություններ արձանագրել և՛ ԻՊ դեմ զինված պայքարում, և՛ ինքնավարության կազմավորման ուղղությամբ:

Հետևելով Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների էվոլյուցիային՝ նկատելի է դառնում մեկ հստակ միտում՝ օգտագործել PKK-ն և դրան փոխկապակցված PYD/YPG որպես «այլընտրանքային ռազմական թիրախ»: Թուրքական իշխանությունները հնարավորինս շահարկեցին «քրդական ահաբեկչությունը»՝ այն որպես Թուրքիայի ազգային անվտանգության և տարածքային

[1] Ի դեպ, «Խաղաղության աղբյուր» ռազմական արշավն ընթացավ նաև Թվիթերյան հարթակում՝ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի և Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի միջև (Sabuncuoğlu):

ամբողջականության պահպանման լրջագույն սպառնալիք ներկայացնելով, այդպիսով լեգիտիմացնելով իրենց ռազմական ներխուժումները: PKK/PYD/YPG դարձել է այն «բնական դրդապատճառը», որը հնարավորություն տվեց Թուրքիային անարգել ներխուժել Սիրիայի տարածք՝ այնտեղ տեղակայված քուրդ զինյալ ահաբեկիչներին ոչնչացման պատրվակով:

Ռազմական ներխուժումների արդյունքում Թուրքիան մեծացրեց իր ռազմական, այնուհետև տնտեսական ու գաղափարական ներկայությունը Սիրիայում, տեսլական, որը Թուրքիայի նեոօսմանական քաղաքականության առանցքում է: Ինչպես նաև կանխեց իր հարավային սահմաններին «քրդական ինքնավարությունների» միավորման հավանականությունը, ինչը լուրջ հնարավորություն էր նաև Իրաքի քրդերի համար՝ էներգառեսուրսների՝ դեպի Միջերկական ծով ելք ապահովելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայրամյան, Ալիշան. *Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը* 1918-1939. Երևան, 1998:
2. Գաբրելյան, Հայկ. «Եփրատի վահան» գործողությունը», *Նորավանք հիմնադրամ,* 4/04/2017, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15597: Հասանելի է՝ 01 հոկ. 2022:
3. Գաբրելյան, Հայկ. «Ձիթենու ճյուղ» գործողությունը և Թուրքիայի հեռահար նպատակները», *Նորավանք հիմնադրամ,* 18/04/2018. http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16900 : Հասանելի է՝ 01 հոկ. 2022:
4. Գրիգորյան, Սարգիս. *Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆության հռչակում*, Երևան, 2016:
5. Հովսեփյան, Լևոն. «Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները», *Հայկական բանակ*, №4, 2018, էջ 33-50:
6. Նավասարդյան Նազելի, «Քրդական գործոնն Իրանի Իսլամական Հանրապետության իրաքյան քաղաքականությունում», *Քրդական կառույցների մերձավորարեւելյան ցանցը նոր տարածաշրջանային զարգացումների լույսով՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից (2011-2016), Աշխատանքային տետրեր 1-2 (37-38)*, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, Երեւան, 2016, էջ 157-175:
7. Տեր-Մաթևոսյան, Վահրամ. «Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարախոսական և կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունները», Սաֆրաստյան Ռ. և ուրիշներ, *Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ Արդարություն և զարգացում կուսակցության տարիներին (2002-2012), Երևան 2020, Գլուխ Բ (3), էջ 43-52:*
8. Փաշայան, Արաքս. «Արաբական գարունը» Սիրիայում. պայքար իշխանության համար», *Ժամանակակից Եվրասիա,* h.1, №2, 2012, էջ 88-113:
9. Балмасов, Сергей. “Курдская карта в битве за Сирию”, *Институт Ближного Востока*, 11/07/2012, http://www.iimes.ru/?p=15126. Доступно: 01 окт. 2022.
10. Иванов, Станислав. “Сирийские курды в борьбе за свои права и свободы”, *Мировая экономика и международные отношения*, , т. 60, № 9, 2016, с. 37–47.
DOI:10.20542/0131-2227-2016-60-9-37-47.

11. “Западный Курдистан: Сирийские курды провозгласили автономию на границе с Турцией”, *REGNUM,* 8/03/2012, https://regnum.ru/news/1507822.html#ixzz2DJfpsIiB. Доступно: 01 окт. 2022.

12. Akinci, Burak. “Newly found friendship between Turkey and Syria”, *Ekurd Daily* 23/11/2004, https://ekurd.net/mismas/articles/misc/turkeysyria.htm. Accessed: 01 Oct. 2022.

13. Altunışık, Meliha Benli, and Tür, Özlem. “From Distant Neighbors to Partners? Changing Syrian-Turkish Relations”, *Security Dialogue*, vol.37, 2006, pp. 229-248.

14. Aykan, Mahmut Bali. “The Turkish-Syrian Crisis of October 1998: A Turkish View”, *Middle East Policy*, №6(4), 1999, pp.174–191, doi:10.1111/j.1475-4967.1999.tb00361.x.

15. Backgrounder, John Caves. “Syrian Kurds and the Democratic Union Party (PYD*)”, Institute for the study of war*, 6/12/2012, https://www.understandingwar.org/sites/default/files/Backgrounder_SyrianKurds.pdf. Accessed: 01 Oct. 2022.

16. Bishku, B. Michael. “Turkish-Syrian Relations: A Checkered History”, *Middle East Policy*, №19(3), 2012, pp. 36–53, Doi:10.1111/j.1475-4967.2012.00546.x.

17. Çarkoglu, Ali, and Eder, Mine. “Domestic Concerns and the Water Conflict over the Euphrates-Tigris River Basin”, *Middle Eastern Studies*, № 7(1), 2001, pp. 41-71.

18. Cem, Ismail. Turkey in the New Century, Mersin, Rustem, 2001.

19. Dadouch, Sarah. “Turkey, U.S. Agree to Form Joint Operation Center for Syria Safe Zone”, *REUTERS*, 07/08/2019, https://www.reuters.com/article/us-syria-security-turkey-idUSKCN1UX0Y9. Accessed: 01 Oct. 2022.

20. Daoudy, Marwa. “Syria and Turkey in Water Diplomacy (1962–2003)”, *Water in the Middle East and in North Africa*, 2004, pp. 319–332, DOI: 10.1007/978-3-662-10866-6_27.

21. Demirtaş, Birgül. “Turkish-Syrian Relations: From Friend “Esad” to Enemy “Esed”, *Middle East Policy*, №20(1), 2013, pp. 111–120. Doi:10.1111/mepo.12008.

22. Gadelmola, Mona Soliman. “Determinants and dimensions of the shift in Turkish behavior towards northern Syria since 2016”, *Review of Economics and Political Science*, 19/04/2020, https://doi.org/10.1108/REPS-07-2019-0096.

23. Harutyunyan, Lilit. “Syrian refugees in Lebanon: “New community” in Lebanon’s confessional political system” *Contemporary Eurasia*, vol. XI(1), 2022, pp. 5-19, https://doi.org/10.52837/2579-2970-2022.11.1-5.

24. Kamran, Matin. “Democratic confederalism and societal multiplicity: a sympathetic critique of Abdullah Öcalan’s State theory”, *Geopolitics*, vol 26, iss. 4, 15/11/2019, pp. 1075-1094, https://doi.org/10.1080/14650045.2019.1688785.

25. Kasapoğlu, Can. and Ülgen, Sinan. “Operation Euphrates Shield and the al-Bab Campaign: A Strategic Assessment”, *EDAM Foreign Policy and Security Paper Series*, 1/2017. https://www.jstor.org/stable/resrep14058?seq=7#metadata_info_tab_contents. Accessed: 01 Oct. 2022.

26. Kaynar, Ayşegül Kars. “Post-2016 military restructuring in Turkey from the perspective of coup-proofing” *Turkish Studies*, №23(4):1-24, 18/09/2021 pp. 383-406 https://doi.org/10.1080/14683849.2021.1977631.

27. Koru, Sibel. “The U.S. Rewards Offer for Three Top Leaders of the PKK: A Well-Thought-Out Plan?” *SETA RESPETIVE*, №: 48, Nov. 2018, https://setav.org/en/assets/uploads/2018/11/48-perspective.pdf. Accessed: 01 Oct. 2022.

28. Murariu, Mihai. and Angliţoiu, George. “Anatolian Security and Neo-Ottomanism: Turkey’s Intervention in Syria”, *Middle East Policy*, №27(2), 02/09/2020, pp. 132–147, https://doi.org/10.1111/mepo.12500.

29. Olson, Robert. “Turkey-Syria Relations since the Gulf War: Kurds and Water”, *Middle East Policy*, №5(2), 1997, pp. 168-193.

30. “Operation Euphrates Shield”, *GlobalSecurity.org,* https://www.globalsecurity.org/military/world/war/syria-euphrates-shield.htm. Accessed: 01 Oct. 2022.

31. Saleh, Yasmineh. “Fights break out at Syrian opposition meeting” *REUTERS*, 3/07/2012 https://www.reuters.com/article/us-syria-opposition-idUSBRE86213V20120703. Accessed: 01 Oct. 2022.

32. Salt, Jeremy. “Turkey and Syria: When “Soft Power” Turned Hard”, *Middle East Policy*, №25(3), 19/09/2018, pp. 80–96, https://doi.org/10.1111/mepo.12363.

33. Sanjian, Avedis K. “The Sanjak of Alexandretta (Hatay): Its impact on the Turkish-Syrian relations (1939-1956)”, *Middle East Journal*, vol. 10, no. 4 (Autumn, 1956), pp. 379-394.

34. Schenker, David. "Syria and Turkey: Walking Arm in Arm Down the Same Road?", *Jerusalem Center for Public Affairs*, vol. 9, no. 13, 2009, https://jcpa.org/article/syria-and-turkey-walking-arm-in-arm-down-the-same-road/. Accessed: 01 Oct. 2022.

35. Schmidinger, Thomas. *The Battle for the Mountain of the Kurds, Self-Determination and Ethnic Cleansing in the Afrin Region of Rojava, PM Press, 2019.*

36. Stein, Aaron. *Turkey’s New Foreign Policy: Davutoglu, the AKP and the Pursuit of Regional Order*, Whitehall Paper 83, Rusi, 2014.

37. “Syria’s Kurds: A Struggle Within a Struggle”, *Crisis Group Middle East Report*, N°136, 22 Jan 2013. https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/eastern-mediterranean/syria/syria-s-kurds-struggle-within-struggle. Accessed: 01 Oct. 2022.

38. “Syria conflict: Why Azaz is so important for Turkey and the Kurds”, *BBC News*, 18 Feb 2016. https://www.bbc.com/news/world-middle-east-35595023. Accessed: 01 Oct. 2022.

39. “Turkish military operation east Euphrates kills more than 70 civilians so far and forces nearly 300 thousand people to displace from their areas”, *The Syrian Observatory for Human Rights,* 16/10/2019, https://www.syriahr.com/en/144078/. Accessed: 01 Oct. 2022.

40. Von Hein, Matthias. “The Kurds Lose out Again”, *DW*, 08/10/.2019, https://www.dw.com/en/opinion-the-kurds-lose-out-again/a-50741424. Accessed: 01 Oct. 2022.

41. “Afrin şehir merkezi tamamen kontrol altina alindi”, *YeniBirlik*, 18/03/2018, https://www.gazetebirlik.com/haber/afrin-sehir-merkezi-tamamen-kontrol-altina-alindi-1828/. Erişim Tarihi: 1 Ek.2022.

42. “Barış pınarı harekatı'nda 9 gün”, *TRT Haber*, 18/10/2019 https://www.trthaber.com/haber/gundem/baris-pinari-harekatinda-9-gun-436463.html. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

43. Barzani, Suriye Kürtlerini birleştirmek istiyor”, *Yeşil Gazete*, 10/07/2012. https://yesilgazete.org/barzani-suriye-kurtlerini-birlestirmek-istiyor/. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

44. “Beşşar Esad’ın Türkiye Ziyareti ve bölgesel güvenlik”, *TASAM*, 19/10/2007. https://tasam.org/tr-TR/Icerik/700/bessar_esadin_turkiye_ziyareti_ve_bolgesel_guvenlik. Erişim Tarihi: 1 Ek .2022.

45. “Çavuşoğlu'ndan Lavrov'a Afrin yanıtı*”, Dünya Gazetesi*, 11/04/2018, https://www.dunya.com/gundem/cavusoglundan-lavrova-afrin-yaniti-haberi-411135. Erişim Tarihi: 1 Ek.2022.

46. Çelikaslan, Mehmet Nur. “Türk – Amerikan İlişkileri: Suriye Gerilimi” *Uluslararası Yönetim Akademisi Dergisi*, C.4, S. 2, 2021, ss.375-384, https://doi.org/10.33712/mana.973019.

47. Davutoğlu, Ahmed. *Stratejik Derinlik:Türkiye'nin Uluslararası Konumu*, Küre yayinlarıı, 2014.

48. Dönmez Hasan. “Afrin'e hava harekatı sürüyor, son olarak Diyarbakır'dan kalkan F-16'lar YPG mevzilerini vurdu”, *Hüriyet, 21/01/2018*.https://www.hurriyet.com.tr/gundem/bombardimana-hancer-filodan-12-savas-ucagi-da-katildi-40717050. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

49. “Haseke'deki çatışmalar sürüyor”, *DW*, 21/08/2016, https://www.dw.com/tr/hasekedeki%C3%A7at%C4%B1%C5%9Fmalar-s%C3%BCr%C3%BCyor/a-19490802. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

50. Gaziantep'te Gerçekleştirilen Terör Saldırısına İlişkin Açıklama, UNISEF Türkiye Milli Komotesi, 22/08/2016, https://www.unicefturk.org/yazi/gaziantep-teror. Erişim Tarihi: 01 Ek. 2022.

51. “Genel Seçim 2002”, *HaberTürk* https://www.haberturk.com/secim2002. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

52. “Güneş Harekâtı”, *TurkceBilgi* https://www.turkcebilgi.com/g%C3%BCne%C5%9F_harek%C3%A2t%C4%B1. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

53. Kerman I., Efegil E., “Terör örgütü PKK/PYD’nin Suriye’de izlediği iç savaş stratejisinin değerlendirilmesi”, Uluslararası Kriz ve Siyaset Araştırmaları Dergisi, Oct. 2017, Hybrid Warfare Special Issue, 1 (2), 162-198.

54. “MGK toplantısı sonrası flaş ifadeler: Fırat Kalkanı Harekâtı başarıyla sonuçlandı”, *SÖZCÜ*, 29 mart 2017, https://www.sozcu.com.tr/2017/gundem/son-dakika-haberi-mgk-toplantisi-sona-erdi-3-1763564/. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

55. Sabuncuoğlu, Ayda İnanç. Et al. “Siyasi liderlerin sosyal medya kullanım dinamikleri: Barış Pınarı harekâti süresince R. T. Erdoğan ve D. J. Trump’ın Twitter paylaşimları”, *KILAD*, https://dergipark.org.tr/tr/download/article-file/1087217. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

56. Suriyeli Kürtlerden demokratik özerklik ilanı, *Milliyet*, 21.01.2014 https://www.milliyet.com.tr/gundem/suriyeli-kurtlerden-demokratik-ozerklik-ilani-1825157. Erişim Tarihi: 1 Ek. 2022.

57. Bouvier, Emile. “Présence militaire turque au Levant: le leitmotiv kurde”, *Les Cles du Moyent Orient*, 06/08/2019, https://www.lesclesdumoyenorient.com/Presence-militaire-turque-au-Levant-le-leitmotiv-kurde.html. Accédé: 01 Oct. 2022

58. Kaya, Uğur. Et Yankaya, Dilek. “Après la crise, le rapprochement: Les relations de la Turquie avec la Syrie”, *Institut français d’études anatoliennes*, 2014, pp. 36-47. https://books.openedition.org/ifeagd/723. Accédé: 01 Oct. 2022

59. “Kurds declare federal region in Syria's north”, *FRANCE 24*, 17/03/2016 https://www.france24.com/en/20160317-kurds-declare-federal-region-northern-syria-pyd. Accédé: 01 Oct. 2022.

60. Malbrunot, Georges. “Les États-Unis forment 30.000 alliés dans le nord de la Syrie”, 15/01/2018 https://www.lefigaro.fr/international/2018/01/15/01003-20180115ARTFIG00345-les-etats-unis-forment-30000-allies-dans-le-nord-de-la-syrie.php. Accédé: 01 Oct. 2022.

WORKS CITED

1. Bayramyan, Alishan. Alek'santreti sanjak'I harts'y yev mijazgayin divanagitut'yuny (1936-1939). [The Alexandretta Sanjak Question and World Diplomacy (1936-39). Yerevan], 1998. (In Armenian).
2. Gabrelyan, Hayk. «Yep'rati vahan» gortsoghut'yuny», Noravank' himnadram, [Operation "Euphrates Shiel"". Yerevan], 4/04/2017 (In Armenian) http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15597.
3. Gabrelyan, Hayk. «Dzit'enu chyugh» gortsoghut'yuny yev T'urk'iayi herrahar npataknery», Noravank' himnadram, [Operation "Olive Branc"" and Long-term Goals of Turkey. Yerevan] 18/04/2018. (In Armenian) http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16900
4. Grigoryan, Sargis. Islamakan petut'yun: Akunk'nerits' minch'ev khalifut'yan hrrch'akum, [Islamic State. From Roots to the Proclamation of Caliphate. Yerevan], 2016 (In Armenian).
5. Hovsep'yan, Levon. «T'urk'iayi artak'in yev anvtangayin k'aghak'akanut'yan p'vokhakerpumnery. veragnahatelov Hayastani anvtangut'yan martahravernery», Haykakan banak, №4, ej 33-50, [Turkey's Foreign and Security Policy Transformations: Reassessing Challenges to Armenia's Security. Yerevan] 2018 (In Armenian).
6. Navasardyan Nazeli, «K'rdakan gortsonn Irani Islamakan Hanrapetut'yan irak'yan k'aghak'akanut'yunum», K'rdakan karruyts'neri merdzavorarevelyan ts'ants'y nor taratsashrjanayin zargats'umneri luysov` HH anvtangayin shaheri tesankyunits' (2011-2016), Ashkhatank'ayin tetrer 1-2 (37-38), HH PN Drastamat Kanayani anvan Azgayin razmavarakan hetazotut'yunneriinstitut, «Haykakan banak» razmagitakan handesi havelvats, Yerevan, 2016, ej 157-175 [The Kurdish factor in the Iraqi Policy of Islamic Republic of Iran. Yerevan] 2016 (In Armenian).
7. Ter-Mat'evosyan, Vahram. «T'urk'iayi artak'in k'aghak'akanut'yan gaghap'arakhosakan yev kazmakerpakarruts'vatsk'ayin arrandznahatkut'yunnery», Safrastyan R. yev urishner, T'urk'iayi k'aghak'akanut'yuny Hayastani nkatmamb Ardarut'yun yev zargats'um kusakts'ut'yan tarinerin (2002-2012), Glukh B (3), ej 43-52, [Ideological and Organizational-Structural Features of Turkey's Foreign Policy. Yerevan] 2020 (In Armenian).
8. P'ashayan, Arak's. «Arabakan garuny» Siriayum. payk'ar ishkhanut'yan hamar», Zhamanakakits' Yevrasia, h.1, №2, ej 88-113. [The "Arab Spring" in Syria: Struggle for Power. Yerevan] 2012 (In Armenian).
9. Balmasov, Sergey. "Kurdskaya karta v bitve za Siriyu", Institut Blizhnogo Vostoka, 11/07/2012. [Kurdish Card in the Struggle for Syria. Moscow] (In Russian). http://www.iimes.ru/?p=15126
10. Ivanov, Stanislav. "Siriyskiye kurdy v bo"be za svoi prava i svobody", Mirovaya ekonomika i mezhdunarodnyye otnosheniya, t. 60, № 9, 2016, s. 37–47. [Syrian Kurds in Struggle for their Rights and Freedoms. Moscow] (In Russian)
DOI: 10.20542/0131-2227-2016-60-9-37-47
11. "Zapadnyy Kurdistan: Siriyskiye kurdy provozglasili avtonomiyu na granitse s Turtsiyey", REGNUM, 8/03/2012, https://regnum.ru/news/1507822.html#ixzz2DJfpsIiB. [Western Kurdistan: Syrian Kurds have Declared Autonomy on the Border with Turkey. Moscow] 2022 (In Russian)

KURDISH FACTOR IN THE FRAMEWORK OF THE SYRIAN POLICY OF TURKEY. CONSTANT AMBITIONS, CHANGING PRIORITIES

TATEVIK MANUKYAN
Armenian National Academy of Sciences, Institute of Oriental Studies,
Department of Turkey, Research fellow;
Department of Oriental Studies ISEC, NAS RA Lecturer,
Yerevan, The Republic of Armenia

The article aims to highlight the actual scale and content of expansionist actions, ambitions, and ideologies of Ankara caused by the Kurdish factor in Syria.

The tasks of the study are: to present the main features and current transformations of the Syrian policy of Turkey, to find out the frames and motives of these transformations, to consider the importance of the Kurdish factor in the Syrian crisis, to highlight the new realities caused by the Turkish interventions into the Syrian-Turkish border.

Studying this issue is extremely important for the security environment of the Republic of Armenia, talking into account Turkey’s direct participation in the Artsakh war in 2020 and its subsequent military and political activation in the South Caucasus regional processes. These fit perfectly into Turkey's aggressive expansionist political agenda. The article's methodology includes historical-analytical, political, and oral-historical approaches.

The article notes that as a result of these military interventions, Turkey, taking advantage of the need to combat "Kurdish terrorism," increased its military and then economic and ideological presence in Syria, which is the basis of Turkey's neo-Ottoman policy. It also ruled out the infiltration of Kurdish forces from Afrin to the Mediterranean Sea and the unification of cantons.

Keywords: *Syria, Turkey, Syrian crisis, Kurdish factor, "Euphrates Shield", "Olive Branch", "Spring Peace", PKK/PYD/YPG.*

КУРДСКИЙ ФАКТОР В ОСНОВЕ СИРИЙСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ. НЕИЗМЕННЫЕ АМБИЦИИ, ТРАНСФОРМИРУЮЩИЕСЯ ПРИОРИТЕТЫ

ТАТЕВИК МАНУКЯН
научный сотрудник отдела Турции Института Востоковедения
Национальной академии наук Республики Армения,
преподаватель кафедры востоковедения МНОЦ НАН РА,
г.Ереван, Республика Армения

Целью работы является обоснование реальных масштабов и содержания, амбиций и идеологии экспансионистской политики Анкары, связанных с курдским фактором в Сирии.

Задачи исследования – изучение особенностей и трансформаций сирийской политики Турции, ее реальных основ и мотивов, а также анализ уникальности курдского фактора в сирийском кризисе, выявление новых реалий на сирийско-турецкой границе, вызванных турецким вторжением.

Изучение вопроса крайне актуально для общей среды безопасности РА, учетывая непосредственное участие Турции в Арцахской войне 2020 г. и

последующую военно-политическую активизацию Анкары в региональных процессах на Южном Кавказе, которая принципиально вписывается в агрессивно-экспансионистскую повестку Турции.

Методология статьи включает историко-аналитический, политологический методы исследования, а также подходы устной истории (oral history).

В результате исследования были сделаны следующие выводы: в результате своих военных вторжений Турция в контексте политики неоосманизма, используя необходимость борьбы с «курдским терроризмом», увеличила свое военное, экономическое и идеологическое присутствие в Сирии, а также исключила возможность распространения курдских сил и объединения кантонов из Африна к Средиземному морю.

Ключевые слова: *Сирия, Турция, сирийский кризис, курдский фактор, «Щит Евфрата», «Оливковая ветвь», «Источник мира», PKK/PYD/YPG.*

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԴՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ 811.111 *10.52063/25792652-2022.3.14-134*

ՍՈՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Հայաստանի եվրոպական համալսարանի
լեզվաբանության և հոգեբանության ֆակուլտետի
կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ,
«ԱՅ ԷԼ ԷՍ Արմենիա» լեզուների միջազգային դպրոցի հիմնադիր,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hakobyan04.07@gmail.com

Սույն հոդվածում քննարկում ենք ամբողջ աշխարհում և արդեն Հայաստանի Հանրապետությունում մեծ տարածում ունեցող միջազգային ստանդարտացված քննությունների և դրանց նախապատրաստական դասընթացների կազմակերպման հետ կապված որոշ հարցեր: Հոդվածի նպատակն է համառոտ ներկայացնել անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորում (TOEFL) և անգլերենի միջազգային թեստավորման համակարգ (IELTS) քննությունների առանձնահատկությունները, թեստավորողների պահանջները և այդ պահանջները բավարարելու համար դասավանդման ճիշտ մոտեցումները: Փորձ ենք անում ներկայացնելու ուղիներ, որոնցով կարելի է կազմակերպել և անցկացնել արդյունավետ և վերջնարդյունքահեն դասընթացներ՝ ակադեմիական անգլերենի մակարդակի չափանիշային ստուգման նպատակներով:

Աշխատանքի խնդիրն է վեր հանել հայ սովորողի՝ վերոնշյալ թեստավորումների շրջանակներում ունեցած կարիքները, նախապատրաստական դասընթացներ կազմակերպող մասնագետների մոտեցումները և վերջնարդյունքահեն դասավանդման ուղիները: Տվյալ հոդվածում առաջ քաշած խնդիրների բացահայտման և հետազոտության ենթակա հարցերի քննարկման համար իրականացրել ենք դեմ առ դեմ բանավոր հարցումներ, որոնք ձայնագրել ենք, այնուհետև սղագրել, և առցանց սոցիալական հարցումներ՝GoogleDocs վերլուծական հարթակով:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք պնդել, որ սույն քննություններին նախապատրաստելը ոչ այլ ինչ է, քան լեզվական հումքի դասավանդում, անգլերեն լեզվի կարողականության ձևավորում՝ առանց տարօրինակ մեխանիզմների և նմուշային կառույցների:

* Հոդվածը ներկայացվել է 16.07.2022թ., գրախոսվել՝ 16.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Հիմնաբառեր՝ *ստանդարտացված քննություն (TOEFL iBT, IELTS), նախապատրաստական դասընթաց, անգլերեն, լեզվական հմտություններ, վերջնարդյունք, մոտեցում, մեթոդ, ուղի:*

Ներածություն

Վաղուց արդեն անգլերենի ուսուցումն ինքնանպատակ չէ, և զարգացող աշխարհում թերևս որևէ մասնագիտություն անմասն չի մնացել օտար լեզու սովորելու գործընթացից: Ավելին, այսօր արդեն արդիական և այլևս նորություն չեն միջազգային այնպիսի քննությունների նախապատրաստումն ու հանձնումը, ինչպիսիք են՝ անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորումը (TOEFL-Test of English as a Foreign Language) և անգլերենի միջազգային թեստավորման համակարգը (IELTS-International English Language Testing System): Հայաստանի Հանրապետության մասշտաբով ևս վերոբերյալ քննություններին նախապատրաստվելը դարձել է բավականին արդիական, իսկ ոլորտում առաջարկվում են տարատեսակ դասընթացներ՝ մեթոդահեն և ոչ: Մենք ներկայացնում են այն մեխանիզմները, որոնք միտված են ճիշտ կողմնորոշելու դասավանդողին և թեստավորվողներին նախապատրաստել հստակ մեթոդաբանությամբ: Քննվող թեստավորումները ստանդարտացված քննություններ են և ենթադրվում է, որ դրանց նախապատրաստումն էլ պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, քանի որ ցանկացած շեղում կարող է քննությունների վերաբերյալ սխալ ընկալման և սխալ արդյունքի պատճառ հանդիսանալ: Նշյալ քննությունների արդյունքները հանդիսանում են անգլերենի իմացության հավաստագիր, և այդ արդյունքներով սովորողները կարող են գրանցել ակադեմիական մի շարք հաջողություններ՝ ընդհուպ կրթությունը շարունակել արտասահմանյան հեղինակավոր բուհերում: Հետազոտության ընթացքում իրականացրել ենք սոցիալական մի փոքր հարցում ՀՀ-ում քննություններին նախապատրաստվող սովորողների և նախապատրաստող դասախոսների շրջանակներում, և այդ արդյունքների հիման վրա փորձել ենք ներկայացնել որոշակի վերջնարդյունքներ և դրանց հասնելու հենքային ուղիներ: Հարցման առաջին հատվածում առցանց հարցում է անցկացվել սովորողների շրջանակներում, որում ներառել ենք բազմակի ընտրությամբ կամ այո/ոչ պատասխաններով 17 հարցեր, իսկ երկրորդ հատվածում ընդգրկված են մեկնաբանություններ պահանջող կամ բազմակի ընտրության պատասխաններով հարցեր դասավանդողների համար: Ընդհանուր հարցմանը մասնակցել է 52 մասնակից, որոնցից 32-ը սովորողներ են, 15-ը՝ առցանց հարցմանը մասնակցած դասախոսներ, իսկ 5 դասավանդող մասնագետի հետ անցկացվել է դեմ առ դեմ հարցազրույց: Հարցազրույցն իրականացվել է «ԱՅ ԷԼ ԷՍ Արմենիա» լեզուների միջազգային դպրոցում: Հարցումներից ստացված արդյունքները քննարկվում են սույն հոդվածի ***հետազոտության արդյունքներ*** բաժնում:

Հետազոտությունն հիմնականում իրականացվել է հոդվածի հեղինակի՝ Հայաստանում գործող «ԱՅ ԷԼ ԷՍ Արմենիա» լեզուների միջազգային դպրոցում ունեցած դասավանդման փորձառության հիման վրա: «ԱՅ ԷԼ ԷՍ Արմենիա» միջազգային դպրոցի առաքելությունն է ՀՀ-ում կազմակերպել արդյունավետ լեզվի ուսուցում և ուսումնառություն՝ միջազգային ու եվրոպական չափանիշներին համապատասխան: Դպրոցի առաքելության մեջ է մտնում նաև լեզուների դասավանդման առաջատար մեթոդների շարունակական ներդրումը և սովորողների շրջանում լեզվական հաղորդակցության խորքային հմտությունների ու կարողությունների զարգացումը:

Անգլերենի միջազգային թեստավորման քննությունների նախապատրաստական դասընթացների կազմակերպման և դասավանդման մեխանիզմները

Օտար լեզվի գնահատումը շարունակական գործընթաց է, որը միտված է չափելու, թեստավորելու և գնահատելու լեզվի դասավանդումն ու ուսումնառությունը: Ժամանակի ընթացքում բարելավվում և մշակվում են լեզվական հմտությունների գնահատման նոր մեխանիզմներ, որոնք իրենց որակի բարձրացմամբ հընթացս միտված են բարելավելու այս կամ այն թեստավորման նախապատրաստական ծրագրերը: Միևնույն ժամանակ, երկուստեք զարգացումներն իրենց հերթին կատարելագործում և բարելավում են թեստավորվողների անգլերենի իմացության մակարդակը՝ որոշակի հմտությունների տիրապետման համատեքստում: Միջազգային քննություններին նախապատրաստելը՝ դրանց դասավանդումը, ենթադրում է լեզվական չորս հմտությունների զարգացում ու դասավանդում: Լեզվական չորս հմտությունները՝ խոսել, ունկնդրել, կարդալ և գրել, ինչ որ առումով անհրաժեշտ է դասավանդել ոչ թե առանձին-առանձին, այլ՝ համակցված: Մասնագիտական գրականության մեջ այս հմտությունները հանդես են գալիս նաև լեզվի մակրո հմտություններ անվամբ և միմյանց հետ կապված են երկու ձևով՝ հաղորդակցության ուղղությամբ, այսինքն՝ տեղեկատվությունը հաղորդվում է, թե՞ ընկալվում և հաղորդակցության ձևով (Ahumaraeze 537): Լեզվական հմտությունների դասավանդումը պետք է դառնա դասավանդման ինքնանպատակ, քանի որ լեզվի իմացության գերազանցության մակարդակը՝ իրազեկությունը, պայմանավորված է հենց այդ հմտությունների գերազանցությամբ: Ինչպես նշվում է եվրոպական լեզվաքաղաքականության և լեզվակրթության հիմնարար փաստաթղթում՝ «Լեզուների իմացության համաեվրոպական համակարգ»-ում, լեզվական իրազեկությունը ներառում է գիտելիքներ ու կարողություններ տվյալ լեզվի հնչյունաբանության, բառապաշարի, քերականության, ուղղագրության, ուղղախոսության, ոճաբանության, ինչպես նաև լեզվական միավորների կիրառման կանոնների մասին հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների իրագործմամբ, ինչպես նաև այդ գիտելիքին համապատասխան հմտությունների ու կարողությունների տիրապետում, ինչը հնարավորություն է տալիս կիրառելու տվյալ լեզվական միջոցները տարբեր լեզվական նպատակների համար, որոնցից են՝ լեզվական միավորների իմաստային ու կառուցվածքային վերլուծությունը, այսինքն՝ տվյալ համատեքստում լեզվական միավորների գործածության առանձնահատկությունների վերլուծությունը, ինչը զարգացնում է ուսանողների լեզվամտածողությունը (Լեզուների Իրազ. Համաեվրոպական Համակարգ 69): Ինչպես իրավացիորեն նշում է կիրառական լեզվաբանության շրջանակներում հետազոտություններ իրականացնող ամերիկացի հետազոտող Դ. Դերիկը, քննարկվող թեստավորումները այսպես կոչված *high-stake*, այսինքն՝ *ռիսկային* քննություններ են, և վերջիններիս արդյունքները կարող են որոշիչ լինել և ակնհայտորեն ազդել սովորողների ողջ կարիերայի և կրթության վրա: Դրանք հիմնականում չափորոշչային՝ ստանդարտացված քննություններ են, այսինքն՝ քննություն հանձնողների արդյունքները գնահատվում և համեմատվում են ըստ ընդհանուր չափանիշների (Derrik 21):

Անգլերենի միջազգային թեստավորման համակարգը կամ անգլերեն հապավումով IELTS-ը ներդրվել և կազմակերպվում է այնպիսի կառույցների միջոցով, ինչպիսիք են՝ Բրիտանական խորհուրդը, Քեմբրիջի ESOL (անգլերեն այլ լեզուներով խոսողների համար) քննությունների կենտրոնը, IELTS Ավստրալիա IDP (միջազգային կրթական կառույց) կազմակերպությունը, և գործառում է 1989 թվականից: Նշյալ կազմակերպությունների կողմից իրականացվող գործընթացների արդյունքում ստեղծվում են ստանդարտացված թեստեր ու նյութեր՝ հավաստիացնելով, որ թեստի յուրաքանչյուր տարբերակն ունի դժվարության համեմատելի մակարդակ, որի հենքով

արդյունքները հստակ են և անփոփոխ՝ անկախ թեստի հանձնման վայրից ու ժամանակից: Նշելի է այն փաստը, որ անգլերենի միջազգային թեստավորման համակարգի շրջանակներում կազմակերպվում են թեստավորումներ՝ ըստ նպատակների: Այսօր հաճախ հանդիպում ենք այնպիսի անվանումների, ինչպիսիք են՝ General IELTS (ընդհանուր), Academic IELTS (ակադեմիական), IELTS UKVI (Միացյալ Թագավորության վիզա ստանալու նպատակով), IELTS-Life skills (ամուսնական/ընտանեկան վիզա ստանալու համար): Այնուամենայնիվ, սույն հոդվածի խնդրո առարկան ակադեմիական թեստավորումն է՝ որպես բարձրագույն, շարունակական կրթության գրավական:

Անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորումը կամ անգլերեն հապավումով TOEFL-ը, ներդրվել է «Կրթական թեստավորման ծառայություն» (ETS) մասնավոր կազմակերպության կողմից, որը պաշտոնապես թողարկում և ուղարկում է քննության արդյունքները համապատասխան կրթական հաստատություններ, որոնք ուժի մեջ են երկու տարի: Թեստավորումը գործառում է 1973 թվականից: Մինչև 2005 թվականը անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորումը կազմակերպվում էր համակարգչային (CBT-Computer-based test) և թղթային տարբերակներով (PBT-Paper Based Test), սակայն դրանից հետո և այսօր այն դարձել է առցանց իրականացվող թեստավորում (IBT- Internet based test):

Չնայած կառուցվածքային ու կազմակերպչական տարբերություններին՝ երկու թեստավորումներն էլ չափում են լեզվական չորս հմտությունների մակարդակը, և եթե նախապատրաստող մասնագետն իրազեկ է լեզվական հմտությունների դասավանդման առանձնահատկություններին, ապա դա կարող է դառնալ միջազգային քննությունների լավագույն արդյունքի գրավական:

Անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորումը (TOEFL iBT) ներառում է համակցված հանձնարարություններ, որտեղ անհրաժեշտ է կիրառել բոլոր հմտությունները միասին, մասնավորապես՝ կարդալ, լսել և այնուհետև խոսել տրված թեմաներով, լսել և խոսել ունկնդրած թեմայի շուրջ, կարդալ, ունկնդրել և գրել էսսե այդ թեմայի շուրջ (ETS Test Prep. Planner 11): Թեստավորման ձևաչափը մշակվել է անգլերենի թեստավորման կենտրոնի կողմից և ներառում է քննության տևողությունն ու բովանդակությունը: Այն չափում է թեստավորվողների գիտելիքները համալսարանական մակարդակի ակադեմիական տեքստերի ընկալման համատեքստում: Ակադեմիական ընթերցանությունը միտված է երեք նպատակի՝ ընթերցել տեղեկատվություն որոնելու համար, ընթերցել ընդհանուր ընկալման համար, ընթերցել իմանալու համար (ETS Test Prep. Planner 14): Այս հմտությունների զարգացման համար մասնագետից պահանջվում է նախ և առաջ զարգացնել ընթերցանության հենքային հմտությունները:

Անգլերենի միջազգային թեստավորման համակարգում (IELTS) ընթերցանության թեստավորման համար հանձնարարվում են երեք երկար տեքստեր, որոնք կարող են լինել նկարագրական, փաստագրական, դիսկուրսիվ ու վերլուծական: Ի տարբերություն TOEFL-ի՝ այստեղ բազմակի ընտրության հարցերի տեսակներից բացի հանդիպում ենք նաև կարճ պատասխանի տեսակին, որում կարևորվում է փնտրողական ընթերցանությունը, մանրակրկիտ ընթերցանությունը՝ կոնկրետ տեղեկատվության որոնման համատեքստում: Այս տեսակի հարցերին պատասխանելու համար հենքային է դառնում բառային հոմանիշների և գրագրության կանոնների ուսուցանումը, քանի որ որևէ պատասխան նշելու փոխարեն թեստավորվողից պահանջվում է գրել/լրացնել բաց թողնված բառերը: Նմանատիպ սկզբունքով կառուցված է տեքստի համառոտագրության ամբողջացում հարցը, որում վերոնշյալ կանոններից զատ պետք է կարևորել քերականությունը, բառի ճիշտ կիրառման առանձնահատկությունները: Փաստորեն, այս պարագայում ավելի թիրախային է դառնում լեզվական հումքի ուսուցանումը՝ շեշտադրելով հնչյունաբանության, շարահյուսության, ձևաբանության, գործաբանության և

իմաստաբանության կարևոր տարրերը: Ինչպես հաղորդում է Բրիտանական խորհուրդը, IELTS-ի ընթերցանության բաժինը միտված է գնահատելու ընթերցանության այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝ ընթերցանություն ընդհանուր իմաստի համար, ընթերցանություն հիմնական գաղափարի ընկալման համար, ընթերցանություն մանրամասների բացահայտման համար, ընթերցանություն տեքստի ենթադրյալ իմաստների բացահայտման համար, ընթերցանություն հեղինակի կարծիքի տարբերակման համար (British Council, IELTS):

Անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորման (TOEFL iBT) ունկնդրման բաժինը չափում է սովորողների գիտելիքներն ակադեմիական խոսքի շրջանակներում: Ակադեմիական ունկնդրումը նպատակադրված է թիրախավորելու սովորողների ունկնդրման հմտությունները հետևյալ սկզբունքներով.

- Ունկնդրում ընդհանուր ընկալման համար (ընկալել հիմնական գաղափարը և այդ գաղափարին վերաբերող հիմնական մանրամասները),
- Ունկնդրում գործաբանական ընկալման համար, այսինքն՝ հասկանալ խոսողի վերաբերմունքը և որոշակիության աստիճանը,
- Ունկնդրում տեղեկատվության կապակցման և սինթեզավորման նպատակով, այսինքն՝ հասկանալ գաղափարների պատճառահետևանքային կապերը, ենթադրություններ և եզրակացություններ անել (ETS Test Prep. Planner 19)

Դասավանդման գործընթացում ունկնդրման երեք փուլերը պետք է կիրառվեն խիստ հետևողականորեն՝ վերոնշյալ արդյունքներին հասնելու համար: Նախաունկնդրման փուլում կարևոր է ուսանողներին նախապես ծանոթացնել ակադեմիական դասախոսության կամ զրույցի թեմային, քննարկել թեմայի շրջանակներում յուրացրած թիրախային բառապաշարը, իսկ բուն լսելու փուլում հետևողականորեն սովորեցնել նշումներ կատարելու սկզբունքները, իսկ արդեն հետունկնդրման փուլում հարկ է որոնել ունկնդրած նյութի պատճառահետևանքային կապերը, քննարկել դրանք և բացառման սկզբունքով տեղայնացնել բազմակի հարցերի պատասխաններում: Եթե TOEFL iBT–ի ունկնդրման առաջադրանքների նպատակն է հիմնականում ստուգել թեստավորվողների ակադեմիական անգլերենի ընկալման հմտությունները, ապա IELTS-ի պարագայում կարող ենք հանդիպել նաև առօրյա հասարակական համատեքստին բնորոշ երկխոսություններ, մենախոսություններ, երկխոսություններ կրթական, համալսարանական համատեքստում և միայն վերջին բաժնում՝ ակադեմիական մենախոսություն: Ինչպես հաղորդում է Բրիտանական Խորհուրդը, IELTS-ի ունկնդրման բաժինը միտված է գնահատելու ունկնդրման այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝

- Հիմնական գաղափարի և կոնկրետ փաստացի տեղեկատվության ընկալումը,
- Խոսողի կարծիքների, նպատակի և վերաբերմունքի տարբերակումը,
- Փաստարկների կառուցման սկզբունքները (British Council, IELTS)

Փաստորեն ունկնդրման ուսուցումը ենթադրում է սովորեցնել տեղեկատվության ընկալման ու տարբերակման, այդ տեղեկատվության տեսակավորման և հասարակական համատեքստում դրա տեղայնացման ռազմավարությունները:

Ստանդարտացված թեստավորումներում խոսքային գործունեության վերարտադրողական հմտությունների ստուգումը միտված է հասկանալու՝ արդյոք թեստավորվողը կարող է արդյունավետորեն հաղորդակցվել ակադեմիական, համալսարանական և առօրեական համատեքստերում: Անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորման դեպքում (TOEFL iBT) բանավոր խոսքի հմտությունների ստուգման բաժնում ներկայացված են իրական կյանքի իրավիճակներ, որոնց կարող են բախվել ուսանողները համալսարանում, կրթական գործընթացի ընթացքում՝ քննարկումների, բանավեճերի տեսքով, ինչպես նաև համալսարանից դուրս կարողանալ հաղորդակցվել այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են՝ գրադարանը,

համալսարանական ճաշարանը, կացարանը, գրախանութը և այլն: Բանավոր խոսքի առաջին բաժնում ենթադրվում է, որ ուսանողը պետք է խոսի միայն անձնական կարծիքի տեսակետից՝ արտահայտելով իր ընտրության նպատակահարմարությունը, ընտրելով իրար հակասող երկու գաղափարներից մեկը և պաշտպանելով այդ դիրքորոշումը սեփական օրինակով: Մնացած երեք բաժինները համակցված են, այսինքն՝ ընթերցանությունը և ունկնդրումը ելակետ են հանդիսանում խոսքի ձևակերպման համար: Այստեղ թերևս պետք է գերուշադրություն դարձնենք թեստավորման ընթացքում բանավոր խոսքի գնահատմանը, որպեսզի կարողանանք հասկանալ՝ ինչը ինչպես սովորեցնել: Թեստավորման կենտրոնի չափանիշներով գնահատման համար ուղենիշ են ծառայում խոսքի արտաբերումն ու ներկայացումը, այսինքն՝ որքան պարզ, ինքնաբուխ և սահուն է խոսքը, ինչքանով են ճիշտ ներկայացվում հնչարտասանությունը և հնչերանգը: Այնուհետև գնահատվում է լեզվական միավորների կիրառությունը, այն է՝ որքան արդյունավետ է կարողանում կիրառել քերականական ու բառապաշարային միավորները մտքերն արտահայտելու համար: Գնահատելիս նաև կարևորվում է թեմայի ճիշտ ու կապակցված զարգացումը, թեմայի շրջանակներից դուրս չգալու կարողությունը, միավորների կապակցված հաջորդականությունը (ETS Test Prep. Planner 26):

Անգլերենի միջազգային թեստավորման համակարգի (IELTS) շրջանակներում գնահատումն իրականացվում է դեմ առ դեմ, և գնահատողը փորձում է հասկանալ, թե թեստավորվողն ինչքանով է պատրաստ հաղորդակցվել առօրեական անգլերենով, մտքեր փոխանակել իրավիճակային համատեքստերում: Ինչպես հաղորդում է Բրիտանական Խորհուրդը, IELTS-ի բանավոր խոսքի բաժինը միտված է գնահատելու խոսողական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝

- Ընդհանուր և առօրյա փորձի վերաբերյալ կարծիքների արտահայտումը և տեղեկատվության փոխանցումը,
- Տվյալ թեմայի շուրջ համապատասխան լեզվի՝ բառապաշարային միավորների կիրառությունը,
- Գաղափարների կապակցված արտահայտումը,
- Կարծիքների արտահայտումն ու հիմնավորումը,
- Որոշակի հարցերի շուրջ քննարկումը և վերլուծելու կարողությունը (British Council, IELTS):

Գրավոր խոսքը, որպես խոսքային գործունեության վերարտադրողական հաջորդ հմտություն, թեստավորվում և չափվում է ճիշտ ձևակերպված մտքերի շարադրանքի հայեցակետից: Անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորման ընթացքում հանձնարարվում է գրել մեկ համակցված և մեկ ազատ էսսե: Համակցված էսսեի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել ընթերցած և ունկնդրած նյութերի համառոտ նկարագրությունը՝ շեշտադրելով ունկնդրած հատվածում ներկայացված թիրախային կետերը, և արդյունավետորեն ցույց տալ, թե ինչպես են դրանք կապված ընթերցած հատվածի հետ: Ազատ թեմայով էսսեում պետք է կարողանալ գրավոր ու կապակցված խոսքով պաշտպանել սեփական կարծիքը այս կամ այն թեմայի շուրջ, հիմնավորել որևէ դրույթի ընտրությունը և այլն: Պատասխանը գնահատվում է ըստ գրավոր խոսքի որակի, այսինքն՝ կառուցվածքը, համապատասխանելիությունը, քերականական ճիշտ կառույցների կիրառությունը և բառապաշարը (ETS Test Prep. Planner): Իսկ անգլերենի միջազգային թեստավորման համակարգի շրջանակներում (IELTS) գրավոր խոսքը գնահատվում է առաջին հերթին անգլերենով նկարագրություն անելու հմտությունների տեսակետից, այսինքն՝ տրվում է որևէ աղյուսակ, կաղապար, քարտեզ, վիճակագրական կոր և հանձնարարվում է բացատրել և նկարագրել պատկերները՝ փոխանցելով դրանցում առկա ճիշտ տեղեկատվությունը: Երկրորդ՝ հանձնարարվում է գրել էսսե, որում հարկ է ճշգրիտ արտահայտել որևէ կարծիք այս

կամ այն թեմայի շուրջ, տրված խնդրին առաջարկել լուծումներ կամ ներկայացնել այս կամ այն երևույթի դրական ու բացասական կողմերը: Էսսեներ գրելու հմտությունների դասավանդումը, կարծում ենք, որ նպատակահարմար է դասավանդել գործընթացային մոտեցմամբ՝ շեշտադրելով ստեղծագործականությունը, և գաղափարները համարել որպես ելակետ: Ինչպես հաղորդում է Բրիտանական Խորհուրդը, IELTS-ի գրավոր խոսքի բաժինը միտված է գնահատելու այնպիսի հմտություններ ինչպիսիք են՝

- պատշաճ ու կապակցված պատասխան տալու կարողությունը,
- մտքերի կապակցվածությունը,
- հարուստ բառապաշարի և ճշգրիտ քերականական կանոնների կիրառությունը (British Council, IELTS):

Հետազոտության արդյունքները

Սովորողների շրջանակերում անցկացված հարցման վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացված քննություններին մեծամասամբ նախապատրաստվում է 16-20 տարիքային խումբը (58,1%)՝ ենթադրաբար Հայաստանում Ամերիկյան համալսարան ընդունվելու կամ արտասահմանյան բուհ դիմելու համար, հարցվածների 22,6%-ը բաշխվում է 20-30 տարիքային խմբին, իսկ մնացած տարիքային խմբերը չունեն լայն ընդգրկվածություն (համապատասխանաբար՝ 19,4%-ը 30-40 տարիքային խումբը): Հարցվածների 49,1 %-ը, այնումանենայնիվ, թեստավորման ամենաբարդ բաժինը համարում է ընթերցանության բաժինը (չնայած որ միևնույն ժամանակ նշել են, որ ծանոթ են ընթերցանության տեսակներին ու նպատակներին), իսկ հարցվածներից 8 մասնակից, այսինքն՝ 26,8 %-ը, ամենաբարդը համարում է բանավոր խոսքի հմտության ստուգման բաժինը: Ընթերցանության հմտության վարժեցման համատեքստում հարցվածների 45,2%-ը ստանդարտացված քննության ընթերցանության նպատակը և նախապատրաստման ձևը համարում է թեմային առնչվող նոր բառերի ուսուցանումը, մնացած գերակշռող հատվածը նշում է, որ ընթերցանությունը կատարում է տեքստի ենթադրյալ իմաստների և տողատակերում թաքնված իմաստների բացահայտման համար: Տարօրինակ քիչ թիվ են կազմում ընթերցանության այսպես կոչված *կարդալ իմանալու համար* (6,5 %), այն է՝ մանրակրկիտ տեղեկատվության որոնման հմտությունը կարևորողները (ստանդարտացված երկու թեստավորումներում նմանատիպ հարցադրումները մեծ թիվ են կազմում): Ինչ վերաբերում է ունկնդրման բաժնին, կարող ենք վստահորեն նշել, որ հայ ուսանողների համար այդ հմտության ստուգումն այնքան էլ մեծ բարդություն չի ներկայացնում, և հարցվածներից կեսից ավելին նշել է, որ *ունկնդրումն իր համար բարդություն չի ներկայացնում:* Այդուհանդերձ, ունկնդրման հմտության զարգացման փուլերին վերաբերող հարցի հայեցակետից հարցվածների ստվար հատվածը տեղեկացված չէ նախաունկնդրման, բուն ունկնդրման և հետունկնդրման փուլերին: Վերջիններս առավել կիրառելի են IELTS-ի ունկնդրման հմտություններ զարգացնելու համար, իսկ հարցվածներից միայն 32,3%-ն է նշել, որ հանձնել կամ ցանկանում է հանձնել այդ քննությունը, մնացած 67,7%-ը նախապատվությունը տալիս է անգլերենի՝ որպես օտար լեզվի թեստավորմանը (TOEFL): Թերևս սա է հիմնական պատճառը, որ տոկոսային հարաբերությամբ հարցվածների փոքր մասն է ծանոթ ունկնդրման զարգացման վարժանքներին: Ուրախալի է այն փաստը, որ հարցվածների մեծամասնությունը կարևորում է ճշգրիտ քերականության, հնչյունաբանության և համապատասխան բովանդակային բառապաշարի յուրացման ու կիրառման անհրաժեշտությունը՝ թեստավորումներին նախապատրաստվելու շրջանակներում: Հիասթափեցնող է, սակայն, գրավոր խոսքի

զարգացմանը վերաբերող այն հարցի պատասխանը, թե արդյոք գրավոր թեստավորման համար «Էսսեն գրում եք ձևաչափով, քարացած կառույցներով, թե՞ առանց դրանց» հարցվողների 71%-ը նշել է, որ գրել սովորում է քարացած ձևաչափով:

Ոլորտի փորձառու դասավանդողների շրջանակներում անցկացրած առցանց հարցման և Հայաստանում «ԱՅ ԷԼ ԷՍ Արմենիա» լեզուների միջազգային դպրոցում անցկացված հարցազրույցի հետքերով գնալով՝ կարող ենք փաստել, որ փորձառական կարծիքները, նախապատրաստական դասընթացներում կիրառած մոտեցումները ամբողջացվում են այնպիսի ընդհանրական հասկացությունների շրջանակներում, ինչպիսիք են՝ խառը մեթոդների, ինտերակտիվ մեթոդների, աուդիոլեզվական մեթոդների միջոցով հմտությունների ձևավորումը և այլն: Ընթերցանության հմտության զարգացման համար համատարած կիրառվում է միայն այսպես կոչված որոնողական ընթերցանության (skimming/scanning) մոտեցումը, մինչդեռ դա կարևոր լինելով՝ առաջնայինն ու թիրախայինը չէ:

Անդրադառնալով սովորողների հիասթափեցնող՝ քարացած կառույցներով գրավոր էսսեի և բանավոր խոսքի շարադրանքին՝ այստեղ ևս շատ տպավորված չենք, քանի որ հարցված դասավանդողների 78,6%-ը կողմ է նմուշային օրինակներով բանավոր կամ գրավոր խոսք զարգացնելուն, սակայն ի հակադրության դրան՝ հաջորդող հարցում գերակշռող մեծամասնությունը կարևորում է ստեղծագործականությունը: Այստեղ հարց է առաջանում. «*Ինչպե՞ս ենք խթանում ստեղծագործականությունը, եթե շեշտադրում են նմուշօրինակով շարադրանքը*»:

Այս ամենին զուգահեռ, այդուհանդերձ, պետք է մատնանշենք այն փաստը, որ հարցվածների գերակշռող մեծամասնությունը կարևորում է հնչյունաբանության, քերականության, շարահյուսության, իմաստաբանության և գործաբանական ռազմավարությունների ուսուցումը, որը միանշանակորեն լավագույն արդյունքի գրավականն է:

Վերջապես հարցվածների գերակշռող մեծամասնությունը բառապաշարի և բանավոր խոսքի ուսուցման համար կիրառում է ոլորտի լավագույն հետազոտություններում առաջարկվող ձևերը՝ հետևյալ համապատասխանությամբ. երկխոսություն՝ 14.3%, քննարկում՝ 50 %, նարատիվի ու բանավեճի կիրառում՝ 35,7%, իսկ գերակշռող մեծամասնությունը կիրառում է բոլոր ձևերը միասին (64,3%):

Ինչ վերաբերում է սահմանած վերջնարդյունքներին, պետք է վատագույնս նշենք, որ հարցվածներից միայն ՄԵԿՆ է նշել գլխավորը՝ գնահատման չափանիշը, հարցվողներից երկուսը մասամբ փորձել են սահմանել իրատեսական վերջնարդյունքներ (գիտականությունից ելնելով՝ մի փոքր խմբագրել ենք հանրային հարցման մեջ ներկայացված պատասխանները) մասնավորապես՝

- ողջամիտ ժամանակահատվածում իրատեսական, սակայն հնարավորինս բարձր միավոր ապահովել բոլոր չորս հմտությունները ստուգող բաժինների համար,
- լայն մտահորիզոնի ձևավորում և հարցին դիպուկ պատասխանելու կարողություն:

Հարցման մնացած մասնակիցները, ըստ ամենայնի, չեն պատկերացնում՝ ինչ է ասել վերջնարդյունք և պարզապես նշել են քննությունից ակնկալվող միավորներ:

Նախապատրաստական դասընթացների համար առաջարկվող դասավանդման վերջնարդյունքները

Ամենաընդհանուր իմաստով կրթական վերջնարդյունքներն ակնկալվող այն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են, որոնք ցույց են տալիս, թե դասընթացի ավարտին ի՞նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը: Մեր խորին համոզմամբ, ստանդարտացված քննությունների դեպքում

նախապատրաստական դասընթացներ կազմակերպելիս նախ պետք է թիրախավորել գնահատման չափանիշները՝ ստանդարտացված և մշակված քննարկվող թեստավորումներ կազմակերպող պաշտոնական կառույցների կողմից: Փորձառությունը ցույց է տալիս, որ անկախ թեստավորման տեսակից, յուրաքանչյուր նախապատրաստական դասընթացի ավարտից հետո սովորողը թեստավորմանը պետք է ներկայանա լեզվական հարուստ գիտելիքներով և կարողանա առանձնացնել, տարբերակել ու ներկայացնել տեղեկատվությունը՝ հմտությունների թեստավորումներից յուրաքանչյուրին համապատասխան: Եվ վերջապես, ամենակարևոր խնդիրն այն է, որ դասընթացի ավարտից հետո սովորողը կարողանա հասկանալ ակադեմիական տեքստերի ընդհանուր բովանդակությունը, հաղորդակցվի օտար լեզվի միջին տեմպով, սահուն և ինքնաբուխ՝ հիմնավորելով իր իսկ արտահայտած յուրաքանչյուր միտքը: Սրանից ելնելով՝ կարող ենք ասել, որ ստանդարտացված ցանկացած թեստավորման նախապատրաստական դասընթացի ավարտից հետո և համապատասխանաբար նախքան թեստավորումը՝ սովորողները պետք է կարողանան՝

- ճանաչել և հաղթահարել թեստավորման պահանջները,
- ընկալել հանձնարարությունը և հարցադրումները,
- կենտրոնանալ ակադեմիական ընթերցանության նպատակների և թիրախային հարցադրումների վրա,
- ցուցաբերել ունկնդրման ընկալման և մանրամասները տարբերակելու հմտություններ,
- կիրառել ընդարձակ ու թեմատիկ բառապաշար գրավոր և բանավոր խոսքում,
- կառուցել քերականորեն ճիշտ կազմակերպված մտքեր՝ համապատասխան շարադասությամբ,
- ցուցաբերել կուռ կառուցվածքով, տրամաբանորեն կապակցված սահուն և ինքնաբուխ մտքեր,
- մեկնաբանել և նկարագրել տվյալներ՝ կիրառելով պատշաճ ու գրագետ լեզվաարտահայտչամիջոցներ,
- չշեղվել հանձնարարված թեմաներից՝ կիրառելով սահուն խոսք, համապատասխան բառապաշար և կապակցված միտք:

Եզրակացություն

Սույն հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ ստանդարտացված հայտնի թեստավորումները ստուգում են լեզվական չորս հմտությունները խորքային և չափելի գիտելիքների տեսակետից: Ուստի կարող ենք վստահաբար նշել, որ սույն քննություններին նախապատրաստելը ոչ այլ ինչ է, քան լեզվական հումքի դասավանդում, անգլերեն լեզվի կարողականության ձևավորում՝ առանց տարօրինակ մեխանիզմների և նմուշային կառույցների: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ում նշյալ թեստավորումներն ունեն լայն պահանջարկ, այդուհանդերձ թեստավորումներին նախապատրաստող դասավանդողները այնքան էլ մեծ թիվ չեն կազմում: Պարզ դարձավ, որ սովորողները մեծամասամբ ճիշտ ուղղորդված են՝ բացառությամբ որոշ դեպքերի, իսկ դասավանդողները հիմնականում տեղեկացված են թեստավորման մեխանիզմներին և առաջարկում են մի շարք կիրառելի մեթոդներ: Դասավանդողների մեծ մասը՝ 64,3%-ը, անձամբ հանձնել է քննությունը, որը թերևս մեր հայեցակետից կարևոր նախապայման է, այնուամենայնիվ, նրանց մեծ մասը դեռևս չի պատկերացնում դասավանդման վերջնարդյունքը: Կարող ենք փաստել, որ կան որոշակի մոտեցումային բացթողումներ, մասնավորապես՝ նմուշօրինակներով բանավոր և գրավոր խոսքի դասավանդումը, միևնույն ժամանակ այդ գերակշռող մեծամասնությունը կողմ է լեզվական հումքի խորքային դասավանդմանը, որը,

կարծում ենք, գովելի է: Եվ վերջապես, ստանդարտացված քննությունների նախապատրաստական դասընթացների հաջողության ուղիները կարող ենք ամբողջացնել և առաջարկել հետևյալ սկզբունքներով՝

- սովորեցնել ընթերցանության բոլոր տեսակները, դրանց թվում նոր միայն նաև որոնողական ընթերցանության տարատեսակները,
- զարգացնել ընթերցանության արագությունը՝ բառային զույգերի ուսուցանմամբ՝ դրանց թվում թիրախավորելով նույնանիշությունը, հոմանիշությունը և հականիշությունը,
- կիրառել բառային խմբերի և համատեքստային նշանակություններին վերաբերող տարատեսակ վարժանքներ,
- սովորողներին իրազեկել ընթերցանության նպատակներին և սովորեցնել *ընթերցել՝ իմանալու համար* սկզբունքը,
- հանձնարարել ուսանողներին ունկնդրել և տարբերակել ամենատարբեր ոլորտներին առնչվող տեղեկատվություն,
- գերկարևորել համանունների և հոմոֆոնների ուսուցանումը,
- զարգացնել ուսանողների ընկալումը խոսույթի կապակցվածության շրջանակներում,
- շեշտադրել ընկալման գործընթացի ինքնակառավարումը և ընկալման ընթացքում առաջացած դժվարությունների տարբերակումը,
- քննարկումներն ու բանավեճերը դարձնել նախապայման,
- նարատիվի՝ պատմաշարի միջոցով բարելավել ուսանողի բանավոր խոսքը, այսինքն՝ ուսանողներին թույլ տալ, որ անվերապահորեն կիրառեն իրենց սեփական կյանքի պատմություններն ու փորձառությունները,
- սովորեցնել քերականական կառույցների ճշգրիտ կիրառման առանձնահատկությունները,
- ձևավորել գրագրության հմտություններ՝ թելադրություններ, կարճ պատմվածքներ կամ պարբերություններ գրելու միջոցով,
- շեշտադրել արդեն յուրացրած բառապաշարի ճշգրիտ և ի բնե կիրառման կարևորությունը,
- որդեգրել գործընթացային մոտեցում՝ հնարավորինս խուսափելով դասավանդել կաղապարված տեքստային նմուշօրինակով, ընդհակառակը՝ խթանելով ստեղծագործականությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ / WORKS CITED

1. Լեզուների Իրազ. Համաեվրոպական Համակարգ. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում /հայերեն թարգմանություն/. Նոր Գրատուն, Երևան, 2005:

Lezuneri irazekutyan hamaevropakan hamakarg // Lezuneri imacutyan hamaevropakan hamakarg, usumnarutyun, dasavandum, gnahatum/ hayeren targmanutyun, Nor Gratun, Erevan [The Common European Framework of Reference for Languages, Yerevan] 2005. (In Armenian)

2. British Council, IELTS. IELTS, Test Format. 10 December 2019, https://takeielts.britishcouncil.org/take-ielts/prepare/test-format:

3. Bygate, Martin "Speaking" Keplan, Robert. Oxford Handbook of Applied Linguistics Oxford: Oxford University Press, 2000

4. Cambridge English Assessment. Cambridge English. 16 January 2020. <https://www.cambridgeenglish.org/exams-and-tests/ielts/test-format/>

5. Ahumaraeze, Chinwe."Teaching the four skills:Topical Perspectives." Chizoba Umerah, Princewill Chinonso Okolo, Joy Eyisi. Becoming an outstanding teacher in the 21st century. Kaduna: Manny Press House, 2016. 612

6. Derrik, Deirdre. "Teaching beyond the test: A method for designing test preparation classes." English Teaching Forum 11 March 2013: 20-27.

7. Eskey, David. "Reading in a Second Language." Hinkel, Eli. Handbook of Reseacrh on Second Language Teaching and Learning, Mangwah, New Jersey: Lawrence Erlbaum, 2010. 563-580

8. ETS Test Prep.Planner. The TOEFL iBT Test Prep Planer. Princeton, New Jersey: ETS, 2019.

9. Eyisi, Chizoba Umerah & Joy. “Teaching the Four Language Skills: Popical Perspectives.” Ahumaraeze, Chinwe. Becoming an outstanding teacher in the 21st century Kaduna : Manny Press House, 2016. 612.

10. Grabe, William. "Reading in a second language." Keplan, Robert. The Oxford Handbook of Applied Language. Oxford: Oxford University Press, 2000.

11. Hinkel, Eli. "Current perspectives on teaching the four skills." TESOL Quarterly (2006): 109-131

12. Leki, Ilona. "Second Language Writing”, Keplan, Robert. The Oxford Handbook of Applied Linguistics. Oxford: Oxford University Press, 2002.

13. Lynch Tony & Mandel David. "Listening". An Introduction to Applied Linguistics. London: Arnold, 2002. 38-39.

14. Schmitt, Robert. An Introduction to applied linguistcs. London: Arnold, 2002.

15. Steele, Vanessa. “Product and Process writing” 10 February 2020. https://www.teachingenglish.org.uk/article/product-process-writing-a-comparison

ENGLISH STANDARDIZED TESTS AND GUIDELINES OF ORGANIZING EFFECTIVE PREPARATORY COURSES IN THE REPUBLIC OF ARMENIA

SONA HAKOBYAN
European University of Armenia,
Faculty of Linguistics and Psychology,
Chair of Applied Linguistics, Head;
Ph.D. in Philology,
ILS Armenia Interntational Language School, Founder,
Yerevan, The Republic of Armenia

The given article discusses international standardized English exams with some issues of arranging their preparation courses in Armenia. The aim of the study is to briefly introduce TOEFL iBt and IELTS exams and their structures, given the fact of their applicability, testing requirements, and teaching approaches. The article presents some guidelines for arranging effective and outcome-based courses in line with measuring academic English.

The objective of the study is to outline the basic needs of test-takers, the teaching approaches of the tutors organizing preparatory courses as well as some guidelines for outcome-based teaching.

For reaching the objective of the study we have applied face-to-face interviews by recording them and an online questionnaire, analyzed with GoogleDocs.

Based on the results of the study, organizing preparatory courses for test takers tutors should take into account language acquisition in general and develop language skills without atypical mechanisms and templates.

Keywords: *Standardized exam (TOEFL iBT, IELTS), preparatory course, English, language skills, final result, approach, method, guideline.*

СТАНДАРТИЗИРОВАННЫЕ ТЕСТЫ ПО АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ И МЕТОДЫ ОРГАНИЗАЦИИ ЭФФЕКТИВНЫХ ПОДГОТОВИТЕЛЬНЫХ КУРСОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

СОНА АКОПЯН
заведующая кафедрой прикладной лингвистики факультета лингвистики и психологии Европейского университета Армении, основатель Международной Языковой Школы ILS Armenia, кандидат филологических наук, г.Ереван, Республика Армения

В данной статье рассматриваются международные стандартизированные экзамены по английскому языку и некоторые вопросы, связанные с организацией подготовительных курсов к этим экзаменам в Армении. Целью исследования является кратко обрисовать особенности проведения экзаменов TOEFL iBt и IELTS их требования и структуру, а также предложить и конкретные подходы к обучению для удовлетворения этих требований. В статье представлены некоторые основополагающие принципы организации эффективных и ориентированных на результат курсов в соответствии с критериями академического английского языка.

Задачей исследования является выявление потребностей тестируемых, педагогических подходов преподавателей, организующих подготовительные курсы, а также некоторых базовых принципов результативного обучения. Для достижения целей исследования мы пользовались записями личных интервью, а также онлайн-анкетами, проанализированными GoogleDocs.

По результатам исследования мы пришли к выводу, что при проведении подготовительных курсов для тестируемых преподавателей объектом изучения должны стать основы языка, а развивать языковые навыки необходимо, не используя нетиповые механизмы и шаблоны.

Ключевые слова: *стандартизированный экзамен (TOEFL iBT, IELTS), подготовительный курс, английский язык, языковые навыки, конечный результат, подход, метод, руководство.*

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՐԺՈՒՅԹ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ*

ՀՏԴ 811.19 *10.52063/25792652-2022.3.14-146*

ԼԱԼԱ ԳՐՔԻԿՅԱՆ
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հայցորդ,
Գյումրիի թիվ մեկ ավագ դպրոցի հայոց լեզվի և
գրականության ուսուցչուհի,
ք.Գյումրի, Հայաստանի Հանրապետություն
grkikyan999@gmail.com

Սույն հոդվածի նպատակն է քննել ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի խնդրառական արժույթը:

Մեր առաջադիր խնդիրներն են՝ ա) առանձնացնել ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը, բ) դասակարգել դրանք՝ ըստ խնդրառական արժույթի, գ) բացահայտել խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի կապակցելիական առանձնահատկությունները:

Աշխատանքը կատարել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, վիճակագրական մեթոդներով:

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերին բնորոշ են արժույթի բոլոր դրսևորումները՝ ենթակառությունը, ստորոգառությունը, կոչականառությունը, խնդրառությունը և պարագառությունը: Ներկայացնելով իմաստային տարբեր խմբեր՝ չեզոք սեռի բայերը առանձնանում են խնդրառական արժույթի տեսանկյունից: Այդ բայերի զգալի մասն օժտված է խնդրառական արժույթով, մի մասը թեև կարող է խնդիր ստանալ, սակայն դա պայմանավորված չէ ուժեղ կառավարմամբ, իսկ մի մասն էլ առհասարակ զուրկ է խնդրառական արժույթից: Խնդրառու չեզոք սեռի բայերը լրացում են պահանջում թե՛ անմիջական և թե՛ ոչ անմիջական կառավարման եղանակներով: Անմիջական կառավարման եղանակով կապակցություններից ավելի հաճախադեպ են տրական հոլովով խնդիր պահանջող բայերը, որը պայմանավորված է տրականի իմաստային բազմազանությամբ: Ըստ ուժեղ կառավարմամբ խնդիր պահանջելու օժտվածության՝ չեզոք սեռի բայերը լինում են կա՛մ միարժույթ, կա՛մ երկարժույթ: Երկաժույթ բայերի պահանջած երկու խնդիրները մի դեպքում արտահայտվում են երկու տարբեր հոլովներով, մյուս դեպքում՝ երկու տարբեր կապական կառույցներով, իսկ երրորդ դեպքում՝ մի հոլովաձևով և մի կապական կառույցով:

Հիմնաբառեր՝ *արժույթ, չեզոք սեռի բայեր, կապակցելիություն, կառավարում, անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ գոյականներ, անմիջական կառավարում, միջնորդական կառավարում, կապական կառույց:*

Նախաբան

Հայերենի բայի խնդրառական արժույթին հայ լեզվաբաններից առաջինն անդրադարձել է Գ. Ջահուկյանը՝ ժամանակակակից հայերենում առանձնացնելով

* Հոդվածը ներկայացվել է 24.08.2022թ., գրախոսվել՝ 10.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

միարժույթ և երկարժույթ բայեր (Ջահուկյան 473): Գ.Խաչատրյանն այդ հարցը քննության է առել գրաբարի վերլուծական բայերի արժույթին վերաբերող մենագրությունում (Խաչատրյան 136-175): Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի խնդրառական արժույթն ուսումնասիրել են նաև Հ. Հարությունյանը, Ս. Գյուլբուդաղյանը, Մ. Ասատրյանը, Ռ. Իշխանյանը, Ս. Մուրադյանը և այլք (Հարությունյան 110-123; Ասատրյան 222-246; Գյուլբուդաղյան 23; Իշխանյան 267-268; Մուրադյան 335-342): Սույն հոդվածում առաջին անգամ փորձ է արվում քննության առնել ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը:

Ժամանակակից հայերենի խնդրառու չեզոք սեռի բայերի և խնդիրների կապակցումը կատարվում է կառավարման եղանակով, որը, ինչպես հայտնի է, ունի երկու արտահայտություն՝

1. անմիջական, երբ խնդիրները լրացյալ խնդրառու բայերին կապակցվելիս արտահայտվում են որևէ հոլովով, ինչպես՝ …. կարողանար *ձայնակցել Արտակին* (ԴԴ*):
2. Միջնորդական կամ կապային (Աբեղյանը գործածում է *անմիջական կապակցություն* և *միջական կապակցություն* եզրույթները:) (Աբեղյան 397), երբ խնդիրները լրացյալ խնդրառու բայերին կապակցվում են կապերի միջնորդավորությամբ, այսինքն՝ որևէ հոլովի (կապվող բառ) և կապի միջոցով (Ասատրյան 54), ինչպես՝….աշխատում է *սրա-նրա համար….* (Մաթևոսյան 10):

Նշեցինք, որ ուսումնասիրության նյութ են ծառայել ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը և նրանց ուժեղ կառավարմամբ կապակցվող հոլովական և կապական լրացումները: Ըստ մեր հաշվարկների՝ ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի թիվը հասնում է մոտավորապես 5500-ի, որոնցից մոտ 3500-ը *ե* խոնարհման բայեր են, իսկ ավելի քան 2000-ը՝ *ա* խոնարհման բայեր: Հատկանշական է նաև, որ վերջիններիս կազմում գերակշռում են *ան* սոսկածանցավոր կազմությունները (շուրջ 1500 բայ): Սակայն չեզոք սեռի խնդրառությամբ միարժույթ բայերի քննությունից պարզվում է, որ դրանցից ոչ բոլորն են բնորոշվում ուժեղ կառավարմամբ խնդրառական արժույթով:

1. Մի խումբ չեզոք սեռի բայեր առանձնանում են ոչ թե ուժեղ, այլ թույլ կառավարմամբ խնդրառությամբ, ինչպես՝ *ամրանալ, աղքատանալ, աշխատել, աշխուժանալ, առաջանալ, գեղեցկանալ, գոյատևել, հասունանալ, միաբռունցքվել, մտասուզվել, փայլել* և այլն:

2. Չեզոք սեռի բազմաթիվ բայեր զուրկ են խնդրառական արժույթից, ինչպես՝ *բանաստեղծանալ, գժդմնել, դեմոկրատանալ, երեկոյանալ, լեռնամագլցել, ծիծաղել, կայծակել, կարկտել, ձմեռնանալ, մահանալ, տխրել, ցերեկանալ* և այլն:

3. Չեզոք սեռի բայերի մի մասն էլ, ճիշտ է, ուժեղ կառավարմամբ խնդրառական արժույթով չի բնորոշվում, սակայն առանձնանում է ուժեղ կառավարմամբ իրականացող պարագաառական արժույթով, ինչպես՝ *արշավել, բազմել, բարձրանալ, բնակվել, գալ, գնալ, ընկնել, թռչել, պառկել, սահել, վազել, վերադառնալ*և այլն:

Ստորև կներկայացնենք խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի դիմավոր և անդեմ ձևերի կապակցելիական հնարավորությունները՝ ըստ ուժեղ կառավարման անմիջական և միջնորդական տեսակների:

1. **Անմիջական կառավարման եղանակով** ձևավորված կապակցություններում խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը ժամանանակակից հայերենում պարտադիր կերպով ենթադրում և անհրաժեշտության դեպքում պահանջում են անուղղակի կամ բնության խնդիր (Դասակարգումների ընթացքում օգտվել ենք Գ. Ջահուկյանի և Վ. Քոսյանի կազմած ցանկերից:) (Ջահուկյան 473-479; Քոսյան 220-442) լրացում՝ արտահայտված՝

1.1. տրական հոլովով, ինչպես՝ …. նա շարունակ կեղծում *է,* սողունի նման հարմարվում, *շողոքորթում ընկերներին* …. (ՇԹ*):

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի տրական հոլովով լրացումը կարող է ցույց տալ՝

1.1.1. Անձնանիշ առարկա(ներ): Այսպիսի տրական պահանջող բայերից են՝ *բարոյախոսել, դավադրել, եղբայրանալ, զանգահարել, ժպտալ, խաղակցել, հարազատանալ, հպատակվել, սիրահարվել, ցավակցել, փեսայանալ, քծնել* և այլն: Օրինակ՝ …. տեսել *էի* մոտից և *խաղակցել* աշխարհահռչակ *դերասանների ....* (ՎՓ*):

1.1.2. Իրանիշ առարկա(ներ): Նման տրական պահանջող բայերից են՝ *թղթակցել, հակասել, համբերել, համընկնել, հանգել, հարմարվել, մասնակցել, միջամտել, տեղեկանալ* և այլն: Օրինակ՝ .... դպրոցում տրված սովորական դասերից ես *մասնակցում էի* միմիայն *մարմնակրթանքին* ....(ՎՓ*):

1.1.3. Տարբեր դասանիշ առարկա(ներ), այդ թվում՝

1.1.3.1. Անձնանիշ/իրանիշ/կենդանանիշ: Այդպիսի տրական պահանջող բայերից են՝ *դիմել, դիպչել, կպչել, հանդիպել, հաջորդել, հասնել, մոտենալ, պատահել*և այլն: Հմմտ.՝.... սպայակույտի միակ անդամը, որ համարձակվում էր *նրան մոտենալ,* Հաջին էր (ԽԴ*) // .... Պատվական Գյոզալյանի պատմությունը *մոտենում էրավարտին*(ԶԴ*) // .... եկավ մեր կողմը և վազեվազ *մոտեցավ* կուտ ուտող *հավերին* (ՍԶԵԺ2 570):

1.1.3.2. Անձնանիշ/իրանիշ: Նման տրական պահանջող բայերից են՝ *զինակցել, թիկնել, ծառայել, կռթնել, համաձայնել, համապատասխանել, տիրանալ* և այլն: Հմմտ.՝ Դե՛, *նրան* էլ, դուք լավ գիտեք, *ընդդիմանալ* հնարավոր չէ (ՌԶ*) // .... չկարողացավ *ընդդիմանալ* թագուհի Բարեջանի *թախանձանքներին ....* (ԶԴ*):

1.1.3.3. Անձնանիշ/կենդանանիշ: Այսպիսի տրական են պահանջում *գզվռտել, դարանակալել, հնազանդվել, ձայնակցել, մտերմանալ* և այլ բայեր: Հմմտ.՝ …. մարդիկ *գզվռտում են իրար* (ԶԴ*) // …. ինչպես *են* շներն *իրար գզվռտում ....* (ՊՍ*):

Տրականով հանգման խնդիրը կարող է դրսևորել մի շարք իմաստներ, որոնք արտահայտվում են համեմատության, փոխադարձ գործողության և կապվածության (Վ. Առաքելյանն անվանում է փոխադարձ գործողության և կապվածության անուղղակի խնդիր:) (Առաքելյան 296), ընդդիմության, շահի և այլ տրականներով: Օրինակ՝ Երևի ոչ մեկի ազգանունն այդպես *չի համապատասխանել էությանը,* դատարկ փիլիսոփայելու, մեծ-մեծ խոսելու վարպետ էր Ճարտարյանը (ՎԳ*):….*խոսակցությանը մասնակցեց* Մարոն (ՄԿ*): …. պատշաճ չափ ու ձևի մեջ *է ընդդիմախոսում* իր *որդուն* երկու արքաների կին Դանիո թագուհին…. (ՎՓ*): Մելիքը խոհեմությամբ *հպատակվել է փաշային* (ՍԽ*): Ընթերցումը *մնում էր Արամ պապին*: (ՌՀ*):

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջած տրական հոլովով խնդիրը մյուս հոլովներով արտահայտված խնդիրների համեմատությամբ հաճախ է հանդիպում: Վ.Քոսյանը ասվածը իրավացիորեն պատճառաբանում է տրական հոլովով խնդիր պահանջող չեզոք սեռի բայերի մեծ թվով, որոնք ներկայացնում են իմաստային տարբեր խմբեր (Քոսյան 216-227) և գործածվելով խոսքային տարբեր իրադրություններում՝ պահանջումեն քերականական տարբեր իմաստներ արտահայտող խնդիր լրացումներ:

1.2. Բացառական հոլովով, ինչպես՝ - Հը, - իր *պահանջից* սկսեց *նահանջել* Աթագ ազին (ՍԽ*):

Բացառական հոլովով խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի բայերի լրացումը կարող է ցույց տալ՝

1.2.1. Անձնանիշ առարկա(ներ): Այսպիսի բացառական են պահանջում *ակնածել, պատկառել* և այլ բայեր: Օրինակ՝ ....Տիգրանը *ակնածեց նրանից* (ԴԴ*):

1.2.2. Իրանիշ առարկա(ներ): Նման բացառական պահանջող բայերից են՝ *բաղկանալ, բավականանալ, դժվարանալ, հարբել,նահանջել, շատանալ, պակասել, տեղեկանալ, ուշանալ*և այլն: Օրինակ՝ …. Նա կարող է *ուշանալ գնացքից*…. (ՆԴ*):

1.2.3. Տարբեր դասանիշ առարկա(ներ), այդ թվում՝

1.2.3.1. Անձնանիշ/իրանիշ/կենդանանիշ: Այսպիսի բացառական են ստանում *խուսափել, հեռանալ, ձանձրանալ, սարսափել, վախենալ, փախչել* և այլ բայեր: Օրինակ՝ ….առհասարակ *տերտերներից* ես *վախենում եմ*…. (ՍԶԵԺ3, 184) // ….*վախենում էր* նրա *ճռճռոցից* (ՀՄԵ2 45) // Ես առհասարակ *մկներից վախենում եմ* …. (ՍԶԵԺ3 130):

1.2.3.2. Անձնանիշ/իրանիշ: Այսպիսի բացառական պահանջող բայերից են՝ *բացակայել, հոգնել* և այլն: Օրինակ՝ ….ղեկավարները *հոգնել էին* երիտասարդ *նկարիչներից* …. (ԹԴ*) // ….ժողովուրդը *հոգնել է* ճակատային *քարոզներից* …. (ՎԳ*):

1.2.3.3. Անձնանիշ/կենդանանիշ: Այսպիսի բացառական են պահանջում *թաքնվել, ճողոպրել* և այլ բայեր: Օրինակ՝ …. Չափարի ետևը *ուսուցչից* դեռ *թաքնվում էին* (ՀՄ*) // …. Ձեր շունը կարող է …. փախչել տնից՝ *շներից թաքնվել* սովորելու համար …. (ՄԵՀ*):

Խոսքի մեջ միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջած բացառական հոլովով լրացումը նախադասության մեջ կարող է դառնալ՝

ա) անջատման խնդիր: Օրինակ՝ Չորս տարի *բացակայել էր ընտանիքից* …. (ԱՔ*):

Բացառականով անջատման խնդիրն ունի մի շարք քերականական իմաստներ, որոնցից են՝ անջատման, խուսափման, ծագման կամ սերման (Եզրույթները Վ.Առաքելյանինն են) (Առաքելյան 314-319), պասիվ ներգործության և այլն:- Իսկ ո՞վ է ուզում *խուսափել մահից,* - բարկացավ Փառենը (ՍԱ*): Գիտե՞ս ինչ, Ալեքսա՛նդր, մինչև անգամ ամենալավ *բանից* մարդ կարող է *ձանձրանալ* …. (ՇԹ*):

բ) Ներգործող խնդիր: Օրինակ՝ …. Աղջիկը սուտ է ասում, թե իբր չգիտե *ումից է հղիացել* …. (ՁԲ*):

1.3. Գործիական հոլովով, ինչպես՝ …. Հոյակապ լեզու ունենք, *որով* կարելի է *ճառել* …. (ԴԴ*):

Գործիական հոլովով միջոցի խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի բայերի լրացումը սովորաբար կարող է ցույց տալ տարբեր դասանիշ առարկա(ներ), այդ թվում՝

1. անձնանիշ/իրանիշ/կենդանանիշ առարկա(ներ): Այդ բայերից են՝ *զբաղվել, հետաքրքրվել, պարծենալ* և այլն: Հմմտ. Ներեցեք ինձ, պարոն, եթե ես *հետաքրքրվում եմ ձեզանով* ….(ՆԴ*) //….խոսում *էին*, միմյանց *գործերով հետաքրքրվում* (ՇԹ*) // ….*հետաքրքրված է ձիերով* (ԻԱՀ*) և այլն:

2. Անձնանիշ/իրանիշ առարկա(ներ), որպիսիք պահանջվում են *գոհանալ*, *լիանալ* և այլ բայերի կողմից: Հմմտ. ….*Քեզնով լիանալ* Ու քեզ միանալ… (ՊՍ*)// …. *լիանալ* նրա սիրո *զգացմունքով* (ԴԴ*):

Միարժույթ չեզոք սեռի բայերի՝ ուժեղ կառավարմամբ պահանջած գործիական հոլովով լրացումը հիմնականում կարող է գործածվել շարահյուսական հետևյալ պաշտոններով՝

ա) միջոցի խնդիր: Օրինակ՝ Պարսից այդ թևը…. սկսեց այդտեղ *ուժեղանալ* մանր *ջոկատներով*…. (ԴԴ*):

բ) Սահմանափակման խնդիր: Օրինակ՝ ….տերը չէր կարող *գոհանալ* միայն լուսնի և աստղերի *կենդանացումով* (ՊՍ*):

1.4. Ներգոյական հոլովով, ինչպես՝ …. նրանք *թերանում են* պետական *գործերում* (Խալափյան 254):

Ներգոյական հոլովով խնդիր պահանջող միարժույթ չեզոք սեռի բայերից են՝ *դժվարանալ, թերանալ, ծուլանալ, վարպետանալ, ուժեղանալ* և այլն: Օրինակ՝ …. գոռում էր նրանց վրա, ովքեր *թերանում էին* այդ *աշխատանքում* (ԽԴ*):

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը ներգոյական հոլովով միայն իրանիշ առարկաների են կապակցվում, որովհետև անձնանիշ և կենդանանիշ առարկաների ներգոյական հոլովը գործածական չէ:

Միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջած ներգոյական հոլովով խնդիր լրացումը կատարում է միայն սահմանափակման խնդրի գործառույթ, ինչպես՝.... այս մեզ ավելի էր անհանգստացնում, քան եթե *թերանար* իր *պարտականություններում* (ԳՄ*):

2. **Միջնորդական կառավարման եղանակով** ձևավորված կապակցություններում խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով ենթադրում և անհրաժեշտության դեպքում պահանջում են խնդիր լրացում՝ արտահայտված կապով և կապվող բառով, ինչպես՝ ….թնկթնկում *էր* երեխան, և իր *ցանկության* ու *թախանձանքի մեջ համառում* .... (ՍՁԵԺ2 482):

Հոլովական թեքույթներին զուգահեռ՝ ժամանակակից հայերենում գործողության և առարկայի, հանգամանքի կամ հատկանիշի փոխհարաբերությունը կարգավորվում է նաև կապերի միջոցով: Սակայն հոլովաձևերով ոչ միշտ է, որ հնարավոր է արտահայտել այս կամ այն քերականական հարաբերությունը. « .... հոլովների արտահայտած հարաբերությունները ավելի ընդհանուր են և վերացական, քան կապերի արտահայտած հարաբերությունները» (Ասատրյան 386): Ավելին՝ մի շարք դեպքերում կապերը պարզապես անփոխարինելի են. կան քերականական իմաստներ, որոնք արտահայտվում են միայն կապերի միջոցով, ինչպես՝ …. ժողովուրդը *ապստամբել է թագավորի դեմ* (ԴԴ*): ….վիճաբանում ենք*իրարհետ* (ԴԴ*): .... արորէանումպարելով, *փոխանակ* մաճը *բռնելու* (ՊՍ*):

Կապերը միջնորդական կամ կապային կառավարման եղանակով ձևավորվող կապակցությունների քերականական իմաստի արտահայտման առանցքային բաղադրիչներն են: Նրանք կապվող բառերի հետ, որպես կանոն, դառնում են շարահյուսական կապակցության ստորադաս բաղադրիչ՝ կապվող բառի բառային իմաստին հավելելով քերականական իմաստ և առաջին հերթին ձևավորելով բայով արտահայտված գերադաս անդամի լրացում: Օրինակ՝ ….դու կին չես եղել *երեխայիս համար* (Մաթևոսյան 29): Դրանցից շատերը կապվող բառերի հետ ձևավորում են նաև գոյականով և ածականով արտահայտված անդամի լրացում:

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի մի շարք բայեր պահանջում են տարբեր (հոմանիշ կամ ոչ հոմանիշ) կապերով ձևավորված խնդիր լրացումներ: Դրանցից են՝ *ապստամբել ,բարկանալ, ըմբոստանալ, խենթանալ, կռվել, մեղանչել* և այլն: Հմմտ. Խլել կյանքը մի մարդու, *որի հանդեպ* արդեն *մեղանչել ես* …. (ԳՄ*) // *Մեղանչել եմ նրա առաջ….* (ՎՄ*) //….որոնք *իրականության դեմ* չէին կարող *մեղանչել*…. (ԽՀԲ*) // Սովորեցի չգործած *Մեղքիս համար մեղանչել….* (ՀՍԲ1):

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի և խնդրային հարաբերություն արտահայտող կապական կառույցների փոխհարաբերության քննությունը ցույց է տալիս, որ՝

1. Մի դեպքում կապական կառույցները ձևավորվում են տարբեր իմաստային խմբերի կապերով, գործածվում են տարբեր իմաստային խմբեր ներկայացնող և խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջով, սակայն խոսքի մեջ կատարում են շարահյուսական միևնույն պաշտոնը: Ասվածը վերաբերում է այն կապական կառույցներին, որոնցում միակ կամ հիմնական բառիմաստով գործածված

կապերը կապվող բառերի և որպես գերադաս անդամ գործածվող չեզոք սեռի միարժույթ բայերի միջև ձևավորում են հանգման քերականական հարաբերություն: Որպես կապ գործածվում են բուն հանգման (*նկատմամբ, վերաբերմամբ*), շահի (*հոգուտ, օգտին, համար, հանուն*), ընդդիմության ու միասնության (*դեմ, ընդդեմ, հետ, հանդերձ*) հարաբերության իմաստ արտահայտող բառեր և դրանց հետ կապակցվելու հնարավորությամբ օժտված, բառիմաստով տարբեր բայեր ու բայախմբեր, ինչպես՝ ա) *ավելանալ, սառնանալ, խորթանալ, չարանալ, օտարանալ* և այլն, բ) *մարտիրոսվել, մեռնել, պայքարել, տուժել* և այլն, գ) *ամուսնանալ, գոտեմարտել, ընկերանալ, կռվել, ճամարտակել, շատախոսել* և այլն: Օրինակ՝ ....դու հանդգնում ես *ճամարտակել* մի *կուսակցության դեմ....* (ՆՁ*): .... ինչպես *են պայքարել .... հանո՛ւն* հայրենիքի *ազատության....* (ԽԲ*): *Տուժել է հոգուտ* մեր կտրիճ *եղբոր* (ՎԾ*): .... Որի պատճառով *խորթացել է Գրեյսի հետ* .... (ԹԴ*):

2. Մյուս դեպքում կապական կառույցները ձևավորվում են միևնույն իմաստային խմբի հոմանիշ (կամ համանիշ) կապերով, պահանջվում են միևնույն իմաստային խումբը ներկայացնող և խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի կողմից և խոսքի մեջ կատարում են շարահյուսական միևնույն պաշտոնը: Ասվածը վերաբերում է այն կապական կառույցներին, որոնցում միակ կամ հիմնական բառիմաստով գործածված կապերը կապվող բառերի և գերադաս անդամների միջև ձևավորում են վերաբերության քերականական հարաբերություն, որի համար գործածվում են վերաբերության կապերը (*կապակցությամբ, հասցեին, մասին, վերաբերյալ* և այլն): Վերջիններով կազմված կապական կառույցները խոսքի մեջ կատարում են վերաբերության խնդրի պաշտոն և շարահյուսորեն համանիշ են բացառական հոլովով արտահայտված վերաբերության խնդիրներին: Հենց վերջին հանգամանքով է պայմանավորված, որ նշված կապերով կազմված կառույցներ ենթադրում և պահանջում են բացառական հոլովով վերաբերության խնդիր ենթադրող և պահանջող «ասացական, պատմողական, դատողության, հաղորդման և նման այլ իմաստներ արտահայտող» (Ասատրյան) չեզոք սեռի բայերը, ինչպես՝ *բանավիճել, բարբառել, բարոյախոսել, դատարկաբանել, դիմել, երկբայել, երկմտել, ճամարտակել, մտմտալ, մտորել, վայրահաչել, տափակաբանել* և այլն: Օրինակ՝ Նրանք կարող են *ճամարտակել մարդու իրավունքների, իրավահավասարության ու ժողովրդավարության մասին*(ԱՆ*): ....նորից *եմ դիմելու* դատարանների կայացրած այս *որոշումների կապակցությամբ* (ԱռՄ*): .... Երբ ինքնամոլն է *ազգի հասցեին* Ներբող *բարբառում* (ՆՁ*):

3. Երրորդ դեպքում կապական կառույցները ձևավորվում են տարբեր իմաստային խմբերի կապերի երկրորդական իմաստներով, պահանջվում են միևնույն իմաստային խումբը ներկայացնող և խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի կողմից և խոսքի մեջ կատարում են շարահյուսական միևնույն պաշտոնը: Դրանք այն կապական կառույցներն են, որոնցում երկրորդական բառիմաստով գործածված կապերը կապվող բառերի և գերադաս անդամների միջև ձևավորում են սահմանափակման քերականական հարաբերություն: Նշված գործառույթ կատարում են սահմանափակման կապերը (*առումով, գծով, կողմից, մեջ, ուղղությամբ* և այլն), որոնցով կազմված կապական կառույցները խոսքի մեջ կատարում են սահմանափակման խնդրի պաշտոն և շարահյուսորեն համանիշ են բացառական, գործիական կամ ներգոյական հոլովներով արտահայտված սահմանափակման խնդիրներին: Պատահական չէ, որ բերված կապերով կազմված կառույցներ ենթադրվում և պահանջվում են վերոնշյալ հոլովներով սահմանափակման խնդիր ստացող մի շարք չեզոք սեռի բայեր, ինչպես՝ *առաջադիմել, թերանալ, թուլանալ, ծուլանալ, համառել, վարպետանալ, տկարանալ* և այլն: Օրինակ՝ .... մարդիկ *թերանում են* իրենց *պարտականությունների մեջ* (ՄՍ*):

Եզրակացություն

Խնդրառությունը հատուկ է չեզոք սեռի դիմավոր և անդեմ բայերին, սակայն չեզոք սեռի ոչ բոլոր բայերն են խնդրառու: Չեզոք սեռի՝ խնդրառությամբ միարժույթ բայերը լրացմանը կապակցվում են անմիջական և միջնորդական կառավարմամբ: Առաջին դեպքում չեզոք սեռի բայերը պահանջում կամ ենթադրում են տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով արտահայտված անուղղակի խնդիր լրացումներ, որոնցից բային կապակցվելու հաճախադեպությամբ աչքի է ընկնում տրական հոլովով հանգման խնդիրը: Երկրորդ դեպքում բայի և լրացման կապն իրականացվում է կապերի միջոցով: Արժույթի տեսանկյունից կարևորություն են ներկայացնում հանգման, վերաբերության և սահմանափակման կապերով ձևավորված խնդիրները: Բազմաթիվ դեպքերում նույն քերականական հարաբերությունը կարող է ձևավորվել և՛ հոլովական թեքույթներով, և՛ կապերով: Սակայն կան դեպքեր, երբ քերականական առանձին իմաստներ արտահայտվում են կա՛մ միայն հոլովական վերջավորություններով, կա՛մ միայն կապային կառույցներով:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան, Մանուկ. *Հայոց լեզվի տեսություն.* Միտք, Երևան, 1965.
2. Առաքելյան, Վարագ. *Հայերենի շարահյուսություն.* հ. Ա, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958.
3. Ասատրյան, Մանվել. *Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն.* ԵՊՀ հրատ., Երևան,1983.
4. Ասատրյան, Մանվել. *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն.* ԵՊՀ հրատ., Երևան, 1987.
5. Գյուլբուդաղյան, Սիրաք. *Ժամանակակից հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն.* ԵՊՀ հրատ., Երևան, 1988.
6. Իշխանյան, Ռաֆայել. *Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն.* ԵՊՀ հրատ., Երևան, 1986.
7. Խաչատրյան, Գուրգեն. *Գրաբարի վերլուծական բայերի արժույթը.* Վան Արյան, Երևան, 2000.
8. Հարությունյան, Հենրիկ. *Կառավարումը ժամանակակից հայերենում.* ԵՊՀ հրատ., Երևան, 1983.
9. Մուրադյան, Սիլվա. Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ. *Գիտական Արցախ,* հ 2, N1, Երևան, 2019, էջ 335-342.
10. Ջահուկյան, Գևորգ. *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները.* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974.
11. Քոսյան, Վաղարշակ. *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները.* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975.

WORKS CITED

1. Abeghyan, Manuk. *Hayoc lezvi tesutyun.* Erevan. [Theory of the Armenian Language. Yerevan] 1965. (In Armenian)
2. Ar'aqelyan, Varag. *Hayereni sharahyusut'yun*. h. A. Erevan. [Syntax of the Armenian Language. vol. 1 Yerevan] 1958. (In Armenian)
3. Asatryan, Manvel, *Jhamanakakic hayoc lezu, D'evabanut'yun.* Erevan. [Modern Armenian language. Yerevan] 1983. (In Armenian)
4. Asatryan, Manvel. *Jhamanakakic hayoc lezu. Sharahyusut'yun.* Erevan. [Modern Armenian Language, Syntax. Yerevan] 1987. (In Armenian)

5. Gyulbudaghyan, Siraq. *Jhamanakakic hayereni sharahyusut'yun. Parz naxadasut'yun.* Erevan. [Syntax of Modern Armenian. Simple sentence. Yerevan] 1988. (In Armenian)

6. Ishxanyan, R'afayel. *Ardi hayereni sharahyusut'yun, Parz naxadasut'yun.* Erevan. [Syntax of the Modern Armenian Language, Simple sentence. Yerevan] 1986. (In Armenian)

7. Xachatryan, Gurgen. Grabari verluc'akan bayeri arjhuyt'y'. Erevan. [Valency of Analytic Verbs in Grabar. Yerevan] 2000. (In Armenian)

8. Harut'yunyan, Henrik. *Kar'avarumy' jhamanakakic hayerenum, Erevan.* [Government in Modern Armenian. Yerevan] 1983. (In Armenian)

9. Muradyan, Silva. Nergorc'akanser'ibay-storogyalneri kapakceliowt'yuny'tarber dasayin xmberi anun-xndirneri het. *Gitakan Arcax,* N1(2), Erevan. [Compatibility of Intransitive Verb-predicates with Object-nouns of Different Class Groups. Yerevan] 2019. (In Armenian)

10. Jahukyan, Gevorg. *Jhamanakakic hayereni tesut'yan himunqnery'.* Erevan. [Fundamentals of the Theory of Modern Armenian. Yerevan] 1974. (In Armenian)

11. Qosyan. Vagharshak. *Jhamanakakic hayereni bar'akapakcut'yunnery'.* Erevan. [Idioms of the Modern Armenian Language. Yerevan] 1975. (In Armenian)

Աղբյուրների ցանկ

1. Խալափյան, Զորայր. *Վասիլ Մեծ, հայ կայսր Բյուզանդիայի կամ կճուճների թագավորը.* Համազգային հրատ., Երևան, 1995, ԶԽՎՄ.

2. Սահյան, Համո. *Երկերի ժողովածու.* հ. Ա, Հայաստան հրատ., Երևան, 1967, ՀՍԲ1.

3. Մաթևոսյան, Հրանտ. *Երկեր երկու հատորով.* հ. 2, Սովետական գրող հրատ., Երևան, 1985, ՀՄԵ2.

4. Մաթևոսյան, Հրանտ. *Անտիպներ.*հ. 2, Երևան, Հ. Մաթևոսյան մշակութային բարեգործական հիմնադրամ, 2017, ՀՄԱ2.

5. Զորյան, Ստեփան. *Երկերի ժողովածու,* հ. 2, Երևան, Սովետականգրող հրատ., 1978, ՍԶԵԺ2.

6. Ստեփան Զորյան, *Երկերի ժողովածու,* հ. 3, Երևան, Սովետականգրող հրատ., 1979, ՍԶԵԺ3.

7. Ստեփան Զորյան, *Երկերի ժողովածու,* հ. 9, Երևան, Սովետականգրող հրատ., 1983, ՍԶԵԺ9.

ԱՐԵՎԱԿ-ի համառոտագրություններ (հասանելի է 31.07.2022)

ԱՆ* - Ալբերտ Նալչաջյան, ԱռՄ* - Առաւօտ, ԱՔ* - Արտաշես Քալանթարյան, ԳՄ*- Գուրգեն Մահարի, ԴԴ*- Դերենիկ Դեմիրճյան, ԶԴ*- Զարզանդ Դարյան, ԹԴ*- Թեոդոր Դրայզեր, ԽԲ* - Խիկար Բարսեղյան, ԽԴ*- Խաչիկ Դաշտենց, ԽչԲ*- Խաչիկ Բադիկյան, ՀՄ*- Հրանտ Մաթևոսյան, ՄԿ* - Մկրտիչ Կորյուն, ՄՍ* - Մկրտիչ Սարգսյան,ՆԴ* - Նար-Դոս, ՆԶ*- Նաիրի Զարյան, ՇԹ*- Շահեն Թաթիկյան, ՊՍ*- Պարույր Սևակ, ՋԲ*– Ջիվաննի Բոկաչչո, ՌԶ*- Ռուբեն Զարյան, ՌՀ*- Ռաֆայել Համբարյան, ՍԽ*- Սերո Խանզադյան, ՎԳ*- Վահագն Գրիգորյան, ՎՄ*- Վահագն Մուղնեցյան, ՎՇ* - Վիլյամ Շեքսպիր,ՎՓ* -Վահրամ Փափազյան

List of sources

1. Zorayr. Xalap'yan. *Vasil Mec', hay kaysr Byuzandiayi kam ktwutwneri t'agavory'.* Erevan. [Basil the Great, the Armenian Emperor of Byzantium or the King of ewers, Yerevan,] 1995. (In Armenian)

2. Hamo. Sahyan. *Erkeri jhoghovac'u.* h. A. Erevan. [Poems, no. A, Yerevan,] 1967. (In Armenian)

3. Hrant. Mat'&osyan. *Erker erku hatorov.* h. 2. Erevan. [Works in two volumes, vol. 2, Yerevan,] 1985. (In Armenian)

4. Hrant. Mat'evosyan. *Antipner.* h.2, Erevan. [Unpublished, vol. 2, Yerevan,] 2017. (In Armenian)

5. Step'an. Zoryan. *Erkeri jhoghovac'u.* h. 2, Erevan. [Collection of works, vol. 2, Yerevan,] 1978. (In Armenian)

6. Step'an. Zoryan. *Erkeri jhoghovac'u.* h. 3, Erevan. [Collection of works, vol. 3, Yerevan,] 1979. (In Armenian)

7. Step'an. Zoryan. *Erkeri jhoghovac'u.* h. 9, Erevan. [Collection of works, vol. 9, Yerevan,] 1983. (In Armenian)

AREVAK abbreviations (available on 31.07.2022)

AN* - Albert Nalchajyan, Ar'M* - Ar'awo't, AQ* - Artashes Qalant'aryan, GM*- Gurgen Mahari, DD*- Derenik Demirtwyan, ZD*- Zarzand Daryan, T'D*- T'eodor Drayzer, XB* - Xikar Barseghyan, XD*- Xachik Dashtenc, XchB*- Xachik Badikyan, HM*- Hrant Mat'evosyan, MK* - Mkrtich Koryun, MS* - Mkrtich Sargsyan, ND*- Nar-Dos, NZ*- Nairi Zaryan, ShT'*- Shahen T'at'ikyan, PS*- Paruyr Sevak, JB*– Jiovanni Bokachcho, R'Z*- R'uben Zaryan, R'H*- R'afayel Hambaryan, SX*- Sero Xanzadyan, VG*- Vahagn Grigoryan, VM*- Vahagn Mughnecyan, VSh* - Vilyam Sheqspir, VP'* -Vahram P'ap'azyan

Համացանցի համառոտագրություններ (հասանելի է 31.07.2022)

ՄԵՀ*- https://www.mundoperros.es
ԻԱՀ*- https://www.ilur.am

Internet abbreviations (available on 31.07.2022)

MEH*- https://www.mundoperros.es
IAH*- https://www.ilur.am

UNIVALENT INTRANSITIVE VERBS WITH OBJECTIVE VALENCY IN MODERN ARMENIAN

LALA GRKIKYAN
Gyumri Secondary School № 1,
Teacher of Armenian Language and Literature,
National Academy of Sciences,
Shirak Center for Armenological Studies, Ph.D. Student,
Gyumri, The Republic of Armenia

The purpose of this article is to study the valency of intransitive verbs in Modern Armenian.

The main objectives of the research are: a) to identify the intransitive verbs of the modern Armenian language, b) to classify them in terms of objective valency, c) to identify the features of compatibility of monovalent intransitive verbs with objective valency.

The work was carried out using descriptive, analytical, comparative and statistical methods.

Intransitive verbs of the Modern Armenian language are characterized by all manifestations of valency: subjective valency, predicative valency, valency in terms of acceptance of direct address and adverbial modifiers. Intransitive verbs representing different semantic groups are distinguished from the point of view of objective valency. Most of these verbs have objective valency. Some take object, but not by means of strong government, others do not have object valency at all. Intransitive verbs require object through both direct and indirect government. Among phrases with direct government, the most common are verbs that require an object in the dative case, which is due to the semantic diversity of the latter. From the point of view of their ability to accept the object through strong government, intransitive verbs are univalent and bivalent. The two objects that bivalent verbs require can be expressed in one case with two different cases, in another with two different prepositional constructions, and in the third case with one case form and one prepositional construction.

Key words: *valency, intransitive verbs, collocability, government, nouns denoting a person; nouns denoting an object; nouns denoting animals; direct government, indirect government, prepositional construction*.

ОДНОВАЛЕНТНЫЕ НЕПЕРЕХОДНЫЕ ГЛАГОЛЫ С ОБЪЕКТНОЙ ВАЛЕНТНОСТЬЮ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛАЛА ГРКИКЯН
учитель армянского языка и литературы
Гюмрийской средней школы №1,
соискатель Ширакского центра арменоведческих исследований
Академии Наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является изучение валентности непереходных глаголов в современном армянском языке.

Нашими основными задачами являются: а) выделить непереходные глаголы современного армянского языка, б) классифицировать их с точки зрения объектной

валентности, в) выявить особенности сочетаемости одновалентных непереходных глаголов с объектной валентностью.

Работа выполнена с использованием описательного, аналитического, сравнительного и статистического методов.

Для непереходных глаголов современного армянского языка характерны все проявления валентности: субъектной валентности, предикативной валентности, валентности с точки зрения принятия обращения и обстоятельства. Непереходные глаголы, представляющие разные семантические группы, выделяются с точки зрения объектной валентности. Большинство этих глаголов обладают объектной валентностью. Некоторые принимают дополнение, но это не обусловлено сильным управлением, а некоторые вообще лишены объектной валентности. Непереходные глаголы требуют дополнения как посредством прямого, так и косвенного управления. Среди словосочетаний с прямым управлением наиболее часто встречаются глаголы, требующие дополнения в дательном падеже, что обусловлено семантическим разнообразием дательного падежа. С точки зрения способности принимать дополнение путем сильного управления, непереходные глаголы бывают одновалентными и двухвалентными. Два дополнения, которые требуют двухвалентные глаголы, могут быть выражены в одном случае двумя разными падежами, в другом – двумя разными предложными конструкциями, а в третьем – одной падежной формой и одной предложной конструкцией.

Ключевые слова: *валентность, непереходные глаголы, сочетаемость, управление, существительные, обозначающие лицо; существительные, обозначающие предмет; существительные, обозначающие животных; прямое управление, опосредованное управление, предложная конструкция*.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ԿԼԵՈՊԱՏՐԱ ՍԱՐԱՖՅԱՆԻ «ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ» ԴԱՍԱԳԻՐՔԸ (1788 Թ.) *

ՀՏԴ 82.09 *10.52063/25792652-2022.3.14-157*

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kristine.melqumyan.83@mail.ru

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպես Պետերբուրգի հայկական տպարանի հայերենի դասագրքերով շարունակվեցին 16-րդ դարից սկզբնավորված հայերեն տպագիր դասագրքերի կազմման սկզբունքները: Ըստ այդ սկզբունքների՝ ներկայացվում էր հայոց այբուբենը տարբեր տառատեսակներով և յուրաքանչյուր տառի անվանմամբ ու արտասանությամբ: Ինչպես նախորդ համառոտ դասագրքեր-ինքնուսույցներում, այստեղ ևս քերականական կանոններ չկան: Ընթերցողը լեզուն գործնական ձևով պետք է սովորեր ընթերցանության համար նախատեսված բաժնում դրված կրոնական և գրական տեքստերից:

Հոդվածում խնդիր է դրված վեր հանել այս դասագրքի՝ գրականության հետ կապված շերտը, որն արտահայտվում է գեղարվեստական գրականությանը առավել բնորոշ բառերի կիրառմամբ, ինչպես նաև գրքի վերջում որպես «Զրուցարան» բերված բաժնի երկխոսություններում:

Հոդվածը գրված է վերլուծական, պատմական և համեմատական մեթոդների կիրառմամբ:

Դասագիրքը նաև այն յուրահատկությունն ունի, որ երկլեզվյան է, ինչպես նաև նրանում կրոնախրատական տեքստերից բացի տեղ են գտել հասարակական վերափոխմանն ուղղված գաղափարներ, որոնք արտահայտվել են եկատերինյան ժամանակաշրջանի լուսավորական միապետության ըմբռնումների շրջանակում:

Հոդվածում հանգում ենք այն եզրակացությանը, որ այս դասագիրքը ոչ թե ընդհանրապես ուսումնական ձեռնարկ է, այլ գրված է ժամանակի կենդանի կյանքի լեզվական իրողությունների հաշվառմամբ:

Հիմնաբառեր՝ *Հայ-ռուսերեն զրուցարան, Պետերբուրգի հայկական տպարան, դասագիրք, լուսավորական միապետություն, Մովսես Սառաֆյան, Գրիգոր Խալդարյան, այբուբեն, երկլեզու դասագիրք, Տերունական աղոթք:*

---

* Հոդվածը ներկայացվել է 13.08.2022թ., գրախոսվել՝ 20.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Նախաբան

16-19-րդ դարերի Այբբենարանների և հայերենի ինքնուսույցների քննությունը ցույց է տալիս, որ դրանք չի կարելի դպրոցական դասագրքեր համարել այս իմաստով, որովհետև այն ժամանակ չկային դպրոցներ այժմյան ըմբռնմամբ:

Դրանք կարելի է համարել ավելի շատ հայերենի համառոտ ինքնուսույցներ, որոնք նվազագույն գիտելիք էին տալիս կարդալու և քերականության ընդհանուր կանոնների վերաբերյալ:

Այս դասագիրք-ձեռնարկներում ներկայացվում է ժամանակի գրական խոսակցական հայերենը, որով այդ հրատարակությունները կարևորվում են ոչ միայն մանկավարժության պատմության, այլև հայոց լեզվի պատմության և բարբառային ձևերի ուսումնասիրման տեսանկյունից:

Նման գործերը վերջում որպես ընթերցարան ունեն տարբեր փոքր տեքստեր, որոնք հիմնականում կրոնական բնույթի են և սկսվում են «Հայր Մեր»-ով, այնուհետև՝ «Հավատո հանգանակ»-ով, և հետո գալիս են տարբեր նույնաբնույթ փոքր գործեր: Հաճախ հանդիպում են շարականներ:

Առավել ընդարձակ ձեռնարկներում կան նաև դասեր, որոնցում բնորոշվում են գրական ժանրերը, ուստի այս ձեռնարկ-դասագրքերը դառնում են հայ գրականության բնագրերի տպագրության առաջին օրինակները, իսկ գրականության տարբեր հարցերի բնորոշումները, կարծում ենք, որոշակի հետաքրքրություն կունենան հայ գրականության պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

«Բանալի գիտութեան» դասագիրքը XVII-XVIII դարերի տպագիր հայերեն ինքնուսույցների համատեքստում

Ժամանակի ընթացքում նման ձեռնարկները դառնում են երկլեզվյան՝ հայերեն և այն երկրի լեզվով, որտեղ տպագրվել են, ինչպես օրինակ հայերեն-գերմաներեն և հակառակը՝ «Հայնակ եւ նեմեցնակ», որը լույս է տեսել 1788 թ.-ին Տրիեստում՝ Տրանսիլվանիայի հայերի համար:

Հայերեն-գերմաներեն երկլեզվյան այս դասագրքում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացված է գերմաներեն համարժեքով:

Դասագիրքն ունի նաև ընթերցարան, որտեղ տեղ են գտել բարոյական տարբեր խրատներ, ինչպես օրինակ՝

Հանապազ ջանա աղէկ բան սորվէլու,
Փախիր ամէն խոտծած բանէրու,
Աստծոյ աչքը զամէն բանը կի տէսնու,
Հնազանդ էղիր սիրելի ծընողացդ (Հայնակ եւ Նեմեցնակ 16):

Հաջորդը մեղվին որպես օրինակ բերող չափածո խրատ է (Հայնակ եւ Նեմեցնակ 20): Գրքի վերջում, որպես ընթերցանության ավելի ծավալուն միավորներ, բերված են Տերունական աղոթքը, «Ողջոյն Քեզ Մարիամ» Հավատո հանգանակը և մի շարք հատվածներ եկեղեցական արարողություններից:

Նույն թվականին Պետերբուրգում է լույս տեսնում հայերեն-ռուսերեն առաջին դասագիրքը, որը ևս նման կառուցվածք ունի:

Մինչ այդ Պետերբուրգում 1781 թ.-ին լույս էր տեսել «Տետրակ Այբբենական Արարեալ յուսումն դեռահաս տղայոց» դասագիրքը բացառապես հայերենի հիմքի վրա: Խորհրդանշական է, որ Պետերբուրգում Գրիգոր Խալդարյանի կողմից սկզբնավորված հայկական տպագրության առաջին հրատարակությունը հայոց լեզվի այս դասագիրքն էր՝ նույն Խալդարյանի միջոցներով տպագրված:

Հայերեն դասագրքերի հրատարակության՝ նախորդող շրջանից եկող ավանդույթով նախ ներկայացվում է հայոց Այբուբենը մի քանի տառատեսակներով, ապա բերվում են միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ և հինգ վանկ ունեցող բառախմբեր այբբենական հերթականությամբ:

Գրքի վերջում նշվում են Հայոց Այբուբենի տառերից յուրաքանչյուրի թվային համարժեքները (Տետրակ Այբբենական 31-32):

1788թ. հրատարակությունը՝ «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան», նախորդի անհամեմատ ծավալուն և հայ-ռուսերեն տարբերակն է: Գիտություն բառը բերված է ոչ այսօրվա իմաստով, այլ որպես իմացություն, ինչպես որ զուգահեռ ռուսերեն տիտղոսաթերթում է գրված ***«Ключ познания»:***

Ընդհանրապես հարկավոր է ասել, որ այս գրքում շատ բառերի և արտահայտությունների իմաստները ճշտվում են ռուսերենի միջոցով:

Գրքի կառուցվածքի մասին տիտղոսաթերթում ասվում է. «Ունի սա ընդ իւր մասնաւոր Այբբենարան, մասնաւոր բառարան և ըսկզբունք քաղաքական ուսմանց»: Այն կազմված է հետևյալ չորս բաժիններից.

1. **Այբբենարան**
2. **Հայ-ռուսերեն բառարան**
3. **Հայ-ռուսերեն զրուցարան**
4. **«Սկզբունք քաղաքական ուսմանց»,** որը այսօրվա իմաստով նշանակում է քաղաքավարության կամ վարվեցողության կանոններ, ինչպես ռուսերեն տարբերակում է ասվում. ***«Правила из нравоучения»***:

Հայերենին զուգահեռ բերված է ռուսերենը և հակառակը: Այս սկզբունքը այնքան մեխանիկաբար է պահված, որ հենց առաջին միավորում անիմաստության է հասնում: Այն կոչվում է «Այբուբենք բոլոր գրոց հայոց և ըռուսաց» (Սարաֆեան 5): Ըստ Այբբենական հերթականության՝ իրար կից բերվում են հայերենի և ռուսերենի այբուբենները. տարբեր հնչյուններ պարունակող տառերը իրար կողք են հայտնվել:

Օրինակ՝ 11-րդ տառը հայերենում՝ Ի, ռուսերենում՝ К:

13-րդը՝ հայերենում՝ Խ, ռուսերենում՝ М:

19-րդը՝ հայերենում՝ Ճ, ռուսերենում՝ Т:

Եվ այսպես շարունակ:

Երկրորդ սյան մեջ, ինչպես խորագրում է ասվում՝ «Աստ հետևի ռուսաց Այբբենն ընդ հայոց», արդեն հայերենի համարժեք տառերն են ռուսերենում:

Հետո գալիս է ռուսերեն այբուբենը հայոց համարժեքներով. «Աստ հետևի անուանք տառից՝ ռուսաց ընդ հայոց»՝ չորս սյուն. հայերեն՝ մեծատառ և փոքրատառ, ապա՝ ռուսերեն տառերով հայերեն հնչողությունը, ինչպես օրինակ.

Բեն Бень և ռուսերեն б տառը (Սարաֆեան 7):

Կից, նույն սկզբունքով, ռուսերենից հայերեն բերվում է ռուսերեն մեծատառ-փոքրատառ, ապա ռուսերեն տառի անվանումը հայերեն գրված.

Ազ

Բուկի

Հաջորդ բաժինը ներկայացնում է մինչ այդ եղած հայերենի համառոտ ինքնուսույցների նման նախ միավանկ բառերը՝ զուգահեռ ռուսերեն տառադարձմամբ, ապա՝ երկվանկ, եռավանկ.

երկվանկ

Աբգար

եռավանկ

Աբրահամ

Ամբակում

Պատահական չէ, որ առաջին բառերը Աստվածաշնչից են: Գրքում մեծ թիվ են կազմում Աստվածաշնչից և եկեղեցական գրականությունից բերված բառերը:

Առավելագույնը բերվում են վեցվանկանի բառեր:

Վեց վանկ ունեցողները արհեստական կազմությամբ են և ավարտվում են հոգնակիակերտ աց-ով.

աշխատողականաց

բարեխօսականաց

Նույն ձևով հակառակը՝ ռուսերեն՝ միավանկ թարգմանությունից սկսած: Ապա հաջորդում է հայերեն-ռուսերեն բառարանը՝ հետևյալ սկզբունքով.

հայերեն բառը, ռուսերեն տառադարձությունը և ռուսերեն իմաստը.

Ագահ Aga алчный

ագռաւ agrav ворона

Բառարանի բառապաշարը ունի երկու գլխավոր շերտ՝

- Աստվածաշնչից
- կրոնա-եկեղեցական

Ապա նույն բառապաշարը ներկայացված է որպես ռուսերենից հայերեն բառարան՝ հետևյալ կառուցվածքով. ռուսերեն բառ, հայերեն տառադարձություն, հայերեն իմաստ:

137-րդ էջում նշվում են գինիների մի քանի տեսակները: Ըստ գինիների պարտրաստման վայրերի՝ նաև հետաքրքիր է, թե այդ ժամանակ տարբեր երկրների անվանումներ ինչպես են հնչել հայերենում.

իտալիանու գինի

սպանիոլու

ֆրանցուզի

Ապա գալիս են զրուցարաններում հանդիպող խոսակցությունների շարքերը, ինչպես Շրյոդերի մոտ (Շրյոդեր Յոհան Արամեան լեզուին գանձ): Միայն այնտեղ Նոր Ջուղայի բարբառով են երկխոսությունները:

Սարաֆյանի կազմած դասագրքում առաջին խոսակցությունը նվիրված է դպրոցին, երկրորդը՝ ճաշելուն, երրորդը՝ ուսուցչի և աշակերտի խոսակցությանը:

«Սկզբունք քաղաքական ուսմանց» բաժնում դաստիարակչական բնույթի մտքերը կապվում են իրար: Առաջինում ասվում է. «Ամենայն երեխայ ծնանի առանց ուսման» (Սարաֆեան 257): Այսինքն՝ բոլոր երեխաները ծնվում են ելակետային հավասար հնարավորություններով:

Երկրորդում ասվում է. «Պարտականութիւն է ծնողաց հուսումն տալ ըզզաւակունս իւրեանց»: Այստեղ շեշտվում է, որ երեխաներին չպետք է զրկել ուսում ստանալու հնարավորությունից:

Բարոյախրատական է 13-րդ պատվերը. «Յամենայն հասակի քում պատուեա ըզծնօղսդ»:

Բավականին արդիական է 23-րդ խրատը. «Այր իմաստուն յամենայն ժամ կարող է գտանել յաշխատանս» (Իմաստուն այրը ամեն ժամ՝ ցանկացած պահի, կարող է աշխատանք գտնել):

Կրոնաբարոյական խրատներին հաջորդում են օրենքի գերակայության հետ կապված իրավական բնույթի պատվերներ, որոնք զետեղված են «Խոկմունք Սինէացւոց (չինացիների) յաղագս խղճմտանաց արտադրութիւն»: Ռուսերենում այն ձևակերպված է այսպես. «Китаиские мысли о совести» (Սարաֆեան 276): Այս բաժնի մտքերն ու պատվերները վերաբերում են արդարությանը, մարդկային իրավունքներին: Նկատի ունենալով արտահայտված այդ մտքերը՝ Կ. Գրիգորյանն այն տեսակետն է հայտնում, որ Կ. Սարաֆյանը եղել է լուսավորյալ միապետության կողմնակիցը, և որ լուսավորական գաղափարները նրան են փոխանցվել իր հորից՝ վաճառական և XVIII դարի հայ ազատագրական շարժման ճանաչված գործիչ Մովսես Սարաֆյանի կողմից (Григорян 100-103):

Ինչպես նշեցինք, գրքի հեղինակն է հայ ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Մովսես Սարաֆյանի դուստրը՝ Մարիամ կամ Կլեոպատրա Սարաֆյանը: Նա Կլեոպատրա անունով է վերանվանվել Եկատերինա Երկրորդի կողմից իր գեղեցկության համար:

Պետերբուրգի Սմոլենսկյան հայկական գերեզմանոցում պահպանվել են Մովսես և Կլեոպատրա Սարաֆյանների մահարձանները հայերեն և ռուսերեն լեզուներով:

Մովսես Սարաֆյանի տապանագրի չափածո արձանագրության մեջ ասվում է.

Սա էր հմուտ վաճառական,
Յոյժ սիրեցեալ ի մէջ մարդկան (Դիվան հայ վիմագրության 82):

Մարիամ Սարաֆյանի տապանաքարը կազմված է 28 տողից: Նրա գեղեցկությունը և մտավոր արժանիքները դրվատող տողերում ասվում է.

Այս է շիրիմ ազնիւ մարմնոյ,
Մարիամայ չքնաղ տիկնոյ,
Սիրող ուսման եւ հանճարոյ
Եւ շարադրիչ մի բառ գրոյ (Դիվան հայ վիմագրության 85):

Առաջին երկու տողերով ակնարկվում է նրա գեղեցկությունը:

Տապանաքարի արձանագրությունից տեղեկանում ենք նաև, որ Եկատերինա կայսրուհին է պատվիրել, որ Մարիամ անունը իր գեղեցկության համար փոխարինի Կլեոպատրայով: Ինչպես արձանագրությունում է ասվում՝

Սա սիրեցաւ ի Թագուհւոյ,
Եկատերինէ մեծ Կայսրուհւոյ,
Յորմէ էառ անուն պատուոյ,
Կղէօպատրա գեղեցկուհւոյ:

Եզրակացություն

«Բանալի գիտութեան» դասագիրքն է ընկած հայ-ռուսերեն երկլեզվյան այն ինքնուսույցների հիմքում, որոնք 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին հրատարակվեցին Մոսկվայում, Պետերբուրգում և Աստրախանում:

Այս դասագիրքը նաև այն յուրահատկությունն ունի, որ կրոնախրատական տեքստերից բացի տեղ են գտել հասարակական վերափոխմանն ուղղված գաղափարները, որոնք արտահայտվել են եկատերինյան ժամանակաշրջանի լուսավորական միապետության ըմբռնումների շրջանակում:

Այն միաժամանակ ցույց է տալիս, թե ռուսերենի նվազագույն ինչ բառապաշար է հարկավոր եղել Ռուսաստանի հայ գաղթավայրերի և հատկապես Պետերբուրգի հայության համար ամենօրյա կյանքի տարբեր հարաբերություններում կիրառելու նպատակով՝ պատկերացում տալով ժամանակի առօրեականության մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Դիվան հայ վիմագրության*, Պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխտ. Գրիգոր Գրիգորյանի, Երևան, 1999:
2. *Հայնակ եւ Նեմեցնակ Այբուբենի թուղթ*, Թրեստ, 1788:
3. Շրյոդեր Յոհան. *Արամեան լեզուին գանձ*. Ամստերդամ, 1711:
4. Սարաֆեան, Կղէոպատրա. *Բանալի գիտութեան*, Սանկտ Պետերբուրգ, 1788:
5. *Տետրակ Այբբենական*. Սանկտ Պետերբուրգ, 1781:
6. Григорян, Камсар Нерсесович. *Из истории русско-армянких литературных и культурных отношений (X-начало XXвв.)*, Ереван, 1974.

WORKS CITED

1. Divan hay vimagrutyan, Prak VIII, Rusastani Dashnutyun, ashxt. Grigor Grigoryani, Erevan, [Corpus Inscriptionum Armenicarum, Liber VIII, Yerevan] 1999. (bilingual Armenian-Russian).

2. Grigorjan Kamsar Nerses, Iz istorii russko-armyankih literaturnyh i kulturnyh otnoshenij (X-nachalo XXvv.), Erevan, [From the history of Russian-Armenian Literary and Cultural Relations (X-beginning of XX centuries), Yerevan] 1974. (in Russian).

3. Haynak ev Nemecnak Aybubeni tught, Tghest, [Armenian and German Alphabet Paper, Tghest] 1788. (bilingual Armenian-German).

4. Sarafean Kgheopatra, Girq vor kochi banali gitowtean, Sankt Peterburg, [The Book Called the Key of Knowledge, St. Peterburg] 1788. (bilingual Armenian-Russian).

5. Tetrak Aybbenakan, Sankt Peterburg, [Reading Primer, St. Peterburg] 1781. (bilingual Armenian-Russian).

6. Yohan Shryoder, Aramean lezowin gandz, Amsterdam, [Thesaurus linguae Armenicae, Amsterdam] 1711. (in German).

KLEOPATRA SARAFYAN'S TEXTBOOK «THE BOOK CALLED THE KEY KNOWLEDGE» (1788)

KRISTINE MELKUMYAN

NAS RA Institute of Literature after M. Abegyan, Ph.D. Student,

Yerevan, The Republic of Armenia

The purpose of this article is to reveal the way the principles of Armenian printed textbooks originating in the 16th century, were continued with the Armenian textbooks of the Petersburg Armenian printing house. According to these principles, the Armenian alphabet was presented in different fonts and with the name and pronunciation of each letter. As with the previous short textbooks, there are no grammar rules. The reader had to learn the language in a practical way from religious and literary texts in the reading section.

The article is aimed to highlight the literature-related layer of this textbook, which is expressed by the use of words most typical of fiction, as well as in the dialogues of the section called "Conversation" at the end of the book.

The article is written by using analytical, historical and comparative methods.

The uniqueness of the textbook analyzed also lies in the fact of being bilingual, as well as, in addition to religious texts, it also contains ideas aimed at social transformations, which were expressed within the framework of ideas about the Enlightenment monarchy of the Enlightenment era.

In the article, we come to the conclusion that this textbook is not an educational manual at all, but is written taking into account the linguistic realities of the living life of the time.

Key words: *Armenian-Russian manual, Petersburg Armenian printing house, monarchy of Enlightenment period, Movses Sarafyan, Grigor Khaldaryan, alphabet, bilingual textbook, The Lord's Prayer.*

УЧЕБНИК КЛЕОПАТРЫ САРАФЯН «КНИГА, ПРИЗЫВАЮЩАЯ К КЛЮЧЕВОЙ НАУКЕ» (1788г.)

КРИСТИНЕ МЕЛКУМЯН
младший научный сотрудник
Института литературы имени М.Абегяна
НАН РА,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – показать, как принципы армянских печатных учебников, берущих начало в XVI веке, были продолжены и воплощены в армянских учебниках Петербургской армянской типографии. Согласно этим принципам, армянский алфавит был представлен разными шрифтами и с названием и произношением каждой буквы. Как и в предыдущих кратких учебниках, здесь нет правил грамматики. Читатель должен был выучить язык на практике по религиозным и литературным текстам, представленным в разделе для чтения.

Задачей статьи является выделение литературоведческого пласта данного учебника, который выражается в использовании слов, наиболее характерных для художественной литературы, а также в диалогах раздела под названием «Беседа», помещенных в конце книги.

Статья написана с использованием аналитического, исторического и сравнительного методов.

Отмечается, что уникальность данного учебника заключается в том, что он двуязычен, а также, помимо религиозных текстов, содержит также идеи, направленные на социальные преобразования, которые были выражены в рамках представлений о монархии эпохи Просвещения.

В статье мы приходим к выводу о том, что данный учебник вовсе не является учебным пособием, а написан с учетом языковых реалий живой жизни того времени.

Ключевые слова: *армяно-русский разговорник, Петербургская армянская типография, просвещенная монархия, Мовсес Сарафян, Григор Халдарян, алфавит билингвальный учебник, молитва Господня.*

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 82.09 *10.52063/25792652-2022.3.14-164*

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
parsadanyansiranush@gmail.com

Սույն հոդվածի նպատակն է Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններում անդրադարձ կատարել Հայկ Նահապետի կերպարային ընդհանուր գծերին:

Մեր խնդիրն է Վանանդեցու առանձին ստեղծագործություններում վեր հանել հայ ժողովրդի հիմնադիր նախնու կերպարային առանձնահատկությունները, պատմագրական սկզբնաղբյուրներն ուսումնասիրելուց զատ ցույց տալ, որ ի տարբերություն հին շրջանի ստեղծագործությունների՝ հեղինակի գրվածքներում կարևորվում է կերպարների հոգեբանական դրաման՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հատկանիշների՝ որպես առանցք ունենալով Հայկ Նահապետի կերպարը: Անդրադարձ է կատարվել նաև այն հանգամանքին, որ թեև Վանանդեցին պոեմների նյութ է դարձրել հեթանոսական շրջանի դեպքերը, այնուամենայիվ, որպես քրիստոնյա հեղինակ, անդադար շեշտում է հայ ժողովրդի նախնիների՝ միաստվածության հավատի հետևորդ լինելը:

Հոդվածում միահյուսված է գրականագիտական և տեքստաբանական աշխատանքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, ինչպես նաև համեմատական մեթոդները:

Եվ վերջում հանգում ենք այն եզրակացությանը, որ Հովհաննես Վանանդեցին, կլասիցիզմի հետևողությամբ, տիրապետելով հայ բանաստեղծական արվեստի օրինաչափություններին, տաղաչափությանը, հետամուտ կիսակործան հայրենիքը փրկելու, նորոգելու հայոց անօրինակ մաքառումներին, իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ: Ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, նախնիների ուղիով ընթանալն է, և հենց դա է պատճառը, որ նրա գլխավոր ստեղծագործություններում վերհանված են մեր նախնիների ֆիզիկական ու հոգևոր արժանիքները:

Հիմնաբառեր՝ *Հովհաննես Վանանդեցի, Հայկ Նահապետ, պոեմ, Մովսես Խորենացի, կլասիցիզմ, Հին Հայաստան, դյուցազուններ:*

Նախաբան

Հայկական կլասիցիզմի ներկայացուցիչները մեծ տեղ էին հատկացնում անցյալի պատմությանը: Ինչպես գրում է Մ. Թադևոսյանը. «Կլասիցիստների պատմական ծառայություններից մեկն էլ այն է, որ նրանք արժեքավորեցին ու պրոպագանդեցին հայ հին պատմագրությունն ու միջնադարյան պոեզիան» (Թադևոսյան 45): Ի տարբերություն 18-րդ դարի ֆրանսիական կլասիցիզմի ներկայացուցիչների, որոնք ազգային թեման գրեթե չէին արծարծում իրենց գրվածքներում, հայ կլասիցիստները

* Հոդվածը ներկայացվել է 26.09.2022թ., գրախոսվել՝ 10.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

ստեղծագործության նյութ են դարձնում առավելապես ազգային պատմությունից վերցրած սյուժեները (Թադևոսյան 74):

Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը նկատում է. «Սեփական հողի վրա գտավ իրեն հայկական կլասիցիզմը, մինչդեռ եվրոպական կլասիցիզմը հին Հռոմի և Հունաստանի ավանդներով էր ուռճանում, հայ դասականները ձեռք էին մեկնում իրենց ժողովրդի պատմական անցյալի էպիկական դրվագներին: Կլասիցիզմը նոր ուղիներ բացեց հայ գրականության առաջ. վերածնելով հայկական հնադարը, նա գրականության նյութ դարձրեց հայրենասիրությունն ու ազատասիրությունը, գրականությունը մերձեցրեց ազգային-քաղաքական բովանդակության» (Սարինյան 87):

Հայկական կլասիցիզմի գեղագիտությունն ու թեմատիկան իրենց ամբողջական արտահայտությունը գտան մշակութային գործիչ ու բանաստեղծ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններում, որոնք ժամանակագրորեն ընդգրկում են Հայկ Նահապետից մինչև 5-րդ դարը հասնող դեպքերը:

Վանանդեցին հայկական կլասիցիզմի հետևողությամբ իր իդեալը փնտրում էր անցյալի հերոսների մեջ:

Նա ստեղծագործության նյութ է դարձնում հայոց հերոսական անցյալը՝ վկայակոչելով մեր պատմության լավագույն էջերի պատմաառասպելական դյուցազուններին: Ակնհայտ է, որ Վանանդեցու նպատակը հայոց վաղնջական պատմության դեպքերը սոսկ չափածոյի վերածելը չի եղել: Նա փորձել է գրել հերոսական պատմություն՝ ժամանակակիցների շրջանում հետաքրքրություն ու ոգևորություն առաջացնելով նախնիների սխրանքների ու քաջագործությունների հանդեպ:

Հայկ Նահապետի կերպարային բնորոշ գծերը Վանանդեցու գրվածքներում

Վանանդեցին Հայկ Նահապետի կերպարին անդրադառնում է իր մեծածավալ ստեղծագործություններից երկուսում՝ «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» և «Ոսկի դար Հայաստանի»:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններով սկսվում է հայոց քաղաքական անցյալի բանաստեղծությունը, ինչը նշանակալի երևույթ էր մեր գրականության մեջ. «Դարեր շարունակ քաղաքական կյանքը մերժված է եղել երգի արժանանալուց. քերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարտեզ ու գարուն են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրոնական խնդիրներ» (Աբեղյան 601):

Հատկանշական է, որ Վանանդեցու հիշյալ պոեմներում շեշտը առավելապես դրված է հայրենասիրության ու կրոնասիրության վրա:

«Տեսարան»-ի համար (ավարտված 1829-ին, տպագրված 1858-ին) պատմական սկզբնաղբյուր է ծառայել Խորենացու «Պատմութիւն հայոց» երկը, անշուշտ, հեղինակային որոշակի հավելումներով ու շեղումներով: Վանանդեցին շարադրանքը սկսել է մեր ժողովրդի նախահայր Հայկի ծնունդից, անդրադարձել ջրհեղեղին, աշտարակաշինությանը, Հայկի ապստամբությանը, ապա մեծ ոգևորությամբ պատկերել պատերազմի ու Հայկի հաղթության տեսարանը, Հայկի միապետությունը, աշխարհաշինությունն ու մահը, այնուհետև ոչ պակաս խանդավառությամբ ներկայացրել Արամի, ապա Արայի միապետության, Շամիրամի և Արայի հակամարտության, վերջինիս մահվան՝ պատմությունից հայտնի դրվագները: Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որտեղ հեղինակը խտացրել է բուն ասելիքը:

Հեղինակը հայ ժողովրդի ծագումնաբանությանը վերաբերող որոշ հատվածներում զգալիորեն օգտվել է նաև Աստվածաշնչից (հատկապես աշտարակաշինությանը վերաբերող դրվագներում)՝ այն մեկնաբանելով ըստ հայ եկեղեցական ավանդույթի:

Հայկի առասպելը Խորենացին կապում է Աստվածաշնչից հայտնի աշտարակաշինության հետ: Թեթևակի անդրադառնալով աշտարակաշինությանը՝ պատմահայրը գրում է. «Յորոց մի էր և Յապետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովաձիգ և հաստաղեղն» (Խորենացի 38):

«Տեսարան»-ում կարդում ենք.

Հընսկայք հըզօրք գոռ Տիտանեանք յաղթամարմին

Նեբրովթ և Հայկ և այլ գոռոզք ի նոյն կարգին... (Վանանդեցի 37)

Ապա.

Ի ցըրուելոց Հայկն միայն ի Հայս եկեալ,

Սակաւ իւրովք և որք ի յինքն եղեն յարեալ... (Վանանդեցի 38)

Անդրադառնալով պոեմի վերնագրին՝ ակնհայտ երևում է, որ հեղինակը հետևել է պատմահայր Խորենացու խոսքին, թե «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան – Հայկ, Արամ, Տիգրան» (Խորենացի 100): Վանանդեցին սակայն ավելի առարկայականություն է հաղորդել ստեղծագործությանը՝ պահպանելով ժառանգականության սկզբունքը: Հայկը և Արամը մեր ժողովրդի հիմնադիր նախահայրերն են համարվում, իսկ Արայի շուրջ հյուսված զրույցները և նրա մասին պատմվող ավանդությունները տարբեր դարերում լայն ժողովրդականություն են ունեցել՝ որպես մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշ, քանի որ կապվել է մեռնող և հարություն առնող աստվածության պաշտամունքի հետ (Աբեղյան 65-68):

Պոեմում բնավորությունների ծայրահեղությամբ կերպավորված, գաղափարի նպատակաուղղվածությամբ, բարու և չարի, ազատության ու բռնակալության հակադիր եզրերում հանդես եկող կերպարները Վանանդեցու երկում առավելապես ասացումի արտաքին հատկանիշով են ձևավորված, քան գեղարվեստական հատկանիշներով և ոգու ու բնավորության խորքային սուզումներով: Սա, անշուշտ, կլասիցիստական գրականության առաջնային հատկանիշն է և տիպիկ դրսևորում է ստացել այս շրջանի գրեթե բոլոր ստեղծագործողների երկերում: Հենց այս տեսակետից անդրադառնանք Բելին: Տիտանյան Բելը, ըստ Խորենացու, Նեբրովթն է: Մ. Աբեղյանը սակայն ճշմարիտ չի համարում այս պնդումը, ինչպես նաև կասկածով է վերաբերում հայոց ժողովրդի ծագումը աշտարակաշինության հետ կապելու զրույցներին (Աբեղյան 41):

Վանանդեցին պոեմում կիրառում է Բելի անվանման երկու տարբերակներն էլ՝ հետևելով Խորենացուն: Այսպես.

Գոռոզն այն Նեբրովթ յայս խոր կուրութիւն ընկըղմեալ ինքնին (Վանանդեցի 41):

Ինչպես նաև.

Գիտասջի՛ր՝ ասէ, անպա՛ռտ ախոյեան մեծըդ դիւցազանց,

Զի դիմեալ գայ Բէլ արդ ի քո վերայ բազմութեամբ քաջաց (Վանանդեցի 45):

Սկսած Խորենացուց՝ դարեր շարունակ հայ ժողովրդի հիմնադիր նախնին ներկայացվել է որպես դրական ու կամային հատկանիշների կրող: Վանանդեցին ավելի է ընդգծել այս հատկանիշները Հայկի կերպարում: Այս ստեղծագործության մեջ ևս Հայկի արտաքին հատկանիշները հավասարազոր են նրա ֆիզիկական ուժին:

Պոեմում ինքը հեղինակը Հայկ Նահապետի կերպարային նկարագրությունը տալիս վկայակոչում է պատմահորը, ինչպես նաև՝ Մար-Աբաս Կատինային.

Կամի՞ս գիտել ըզհանգամանս շընքեղ Անձին,

Մարիբասայ լո՛ւր ըստ Քաղդեայ մատենագրին.

Յորմէ և մեր Քերթողահայր Խորենացին,

Ճըշտէ փոքու ի պատմութեանն անդ մատենին (Վանանդեցի 9)*:*

Այնուհետև Վանանդեցին գլխատառերով բերում է Խորենացու՝ Հայկին տված բնորոշումները. «Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր,

խայտակն և հաստաբազուկ» (Խորենացի 38), ապա իր հերթին մեկնաբանում: Այսպես.

ԴԻՑԱՁՆ մեծ ըզնա կալեալ յաստիճանին,

Ձանդրանկութիւն ըզՅաբեթեան յարգել տոհմին (Վանանդեցի 9):

Կամ՝

ԱՆՁՆԵԱՅ յուղղորդ իւր հասակին յաղթամարմին,

Նոճ անձնաւոր գոլով զօրեղ հըսկայագին (Վանանդեցի 9):

Այս բնորոշումների ամեն մի երկրորդ տողը հավելում է հեղինակի կողմից:

Երբ Բելը իր հավատարիմ մարդկանցից մի քանիսին ուղարկում է Հայկի մոտ, որպեսզի վերջինս հնազանդվի, Հայկը պատգամավորներին կտրուկ պատասխան է տալիս: Հայկի պատասխանը պոեմում ուղղակի կերպով առկա է: Եվ Բելի դեսպանները կորագլուխ ետ են դառնում դեպի Բաբելոն (Վանանդեցի 43):

Պոեմի ամենաազդեցիկ հատվածներից մեկը Հայկի՝ Բելին երեքթևյան նետով գետին տապալելու տեսարանն է.

Ընդ լայնալիճ մըտեալ յաղեղն այրն ուժընդակ,

Ձերեքթևեանն հարկանէ նետ ի նըպատակ (Վանանդեցի 49):

Լայնալիճ աղեղ կարող էին բանեցնել միայն ամենաուժեղները: Խորենացին այս առիթով գրում է. «…լի քարշէ զլայնալիճն դիպացուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին» (Խորենացի 44):

Իսկ ահա Վանանդեցին այս կերպ է նկարագրում Բելի՝ Հայկի նետից գետին ընկնելու դրվագը.

Ըզհպարտ իւր փըչէ զոգին դիւաբընակ (Վանանդեցի 49):

Այս հատվածում այնքան դիպուկ, նշանակիր է «դիւաբնակ» բառի կիրառությունը: Այսինքն՝ նրանում չար ուժերն են բնակվել, դևերի առաջնորդությամբ է գործել և լինելով չար ուժերի հետնորդ՝ ինքնըստինքյան այդ հատկանիշի կրողը պետք է լիներ:

Վանանդեցու մյուս ստեղծագործության մեջ՝ «Ոսկի դար Հայաստանի» պոեմում (տպագրված 1841 թ.), ավելի քան 5500 տողի մեջ Հայկի և Բելի ճակատամարտի տեսարաններ ուղղակիորեն չկան: Թվում է՝ հեղինակը այդ կերպ չի կամենում հայրենիքի հովվերգական պատկերը խաթարել:

Հեղինակելով վերոնշյալ ստեղծագործությունը՝ նա փորձել է ներկայացնել հայ ժողովրդի պատմությունը՝ շարադրանքը սկսելով արարչագործությունից և հասնելով մինչև իր ժամանակաշրջանը՝ ռուսական իշխանության հաստատումը: Այսինքն՝ ընդհանուր առմամբ՝ երկի բովանդակությունը Հայաստան աշխարհն է՝ իր պատմությամբ ու աշխարհագրությամբ:

Հեղինակը հիշյալ պոեմում, հետևելով կլասիցիստական ըմբռնումներին, Հին Հայաստանը ներկայացնում է որպես մի ներդաշնակ վայր, աստվածատունկ դրախտ, որտեղ ամեն բան իդեալական է, հայրենիքն ու ժողովուրդն անցյալում ներկայանում են որպես լավագույն օրինակ քաջության, ազնվության, բարեշիտության:

Նույն սկզբունքով Ալիշանն է շարադրել իր «Հովիւք Շիրակայ» ստեղծագործությունը: Վերջինում գյուղական իդիլիկ պատկեր ենք տեսնում, որում հեղինակը գովաբանում է աշխատանքը, կոչ անում սիրել այն: Ուշադրության է արժանի ստեղծագործության այն հատվածը, որում խոսք է գնում մեր նախնիների մասին. «Այդպիսի է եւ զինուորացդ ազգ. ի խաղաղութեան ժամանակի համբոյրք եւ հաշտք, այլ յորժամ մարդիկ չարք կամ ստամբակեալ ոք ուրեք եթէ յօտարաց եւ եթէ յընտանեաց ի վեր երեւեալ՝ կամիցին խռովել զհօտ մարդկութեանս, յայնժամ զէն առնուն նոքա եւ ի մարտ պատերազմի դիմեն» (Ալիշան 202): Ալիշանը մանրամասնում է. մեր նախնիները խաղաղասեր են եղել, սակայն երբ հայտնվել են թշնամու սպառնալիքի տակ, զենք են վերցրել ու պաշտպանել մայր հողը: Մեր առաքինի

նախնիների շարքում Ալիշանը առաջին հերթին վկայակոչում է Հայկին (Ալիշան 203): Այսինքն՝ ժամանակաշրջանի համար քաջության, արիության օրինակը առաջին հերթին Հայկ Նահապետն էր:

Նշենք նաև, որ աշխարհայացքային այս ելակետը՝ Հայաստանն իբրև տապանի իջման վայր ու երկրային նորատունկ դրախտ ընկալելու ըմբռնումը, գալիս է Ինճիճյանից ու Չամչյանից: Այս առիթով Չամչյանը գրում է. «Իսկ յաղագս տեղւոյ դրախտին ադինայ՝ հասարակաց կարծիք է, թէ եդ զայն աստուած յաշխարհին հայոց» (Չամչեանց 143): Ի դեպ, Միքայել Չամչյանը իր եռահատոր պատմության մեջ միայն մի նկար է զետեղել, որն էլ վերաբերվում է Հայկին, և դրանով պատկերավորություն է հաղորդել: Այսինքն՝ Չամչյանն ընդգծում է, որ Հայկ Նահապետն է հայ ժողովրդի հիմնադիր նախահայրը:

Ըստ Վանանդեցու պատմահայեցողության՝ հայ ժողովուրդը Նոյի ժամանակներից ներդաշնակ ապրել է, այնուհետև Հայկը եկել է Բաբելոնից, իշխել նրանց:

«Ոսկի դար Հայաստանի» պոեմի ուշագրավ հատվածներից է Բելի չարության պոռթկումը, որ հայկյաններին ցանկանում է այրել ցախի նման.

Մոլեգնութեան ի ներքս տայ սրտին զայրոյթ դիւաբախ.

Վրէժ յուզէ՝ գեհենական ի բոց մխեալ համածախ,

Հայկեանցն այրել զմարդատունկս իբր զխռուեալ ումպէտ ցախ (Վանանդեցի 148):

«Տեսարան»-ում Հայկի հրամանով Բելի դիակը զմռսում են և թաղում մի բարձրավանդակ տեղում՝ «զօրացն ակն յանդիման» (Վանանդեցի 49), Խորենացու հավաստմամբ՝ «ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց» (Խորենացի 46):

Քանի որ երկն ունի դաստիարակչական գործառույթ, ապա հեղինակը հորդորում է փառասիրությանը կուլ չգնալ և լինել չափավոր.

Ա՛յս հատուցումն եղև Բէլայ յանդգնութեան,

Ա՛յս վարձ գործոց նորա չափեալ վայելչական (Վանանդեցի 49):

Իսկ ահա «Ոսկի դար Հայաստանի» պոեմում Վանանդեցին Բելի օրինակով կոչ է անում մերժել չարը, աններդաշնակը.

Զմաքրութեան համբարեցէ՛ք ի ձեր հոգի զմթեր (Վանանդեցի 165)*:*

Հավելենք, որ այն բլուրը, որտեղ Բելը նետահարվել էր, ստացավ «Գերեզմանք» անվանումը. «Գերեզմանք եդ նըմա կոչումըն յոգնական» (Վանանդեցի 50): Հ. Էփրիկյանի հավաստմամբ՝ այդ բլուրը գտնվում է Վասպուրականի Երվանդունիք գավառի Հայոց ձորի մեջ (Էփրիկյան 514-515): Գերեզմանք տեղանվանը անդրադարձ է կատարել նաև Գարեգին Սրվանձտյանցը (Սրվանձտյանց 49-51):

Ուշագրավ է Հայկի մահվան տեսարանը: Խորենացին մի քանի բառով է պատմում վերջինիս մահվան մասին, և այդ մի քանի բառը հիմք ընդունելով՝ բանաստեղծը դյուցազներգության «Մահ Հայկայ դիւցազին» գլխում մանրամասնորեն ընթերցողին է ներկայացնում Հայկ Նահապետի կյանքի վերջին ժամերը: Հայկը սերունդների առաջ իր պարտքն ու առաքելությունը կատարած վերջին խոսքերով դիմում է իր ժառանգներին: Նա կոչ է անում աստվածավախ լինել, Աստծուն սիրել ամբողջ սրտով, հիշել նախնիների կատարած գործերը, բարի գործեր կատարելով՝ միշտ միաբան ու համերաշխ լինել:

Ճիշտ է, հայերը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունեցին 301 թ.-ին, սակայն Վանանդեցին, որպես քրիստոնյա հեղինակ, պոեմում անդադար շեշտում է մեր նախնիների՝ Նոյի հաբեթյան ճյուղի շարունակողների՝ միաստվածության հավատի հետևորդ լինելը: Ասվածի լավագույն օրինակը արտահայտված է Հայկ Նահապետի խոսքում: Վերջինս Բելի նկատմամբ տարած հաղթանակը ևս կապում է աստվածային նախախնամության և բարեգթության հետ (Վանանդեցի 60):

Իհարկե, սա ևս ստեղծագործության գրության ժամանակաշրջանին և հայ ավանդական պատմահայեցողությանը բնորոշ գիծ էր: Այս առիթով արժե հիշատակել

Ղևոնդ Ալիշանի տեսակետը. «Եթէ արդարեւ Հայկն Յաբեթի թոռն էր՝ հաւանական էր իր աստուածապաշտութիւնն, ինչպէս հաւանական և ստոյգ այլ է՝ որ ինչուան քանի մի ցեղ նահապետաց սերունդ և ինչուան Աբրահամու ատեն, տեղ տեղ ուղիղ աստուածպաշտութիւն կար, և վկայեն Ս. Գիրք» (Ալիշան 24-25): Ալիշանը, ուրեմն, ճիշտ է համարում Նոյից սերված թորգոմյան ճյուղի՝ ճշմարիտ աստվածապաշտությանը հետևելը: Իսկ թե այդ հավատքը մինչև երբ են պահել մեր նախնիները, վերջինս համարում է դժվարին կամ «անկարելի ստուգելի» (Ալիշան 24-25):

Ի դեպ, ստեղծագործության մեջ Հայկ Նահապետի որդի Արամանյակի անունը փոխարինված է Արմենակ տարբերակով: Սա ևս նպատակային և ուղղորդված հեղինակային հավելում է: Հայկը, իրեն հետնորդ հռչակելով վերջինիս, հորդորում է նրան «պահել արութեամբ զայս ժառանգութիւն յանուն Հայկական, յաղթող հանդիսիւ կալ բըռնացելոցն հըզօր ախոյեան» (Վանանդեցի 64):

Հեղինակը տպավորիչ դրվագումներով է ներկայացնում Հայկ Նահապետի մահվան տեսարանը.

Կափացումն աչաց և վախճան շընչոյն յայն տեսարանին,
Անշարժ ըզհասակն առնէին նոճեայ հըզօր Հըսկային.
Անպարտըն բազկաց սաստիկ ուժգնութիւն ‘ի հարուած նետին,
Շարժել թուլանայր ըզսօսի կողերս վարսագեղ մարմնին (Վանանդեցի 64)*:*

Թվում է՝ այդ անպարտելին ու ամենաուժեղը չպետք է հայտնվեր մահվան մահճում:

Պոեմում ուրվագծվում է Հայկ Նահապետի կնոջ՝ Զարմանդուխտի կերպարը:

Վանանդեցին իրեն բնորոշ զգացմունքայնությամբ է նկարագրում Զարմանդուխտի ողբի տեսարանը.

Աւա՜ղ իմ կենաց, վա՛յ ինձ առանց քո պայծառ արևին.
Դու սիւն ոսկեղէն, դու յականց պարիսպ մերոյ աշխարհին,
Դու ընկեր սիրոյս՝ զիա՞րդ զիս լքեալ թողեր առանձին (Վանանդեցի 64)*:*

Հայկի կորուստը վերածվում է անասելի սգի. «Անդ էր աղաղակ լալոյ և կոծոյ սաստիկ որոտման» (Վանանդեցի 66): Նույնիսկ բնությունն էր սգում հսկայի մահը: Այստեղ բանաստեղծը դիմում է բնության շնչավորման գեղարվեստական եղանակին՝ նկարագրելով բնության անհանգիստ վիճակը. «դըողըրդէր երկիր գոռային անձաւք ի գոչ վայական» (Վանանդեցի 66): Համատարած սուգ էր տիրում հայոց մեջ:

Վերոնշյալ երկերի առաջնային և հիմնական նպատակը այն է եղել, որ երիտասարդները ծանոթ լինեն իրենց ժողովրդի պատմությանը, ճանաչեն իրենց նախնիներին և իմանալով նրանց կատարած գործերի մասին՝ բարի օրինակ վերցնեն և հպարտ լինեն նրանց ժառանգները լինելու հանգամանքով:

Վանանդեցու ձեռագրերն ուսումնասիրելիս ՄՄ 6023 ձեռագրում, որ ներառում է Վանանդեցու «Տապար սիրոյ» ստեղծագործությունը, գտանք Հայկին նվիրված հատվածներ. «Հայկն գեղագանգուր» (ՄՄ 6023 54 բ)՝ Հայկի հենց առաջին բնորոշումը գալիս է Խորենացուց: Իսկ Բելի համար որպես բնութագրիչ առաջին հերթին նշվում է «խաւարասէր» բառը՝ ի հակադրություն Հայկի: Եզրակացնում ենք, որ Հայկ Նահապետի կերպարն այնքան ընդհանրացված էր տվյալ ժամանակի գրականության մեջ, որ անգամ այս գործում, որ չի առնչվում մեր նախահոր հետ, գտնում ենք վկայակոչումներ նրա մասին:

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ Հովհաննես Վանանդեցին, կլասիցիզմի հետևողությամբ, տիրապետելով հայ բանաստեղծական արվեստի օրինաչափություններին, տաղաչափությանը, հետամուտ կիսակործան հայրենիքը փրկելու, նորոգելու հայոց անօրինակ մաքառումներին, իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ: Ամենայն ճշմարիտը նրանց նախասահմանած

ճանապարհով ընթանալն է, ուստի հակադրություն ստեղծելով հայոց ծաղկուն անցյալի և ներկա անհուսալի ժամանակի միջև՝ Վանանդեցին հայոց դյուցազունների օրինակով կոչ է անում լծվել ազգի վերաշինության գործին, որի հիմքը նախևառաջ հայրենասիրությունն ու ազգաճանաչությունն են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, Մանուկ. *Երկեր, հ. Ա.* Երևան, 1966 թ.:
2. Աբեղյան, Մանուկ. *Երկեր, հ. Դ.* Երևան, 1970:
3. Ալիշան, Ղեւոնդ. *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց.* Վենետիկ, 1895:
4. Ալիշան, Ղեւոնդ. *Նուագք.* Վենետիկ, 1858:
5. Էփրիկյան, Հ.. *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա.* Վենետիկ, 1903:
6. Թադևոսյան, Մարատ. *Հայկական կլասիցիզմի տեսությունը.* Երևան, 1977:
7. Խորենացի, Մովսես. *Պատմութիւն հայոց.* Երևան, 1981:
8. Մաշտոցի Մատենադարան. թիվ 6023:
9. Չամչեանց, Միքայէլ. *Պատմութիւն հայոց, հ. Ա.* Վենետիկ, 1784:
10. Սարինյան, Սերգեյ. *Հայկական ռոմանտիզմ.* Երևան, 1966:
11. Սրվանձտյանց, Գարեգին. *Երկեր, հ. 1.* Երևան, 1978:
12. Վանանդեցի, Յովհան. *Ոսկի դար Հայաստանի*. Զմյուռնիա, 1841:
13. Վանանդեցի, Յովհան. *Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի.* Զմիւռնիա, 1856:

WORKS CITED

1. Abegh’yan, Manuk. Erker, h. A. Erevan, [Works, vol 1. Yerevan] 1966. (In Armenian)
2. Abegh’yan, Manuk. Erker, h. D. Erevan, [Yerevan] 1970. Works, vol 4. (In Armenian)
3. Alishan Gh’evond. Hin havatq kam hethanoskan kronq hayotc. Venetik, [Ancient Faith or Pagan Religion of Armenians. Venice] 1895. (In Armenian)
4. Alishan Gh’evond. Nuagq. Venetik, [Melodies. Venice] 1858. (In Armenian)
5. Ephrikyan. H. Patkerazard bnashkh’arhik bararan, h. A. Venetik, [Illustrated Natural World Dictionary. Venice] 1903. (In Armenian)
6. Tadevosyan, Marat. Haykakan klasitsizmi tesutyun’. Erevan, [The Theory of Armenian Classicism. Yerevan] 1977. (In Armenian)
7. Khorenatsi, Movses. Patmutyun hayots’. Erevan, [Armenian History. Yerevan] 1981. (In Armenian)
8. Mashtotsi Matenadaran. Tiv 6023. [Matenadaran of Mashtots. Number 6023] (In Armenian)
9. Chamcheants’, Miqayel. Patmutyun hayots’, h. A. Venetik, [Armenian History, vol 1. Venice] 1784. (In Armenian)
10. Sarinyan, Sergey. Haykakan romantizm. Erevan, [Armenian romanticism. Yerevan] 1966. (In Armenian)
11. Srvandztyantc’, Garegin. Erker, h. 1. Erevan, [Works, vol 1. Yerevan] 1978. (In Armenian)
12. Vanandetsi, Yovhan. Voski dar Hayastani. Zmyurnia, [Golden Age of Armenia. Zmyurnia] 1841. (In Armenian)
13. Vanandetsi, Yovhan. Tesaran handisatsn Haykay, Aramay ev Arayi. Zmyurnia, [Hayk's, Aram's and Ara’s Scene. Zmyurnia] 1856. (In Armenian)

THE IMAGE OF HAYK NAHAPET IN THE WORKS OF HOVHANNES VANANDETSI

SIRANUSH PARSADANYAN
NAS RA, Literature Institute, Junior researcher,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of this article is to reflect on the general character traits of Hayk Nahapet in the works of Hovhannes Vanandetsi.

Our task is to highlight characteristics of the ancestor founder of the Armenian people in Vanandetsi's individual works, to show, apart from studying the historiographical sources, that, unlike the works of the old period, the psychological drama of the characters is emphasized in the author's writings, according to the characteristics of the literature of the new period, with Hayk Nahapet as the core character. Reference was also made to the fact that although Vanandetsi made the events of the pagan period the subject of his poems, nevertheless, as a Christian author, he constantly emphasizes the belief of the ancestors of the Armenian people, the monotheism.

Literary and textological works are intertwined in the article. Analytical as well as comparative methods were used during the research.

We come to the conclusion, that Vanandetsi, by following the classicism, mastering the regularities of the Armenian poetic art, the subtlety, the unparalleled Armenian struggles to save the half-ruined homeland, to repair it, sought his ideal among the heroes of the past of Ancient Armenia. The main way to rebuild a nation, according to the author, is to follow the path of our ancestors, which is the reason why in his main works the physical and spiritual merits of our ancestors are highlighted.

Keywords: *Hovhannes Vanandetsi, Hayk Nahapet, poem, Movses Khorenatsi, classicism, Old Armenia, heroes.*

ОБРАЗ АЙКА НААПЕТА В ТВОРЧЕСТВЕ ОВАНЕСА ВАНАНДЕЦИ

СИРАНУШ ПАРСАДАНЯН
младший научный сотрудник
Института литературы Национальной академии наук РА,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – рассмотреть над общие черты характера Айка Наапета в произведениях Ованеса Ванандеци.

Наша задача – выделить черты характера родоначальника армянского народа в отдельных произведениях Ванандеци, показать,что помимо изучения историографических источников и в отличие от произведений прежнего периода, в трудах Ванандеци подчеркивается психологическая драма героев; а образ Айка

Наапета обладает чертами, характерными для литературы нового периода. Отмечалось также, что, хотя сюжеты стихов Ванандеци восходят к событиям языческого периода, как автор, будучи христианином, он постоянно выделят веру предков армянского народа – единобожие.

В статье рассматриваются художественные и текстологические труды. В ходе исследования использовались как аналитические, так и сравнительные методы.

В заключении статьи мы приходим к выводу о том, что Ованес Ванандеци, следуя принципам классициза, осваивая образцы армянского поэтического искусства, основной темой своих произведений избрал тему беспримерных усилий армян по спасению и восстановлению полуразрушенной своей родины, тему поиска идеал среди героев прошлого Древней Армении. По мнению автора, основной путь возрождения нации — это следование по пути наших предков, и именно поэтому в его основных произведениях особенно подчеркиваются физические и духовные достоинства наших предков.

Ключевые слова: *Ованес Ванандеци, Айк Наапет, поэма, Мовсес Хоренаци, классицизм, Древняя Армения, герои.*

«ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ 159.92 *10.52063/25792652-2022.3.14-173*

ԱՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
alokyandoc@mail.ru

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության
Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
ռազմավարական առաջնորդության և կառավարման
հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան,
ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
baghdasaryan.svetlana@mail.ru

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների էությունը՝ ցույց տալով հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ վերջիններիս տարանջատման և ճիշտ գործածության, ըմբռնման անհրաժեշտությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվություն» եզրույթի օգտագործման բացակայությամբ, որը հնարավորություն կտա, օրինակ, ռազմական հոգեբանության ուղղությամբ կատարվող գիտական հետազոտություններում, այն ինչի մասին հետազոտողը խոսում է, կիրառել դրան համարժեք տերմիններ՝ հասկանալի և պարզ դարձնելու համար ասելիքը: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների սահմանումները, կատարել ռուսերենում և անգլերենում, հոգեբանական և փիլիսոփայական գիտությունների շրջանակներում «ակտիվություն» տերմինի վերաբերյալ տարբեր մոտեցումների ու ըմբռնումների համեմատական վերլուծություն, հիմնավորել հայկական ռազմագիտական տերմինաբնության մեջ վերոգրյալ եզրույթների տարանջատման անհրաժեշտությունը:

* Հոդվածը ներկայացվել է 03.10.2022թ., գրախոսվել՝ 21.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Աշխատանքում համեմատական ու վերլուծական մեթոդների կիրառությամբ պարզվել է, որ «ակտիվություն» տերմինի իմաստը շարժումն է, վարքագիծը, հետևաբար հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվությունը» կարող է սահմանվել որպես մարտական գործողությունների պայմաններում զինծառայողների ֆիզիկական, մտավոր ու հոգեկան ռեսուրսների մոբիլիզացման և համապատասխան վարքագծի ընտրության կարողություն: Բացի այդ, «մարտունակություն» և «մարտական ակտիվություն» եզրույթները փոխկապված են, սակայն նույնական չեն, ինչը հիմնավորվում է կոնկրետ իրավիճակային օրինակներում և բարձրաստիճան սպաների դիտարկումներում:

Հիմնաբառեր՝ *մարտական ակտիվություն, մարտունակություն, ռազմագիտական տերմինաբանություն, վարքագծի ռազմավարություն, գործողություն, «ակտիվություն» տերմինի իմաստաբանություն, հոգեբանական և փիլիսոփայական մոտեցումների համեմատական վերլուծություն, իրավիճակային օրինակներ, բարձրաստիճան սպաների դիտարկումներ:*

«Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների տարանջատման վերաբերյալ

Ներածություն

Ռազմագիտական բնագավառում առանցքային եզրույթներ են «մարտական ակտիվությունը» և «մարտունակությունը», որոնք կարևոր նշանակություն ունեն մարտի պայմաններում ռազմական անձնակազմի պատրաստ լինելու, առկա բոլոր ռեսուրսները մոբիլիզացնելու, մարտական խնդիրը հաջողությամբ կատարելու գործում, սակայն վերոգրյալ եզրույթների ճիշտ գործածության հետ կապված որոշակի դիտարկումներ կատարելու անհրաժեշտություն է առաջանում՝ ելնելով ուսումնասիրության օբյեկտից: Հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ, երբ խոսքը վերաբերում է մարտի պայմաններում զինծառայողի ունակությունների, հմտությունների օգտագործման կարողությանը, ապա այս դեպքում գործածվում է «մարտունակություն» եզրույթը, մինչդեռ նպատակային է «մարտական ակտիվություն» եզրույթի կիրառումը, որը լավագույնս բնորոշում է մարտի պայմաններում զինծառայողի ռեսուրսների օգտագործման կարողության դրսևորումը, վարքի կայուն շարժառիթները: Այս հասկացությունները ռուսական ռազմագիտական տերմինաբանության մեջ արտահայտվում են համապատաս-խանաբար *«боевая активность»* և *«боеспособность»* տերմիններով:

Նախ տեսնենք, թե ինչպես են ձևակերպվում այս հասկացությունները ռուսական ռազմագիտական հանրագիտարաններում: *«Боевая активность»* տերմինի դիմաց գրված է. «Զինված ուժերի կողմից ծավալվող վճռորոշ գործողություններ՝ ուղղված մարտի պայմաններում նախաձեռնողականություն վերցնելուն և պահպանելուն, հակառակորդին հանկարծակիի բերելուն, բոլոր առկա միջոցներն ու ռեսուսները օգտագործելուն և մարտական խնդիրը հաջողությամբ կատարելուն» (Огарков и др. 85): Մեկ այլ սահմանման համաձայն՝ «մարտական ակտիվությունը զինծառայողների, ստորաբաժանումների, զորամասերի, զորքերի կողմից մարտական խնդիրը կատարելու ինտենսիվության աստիճանն է՝ մոբիլիզացված ռեսուրսներն օգտագործելու տեսանկյունից» (Зинченко 41): Ա. Կարայանին իր «Ռազմական հոգեբանություն» գիտական աշխատությունում մեծ ուշադրություն է դարձնում զինծառայողի մարտական խնդիրը կատարելու ընթացքում մարտական ակտիվության դրսևորմանը՝ առանձնացնելով այն գործոնները, որոնք դրական ու բացասական ազդեցություն կարող են ունենալ ակտիվություն ցուցաբերելու կարողության վրա: Հեղինակը նշում է, որ մարտական ակտիվության

շարժառիթները զինծառայողի հիմնական շարժիչ ուժն են ժամանակակից պատերազմի սթրեսային գործոնների ազդեցությանը դիմակայելու կամ հաղթահարելու համար: Հրամանատարները, ռազմական հոգեբանները կոչված են ակտիվորեն զարգացնել և գործի դնել զինվորի մարտական ակտիվության ամբողջական մոտիվացիոն համալիրը, որը կապված է պահանջմունքների հետաքրքրությունների, զգացմունքների, ցանկությունների, ձգտումների, համոզմունքների հետ (Караяни и Сыромятников 38-40; Караяни 53): Վ. Լ. Մարիշչուկը «մարտական ակտիվությունը» բնորոշում է մի քանի դրսևորումներով. այն մարտական խնդրի կատարման ընթացքում հոգեկան գործընթացների հոսք է, զինծառայողի մարտական ակտիվության դրսևորման աստիճանն է առաջադրանքը կատարելու ընթացքում, զինծառայողի մարտական ակտիվության դրսևորման աստիճանն է հրամանատարի կողմից առաջադրանքի հանձնարարաման պահից, առաջադրանքի կատարման ընթացքում նրանց լարվածության աստիճանը, մտավոր, ֆիզիկական, բարոյական, հոգեբանական ջանքերի անհրաժեշտ աստիճանը, ինչպես նաև մարտի պայմաններում մարտական ակտիվության պահպանման տևողությունը: Բարձր մարտական ակտիվության դեպքում զինծառայողն օգտագործում է մոբիլիզացված էներգետիկ ռեսուրսները մարտական խնդիրը հաջողությամբ կատարելու համար (Методика оптимизации психических состояний военнослужащих): Մարտական ակտիվության խնդրին իր հոդվածներից մեկում անդրադարձել է Օ. Կոտը՝ ենթադրելով, որ այն զորքի մարտական գործողությունների հարձակման տեսակն է, քանի որ վճռորոշ նշանակություն ունի հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու գործում: Միայն բարձր տեմպերով և մեծ խորությամբ վճռական հարձակումն է ապահովում ամբողջական հաղթանակ հակառակորդի նկատմամբ, այսինքն՝ հեղինակը այս եզրույթը դիտարկում է մարտական գործողությունների վարման տեսանկյունից (Кот 64-66): Ա. Գ. Կովալյովը և Վ. Մ. Մյասիշչևը կարծում են, որ «ակտիվությունը» ներքին ուժն ու ինտենսիվությունն է՝ դիմակայելու արտաքին միջավայրի երևույթներին, հետևաբար «մարտական ակտիվությունը» զինծառայողի և շրջապատող մարտական միջավայրի հետ փոխազդեցությունն է, որի ի հայտ գալը պայմանավորված է ներքին գործընթացներով և արտաքին դրսևորումներով (Мясищев 98-111):

Այսպիսով՝ մարտական ակտիվության վերաբերյալ դիտարկումները մեծ թիվ են կազմում ռուսական ռազմագիտական բառարաններում և ռազմական հոգեբանության շրջանակներում կատարված ուսումնասիրություններում, որոնցում ակտիվության և պասիվության ցուցաբերման կարողությունը պայմանավորում են զինծառայողների անձի հոգեվիճակի, կողմնորոշման, նպատակադրման, պահանջմունքների և շարժառիթների հետ:

Ինչ վերաբերում է «*боеспособность»*-ին, ապա այն հայրենական ռազմագիտական բառարաններում սահմանվում է որպես՝ «զորքերի վիճակ, որը հնարավորություն է տալիս ըստ իր նախանշանակման հաջողությամբ մարտական գործողություններ վարելու և իրացնելու իր մարտական հնարավորությունները իրադրության ցանկացած պայմաններում» (Չիլինգարյան և Երզնկյան 404-405): Լ. Քոթանջյանի և Ս. Ներսիսյանի «հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարանում» այն նույնպես բնորոշվում է որպես վիճակ, որը նրանց հնարավորություն է տալիս հաջողությամբ վարել մարտական գործողություններ իրադրության ցանկացած պայմաններում նախատեսվածին համապատասխան և իրագործել իր մարտական հնարավորությունները, մարտական պատրաստության բաղադրիչներից մեկը: Խոցման միջոցների զանգվածային կիրառումը կարող է կտրուկ նվազեցնել զորքերի (ուժերի) մարտունակությունը: Այն կարող է անհետանալ մասնակիորեն (ըստ պատերազմի փորձի, անձնակազմի և մարտական տեխնիկայի 50-60% կորուստներ և կառավարման պահպանում) կամ ամբողջովին (շարքից դուրս է գալիս ուժերի և միջոցների 50-60%-ից ավելի կամ խանգարվում է կառավարումը)

(Քոթանջյան և Ներսիսյան 54-55): Այս սահմանման մեջ նշված թվային չափանիշները հանդիպում ենք նաև 1976 (Гречко 544) և 1983 (Огарков и др., *Военный энциклопедический словарь* 92) թվականների ռազմական բառարաններում, այն դեպքում, երբ էականորեն փոխվել է պատերազմի բնույթը, սպառազինության և ռազմական տեխնիկայի տեսակները, զորքերի գործողությունների ինքնաբավությունն ու շարժունակությունը, հոգեբանական ազդեցության միջոցները, մասնավորապես տեղեկատվական պայքարն առաջնային պլան է մղվել: Հաշվի առնելով վերոնշյալը՝ միևնույն տոկոսային հարաբերակցությունը շարունակվում է նշվել 2006 թվականի բառարանում, որը չի համապատասխանում ժամանակի պահանջներին և վերանայման, առանձին ուսումնասիրության անհրաժեշտություն ունի:

Յու. Զինչենկոյի և Խ. Կուպիրյանովայի «Ռազմահոգեբանական տեղեկատու-բառարանում» մարտունակությունը սահմանվում է որպես «զորքերի մարտական գործողություններ վարելու, մարտական առաջադրանքներ կատարելու ունակություն՝ հանդիսանալով մարտական պատրաստության կարևոր տարր: Մարտունակության մակարդակը որոշվում է նյութական և բարոյահոգեբանական բաղադրիչներով անձի պատրաստության մակարդակով» (Зинченко, *Военно-психологический словарь-справочник* 85):

Անգլերենում ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվություն» տերմին չի առանձնացվում, դրա փոխարեն լայն գործածություն ունի «մարտական պատրաստություն» եզրույթը, որը համապատասխանում է «*combat readiness»* տերմինին՝ կապված մարտական գործողություններում կատարվող առաքելությունների և գործառույթների հետ (Joint Publication 1-02 99), իսկ «մարտունակությունը»՝ «*combat capability»* կամ «*combat effectiveness»* տերմիններին՝ կապված զորքերի (ուժերի) պատրաստության վիճակի հետ, որը թույլ է տալիս հաջողությամբ կատարել մարտական խնդիրը և իրացնել մոբիլիզացված ռեսուրսները՝ հաշվի առնելով վարքագծային, օպերատիվ և առաջնորդման գործոնները (Combat effectiveness):

Այս սահմանումներից պարզ է դառնում, որ «*մարտական ակտիվությունը»* զորքի գործողությունների ինտենսիվության դրսևորումն է մարտի պայմաններում: Եթե խոսքը գնում է զինծառայողի մարտական ակտիվության մասին, ապա առաջնային պլան է մղվում նրա հոգեֆիզիոլոգիական վիճակը, որը կազմակերպում է վերջինիս վարքի ցուցաբերումը կոնկրետ իրավիճակում, իսկ «*մարտունակությունը»* զորքերի պատրաստության վիճակն է:

«Ակտիվություն» տերմինի էությունը. հոգեբանական և փիլիսոփայական հայացքները խնդրի շուրջ

Ռազմական հոգեբանության մեջ «մարտական ակտիվություն» եզրույթի գործածության հետ կապված տարակարծությունները հասկանալու և համակարգված ներկայացնելու համար անհրաժեշտ է դիտարկել «ակտիվություն» տերմինի ստուգաբանությունը:

Հոգեբանության մեջ այս հասկացության վերաբերյալ տարբեր մոտեցումների համեմատական վերլուծություն է կատարել հ.գ.դ. Ի. Դուբովան: Նա նշում է, որ «ակտիվություն» բառը անգլերենում համապատասխանում է «activity», իսկ լատիներենում «actio» բայերին, որը երկու լեզուներով էլ թարգմանաբար նշանակում է «գործունեություն» (Дубов 40-61): Վեբսթերի բառարանում ներկայացված է տերմինի անգլալեզու իմաստաբանությունը, որտեղ անդրադարձ է կատարվում նաև իմաստով մոտ հասկացությունների մեկնաբանություններին. «Act» (գոյական՝ գործողություն կամ բայ՝ գործել)- 1. արված, գործ, կատարում, 2. պաշտոնական հրաման, օրենք, կանոն և այլն, 4. ցանկացած գործողություն կամ օպերացիա հաստատող փաստաթուղթ, «Action» (գոյական՝ գործողություն, գործունեություն, արարք)- 1. գործողություն, 2. գիտակցված կամ կամային գործողություն, որը կարող է

բնութագրվել որպես ֆիզիկական կամ մտավոր գործունեություն, 3. վարքագիծ, գործողության եղանակ, «Active» (ածական՝ գործող, գործունյա, ակտիվ)- 1. մասնակցել մի գործողության, որը կարող է բնութագրվել եռանդուն աշխատանքով, 2. գոյության, շարժման, զարգացման վիճակում լինելը, 3. ներառյալ ֆիզիկական աշխատանք և գործողություններ, «Activity» (գոյական՝ գործունեություն)- 1. գործողության մեջ դրսևորում կամ որակ, 2. հատուկ գործողություն կամ գործառույթ, առաքելություն, 3. էներգիայով լի գործունեություն, ոգեշնչում (Agnes 7):

Այս սահմանումներից երևում է, որ ակտիվությունն առաջին հերթին նշանակում է գործողություն, վարքագիծ և այդ նշանակությամբ համարժեք է «activity» տերմինին: Ակտիվությունը անհատի կենսագործունեության ընթացքում արտաքին ու ներքին միտումների արտացոլման, արտահայտման և իրականացման միասնությունն է, վարքի կայուն շարժառիթների ձևավորման միջոցը:

Ակտիվություն բառը ռուսական տերմինաբանության մեջ ի հայտ է եկել դեռևս վաղ ժամանակաշրջանից, մասնավորապես գիտականորեն հիմնավորված մոտեցումներ ենք հանդիպում այնպիսի գիտնականների աշխատանքներում, ինչպիսիք են՝ Լ. Վիգոտսկին, Ս. Ռուբինշտեյնը, Ա. Լեոնտևը, Ն. Բերնշտեյնը, Ա. Պետրովսկին, Կ. Աբուլխանովը, Ա. Կիրլյուկը, Ի. Ֆուրմանովը և ուրիշներ: Ն. Բրենշտեյնը ակտիվության էությունը ներկայացնում է օրգանիզմի կենսագործունեության տեսանկյունից՝ պարզաբանելով հետևյալ կերպ. մարդու գործողություններում, որոշումների կայացման գործընթացում կան ռեֆլեքսներ, որոնք ուղղակիորեն պայմանավորված են արտաքին խթաններով, իսկ բուն շարժումը՝ մարդու օրգանիզմից: Դրանից լիակատար կախվածության դեպքում գործ ունենք, այսպես կոչված, «կամայական» արարքների հետ, երբ շարժման մեկնարկի նախաձեռնությունն ու բովանդակությունը սահմանվում է ներքին մտադրություններից: Կարելի է ասել, որ նա գիտության մեջ «ակտիվության ֆիզիոլոգիա» ուղղության հիմնադիրն է: Ակտիվությունը օրգանիզմի և շրջակա միջավայրի շարունակական փոխազդեցությունն է, որը դրսևորվում է կյանքի խնդիրների, առաջադրանքների, կոնկրետ իրավիճակների կարգավորման ընթացքում (Моисеев 223): Ս. Լ. Ռուբինշտեյնը իր «Ընդհանուր հոգեբանության հիմունքները» աշխատությունում նշում է, որ գործունեությունը սուբյեկտի ակտիվությունն է՝ ուղղված մարդու կողմից շրջապատող աշխարհի գիտակցված վերափոխմանը և հոգեկանի ակտիվությունն անհնար է հասկանալ առանց գործունեության հետ փոխկապվածության (Рубинштейн 207): Վ. Ա. Պետրովսկին և Ա. Վ. Պետրովսկին անհատին դիտարկում են ակտիվության իրական սուբյեկտ՝ այն համարելով գործունեության շարժիչ ուժը: Նրանք հոգեբանության մեջ ներմուծեցին «վերիրավիճակային ակտիվություն» հասկացությունը, որում իրավիճակը հաղթահարվում է սուբյեկտի ակտիվության բարձրացման շնորհիվ՝ ապահովելով ելք ստեղծված իրավիճակից: Հեղինակները ակտիվությունը սերտորեն կապում են գործունեության հետ և նշում, որ այն նպատակաուղղված ակտիվություն է, որն իրականացնում է սուբյեկտի ներքին պահանջները (Петровский и Ярошевский 70): Ի. Ֆուրմանովն իր «Ակտիվության և վարքագծի հոգեբանություն» աշխատությունում անդրադարձ է կատարում այս երկու հասկացությունների մանրամասն ուսումնասիրությանը՝ նշելով, որ ակտիվությունը լայն հասկացություն է և յուրաքանչյուր մարդու կյանքը շարունակական ակտիվության հոսք է, որը ներառում է ոչ միայն տարբեր տեսակի գործողություններ, այլև հոգեկան ակտիվություն՝ ընկալումների, պատկերացումների, զգացմունքների և մտքերի տեսքով: Հեղինակն ակտիվությունը սահմանում է սուբյեկտի և շրջակա միջավայրի փոխազդեցության գործընթաց, իսկ վարքագիծը՝ որպես հոգեշարժուն գործողությունների համակարգ, որպես մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունից բխող ակտիվություն, որն ուղղված է պահանջմունքների (հակումներ, շարժառիթներ, մտադրություններ և այլն) բավարարմանը (Фурманов 5-6):

Այսպիսով՝ հոգեբանության ոլորտի գիտնականների մի մասը ակտիվությունը համարում է նպատակաուղղված գործունեություն, մյուս մասը՝ հակառակը: Ոմանք նշում են, որ գործունեությունը նույն ակտիվությունն է, այնինչ դրանք միմյանց հետ փոխկապված են և առանց ակտիվության գործունեությունը չի կարող ծավալվել, քանի որ համապատասխան ակտիվություն դրսևորվում է՝ ելնելով գործունեության նպատակից: Այսինքն՝ այս երկու եզրույթները խաչվում են իրար, բայց նույնական չեն: Բացի այդ, առանձնացվում են ակտիվություն և վարքագիծ հասկացությունները, որոնք փոխկապված են միմյանց հետ, և վարքագիծը հանդիսանում է ակտիվության դրսևորումներից մեկը:

Փիլիսոփայության մեջ նույնպես «ակտիվություն» եզրույթին անդրադարձ են կատարել մի շարք փիլիսոփաներ (Լ.Մ. Լուպարիտը, Ս.Լ. Ֆրանկը, Ն.Օ. Լուսակովոն և ուրիշներ), դրա մեկնաբանման վերաբերյալ թողել են իդեալիստական ավանդույթներ: Նրանց ուսումնասիրությունների համաձայն՝ ակտիվությունն առաջին հերթին հասկացվում է հոգու ըմբռնման հատկություն՝ բացահայտելով մարդուն ինքնադիտարկման կամ ներհայեցման ընթացքում (հայացք ներսից), հետևաբար ակտիվությունը հոգու մեջ է և որևէ մեթոդով բացահայտել հնարավոր չէ: Ինչպես հոգեբանական, այնպես էլ փիլիսոփայական գիտության մեջ «ակտիվություն» և «գործունեություն» փոխգործակցությունը ակտիվորեն քննարկվում է: Արդունքում՝ մի դեպքում՝ ակտիվությունը նույնացնում է մատերիայի ինքնաշարժման հետ (այս դեպքում գործունեությունը դառնում է ակտիվության մասնավոր դրսևորում. ավելի լայն ընդգրկուն ունի), մյուս դեպքում՝ գործունեությունը դիտարկում է որպես յուրօրինակ «սուբստանցիա», և ակտիվությունը հանդես է գալիս որպես վերջինիս արտահայտման միջոց (այս դեպքում գործունեությունը դառնում է առավել լայն, ընդգրկուն հասկացություն, քան ակտիվությունը): Ելակետային է այն միտքը, որ ակտիվությունը շարժում է, գործողություն և անբաժան է գործունեությունից, միևնույն ժամանակ օբյեկտիվ գործունեության ոչ բոլոր գործընթացներն են համարվում ակտիվ, այլ այնպիսինները, որոնց գոյությունն ուղղակիորեն կախված է սուբյեկտից: Հետևաբար ակտիվությունը սահմանվում է որպես անհատի կողմից ծավալված գործունեության ընթացքում շարժման, գործելու պահերի ամբողջություն:

Այսպիսով՝ փիլիսոփայության շրջանակներում ակտիվությունը մեկնաբանվում է որպես մատերիայի համընդհանուր, ունիվերսալ միջոց, որը

- ուղղորդված գործունեության միջոց է,
- օբյեկտի հուզական վիճակ է՝ պայմանավորելով հակառակ ազդեցությունը գործունեության վրա,
- նյութական և այլ օբյեկտների հետ փոխազդելու ունակություն (Фурманов, *Психология активности и поведения* 44-45):

Ամբողջացնելով հոգեբանական ու փիլիսոփայական հայացքները ակտիվության վերաբերյալ՝ կարող ենք եզրակացնել, որ այն կենդանի էակներին բնորոշ համընդհանուր հատկություն է, որը մի դեպքում կապվում է վարքագծի հետ, մյուս դեպքում նույնացվում կամ համեմատվում է գործունեության հետ, մի ուրիշ դեպքում այն ավելի լայն հասկացություն է դիտվում՝ իր մեջ ամբողջացնելով նաև գործունեությունը, մյուս դեպքում՝ հակառակը:

Հայկական պաշտպանական համակարգում «մարտական ակտիվություն» եզրույթի կիրառելիության վերաբերյալ պարզաբանումներ

Քանի որ հոգեբանական և փիփլիսոփայական գիտությունների շրջանակներում «ակտիվություն» տերմինի իմաստը շարժումն է, վարքագիծը, հետևաբար ռազմական գիտության տեսանկյունից «մարտական ակտիվությունը» կարող ենք հետևյալ կերպ սահմանել. այն մարտական գործողությունների պայմաններում զինծառայողների ֆիզիկական, մտավոր ու հոգեկան ռեսուրսների մոբիլիզացման և իրավիճակին համապատասխան վարքագծի ռազմավարության ընտրության կարողությունն է:

Ինչպես գիտենք, հոգեբանական պատրաստության գործընթացում իրականացվող միջոցառումներն ուղղված են մարտունակության և մարտական ակտիվության ապահովմանը, որոնցից մեծապես կախված է մարտական գործունեության արդունավետությունը, սակայն միշտ չէ, որ մարտունակ զինծառայողը կարողանում է մարտի պայմաններում մարտական ակտիվություն ունենալ և հակառակը՝ ոչ մարտունակ զինծառայողը մարտական ակտիվություն ցուցաբերել: Դիտարկենք օրինակներ, որոնք ավելի կհաստակեցնեն այս եզրույթների տարանջատումը և իմաստաբանական ընկալումները. *կործանիչի օդաչուն խաղաղ պայմաններում անցել է հոգեբանական պատրաստություն, մարտունակ է, հստակ գիտակցում է առաջադրված խնդիրը և մարտի պայմաններում խնդիր կատարելիս ինքաթիռը խոցվելու արդյունքում անհնար է դառնում այն վերադարձնել օդանավակայան, նշանադրման սարքավորումները դադարում են աշխատել և տվյալ ինքնաթիռը, որպես մարտական միավոր, կորցնում է իր մարտունակությունը: Նման իրավիճակում օդաչուն երկու վարքագծի ռազմավարություն է ընտրում. կամ կատապուլտով դուրս է նետվում, կամ ինքնաթիռն ուղղում է հակառակորդի կարևոր նշանակետի վրա՝ դրսևորելով մարտական ակտիվություն՝ առաջադրված խնդիրը կատարելու համար: Ստեղծված իրավիճակում կարող է չցուցաբերել մարտական ակտիվություն՝ լինելով մարտունակ, կարող է չլինել մարտունակ, բայց մարտական ակտիվություն ցուցաբերել: Այս դեպքում օդաչուն մարտունակ էր և կախված վարքագծից՝ կարող ենք հստակ խոսել բարձր կամ ցածր մարտական ակտիվության ցուցաբերման մասին: Մեկ այլ օրինակում՝ հրետանու ստորաբաժանումն իր առջև դրված խնդիրը կատարելու համար մարտունակ է (հրետանու խնդիրները կատարելու համար զինծառայողները սպառազինված են համապատասխան սպառազինությամբ և ռազմամթերքով), երբ դիվիզիոնի հետախուզությունը հայտնաբերեց նշանակետ և հակառակորդի հետևակ դիվիզիոնը խոցելու մարտական խնդիրը կատարելու գործում չցուցաբերեց մարտական ակտիվություն, քանի որ վերադաս հրամանատարությունը մի քանի անգամ տեղեկույթ է ստանում, որ այդ հետևակը յուրային զորքերն են: Արդյունքում հակառակորդի ուժերին հնարավորություն ընձեռվեց մոտենալ դիվիզիոնի կրակային դիրքերին անթույլատրելի հեռավորության վրա և 200-300 մետր հեռավորությունից խոցել կրակային դիրքում գտնվող ռազմական անձնակազմին ու տեխնիկան: Այս ամենից հետևություն հետևյալի վերաբերյալ. դիվիզիոնն ի սկզբանե եղել է մարտունակ, բացազատված է եղել իր կրակային դիրքերում, ունեցել է անհրաժեշտ ռազմամթերք, տեխնիկա, կապի միջոցներ, սակայն իրավիճակը թույլ չի տվել ցուցաբերելու մարտական ակտիվություն, արդյունքում եղել են մեծ թվով զոհեր և ոչնչացվել է ռազմական տեխնիկան:* Մարդիկ իրենց առջև դրված նպատակին չեն կարողանում հասնել անբարենպաստ իրավիճակային պայմաններից ելնելով, արդյունքում ունենում են անբավարարվածության և անհաջողության զգացում:

Հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ «մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների տարանաջատման անհրաժեշտությունը հիմնավորելու համար զրուցել ենք նաև ռազմական գիտական կոչում և աստիճան ունեցող, ռազմական կրթական ոլորտում երկարամյա ծառայողական փորձ ունեցող բարձրաստիճան սպաների հետ, որոնց տեսակետները վերլուծելով տեսնում ենք, որ այս եզրույթները հստակ տարանջատվում են: «Մարտական ակտիվությունը» բնութագրում են որպես նեղ հասկացություն, որը վերաբերում է գործողությունների դինամիկային, վարքագծին, ստացած մասնագիտական գիտելիքների ու հոգեբանական ունակությունների օգտագործման կարողությանը, իսկ «մարտունակությունը» լայն հասկացություն է և կապված է զինծառայողների պատրաստության վիճակի հետ: Այն ցույց է տալիս մարտական խնդրի կատարման համար անձնակազմի համալրվածության աստիճանը: «Այս երևույթները փոխկապված են, սակայն տարբեր սահմանումներ են ենթադրում:

Ցանկալի է, որ մարտունակ զինծառայողը ցուցաբերի մարտական ակտիվություն, սակայն որոշ իրավիճակներում գործելը դառնում է անհնար» (սպայի ուղղակի խոսք):

Շեշտվում է ՀՀ ԶՈՒ-ում հոգեբանական պատրաստության ապահովման ուղղությամբ ծրագրերի անարդյունավետությունը՝ պայմանավորված արդյունքի գնահատման բացակայությամբ: Հետևաբար դժվար է հստակ ասել, որ մարտունակ զինծառայողը կարող է մարտական ակտիվություն ցուցաբերել, չնայած ցանկալի է այդ գործընթացի հաջորդականության ապահովումը, մասնավորապես ներկա իրողությունների համատեքստում:

Եզրակացություն

Այսպիսով՝ *«մարտական ակտիվությունը»* զորքի գործողությունների ինտենսիվության դրսևորումն է մարտի պայմաններում: Եթե խոսքը գնում է զինծառայողի մարտական ակտիվության մասին, ապա առաջնային պլան է մղվում նրա հոգեֆիզիոլոգիական վիճակը, որը պայմանավորում է վարքագծի ռազմավարության ընտրությունը և ցուցաբերումը կոնկրետ իրավիճակում, իսկ *«մարտունակությունը»* զորքերի պատրաստության վիճակն է: Վերոգրյալ եզրույթների իմաստաբանական ու ստուգաբանական մեկնաբանությունները, ռազմական ոլորտի ներկայացուցիչների դիտարկումները, հստակ իրավիճակային օրինակները հիմք են հանդիսանում առաջարկելու հայկական ռազմագիտական տերմինաբանության մեջ գործածելի դարձնել «մարտական ակտիվությունը», որը կարող է օգտակար լինել մասնագիտական հետազոտություններ կատարելու գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չիլինգարյան, Դավիթ և Երզնկյան, Լևոն, *Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարան,* Երևան, 2015:
2. Քոթանջյան, Լևոն և Ներսիսյան, Սերգեյ, *Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան,* Երևան, 2006:
3. Гречко, Андрей. *Советская военная энциклопедия.* Москва. 1976
4. Дубов, Игорь. Содержание категории «активность» в отечественной психологии. *«Социальная психология и общество».* 2010, № 1, стр. 40-61.
5. Зинченко, Юрий. *Военно-психологический словарь-справочник.* Москва, 2010.
6. Караяни, Александр и Сыромятников, Игорь. *Военная психология.* Москва. 2016.
7. Караяни, Александр. *Военная психология: учебник и практикум.* Москва, 2019.
8. Кот, Олег. Боевая активность. *Развитие вооружения и военной специальной техники. История и современное техническое обеспечение боевых действий. Военное образование – проблемы и перспективы развития: материалы 73-й Республиканской научно-технической конференции.* Минск, 2020 г. стр. 64-66.
9. Мясищев, Владимир. *Основные проблемы и современное состояние психологии отношений человека.* Москва, 1960.
10. Моисеев, Александр. *Психологический подход к определению понятия «социальная активность». Социально-экономические и психологические проблемы управления.* Москва, 2013.
11. Огарков, Николай и др. *Военный энциклопедический словарь.* Москва, 1983.
12. Петровский, Артур и Ярошевский, Михаил. *Краткий психологический словарь*. Феникс, 1998.
13. Петровский, Вадим. *Психология неадаптивной активности.* Москва, 1992.
14. Рубинштейн, Сергей. *Проблемы общей психологии.* Москва, 2002.

15. Фурманов, Игорь. *Психология активности и поведения.* Минск, БГУ, 2012.
16. Department of Defense Dictionary of Military and Associated Terms. Joint Publication 1-02, 2007. p. 99.
17. Michael, Agnes. *Websters new world dictionary.* Fourth edition. New York, 2013.
18. *Combat effectiveness.* Encyclopaedia Britannica. https://www.britannica.com/topic/combat-effectiveness15.09.2022
.

WORKS CITED

1. Chilingaryan, Davit ev Erznkyan, Levon, Pashtpanakan anvtangajin terminneri bacatrakan bararan, Erevan, 2015 [Explanatory Dictionary of Defense and Security Terms, Yerevan] (in Armenian)
2. Qotanjyan, Levon ev Nersisyan, Sergej, Hayeren razmakan terminneri bacatrakan bararan, Erevan, 2006 [Explanatory dictionary of Armenian military terms, Yerevan] (in Armenian)
3. Grechko, Andrej. Sovetskaja voennaja enciklopedija. Moskva, 1976 [Soviet military encyclopedia, Moscow] (In Russian)
4. Dubov, Igpor'. Soderzhanie kategorii «aktivnost'» v otechestvennoj psihologii. 2010, № 1 [The Content of the Category "Activity" in Domestic Psychology] (In Russian)
5. Zinchenko, Jurij. Voenno-psihologicheskij slowar'- spravochnik. Moskva, 2010. [Military Psychological Dictionary-Reference, Moscow] (In Russian)
6. Karayani, Aleksandr i Siromyatnikov, Igor'. Voennaja psihologija. Moskva, 2016 [Military Psychology, Moscow] (In Russian)
7. Karayani, Aleksandr. Voennaja psihologija: uchebnik i praktikum. Moskva, 2019 [Military Psychology: Textbook and Practicum, Moscow] (In Russian)
8. Kot, Oleg. «Boevaja aktivnost'». Razvitie voorjhenija i voennoj special'noj tehniki. istorija i sovremennoe tehnicheskoe obespechenie boevykh dejstvij. Voennoe obrazovanie-problemyj i perspektivj razvitija materialyj 73-j Respublikanskoj nauchno-tehnicheskoj konferencii. Minsk, 2020 [Combat Activity. Development of Weapons and Military Special Equipment. History and Modern Technical Support of Military Operations, Minsk] (In Russian)
9. Myasishchev, Vladimir. Osnovnye problemy i sovremennoe sostoyanie psihologii otnoshenij cheloveka. Moskva, 1960 [The Main Problems and the Current State of the Psychology of Human Relations, Moscow] (In Russian)
10. Moiseev, Aleksandr. Psihologicheskij podhod k opredeleniyu ponjatija «social'naja aktivnost'». Moskva, 2013 [Psychological Approach to the Definition of the Concept of «Social Activity», Moscow] (In Russian)
11. Ogarkov, Nikolaij i dr. Voennij enciklopedicheskij slovar'. Moskva, 1983. [Military Encyclopedic Dictionary, Moscow] (In Russian)
12. Petrovskij, Artur i Jaroshevskij, Mihail. Kratkij psihologicheskij slovar'. Feniks, 1998 [A Brief Psychological Dictionary] 1998 (In Russian)
13. Petrovskij, Vadim. Psihologija neadaptivnoj aktivnosti. Moskva, 1992 [Psychology of Non-Adaptive Activity, Moscow] (In Russian)
14. Rubinshtejn, Sergej. Problemy obshej psihologii. Moskva, 2002 [Problems of General Psychology, Moscow] (In Russian)
15. Furmanov, Igor'. Psihologija aktivnosti i povedenija. Minsk, BGU, 2012 [Psychology of Activity and Behavior, Minsk] (In Russian)

«COMBAT ACTIVITY» AND «COMBAT ABILITY»: APPLICATION, SPECIFICS AND SEMANTIC DIFFERENTIATION

ARSEN LOKYAN
Doctor of Psychological Sciences, Professor
Yerevan, The Republic of Armenia

SVETLANA BAGHDASARYAN
the PAARA, Chair of Psychology of Governance, Ph.D. Student;
NDRU, MOD, RA, Center for Research on Strategic Leadership and Management, Research Fellow
Yerevan, The Republic of Armenia

The purpose of this article is to study the essence of the terms «combat activity» and «combat ability», showing the necessity of their separation, correct use and understanding in Armenian military-scientific terminology. The relevance of the work is due to the lack of use of the term «combat activity» in the Armenian military-scientific terminology, which will make it possible, for example, in scientific research conducted in the direction of military psychology, to apply equivalent terms to clarify what the researcher is talking about. The following tasks were set to achieve the goal of the research: to present the definitions of the terms «combat activity» and «combat ability» in military-scientific terminology in Armenian, Russian and English; to conduct a comparative analysis of various approaches and applications of the term «activity» within the framework of psychological and philosophical sciences; to justify the necessity of separation of the above-mentioned terms into Armenian military-scientific terminology.

With the application of comparative and analytical methods in the work, we came to a conclusion that the meaning of the term "activity" is movement, behavior, therefore, in Armenian military-scientific terminology, «combat activity» can be defined as the ability of servicemen to mobilize physical, mental and psychic resources to choose the appropriate behavior in the conditions of hostilities. In addition, the terms «combat ability» and «combat activity» are interconnected, but not identical, which is confirmed by tangible situational examples and observations of Senior officers.

Key words: *combat activity, combat ability, military terminology, behavioral strategies, action, semantics of the term «activity», comparative analysis of psychological and philosophical approaches, situational examples, observations of Senior officers.*

О СПЕЦИФИКЕ И СЕМАНТИЧЕСКОЙ ДИФФЕРЕНЦИАЦИИ ТЕРМИНОВ «БОЕВАЯ АКТИВНОСТЬ» И «БОЕСПОСОБНОСТЬ»

АРСЕН ЛОКЯН
доктор психологических наук, профессор
г. Ереван, Республика Армения

СВЕТЛАНА БАГДАСАРЯН
аспирант кафедры психологии управления ГАУ РА,
ученый-аналитик Центр исследований стратегического лидерства и управления НИУО МО РА,
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является изучение сущности терминов «боевая активность» и «боевая способность», обнаружить необходимость их разделения и правильного употребления и понимания в армянской военно-научной терминологии. Актуальность работы обусловлена отсутствием в армянской военно-научной терминологии использования термина «боевая активность», что, например, может дать возможность, в научных исследованиях, проводимых в сфере военной психологии (о чем и говорится в данном исследовании) применить эквивалентные ему термины, с целью разъяснить предмет обсуждения.

Из цели статьи вытекают следующие задачи: представить определения терминов «боевая активность» и «боеспособность» в военно-научной терминологии на армянском, русском и английском языках, провести сравнительный анализ различных подходов и представлений о термине «активность» в рамках психологических и философских наук, обосновать необходимость разделения вышеуказанных терминов в армянской военно-научной терминологии. Используя сравнительные и аналитические методы, авторы исследования пришли к выводу о том, что, исходя из смысла термина «активность» – движение, поведение,–можно отметить, что в армянской военно-научной терминологии «боевая активность» может быть определена как способность военнослужащих мобилизовать физические, умственные и психические ресурсы и выбирать соответствующую модель поведения в условиях боевых действий. Кроме того, термины «боеспособность» и «боевая активность» взаимосвязаны, но не идентичны, что подтверждается конкретными ситуационными примерами и наблюдениями высокопоставленных офицеров.

Ключевые слова: *боевая активность, боеспособность, военная терминология, стратегии поведения, действие, семантика термина «активность», сравнительный анализ психологических и философских подходов, ситуационные примеры, наблюдения высокопоставленных офицеров.*

THE INTERRELATIONSHIP OF MEANING-LIFE ORIENTATIONS AND SELF-ESTEEM AMONG PEOPLE WITH PARENTAL DEPRIVATION*

UDC 159.9 *10.52063/25792652-2022.3.14-184*

SILVI TARJUMANYAN
Yerevan State University,
Faculty of Philosophy and Psychology
Chair of General Psychology, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia
silvitarjumanyan@yahoo.com

The article discusses the results of our research on correlations between meaning-life orientations and the level of self-esteem among people with parental deprivation. People who experienced parental deprivation as children are thought to have law self-esteem and a variety of issues with the existence of life objectives and judgments of meanings. We undertook studies to shed light on this problem. The goal of the study was to determine the connection between meaning of life and self-esteem among those who experienced parental deprivation. The problems of the study were to find out the expressiveness of meaning-life orientations and the level of self-esteem among research groups. The methodologies used in the study were D. Leontiev's "Meaning-life orientations" test and T. Dembo, S. Rubinstein "Self-esteem" test.

The primary conclusion from this study is that, despite that parental deprivation has been a source of difficulties, privation, dissatisfaction in the lives of people, who experienced it in childhood, in terms of the formation of the meaning of life and adequate self-esteem, the picture is almost the same in comparison with those without deprivation.

Keywords: parental deprivation, meaning-life orientations, self-esteem, meaning in life, purpose in life, life-course, life-results, locus control.

Introduction

There are times when a phenomenon like childhood deprivation affects how healthy mental development occurs in adults. Because of this, psychological deprivation plays a significant role in both childhood psychopathology and academics. A person experiences deprivation when they are unable to appropriately meet some of their fundamental mental needs for a prolonged period of time. Small abnormalities that do not go beyond the typical emotional image can be the result of deprivation, which is detrimental to very deep thinking and character development (Лангмейер и Матейчек 67-78). Surely, the most important is the consequences that this deprivation can have on a child.

The mother (or permanent mother-substitute) should have a warm, close-knit relationship with the infant and young child that is ongoing and enjoyable for both parties. "Maternal deprivation" refers to a situation when the child lacks this relationship. This is a phrase that refers to several circumstances. If a mother is unable to provide her child

* Հոդվածը ներկայացվել է 13.07.2022թ., գրախոսվել՝ 13.08.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

with the loving care that young children require, the child will suffer even though they are living at home. The negative impacts of deprivation can range in severity. Acute anxiety, an excessive craving for love, intense sentiments of vengeance, and guilt and depression that result from these last three are all things it carries with it. Additionally, it may completely cripple the character development process and have far more significant impacts (Bowlby 12-16).

The Study on Meaning-life Orientations and Self-Esteem

So as the literature mentions, parental deprivation can have various impact on a child development, starting from mild odds to severe disorders. We wanted to find out whether adult people who had parental deprivation in their childhood, have law self-esteem and a number of problems with the existence of life goals, choices and just simply meaning of life or it is a just wrong assumption. For that reason, we have conducted a research and examined 140 people 21-35 years old, of which 70 (research group) had parental deprivation before the age of 10, and the other 70 (control group) did not have such an issue.

One of the parametric methods of mathematical statistics, the Independent Samples T-Test was used for the scientific validation of comparative analysis of research and control groups.

The calculations were performed with SPSS-23 statistical software package.

For conducting a research, we have used D. A. Leontiev's “Meaning-life orientations” test (Смысложизненные ориентации, СЖО). This test allows to assess the "source" of the meaning of life. It can be either in the future (goal), or in the present (process) or in the past (outcome), or in all three components of life at the same time. It's a adopted version of James Crambo and Leonard Maholic's Purpose-in-Life Test (PIL). The methodology was developed on the basis of striving for meaning and Victor Frankl's logotherapy theories, with the aim of empirically validating a number of ideas presented in these theories (Лотова 10-13).

The test includes 5 scales.

1. Purpose in life
2. Life course
3. Life results
4. Locus of control- Self (I am the master of my life).
5. Locus of control- Life (Life controls me) (Леонтьев).

This method allows the researcher to identify the presence or absence of the above-mentioned problems, as well as to address the issue of both the past and present life satisfaction, the existence of goals for the future, and perceptions of control over life.

As a result of the research we got the following image. (See table 1)

Table 1: The results of “Meaning-life orientations” test.

Groups	Partici-pants	Statistical parameters	Life purpose	Life course	Life results	Locus of control-Self	Locus of Control-Life
Control	60	average value	30,3	26,7	24,6	18,6	28,2
		statistical deviation	5,02	5,20	4,48	3,65	5,41
Research	60	average value	30,4	26,7	24,7	18,5	28,3
		statistical deviation	5,72	4,70	4,40	4,35	5,53

As we can see in the table, the results of the research group are almost the same as the results of the control group in every of each 5 components. The results of both groups correspond to the criteria that are considered the norm. In this article we will discuss the correlations between research group's results of the scales.

By analyzing the results, we can tell that the respondents have clearly defined goals and make concrete plans to achieve them. They make decisions freely, know what they want, what they strive for, which in turn allows them to avoid internal conflicts. Individuals with parental deprivation tend to overcome many obstacles to the implementation of their plans, and, according to their claim, are well aware of the additional obstacles that are predicted on the way to their goal. For some, it may be a lack of parental support, for another, a lack of life lessons, knowledge or instruction from a parent or the missing role of the parent itself. Comparing themselves to people who are not deprived, they find that they did not start their life on the same equal ground, but this is an additional incentive for them to work hard on the way to achieving their goals.

People with high expression of life goals are more likely to exercise self-control in making important decisions and on their behavior, work hard to achieve their goals, and are guaranteed to have better results. The results of the research show that there is a positive correlation between indicators on the "Purpose in Life" and "Life Outcome" scales. It means that the more the subject's goals are expressed, the stronger the attitude about the results obtained in life, and conversely, the higher the result indicator, the more he is inclined to set goals.

There is also a positive correlation between the indicators on the "Purpose in Life" and "Life Course" scales. We consider it fair to suggest that the presence of goals can bring interest into life, and their pursuit can make all spheres of life emotionally saturated. As well as the opposite, an interesting life course can be a reason to have even more goals and achieve them.

Having goals and working towards them enables people with parental deprivation to feel in control of their lives, thus providing clarity and stability. There is a positive correlation between the "Purpose in Life" and the "Locus Control-Life" scales. This means that the more goals there are in the subjects' lives, the more they control their own lives, and vice versa, the more they feel control over their lives, the more likely for them to set more goals.

J. Rotter noted that internal locus of control is associated with higher levels of achievement (Smith 377-400). The results of our research also confirm a positive correlation between the "Life Outcomes" and "Locus of Control-Life" scales. Life course and outcomes are interrelated, as evidenced by the results of our research. A positive correlation was found between indicators on the "Life Course" and "Life Outcome" scales. The more emotionally full and interesting life is for a person, the more satisfied a person is with his life and vice versa.

Thus, we have discovered the "realism" of the meaning of life of the people who have parental deprivation, that is to say the correspondence of the meaning of life, on the one hand, to the objective conditions necessary for its realization, on the other hand, to the individual capabilities of the person, as well as the "constructiveness", which is the degree of its positive (or negative) influence on the process of personality formation.

We have discussed the correlations between the scales of "Meaning-life orientations" test, but the aim of this article is to show the correlations between the mentioned scales and self-esteem of a person. For discovering the level of self-esteem among the subjects, we used psycho-diagnostic method aimed at studying the subject's self-esteem, which was developed by Tamara Dembo in 1962 and supplemented by Susanna Rubinstein in 1970. This methodology makes it possible to identify the level of ambition and relevance of the subject. It represents degrees that indicate health, mental

development, character and happiness. If we conditionally place people on these steps, the healthiest will be on the top step of the first ladder, and the sickest will be on the bottom. So people will be placed on the remaining steps according to the same principle (Ավանեսյան և ուրիշներ 42).

Table 2: The results of “Self-esteem” test

Groups	Participants	Statistical parameters	Self-esteem
Control	60	average value	3,4
		statistical deviation	*0,81*
Research	60	average value	3,5
		statistical deviation	*0,85*

The results showed that there are no differences between the subjects of research and control groups, and that they both have adequate self-esteem (See Table 2). The interesting part is its correlation with other methodologies. Positive correlations were found between self-esteem and all scales of life-meaning orientations among research group, which are: purpose in life, life course, life results, locus of control-self and locus of control-life. In our point of view, it means the more adequate a person's self-esteem is, the more expressed his goals are, the stronger the attitude about the results he gets in life, the higher the interest in life and emotional saturation, efficiency or satisfaction with self-realization, and also the more they control their own lives, freely make decisions and implement them, structure their lives in accordance with goals, tasks and ideas about its meaning. To sum up, we can say that the more adequate the self-esteem of the subjects, the more meaningful life is and vice versa.

Table 3: The results of correlations between components of “Meaning-life orientations” and “Self-esteem” tests.

	Life purpose	Life course	Life results	Locus of control-Self	Locus of control-Life	Self-esteem
Life purpose		**.531****	**.581****	**.642****	**.410****	.017
Life course			**.507****	**.656****	**.381****	**.411****
Life results				**.566****	**.495****	**.507****
Locus of control-Self					**.518****	**.470****
Locus of control- Life						**.457****

The picture is different for participants in the control group. No correlations were found with self-esteem, which indicates that it is not a significant correlation for individuals without parental deprivation.

The analysis of the obtained data of the research testifies to the expressiveness of the qualities on the desire to discover their lives, to understand the contradictions of their own personality and the phenomena of the reality that surrounds them and to search for the causes and meanings of events. Therefore, young people with parental deprivation have formed a strong system of meanings, by which they are guided in various situations.

It should be noted that the interviewed people, who had a high locus of control in life, aimed at self-knowledge, self-improvement, and their orientation towards the future allowed them to form their goals consistently. The subjects have goals for the future that give life meaning, direction and time perspective. They are mostly satisfied with the life they live and are convinced that they can manage their lives, make independent decisions and realize their plans.

For the deprived people, their life is meaningful, full of goals and coherent. Although parental deprivation has been a source of difficulties, privation, dissatisfaction, but in terms of the formation of the meaning of life and adequate self-esteem, the picture is almost the same in comparison with those without deprivation.

Conclusion

Thus to conclude, the results of the statistical analysis showed that there are no differences between the self-attitudes of the meaning of life and self-esteem of the subjects with and without parental deprivation. The realism of the meaning of life and adequacy of self-esteem of young people, which is the correspondence of the meaning of life to the objective conditions necessary for its realization, on the one hand, and to the individual capabilities of the person, on the other hand, allows determining the degree of positive influence of the meaning of life and self-esteem on the process of personality formation.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսյան, Հրանտ և ուրիշներ. *Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: Մեթոդական ձեռնարկ*. «Առողջության և կրթության հայկական կենտրոն» ՀԿ, 2009:

2. Bowlby, John. *Maternal Care and Mental Health*. World Health Organization, Palais Des Nations, Geneva, 1952.

3. Smith, Peter, et al. “The Rotter Locus of Control Scale in 43 Countries.” *A Test of Cultural Relativity*, Published online: 24 Sep 2007, p. 377-400, doi.org/10.1080/00207599508246576.

4. Лангмейер, Иозеф и Матейчек Зденек. *Психическая депривация в детском возрасте.* Авивценум. Медицинское издательство, Прага, 1984.

5. Леонтьев, Дмитрий. *Тест смысложизненных ориентаций (СЖО).* Психодиагностическая серия, выпуск 2 а, Смысл, Москва, 2000.

6. Лотова, Ирина. *Понятие «смысл жизни»: сущностно-содержательная характеристика*. Евразийский Союз Ученых (ЕСУ) # 8 (17), 2015.

WORKS CITED

1. Avanesyan, Hrant ev urishner. Hogebanakan ev socialakan ashxatanqnery' HH AN qreakataroghakan c'ar'ayut'yunum: Met'odakan d'er'nark, [Psychological and Social Work in the Penitentiary Service of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia. Methodical Manual], «Ar'oghjut'yan ev krt'ut'yan haykakan kentron» HK, 2009. (In Armenian):

2. Langmejer, Iozef i Matejchek Zdenek. Psihicheskaja deprivacija v detskom vozraste. [Psychological Deprivation in Childhood] Avivcenum. Medicinskoe izdatel'stvo Praga, 1984. (In Russian).

3. Leont'ev, Dmitrij. Test Smyslozhiznennyh Orentacij (SZhO), [Meaning-life Orientations Test] Psihodiagnosticheskaja serija, Vypusk 2a, Smysl, Moskva, 2000. (In Russian).

4. Lotova, Irina. Ponjatie «Smysl Zhizni»: Sushhnostno-Soderzhatel'naja Harakteristika [The Concept of "The Meaning of Life": an Essential and Meaningful Characteristic]. Evrazijskij Sojuz Uchenyh (ESU) # 8 (17), 2015. (In Russian).

ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՍԱ-ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍԻԼՎԻ ԹԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հոդվածում քննարկվում են հետազոտության արդյունքները ծնողական դեպրիվացիա ունեցող մարդկանց կենսա-իմաստային կողմնորոշումների և ինքնագնահատականի մակարդակի կորելացիոն կապերի վերաբերյալ: Ենթադրվում է, որ մանկական տարիքում ծնողական դեպրիվացիա ապրած մարդիկ ունեն ցածր ինքնագնահատական և կյանքի նպատակների, ընտրությունների առկայության և իմաստների դատողությունների հետ կապված մի շարք խնդիրներ: Մեր կողմից կազմակերպված հետազոտության նպատակն էր պարզել կյանքի իմաստի և ինքնագնահատականի միջև կապը դեպրիվացված անձանց շրջանում:

Այս հոդվածում ներկայացված են մի քանի փորձարարական արդյունքների վերլուծություններ, որոնք կուրվագծեն կենսա-իմաստային կողմնորոշումների և ինքնագնահատականի առանձնահատկությունները: Դրանցից մեկն այն է, որ որքան ադեկվատ է մարդու ինքնագնահատականը, այդքան ավելի արտահայտված են նրա նպատակները, ուժեղ է կյանքում ստացած արդյունքների մասին վերաբերմունքը, բարձր է կյանքում հետաքրքրությունը և հուզական հագեցվածությունը, արդյունավետությունը կամ ինքնիրացումով բավարարվածությունը, ինչպես նաև այդքան շատ են հենց իրենք վերահսկում իրենց կյանքը, ազատորեն որոշումներ կայացնում և իրականացնում դրանք, կառուցում իրենց կյանքը նպատակներին, խնդիրներին և դրանց իմաստների մասին պատկերացումներին համապատասխան: Գլխավորը եզրակացությունն այն է, որ թեև ծնողական դեպրիվացիան դժվարությունների, զրկանքների, դժգոհությունների աղբյուր է եղել, սակայն կյանքի իմաստի ձևավորման առումով պատկերը գրեթե նույնն է դեպրիվացիա չունեցողների հետ համեմատության մեջ:

Հիմնաբառեր՝ *ծնողական դեպրիվացիա, կենսա-իմաստային կողմնորոշումներ, կյանքի իմաստ, կյանքի նպատակներ, կյանքի ընթացք, կյանքի արդյունք, վերահսկման լոկուս:*

ВЗАИМОСВЯЗЬ СМЫСЛОЖИЗНЕННЫХ ОРИЕНТАЦИЙ И САМООЦЕНКИ У ЛЮДЕЙ С РОДИТЕЛЬСКОЙ ДЕПРИВАЦИЕЙ

СИЛЬВИ ТАРДЖУМАНЯН
аспирант кафедры общей психологии факультета философии и психологии Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

В статье рассматриваются результаты исследования явления взаимосвязи смысложизненных ориентаций и уровня самооценки у людей с родительской депривацией. Считается, что люди, пережившие родительскую депривацию в детстве, имеют низкую самооценку и множество проблем с наличием жизненных целей, выбора и суждений о смыслах. Мы предприняли исследование, чтобы изучить эту проблему. Целью исследования было определение связи между смыслом жизни и самооценкой у депривированных людей. В данной статье основное внимание будет уделено анализу нескольких экспериментальных данных, которые позволят выявить особенности смысложизненных ориентаций и самооценки. Одна из них, например, такова: чем адекватнее самооценка человека, тем более выражены его цели, тем сильнее отношение к полученным в жизни результатам, тем выше заинтересованность и эмоциональная удовлетворенность жизнью, эффективность или удовлетворенность самореализацией.

В статье излагаются выводы и итоги исследования. Основной вывод заключается в том, что, несмотря на то, что родительская депривация являлась источником трудностей, лишений, неудовлетворенности жизнью людей, переживших ее в детстве, в плане формирования смысла жизни и адекватной самооценки, картина почти такая же по сравнению с теми, у кого нет таковой депривации.

Ключевые слова: *родительская депривация, смысложизненные ориентации, смысл жизни, цели жизни, процесс жизни, результат жизни, локус контроля.*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

ՀՏԴ 330.3 *10.52063/25792652-2022.3.14-191*

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի
հանրակրթության վարչության պետ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
Suren-avetisyan@mail.ru

ՎԱՐԴՈՒՇ ԳՅՈԶԱԼՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
vardushgyozalyan@ysu.am

Հոդվածի շրջանակում իրականացված վերլուծության նպատակն է վեր հանել ՀՀ տնտեսությունում մարդկային զարգացման հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են կրթական գործոններով: Ուսումնասիրության շրջանակում խնդիր է դրվել ներկայացնել մարդկային զարգացման հայեցակարգում կրթական բաղադրիչի տեղն ու կարևորությունը, Մարդկային զարգացման համաշխարհային զեկույցների մեթոդաբանության հիման վրա իրականացված վիճակագրական վերլուծության միջոցով վեր հանել ՀՀ-ում մարդկային զարգացման կրթական ցուցիչների շարժն ու աճի միտումները, դրանցով պայմանավորված խնդիրները:

Հետազոտության արդյունքներով պարզ է դարձել, որ ՀՀ-ում կրթական գործընթացում բնակչության ներգրավվածության հիմնական քանակական ցուցիչները՝ կրթության սպասվող տևողությունն ու միջին տևողությունը, թեև տարածաշրջանում զիջում են Վրաստանի նույն ցուցանիշներին, սակայն բավարար մակարդակում են և դրսևորում են կայունացման միտում: Այդուամենայնիվ, բուհական կրթության գրավչության նվազման նախանշանները, այլ հավասար պայմաններում առաջիկայում դրանց վրա կարող են իրենց բացասական ազդեցությունն ունենալ:

Մարդկային զարգացման համատեքստում առավել խնդրահարույց են հանրակրթության որակական ցուցանիշները՝ հատկապես սովորողների առաջադիմության արդյունքները հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից:

* Հոդվածը ներկայացվել է 12.10.2022թ., գրախոսվել՝ 24.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Մտահոգիչ է ուսուցման վերջնարդյունքի գնահատման ուսուցիչների մոտեցումը, որը փաստում է աշակերտներին արհեստականորեն բարձր գնահատելու հակվածության մասին, ինչն առաջին հերթին արդյունք է ուսուցիչների անբավարար մոտիվացիայի՝ պայմանավորված առավելապես ցածր աշխատավարձով:

Հիմնաբառեր՝ *մարդկային զարգացում, մարդկային զարգացման համաթիվ, կրթության սպասվող տևողություն, կրթության միջին տևողություն, կրթության որակ, կրթության վերջնարդյունք, սովորողների առաջադիմություն:*

Նախաբան

Քսանմեկերորդ դարի երրորդ տասնամյակի նախաշեմին, երբ աշխարհում մոլեգնող համավարակի պայմաններում Հայաստանին պատուհասեց նաև պատերազմը՝ իր անդառնալի հետևանքներով, տարբեր հարթակներում սկսեց ակտիվորեն շրջանառվել այն խոսույթը, որ մեր բոլոր «դժբախտությունների պատճառը» կրթության ոլորտի քաղաքականության ձախողումներն են ու տարիներ ի վեր կրթության որակի շարունակական անկումը:

Անշուշտ, ցանկացած մակրոհիրավիճակ չի կարող պայմանավորված լինել միայն մեկ գործոնի ազդեցությամբ, այդուամենայնիվ, վիճակագրական տվյալները փաստում են կրթության ոլորտում առկա բազմաշերտ ու բազմապիսի խնդիրների մասին:

Համաձայն ՀՀ ՎԿ հրապարակման՝ 2022թ. հունիս ամսվա տվյալներով՝ տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է 235195 դր., իսկ ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների՝ այն ամենացածրերից է հենց կրթության ոլորտում՝ 135211դր., որը բարձր է միայն կացության և հանրային սննդի կազմակերպման (114344 դր.) ու սպասարկման այլ ծառայությունների (131420 դր.) ոլորտների միջին աշխատավարձերից: Գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտի միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 197090դր., երբ օրինակ՝ շինարարության ոլորտում այն կազմել է 228263 դր. («Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը…» 65): Որևէ որակավորում չունեցող բանվորի միջին օրական եկամուտը կարճաժամկետ հատվածում շատ դեպքերում կարող է գերազանցել ուսուցչի և գիտաշխատողի միջին օրական եկամտին: Այսպիսի իրավիճակը ոչ միայն որոշակի վերաբերմունք է ձևավորում կրթության ու գիտության, այդ ոլորտների առանձին մասնագիտությունների նկատմամբ, այլև ազդում է բուհական կրթության գրավչության վրա:

Մասնավորապես, 2022-2023 ուստարվա համար բուհերին հատկացված ընդհանուր 22000 տեղից թափուր է մնացել 14158 տեղ: Թափուր տեղերը հիմնականում ոչ պետական և մարզային բուհերում են, որոնց հատկացված ընդհանուր 7500 տեղից համալրվել է միայն 131-ը («2022-2023 ուստարվա բուհերի ընդունելության արդյունքներ…»): Գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալներով՝ նախորդ տարվա համեմատ թեև դիմորդների ընդհանուր թիվն աճել է, սակայն բարձր է միասնական քննություններից «կտրվածների» թիվը՝ 3076 («3076 հոգի «կտրվել» է միասնական քննություններից…»), որը կազմում է միասնական քննություններին մասնակցածների թվի շուրջ 26.5%-ը:

Ցայտուն են դրսևորվում տարբեր մասնագիտությունների գծով բուհական կրթության առաջարկի ու պահանջարկի անհամամասնությունները: Մտահոգիչ է հատկապես այն վիճակագրությունը, որ շուկայում բարձր պահանջարկ ունեցող որոշ մասնագիտություններ, ինչպիսիք են՝ քիմիան, աշխարհագրությունը, երկրաբանությունը, քիմիական տեխնոլոգիաները, դիմորդների շրջանում գրավիչ չեն: Ըստ տնտեսության կարիքների վերհանման հիմքով Էկոնոմիկայի և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարություններում իրականացված վերլուծության՝

շուկայում բարձր է, օրինակ, ագրարային ոլորտի մասնագետների պահանջարկը, մինչդեռ բոլոր մասնագիտությունների գծով Ագրարային համալսարան ընդունվել է ընդամենը 40 դիմորդ («2022-2023 ուստարվա բուհերի ընդունելության արդյունքներ…»):

Դիմորդները սակավաթիվ են նաև Մանկավարժական համալսարանում: Օրինակ՝ ֆիզիկա մասնագիտությամբ 2022թ. Մանկավարժական համալսարան է ընդունվել ընդամենը մեկ դիմորդ: Աշխատաշուկայում բարձր է գրադարանային տեղեկատվական աղբյուրներ, սուրդոմանկավարժություն, մշակութաբանություն մասնագիտությունների պահանջարկը, սակայն այդ ֆակուլտետներում ևս թափուր տեղերի թիվը մեծ է:

Աշխատաշուկայի իրավիճակի և բուհական կրթության համալրման մտահոգիչ պատկերի համատեքստում կարևոր է հասկանալ ՀՀ մարդկային ներուժի զարգացման ընդհանուր միտումներում կրթական բաղադրիչով պայմանավորված տեղաշարժերը և վեր հանել դրանցից բխող խնդիրները:

Կրթական բաղադրիչի տեղն ու դերը մարդկային զարգացման հայեցակարգում

Մարդկային զարգացման հայեցակարգը ՄԱԿ-ի կողմից որդեգրված մոտեցում է, որի հիմքում ընկած է 1990թ.-ից կիրառվող մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ)[1] (Human Development Index (HDI))՝ որպես կյանքի որակի միջազգային չափանիշ և թողարկման ու սպառման քանակական ցուցանիշների այլընտրանք: Այլ կերպ ասած՝ մարդկային զարգացման կողմնորոշիչ է հանդիսանում ոչ միայն կենսամակարդակը, որն արտահայտում է ապրանքների և ծառայությունների ֆիզիկական սպառման ծավալներն ու կառուցվածքը, այլ կյանքի որակը, որն ավելի ընդգրկուն հասկացություն է և ներառում է հասարակության անդամների զարգացման, պահանջմունքների ու շահերի համալիր բավարարվածության մակարդակը (Գյոզալյան 50):

Մարդկային զարգացման համաթիվը հանդիսանում է պետական սոցիալական քաղաքականության առաջնահերթությունների սահմանման առանցքային չափորոշիչ՝ հնարավորություն տալով վեր հանել ՀՆԱ-ի նմանատիպ ցուցանիշներ ունեցող երկրների միջև մարդկային զարգացման տարբեր մակարդակների պատճառները:

Մարդկային զարգացման հայեցակարգի շրջանակում, որպես կյանքի որակի երեք հիմնական ուղղություններ, դիտվում են երկարատև և առողջ կյանքի ապահովումը, գիտելիքի կուտակումը և արժանապատիվ կենսամակարդակը: Ուղղություններից յուրաքանչյուրն իր հերթին արտահայտվում է համապատասխան ցուցիչներով (գծանկար 1):

Համաձայն ՄԶՀ հաշվարկման մեթոդաբանության՝ գիտելիքի կուտակման հիմնական ցուցիչ են հանդիսանում կրթության սպասվող տևողությունն[2] (Expected Years of Schooling) ու կրթության փաստացի միջին տևողությունը (Mean Years of Schooling): Այս դեպքում խոսքը գնում է ֆորմալ կրթության մասին, որը ներառում է

[1] Մարդկային զարգացման համաթիվն իրենից ներկայացնում է կյանքի սպասվող տևողության, կրթության և մեկ շնչին ընկնող համախառն եկամտի՝ հաշվարկված առանձին ինդեքսների միջին թվաբանականը: Եթե համաթիվը գտնվում է 0.8 - 1 միջակայքում, ապա երկիրը աչքի է ընկնում կյանքի շատ բարձր որակով, 0.7-0.8 միջակայքի դեպքում՝ կյանքի բարձր որակով, 0.55 -0.7 միջակայքի դեպքում՝ կյանքի որակը գտնվում է միջին մակարդակում և եթե համաթիվը փոքր է 0.55-ից, ապա երկիրն առանձնանում է կյանքի ցածր որակով և լուրջ անելիքներ ունի մարդկային ներուժի զարգացման ուղղությամբ:

[2] Տարիների թիվը, որը սպասվում է, որ դպրոցական տարիքի հասած երեխան կանցկացնի ֆորմալ կրթության գործընթացում, եթե նրա կյանքի ընթացքում պահպանվեն կրթության մեջ բնակչության ներգրավվածության ընթացիկ միտումները:

դպրոցական տարիներից մինչև բուհական կրթության ավարտն ընկած ժամանակահատվածը: Որպես կրթությանն ուղղվող տարիների միջին ցուցանիշի առավելագույն շեմ ընդունվում է 15 տարին, իսկ սպասվող տարիների առավելագույն շեմ՝ 18 տարին, որը համարժեք է մագիստրոսի որակավորում ստանալու համար անհրաժեշտ ժամանակահատվածին: Կրթության սպասվող տևողության և փաստացի միջին տևողության ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է կրթության համաթիվը (“Human Development Report 2001” 240), որը մարդկային զարգացման համաթվի առանցքային բաղադրիչ է:



Գծանկար 1. Մարդկային զարգացման համաթվի կառուցվածքը[1]

Մարդկային զարգացման համատեքստում կրթական գործոնի դերի և կարևորության հիմնավորման վերաբերյալ առկա հետազոտությունների արդյունքները փաստում են, որ հատկապես հանրակրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի աճը ուղղակի դրական ազդեցություն է ունենում աշակերտների առաջադիմության և կրթությունը շարունակելու որոշման վրա, և գոյություն ունի դրական կորելիացիոն կապ այդ ծախսերի աճի և աշխատաշուկայի ցուցանիշների բարելավման միջև (Jackson, C. et al., Hyman, J., Lafortune, J. et al.): Կրթությանն ուղղված լրացուցիչ տարիների և եկամտի մեծության միջև կապը ևս տնտեսագիտության մեջ ամենափաստարկվածներից է: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթությանն ուղղվող լրացուցիչ տարիները դրական ազդեցություն են ունենում նաև մեծահասակների մահացության ցուցանիշի կրճատման (Buckles, et al.), անազատության ցուցանիշի կրճատման (Lochner, L., and Moretti, E.), ինչպես նաև քաղաքացիական ակտիվության աճի վրա (Milligan, K. et al.): Իսկ մոր կրթական մակարդակն անմիջական ազդեցություն ունի նորածնի առողջության վրա (Currie, J., and Moretti, E.):

ՀՀ մարդկային զարգացման ցուցիչների շարժը և միտումները

Ուսումնասիրելով ՀՀ-ում ՄԶՀ-ի և դրա բաղադրիչների շարժը՝ ստանում ենք հետևյալ պատկերը (տե՛ս Գծանկար 2 և Աղյուսակ 1):

Դիտարկվող տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանը ներառվում է կյանքի բարձր որակ ունեցող երկրների շարքում: Ավանդաբար մարդկային զարգացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում առանձնանում են Սկանդինավյան երկրները, Շվեյցարիան, Իսլանդիան, Հոնկոնգը, Իռլանդիան, Ավստրալիան: Մարդկային զարգացման 2021-2022թթ զեկույցի տվյալներով՝ ՄԶՀ

[1] Գծանկարը կազմվել է՝ ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մեթոդաբանության (https://hdr.undp.org/data-center/human-development-index#/indicies/HDI)

ամենաբարձր ցուցանիշները գրանցել են Շվեյցարիան (0.962), Նորվեգիան (0.961) և Իսլանդիան (0.959) (“Human development Report 2021/22” 272):



Գծանկար 2. ՀՀ մարդկային զարգացման համաթվի շարժը[1]

Աղյուսակ 1.

ՀՀ Մարդկային զարգացման ցուցիչների շարժը[2]

	1990	1995	2000	2005	2010	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Մարդկային զարգացման համաթիվ	0.656	0.627	0.662	0.707	0.746	0.766	0.765	0.768	0.771	0.778	0.757	0.759
Զբաղեցրած հորիզոնականը	-	-	-	80	86	84	84	83	81	81	87	85
Կյանքի սպասվող տևողություն (տարի)	68.8	69.3	70.6	71.8	73.2	74.4	74.7	74.9	75.1	75.4	72.2	72
Կրթության սպասվող տևողություն (տարի)	10.9	10.4	11.2	11.4	13.1	13	13	13	13.1	13.1	13.1	13.1
Կրթության միջին տևողություն (տարի)	9.8	10.1	10.5	10.8	11.1	11.6	11.4	11.2	11.2	11.3	11.3	11.3
Մեկ շնչին ընկնող ՀԱԵ (դոլար)*	5210	3098	4178	7747	9745	11774	11570	12541	12934	13848	12454	13158

**Ցուցանիշը հաշվարկված է՝ ըստ 2017թ. գնողունակության պարիտետի:*

[1] Գծապատկերը կազմվել է՝ ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տվյալների շտեմարանի, https://hdr.undp.org/data-center/human-development-index#/indicies/HDI

[2] Գծապատկերը կազմվել է՝ ըստ համապատասխան տարիների Մարդկային զարգացման համաշխարհային զեկույցների (Human Development Report) տվյալների և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տվյալների շտեմարանի:

ՀՀ ՄԶՀ-ը 1995թ.-ից դրսևորել է կայուն աճի միտում: Նվազում է դիտվել 2020թ., որ առավելապես պայմանավորված է եղել տնտեսական անկման հետևանքով մեկ շնչին ընկնող ՀԱԵ նվազմամբ, ինչպես նաև կյանքի սպասվող տևողության ցուցանիշի նվազումով: 2021թ. աճի միտումը վերականգնվել է, սակայն 2019թ. համեմատ դիրքային փոփոխությունը հետընթաց է արձանագրել 4 հորիզոնականով: Կյանքի սպասվող տևողության և մեկ շնչին ընկնող ՀԱԵ-ի պատմական ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 2019թ., առաջինը՝ պայմանավորված 2018թ. քաղաքական իրադարձություններից հետո հասարակության շրջանում գեներացված բարձր դրական սպասումներով, երկրորդը՝ տնտեսական ակտիվության աճով:

Ինչ վերաբերում է կրթության ցուցանիշներին, ապա 1990-ականների համեմատ 2000-ականների ցուցանիշների աճը հետևանք է ոչ թե բնականոն գործընթացների, այլ 12-ամյա միջնակարգ կրթության և եռաստիճան բուհական համակարգի ներդրման: Կրթության սպասվող տևողության շարժը 2010թ.-ից կայուն է և գտնվում է 13-13.1 միջակայքում: Կրթության միջին տևողության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2015թ.՝ 11.6 տարի, որը 2018թ.-ից կայունացել է 11.3 տարվա տիրույթում:

Այսպիսով՝ փաստենք, որ համավարակն ու պատերազմական իրողությունները ՀՀ-ում մարդկային զարգացման համատեքստում ազդեցություն են ունեցել գերազանցապես ոչ կրթական ցուցիչների վրա, իսկ վերջիններս դրսևորում են կայուն միտում:

2021թ., ըստ Մարդկային զարգացման համաշխարհային զեկույցի, կրթության միջին տևողության բարձր ցուցանիշով աչքի են ընկել Գերմանիան (14.1), Շվեյցարիան (13.9), Իսլանդիան (13.8), ԱՄՆ-ը (13.7), ինչպես նաև Իսրայելը (13.3): Տարածաշրջանի երկրներից Ադրբեջանում (ՄԶՀ՝ 0.745, զբաղեցրած տեղը՝ 91) կրթության սպասվող տևողությունը 13.5 տարի է, միջին տևողությունը՝ 10.5 տարի: Վրաստանի (ՄԶՀ՝ 0.802, զբաղեցրած տեղը՝ 63) նույն ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 15.6 տարի և 12.8 տարի, ինչը վկայում է այն մասին, որ Հարավային Կովկասում կրթական գործընթացներում բնակչության ներգրավվածության առավել բարենպաստ իրավիճակով առանձնանում է հենց Վրաստանը:

Ակնհայտ է, որ և՛ կրթության սպասվող տևողությունը, և՛ միջին տևողությունը քանակական ցուցանիշներ են և առավելապես պատկերացում են տալիս կրթական գործընթացում բնակչության ներգրավվածության մասին, ինչը խիստ կարևոր է, սակայն չի ներառում կրթության որակական ասպեկտը: Այդ իսկ պատճառով պատկերն ամբողջական չի կարող լինել առանց կրթության որակական տարրով պայմանավորված խնդիրների դիտարկման:

Կրթության որակով պայմանավորված խնդիրները

Կրթության որակը բարդ և համընդգրկուն հասկացություն է, որը կապված է կրթության չափելի վերջնարդյունքի սահմանման և վերհանման հետ: Գոյություն ունեն կրթության որակի սահմանման և գնահատման բազմապիսի մոտեցումներ, որոնք տարբերվում են՝ կախված երկրից, օրենսդրությունից, սոցիալական նորմերից և այլն, սակայն հիմնականում տարբեր երկրներում կրթության որակի չափման մեխանիզմները համապատասխանեցված են ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը:

2020թ. Մարդկային զարգացման համաշխարհային զեկույցում ի թիվս մարդկային զարգացման որակական ցուցիչների՝ ներկայացված են կթության որակի 2010-2019թթ. միջին ցուցանիշները՝ ըստ երկրների (“Human Development Report 2020” 369-373): Որպես կրթության որակի գնահատման չափանիշներ՝ ընդունվել են տարրական դպրոցում 1 ուսուցչին ընկնող աշակերտների միջին թիվը, տարրական դպրոցի՝ վերապատրաստում անցած ուսուցիչների տեսակարար կշիռը, տարրական ու միջնակարգ դպրոցներում ինտերնետի հասանելիության մակարդակը, PISA

(Programme for International Student Assessment) ծրագրի[1] արդյունքները՝ ըստ տեքստային աշխատանքի, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների: ՀՀ-ում 2010-2019թթ. տարրական դպրոցում 1 ուսուցչին բաժին է ընկել միջինում 15 աշակերտ, որը համարժեք է այնպիսի երկրների ցուցանիշին, ինչպիսիք են, օրինակ, Սինգապուրը և Միացյալ Թագավորությունը: Ադրբեջանում ցուցանիշը ևս 15 է, Վրաստանում՝ 9 (“Human Development Report 2020” 369-373):

ՀՀ-ում տարրական դպրոցի՝ վերապատրաստում անցած ուսուցիչների միջին կշռի ցուցանիշը ներկայացված չէ: Այդուամենայնիվ, նշենք, որ ՀՀ-ում ուսուցիչների վերապատրաստման նոր համակարգի (երբ վերապատրաստման քաղաքականությունը մշակում է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնը, իսկ վերապատրաստումներն իրականացնում են հավաստագրված մասնավոր կազմակերպությունները) և դրանից ակնկալվող արդյունքերի վերաբերյալ փորձագիտական կարծիքները միանշանակ չեն: Ռիսկեր կարող են առաջանալ մասնավորապես տարբեր կազմակերպություններում լավագույն վերապատրաստող կադրերի ցրման, ինչպես նաև վերապատրաստող կազմակերպությունների՝ գործունեության տարբեր այլ ոլորտներում ներգրավված լինելու հետ կապված (Խաչատրյան): Նշենք սակայն, որ ՀՀ ուսուցիչների որակական կազմի վրա ազդող հիմնական գործոնը շարունակում է մնալ ցածր աշխատավարձը, որի արդյունքում սովորողների շրջանում խիստ ցածր է մանկավարժական մասնագիտությունների գրավչությունը, և դպրոցներից հոսքը դեպի մանկավարժական բուհեր ապահովվում է հիմնականում ի հաշիվ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների:

Ինտերնետի հասանելիության ցուցանիշը տարրական և միջնակարգ դպոցում 100% է (“Human Development Report 2020” 370): Ինչ վերաբերում է PISA արդյունքներին, ապա դրանք ներկայացված են միայն ՏՀԶԿ երկրների համար, որտեղ ծրագիրը կիրառվում է:



Գծանկար 3. Հայոց լեզու առարկայից թելադրության գնահատականների արդյունքներն (%)՝ ըստ դասարանների[2]

[1] Սովորողների կրթական արդյունքների որակական գնահատման միջազգայնորեն ճանաչված մոնիթորինգային ծրագիր է, որը իրականացվում է ՏՀԶԿ անդամ երկրներում, եռամյա պարբերականությամբ, սկսած 2000թ.-ից: Ծրագրի նպատակն է պատասխանել հետևյալ հարցին. Որքանով են պարտադիր հանրակրթություն ստացող 15 տարեկան սովորողները տիրապետում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում տարաբնույթ խնդիրների լուծման, շփման և սոցիալական հարաբերություններում անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների:

[2] Գծանկարը կազմվել է՝ ըստ ՀՀ Կրթության տեսչական մարմնի՝ «Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների վերաբերյալ համեմատական վերլուծություն» հաշվետվության տվյալների:

ՀՀ-ում առանձին առարկաների շրջանակում ՀՀ Կրթության տեսչական մարմնի կողմից իրականացվում է աշակերտների առաջադիմության գնահատում, որի արդյունքները ձևավորել են բավականին մտահոգիչ պատկեր: Այսպես՝ 2020թ. առաջին եռամսյակում 7-11-րդ դասարաններում մնացորդային գիտելիքի ստուգման նպատակով Շիրակի, Արմավիրի, Կոտայքի մարզերի և Երևանի թվով 9 ընտրանքային հանրակրթական հաստատություններում մաթեմատիկա և հայոց լեզու առարկաներից հանձնարարվել են գրավոր աշխատանքներ՝ նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան:

Ըստ առարկաների՝ ստացված գնահատականների տոկոսային պատկերը արտահայտված է Գծանկար 3-ում և Գծանկար 4-ում:



Գծանկար 4. Մաթեմատիկա առարկայից գրավոր աշխատանքի գնահատականների արդյունքներն (%)՝ ըստ դասարանների[1]

Գծանկարների տվյալներից պարզ է դառնում, որ երկու առարկաներից էլ բոլոր դիտարկված դասարաններում մեծ տեսակարար կշիռ ունեն «անբավարար» (1-3) գնահատականները: Ընդ որում, հայոց լեզվի դեպքում «անբավարար» գնահատականների տեսակարար կշիռն աճում է դասարանի բարձրացմանը զուգընթաց՝ 11-րդ դասարանում հասնելով 49%-ի: Մաթեմատիկա առարկայից բոլոր դասարաններում ամենամեծ տեսակարար կշիռ ունի «անբավարար» գնահատականը, մասնավորապես 10-րդ դասարանում այն կազմել է 65 %: Հայոց լեզվից միջին գնահատականը 5 է, մաթեմատիկացից՝ 4:

9-րդ դասարանում, որտեղ աշակերտի տարիքը համարժեք է PISA ծրագրում ներգրավվող աշակերտների տարիքին (15 տ.), հայոց լեզվից «անբավարար» գնահատականների տեսակարար կշիռը 34% է, մաթեմատիկայից՝ 43%:

Համադրելով սովորողների գրավոր աշխատանքների արդյունքները նույն առարկայից նախորդ տարվա ամփոփիչ գրավոր աշխատանիքի արդյունքների հետ («Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման…2021» 4-7)՝ պարզ է դարձել, որ հայոց լեզու առարկայից նախորդ տարի ամփոփիչ գրավոր աշխատանքից «անբավարար» են ստացել սովորողների ընդամենը 5%-ը, մինչդեռ տրված թելադրությունից՝ 35 %-ը: Նմանատիպ պատկեր է նաև մաթեմատիկայի դեպքում: Նախորդ տարի ամփոփիչ գրավոր աշխատանքից «անբավարար» են ստացել

[1] Գծանկարը կազմվել է ըստ ՀՀ Կրթության տեսչական մարմնի՝ «Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների վերաբերյալ համեմատական վերլուծություն» հաշվետվության տվյալների:

սովորողների 56%-ը, տրված գրավոր աշխատանքից՝ 47 %-ը: Հատկանշական է, որ պատկերը փոխվում է «գերազանց» (9-10) գնահատականի դեպքում: Մաթեմատիկայի ամփոփիչ գրավորից «գերազանց» են գնահատվել 12%-ը, տրված աշխատանքից՝ ընդամենը 5%-ը, հայոց լեզվի դեպքում արդյունքները համապատասխանաբար 14% և 11% են: Տվյալները վկայում են այն մասին, որ հանրակրթական դպրոցներում ձևավորված սոցիոմշակութային միջավայրի պայմաններում ուսուցիչները հակված են գնահատականներ շռայլել (հատկապես ցածր առաջադիմությամբ սովորողներին), ինչն աղավաղում է առաջադիմության իրական պատկերը:

Այսպիսով՝ փաստենք, որ երկու առարկաների դեպքում էլ մնացորդային գիտելիքի արդյունքները խնդրահարույց են, և կարիք կա ուսուցման որակը բարձրացնելու խիստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով, որ գնահատված որոշ դպրոցներում գրավոր աշխատանքների միջին ցուցանիշը ստացվել է 4-ից՝ պարտադիր
նվազագույնից էլ ցածր («Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման…2021» 4-7): Այսպիսի պատկերն արտացոլվում է բուհական միասնական ընդունելության քննությունների նվազագույն շեմը չհաղթահարածների բարձր տեսակարար կշռի վրա:

Նշենք նաև, որ դիտարկված դպրոցներում իրականացվել է նաև հարցման միջոցով աշակերտների կողմից ուսուցիչների գնահատում, որտեղ հարցերը դասակարգվել են այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են՝ դասի ընթացքը, նյութի մատուցումը, աշակերտներին խրախուսելը, ուսուցիչ-աշակերտ կապը, դասարանի կառավարումը և այլն: Տվյալների վերլուծությունից պարզվել է, որ դպրոցներում առկա է բարենպաստ միջավայր կրթական ու դաստիարակչական գործընթացը արդյունավետ իրականացնելու համար: Մասնավորապես, ըստ սովորողների մեծամասնության պատասխանների՝ ուսուցիչները նյութը մատուցում են այնպես, որ աշակերտները յուրացնեն այն և կարողանան ինքնուրույն աշխատել, սովորողներին ներգրավում են դասապրոցեսում, գնահատում նրանց կարողություններին համապատասխան («Սովորողների կողմից ուսուցիչների գործունեության գնահատման…» 2): Ստացվում է հակասական պատկեր. բարենպաստ կրթական միջավայրում «անբավարար» գնահատականների խիստ բարձր տեսակարար կշիռ: Կարծում ենք, այս դեպքում ևս գնահատումն օբյեկտիվ չէ, քանի որ աշակերտները հակված են բոլոր չափանիշներով բարձր գնահատել այն ուսուցիչներին, որոնք բարձր են գնահատել իրենց: Ստացվում է փակ շրջան, որը քողարկում է կրթության իրական որակական պատկերը:

Մաթեմատիկա առարկայից 2021 թ. գրավոր աշխատանք է հանձնարարվել նաև Վայոց Ձորի, Սյունիքի, Արմավիրի, Շիրակի, Արարատի, Լոռու մարզերի թվով 16 դպրոցներում: Արդյունքները նախորդ տարվանից շատ չեն տարբերվում: 1185 սովորողներից անբավարար են ստացել 568-ը (48%): Գրավոր աշխատանքների միջին գնահատականը կազմել է 4.2 («Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման…2022» 7):

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ՀՀ-ում մարդկային զարգացման՝ կրթության որակի ցուցիչներից ամենախնդրահարույցը սովորողների առաջադիմությունն է, որի ցածր ցուցանիշի վրա կրթական ծրագրերով նախատեսված նյութի բարդությունից և այլ գործոններից զատ, մեծ ազդեցություն ունի գնահատման օբյեկտիվության ցածր մակարդակը, ինչն իր հերթին արդյունք է մասնավորապես ուսուցիչների նյութական և ոչ նյութական մոտիվացիայի ոչ բավարար մակարդակի:

Նույնիսկ նորագույն տեխնոլոգիաներով գերհագեցված միջավայրում կազմակերպվող և ամենաբարձր որակավորում ունեցող ուսուցիչների առկայությամբ կրթական գործընթացի վերջնարդյունքը չի կարող գոհացուցիչ լինել, եթե այդ վերջնարդյունքի չափումը օբյեկտիվ և միանշանակ չէ: Հետևապես, առաջին հերթին

խնդիր կա գնահատման մեխանիզմների ու մոտեցումների վերանայման, ինչպես նաև հասարակական կյանքում կրթության ոլորտի աշխատողների դերի վերաարժևորման:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ՀՀ-ում մարդկային զարգացման համաթվի կրթական ցուցիչները՝ կրթության սպասվող տևողությունն ու միջին տևողությունը, վերջին տարիներին ցուցաբերել են կայունացման միտում և էապես ազդեցություն չեն կրել սոցիալ-տնտեսական ցուցանիշների վայրիվերումներից: Այդուամենայնիվ, հասարակության շրջանում բուհական կրթության գրավչության նվազման նախանշաններն ազդակ են առ այն, որ այլ հավասար պայմաններում այդ ցուցանիշները տեսանելի ապագայում կարող են բացասական աճ ունենալ մարդկային զարգացման համաթվի վրա համապատասխան ազդեցությամբ:

Մարդկային զարգացման միտումներում կրթության որակական ցուցիչներից հատկապես մտահոգիչ են հանրակրթական համակարգում սովորողների առաջադիմության արդյունքները հենքային՝ հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից: ՀՀ ԿՏՄ ստուգիչ գրավորների արդյունքներով խիստ բարձր է «անբավարար» գնահատականի տեսակարար կշիռը, իսկ միջին գնահատականը գտնվում է «բավարարի» նվազագույն շեմի միջակայքում: Ստուգիչ գրավորների «անբավարար» գնահատականի տեսակարար կշիռը զգալիորեն գերազանցում է նախորդ տարվա ամփոփիչ գրավոր աշխատանքի արդյունքներով նույն ցուցանիշին, որը խոսում է ուսուցիչների կողմից բավարար գիտելիքներ չունեցող աշակերտներին ավելի բարձր գնահատելու և դրանով իսկ գնահատման միջին ցուցանիշն արհեստականորեն բարձրացնելու մասին, ինչը խաթարում է կրթության որակի իրական օբյեկտիվ պատկերը: Այսպիսի իրավիճակի վրա մեծ ազդեցություն ունի ուսուցիչների մոտիվացվածության ցածր մակարդակը՝ պայմանավորված, առաջին հերթին, ցածր աշխատավարձով և հասարակական կյանքում ուսուցչի դերի ու կարևորության թերարժևորմամբ: Հետևապես կրթության ոլորտի քաղաքականության թիրախում պետք է դիտարկել ուսուցիչների նյութական և ոչ նյութական մոտիվացվածության բարձրացման միջոցով մանկավարժական կրթության գրավչության խթանումը, ինչն իր հերթին միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածում անխուսափելիորեն կբերի հանրակրթության որակի, հետևաբար նաև՝ մարդկային զարգացման ցուցանիշների բարելավման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյոզալյան, Վարդուշ. *Տնտեսությունը և սոցիալական արդարությունը*, Էդիթ պրինտ, Երևան, 2022, 254 էջ:
2. Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների վերաբերյալ համեմատական վերլուծություն, ԿՏՄ, 2021, http://eib.am:
3. Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների վերաբերյալ համեմատական վերլուծություն, ԿՏՄ, 2022, http://eib.am:
4. Խաչատրյան, Սերոբ. «Ուսուցիչների վերապատրաստման մասին», *168 ժամ*, 15. մարտ, 2020, https://168.am/2020/03/15/1272982.html:
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվար–հուլիսին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2022:
6. Սովորողների կողմից ուսուցիչների գործունեության գնահատման արդյունքների վերլուծություն, ԿՏՄ, 2021, http://eib.am:
7. 2022-2023 ուստարվա բուհերի ընդունելության արդյունքներ. թվային տվյալներ. *Հետք*, 04. օգոստոս, 2022, https://www.hetq.am/hy/article/147085
8. 3076 հոգի «կտրվել» է միասնական քննություններից , Առավոտ, 25. Հուլիս, 2022, https://www.aravot.am/2022/07/25/1282023/

9. Buckles, K., A. Hagemann, O. Malamud, M. Morrill, and A. Wozniak. 2016. “The Effect of College on Health.” *Journal of Health Economics* 50, pp. 99–114.

10. Currie, J., and E. Moretti. 2003. “Mother’s Education and the Intergenerational Transmission of Human Capital: Evidence from College Openings and Longitudinal Data.” *Quarterly Journal of Economics 118*, pp. 1495–1532, https://academic.oup.com/qje/article/118/4/1495/1925120?login=true.

11. Human Development Report 2001, Making New Technologies Work for Human Development, UNDP, 2001, https://hdr.undp.org/system/files/documents//hdr2001enpdf.pdf

12. Human Development Report 2020, The Next Frontier, Human Development and Anthropocen, UNDP, https://hdr.undp.org/system/files/documents//hdr2020pdf.pdf

13. Human Development Repot 2021/22, Uncertain Times, Unsetteled Lives: Shaping our Future in a Transforming World, UNDP, 2022, https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2021-22pdf_1.pdf

14. Hyman, J. “Does Money Matter in the Long Run? Effects of School Spending on Educational Attainment.” *American Economic Journal*: Economic Policy 9, no.4, 2017. pp. 256–280. https://www.aeaweb.org/articles?id=10.1257/pol.20150249

15. Jackson, C., R. Johnson, and C. Persico. “The Effects of School Spending on Educational and Economic Outcomes: Evidence from School Finance Reforms.” *Quarterly Journal of Economics 131*, no. 1, 2016, pp. 157−218.

16. Lafortune, J., J. Rothstein, and D. Schanzenbach.. “School Finance Reform and the Distribution of Student Achievement.” *American Economic Journal: Applied Economics 10*, no. 2, 2018, pp.1−26, https://www.aeaweb.org/articles?id=10.1257/app.20160567.

17. Lochner, L., and E. Moretti. “The Effect of Education on Crime: Evidence from Prison Inmates, Arrests, and Self-Reports.” *American Economic Review 94*, no. 1, 2004, pp. 155−189. doi:10.1257/000282804322970751.

18. Milligan, K., E. Moretti, and P. Oreopoulos. “Does Education Improve Citizenship? Evidence from the United States and the United Kingdom.” *Journal of Public Economics 88*, 2004, pp.1667−1695.

WORKS CITED

1. Dprocneri krt'akan gorc'y'nt'aci voraki gnahatman ardyunqneri veraberyal hamematakan verluc'ut'yun, KTM , [Comparative Analysis of the Results of the Evaluation of the Quality of the Educational Process of Schools, Education Inspection Body, Yerevan] 2021. (In Armenian)

2. Dprocneri krt'akan gorc'y'nt'aci voraki gnahatman ardyunqneri veraberyal hamematakan verluc'ut'yun, KTM, [Comparative Analysis of the Results of the Evaluation of the Quality of the Educational Process of Schools, Education Inspection Body, Yerevan] 2022. (In Armenian)

3. Gyozalyan, Vardush. Tntesyt'uny' ev socialakan ardarut'yuny', Erevan, [The Economy and The Social Justice, Yerevan] 2022. (In Armenian)

4. Hayastani Hanrapetut'yan social-tntesakan vitchaky' 2022t'. hunvar–hunisin, teghekatvakan amsakan zekuyc [The Socio-economic Situation of the Republic of Armenia in January-June 2022, Informative Monthly Report, Yerevan] 2022. (In Armenian)

5. Khachatryan, Serob. «Usucichneri verapatrastman masin», ["About teacher training"], 2020. https://168.am/2020/03/15/1272982.html (In Armenian)

6. Sovoroghneri koghmic usucichneri gorc'uneut'yan gnahatman ardyunqneri verluc'ut'yun, KTM [Analysis of the Results of Evaluation of Teachers' Activities by Students, Education Inspection Body,Yerevan] 2021. (In Armenian)

7. 2022-2023 ustarva buheri y'ndunelut'yan ardyunqner. t'vayin tvyalner. [2022-2023 University Admission Results, Digital Data, Yerevan] 2022. https://www.hetq.am/hy/article/147085 (In Armenian)

8. 3076 hogi «ktrvel» e' miasnakan qnnut'unneric [3076 People Fail the Joint Exams] 2022. https://www.aravot.am/2022/07/25/1282023/ (In Armenian)

HUMAN DEVELOPMENT PROBLEMS IN RA CAUSED BY EDUCATIONAL COMPONENT

SUREN AVETISYAN
RA Education Inspection Body,
General Education Department, Head,
Ph.D. in History, Associate Professor
Yerevan, The Republic of Armenia

VARDUSH GYOZALYAN
Yerevan State University, Chair of Management and Business,
Ph.D. in Economics, Associate Professor
Yerevan, The Republic of Armenia

The purpose of the analysis carried out within the framework of the article is to identify the problems of human development in the Armenian economy caused by educational factors.

The objectives of the study are the follows: to show the place and importance of the educational component in the concept of human development, to study the dynamics and trends of growth of educational indicators of human development in the Republic of Armenia through statistical analysis carried out on the basis of the methodology of the World Human Development Reports, as well as to identify the problems caused by that indicators.

According to the results of the study, the main quantitative educational indicators of human development are expected years of schooling and mean years of schooling, showing the population involvement in educational process, inferior to analogous indicators of Georgia, but they are at a sufficient level and tend to stabilize. Nevertheless, signs of a decrease in the attractiveness of higher education, ceteris paribus, may have a negative impact on these indicators in the near future.

In the context of human development, the most problematic are the qualitative indicators of general education, especially the results of student achievement in the subjects of Armenian language and mathematics.

The approach of teachers to the assessment of the final result of education is especially alarming, which indicates a tendency towards overestimation of student grades, which is a consequence of the lack of motivation of teachers, primarily due to low wages.

Keywords: *Human Development, Human Development Index, Expected Years of Schooling, Average Years of Schooling, Quality of Education, Learning Outcomes, Student Achievement.*

ПРОБЛЕМЫ ЧЕЛОВЕЧЕСКОГО РАЗВИТИЯ В РА ОБУСЛОВЛЕННЫЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫМ СОСТАВЛЯЮЩИМ

СУРЕН АВЕТИСЯН
начальник управления общего образования инспекционного органа образования РА, кандидат исторических наук, доцент, г.Ереван, Республика Армения

ВАРДУШ ГЁЗАЛЯН
доцент кафедры управления и предпринимательства Ереванского государственного университета, кандидат экономических наук, доцент, г.Ереван, Республика Армения

Целью анализа, проведенного в рамках статьи, является выявление проблем человеческого развития в экономике РА, вызванные образовательными факторами. В рамках исследования были поставлены задачи: показать место и значение образовательного компонента в концепции человеческого развития, посредством статистического анализа, проведенного на основе методологии Всемирных отчетов о человеческом развитии, изучить динамику и тенденции роста образовательных показателей человеческого развития в РА, а так же выявить вызванные ими проблемы.

Результат исследования показали, что в РА основные количественные показатели вовлеченности населения в образовательный процесс – ожидаемая и средняя продолжительности обучения, хотя в регионе и уступают аналогичным показателям Грузии, но находятся на достаточном уровне и имеют тенденцию к стабилизации. Тем не менее, признаки снижения привлекательности вузовского образования, при прочих равных условиях, уже в ближайшее время могут оказать на них негативное влияние.

В контексте человеческого развития наиболее проблематичными являются качественные показатели общего образования, особенно результаты успеваемости учащихся по предметам «Армянский язык» и «Математика».

Особенно предвзятым представляетсяподход учителей к оценке конечного результата образования, что свидетельствует о тенденции к необъективному завышению оценок учащихся, что является следствием недостаточной мотивнрованности учителей, в первую очередь, из-за низкой заработной платы.

Ключевые слова: *человеческое развитие, индекс человеческого развития, ожидаемая продолжительность обучения, средняя продолжительность обучения, качество образования, конечный результат обучения, успеваемость учащихся.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԱՐՏԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

ՀՏԴ 338.2 *10.52063/25792652-2022.3.14-204*

ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐՇԱԿՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
qristine.arshakyan@ysu.am

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանում գործող ստարտափ-էկոհամակարգի ներկա վիճակն ըստ առանձին էկոհամակարգային բաղադրիչների, գնահատել էկոհամակարգի զարգացածության աստիճանը, ինչպես նաև վեր հանել այն էկոհամակարգային խնդիրները, որոնք խոչընդոտում են էկոհամակարգի հետագա զարգացմանը և թույլ չեն տալիս ստարտափ ընկերություններին ունենալ անհրաժեշտ աջակցություն էկոհամակարգի կողմից:

Աշխատանքի խնդիրն է էկոհամակարգի առանձին բաղադրիչների ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրները վերլուծել և դրա հիման վրա մշակել առաջարկություններ, որոնք կօգնեն հաղթահարել նշված խնդիրները և նպաստել հայկական ստարտափ էկոհամակարգի հետագա զարգացմանը:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ չնայած հայկական ստարտափ էկոհամակարգը կայուն շարունակական զարգացում է ապրում, էկոհամակարգում դեռևս առկա են զարգացման խոչընդոտներ և խնդիրներ, և ի հակակշիռ առաջատար ու զարգացած ստարտափ էկոհամակարգերի՝ այն, այնուամենայնիվ, թույլ է զարգացած: Բացահայտված խնդիրներն առավելապես առնչվում են ստարտափ ընկերությունների կողմից բարձր արժեքով արտադրանք ստեղծելուն, էկոհամակարգում ստարտափ-ձեռնարկատիրության մշակույթի ոչ բավարար չափով տարածվածությանը, բուհական ծրագրերի անհամապատասխանությանը և բարձր որակավորմամբ մասնագետների պակասին, ֆինանսավորմանը: Հոդվածում ներկայացվում են առաջարկություններ նշված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք կօգնեն բարձրացնել էկոհամակարգի արդյունավետությունը, մասնավորապես կխթանեն ստարտափ ձեռնարկատիրությունը երկրում, գիտահեն գաղափարների և դրանց հիման վրա ստեղծվող ստարտափ ընկերությունների ձևավորումը, կնպաստեն ստարտափ ընկերություններին հատկացվող ֆինանսավորման ավելացմանը և բարենպաստ միջավայր կստեղծեն ստարտափ ընկերությունների գործունեության համար:

Հիմնաբառեր՝ *ստարտափ էկոհամակարգ, ստարտափ ընկերություններ, ստարտափ ինկուբատորներ, աքսելերացիոն ծրագրեր, վենչուրային կապիտալի ներդրում, տնտեսական աճ, նորարարության խթանում:*

---

* Հոդվածը ներկայացվել է 12.08.2022թ., գրախոսվել՝ 07.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Ներածություն

Հաջողված ստարտափ ընկերություններ ունենալու համար կարևոր է զարգացած ստարտափ-էկոհամակարգի առկայությունը, որն օգնում է ստարտափ ընկերություններին հաղթահարել խոչընդոտները՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ խորհրդատվություն, մասնագիտական և ձեռնարկատիրական հմտությունների զարգացման հնարավորություններ, մատչելի ֆինանսավորում, աշխատանքային տարածքներ և համագործակցության հարթակներ ու միջոցառումներ: Զարգացած ստարտափ էկոհամակարգերը ոչ միայն խթանում են նորարարությունը, այլև նպաստում են ձեռներեցական մշակույթի տարածմանը, տաղանդների ներգրավմանն ու գիտելիքի փոխանակմանը:

Հայաստանում գործող ստարտափ-էկոհամակարգը զգալի աջակցություն է ցուցաբերում ստարտափ ընկերություններին՝ նպաստելով նրանց առաջխաղացմանն ու հաջող գործունեությանը, ինչի մասին վկայում են վերջին տարիներին հայկական ստարտափ-էկոհամակարգում գրանցված հաջողությունները, այդ թվում՝ տեղական նոր վենչուրային ֆոնդերի ստեղծումը, առաջին հայկական «միաեղջյուր»[1] ընկերության ի հայտ գալը, պետության կողմից աջակցող ծրագրերի իրականացումը և այլն:

Հայկական ստարտափ էկոհամակարգի դերը ստարտափ ընկերությունների զարգացման և խոչընդոտների հաղթահարման գործում վերլուծելու համար կարևոր է ուսումնասիրել էկոհամակարգի ներկա վիճակը և նրա առանձնահատկությունները, պարզել էկոհամակարգի զարգացածության աստիճանը, ինչպես նաև վեր հանել այն էկոհամակարգային խնդիրները, որոնք խոչընդոտում են էկոհամակարգի հետագա զարգացմանը և թույլ չեն տալիս ստարտափ ընկերություններին ունենալ անհրաժեշտ աջակցություն էկոհամակարգի կողմից:

Այդ նպատակով հոդվածում ուսումնասիրվում են ստարտափ-էկոհամակարգերի առանձին բաղադրիչները և դրանց ազդեցությունը ստարտափ-ընկերությունների գործունեության վրա: Գնահատվում է Հայաստանում գործող ստարտափ-էկոհամակարգի ներկա վիճակն ըստ առանձին էկոհամակարգային բաղադրիչների և ներկայացվում են զարգացման խոչընդոտները:

Հայաստանի ստարտափ էկոհամակարգը

Հայաստանում ստարտափ ընկերություններ սկսել են ստեղծվել դեռևս 2004թ.-ին, (Arzumanyan) երբ գոյություն չուներ հստակ ձևավորված ստարտափ էկոհամակարգ, պակասում էին համապատասխան ենթակառուցվածքները: Աջակցող կազմակերպությունների թիվը խիստ սահմանափակ էր (գործում էին միայն մեկ բիզնես-ինկուբատոր և երկու տեխնոպարկ), չկային աքսելերացիոն ծրագրեր, ներդրում կատարող վենչուրային կապիտալի հիմնադրամներ և բիզնես-հրեշտակների ցանցեր: Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում ստեղծված որոշ ստարտափ ընկերություններ կարողացան մուտք գործել միջազգային շուկաներ և հասնել հաջողության, ինչը սկիզբ դրեց Հայաստանում ստարտափ-էկոհամակարգի ձևավորմանը:

Էկոհամակարգն ավելի կայուն առաջընթաց սկսեց գրանցել, և ավելի մեծ թվով ստարտափ ընկերություններ սկսեցին ստեղծվել 2014 թվականից, երբ Հայաստանում բացվեց առաջին վենչուրային կապիտալի հիմնադրամը՝ «Գրանատուս Վենչուրսը»: Այդ ժամանակվանից հայկական ստարտափ էկոհամակարգն ավելի բուռն զարգացում ունեցավ, քանի որ վենչուրային հիմնադրամի բացմանը հաջորդեց տեխնոլոգիական կենտրոնների բացումը նաև Հայաստանի այլ մեծ քաղաքներում (Գյումրի,

[1] «Միաեղջյուր» են համարվում այն ստարտափ ընկերությունները, որոնց գնահատված արժեքը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը:

Վանաձոր)՝ խթանելով մարզային բնակչության ներգրավվածությունը տեխնոլոգիական ստարտափ ձեռնարկատիրության ոլորտում:

Զուգահեռաբար ձևավորվող բիզնես-հրեշտակների ցանցերը (BANA, AICA, STAN), տարբեր ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերը, մատչելի աշխատանքային տարածքներ առաջարկող ենթակառուցվածքների ցանցի ընդլայնումը, ինչպես նաև ավելի մեծածավալ միջոցառումների կազմակերպումը, որոնցում ներգրավված են միջազգային հեղինակություն ունեցող մենթորներ, խորհրդատուներ, ներդրողներ, նպաստեցին նրան, որ Հայաստանում ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը տարեցտարի աճեց (տե՛ս Գծապատկեր 1) և շարունակում է աճել, ինչը մի կողմից՝ արդյունք է էկոհամակարգի զարգացման ու բարենպաստ ազդեցության, մյուս կողմից՝ նպաստում է էկոհամակարգի զարգացմանն ու ընդլայնմանը:



Գծապատկեր 1. *ՀՀ-ում ստեղծված ստարտափ ընկերությունների թվի աճն ըստ տարիների, 2000-2021թթ. Աղբյուր՝ կազմվել է հեղինակի կողմից՝ ստարտափ-ընկերությունների թվի վերաբերյալ առանձին կայքերում առկա տեղեկությունների հիման վրա:*

Գծապատկեր 1-ում պատկերված է Հայաստանում ամեն տարի ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը՝ սկսած 2004 թվականից, որում երևում է, որ համեմատաբար ավելի մեծ թվով ստարտափ ընկերություններ սկսել են ձևավորվել 2017-2018 թվականներին, մինչդեռ 2020 թվականից նոր ստարտափ ընկերությունների ձևավորման տեմպը որոշ չափով նվազել է՝ կազմելով տարեկան մինչև 30 ընկերություն: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ըստ միջազգային ուսումնասիրությունների՝ ստարտափ ընկերությունների մոտ 90-95%-ը սովորաբար ձախողվում է (Carmen), կարելի է համարել, որ Հայաստանում տարեկան ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը այնքան էլ մեծ չէ ստարտափ էկոհամակարգի զարգացման համար:

Բացի այդ, Հայաստանում ներկայացված չեն վերազգային ընկերությունների մասնաճյուղեր, որոնք կնպաստեին երկրում ստարտափ ձեռներեցության զարգացմանը, հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանը: Որոշակի ակտիվություն է նկատվում 2022 թվականի առաջին կիսամյակում, քանի որ Հայաստանում մի քանի խոշոր միջազգային SS ընկերություններ հիմնեցին իրենց ներկայացուցչությունները, այդ թվում՝ Samsung-ի նորարարական կամպուսի

բացումը Դիլիջանում և այլ խոշոր նորարարական ու արդյունաբերական թաղամասերի հիմնումը Հայաստանի տարբեր մարզերում (Ինվեսթ ին Էյէմ):

Էկոհամակարգի կայացածության կարևոր գործոններ են նաև էկոհամակարգում «միաեղջյուր» ընկերությունների առկայությունը, ինչպես նաև հաջող ելքեր[1] գրանցած ընկերությունների առկայությունը: 2021 թվականի վերջին «Փիքսարթ» ընկերությունը, ներգրավելով 130 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, հատեց 1 մլրդ ԱՄՆ դոլար արժողության շեմը և դարձավ առաջին հայկական «միաեղջյուր» ստարտափ-ընկերությունը (Թոսունյան): Սա կարևոր իրադարձություն էր ստարտափ էկոհամակարգում, քանի որ ընկերության «միաեղջյուր» դառնալու հանգամանքը կարևորեց ու որոշակի ճանաչելիություն բերեց հայկական ստարտափ-էկոհամակարգին: Համեմատության համար նշենք, որ տարածաշրջանի երկրներից Վրաստանը, Իրանը և Ադրբեջանը դեռևս չունեն «միաեղջյուր» ընկերություններ, իսկ Թուրքիան 2021 թվականից ունի երկու միաեղջյուր ընկերություն (Թոսունյան): Ելքերի առումով Հայաստանը դեռևս չունի Հայաստանի կամ միջազգային ֆոնդային բորսաներում ցուցակված ստարտափ ընկերություններ, իսկ գնման և ձեռքբերման գործարքների մասին հրապարակված տեղեկություններ առկա չեն:

Չնայած որոշ հայկական ստարտափ ընկերությունների՝ միջազգայնորեն գրանցած լուրջ հաջողություններին, պետք է այնուամենայնիվ արձանագրել, որ գլոբալ լուծումներ մշակող և միջազգային շուկաներ մուտք գործած ստարտափ ընկերությունների թիվը խիստ փոքր է, ինչը չի նպաստում էկոհամակարգի առավել արագ և կայուն զարգացմանը:

Յուրաքանչյուր տարի ստարտափ էկոհամակարգերի զարգացվածության վարկանիշային գնահատում է իրականացնում «StartupBlink» ընկերությունը՝ կատարելով աշխարհի 100 երկրների և 1000 քաղաքների ստարտափ էկոհամակարգերի տվյալների վերլուծություն: Գնահատման համար հիմք է ընդունվում երեք կարևոր չափանիշ՝ ստարտափ էկոհամակարգի քանակական ցուցանիշը, թե քանի ստարտափ ընկերություն և աջակցող կազմակերպություն է գործում էկոհամակարգում, որակական ցուցանիշը՝ ինչպիսի արժեք են ստեղծում գործող կազմակերպություններն իրենց էկոհամակարգի համար, ինչպես նաև գնահատվում է առկա գործարար միջավայրի նպաստավորությունը ստարտափ ընկերությունների զարգացման համար: Ըստ «StartupBlink» ընկերության 2022թ. «Ստարտափ էկոհամակարգերի գլոբալ համաթվի» ցուցանիշների՝ Հայաստանը ստարտափ էկոհամակարգերի վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 60-րդ տեղը՝ բարելավելով իր դիրքերը 5 կետով նախորդ տարվա համեմատ (Global Startup Ecosystem Index 2022 217): Ըստ զեկույցի հեղինակների՝ Հայաստանի ստարտափ էկոհամակարգը լավագույնն է Կովկասում՝ իր գնահատականով կրկնապատիկ գերազանցելով Վրաստանին: Որպես Հայաստանի միակ գլխավոր ստարտափ կենտրոն դիտարկվում է դեռևս միայն Երևանը, որն իր հերթին կատարել է 38 հորիզոնականի ցատկ՝ առաջին անգամ մուտք գործելով աշխարհի 250 քաղաքների ցանկ և զբաղեցնելով 244-րդ տեղը 1000 քաղաքների ցանկում:

Ձեռներեցական մշակույթ. ստարտափ էկոհամակարգերի զարգացման և կայացման կարևոր գործոն է դիտվում *ձեռնարկատիրական մշակույթը* էկոհամակարգի ներսում: Չափազանց կարևոր է, որ ստարտափ ընկերությունների հիմնադիրները լինեն ձեռնարկատերեր կամ ունենան առնվազն ձեռնարկատիրական հմտություն կամ փորձ: Ըստ «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020թթ.»-ի հարցման արդյունքների՝ Հայաստանում ձեռնարկատիրական արժեհամակարգն ավելի նպաստավոր է, քան միջին

[1] «Ելք» այն իրավիճակն է, երբ ստարտափ ընկերությունը ցուցակվում է (առաջնային հրապարակային առաջարկ (անգլ. IPO)) և (կամ) վաճառվում է ներդրողներին կամ այլ ընկերության (գնման կամ միաձուլման գործարք):

ընկալումներն աշխարհում: Ըստ զեկույցի տվյալների՝ Հայաստանի բնակչության 87.2%-ը կարծում է, որ «բիզնես սկսելը ցանկալի կարիերա է» («Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020» 16): Չնայած հայերն իրենք իրենց համարում են նորարար (նորարար համարելու մտածելակերպով՝ 8-րդը 50-ից և 2-րդն Արևելյան Եվրոպայի 9 երկրից) («Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020» 18), սակայն հազվադեպ են բիզնես հնարավորություններ տեսնում (11-րդը 50-ից, որը աշխարհի մակարդակով միջինից ցածր է), իսկ հայերի նախաձեռնողականությունն ու տեսլականը զեկույցի 50 երկրների շարքում միջին մակարդակում են («Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020» 18): Հայ ձեռնարկատերերի շրջանում (ինչպես սկսնակ, այնպես էլ կայացած) բիզնես հիմնելու ամենատարածված շարժառիթն «ապրուստ վաստակելն է, որովհետև աշխատանք չկա», այսինքն՝ մարդիկ բիզնես են հիմնում կարիքից, ոչ թե հստակ նպատակից դրդված. «աշխարհում մի բան փոխելու»՝ հստակ նպատակի վրա հիմնված շարժառիթով Հայաստանն ամենացածր տեղերում է այլ երկրների համեմատ («Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020» 20), մինչդեռ ստարտափ ընկերությունները հիմնականում ստեղծվում են «աշխարհում մի բան փոխելու» նպատակի վրա հիմնված շարժառիթով:

Հայկական ստարտափ էկոհամակարգում չափազանց քիչ են նաև այն ձեռնարկատերերը, որոնք ունեն կամ ունեցել են հաջողված ստարտափ ընկերություններ և այժմ կարող են գործել էկոհամակարգում որպես «օրինակելի» դերակատարներ, ինչը նույնպես կարևոր է ստարտափ-ձեռներեցության մշակույթ ձևավորելու և հաջողության հասած ստարտափ ձեռնարկատերերի միջոցով ստարտափ ընկերությունների հիմնադիրներին ոգեշնչելու առումով: Այս բացը կարող է պայմանավորված լինել հիմնականում նրանով, որ ստարտափ էկոհամակարգը դեռևս զարգացման վաղ շրջանում է, և անհրաժեշտ է ժամանակ, մինչև հաջողության հասած և կայացած նման ընկերություններ ի հայտ գան (օրինակ՝ միջազգային շուկայում լուրջ հաջողություն գրանցած տարբեր ընկերություններ, մի քանի «միաեղջյուր» ընկերություն, հաջող ելքեր գրանցած ընկերություններ և այլն), որոնց հիմնադիրները կարող են դիտվել որպես «օրինակելի» հաջողակ ստարտափ-ձեռնարկատերեր: Ներկայումս նման ընկերությունների օրինակներ են, ի թիվս այլոց, «Փիքսարթ», «Սոլոլըրն», «Կրիսպ», «Հեքսաքթ» ընկերությունները:

Կրթական համակարգ, մասնագիտական ներուժ. ստարտափ էկոհամակարգի կարևորագույն ինստիտուցիոնալ բաղադրիչներից են բուհերն ու կրթական հաստատությունները, որոնք ապահովում են ստարտափ ընկերությունների մասնագիտական ներուժը: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգն ունի 27 պետական և 25 մասնավոր բուհ, որոնց մեծ մասը Երևանում է, որոշներն ունեն մասնաճյուղեր մարզերում): Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանը (ՀԱՊՀ) և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) ՏՀՏ ոլորտի տեխնիկական մասնագետների պատրաստման ամենախոշոր հաստատություններն են Հայաստանում: ՏՀՏ ոլորտում մասնագիտական կրթություն առաջարկող այլ հիմնական հաստատություններ են նաև Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան (ԵԿՏԱ), Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը (ՀՌՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ) և Հայաստանում Ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտը (ՀՖԲԻԻ): Հաշվի առնելով այն, որ ստարտափ ընկերությունների գերակշիռ մասը գործում է տեխնոլոգիական ոլորտում, մեծ է հենց տեխնիկական գծով, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և ճարտարագիտության մասնագիտացումներով մասնագետների կարիքը: Այս մասնագիտություններով սովորող ուսանողների թիվը 2020-2021 ուսումնական տարում կազմել է ընդհանուր 7719 ուսանող, որից 4770-ը սովորում են ՏՀՏ, իսկ 2949-ը՝ ճարտարագիտության մասնագիտացումներով

(Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021թ., «Կրթություն և մշակույթ» 167): Նշված մասնագիտացումներով պատրաստված մասնագետների քանակը 2020-2021 ուսումնական տարում կազմել է 1541 մասնագետ, որից 918-ը ՏՀՏ, իսկ 623-ը ճարտարագիտության մասնագիտացմամբ (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021 թ., «Կրթություն և մշակույթ» 168): 2019 թվականից ԵՊՀ-ում բացվել է տեխնոլոգիական ոլորտի զարգացմանը նպաստող երկու նոր մագիստրոսական ծրագիր՝ «Տվյալների գիտությունը բիզնեսում» և «Նյութագիտություն»: Այս ծրագրերը հնարավորություն կտան պատրաստել նոր մասնագիտացումներով բարձրակարգ որակավորմամբ կադրեր տեխնոլոգիական ոլորտի և ստարտափ ընկերությունների համար, որոնց պահանջարկն այժմ մեծ է, քանի որ ստարտափ ընկերությունների կարևոր ուղղվածություններից են հենց տվյալագիտությունը և նյութագիտությունը: Նշված մասնագիտացումները թույլ կտան նաև ինչ-որ չափով մեղմել մասնագիտական աշխատուժի պակասը Հայաստանում: Ըստ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակ-ցության ոլորտի հետազոտության շրջանակում անցկացրած հարցման՝ SS ոլորտում գործող ընկերությունների ներկայացուցիչները համարում են, որ ուսանողների ներկա թիվը չի բավարարում տեխնիկական մասնագետների պահանջարկը, որը միջինում կազմում է 2000 մարդ («Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն», 2019թ., 59): Նրանք մատնանշում են նաև, որ որոշ շրջանավարտների որակավորման մակարդակը չի համապատասխանում ոլորտի պահանջներին, և շատերին անհրաժեշտ է անցնել լրացուցիչ աշխատանքային վերապատրաստում՝ համապատասխան որակավորում ստանալու համար:

Ըստ Գլոբալ նորարարական համաթվի 2021 թվականի զեկույցի՝ Հայաստանը կրթության վրա կատարվող ծախսերի ենթաինդեքսով զբաղեցնում է 104-րդ տեղը 132 երկրների շարքում, ինչը բավական ցածր ցուցանիշ է կրթության որակի ապահովման տեսանկյունից (Global Innovation Index 2021, 46): Միաժամանակ զեկույցում ցածր է նաև Հայաստանի բուհերի վարկանիշն ըստ բուհերի QS համաշխարհային վարկանշավորման:[1] Այս ենթաինդեքսով Հայաստանը զբաղեցնում է 74-րդ տեղը (Global Innovation Index 2021, 46): Այս երկու ենթաինդեքսները զեկույցում նշվում են որպես Հայաստանի թույլ կողմեր: Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր կրթության որակը բարձրացնելու և կրթության վրա կատարվող ծախսերն ավելացնելու ուղղությամբ:

Էկոհամակարգում առաջարկվում են նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրեր, որոնք օգնում են որակյալ մասնագետների կարիքը բավարարելուն: Կարևոր նախաձեռնութ-յուններից է «Սինոփսիս Արմենիա» ՓԲ ընկերության համալսարանական ծրագիրը, որն արտադրություն-բուհ համագործակցության մոդելի վրա հիմնված ծրագիր է և հնարավորություն է տալիս աշխատաշուկան համալրել արտադրությանն ինտե-գրվելուն անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներով: Յուրաքանչյուր տարի կրթական ծրագրով առաջարկվող տեղերի քանակը բոլոր բուհերում կազմում է 230 տեղ:[2]

Կարևոր նախաձեռնություն է նաև 2022 թվականին հիմնադրված «ԵՊՀ-Կրիսպ Էյ Այ լաբ» հետազոտական կենտրոնը, որն արհեստական բանականության լաբորատորիա է և նախատեսում է 5-7 տարվա ընթացքում կրթել արհեստական բանականության ոլորտի բարձրորակ մասնագետներ:

Կրթական կարևոր նախաձեռնություններից է 2015 թվականին հիմնադրված Armenian Code Academy կրթական կենտրոնը, որն առաջարկում է բարձր որակի վերապատրաստման դասընթացներ տեխնոլոգիական ոլորտի սկսնակ և փորձառու մասնագետների համար: Կենտրոնում արդեն վերապատրաստվել է շուրջ 5000

[1] Բուհերի համաշխարհային վարկանշավորման Quacquarelli Symonds համակարգ:
[2] Աղբյուր՝ Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտի բրոշյուր:

մասնագետ, իրականացվել են 30-ից ավելի փորձնակների ծրագրեր (Armenian Code Academy): 2022 թվականին մեկնարկել է նոր կրթական ծրագիր, որն իրականացնում են Armenian Code Academy կրթական կենտրոնը և BAJ Unicorn Academy ծրագիրը համատեղ: Այս ծրագրի նպատակն է պատրաստել տեխնոլոգիական ոլորտի ավագ մասնագետներ՝ «միաեղջյուր» դարձած կամ այդ ուղին բռնած ստարտափ ընկերությունների համար: Ծրագրով նախատեսվում է տարեկան 20-25 մասնագետ նախապատրաստել: Ծրագիրը միաժամանակ նախատեսում է հինգ տարվա ընթացքում աճեցնել մինչև տասը «միաեղջյուր» ընկերություն:

Զարգացած տնտեսությունների և դրանցում գործող ստարտափ էկոհամակարգերի զարգացման կարևոր գործոններից մեկը *գիտահետազոտական և փորձարարական մշակումների լաբորատորիաների* առկայությունն է, քանի որ դրանք նպաստում են նորարարության խթանմանը, և այդտեղ նախքան շուկա հանվելը մշակվում ու փորձարկվում են նորարարական գաղափարներն ու գյուտերը: 2020թ. տվյալներով Հայաստանում գիտահետազոտական ու փորձարարական մշակումների վրա կատարված ներքին ծախսերը կազմում են մոտ 10 մլն ՀՀ դրամ (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021 թ., «Գիտություն», 182), և թեև 2019 թվականի համեմատ այս ծախսերը որոշ չափով ավելացվել են (2019թ. կազմում էին 8.5 մլն ՀՀ դրամ), դրանք, այնուամենայնիվ, ցածր են և չեն նպաստում գիտության զարգացմանն ու տնտեսության ակտիվացմանը: Ըստ 2021 թվականի Գլոբալ նորարարական համաթվի՝ Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական ու փորձարարական մշակումների համախառն ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.2%-ը: Այդ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 92-րդ տեղը 132 երկրների շարքում (Global Innovation Index 2021, 46):

2004-2018թթ. Հայաստանում միջազգային ընկերությունների կողմից բացվել է 14 գիտահետազոտական լաբորատորիա (Tech and Entrepreneurial Ecosystem Mapping, p. 12), իսկ 2022 թվականի սկզբից տարբեր խոշոր միջազգային ընկերություններ, այդ թվում՝ Samsung, Yandex, Akvelon, Veeam և այլ ընկերություններ (Ինվեսթ ին Էյէմ) իրենց մասնաճյուղերն ու գիտահետազոտական լաբորատորիաները սկսեցին բացել Հայաստանում, ինչը գուցե որոշ չափով պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած հանգամանքներով: Տարբեր միջազգային ընկերությունների ներկայությունը դրական զարգացում է ստարտափ էկոհամակարգի համար, քանի որ դա կխթանի մասնագիտական ներուժի զարգացումը, սակայն պետք է նշել, որ քիչ են այնպիսի գաղափարների վրա հիմնված ստարտափ ընկերությունները, որոնց հիմքում գիտահետազոտական ու փորձարարական մշակումներն են[1]:

Գիտահետազոտական ներուժի զարգացման գործում մեկ այլ կարևոր նախաձեռնություն է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և PMI Science-ի կողմից համատեղ իրականացվող «Ասպիրանտների աջակցության ծրագիրը», որը նպատակ ունի աջակցել երիտասարդ գիտնականներին՝ տրամադրելով ֆինանսավորում և օժանդակություն իրենց հետազոտական և գիտական նախագծերի համար: 2018թ.-ից 12 համալսարանների և հետազոտական ինստիտուտների 40 ասպիրանտներ արդեն ներգրավվել են ծրագրում:

Ամփոփելով պետք է ասել, որ Հայաստանի ստարտափ էկոհամակարգում առկա են կրթության որակին առնչվող խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր կրթության որակը բարձրացնելու, համապատասխան կրթական ծրագրեր առաջարկելու և կրթության վրա կատարվող ծախսերն ավելացնելու ուղղությամբ: Չափազանց քիչ են այն ստարտափ-գաղափարները, որոնք հիմնված են գիտահետազոտական փորձարկումների և մշակումների վրա: Պետք է ավելացնել

[1] Ըստ հայկական ստարտափ ընկերությունների շրջանում հեղինակի անցկացրած հարցման:

նաև տեխնոլոգիական ոլորտի ավագ մասնագետների զգալի պակասը, որի արդյունքում խիստ բարձր են տվյալ մասնագետների կողմից պահանջվող աշխատավարձերը, ինչը բարդություն է ստեղծում նոր հիմնադրված ստարտափ ընկերության համար:

Ֆինանսավորում և վենչուրային ներդրումներ. եթե մասնագիտական ներուժ ապահովող կրթական հաստատությունները ստարտափ էկոհամակարգի առաջին կարևորության բաղադրիչներից են, ապա ֆինանսավորում տրամադրող կազմակերպությունները և նեդրողներն իրենց կարևորությամբ երկրորդ տեղում են: Ստարտափ ընկերությունների աճի ինչպես նաև ստարտափ էկոհամակարգի կայուն զարգացման համար կարևոր է ստարտափ ընկերություններին հատկացվող ֆինանսավորումը դրամաշնորհների և վենչուրային ներդրումների տեսքով: Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի ստեղծմանն ու զարգացմանը, ինչպես նշվեց, նպաստել է «Գրանատուս վենչուրս» ֆոնդը, որն իր առաջին ներդրումները սկսեց կատարել 2014 թվականից: Առաջին փուլում ֆոնդի կատարած ներդրումային գործարքների գումարը 100 հազ. ԱՄՆ դոլարից մինչև 800 հազ. ԱՄՆ դոլարի սահմանում էր («Գրանատուս Վենչուրս» հիմնադրամ): «Գրանատուս Վենչուրսին» զուգահեռ 2014 թվականին հիմնադրվեց «Հայվ Վենչուրս» ֆոնդն ԱՄՆ-ում, իսկ 2017 թվականին՝ «Սմարթգեյթ ՎԻ ՍԻ» ֆոնդը, որոնք հիմնականում կատարում են նախասաղմնային և սաղմնային փուլի ներդրումներ: Ավելի ուշ իրենց գործունեությունը սկսեցին ևս երկու նոր տեղական ֆոնդեր՝ «Ֆորմուլա ՎԻ ՍԻ»-ն 2020 թվականին և «Բիգ Սթորի ՎԻ ՍԻ»-ն 2021 թվականին, որոնց ներդրումները չեն գերազանցում 500 հազ. ԱՄՆ դոլարը: 2022 թվականին իր գործունեությունը մեկնարկեց նաև «Triple S» վենչուրային հիմնադրամը, որը նախատեսում է 3 տարվա ընթացքում ներդրում կատարել հայ հիմնադիրներ ունեցող մոտ 30 ստարտափ ընկերությունում: Ոլորտում գործում են նաև բիզնես-հրեշտակների ցանցեր, որոնք են Հայաստանի բիզնես հրեշտակների ցանցը (BANA), Հայաստանի հրեշտակ ներդրողների ակումբը (AICA) և Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակների ցանցը (STAN):



Գծապատկեր 2. *ՀՀ ֆինանսավորման աղբյուրներից ստացած ներդրումների գործարքների քանակը 2014-2021թթ., Աղբյուր՝ «Գրանատուս Վենչուրս» ֆոնդի կայք, «Crunchbase» և այլ կայքեր: Գծապատկերը մշակվել է հեղինակի կողմից*

Այս կազմակերպությունների ներկայությունն էականորեն խթանել է Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի ակտիվությունը և ստարտափ ընկերությունների զարգացումը, սակայն 2020թ. տվյալներով վերոնշյալ ֆոնդերի ներդրումային կապիտալը միասին վերցրած չի գերազանցում 10 մլն ԱՄՆ դոլարը (Արամյան), ինչը կարող է բավարար լինել միայն ստարտափ ընկերությունների նախասաղմնային և որոշ չափով՝ սաղմնային փուլերի ֆինանսավորման համար: Ներդրումային գործարքների թվի առումով պետք է նշել, որ թեև 2021 թվականին ավելացել է ֆինանսավորման հայկական աղբյուրներից ստացած ներդրումների գործարքների քանակը, ինչը կարող էր պայմանավորված լինել համավարակին հաջորդող ակտիվության հետ,[1] սակայն դա բավարար չէ վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը խթանելու համար (տե՛ս Գծապատկեր 2):

Ներդրված գումարների մեծության դինամիկան հնարավոր չէ նշել, քանի որ ոչ բոլոր ներդրումային գործարքների գումարների մասին տեղեկություններն են հրապարակված: Ինչևէ, ստարտափ ընկերությունների հետագա զարգացման, միջազգայնացման և հնարավոր ելքերի համար անհրաժեշտ են ավելի բարձր փուլերի ներդրումներ, որոնց համար հայաստանյան ստարտափ ընկերությունները հիմնականում դիմում են օտարերկրյա, մասնավորապես՝ ԱՄՆ և եվրոպական վենչուրային ֆոնդերին, քանի որ Հայաստանում բացակայում են խոշոր միջազգային վենչուրային ֆոնդերը:

Որպես նախասաղմնային փուլի ֆինանսավորման կարևոր դրամաշնորհային ծրագիր պետք է առանձնացնել 2014 թվականից Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից իրականացվող «Նորարարության զարգացման և մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհներ» ծրագիրը, որը նպատակ ունի աջակցել Երևանում և մարզերում գործող ստարտափ ընկերություններին՝ զարգացնել նրանց նորարարական և տեխնոլոգիական արտադրանքն ու լուծումները: Այս ծրագրի շրջանակում տրամադրված դրամաշնորհները կազմում են մինչև 50 000 ԱՄՆ դոլար, և 34-ից ավել ստարտափ ընկերություն արդեն ստացել է դրամաշնորհ, որոնց հանրագումարը կազմում է 800 000 ԱՄՆ դոլար (Tech and Entrepreneurial Ecosystem Mapping 12): Ստարտափ էկոհամակարգի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող ծրագրերից էր նաև ՀՀ ԲՏԱ նախարարության կողմից 2021 թվականին իրականացված «Գաղափարից բիզնես» դրամաշանորհային մրցույթի ծրագիրը, որի շրջանակում 23 ստարտափ ընկերություն ստացավ յուրաքանչյուրը 20 000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ («Գաղափարից բիզնես» դրամաշնորհային ծրագիր):

Ամփոփելով ֆինանսավորմանն ու ներդրումներին առնչվող բաղադրիչը՝ պետք է նշել, որ չնայած ակտիվ զարգացումներին՝ Հայաստանի ստարտափ էկոհամակարգում ֆինանսավորման միջոցները սուղ են, ներկայացված չեն նախասաղմնային և սաղմնային փուլերից բարձր փուլերում (A, B, C և բարձր) ներդրում կատարող վենչուրային կապիտալի միջազգային խոշոր ֆոնդեր, չկան հատուկ ուղղվածությամբ ներդրումներ կատարող վենչուրային կապիտալի ֆոնդեր, օտարերկրացի ներդրողները խուսափում են հայկական ստարտափ ընկերություններում ներդրումներ կատարելուց՝ կապված օրենսդրական կարգավորումների հետ, հայկական ստարտափները բարձր փուլերի ներդրումներ ստանալու համար դիմում են միայն վենչուրային կապիտալի միջազգային ֆոնդերին, որոնց առաջարկով գրանցվում են արտերկրում և դադարում հայկական ստարտափ ընկերություն լինելուց:

Ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրեր, մենթորներ և խորհրդատուներ. Հայաստանում առաջին բիզնես ինկուբատորը՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (ՁԻՀ) սկսել է գործել 2002 թվականից, երբ դեռ ձևավորված չէր

[1] 2020թ. ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված՝ վենչուրային կապիտալի ներդրման շատ պայմանավորվածություններ սառեցվել կամ ընդհատվել էին:

հայկական ստարտափ էկոհամակարգը, և գործում էր ընդամենը մի քանի SS ընկերություն: Հիմնադրամը ներկայումս էլ հանդիսանում է տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական բիզնես ինկուբատորներից և խորհրդատվական ընկերություններից մեկը և աջակցում է Հայաստանում տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի աճին: Հիմնադրամն առաջարկում է ինկուբացիոն ծառայություններ, բիզնեսի և ենթակառուցվածքի զարգացման ծառայություններ, որով անհատական աջակցություն է ցուցաբերում SS ոլորտի տեղական ստարտափ ընկերություններին և Հայաստանում գործող միջազգային SS ընկերությունների մասնաճյուղերին:

Մեծ նշանակություն ունեն նաև բուհերին կից ստեղծված ինկուբատորները, որոնցից է 2019թ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հիմնադրված ANAU AgriTech ինկուբատորը, որը նպաստելու է գյուղատնտեսության ոլորտի տեխնոլոգիական լուծումներ մշակող ստարտափ ընկերությունների զարգացմանը: 2017 թվականին հիմնադրված StartDoon ինկուբատորը նպատակ ունի խթանելու կապը հայկական ստարտափ ընկերությունների և միջազգային մենթորների, այդ թվում՝ հայկական սփյուռքի մասնագետների միջև: Ինկուբատորն արդեն աշխատել է 14 ստարտափ ընկերության հետ:

Հայկական ստարտափ էկոհամակարգում առաջարկվում են նաև աքսելերացիոն ծրագրեր, որոնք ստարտափ ընկերություններին տրամադրում են մենթորներ, տեխնոլոգիական և բիզնես խորհրդատվութուն, ֆինանսական և իրավական աջակցություն, դրամաշնորհային հատկացումներ: Սակայն պետք է նշել, որ Հայաստանում դեռևս չկան բաժնեմասնակցային աքսելերացիոն ծրագրեր, ինչն իր հերթին լրացուցիչ խթան կհանդիսանար ստարտափ ընկերության ավելի արագ ընդլայնման և միջազգայնացման համար: Հայաստանում ամենավաղ շրջանի աքսելերացիոն ծրագրերից մեկն իրականացնում է «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանը»: Կենտրոնի աքսելերացիոն ծրագրում արդեն վերապատրաստվել և կրթվել է 57 ստարտափ ընկերություն՝ ստանալով 2 մլն ԱՄՆ դոլարի ընդհանուր ներդրում (Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան): Խոշոր աքսելերացիոն ծրագրերից մյուսը՝ «Ստարտափ ստուդիոն», իրականացնում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST), որը սատարում է գիտատեխնոլոգիական հենքով ստարտափ ընկերություններին: Իսկ հիմնադրամի Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակ ներդրողների ցանցը ներդրումներ է կատարում զարգացման վաղ (սաղմնային) փուլում գտնվող ստարտափ ընկերություններում և իր փորձագետների ցանցի միջոցով տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն աքսելարացիոն ծրագրի մասնակից ստարտափ ընկերություններին (Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)): ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ իրականացվող ImpactAim աքսելերատորն իր բազմաթիվ ծրագրերով աջակցում է զարգացման վաղ փուլում գտնվող, ինչպես նաև արդեն կայացած ստարտափ ընկերություններին և թիմերին, որոնք աշխատում են կլիմայական փոփոխություններին արձագանքելու, գյուղատնտեսության համար նորարարական տեխնոլոգիական լուծումների ստեղծման ուղղությամբ: Աքսելերատորի ծրագրերին մասնակցել է 20-ից ավելի ընկերություն (ImpactAim աքսելերատոր):

Նախաաքսելերացիոն գործունեություն է ծավալում Հայաստանի Ստարտափ Ակադեմիան, որը նպաստում է հեռանկար ունեցող հայկական ստարտափ ընկերությունների առաջընթացին իր նորարարական ուսումնական ծրագրով և փորձառու մենթորների օգնությամբ: Ակադեմիայի ծրագրերին մասնակցել է ավելի քան 71 ստարտափ ընկերություն, և տրամադրվել է ընդհանուր 4 մլն ԱՄՆ դոլարից ավելի ներդրում: Ակադեմիան ունի 100-ից ավելի փորձագետ և մենթոր (Հայաստանի Ստարտափ ակադեմիա):

Մեծ նշանակություն ունեցող և կարևոր աքսելերացիոն ծրագրերից է 2020 թվականին հիմնադրված BAJ Accelerator ծրագիրը, որը նպատակ ունի սատարել սաղմնայինից մինչև A փուլի ներդրումներին համապատասխանող ստարտափ ընկերություններին՝ առաջարկելով նրանց վերապատրաստման և ուսուցման ծրագրեր, ինչպես նաև հաղորդակցում միջազգային մակարդակի մենթորների և ներդրողների հետ: Այս ծրագրի արդյունքում հայկական ստարտափ ընկերությունները ոչ միայն ձեռք են բերում փորձ, այլև ճանաչելիություն միջազգային մակարդակում և միջազգային շուկաներ մուտք գործելու հմտություն: Ծրագրի շրջանակում 2022 թվականին մեկնարկել է նաև «Թվային Ջուղա ցանց» նախաձեռնությունը, որի նպատակը նույնպես հայկական ստարտափ ընկերությունների կարողությունների զարգացումն է և նրանց միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելը:

Նշված բոլոր նախաձեռնությունները ընդհանուր առմամբ նպաստում են ստարտափ էկոհամակարգի զարգացմանը, թեև հայկական ստարտափ ընկերությունների շրջանում անցկացված հարցման արդյունքներով կան որոշ բարդություններ, որոնք խոչընդոտում են ստարտափ ընկերությունների զարգացմանն ու միջազգայանցմանը: Այդ խնդիրներից են բիզնես վարելու հմտությունների պակասը, միջազգային շուկաների մասին գիտելիքի պակասը, այդ շուկաների ուսումնասիրման և վաճառքի իրականացման բարդությունները, ստարտափ ընկերությունը խոշոր միջազգային ներդրողներին ներկայացնելու հմտությունների պակասը և այլն:[1]

Պետության աջակցություն. ստարտափ ձեռնարկատիրությունը խթանելու և տեխնոլոգիական ստարտափ ընկերություններին աջակցելու համար կառավարությունը ձեռնարկում է ակտիվ միջամտություն: 2014թ. ընդունված ՀՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենքով տեխնոլոգիական ոլորտի համապատասխան ստարտափ ընկերություններին տրամադրվում են հարկային արտոնություններ՝ 0% շահութահարկ, 10% եկամտային հարկ («*Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք*): Այս արտոնությունները հատկապես կարևոր են զարգացման վաղ փուլերում գտնվող ստարտափ ընկերությունների համար, քանի որ թեթևացնում են նրանց հարկային բեռը բիզնեսի հիմնադրման սկզբնական շրջանում: Սակայն պետք է նշել, որ յուրաքանչյուր ստարտափ ընկերություն մինչև կայացած բիզնես դառնալը շահույթ չի ստանում կամ ստացած շահույթը, ըստ ընդունված գործարար սովորույթի, ներդնում է ընկերության հետագա ընդլայնման համար: Այդ տեսանկյունից շահութահարկի 0% արտոնությունը էական նշանակություն չի ունենում ստարտափ ընկերությունների համար: Ինչպես նշվեց վերևում, պետության կողմից 2021 թվականին իրականացված «Գաղափարից բիզնես» դրամաշնորհային մրցույթը նույնպես կարևոր նախաձեռնություն է, որով գաղափարի և վաղ սաղմնային փուլում գործող 23 ընտրված ստարտափ ընկերություն ստացավ մինչև 10 մլն ՀՀ դրամ դրամաշնորհ:[2]

Հայաստանի տնտեսական զարգացման գործընթացներում համահայկական ներուժի ու կարողությունների ներգրավմանը և հայրենադարձությանը նպաստող ծրագիր է նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացվող «ՆերՈւժ» տեխնոլոգիական ծրագիրը, որի շնորհիվ նորարարական ստարտափ գաղափարներ ունեցող հայազգի ներկայացուցիչներն աշխարհի տարբեր երկրներից գալիս են Հայաստան՝ տեխնոլոգիական ընկերություններ հիմնելու և դրանք զարգացնելու համար: Ստարտափ ընկերություններին տրամադրվում են 15-30 հազար ԱՄՆ դոլարին համարժեք

[1] Հայկական ստարտափ ընկերությունների շրջանում 2021-2022թթ. հեղինակի անցկացրած հարցման արդյունքներ:

[2] Աղբյուր՝ ՀՀ ԲՏԱ նախարարության կայք, https://hti.am, դիտվել է 08.08.2022թ.:

դրամաշնորհիներ, Մրցանակ ստացող ստարտափ ընկերություններից պահանջվում է գրանցել իրենց ստարտափ ընկերությունը Հայաստանում: 2018 թվականին ծրագրի շրջանակում դամաշնորհ է ստացել երեք ստարտափ ընկերություն, որոնք մեկ տարվա ընթացքում իրենց բիզնեսը գրանցել են Հայաստանում և ստեղծել 14 նոր աշխատատեղ, 2019 թվականին հաղթողները վեցն էին:[1] Ծրագիրը հնարավորություն է տալիս ուժեղացնել Հայաստանի ստարտափ էկոհամակարգը սփյուռքի տաղանդավոր մասնագետներով, ինչպես նաև օգտագործել նրանց գիտելիքն ու կարողությունները ի նպաստ Հայաստանի ստարտափ էկոհամակարգի զարգացման:

Ֆինանսավորման խնդիրների մեղմման մեկ այլ նախատեսվող նախաձեռնություն է Ազգային վենչուրային ֆոնդի ստեղծումը, որը նպատակ ունի խթանել Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը, ինչպես նաև ներդրումների միջոցով նպաստել հայաստանյան ստարտափ ընկերությունների ֆինանսավորման խնդիրների լուծմանը, ինչի շնորհիվ նրանք կստանան ընդլայնվելու և գլոբալ շուկաներ մուտք գործելու հնարավորություններ: Ծրագիրը նաև նպատակ ունի բարձրացնել հայկական ստարտափ ընկերությունների հեղինակությունը միջազգային մակարդակում ու վենչուրային կապիտալի խոշոր միջազգային ֆոնդերի շրջանում: Ֆոնդի հիմնադրման աշխատանքները դեռևս կառավարչի ընտրման փուլում են:

Ստարտափ էկոհամակարգի զարգացման առումով կարևոր է նաև 2021 թվականին ՀՀ կառավարության կողմից Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգում կատարած որոշ պարզեցումները, որոնք թույլ կտան ավելացնել մասնագիտական ներուժի հոսքը Հայաստան: Մասնավորապես բարելավվել է կացության տրամադրման համակարգը, պարզեցվել և արագացվել են կացության տրամադրման ընթացակարգերը, կացության կարգավիճակների տրամադրման հիմքերում նախատեսվել են կրթության և հետազոտական նպատակներ, Հայաստանում և արտերկրում ապահովվել է տեղեկատվության հասանելիություն Հայաստան մուտք գործելու, կացության և աշխատելու կարգի ու պայմանների մասին (*ՀՀ Կառավարության թիվ 801-Լ որոշում*): Այս պարզեցումները և հստակեցումները կարող են նպաստել ներգաղթող օտարերկրացի մասնագիտական ներուժի թվի ավելացմանը, ինչը հատկապես անհրաժեշտություն էր 2022 թվականի փետրվարին ծավալված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ներգաղթած մեծ թվով տեխնոլոգիական ոլորտի մասնագետների ընդունման համար:

Պետության կողմից իրականացվող այս ծրագրերն ու նախաձեռնությունները կարող են որոշ չափով մեղմել բարձր որակավորում ունեցող մասնագիտական կադրերի բացը, նպաստել հայկական ստարտափ ընկերությունների՝ համաշխարհային մակարդակով ճանաչելիության բարձրացմանը, լուծել ֆինանսավորման ոլորտում առկա որոշ խնդիրներ, սակայն կան որոշակի խնդիրներ, որոնք դեռևս չեն կարգավորվում պետական մակարդակով և լուծված չեն: Այդպիսի խնդիրներ են վենչուրային կապիտալի միջազգային հեղինակություն ունեցող խոշոր ֆոնդերի բացակայությունը Հայաստանում, որոնց նեգրավմանը կարող է նպաստել պետության հետ համագործակցությունը, արժեթղթերի շուկայի պասիվ գործունեությունը, որին նույնպես անհրաժեշտ է պետության միջամտությունը. այն կարող է խթանել հայկական ստարտափ ընկերությունների ցուցակագրումը և նպաստել հաջող ելքերի իրականացմանը:

Համատեղ աշխատանքային տարածքներ, միջոցառումներ, հարթակներ, մեդիա. ստարտափ էկոհամակարգի զարգացման համար կարևոր են նաև մատչելի համատեղ աշխատանքային տարածքները, որոնք ստարտափ թիմերին և ընկերություններին թույլ են տալիս ունենալ մատչելի գրասենյակ՝ առանց մեծ ծախսեր

[1] Աղբյուր՝ ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ, http://diaspora.gov.am/hy/programs/31/neruzh, դիտվել է 12.10.2022թ.:

կատարելու: Հայաստանում մատչելի համատեղ աշխատանքային տարածքներ սկսել են բացվել մոտ տասը տարի առաջ, որոնցից առաջիններից էին Լոֆթը, Իմփաքթ Հաբ Երևանը, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, այնուհետև՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնները: Հետագայում ստարտափ ընկերությունների թվի ավելացմանը և ստարտափ էկոհամակարգի զարգացմանը զուգահեռ՝ այս աշխատանքային տարածքները դարձան ավելի պահանջված, որոնց թիվը տարեցտարի շարունակում է աճել: Ներկայումս Երևանում և Հայաստանի այլ մարզերում գործում են 20-ից ավելի համատեղ աշխատանքային տարածքներ, որոնց մեծ մասը կազմում է որևէ ինկուբատորի կամ աքսելերատորի, ինչպես նաև բուհի կամ կրթական կենտրոնի մաս: Միաժամանակ կարևոր է այն, որ այս համատեղ աշխատանքային տարածքներից յուրաքանչյուրն ստեղծում է իր ցանցը և կազմակերպում բազմաբնույթ միջոցառումներ ստարտափ ընկերությունների համար, ինչը կարևոր է ստարտափ թիմերի և ընկերությունների գաղափարների ներկայացման, գործընկերների ձեռքբերման և գիտելիքի փոխանակման տեսանկյունից: Համատեղ աշխատանքային տարածքների առումով ներկայումս էական խնդիրներ չեն բարձրաձայնվել, սակայն ներգաղթող մասնագետների աճին զուգընթաց դրանց թիվը կարող է չբավարարել, կամ դա կարող է բերել այդ տարածքների կողմից առաջարկվող գների բարձրացման: Խնդիրը հնարավոր է լուծվի նոր համատեղ աշխատանքային տարածքների բացմամբ: Միաժամանակ կարևոր է, որ համատեղ աշխատանքային տարածքներն ունենան որոշակի ուղղվածություն, ինչպիսին է, օրինակ, Իմփաքթ Հաբ Երևանը, որն ունի սոցիալական և տուրիզմի ոլորտում աշխատող ստարտափ նախագծերի ուղղվածություն:

Հայաստանի ստարտափ էկոհամակարգում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ ստարտափ ընկերությունների համար: Դրանք բութքեմփեր են, հեքը-թոններ,[1] գագաթնաժողովներ, ցուցահանդեսներ, թեմատիկ հանդիպումներ, ինչպես նաև հանդիպումներ Հայաստանում և միջազգային ճանաչում ունեցող հաջողակ և փորձառու ստարտափ ձեռնարկատերերի, մենթորների և ներդրողների հետ:

Հայաստանի ստարտափ ընկերությունների համար գործընկերության, կապերի հաստատման և արտադրանքի ներկայացման հնարավորություններ է ընձեռում նաև մեկ այլ կարևոր միջոցառում՝ ամենամյա կազմակերպվող «Դիջիթեք Էքսպո» ցուցահանդեսը, որին ամեն տարի մասնակցում է տեղական և արտասահմանյան 100-ից ավելի ընկերություն և մոտ 60 000 այցելու: Ցուցահանդեսի շրջանակում կազմակերպվում են կլոր սեղաններ, հանդիպումներ, ինչպես նաև բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ դպրոցներում գործող ռոբոտաշինության ու ճարտարագիտական խմբակների աշակերտների պատրաստած ռոբոտների ցուցադրությունը:

Խոշոր միջոցառումներից է «Սևան Ստարտափ Սամմիթը», որն ամենամյա ոչ ֆորմալ ստարտափ հավաք է, և որի ընթացքում ստարտափ գաղափարներով հանդես եկող թիմերը հնարավորություն են ունենում օրեր շարունակ շփվել, ծանոթանալ միմյանց հետ, հանդիպել Հայաստանի և արտերկրի տարբեր ձեռնարկատերերի, մասնագետների ու բանախոսների, վենչուրային և հրեշտակ ներդրողների հետ: Մինչ օրս բոլոր տարիներին տեղի ունեցած միջոցառումներին միասին մասնակցել է ավելի քան 25 000 մասնակից 90 երկրից, 1000-ից ավելի ստարտափ ընկերություն, հանձնվել է ավելի քան 350 000 ԱՄՆ դոլարի մրցանակ և կատարվել է ընդհանուր առմամբ 4 մլն ԱՄՆ դոլարի ներդրում (Սիսայդ Ստարտափ Սամմիթ):

Վերջին երկու տարիներին տեղի ունեցող նշանակալից միջոցառումներից է «Tech Week»-ը, որն ամեն տարի անցկացվում է ՀՀ որևէ քաղաքում՝ 2021 թվականին սկսելով Ստեփանակերտից: 2022 թվականին այն անցկացվեց Գյումրիում, իսկ 2023 թվականին նախատեսվում է անցկացնել Վանաձոր քաղաքում (Tech Week): Tech

[1] Նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթներ:

Week-ը տեխնոլոգիական միջոցառումների շարք է, որի նպատակն է համայնքային համաչափ շարունակական զարգացումը, մարզերում նոր թիմերի ստեղծումը և մարդկանց զինումը գիտելիքով ու հմտություններով: Այս միջոցառումը ստարտափ թիմերին և ընկերություններին թույլ է տալիս հաղորդակցվել հայկական ստարտափ էկոհամակարգի կայացած ստարտափ ընկերությունների հիմնադիրների հետ, լսել նրանց փորձի մասին, ստանալ արժեքավոր խորհուրդներ, ինչը խթանում է մարզերում ստարտափ ձեռներեցությունը և ձևավորում է ձեռնարկատիրական մտածելակերպ ու մշակույթ:

Մեկ այլ կարևոր միջոցառում էր 2022 թվականին Հայաստանում անցկացված «Emerge» միջազգային տեխնոլոգիական համաժողովը, որը, սկիզբ առնելով 2018 թվականին Բելառուսում, համախմբում է տեխնոլոգիական համայնքի մասնագետներին, ստարտափ ընկերությունների հիմնադիրներին, խոշոր ընկերությունների, ներդրողների և հնարավորություն է տալիս ներդրողներին ու ստարտափ ընկերություններին հանդիպել մեկ վայրում ու քննարկել ներդրումային հնարավորություններ: Այս միջոցառումը թույլ տվեց հայկական ստարտափ ընկերություններին հանդիպել միջազգային ներդրողների հետ, ձեռք բերել փորձ և փոխանակվել գիտելիքով, հաստատել կապեր:

Իրականացված միջոցառումներից է նաև «Երևան Թեք ֆորում 2022»-ը, որը կրկին տեխնոլոգիական ոլորտի առաջատարներին, ստարտափ ընկերություններին մեկ հարթակում համախմբելու և առկա խնդիրները, էկոհամակարգի գրանցած հաջողություններն ու ձախողումները քննարկելու միջոցառում էր:

Հայաստանում ստարտափ ընկերությունների համար իրականացվող միջոցառումները բազմաթիվ են, սակայն չկան կոնկրետ ուղղվածությամբ միջոցառումներ (օր.՝ ֆինթեք, ԱԻ, բիոթեք և այլ ուղղություններով), որոնք կանդրադառնային կոնկրետ ոլորտում գործող ստարտափ ընկերությունների խնդիրներին, կստեղծեին համապատասխան միջավայր այդ ստարտափ ընկերությունների խնդիրների քննարկման և լուծման համար:

Ստարտափ էկոհամակարգի զարգացվածության կարևոր բաղադրիչներից է նաև *էկոհամակարգում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանող մեդիան:* Հայկական ստարտափ էկոհամակարգում կարելի է նշել երկու խոշոր հարթակի մասին, որոնք լուսաբանում են ստարտափ ընկերությունների համար կազմակերպվող միջոցառումները: «ՍտարտՀաբ» նախագիծը 2018թ. հիմնադրված տեղեկատվական աջակցության հարթակ է ստարտափ ընկերությունների համար: Այն ոչ միայն լուսաբանում է տեղի ունեցող իրադարձությունները և ներկայացնում է ստարտափ ոլորտի նորությունները, այլև տրամադրում է բիզնեսի զարգացման տարբեր ուղեցույցներ ստարտափ ընկերությունների համար: Ստարտափ ոլորտի նորությունների լուսաբանման կարևոր հարթակներից է նաև Itel.am նախագիծը, որը գործարկվել է 2009թ. որպես հեռահաղորդակցության, ինտերնետի, SS և նորարարությունների ոլորտների ինտերակտիվ լուսաբանման ու քննարկումների հարթակ: Այնուամենայնիվ, մեդիա հարթակներում ստարտափ ընկերությունների վերաբերյալ ներկայացվող տեղեկությունները և լուսաբանումը բավարար չեն: Ասվածի մասին են վկայում նաև ստարտափ ընկերությունների գործունեության հետազոտության նպատակով իրականացված հարցման արդյունքները, համաձայն որոնց՝ ընկերությունների մեծ մասը որպես զարգացմանը խոչընդոտող գործոն դիտարկում է նաև տեղեկացվածության պակասը, քանի որ ըստ հարցվածների՝ որևէ միջոցառման կամ ստարտափ ընկերության ֆինանսավորման, աքսելերացիոն ու կրթական ծրագրի մասին տեղեկանալու համար անհրաժեշտ է շատ ժամանակ տրամադրել՝ նման հնարավորություններ գտնելու համար[1]:

[1] Աղբյուր՝ ստարտափ ընկերությունների շրջանում հեղինակի կողմից 2021-2022թթ. կատարած հարցման արդյունքներ:

Եզրակացություն

Ամփոփելով հայկական ստարտափ էկոհամակարգի առանձին բաղադրիչների ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ հայկական ստարտափ էկոհամակարգում դեռևս կան զարգացման խոչընդոտներ ու խնդիրներ, ու թեև էկոհամակարգը կայուն շարունակական զարգացում է ապրում, սակայն ի հակակշիռ առաջատար և զարգացած ստարտափ էկոհամակարգերի՝ այն, այնուամենայնիվ, դեռևս թույլ է զարգացած:

Մասնավորապես՝ էկոհամակարգում առկա են հետևյալ հիմնական խնդիրները. ա) ամեն տարի ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը բավարար չէ էկոհամակարգի կայուն զարգացման համար, բ) ստարտափ ընկերությունները չեն ստեղծում մեծ արժեք ներկայացնող արտադրանք, որոնք մրցունակ կլինեն միջազգային շուկայում, գ) էկոհամակարգում պակասում է ձեռնարկատիրական մշակույթը, դ) բարձր որակավորում ունեցող մասնագետների զգալի պակաս կա, բուհերը չեն առաջարկում ձեռնարկատիրական կարողությունների զարգացման ծրագրեր, իսկ ստարտափ ընկերությունների հիմնադիրները չունեն համապատասխան ձեռնարկատիրական հմտություններ և փորձ, նաև բուհական կրթական ծրագրերը չեն պարունակում ժամանակակից պահանջներին համապատասխան բաղադրիչներ, ե) շատ չեն նորարարության խթանմանն ուղղված գիտահետազոտական մշակումներն ու փորձարկումները և դրանց հիման վրա ստեղծվող ստարտափ գաղափարները, զ) ստարտափ ընկերությունների համար քիչ են ներդրումային միջոցները, է) մարզերում ստարտափ ձեռնարկատիրության ակտիվությունը ցածր է:

Առկա խնդիրները լուծելու համար առաջարկվում է՝ ա) նպաստել ստարտափ ընկերությունների քանակական և որակական ցուցանիշների բարելավմանը, բ) խթանել ստարտափ ընկերությունների կողմից առաջարկվող արտադրանքի արժեքի մեծացումը և արտահանման ընդլայնումը, գ) բարելավել բուհերում առաջարկվող կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով ժամանակակից կրթական չափանիշներին, ինչպես նաև բուհական ծրագրերին կից բացելով ստարտափ ինկուբատորներ և աքսելերացիոն ծրագրեր, որոնք կխթանեն ձեռնարկատիրական մտածողությունը, դ) ստարտափ ընկերությունների զարգացման աշխատանքները նպատակաուղղել զարգացման մեծ ներուժ ունեցող և երկրի տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող կոնկրետ ուղղություններով, ե) նպաստել գիտահետազոտական մշակումների և փորձարկումների ուղղվածությամբ գաղափարների ստեղծմանը, զ) ավելացնել զարգացման վաղ փուլերում տրամադրվող ֆինանսավորումը որպես ստարտափ ընկերության զարգացման հաջողության սկիզբ, է) մարզերում խթանել ստարտափ գաղափարների ձևավորման ակտիվությունը և այդ հենքի վրա խրախուսել ստարտափ ընկերությունների ստեղծումը մարզերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արամյան, Հայկազ. *«Որքանով է Հայաստանը գրավիչ վենչուրային կապիտալի համար»,* ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2018 https://asue.am/amberd/publications/analysis/how-attractive-is-armenia-for-venture-capital#_ftn2 դիտվել է՝ 08.08.2022:

2. «Գաղափարից բիզնես» դրամաշնորհային ծրագիր, *ՀՀ ԲՏԱ նախարարություն*, https://hti.am, դիտվել է՝ 08.08.2022:

3. «Գրանատուս Վենչուրս» հիմնադրամ, http://www.granatusventures.com, դիտվել է՝ 08.08.2022:

4. Թոսունյան, Սյուզան. «Ստարտափ երազանք՝ «Միաեղջյուր», *EVN Report*, 7 հոկտեմբեր 2021, https://evnreport.com/arm/creative-tech-arm/unicorns-spotted-in-armenia, դիտվել է՝ 08.08.2022:

5. Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST), https://fast.foundation, դիտվել է՝ 08.08.2022:

6. ՀՀ Ազգային ժողով. *«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին»* ՀՀ օրենք, 12.12.2014.

7. ՀՀ Կառավարություն. *«Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N801-Լ որոշում*, 20 մայիսի 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909, դիտվել է՝ 08.08.2022:

8. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն. *«ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկ»*, https://escs.am/am/news/4706, դիտվել է՝ 08.08.2022:

9. Հայաստանի Ստարտափ ակադեմիա, https://www.startupacademy.am, դիտվել է՝ 08.08.2022:

10. «Հայաստանի ստարտափ էկոհամակարգը ճանաչվել է լավագույնը Կովկասում» *Ինվեսթ ին Էյէմ*, https://investin.am/hy, դիտվել է՝ 08.08.2022:

11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021 թ., «Գիտություն», ՀՀ *Վիճակագրական կոմիտե*, էջ 182:

12. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021 թ., «Կրթություն և մշակույթ», ՀՀ *Վիճակագրական կոմիտե*, էջ 167-168:

13. «Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն», *Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ* 2019թ., էջ 59:

14. «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020», *Ամերիաբանկ ՓԲԸ*, 184 էջ, էջ 16-20:

15. Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան, https://www.micarmenia.am, դիտվել է՝ 08.08.2022:

16. Սիսայդ Ստարտափ Սամմիթ, https://www.seasidestartupsummit.com դիտվել է՝ 08.08.2022:

17. Arzumanyan, Ashot. “Armenian startup ecosystem: open secrets, big opportunities”, *SmartGateVC*, https://www.smartgate.vc/post/2017/10/12/armenian-startup-ecosystem-open-secrets-big-opportunities. Accessed: 06.07.2022.

18. Armenian Code Academy, https://www.aca.am Accessed: 08.08.2022

19. Global Innovation Index 2021: Tracking Innovation through the COVID-19 Crisis. Geneva: *World Intellectual Property Organization*, p. 46.

20. “Global Startup Ecosystem Index 2022”, *StartupBlink,* p. 217

21. ImpactAim, https://impactaim.com. Accessed: 08.08.2022.

22. Nobel, Carmen. “Why Companies Fail—and How Their Founders Can Bounce Back”, *Harvard Business School*, 7 Mar 2011, https://hbswk.hbs.edu/item/why-companies-failand-how-their-founders-can-bounce-back. Accessed: 08.08.2022.

23. Tech and Entrepreneurial Ecosystem Mapping, *Catalyst Foundation*. 2019, p. 12-23.

24. «Tech Week», https://techweek.am. Accessed: 08.08.2022.

WORKS CITED

1. Aramyan, Haykaz. «Orqanov e' Hayastany' gravich venchurayin kapitali hamar», ՀՊԹՀ «Amberd» hetazotakan kentron, 2018 https://asue.am/amberd/publications/analysis/hu-attractive-is-armenia-for-venture-capital#_ftn2 ditvel e' 08.08.2022 [How Attractive is Armenia for Venture Capital. Yerevan] (In Armenian)

2. «Gaghap'aric biznes» dramashnorhayin c'ragir, HH BTA naxararut'yun, https://hti.am, ditvel e' 08.08.2022. [“From Idea to Business” grant scheme.] (In Armenian)

3. «Granatus Venchurs» himnadram, http://www.granatusventures.com, ditvel e' 08.08.2022 [“Granatus Ventures” Foundation, http://www.granatusventures.com. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

4. T'osunyan, Syuzan. «Startap' erazanq` «Miaeghjyur», EVN Report, 7 hoktember 2021, https://evnreport.com/arm/creative-tech-arm/unicorns-spotted-in-armenia. ditvel e'` 08.08.2022. [Startup Dream: “Unicorn”] 2021 (In Armenian)

5. Hayastani gitut'yan ev texnologianeri himnadram (FAST), https://fast.foundation, ditvel e' 08.08.2022. [Foundation for Armenian Science and Technology (FAST), https://fast.foundation. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

6. HH Azgayin jhoghov. «Teghekatvakan texnologianeri olorti petakan ajakcut'yan masin» HH o'renq, 12.12.2014 [The RA Law “On State Support to Information and Technology Industry”, adopted 12.12.2014] (In Armenian)

7. HH Kar'avarut'yun. «Hayastani Hanrapetut'yan migraciayi petakan kar'avarman hayecakargy' ev gorc'oghut'yunneri c'ragiry' hastatelu masin» N801-L oroshum, 20 mayisi 2021 https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909, ditvel e'` 08.08.2022 [RA Government Decree No. 801-L of May 20, 2021 "On approving the Concept and Action Plan of the State Management of Migration of the Republic of Armenia, https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

8. HH KGMS naxararut'yun. «HH petakan bard'raguyn usumnakan hastatut'yunneri cank», https://escs.am/am/news/4706 ditvel e'` 08.08.2022 [“RA State Higher Educational Institutions, List”, RA MESCS, https://escs.am/am/news/4706. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

9. Hayastani Startap' akademia, https://www.startupacademy.am, ditvel e' 08.08.2022 [Startup Academy of Armenia, https://www.startupacademy.am. Accessed: 08.08.2022.]

10. «Hayastani startap' e'kohamakargy' twanachvel e' lavaguyny' Kovkasum» Invest' in E'yE'm, https://investin.am/hy, ditvel e'` 08.08.2022 [Armenia’s Startup Ecosystem has been Recognized to be the Best in the Caucaus] (In Armenian)

11. Hayastani vitwakagrakan taregirq 2021 t'., «Gitut'yun», HH Vitwakagrakan komite, e'j 182 [Statistical Yearbook of Armenia, 2021, «Science», p. 182.] (In Armenian)

12. Hayastani vitwakagrakan taregirq 2021 t'., «Krt'ut'yun ev mshakuyt'», HH Vitwakagrakan komite, e'j 167-168 [Statistical Yearbook of Armenia, 2021, «Education and Culture», pp. 167-168.] (In Armenian)

13. «Hayastanum teghekatvakan texnologianeri ev her'ahaghordakcut'yan olorti hetazotut'yan hashvetvut'yun», D'er'narkut'yunneri Inkubator himnadram 2019t'., e'j 59 [«Armenian Information and Technology Industry Report”, Enterprise Incubator Foundation, p. 59.] (In Armenian)

14. «D'er'narkatirut'yan hamashxarhayin zekuyc Hayastan 2019/2020», Ameriabank P'BY' 184 e'j, e'j 16-20 [“Global Entrepreneurship Monitor: Armenia National Report 2019/2020, pp. 16-20.] (In Armenian)

15. Mayqrosoft' inovacion kentron Hayastan, https://www.micarmenia.am, ditvel e' 08.08.2022 [Microsoft Innovation Center Armenia, https://www.micarmenia.am. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

16. Sisayd Startap' Sammit', https://www.seasidestartupsummit.com ditvel e' 08.08.2022 [Seaside Startup Summit, https://www.seasidestartupsummit.com. Accessed: 08.08.2022.] (In Armenian)

THE EFFECTS OF COMPONENTS AND DEVELOPMENT CHALLENGES OF THE ARMENIAN STARTUP ECOSYSTEM

KRISTINE ARSHAKYAN
Yerevan State University,
Faculty of Economics and Management,
Chair of Management and Business, Ph.D. Student,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of this article is to study the current state of Armenian startup ecosystem according to each of the ecosystem components, to evaluate the degree of development of the ecosystem, as well as to reveal problems existing in the ecosystem that not only hinder its further development, but also prevent startup companies to have the necessary support from the ecosystem.

The objective of the work is to analyze the problems identified as a result of the study and to prepare recommendations based on it which will help to address some of the mentioned problems and to contribute to the further development of the Armenian startup ecosystem.

Based on the results of the study it can be concluded that despite of stable and continuous development there are still challenges and problems in the the Armenian startup ecosystem and in contrast to developed and leading startup ecosystems, the Armenian startup ecosystem is still poorly developed. The problems revealed relate mainly to creation of added value products by Armenian startup companies, startup entrepreneurship culture in the ecosystem, inconsistency of university programs and lack of highly qualified specialists, as well as financing. The article presents recommendations for addressing the mentioned problems, which will help to increase the efficiency of the ecosystem; in particular, they will foster startup entrepreneurship in the country, support the formation of startup ideas that are based on scientific research and creation of startup companies based on those ideas, contribute to the increase of financing for startup companies and create favorable environment for the operation of startup companies.

Keywords: *startup ecosystem, startup companies, startup incubators, acceleration programs, venture capital investments, economic growth, innovation promotion.*

ВЛИЯНИЕ КОМПОНЕНТОВ АРМЯНСКОЙ СТАРТАП-ЭКОСИСТЕМЫ И ПРОБЛЕМЫ ЕЕ РАЗВИТИЯ

КРИСТИНЕ АРШАКЯН
аспирант кафедры менеджмента и бизнеса
факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армении

Данная работа направлена на изучение текущего состояния стартап-экосистемы Армении по компонентам экосистемы, оценки степени развития экосистемы, а также выявление существующих в ней проблем, которые не только препятствуют ее дальнейшему развитию, но и не позволяют стартап-компаниям получать соответствующую поддержку со стороны экосистемы.

Целью работы является анализирование проблем, выявленных в результате исследования, и предложение рекомендаций, которые помогут не только устранить

некоторые из обнаруженных проблем, но способствовать дальнейшему развитию стартап-экосистемы Армении.

На основании результатов исследования можно сделать вывод, что, несмотря на стабильное и непрерывное развитие, в армянской стартап-экосистеме существуют множество проблем, и, в отличие от развитых ведущих стартап-экосистем, армянская стартап-экосистема, можно определить каак слабо развитую. Выявленные проблемы касаются в основном создания армянскими стартап-компаниями продуктов, которые отличаются добавленной стоимостью, распространённости культуры стартап-предпринимательства в экосистеме, несоответствия университетских программ обучения и нехватки высококвалифицированных специалистов, а также финансирования стартап-компаний. В статье представлены предложения по преодолению указанных проблем, которые помогут повысить эффективность экосистемы и, в частности, могут способствовать развитию стартап-предпринимательства в стране, поддерживать формирование стартап-идей, основанных на научных исследованиях, и создание стартап-компаний на основе этих идей, способствовать увеличению финансирования стартап-компаний и создавать благоприятную среду для деятельность стартап-компаний.

Ключевые слова: *стартап-экосистема, стартап-компании, стартап-инкубаторы, акселерационные программы, инвестиции венчурного капитала, экономический рост, продвижение инноваций.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

ՀՏԴ 631.1:338.43 *10.52063/25792652-2022.3.14-223*

ԼՈՒՍԻՆԵ ԾՊՆԵՑՅԱՆ
Հայաստանի Ազգային ագրարային համալսարանի
ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tspnetsyanlusine@gmail.com

Հոդվածի նպատակն է՝ ռեգրեսիոն մոդելի միջոցով գնահատել գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից մեկի՝ գյուղատնտեսության արտադրողականության վրա տարբեր գործոնների ազդեցության չափը:

Հոդվածի խնդիրներն են՝ հստակեցնել այն գործոնների շրջանակը, որոնց և արտադրողականության ցուցանիշի միջև գոյություն ունի վիճակագրական կապ, ինչպես նաև կատարել նշված գործոնների ներգործությունը բնութագրող ռեգրեսիոն վերլուծություն:

Հոդվածում կիրառվել են դիալեկտիկայի, գիտական վերացարկման, համեմատական վերլուծության, տրամաբանական և վիճակագրական մեթոդները:

Հոդվածում գնահատվել են այն գործոնները, որոնք մեծապես պայմանավորել են հանրապետության գյուղատնտեսության արտադրողականության փոփոխությունները 2000-2020թթ.-ին:

Հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

-արդյունքային ցուցանիշի՝ կախյալ փոփոխականի (գյուղատնտեսությունում արտադրողականության ցուցանիշի) փոփոխությունների 97.8%-ը պայմանավորված է մոդելի գործոն հատկանիշներով՝անկախ փոփոխականներով:

- այլ հավասար պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների 1 հազ. հա-ով ավելացումը հանգեցնում է գյուղատնտեսությունում արտադրողականության ավելացմանը՝0.811 հազ. դրամ/ մարդ-ով,

- բուսաբուծության համախառն արտադրանքի ավելացումը 1 մլրդ դրամով նպաստում է գյուղատնտեսության արտադրողականության աճին՝1.043 հազ. դրամ/ մարդ-ով,

- անասնաբուծության համախառն արտադրանքի աճը առավել մեծ ազդեցություն է ունենում արտադրողականության ցուցանիշի վրա. այդ արտադրանքի ավելացումը 1 մլրդ դրամով նպաստում է արտադրողականության աճին՝5.904 հազ. դրամ/մարդ-ով:

* Հոդվածը ներկայացվել է 07.09.2022թ., գրախոսվել՝ 01.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

-գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի 1%-ով ավելացումը հանգեցնում է գյուղատնտեսության արտադրողականության նվազմանը՝7.504 հազ. դրամ/ մարդ-ով:

Հիմնաբառեր՝ *գյուղատնտեսություն, մրցունակություն, ցուցանիշներ, գործոններ, գործակից, բնութագրիչ, արտադրողականություն, համախառն արտադրանք:*

Ներածություն

Հանրապետության գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնավորված մոտեցումների առաջադրումը պահանջում է համակողմանի ուսումնասիրություններ, որոնք անհնար է պատկերացնել առանց մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատման: Վերջինս թույլ է տալիս առաձնացնել գյուղատնտեսության մրցունակության վրա առավել կամ պակաս չափով ազդող գործոնները և ջանքերը նպատակաուղղել կոնկրետ գործոնների բացասական ազդեցությունը վերացնելուն կամ գոնե նվազագույնի հասցնելուն:

Նման գնահատումը հիմնված է համապատասխան տեղեկատվության օգտագործմամբ ռեգրեսիոն մոդելի և էկոնոմետրիկ հաշվարկների կիրառման վրա: Տնտեսագիտական գրականության մեջ թեպետ նշված մոդելի ու հաշվարկների կիրառումը գնալով լայն տարածում է գտնում, բայցևայնպես, հատկապես ճյուղին, այդ թվում՝ մեր հանրապետության գյուղատնտեսությանը վերաբերող ոչ բոլոր արդյունքային և գործոնային ցուցանիշների միջև քանակական կապի գնահատմանն է բավարար ուշադրություն դարձվել: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է այդպիսի արդյունքային ցուցանիշ հանդիսացող գյուղատնտեսության արտադրողականության և դրա վրա ազդող առանձին գործոնների միջև առկա վիճակագրական կապին: Եթե հաշվի առնելու լինենք, որ ոչ բոլոր գործոնների և արտադրողականության ցուցանիշի միջև գոյություն ունի վիճակագրական կապ, ապա այդպիսի կապի բացահայտումն առավել կարևորություն է ստանում: Այս համատեքստում արդիականություն է ձեռք բերում գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատումը:

Արտադրողականության՝ որպես գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող արդյունքային ցուցանիշի մեծության վրա առանձին գործոնների ազդեցության չափի գնահատման անհրաժեշտությունը

Մրցունակությունը շուկայական տնտեսության կարևորագույն հատկանիշներից է և բազմաբովանդակ տնտեսական կատեգորիա, որը մեկնաբանվում է ապրանքի, ընկերության, ճյուղի, տարածաշրջանի կտրվածքով:

Մրցունակության հասկացության վերաբերյալ տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր սահմանումներ, որոնցում շեշտը դրվում է դրա առանձին բնութագրիչների, այդ թվում՝ սույն հոդվածի նպատակի ու խնդիրների համատեքստում մեզ հետաքրքրող

արտադրողականության վրա: Այս առումով հատկանշական է Մ. Պորտերի կողմից մրցունակության մեկնաբանությունը, ըստ որի՝ «Մրցունակությունը որոշվում է արտադրողականությամբ, որով ազգը, տարածաշրջանը կամ համալիրը օգտագործում են իրենց մարդու ուժը, բնական պաշարներն ու կապիտալը (հիմնական միջոցները): Արտադրողականությամբ է որոշվում ազգի կամ տարածաշրջանի կենսամակարդակը (աշխատավարձի չափը, կապիտալի և բնական պաշարների հատույցը) (Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2008, 14):

Արտադրողականության, նաև արդյունավետության դիրքերից մրցունակության մեկ այլ մեկնաբանության համաձայն այն դիտարկվում է որպես արդյունավետ և արտադրողական լինելու ունակություն (Կոստանյան 16):

Այսպիսով՝ մրցունակությունը կարելի է դիտարկել տվյալ մրցակցային միջավայրում ներկայացված օբյեկտների և սուբյեկտների (ապրանքի, ծառայության, տնտեսավարող սուբյեկտի, ճյուղի, ոլորտի, տարածաշրջանի, երկրի) մրցակցելու ունակություն՝ արդյունավետ և արտադրողական լինելու առումով:

Արտադրողականությունը որպես ճյուղի, այդ թվում՝ գյուղատնտեսության մրցունակության բնութագրիչ, առավել համապարփակ է արտացոլում այն և այս առումով դրա ուսումնասիրությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում: Արտադրողականության դերն ավելի է կարևորվում որպես գյուղատնտեսության մրցունակությունը բնորոշող հիմնական արդյունքային ցուցանիշներից մեկի: Գյուղատնտեսության պարագայում արտադրողականությունն ունի իր ուրույն դրսևորումը և հադես է գալիս այդ ճյուղում մեկ զբաղվածի հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշի միջոցով: Նշված ցուցանիշի մեծության վրա ազդում են բազմաթիվ ուղղակի և անուղղակի գործոններ, մասնավորապես՝ գյուղատնտեսության մեքենայացման, բնակչության զբաղվածության մակարդակը և կառուցվածքը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Գյուղատնտեսության արտադրողականության վրա բազմապիսի գործոնների ազդեցությունը կարող է նպաստավոր լինել կամ չլինել: Այդ ազդեցության չափը ևս կարող է տարբեր լինել: Այս պարագայում նշված չափի գնահատումը թույլ է տալիս առաձնացնել գյուղատնտեսության արտադրողականության վրա առավել կամ պակաս ներգործություն ունեցող գործոնները տվյալ ժամանակահատվածում:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արտադրողականության վրա առանձին գործոնների ներգործությունը բնութագրող ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Գյուղատնտեսության արտադրողականության վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատման հնարավորություն է ընձեռում ռեգրեսիոն մոդելի կիրառումը: Այդ նպատակով դիտարկել ենք բազմաթիվ գործոններ, որոնք տրամաբանությամբ կարող են ազդել գյուղատնտեսության արտադրողականության վրա:

Մեր կողմից կատարված էկոնոմետրիկ հաշվարկները ցույց են տալիս, որ ոչ բոլոր գործոնների և արտադրողականության ցուցանիշի միջև գոյություն ունի վիճակագրական կապ: Հաշվարկները կատարվել են երկարատև ժամանակահատված ընդգրկող (2000-2020 թթ.) տվյալներով:

Գյուղատնտեսության արտադրողականության հաշվարկային ցուցանիշները և դրանց վրա ազդող գործոնների շրջանակը ներկայացված է 1-ին աղյուսակում, որի ելակետային տվյալների ու հաշվարկների կատարման համար հիմք են հանդիսացել հետևյալ աղբյուրները (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006 (299); Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011 (298); Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 (294); Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2021 (351); Պարենային ապահովություն և աղքատություն 2004 թ. հունվար-դեկտեմբեր (23; 25); Պարենային ապահովություն և աղքատություն 2008 թ. հունվար-դեկտեմբեր (37; 40); Պարենային ապահովություն և աղքատություն 2013 թ. հունվար-դեկտեմբեր (35; 38); Պարենային ապահովություն և աղքատություն 2018 թ. հունվար-դեկտեմբեր, (35; 38); Պարենային ապահովություն և աղքատություն 2020 թ. հունվար-դեկտեմբեր (36; 39)):

Աղյուսակ 1

ՀՀ գյուղատնտեսության արտադրողականությունը և դրա վրա ազդող առանձին ցուցանիշները (գործոնները) 2000-2020թթ.

Տարեթվերը	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը մեկ զբաղվածի հաշվով (արտադրողականությունը), հազ. դրամ/մարդ	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, հազ. հա	Բուսաբուծության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Անասնաբուծության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Գյուղա-տընտեսական ծառայությունների սակագների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %
1	2	3	4	5	6
2000	630.5	303.2	136.2	145.3	109.9
2001	634.0	317.1	208.0	143.0	108.1
2002	766.2	305.6	226.6	151.0	101.4
2003	814.5	314.6	228.7	181.4	104.7
2004	1005.0	322.8	283.9	220.2	104.2
2005	982.9	331.8	288.0	205.0	110.3
2006	1110.2	310.2	356.2	199.7	109.1
2007	1261.5	306.0	429.9	204.0	103.7
2008	1285.2	304.5	405.9	222.2	102.9
2009	1123.1	300.0	346.4	209.3	103.6
2010	1294.9	283.6	302.7	244.0	113.1
2011	1738.1	286.7	465.1	329.9	106.3

2012	1924.7	304.2	516.0	325.5	105.9
2013	2177.4	318.1	572.8	346.3	103.3
2014	2516.5	332.8	605.7	387.8	98.3
2015	2641.7	353.4	550.0	395.4	106.4
2016	2598.3	294.5	486.7	391.8	97.7
2017	2865.3	242.3	469.3	439.3	102.1
2018	2675.0	277.9	415.8	477.1	103.0
2019	2478.4	227.9	410.9	442.4	100.2
2020	2465.4	222.8	399.5	433.8	98.4

Գյուղատնտեսության արտադրողականության վրա ազդող տարբեր գործոնների համատեղ ազդեցությունը գնահատելու համար համակարգչային ծրագրով կատարել ենք ռեգրեսիոն հաշվարկներ: Այստեղ որպես արդյունքային հատկանիշ ընդունել ենք 2000-2020թթ. գյուղատնտեսության արտադրողականության ցուցանիշը (նշանակում ենք Y_i, հազ. դրամ/մարդ): Ինչ վերաբերում է գործոն հատկանիշներին, ապա դրանք հետևյալն են՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները (X_1, հազ. հա), X_2 բուսաբուծության համախառն արտադրանքը (X_2, մլրդ դրամ), անասնաբուծության համախառն արտադրանքը (X_3, մլրդ դրամ), գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսը (X_4, %): Համակարգչային ծրագրով կատարված հաշվարկի արդյունքները ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Կատարված հաշվարկներով ռեգրեսիոն հավասարումը ստացվում է ստորև ներկայացված տեսքով.

$$Y_i=92.05383+0.81080X_1 + 1.04298X_2 +5.90404X_3 - 7.50439X_4$$

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նշանակալիության գործակիցը (F) համաձայն հաշվարկի մոտ է 0-ին: Վերջինս վկայում է, որ գրեթե 100 տոկոս ճշգրտությամբ տվյալ մոդելը ունի վիճակագրական ազդեցություն: R^2 գործակիցը հավասար է 0.97827: Դա ցույց է տալիս, որ արդյունքային ցուցանիշի՝ կախյալ փոփոխականի (գյուղատնտեսության արտադրողականության) փոփոխությունների 97.8%-ը պայմանավորված է մոդելի գործոն հատկանիշներով՝ անկախ փոփոխականներով:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արտադրողականության վրա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, բուսաբուծության համախառն արտադրանքի, անասնաբուծության համախառն արտադրանքի, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսի ներգործությունը բնութագրող ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Ցուցանիշները և դիտարկումները	**Գործակիցները**	P **-ի նշանակությունը**	F **-ի ճշգրտությունը**
Բազմակի -R	0.98908		
R-ի քառակուսին	0.97827		
Նորմավորված R-ի քառակուսին	0.97284		
Ստանդարտ սխալը	129.02488		
Դիտարկումները	21		
Y-հատումը	92.05383	0.92438	0-ին մոտ
Փոփոխականը X_1	0.81080	0.53632	
Փոփոխականը X_2	1.04298	0.02687	
Փոփոխականը X_3	5.90404	9.2541E-09	
Փոփոխականը X_4	-7.50439	0.39893	

Հաշվարկների արդյունքում ստացված ռեգրեսիոն հավասարումը ցույց է տալիս, որ այլ հավասար պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների 1 հազ. հա-ով ավելացումը հանգեցնում է գյուղատնտեսությունում արտադրողականության ավելացմանը՝ 0.811 հազ. դրամ/ մարդ-ով, բուսաբուծության համախառն արտադրանքի ավելացումը 1 մլրդ դրամով նպաստում է գյուղատնտեսության արտադրողականության ավելացմանը՝ 1.043 հազ. դրամ/ մարդ-ով: Անասնաբուծության համախառն արտադրանքի աճն առավել մեծ ազդեցություն է ունենում արտադրողականության ցուցանիշի վրա: Այսպես անասնաբուծության համախառն արտադրանքի ավելացումը 1 մլրդ դրամով նպաստում է արտադրողականության աճին՝ 5.904 հազ. դրամ/մարդ-ով: Ինչ վերաբերվում է գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքսին, ապա վերջինիս 1%-ով ավելացումը հանգեցնում է գյուղատնտեսության արտադրողականության նվազմանը 7.504 հազ. դրամ/ մարդ-ով:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ 2000-2020թթ. հանրապետության գյուղատնտեսության արտադրողականության հետ վիճակագրական կապ ունեցող գործոնների շրջանակը թեպետ առաջին հայացքից եղել է բավականին սահմանափակ (գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություն, բուսաբուծության համախառն արտադրանքի արժեք, անասնաբուծության համախառն արտադրանքի արժեք, գյուղատնտեսական ծառայությունների սակագների ինդեքս), բայցևայնպես խտացված ձևով արտացոլում է նշված

արդյունքային ցուցանիշի մեծության վրա մի շարք այլ գործոնների քանակական ազդեցությունը: Այնպես որ նշված շրջանակի ոչ ընդգրկուն լինելը կարող է և չսահմանափակել գյուղատնտեսության արտադրողականության վրա առանձին գործոնների ազդեցության լիարժեք քանակական գնահատման հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոստանյան Նարեկ. Մրցունակության բարձրացման կառավարման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում. Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2011:
2. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2008, «Տնտեսություն և արժեքներ», հետազոտական կենտրոն, 2008:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2006.- 579 էջ:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011.-624 էջ:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016.- 607 էջ:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021, ՀՀ ՎԿ, Երևան, 2021.- 626 էջ:
7. Պարենային ապահովություն և աղքատություն 2004 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2005.- 58 էջ:
8. Պարենային ապահովություն և աղքատություն 2008 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2009.- 104 էջ:
9. Պարենային ապահովություն և աղքատություն 2013 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014.- 107 էջ:
10. Պարենային ապահովություն և աղքատություն 2018 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, Երևան 2019.- 110 էջ:
11. Պարենային ապահովություն և աղքատություն 2020 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, Երևան 2021.- 110 էջ:

WORKS CITED

1. Kostanyan Narek. Mrcunakut'yan bard'racman kar'avarman himnaharcery' Hayastani Hanrapetut'yan tntesut'yunum. T'eknac'uakan atenaxosut'yun [Problems of Management of Increasing Competitiveness in the Economy of the Republic of Armenia; PhD thesis], Erevan, 2011. (in Armenia)
2. Hayastani azgayin mrcunakut'yan zekuyc, 2008, «Tntesut'yun ev arjheqner», hetazotakan kentron [National Competitiveness Report of Armenia, 2008, "Economics and Values", Research Center,], 2008. (in Armenian)
3. Hayastani vitwakagrakan taregirq, 2006, HH AVC', Erevan, 2006.- 579 e'j:
4. Hayastani vitwakagrakan taregirq [Statistical Yearbook of Armenia], 2011, HH AVC', Erevan, 2011.-624 e'j. (in Armenian)
5. Hayastani vitwakagrakan taregirq [Statistical Yearbook of Armenia], 2016, HH AVC', Erevan, 2016.- 607 e'j. (in Armenian)

6. Hayastani vitwakagrakan taregirq [Statistical Yearbook of Armenia], 2021, HH VK, Erevan, 2021.- 626 e'j. (in Armenian)
7. Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2004 t'. hunvar-dektember [Food Security and Poverty January-December 2004], HH AVc', Erevan 2005.- 58 e'j. (in Armenian)
8. Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2008 t'. hunvar-dektember [Food Security and Poverty January-December 2004], HH AVc', Erevan 2009.- 104 e'j. (in Armenian)
9. Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2013 t'. hunvar-dektember [Food Security and Poverty January-December 2013], HH AVc', Erevan 2014.- 107 e'j. (in Armenian)
10. Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2018 t'. hunvar-dektember [Food Security and Poverty January-December 2018], HH VK, Erevan 2019.- 110 e'j. (in Armenian)
11. Parenayin apahovut'yun ev aghqatut'yun 2020 t'. hunvar-dektember [Food Security and Poverty January-December 2020], HH VK, Erevan 2021.- 110 e'j. (in Armenian)

QUANTITATIVE ASSESSMENT OF THE INFLUENCE OF FACTORS DETERMINING THE COMPETITIVENESS OF AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

LUSINE TSPNETSYAN
National Agrarian University of Armenia, Chair of Management and Policy of Agribusiness, Ph.D.Student, Yerevan, The Republic of Armenia

The purpose of the article is to assess, using a regression model, the degree of influence of various factors on agricultural productivity, one of the main indicators characterizing the competitiveness of agriculture.

The objectives of the article are to clarify the range of factors between which have a statistical relationship with the performance indicator, as well as to conduct a regression analysis that characterizes the influence of these factors:

Dialectical, scientific abstractions, comparative analysis, logical and statistical methods were used while writing the article.

The article assessed the factors that largely determined the changes in the productivity of agriculture in the republic during 2000-2020 period.

As a result of the study, the following main conclusions were drawn:

-97.8% of the changes in the resulting indicator-dependent variable (indicator of productivity in agriculture) are due to the factor characteristics of the model - independent variables:

- an increase in the area under crops by 1 thousand hectares, other things being equal, leads to an increase in productivity in agriculture by 0.811 thousand drams / person,

- an increase in gross crop production by 1 billion drams contributes to an increase in agricultural productivity by 1.043 thousand drams / person,

- the growth of gross livestock production has the greatest impact on the productivity indicator; an increase in this production by 1 billion drams contributes to an increase in productivity by 5.904 thousand drams / person.

- an increase in the index of tariffs for agricultural services by 1% leads to a decrease in agricultural productivity by 7.504 thousand drams / person.

Keywords: *agriculture, competitiveness, indicators, factors, ratio, characteristic, productivity, gross product.*

КОЛИЧЕСТВЕННАЯ ОЦЕНКА ВЛИЯНИЯ ФАКТОРОВ, ОБУСЛАВЛИВАЮЩИХ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЛУСИНЕ ЦПНЕЦЯН
соискатель кафедры управления и политики агробизнеса
Национального аграрного университета Армении,
г. Ереван, Республика Армения

Цель статьи с помощью регрессионной модели оценить степень влияния различных факторов на производительность сельского хозяйства одного из основных показателей, характеризующих конкурентоспособность сельского хозяйства.

Задачи статьи – уточнить круг тех факторов, между которыми и показателем производительности существует статистическая связь, а также провести регрессионный анализ, характеризующий влияние указанных факторов:

В статье использованы диалектические, научные абстракции, сравнительный анализ, логические и статистические методы.

В статье были оценены факторы, которые во многом обусловили изменения производительности сельского хозяйства республики в 2000-2020 годах.

В результате исследования были сделаны следующие основные выводы:

–97,8% изменений результирующего показателя –зависимой переменной (показателя производительности в сельском хозяйстве) – обусловлены факторными характеристиками модели, независимыми переменными;

–увеличение посевных площадей сельскохозяйственных культур на 1 тыс. га в прочих равных условиях приводит к повышению производительности в сельском хозяйстве на 0.811 тыс. драмов/ чел;

– увеличение валовой продукции растениеводства на 1 млрд. драмов способствует росту производительности сельского хозяйства на 1.043 тыс. драмов/ чел;

– рост валовой продукции животноводства оказывает наибольшее влияние на показатель продуктивности; увеличение этой продукции на 1 млрд. драмов способствует росту производительности на 5.904 тыс. драмов/чел.;

– увеличение индекса тарифов на сельскохозяйственные услуги на 1% приводит к снижению производительности сельского хозяйства на 7.504 тыс. драмов/ чел.

Ключевые слова: *сельское хозяйство, конкурентоспособность, показатели, факторы, коэффициент, характеристика, производительность, валовой продукт.*

ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ*

ՀՏԴ 331:005.95/.96 *10.52063/25792652-2022.3.14-232*

ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
կառավարման ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lilit.manukyan357@gmail.com

Առևտրային բանկերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և մարդկային ռեսուրսների կառավարման փոխկախվածության վերաբերյալ ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը հանդիսանում է բանկերի մրցակցային առավելությունը ապահովող հիմնական գործոններից: Սրանով պայմանավորված՝ բանկերում ներդրվել են մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական նոր մոտեցումներ, մասնավորապես՝ տաղանդների կառավարման համակարգ:

Գիտելիքահենք տնտեսության տեսանկյունից տաղանդը հատկապես կարևորվում է որպես մտավոր ներուժի և մտավոր կապիտալի հիմնաբաղադրիչ: Մտավոր ներուժը գործնականում կիրառվող և մարդու կողմից կուտակած մասնագիտական գիտելիքները, հմտությունները, փորձը, ճանաչողական և հոգևոր կարողություններն են, որոնց դրսևորման համար անհրաժեշտ են համապատասխան խթաններ:

Տաղանդների կառավարման նպատակն է բացահայտել աշխատակիցների տաղանդները և գտնել դրանց լավագույն կիրառությունը աշխատողի և ընկերության համար: Նշենք, որ վերջին ժամանակներում տաղանդների կառավարման գործառույթի իրականացման ապահովումը կազմակերպություններում դարձել է առաջնահերթություն, քանի որ այն՝ որպես մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական գործառույթ, կարող է նպաստել աշխատուժի արտադրողականության բարձրացմանը՝ կատարելագործելով տաղանդներին ներգրավելու, զարգացնելու և պահպանելու գործընթացները:

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում ուսումնասիրել և վերլուծել ՀՀ առևտրային բանկերում ներդրված տաղանդների կառավարման համակարգերը՝ վերջիններիս կիրառական արդյունավետության և ներդրման անհրաժեշտության տեսանկյունից: Աշխատանքի խնդիրներն են՝ բացահայտել ՀՀ առևտրային բանկերում մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ առկա մոտեցումները, տաղանդների կառավարման համակարգի առանձնահատկություններն ու կիրառական նշանակությունը, ուսումնասիրել և պարզել, թե ինչպես են տաղանդների հավաքագրման, ընտրության, կադրային ռեզերվի ձևավորման, ուսուցման ու վերապատրաստման գործընթացները նպաստում բանկերի մրցունակության և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

* Հոդվածը ներկայացվել է 29.09.2022թ., գրախոսվել՝ 10.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

Հիմնաբառեր՝ *տաղանդ, տաղանդների կառավարում, համակարգ, մարդկային ռեսուրսներ, առևտրային բանկեր, մրցունակություն, արդյունավետության ցուցանիշներ:*

Ներածություն

Տաղանդների կառավարման հիմնական գաղափարը անձնակազմի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն է: Ընկերությունը պետք է հավասարության գաղափարախոսությունից անցնի տարբերակման գաղափարին, երբ տաղանդավոր մարդկանց առանձնացնում են ընդհանուր զանգվածից՝ խաղադրույքներ և ներդրումներ կատարելով վերջիններիս վրա:

Այս համատեքստում անհրաժեշտ է ընկերություններում վերակառուցել կառավարման ողջ համակարգը՝ համաձայն նոր գաղափարախոսության:

Կազմակերպություններում սովորաբար առանձնացվում են «տաղանդների» երկու կատեգորիաներ.

1. մասնագիտության տաղանդներ՝ մարդիկ, որոնք ունեն յուրահատուկ գիտելիքներ և կարողություններ իրենց ոլորտում,
2. տաղանդավոր մենեջերներ՝ մարդիկ, որոնք ունեն կառավարչական հմտություններ-իրավասություններ, որոնք կարևոր են կազմակերպության կառավարման համար և ունեն աճի ներուժ:

Տաղանդավոր ղեկավարը պետք է ունենա համակարգային մտածողություն և լայնածավալ տեսլական, նպատակին հասնելու հզոր մոտիվացիա, փոփոխությունների պատրաստակամություն և նոր հանգամանքներ ընդունելու կարողություն: Նման մարդը կենտրոնացած է իր զարգացման վրա, պատրաստ է նոր գաղափարների և նորարարությունների (Баттерис 125-126):

Տաղանդների կառավարման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ միտումներով և արտաքին միջավայրի գործոններով՝

1. ժողովրդագրության փոփոխություններ՝ ծերացող աշխատուժ և աշխատուժի շարժունության աճ,
2. աշխատաշուկայում առկա պահանջների փոփոխություններ՝ գիտելիքահենք տնտեսության զարգացում, գլոբալ արտադրանքի ստեղծում, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ առաջընթաց (Okonkwo 1):

Ժողովրդագրության փոփոխությունները, մասնավորապես՝ ծերացող աշխատուժը, մարտահրավեր են դարձել կազմակերպությունների համար:

Ներկայումս կենսաթոշակի անցնող աշխատողները պետք է փոխարինվեն երիտասարդ և հմուտ մասնագետներով, որոնք իրենց մտավոր բարձր ներուժի շնորհիվ կխթանեն կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը և կլրացնեն գիտելիքների ու կարողությունների այն բացը, որը կարող է առաջանալ կենսաթոշակառուներին աշխատանքից ազատելու արդյունքում:

Սակայն մարդկային ռեսուրսների սերնդափոխությունը նոր պահանջներ է ստեղծում կազմակերպությունների համար, քանի որ մտավոր բարձր ներուժ ունեցող երիտասարդ մասնագետները ձգտում են՝ավելի ճկուն, ստեղծագործական բովանդակությամբ և բարձր վարձատրվող աշխատանք ունենալ, որը կհավասարակշռի աշխատանք-կյանք փոխհարաբերությունը և պաշտոնուղում (կարիերա՝ պաշտոնի առաջխաղացումը և մասնագիտական աճը՝ գիտական, ծառայողական, սոցիալական և այլ ոլորտներում) առաջխաղացման հնարավորություն կտա:

Կազմակերպությունների համար մարտահրավեր է նաև աշխատուժի շարժունության (աշխատանքը փոխելու աշխատողների կարողություն) աճը: Վարդանյանը [Վարդանյան 2008: 387-394] նշում է, որ ամենաբարձր շարժունությունն ունեն մտավոր աշխատողները՝ տվյալներ վերլուծողները, արտադրանք մշակողները, պլանավորողները, ծրագրավորողները և հետազոտողները: Մտավոր բարձր ներուժ

ունեցող և հմուտ մասնագետները հեշտությամբ են փոխում իրենց աշխատավայրերը, քանի որ պահանջված են աշխատաշուկայում:

Այնուամենայնիվ, կազմակերպությունների համար մարտահրավեր է ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին շարժունությունը: Մասնավորապես, ուղեղների արտահոսքը (մտավոր բարձր ներուժ ունեցող անհատների, հմուտ մասնագետների արտագաղթ) կարող է ներքին աշխատաշուկայում առաջարկի ու պահանջարկի միջև անհամապատասխանության աճի, ինչպես նաև երկրի տնտեսական կայուն զարգացման հնարավորությունների և հեռանկարների վատթարացման պատճառ դառնալ, քանի որ ամեն տարի հարյուրավոր մասնագետներ, որոնք ունեն մտավոր բարձր ներուժ, արտագաղթում են զարգացած երկրներ, որտեղ նրանց կարող է առաջարկվել բարձր վարձատրությամբ և պաշտոնուղում աճ ապահովող աշխատանք:

Փաստորեն, ուղեղների արտահոսքի հետևանքով կազմակերպություններում կարող է մտավոր բարձր ներուժ ունեցող և հմուտ մասնագետների պակասուրդ առաջանալ, ինչն էլ կնպաստի կազմակերպություններում աշխատակազմի թերհամալրմանը կամ թափուր աշխատատեղերի խնդրի առաջացմանը: Այսպիսով՝ գործատուները մշտապես առերեսվում են իրենց կազմակերպություններից մարդկային ռեսուրսների արտահոսքի հիմնախնդրին: Հետևաբար կազմակերպությունները մտավոր բարձր ներուժ ունեցող մասնագետներին պահպանելու համար պետք է իրականացնեն այնպիսի գործընթացներ, որոնց շնորհիվ այդ մասնագետները կցուցաբերեն բարձր կատարողական, ինչպես նաև կցանկանան պաշտոնուղու աճ ունենալ տվյալ կազմակերպություններում (Беднова 35-38): Կազմակերպությունների գործելաոճը նույնպես փոխվել է, որը նույնպես պայմանավորված է գիտելիքահենք տնտեսության զարգացմամբ:

Գլոբալ արտադրանքի ստեղծման տեսանկյունից առանցքային դեր է վերապահված մտավոր ներուժ ունեցող անհատներին, քանի որ նրանց միջոցով է լավագույն մեթոդաբանությունների հիման վրա մշակվում արտադրանք, որը երաշխավորում է յուրաքանչյուր արտադրանքի նկարագրի համապատասխանությունը որակի, ժամկետների, պլանների խնդիրներին և տարածաշրջանային շուկաների պահանջներին (Վարդանյան 391):

Տաղանդները մրցունակ են իրենց մտավոր ներուժի շնորհիվ, որի գործարկման դեպքում զգալի ներդրումներ են կատարում կազմակերպությունների արդյունավետության ապահովման գործում՝ նախընտրելի և գրավիչ դարձնելով շահակիցների համար: Ռոութվելը նշում է, որ ղեկավարները պետք է վերհանեն, մոտիվացնեն ու զարգացնեն տաղանդներին (Rothwell 1-12) :

Նա առանձնացնում է տաղանդների մի քանի տեսակ.

1. բարձր ներուժով անհատներ (high potentials (HiPos))՝ իրենց աշխատանքը լավ կատարող և հեռանկարային անհատներ,
2. բարձր կատարողականությամբ անհատներ (high performers (HiPers))՝ աշխատանքն ամենաարդյունավետ կերպով կատարող անհատներ,
3. բարձր կարողությամբ մասնագետներ (high professionals (HiPros))՝ կազմակերպության աշխատանքի հատուկ բնագավառի մասին ամենախորքային և մասնագիտական գիտելիքներ ունեցող անհատներ:

Ղեկավարները տաղանդների կառավարման գործառույթի իրականացման շրջանակներում որոշում են, թե կազմակերպության ռազմավարական նպատակների իրագործման համար ինչպիսի տաղանդներ են անհրաժեշտ՝ կատարելով որակական ու քանակական գնահատում և պլանավորում: Այն կազմակերպություններում, որտեղ կարևորվում է տաղանդների մասնագիտական գործունեությունը, պետք է արդյունավետորեն կազմակերպել տաղանդների կառավարման գործընթացը, որի նպատակը կազմակերպությունում տաղանդավոր աշխատուժ ստեղծելը կամ

տաղանդավոր աշխատուժով համալրելն է՝ դիտարկելով տաղանդը որպես կազմակերպական առանցքային ռեսուրս:

Ժամանակակից պայմաններում այս գործընթացները կարևորվում են նաև բանկային համակարգում, և բանկերում մեծ ուշադրություն է դարձվում մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացմանը:

Ինչպես մյուս կազմակերպություններում, այնպես էլ ՀՀ բանկային համակարգում մարդկային ռեսուրսների կառավարումը հանդիսանում է հատուկ գործառույթ, որը զբաղվում է կազմակերպության անձնակազմին առնչվող հարցերով, ինչպիսիք են՝ օրինակ՝ աշխատանքի ընդունում և ազատում, ընթացիկ վերահսկողություն կատարվող աշխատանքների նկատմամբ, բանկային ներուժի հետագա զարգացում, անձնակազմի անվտանգության, առողջության հետ կապված հարցեր, անձնակազմի առաջխաղացում, նպաստներ, կենսաթոշակներ, աշխատակիցների նյութական և բարոյահոգեբանական խրախուսում, արդյունավետ հաղորդակցումներ ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների տեսանկյունից, մարդկային ռեսուրսների վերապատրաստում և այլն:

Որպես բանկային անձնակազմի կառավարման հիմնական նպատակներ՝ կարող ենք առանձնացնել՝

1. շուկայական տնտեսության պայմաններում առևտրային բանկերի միջև բարձր մրցունակության ապահովումը,
2. աշխատանքի արտադրողականության բարձրացումը,
3. աշխատանքային կոլեկտիվի գործունեության բարձր սոցիալական արդյունավետության ապահովումը:

Վերջին տարիներին ՀՀ առևտրային բանկերում ստեղծվել և հաջողությամբ մեկնարկել են մարդկային ռեսուրսների տեղեկատվական նոր համակարգերը (ՄՌՏՀ) կամ տվյալների բանկը, որոնք հնարավորություն են տալիս հավաքել աշխատակիցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, պարբերաբար կատարել թարմացումներ, ներառել ներքին և արտաքին օգտագործման նպատակով կազմվող հաշվետվություններ, կազմել բանկային հաստիքների հետ կապված փաստաթղթեր, ինչպիսիք են՝ աշխատատեղերին ներկայացվող պահանջներ, վթարային տարհանման (էվակուացիայի) ընթացակարգեր և անվտանգության ուղեցույցներ, կատարել նպաստների, կենսաթոշակների վարչարարություն, այդ թվում՝ աշխատակիցների ցուցակագրման, կարգավիճակի փոփոխությունների և անձնական տեղեկությունների թարմացման գործընթացներ: Նման համակարգերի կիրառումը հանդիսանում է կարևոր նախապայման կազմակերպություններում տաղանդների կառավարման համակարգի ներդրման համար, քանի որ վերջինիս միջոցով ձևավորվում է անհրաժեշտ տեղեկատվական բազա (Ստեփանյան 14):

Կազմակերպություններում մարդակենտրոն կառավարման մոդելի կիրառումը, աշխատաշուկայի պահանջների փոփոխությունը, COVID-19-ի համավարակի արդյունքում կիրառված սահմանափակումների ֆոնին ձևավորված նոր աշխատանքային վարքագիծն անհրաժեշտություն են առաջացրել վերանայել անձնակազմի կառավարման մոտեցումները՝ ուշադրությունը կենտրոնացնել նոր՝ տաղանդների կառավարման հայեցակարգի ներդրման և կիրառման ուղղությամբ: Այս առումով ՀՀ բանկային համակարգում Ամերիաբանկ ՓԲԸ-ն հանդիսանում է առաջամարտիկ, քանի որ այստեղ դեռևս 2019թ.-ից է ներդրվել տաղանդների կառավարման համակարգ՝ համապատասխան աշխատանքներով զբաղվող բաժինը վերանվանելով տաղանդների կառավարման և ծառայությունների բաժին, ինչն էլ հանդիսանում է հոդվածի ուսումնասիրության առարկան:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հոդվածի համար որպես տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել տաղանդների կառավարման գործընթացին վերաբերող հայրենական և արտասահմանյան

գրականությունը, գիտական հրապարակումներում ներկայացված հետազոտողների վերլուծությունները, համացանցային հրապարակումներն ու տվյալները: Ինչպես նաև տեղեկատվություն է ստացվել մարդկային ռեսուրսների կառավարումը կարգավորող ՀՀ օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տեղեկագրերից և ՀՀ առևտրային բանկերի պաշտոնական էլեկտրոնային կայքերից: Ուսումնասիրության մեթոդներն ընտրվել են՝ ելնելով հետազոտության օբյեկտից և նպատակից և հիմնականում կիրառվել են ընդհանուր գիտական վերլուծության, նկարագրական, ընդհանրացումների, խմբավորումների մեթոդները: Արդյունքում կատարվել են ընդհանրացումներ և եզրահանգումներ բանկերում տաղանդների կառավարման համակարգի առանձնահատկությունների, ներդրման անհրաժեշտության և արդյունքայնության վերաբերյալ:

ՄՌԿ համակարգերի առանձնահատկություններն ուսումնասիրվել են Ամերիաբանկ ՓԲԸ-ի և ՀՀ ԿԲ-ի օրինակով:

Վերլուծություն: Ոլորտային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում այս պահի դրությամբ գործում են գրանցված թվով 17 առևտրային բանկ (ՀՀ ԿԲ կայք/ ֆինանսական հաստատություններ/բանկեր)[1]: Պարզ դարձավ նաև այն, որ դրանցից ընդամենը վեցն են (Ակբա Կրեդիտ Ագրիկոլ ՓԲԸ, Ամերիաբանկ ՓԲԸ, Ինեկոբանկ ՓԲԸ, Մելլաթ բանկ ՓԲԸ, ԱյԴի բանկ ՓԲԸ և Հայբիզնեսբանկ ՓԲԸ) իրենց կայքերում պաշտոնական տեղեկատվություն հրապարակում մարդկային ռեսուրսների կառավարման սկզբունքների և կադրային քաղաքականության իրականացման վերաբերյալ: Իսկ բանկերից միայն Ամերիաբանկ ՓԲԸ-ում է անձնակազմի կառավարման հարցերով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը վերանվանվել տաղանդների կառավարմամբ:

Աղյուսակ 1[2]

ՀՀ առևտրային բանկերում մարդկային ռեսուրսների կառավարմամբ զբաղվող ստորաբաժանումների անվանումները

№	ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ
1	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն
2	**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**	Տաղանդների կառավարման և ծառայությունների դեպարտամենտ
3	**«ԱյԴի Բանկ» ՓԲԸ**	Անձնակազմի կառավարման վարչություն
4	**«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն
5	**«Արդշինբանկ» ՓԲԸ**	Անձնակազմի կառավարման վարչություն
6	**«Արմսվիսբանկ» ՓԲԸ**	-
7	**«Արցախբանկ» ՓԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
8	**«ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
9	**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**	Անձնակազմի կառավարման դեպարտամենտ
10	**«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
11	**«Ինեկոբանկ» ՓԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման ծառայություն
12	**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**	Գրասենյակային գործառնությունների բաժին (աշխատակազմ)
13	**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**	Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն
14	**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ**	Աշխատակազմ
15	**«Մելլաթ Բանկ» ՓԲԸ**	-
16	**«Յունիբանկ» ԲԲԸ**	Անձնակազմի կառավարման տնօրինություն
17	**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ**	-

[1] https://www.cba.am/am/sitepages/fscfobanks.aspx [Վերջին մուտք 15.09.2022]

[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Ուսումնասիրություն է կատարվել նաև Linkedin սոցիալական ցանցում՝ աշխատաշուկայում տաղանդների կառավարման գծով մասնագետների ոլորտային պատկանելիության և աշխարհագրական տարածվածության վերլուծության նպատակով:

Linkedin սոցիալական ցանցում talent acquisition, talent management, talent sourcer, recruiter (տաղանդների ներգրավման մասնագետներ, տաղանդների որոնման պատասխանատուներ, հավաքագրման մասնագետներ) հաստիքների որոնման արդյունքները ցույց են տալիս, որ ներկա պահին ՀՀ-ում նշված մասնագետների (օգտատերերի) 70 տոկոսից ավելը Երևան քաղաքից են (աղյուսակ 2): Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ-ում ոլորտն առավել զարգացած և տարածված է մայրաքաղաք Երևանում, ինչն էլ խնդիր է հանդիսանում մարզերում ՄՌԿ ոլորտի զարգացման, մասնագետների կարիերայի աճի ապահովման հնարավորության տեսանկյունից:

Աղյուսակ 2[1]
Երևան քաղաքում տաղանդների կառավարման մասնագետների կենտրոնացվածության վերլուծություն (ըստ Linkedin սոցիալական ցանցի տվյալների)

ՀԱՍՏԻՔ /բանալի բառեր/	ԸՆԴԱՄԵՆԸ ՕԳՏԱՏԵՐ	ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
Talent acquisition -տաղանդների որոնման պատասխանատուները	1700	1300
Talent management -տաղանդների կառավարում	778	567
Talent sourcer (տաղանդներ որոնման պատասխանատուներ)	82	64
Recrutier (համալրման մասնագետ)	830	629

Հաջորդիվ վերլուծություն է իրականացվել նշված մասնագետների ոլորտային պատկանելիության վերաբերյալ: Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից երևում է, որ մասնագետների մեծ մասն աշխատում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, ինչն էլ խոսում է ՀՀ-ում տաղանդների կառավարման գործընթացների բևեռայնացված կիրառության և այլ ոլորտներում վերջինիս կարևորության թերագնահատման մասին:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում դեռևս միայն Երևան քաղաքում և շատ քիչ կազմակերպություններում են ներդրվել տաղանդների կառավարման համակարգեր, իսկ մարզերում ՄՌԿ համակարգերն անկատար են, չեն զարգացել և ադապտացվել ժամանակի պահանջներին՝ դեռևս մնալով կադրերի կառավարման հայեցակարգի տիրույթում:

Աղյուսակ 3[2]
ՀՀ-ում տաղանդների կառավարման մասնագետների վերլուծություն ըստ աշխատանքային ոլորտի (բնագավառի)
(ըստ Linkedin սոցիալական ցանցի տվյալների)

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից
[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

ՀԱՍՏԻՔ /բանալի բառեր/	ԸՆԴԱ-ՄԵՆԸ ՕԳՏԱ-ՏԵՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ (ԲՆԱԳԱՎԱՌ)					
		ՏՏ	ՄՌԿ	Անձնակազմի հավաքագրում	Համակարգ-չային ծառա-յություններ	Բան-կային ոլորտ	Համա-ցանց
Talent acquisition (տաղանդների ներգրավման մասնագետներ)	1700	352	237	167	93	66	24
Talent management (տաղանդների կառավարում)	778	197	124	70	72	38	5
Talent sourcer (տաղանդներ որոնման պատասխանատուներ)	82	28	20	13	5	2	2
Recrutier (համալրման մասնագետ)	830	175	-	99	52	10	16

Լինքդինյան վերլուծության տվյալների համաձայն՝ տաղանդների ներգրավման մասնագետներից (օգտատերերից) ընդամենը 66-ն են հանդիսանում (ՀՀ-ում Linkedin սոցիալական ցանցում գրանցված տաղանդների ներգրավման մասնագետների (talent acquisition) 3,8%-ը) բանկային ոլորտի աշխատակիցներ (Ամերիաբանկ ՓԲԸ, Ինեկոբանկ ՓԲԸ, Էվոկաբանկ, Արդշինբանկ): Նշվածներից 14-ը կամ 21.5%-ը աշխատում են Ամերիաբանկ ՓԲԸ-ում, իսկ 13-ը կամ 19,6%-ը՝ Ինեկոբանկ ՓԲԸ-ում:

Այս տվյալները նույնպես հիմք են հանդիսացել տաղանդների կառավարման համակարգի առանձնահատկությունները տվյալ բանկերի օրինակով ուսումնասիրելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, միայն Ամերիաբանկ ՓԲԸ-ում է անձնակազմի կառավարման հարցերով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը վերանվանվել տաղանդների կառավարմամբ: Այստեղ աշխատակիցների պահպանման, զարգացման համապարփակ ռազմավարության շրջանակներում ներդրվել են արդյունավետության կառավարման համակարգի հետ փոխկապակցված մի շարք գործընթացներ, ինչպիսիք են՝ տաղանդների կառավարումը, փոխարինելիության ապահովումը: Տաղանդների կառավարման նպատակն է բացահայտել առավել արդյունավետ աշխատակիցներին, մշակել նպատակային զարգացման ծրագրեր, պահել, մոտիվացնել աշխատակիցներին: Փոխարինելիության կառավարման նպատակն է բացահայտել, զարգացնել ներքին տաղանդներին՝ բիզնեսի անընդհատության ու աճի տեսանկյունից առավել կարևոր նշանակություն ունեցող դերերի համար:

Բանկում պահպանվում են էթիկական արժեքները, հարգանքը մարդու իրավունքների հանդեպ, կարևորվում է աշխատակիցների ձայնը: Ներդրվել են

բողոքների ներկայացման ընթացակարգեր, իրականացվում է գնահատում՝ աշխատակիցների ներգրավվածության մակարդակը բացահայտելու համար, հետագայում, տվյալների վերլուծության արդյունքում մշակվում են գործողությունների նպատակային ծրագրեր:

Բանկում սահմանված են հստակ վարքի կանոններ, վարվում է ամենօրյա ներքին հաղորդակցություն, կազմակերպվում են կորպորատիվ միջոցառումներ, բարեկեցության, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր: Ամերիաբանկն առաջնորդվում է թափանցիկության կանոնով անձնակազմի կառավարմանը վերաբերող բոլոր գործընթացներում, այդ թվում՝ գնահատման, աշխատակիցների պահպանման, աճի և առաջխաղացման հարցերում:

Ամերիաբանկը տաղանդների կառավարման ռազմավարության մեջ մեծ մասնաբաժին է հատկացնում տաղանդների ուսուցմանն ու զարգացմանը:

Ընդհանուր առմամբ, 2021թ. կազմակերպվել է ավելի քան 250 դասընթաց, ինչը մոտ 2 անգամ ավել է նախորդ տարվա համեմատ (160 դասընթաց).

- Մասնակցություններ ուսուցման ծրագրերում՝ 7,118:
- Մասնակցության ժամեր՝ 27000:
- Մեկ աշխատակցին բաժին ընկնող վերապատրաստումների միջին քանակը՝ 6:
- Մեկ աշխատակցին բաժին ընկնող վերապատրաստումների միջին ժամաքանակը՝ 23:
- Դասընթացների ժամաքանակի 44%-ը նվիրված է եղել ներքին վերապատրաստումներին, Բանկի պրոդուկտների և գործընթացների մասին գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացմանը:
- Դասընթացների 28%-ը ծախսվել է անձնակազմի մասնագիտական զարգացման և հավաստագրումների վրա:
- Իսկ 15%-ը թվային հմտությունների զարգացման և տեխնոլոգիական ոլորտի տարբեր միջոցառումների վրա (Ամերիաբանկ ՓԲԸ տարեկան հաշվետվություն 2021) [1]:

Աշխատակիցների վերապատրաստումների իրականացման շրջանակներում Ամերիաբանկը համագործակցում է ինչպես հայկական, այնպես էլ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ՝ իր աշխատակիցներին ընձեռելով հնարավորություն ակտիվորեն մասնակցելու հեռավար ուսուցման ծրագրերի, ստանալու միջազգային ճանաչում ունեցող այնպիսի հաստատությունների հավաստագրեր, ինչպիսիք են՝ Հարվարդի բիզնես դպրոցը, Սթենֆորդի բիզնես դպրոցը, Chartered Management Institution-ը, CFA Institute-ը, ACCA-ը, PMP-ն և այլն: Բացի այդ, բարձր և միջին օղակի ղեկավարության համար պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ՝ հրավիրյալ մասնագետների ներգրավմամբ, որոնց թվում են ինչպես միջազգային ճանաչում ունեցող մասնագետներ, պրոֆեսորներ, այդ թվում նաև՝ հայտնի բիզնես դպրոցների հիմնադիրներ:

Աշխատակիցների մոտիվացիայի, հավատարմության, ներգրավվածության բարձր մակարդակի ապահովման համար Ամերիաբանկը տրամադրում է արտոնությունների մեծ փաթեթ և ընկալվում որպես Հայաստանի ֆինանսական շուկայի լավագույն գործատուն: Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է հատուկ զեղչեր տարբեր ռեստորաններում, խանութներում ու մշակութային վայրերում, սպորտային ակումբների հատուկ առաջարկներ՝ ի նպաստ առողջ կենսակերպի, առողջության, ճանապարհորդության, դժբախտ պատահարներից ապահովագրություն, ինչպես նաև ապահովագրություն աշխատակիցների ընտանիքի անդամների համար, անաշխատունակության, երեխայի խնամքի վճարվող

[1] https://ameriabank.am/userfiles/file/annual-report-2021-arm.pdf [Վերջին մուտք 19.09.2022]

արձակուրդ, տարեկան 40 ժամվա բացակայություն անձնական նպատակների համար՝ աշխատավարձի պահպանմամբ, ֆինանսական նվեր ամուսնության ու երեխա ունենալու դեպքում: Բացի այդ, աշխատակիցներին առաջարկվում է բանկային գործառնությունների արտոնյալ պայմաններ, ինչը նրանց թույլ է տալիս օգտվել բանկի ծառայություններից՝ նվազագույն ծախս կատարելով, իսկ շատ հաճախ նաև բոլորովին անվճար:

Աշխատակիցների ընդհանուր քանակը 2021թ. վերջի դրությամբ կազմում է՝ 1157 մարդ, որոնցից՝ 778-ը, կամ 67% իգական սեռի ներկայացուցիչներ, 379 կամ 33%՝ արական:

Աշխատակիցների տարիքային միջակայքը՝ 18-60 տարեկանն է, գերակշռող տարիքային խումբը՝ 25-35 տարեկան աշխատակիցներն են՝ թվով 626 մարդ:

Ինչպես վկայում են հասանելի վիճակագրական տվյալները, Ամերիաբանկում ակնհայտ է երիտասարդ անձնակազմի բարձր տեսակարար կշիռը (25-35 տարեկան), ինչը կազմում է ընդհանուր անձնակազմի 54.1%-ը:

Տաղանդների կառավարման տեսանկյունից սա բացասական ցուցանիշ է, քանի որ երիտասարդ աշխատակիցներն ավելի մեծ հակվածություն ունեն աշխատանքային պայմանների և աշխատավայրի փոփոխման նկատմամբ, բացի այդ, հնարավոր է, որ վերջիններիս ընտանեկան կարգավիճակի, հավանական բնակության վայրի փոփոխության և այլ պատճառներով նրանց փոխարինման անհրաժեշտություն առաջանա:

Հաջորդիվ վերլուծություն է իրականացվել Ինեկոբանկ ՓԲԸ-ում, որն իր գործունեության իրականացման համար որդեգրել է թիմային աշխատանքի, թափանցիկության, պրոֆեսիոնալիզմի, ազատության և ազնվության արժեքները: Այստեղ շեշտադրվում է յուրաքանչյուր աշխատակցի կարևորությունը՝ բանկի նպատակների իրագործման տեսանկյունից: Իսկ բանկն իր հերթին ամեն ինչ անում է, որ յուրաքանչյուր աշխատակից իրեն զգա «Ինեկոընտանիքի» անդամ՝ ապահովելով կարիերայի շարունակական աճ և մասնագիտական զարգացում:

Ուսումնասիրելով բանկում անձնակազմի ընտրության ընթացակարգը, կարող ենք փաստել, որ այստեղ ներդրված է բավական մանրակրկիտ մշակված համակարգ, որը թույլ է տալիս ընտրել լավագույններին: Հատկանշական է, որ բանկում ինքնակենսագրականների ընդունման, թեստավորման փուլերին հաջորդում են մի քանի հարցազրույցներ՝ թեկնածուի անձնային որակներին, աշխարհայացքին և արժեհամակարգին ծանոթանալու նպատակով: Սա կարևոր գործոն է հանդիսանում ճիշտ ընտրություն կատարելու համար, սակայն այստեղ խնդիր է գործընթացի տևական բնույթը, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել թեկնածու վերջնական որոշման կայացման վրա:

Ինչպես գիտենք, տաղանդների ներգրավման համար շատ կարևոր են նաև կազմակերպության կողմից առաջարկվող արտոնությունների փաթեթները: Ինեկոբանկն իր աշխատակիցներին առաջարկում է.

- առողջության ապահովագրական ամբողջական փաթեթ,
- հասանելիություն լավագույն բանկային ծառայություններին՝ արտոնյալ պայմաններով,
- հավելյալ ազատ օրերի հնարավորություն,
- մասնագիտական և անձնական զարգացմանն աջակցություն՝ օնլայն ուսուցման, լավագույն փորձի փոխանակման, ինքնակառավարվող ուսուցման հնարավորությունների տրամադրմամբ:

Վերջիններիս ներգրավումից զատ, առավել մեծ ուշադրություն է դարձվում կազմակերպություններում տաղանդների պահպանմանը, ինչի համար կարևոր պայման է հանդիսանում աշխատակիցների շարունակական զարգացման

ապահովումը, այդ իսկ պատճառով բանկում ներդրվել է կարիերայի զարգացման եռաստիճան համակարգ (սկսնակներ, մասնագետներ, ղեկավարներ):

«Սկսնակների» և «մասնագետների» վերապատրաստումներն իրականացվում են հետևյալ հինգ փուլերով.

• անհատական վերապատրաստման պլան – այստեղ կախված վերապատրաստվող մասնագետի մասնագիտական ոլորտից՝ վերջինիս համար կազմվում է անհատական վերապատրաստման ծրագիր,

• վերապատրաստման գործընթաց – կախված աշխատակցի՝ «սկսնակ» կամ «մասնագետ» լինելու հանգամանքից՝ վերապատրաստման գործընթացը համապատասխանաբար տևում է երկու և երեք ամիս: Այս ընթացքում աշխատակիցներն այցելում են Ինեկոբանկի տարբեր մասնաճյուղեր ու ստորաբաժանումներ, ստանում հիմնական գիտելիքներ, մասնակցում օնլայն հարթակում իրականացվող դասընթացներին, ձեռք են բերում փորձ՝ աշխատելով առաջատար մասնագետների հետ,

1. ընթացիկ վերահսկողություն – ընթացիկ վերահսկողությունը նպատակ ունի ապահովելու վերապատրաստման գործընթացի անխափան ընթացքն ու որակյալ արդյունքը,

2. գիտելիքների նախնական ստուգում - այս փուլում իրականացվում է հմտությունների և մասնագիտական գիտելիքների ստուգում,

3. վերապատրաստման վերջնական ամփոփում – ամփոփիչ թեստավորում ու հարցազրույց:

Կարևոր է նաև նշել, որ փորձառու մասնագետների զարգացման համար կիրառվում են վերապատրաստումների մի շարք ծրագրեր, ինչպիսիք են՝ մասնագիտական զարգացումը, որակավորման բարձրացումը, միջազգային փորձի փոխանակումը, վերամասնագիտացումը, օտար լեզուների ուսուցումն ու հմտությունների զարգացումը:

Ինեկոբանկը կարևորում է բանկի ղեկավար անձնակազմի մշտական զարգացումը, ուստի մենք նպաստում ենք նրանց գիտելիքների և գործնական հմտությունների շարունակական ավելացմանը, մասնագիտական աճին և որակավորման բարձրացմանը: Ինեկոբանկում պարբերաբար կազմակերպվում են նրանց հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, նրանց հնարավորություն է ընձեռվում մասնակցելու բանկի գործընկեր միջազգային տարբեր կառույցներում փորձի փոխանակման ծրագրերին ու վերապատրաստումներին[1] :

Այս ամենով հանդերձ, բանկի տարեկան և եռամսյակային հաշվետվություններում արտացոլված չեն թվային տվյալներ՝ աշխատակիցների ուսուցման և վերապատրաստումների գծով իրականացվող ծախսերի վերաբերյալ, ինչը խնդիր է հանդիսանում ամբողջական նկարագրի տրման համար:

Այնուհանդերձ, համեմատական վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ-ում բանկերը, որպես գործատու, բարձր հեղինակություն և գրավչություն ունեցող կազմակերպություններ են. դրանցում բավական ցածր է կադրերի հոսունության գործակիցը, ինչն էլ մեծապես պայմանավորված է նաև մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմամբ:

Եզրակացություն

Ներկայիս սոցիալ-տնտեսական նորարարական փոփոխությունների, արտադրության ինֆորմատիզացման (տեղեկատվական ապահովման) և ինտենսիֆիկացման, տնտեսության և հասարակական կյանքի տարբեր ոլորտների միջև փոխհարաբերությունների զարգացման պայմաններում առաջանում է ոչ միայն

[1] https://www.inecobank.am/hy/career-at-inecobank/career-development [Վերջին մուտք 29.10.2022]

անձնակազմի բարձր որակավորման, այլ նաև նրա առանձնահատկությունների կառավարման անհրաժեշտություն, որն էլ որակավորման հետ միասին կազմում է մարդկային կապիտալը: Այս գիտելիքները, հմտություններն ու կարողությունները կազմում են անձնակազմի արդի զարգացման մակարդակը և ապահովում են գոյություն ունեցող պայմաններում ու իրավիճակներում կազմակերպությունների արդյունավետ գործունեություն:

• Այսպիսով՝ տաղանդների կառավարումը բանկային համակարգում հանդիսանում է կարևոր գործոն, ինչպես աշխատակիցների ներգրավման ու պահպանման, աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման, այլ նաև մրցունակության բարձրացման համար:

• Բանկային համակարգում ևս մեկ մարտահրավեր է արհեստական բանականության կիրառումը, սակայն կարող ենք փաստել, որ առանց բարձր որակավորում ունեցող կադրերի, այնուամենայնիվ, դժվար կլինի ապահովել աշխատանքի բարձր արդյունքներ:

Կարող ենք առանձնացնել հետևյալ խնդիրները.

• Սպասարկման ոլորտում տարբեր մասնագիտությամբ աշխատակիցների ներգրավումը՝ մասնագետների կրճատման միտումը:

• Բանկի՝ որպես գործատուի գրավչության նվազման միտումը՝ պայմանավորված ազատ աշխատաժամանակի կառավարման պահանջներով, մարդկանց ինքնադրսևորման և ինքնաարտահայտման պահանջմունքի դերի բարձրացմամբ:

• Բանկային համակարգում աշխատանքի ընդունման պրակտիկ փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ տաղանդների կառավարման արդյունավետ համակարգի ներդրման համար բանկերը նախ և առաջ պետք է լուծեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատանքի ընդունման ընթացակարգերի միջև բավական մեծ ժամանակային միջակայքը (անկետավորումից մինչև հարցազրույց ժամանակահատվածի միջին տևողությունը կազմում է մոտ 1-2 ամիս), ինչը խնդիր է հանդիսանում տաղանդների ներգրավման տեսանկյունից:

• Հաջորդ խնդիրը որպես այդպիսին հանդիսանում է հարցազրույցների ժամանակ անկախ օրենսդրական կարգավորումներից, թափուր հաստիքի համար դիմած թեկնածուներին նեղ անձնական բնույթի հարցեր տալը, այնպիսիք, ինչպիսիք են՝ ամուսնական կարգավիճակը, երեխաների առկայությունը և այլն, որը ոչ պրոֆեսիոնալ մոտեցում է:

Խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներն են.

✓ Սկսնակ մասնագետների համար ուսուցման և վերապատրաստման ծրագրերի իրականացում, վճարովի աշխատանքային փորձաշրջանի հնարավորություն:

✓ Աշխատակիցներին հերթափոխի հնարավորության ընձեռում, լրացուցիչ ազատ օրերի տրամադրում՝ որպես բարձր կատարողականի ապահովման արդյունք:

✓ Աշխատանքի ընդունման ընթացակարգի պարզեցում, փուլերի միջև ժամանակահատվածի կրճատում, թեկնածուների ռեզերվի ստեղծում, հավաքագրման մասնագետների ներգրավում:

✓ Աշխատանքի ընդունման գործընթացների պրոֆեսիոնալ կազմակերպում. հարցազրույցների անցկացման համար անհրաժեշտ մասնագիտական թիմի ձևավորում (ՄՌԿ մասնագետ ոլորտային մասնագետ, հոգեբան, սոցիոլոգ, ղեկավար անդամ), թեկնածուների հետ հետադարձ կապի ապահովում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ տաղանդների կառավարման ճիշտ և մանրակրկիտ մշակված համակարգը էապես կարող է բարելավել բանկերում

աշխատակիցների արտադրողականությունը՝ ուղղակիորեն ազդելով գործունեության ցուցանիշների արդյունավետության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան, Մարի. *«Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման ուղղությունները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)»,* 2020:
2. Վարդանյան, Գագիկ. *Գիտելիքահենք տնտեսություն: Հնարավորություններ և մարտահրավերներ*. Երևան, «Գիտություն» 2008:
3. Баттерис Маргарет. *Корпоративные бриллианты: как удерживать талантливых сотрудников в компании:* [пер. с англ. Е. И. Смыковская]. ГроссМедиа 2005.
4. Беднова Наталия. */Инновационные технологии в управлении персоналом по формированию кадрового резерва. Технология «Talent management» или «Управление талантами»*. / Молодежь в науке: новые аргументы. Сборник научных работ И-го Международного конкурса. Липецк 2014.
5. Okonkwo David. *"Talent Management in the UK Higher Education Institutions - Setting a Research Agenda"*. EIASM's 4th Workshop on Talent Management. Spain, Valencia. 24th-25th September, 2015.
6. Rothwell William. *"Introducing Talent Management"*. A Dale Carnegie White Paper, 2008.
7. Introducing Talent Management, A Dale Carnegie White Paper https://www.dalecarnegie.id/uploads/2014/02/Introducing-Talent-Management.pdf Accessed 10.09.2022
8. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք https://www.cba.am [Վերջին մուտք 15.10.2022]
9. ՀՀ ԿԲ Ռազմավարություն 2021 https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Strategy%202021.pdf [Վերջին մուտք 20.10.2022]
10. Ամերիաբանկ ՓԲԸ կայք https://ameriabank.am/ [Վերջին մուտք 19.10.2022]
11. Ամերիաբանկ ՓԲԸ տարեկան հաշվետվություն 2021 https://ameriabank.am/userfiles/file/annual-report-2021-arm.pdf [Վերջին մուտք 19.10.2022]
12. Ինեկոբանկ ՓԲԸ կայք https://www.inecobank.am/hy/career-at-inecobank [Վերջին մուտք 29.10.2022]

WORKS CITED

1. Ameriabank P'BY' kayq, [Ameriabank CJSC website], https://ameriabank.am/ Accessed 19.10.2022 (in Armenian)
2. Ameriabank P'BY' tarekan hashvetvut'yun 2021, [Annual report of Ameriabank CJSC], https://ameriabank.am/userfiles/file/annual-report-2021-arm.pdf Accessed 19.10.2022 (in Armenian)
3. Batteris Margaret., Korporativnye brillianty: Kak uderzhivat' talantlivyh sotrudnikov v kompanii: [per. s angl. E. I. Smykovskaja]. GrossMedia. ["Corporate MVPs: Managing Your Company's Most Valuable Performers"], 2005. (In Russian)
4. Bednova Natalija, Innovacionnye tehnologii v upravlenii personalom po formirovaniju kadrovogo rezerva. Tehnologija «Talent management» ili «Upravlenie

talantami». Molodezh' v nauke: novye argumenty. Sbornik nauchnyh rabot I-go Mezhdunarodnogo konkursa. Lipeck. ["Innovative Technologies in Personnel Management for the Formation of the Personnel Reserve. Technology "Talent Management" or "Talent Management"]. 2014. (In Russian)

5. HH Kentronakan banki pashtonakan kayq, [Official website of the Central Bank of RA], https://www.cba.am, 15.10.2022 (in Armenian)

6. HH KB R'azmavarut'yun 2021, [RA CBI Strategy], https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Strategy%202021.pdf, Accessed 20.09.2022

7. Step'anyan Mari, «Mardkayin r'esursneri kar'avarman ardyunavetut'yuny' ev dra bard'racman ughghut'yunnery' (HH ar'evtrayin bankeri nyut'erov)», ["The Effectiveness of Human Resources Management and Directions for its Improvement (on the materials of RA commercial banks)]" 2020. (In Armenian)

8. Vardanyan Gagik, Giteliqahenq tntesut'yun: Hnaravorut'yunner ev martahraverner. Erevan, «Gitut'yun». [Knowledge-based Economy. Opportunities and Challenges], Yerevan, Publishing House "Gitutiun", 2008. (In Armenian)

FEATURES OF THE TALENT MANAGEMENT SYSTEM IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA

LILIT MANUKYAN

Armenian State University of Economics,
Chair of Management, Ph.D. Student,
Yerevan, The Republic of Armenia

Studies of the results of financial and economic activities of commercial banks and the interdependence of human resource management indicate that effective human resource management is one of the main factors ensuring the competitive advantage of banks. In this regard, banks have introduced new strategic approaches to human resource management, in particular, a talent management system.

Intellectual potential is the professional knowledge, skills, experience, cognitive and spiritual abilities used in practice and accumulated by a person, for the manifestation of which appropriate incentives are needed.

It is noteworthy that in recent years, ensuring the implementation of the talent management function has become a priority in organizations since it, as a strategic human resource management function, can contribute to improving labor productivity by improving the processes of attracting, developing, and retaining talent.

This article aims to study and analyze the talent management systems implemented in commercial banks in the Republic of Armenia from the point of view of their applied effectiveness and the need for implementation. The tasks of the work are to identify the existing approaches to the management of human resources in RA commercial banks, the features and practical significance of the talent management system, to study and find out how the processes of talent recruitment, selection and personnel reserve formation, education and training contribute to increasing the competitiveness and efficiency of the banks.

Keywords: *talent, talent management, system, human resources, commercial banks, competitiveness, performance indicators.*

ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ТАЛАНТАМИ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЛИЛИТ МАНУКЯН
соискатель кафедры управления
Армянского государственного университета экономики,
г. Ереван, Республика Армения

Исследования результатов финансово-хозяйственной деятельности коммерческих банков и взаимозависимости управления человеческими ресурсами свидетельствуют о том, что эффективное управление человеческими ресурсами является одним из основных факторов, обеспечивающих конкурентное преимущество банков. В связи с этим в банках внедрены новые стратегические подходы к управлению человеческими ресурсами, в частности, система управления талантами. Интеллектуальный потенциал – это профессиональные знания, навыки, опыт, когнитивные и духовные способности, используемые на практике и накопленные человеком, для проявления которых необходимы соответствующие стимулы. Стоит обратить внимание на то, что в последнее время обеспечение реализации функции управления талантами стало приоритетом в организациях, поскольку она как стратегическая функция управления человеческими ресурсами может способствовать повышению производительности труда за счет совершенствования процессов привлечения, развития и сохранения талантов.

Данная статья преследует цель изучить и проанализировать внедренные в коммерческие банки РА системы управления талантами с точки зрения их прикладной эффективности и необходимости внедрения. Задачи работы: выявить существующие подходы к управлению человеческими ресурсами в коммерческих банках РА, особенности и практическое значение системы управления талантами, изучить и выяснить, как проходят процессы привлечения, отбора кадров, формирования кадрового резерва, а также образование и обучение, способствующее повышению конкурентоспособности и эффективности банков.

Ключевые слова: *талант, управление талантами, система, человеческие ресурсы, коммерческие банки, конкурентоспособность, показатели эффективности.*

ДЕТЕРМИНАНТЫ КАЧЕСТВА АКТИВОВ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ*

УДК 336.7 *10.52063/25792652-2022.3.14-246*

МАРТИН ТОНИКЯН
аспирант 3-го курса обучения института экономики и бизнеса Российско-Армянского государственного университета, г. Ереван, Республика Армения
martintonikyan96@gmail.com

Целью данного исследования стало выявление детерминантов качества активов в банковской системе. Для достижения поставленной цели необходимо было провести качественный и количественный анализы индикаторов качества активов в банковской системе, а также выявление детерминантов качества активов в банковской системе на примере стран с различным экономическим статусом.

Для достижения цели и задач исследования были использованы корелляционный, регрессионный анализы, а также проведен качественный анализ полученных данных.

Показано, что NPL сильно связан со структурой экономики и страны с более высоким показателем ВВП на душу населения имеют лучшее качество активов в целом. NPL имеет довольно сильную автокорреляцию, что означает качество активов не меняется быстро и нужны структурные изменения для того, чтобы изменить качество активов в любую сторону. На основании результатов исследования можно заключить, что неработающие кредиты очень тесно связаны с бизнес-циклами в экономике, а также тот факт, что страны не должны использовать одинаковую методологию для расчета неработающих кредитов. Более того, методология расчета неработающих кредитов и качества активов в целом должна включать в себя макроэкономические показатели, так как качество активов в банковской системе имеет очень сильную корреляцию с общими процессами в экономике каждой страны.

Ключевые слова: *банковская система, качество активов, неработающие кредиты, макроэкономические факторы, бизнес-цикл, процентные ставки, государственный долг*

Актуальность исследования. В современном изменяющемся мире кредитный риск является одним из самых значимых и сложных экономических проблем для стран с разным экономическим статусом, для решения которых необходим детальный анализ банковской системы (Vuković и Domazet 331-348). Для понимания влияния экономических и неэкономических факторов на качество активов банковских систем был проведен обзор литературных ресурсов. Анализ изученных нами источников выявил, что основным индикатором оценки состояния банковской системы в мире и, в частности, в Армении, являются неработающие

* Հոդվածը ներկայացվել է 11.09.2022թ., գրախոսվել՝ 20.09.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

кредиты. Однако необходимо отметить, что NPL – это преследующий показатель, то есть он меняется уже после того, как система и банковский сектор, в целом, находятся в плохом состоянии во время кризисов.

Многие центральные банки и регуляторы во всем мире следят за качеством активов, используя только NPL. Более того, не все страны используют одинаковое определение для данного показателя (Bholat et al. 1-22). Несмотря на то, что, начиная с Финансового Кризиса 2007 года, все регуляторные организации и бухгалтерские компании пытаются прийти к одинаковому определению, используемому всем миром этого сделать пока не удалось. На данный момент страны, которые отчитываются перед IMF под FSI (Financial Soundness Indicators), следующие кредиты классифицируют как NPL (Ari et al. 40):

1. Проценты и материнская сумма не были выплачены более 90 дней,
2. Суммы, равные более 90 дням процентных выплат были рекапитализированы (реинвестированы как основной долг),
3. Существуют факты для реклассификации кредитов как неработающих, даже в случае отсутствия опозданий по выплатам более 90 дней. Например, когда должник начинает процедуру банкротства.

Первый из данных критериев используется странами больше всего и находится в соответствии с Базельскими критериями проблемных активов и с критериями EBA (European Banking Authority) для неработающих кредитов (European Central Bank, Cortavarria 32). Необходимо также отметить тот факт, что и Базельский комитет и EBA имеют пункты для определения NPL кредитов, которые не будут выплачены с большой вероятностью.

Как мы видим из определений, данные показатели скорее полезны для понимания эффектов постфактум, а не предвидения приближающихся проблем и соответственной адаптации регуляций на определенные промежутки времени. Следующим нашим шагом будет понимание детерминантов качества активов с точки зрения экономических показателей и некоторых показателей банковской системы.

В данной работе мы рассмотрим следующие показатели и их корреляцию с NPL:

- Долговая процентная ставка
- Валютный курс
- Кредиты, выданные частному сектору
- Спред банковской процентной ставки
- Государственный долг
- ВВП на душу населения
- Рост ВВП
- ИПЦ
- Дефлятор
- Соотношение капитала к активам
- Ликвидные резервы банковской системы

Данные показатели будут рассмотрены в контексте корреляции с NPL в разных странах, а также мы попробуем понять, насколько сильная связь у данных показателей с NPL с помощью регрессионного анализа.



Рис. 1. *Тепловая карта, показывающая корреляцию показателей с NPL для разных стран*[1]

Мы видим, что Спред банковской процентной ставки и государственный долг имеют близкую к нулю или нулевую корреляцию с интересующим нас показателем почти во всех рассматриваемых нами странах, несмотря на радикально разные структуры и типы государств/компаний, а также размеры экономик. С другой стороны, мы видим, что ВВП на душу населения и финансовый рычаг во всем банковском секторе имеют довольно сильное влияние на NPL в целом среди большинства стран. Еще одним интересным фактом, который стоит отметить, является то, что рост ВВП имеет негативные и позитивные коэффициенты корреляции почти в равной дистрибуции среди рассмотренных нами стран.

[1] Источник: World bank, IMF, FRED

Таблица 1. Средние показатели корреляции с NPL среди рассматриваемых стран[1]

Долговая процентная ставка	-0.066694
Валютный курс	0.119489
Автокорреляция NPL	0.287589
Кредиты, выданные частному сектору	-0.032983
Спред банковской процентной ставки	0.271828
Государственный долг	0.095370
ВВП на душу населения	-0.374429
Рост ВВП	-0.102138
ИПЦ	0.082379
Дефлятор	-0.076952
Соотношение капитала к активам	-0.283904
Ликвидные резервы	-0.110295

Данная таблица позволяет нам рассмотреть показатели корреляции более обобщенно. Таким образом, отсюда можно сделать вывод, что в основном корреляция между данными показателями и NPL довольно низкая. Мы можем заметить, однако, несколько интересных фактов:

- ВВП на душу населения имеет самую сильную корреляцию (негативную). Это, по всей вероятности, означает, что NPL сильно связан со структурой экономики и страны с более высоким показателем ВВП на душу населения имею лучшее качество активов в целом, что является индикатором того, что регуляции для стран с разными уровнями развития не должны быть одинаковыми и должны быть адаптированы.
- Мы видим, также что в среднем корреляция спреда банковской процентной ставки довольно высокая. Это связано с очень сильной корреляцией данных факторов в Китае, однако не заметна в других странах, откуда можно сделать вывод, что данная связь специфична для Китайской экономики.
- Также следует отметить, что сама NPL имеет довольно сильную автокорреляцию, что означает, что, качество активов не меняется быстро и нужны структурные изменения для того, чтобы изменить качество активов в любую сторону.
- Финансовый рычаг имеет довольно сильную негативную корреляцию с NPL, что также можно сказать, очевидно, учитывая, что больший финансовый рычаг означает большее желание принимать риск, что в свою очередь связано с большим количеством неработающих кредитов и ухудшающимся качеством активов по всему банковскому сектору.

Далее мы рассмотрим корреляцию NPL с изменениями показателей, рассмотренных нами выше.

[1] Источник: World bank, IMF, FRED



Рис. 2. Тепловая карта, показывающая корреляцию показателей с NPL для разных стран[1]

Рассматривая Рис. 2, мы можем заметить, что изменение размера кредитов частному сектору имеет сильнуюе негативную корреляцию с NPL, а изменение NPL за прошлый период имеет очень сильное позитивное влияние на NPL. И данные факты видны среди всех рассматриваемых стран, что опять же, как и в прошлом случае, означает, что мы имеем факторы, влияющие на качество активов по всему миру вне зависимости от типа/размера экономики и степени развития.

Таблица 2. Средние показатели корреляции исследуемых показателей с NPL[2]

Долговая процентная ставка	-0.218864
Валютный курс	0.214749
Автокорреляция NPL	0.287589
Кредиты выданные частному сектору	-0.454977
Спред банковской процентной ставки	-0.020120
Государственный долг	0.186501
ВВП на душу населения	-0.140197
Рост ВВП	-0.007265
ИПЦ	-0.068980

[1] Источник: World Bank, IMF, FRED
[2] Источник: World Bank, IMF, FRED

Дефлятор	-0.064889
Соотношение капитала к активам	0.150289
Ликвидные резервы	0.093865

То, что мы уже отметили выше, можно заметить и в Таблице 2. Изменение кредитов, выданных частному сектору, имеет сильную негативную корреляцию с NPL. Это может означать, что, когда банки начинают выдавать больше кредитов, экономика в целом находится в хорошем состоянии, и, следовательно, платежеспособность населения будет только расти. Соответственно, уменьшение размера выданных кредитов является показателем ухудшаюшейся экономической ситуации и, следовательно, платежеспособность населения будет только падать и качество активов, соответственно, тоже.

Следующим интересным и на первый взгляд удивительным фактом является то, что долговая процентная ставка имеет довольно значимую отрицательную корреляцию с NPL. С одной стороны, можно отметить, что высокие процентные ставки означают большие выплаты со стороны должников, что, в свою очередь, означает меньшую платежеспособность и, соответственно, худшее качество активов, однако, с другой стороны, очевидно, что увеличения процентной ставки означает сильную экономику и показывает, что экономика находится на той стадии бизнес-цикла, когда доходы увеличиваются и, соответственно, качество активов ухудшается.

Если в случае абсолютных чисел государственный долгпочти не был связан с интересующим нас коэффициентом, то его изменение имеет значительную позитивную корреляцию, означающую, что увеличение государственного долга приводит также к ухудшению качества активов в банковской системе. В данном случае связь довольно очевидна, поэтому не будем вдаваться в подробности.

Следующим фактором, который стоит отметить, является изменение валютного курса. Изменение валютного курса имеет позитивную корреляцию с качеством активов во всех странах (в разном соотношении), кроме Эстонии, где есть довольно сильная негативная корреляция. В случае Эстонии это наверняка связано с тем фактом, что страна использует евро и политика его регуляции никаким образом не контролируется государством, а также размер экономики Эстонии не сопоставим с другими странами в Еврозоне. С другой стороны, Россия и Турция – страны, которые подвержены сильным флуктуациям валютного курса и показывают значительную корреляцию изменения валютного курса с качеством активов. Отсюда можно сделать вывод, что в периоды, когда валютный рынок становится сильно волатильным, его корреляция с качеством активов сильно возрастает.

Регрессионный анализ детерминантов качества активов в разных странах

В данной части работы мы попробуем смоделировать факторы, имеющие значимую связь с NPL, и понять, которые из них имеют наисильнейшую связь после их выведения с помощью последовательного выведения факторов из параметров при значении P-value > 0.1.

Ниже мы можем увидеть показатели, полученные в случае Армении.

Таблица 3. Показатели регрессионного анализа исследуемых показателей в Армении

	Коеф.	std err	t	P>|t|	[0.025	0.975]

Долговая процентная ставка	0.1986	0.081	2.454	0.024	0.029	0.368
Валютный курс	0.0161	0.005	3.417	0.003	0.006	0.026
Дефлятор	-0.7058	0.23	-3.069	0.006	-1.187	-0.224
Ликвидные Резервы	-0.1474	0.078	-1.881	0.075	-0.311	0.017

Таким образом, 4 этих фактора определяют NPL и его изменения в Республике Армения. В принципе, смотря на эти факторы, мы можем отметить, что никаких сюрпризов как таковых нет. Большие ликвидные резервы банковской системы означают стабильность и лучшее качество активов по всему сектору. Интересен факт высокого негативного коэффициента для дефлятора, означающего, что высокая инфляция означает улучшения качества активов. Очевидно, что за последние 20 лет в Армении инфляция напрямую связана с экономическим ростом, и соответственная связь появляется с качеством активов.

В случае с Россией мы имеем следующую ситуацию.

Таблица 4. Показатели регрессионного анализа исследуемых показателей в России

	Коеф	Std err	T	P>|t|	0.025	0.975
Долговая Процентная Ставка	0,7553	0,146	5,19	0,000	0,451	1,06
Валютный курс	0,0714	0,013	5,303	0,000	0,043	0,1
Спред Банковской процентной ставки	-1,038	0,221	-4,693	0,000	-1,501	-0,575
Государственный долг	0,0791	0,022	3,542	0,002	0,032	0,126

Можно заметить, что в случае с Россией статистически значимые показатели другие. В частности, мы видим Государственный долг и спред банковской процентной ставки.

Отрицательная связь государственного долга с качеством активов очевидна, как мы уже отмечали раньше. В данном случае мы просто должны отметить факт, что в случае с Россией долг является значимым фактором, влияющим на качество активов.

Интересен факт спреда банковской процентной ставки. Есть отрицательная связь с NPL и это, по всей вероятности, связано с тем фактом, что расширение банковского спреда приводит к уменьшению размера кредитов в банковской

системе и, соответственно, снижает количество неработающих кредитов. Это также можно связать с тем фактом, что в большинстве случаев увеличение данного спреда случается, когда ЦБ повышают процентные ставки, что в свою очередь случается, когда экономика находится в хорошем состоянии.

Однако, необходимо отметить тот факт, что в случае с Россией повышение процентных ставок центральным банком в последние годы связано с международными санкциями по отношению к РФ, а также для удержания валютного курса в РФ.

В случае с США наш регрессионный анализ показал следующие показатели.

Таблица 5. Показатели регрессионного анализа исследуемых показателей в США

	Коэф.	Std err	T	P>|t|	0.025	0.975
Долговая Процентная Ставка	-0,462	0,144	-3,206	0,005	-0,765	-0,159
Кредит частному сектору	0,1379	0,029	4,829	0,0008	0,078	0,198
Государственный долг	-0,0478	0,015	-3,169	0,005	-0,079	-0,016
Рост ВВП	-0,2932	0,131	-2,243	0,038	-0,568	-0,019
Ликвидные Резервы	0,1529	0,059	2,579	0,019	0,028	0,277

В случае с США мы видим совсем другую картину, непохожую на две предыдущие страны. В данном случае на качество активов имеют сильное влияние рост ВВП, ликвидные резервы и размер кредитов частному сектору.

Мы также должны отметить факт того, что влияние государственного долга имеет отрицательный знак. Это значит, что увеличение государственного долга в стране приводит к улучшению качества активов, что довольно интересно. Необходимо однако понимать, что в случае с США государственный долг работает совсем по-другому, чем в других странах, учитывая влияние государственных облигаций США и доллара по всему миру. Остальные коэффициенты легко объяснимы: увеличение размера кредита, таким образом, приводит к увеличению NPL, и ликвидные резервы увеличиваются в кризисные времена, когда банковский сектор не хочет принимать на себя большие риски.

Выше мы попробовали понять, какие из наблюдаемых переменных имеют наибольшее влияние на NPL в разных странах. Далее мы попробуем понять, помогут ли процентные изменения данных факторов прогнозировать изменение NPL в разных странах с большой вероятностью.

Методология останется той же, мы используем линейную регрессионную модель для лучшего понимания коэффициентов и влияния каждого показателя.

Таблица 5. Регрессионные показатели процентных изменений предикторов качества активов в Армении[1]

	coef	**std err**	**t**	**P>|t|**	**[0.025**	**0.975]**
Долговая процентная ставка	-22.8941	7.694	-2.975	0.008	-39.128	-6.66

[1] Источник : World Bank, IMF, FRED

Валютный курс	81.5646	12.749	6.398	0	54.668	108.462
NPL	5.8103	1.563	3.716	0.002	2.512	9.109
Спред банковских процентных ставок	6.9206	2.981	2.322	0.033	0.631	13.21
ВВП на душу населения	35.6342	5.937	6.002	0	23.108	48.16
ИПЦ	-0.9169	0.397	-2.307	0.034	-1.755	-0.078

Как мы видим, в случае с Арменией показатели несколько изменились по сравнению с предыдущей таблицей. В то же время в данном случае нам интересен показатель R^2, он равен 0.875, что означает, что наша модель предсказывает банковскую NPL достаточно хорошо, объясняя около 90% волатильности.

Таблица 6. Регрессионные показатели процентных изменений предикторов качества активов в США[1]

	Коэф.	**std err**	**t**	**P>|t|**	**[0.025**	**0.975]**
Кредиты частному сектору	-31.3451	9.269	-3.382	0.003	-50.819	-11.871
Государственный долг	4.3558	1.229	3.543	0.002	1.773	6.938
ВВП на душу населения	43.3777	5.744	7.552	0	31.31	55.445
Рост ВВП	-0.1152	0.06	-1.93	0.069	-0.241	0.01
Ликвидные Резервы	0.252	0.107	2.351	0.03	0.027	0.477

Аналогичный анализ в США показал совсем другую картину, но наша модель в данном случае достигла 85% R^2, что опять же является очень хорошим показателем; значит, мы можем использовать данную модель для предсказывания изменений в NPL по банковской системе. Можно заметить, что единственным общим фактором в случае США и Армении является изменение ВВП на душу населения, что еще раз подтверждает тот факт, что NPL сильно связан с бизнес-циклами в экономике.

Таблица 7. Показатели процентных изменений предикторов качества активов в России[2]

	coef	**std err**	**t**	**P>|t|**	**[0.025**	**0.975]**
Долговая процентная ставка	-16.261	7.083	-2.296	0.033	-31.086	-1.436

[1] Источник : World Bank, IMF, FRED
[2] Источник : World Bank, IMF, FRED

Валютный курс	15.2308	2.97	5.129	0	9.015	21.446
NPL	9.8455	2.613	3.768	0.001	4.377	15.314
ВВП на душу населения	13.0586	5.767	2.265	0.035	0.989	25.128

В случае с Россией мы получаем несколько худшую картину. Полученная нами модель объясняет около 70% волатильности в показателе NPL. И в данном случае мы также должны отметить, что изменение ВВП на душу населения состоит в модели, что опять не говорит о факте важности бизнес-циклов экономики для NPL.

С другой стороны, похожий анализ был проведен для Франции, и наша модель объясняла всего лишь 30% волатильности неработающих кредитов в стране. Это, в свою очередь, говорит о структурной разнице между Францией и вышеперечисленными странами, что подтверждает наше мнение о том, что страны должны использовать разные регуляции для оценки качества активов.

Выводы

1. Показано, что страны с различным экономическим статусом различаются по показателям NPL, свидетельствующим о необходимости разработки различных механизмов регуляции качества активов.
2. Выявлена связь степени уровня финансового рычага с количеством неработающих кредитов и ухудшающимся качеством активов по всему банковскому сектору.
3. Показано, что 4 следующие факторы определяют NPL и его изменения в Армении: долговая процентная ставка, валютный курс, дефлятор, ликвидные резервы. При этом эти факторы связаны с показателями экономического роста РА.
4. В США на качество активов имеют сильное влияние рост ВВП, ликвидные резервы и размер кредитов частному сектору. В то время как в России статистически значимые показатели выявлены по показателям государственного долга и спреда банковской процентной ставки.
5. Проведенный анализ процентных изменений исследуемых показателей выявил высокий процент волатильности в показателе NPL, что позволяет нам говорить о высокой эффективности данной модели.

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. “International Monetary Fund”. *IMF*. https://www.imf.org/en/Home
2. “The World Bank”. *WB*. https://www.worldbank.org/
3. Ari, Anil, Ari et al. *The dynamics of non-performing loans during banking crises: a new database.* International Monetary Fund, 2019.
4. Bholat, David, Bholat. et al. “Non-performing loans at the dawn of IFRS 9: regulatory and accounting treatment of asset quality”. //*Journal of Banking Regulation*., , N19, 2018, N19., 1-22.
5. Cortavarria Luis, Cortavarria et al. *Loan review, provisioning, and macroeconomic linkages.* International Monetary Fund, 2000, 32p.
6. European Central Bank (ECB). *Guidance to Banks on Non-Performing Loans*, 2017, https://www.ecb.europa.eu/home/html/index.en.html.

7. Federal Reserve Economic Daata. FRED. *Stats*, https://fred.stlouisfed.org/
8. Vuković, Vlastimir Vuković and Domazet Ivana. Poslovne performanse i sektorska disperzija kreditnog rizika u Srbiji. Poslovna ekonomija: časopis za poslovnu ekonomiju, preduzetništvo i finansije, 2014, 8 (1). pp. 331-348.

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ

ՄԱՐՏԻՆ ՏՈՆԻԿՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի
Էկոնոմիկայի և բիզնեսի ինստիտուտի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել բանկային համակարգում ակտիվների որակի որոշիչ գործոնները: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր իրականացնել բանկային համակարգում ակտիվների որակի ցուցանիշների որակական ու քանակական վերլուծություն, ինչպես նաև բացահայտել ակտիվների որակի որոշիչ գործոնները տարբեր տնտեսական կարգավիճակ ունեցող երկրների օրինակով:

Ուսումնասիրության նպատակին ու խնդիրներին հասնելու համար օգտագործվել են հարաբերակցության և ռեգրեսիոն վերլուծություններ, ինչպես նաև ստացված տվյալների որակական վերլուծություն:

Ցույց է տրված, որ NPL-ը սերտ կապված է տնտեսության կառուցվածքի հետ, և մեկ շնչի հաշվով ավելի բարձր ՀՆԱ ունեցող երկրներն ընդհանուր առմամբ ունեն ակտիվների ավելի լավ որակ: NPL-ն ունի բավականին ուժեղ ավտոկոռելացիա, ինչը նշանակում է, որ ակտիվների որակը արագ չի փոխվում, և կառուցվածքային փոփոխություններ են անհրաժեշտ՝ ցանկացած ուղղությամբ ակտիվների որակը փոխելու համար: Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ կարելի է եզրակացնել, որ չաշխատող վարկերը շատ սերտորեն կապված են տնտեսության բիզնես ցիկլերի հետ, ինչպես նաև այն, որ երկրները չպետք է օգտագործեն նույն մեթոդաբանությունը չաշխատող վարկերի հաշվարկման համար: Ավելին՝ չաշխատող վարկերի և ընդհանրապես ակտիվների որակի հաշվարկման մեթոդաբանությունը պետք է ներառի մակրոտնտեսական ցուցանիշներ, քանի որ բանկային համակարգում ակտիվների որակը շատ ամուր կապ ունի յուրաքանչյուր երկրի տնտեսության ընդհանուր գործընթացների հետ:

Հիմնաբառեր՝ *բանկային համակարգ, ակտիվների որակ, չաշխատող վարկեր, մակրոտնտեսական գործոններ, բիզնես-ցիկլ, տոկոսադրույքներ, պետական պարտք:*

ASSET QUALITY DETERMINANTS IN BANKING SYSTEM

MARTIN TONIKYAN
Russian-Armenian University,
Institute of Economics and Business, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia

The purpose of this study was to identify the determinants of asset quality in the banking system. In order to achieve the goal set it was necessary to conduct a qualitative and quantitative analysis of asset quality indicators in the banking system, as well as to

identify the determinants of asset quality in the banking system on the example of countries with different economic status.

during the research correlation and regression analyzes were used, as well as a qualitative analysis of the data obtained.

It is shown that NPL is strongly related to the structure of the economy, and countries with higher GDP per capita have better asset quality in general. NPL has a fairly strong autocorrelation, which means asset quality does not change quickly and structural changes are needed in order to change asset quality in any direction.

Based on the results of the study, it can be concluded that non-performing loans are very closely related to business cycles in the economy, as well as the fact that countries should not use the same methodology for calculating non-performing loans. Moreover, the methodology for calculating non-performing loans and asset quality in general should include macroeconomic indicators, since asset quality in the banking system has a very strong correlation with the general processes in the economy of each country.

Keywords: *banking system, asset quality, non-performing loans, macroeconomic factors, business cycle, interest rates, Government debt.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ*

ՀՏԴ 343.8 10.52063/25792652-2022.3.14-258

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
varduhi_sargsyan@yahoo.com

Սույն հոդվածի նպատակն է համապարփակ պատկերացում կազմել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների ներկայիս հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների պատմական նախադրյալներին, առկա խնդիրներին և այդ հիմնարկներում գտնվող կալանավորված և դատապարտված անձնաց վերասոցիալականացման թերություններին: Ուսումնասիրվել են տասներկու քրեակատարողական հիմնարկները, դրանց կառուցվածքները, գործունեությունը և այդ գործունեության արդյունքում պատիժների կատարման խոչընդոտները: Վերլուծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2018-2038 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված քրեակատարողական հիմնարկների կառուցման անհրաժեշտությունը, թերությունները և այդ փոփոխություններով պայմանավորված կալանավորված և դատապարտված անձանց վիճակի հնարավոր բարելավմանն խոչընդոտները:

Հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման անհրաժեշտությունից ելնելով՝ քննարկվել են մեծ քրեակատարողական հիմնարկների անարդյունավետությունները, կազմակերպչական դժվարությունները և պատժի նպատակների իրագործման տեսանկյունից այդ հիմնարկներում պահվող անձանց՝ հասարակության մեջ վերաինտեգրելու բարդությունները:

Սույն հոդվածի շրջանակներում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներ, ինչպիսիք են՝ իրավահամեմատական և համակարգային վերլուծության մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ ՀՀ-ում գործող քրեակատարողական հիմնարկների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը լիարժեքորեն համապատասխանում է միջազգային չափորոշիչներին, սակայն գործնականում այն կիրառելու մեխանիզմներ

* Հոդվածը ներկայացվել է 27.08.2022թ., գրախոսվել՝ 10.10.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.10.2022թ.:

դեռևս չկան: Առաջարկություններ են կատարվել այդ մեխանիզմների ներդրման, նոր և փոքր ՔԿՀ-ների ստեղծման վերաբերյալ: Ներկայացվել են նաև ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքի հիմնական փոփոխությունները, և այն համեմատվել է նախկին օրենսգրքի կարգավորումների հետ:

Հիմնաբառեր՝ *քրեակատարողական ծառայություն, ուղղիչ հիմնարկներ, վերասոցիալականացում, պատիժների կատարում, օպտիմալացում, մարդու իրավունքներ, անվտանգային գոտիներ, պատժի կրման պայմաններ:*

Ներածություն

Քրեակատարողական համակարգի բարելավման խնդիրները մշտապես ընկալվել ու ընկալվում են՝ որպես խիստ սկզբունքային և արդար դատաքննության ինստիտուտի կայացման կարևոր բաղադրատարրեր: Միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից է բխում այն, որ արդար դատաքննությունը կարող է ամբողջական ավարտուն ինստիտուտ համարվել միայն այն դեպքում, երբ հավուր պատշաճի ապահովվում է դատական ակտերի կատարումը: Ընդ որում, հաշվի առնելով այն իրողությունը, որ դատական ակտերի կատարումը հատկապես քրեակատարողական ոլորտում անխուսափելիորեն ուղեկցվում է հարկադրանքի կիրառման անհամեմատ լայն հնարավորությունների հետ: Այս հանգամանքների հաշվառումով միջազգային մի շարք փաստաթղթերով հանգամանորեն կանոնակարգվեցին կալանավորված անձանց և դատապարտյալներին պահելու նվազագույն պահանջները, դրանք պահպանելու նկատմամբ իրականացվող հսկողության եղանակներն ու ընթացակարգերը, սակայն այդ կանոնակարգումները գործնականում չիրագործվեցին ամբողջ ծավալով, և բազմաթիվ խնդիրներ մինչ այսօր մնացել են չլուծված:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների ձևավորումը և ներկայիս կառուցվածքը

1919թ. հունվարի 7-ին ազատազրկման վայրերը՝ բանտերը, Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության որոշմամբ հանձնվեցին արդարադատության նախարարության ենթակայությանը, և ստեղծվեց **«Բանտային տեսուչի»** կառույցը՝ ազատազրկման վայրերի աշխատանքը կազմակերպելու և վերահսկելու լիազորությամբ:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921թ. ապրիլին, ՀԽՍՀ արդարադատության ժողկոմիսարիատի կազմում ստեղծվեց ուղղիչ-պատժական բաժին, իսկ բանտերը վերանվանվեցին «Ուղղիչ տներ»: Դրանից հետո մինչև 1991թ.-ը ազատազրկման վայրերը տարբեր անվանումներ են ունեցել և գործել են տարբեր պետական մարմինների ենթակայությամբ: 1991թ. այն անվանվել է քրեական պատիժների իրականացման վարչություն, և 2001թ.-ից նշված վարչությունը ենթակա ստորաբաժանումներով հանձնվել է ՀՀ արդարադատության նախարարությանը և առ այսօր գործում է որպես ՀՀ արդարադատության նախարարության **քրեակատարողական ծառայություն** (ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջ):

Արդարադատության նախարարի 348-լ հրամանի համաձայն՝ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Արդարադատության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ենթակա մարմին է: Ծառայության նպատակը քրեակատարողական քաղաքականության իրականացման ապահովումն է:

Քրեակատարողական ծառայության մասին օրենքի համաձայն՝ ծառայությունն իրականացվում է ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում: Ծառայության կենտրոնական մարմինը ապահովում է քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրների իրականացումը իր կառուցվածքային ստորաբաժանումների և քրեակատարողական հիմնարկների միջոցով:

Մինչև 2022 թ. հունվարի 1-ը ՀՀ քրեակատարողական ծառայության (այսուհետ ՔԿԾ) համակարգում գործում էր 5346 անձի պահման համար նախատեսված 12 քրեակատարողական հիմնարկ (այսուհետ՝ ՔԿՀ), այդ թվում՝ «Արմավիր» ՔԿՀ – 1240 մարդ, «Նուբարաշեն» ՔԿՀ - 780 մարդ, «Կոշ» ՔԿՀ - 640 մարդ, «Սևան» ՔԿՀ - 548 մարդ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ – 464 մարդ, «Արթիկ» ՔԿՀ - 373 մարդ, «Վարդաշեն» ՔԿՀ - 339 մարդ, «Աբովյան» ՔԿՀ – 265, «Վանաձոր» ՔԿՀ – 240, «Հրազդան» ՔԿՀ - 215, «Գորիս» ՔԿՀ - 182 մարդ, «Երևան-Կենտրոն» ՔԿՀ – 60 մարդ: (Քրեակատարողական ծառայության հաշվետվություն, 50): Իսկ 2022 թվականի հունվարի 1-ից գործում է 4491 անձի պահման համար նախատեսված 10 քրեակատարողական հիմնարկ:

ՀՀ-ում քրեակատարողական հիմնարկներ են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը (Քրեակատարողական ծառայության մասին օրենք, հոդված 7): Մինչև 2022թ.-ի հուլիսի 1-ը գործող Քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ Հայաստանում ուղղիչ հիմնարկները բաժանված էին ըստ մեկուսացվածության աստիճանի և հինգ տեսակի էին՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ, բուժական ուղղիչ հիմնարկներ:

2022թ. հուլիսի 1-ից գործող օրենսդրության համաձայն՝ ուղղիչ հիմնարկների մեկուսացվածության աստիճանը փոխարինվեց անվտագային գոտիներով: Ներկայումս յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ բաղկացած է մեկից երեք անվտանգային գոտուց՝ ցածր, միջին և բարձր անվտանգային գոտիներ, որոնցից յուրաքանչյուրն ունի դատապարտյալների պահման երկու պայման՝ մեղմ ու խիստ:

Ցածր անվտանգային գոտի

Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում ոչ մեծ ծանրության, իսկ խիստ պայմաններում՝ միջին ծանրության հանցանքների համար դատապարտվածները:

Մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև 10 դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Իրավունք ունի տարվա ընթացքում ունենալ առնվազն տասներկու կարճատև և տասներկու երկարատև տեսակցություն և առնվազն մեկ՝ մինչև հինգ օր տևողությամբ, երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով:

Խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Նրան թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ 10 կարճատև և 10 երկարատև տեսակցություն (Քրեակատարողական օրենսգիրք հոդված 69):

Միջին անվտանգային գոտի

Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում ծանր հանցանքների համար դատապարտվածները, խիստ պայմաններում՝ առանձնապես ծանր հանցանքների համար մինչև 10 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրածները՝ ռեցիդիվի դեպքում:

Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի

կացարանում: Նրան թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ առնվազն ութ կարճատև և ութ երկարատև տեսակցություն:

Միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ առնվազն վեց կարճատև և վեց երկարատև տեսակցություն (Քրեակատարողական օրենսգիրք հոդված 69):

Բարձ անվտանգային գոտի

Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, իսկ խիստ պայմաններում՝ ցմահ ազատազրկման և նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ առնվազն վեց կարճատև և վեց երկարատև տեսակցություն: Բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև չորս դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է տարվա ընթացքում ունենալ առնվազն չորս կարճատև և չորս երկարատև տեսակցություն (Քրեակատարողական օրենսգիրք հոդված 69):

Դատապարտյալների պահման մեղմ և խիստ պայմանները, պատժի կրման ընթացքում ազատազրկման տևողությունով և դատապարտյալի դրսևորած վարքագծով պայմանավորված, կարող են փոփոխվել՝ խիստ ռեժիմից դեպի մեղմ և հակառակը:

Պատժի կրման պայմանների փոփոխման ինստիտուտի գործող կանոնակարգումը հնարավորություն է տալիս դատապարտյալի նկատմամբ պատժի կրման պայմանները փոխել ոչ միայն մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով, ինչպես սահմանված էր նախկին քրեակատարողական օրենսգրքում, այլ նաև միևնույն հիմնարկի շրջանակներում: Պատժի կրման պայմանների փոփոխումը, այսպես կոչված, «պրոգրեսիվ համակարգը» ծագել է Անգլիայի ազատազրկման կատարման համակարգում դեռևս 19-րդ դարի սկզբին և մեծապես նպաստել է քրեակատարողական համակարգի առաջընթացը (Vaamonde 4): Այն կիրառվում է մինչև օրս աշխարհի բազմաթիվ երկրներում և, բնականաբար, ապրել է որոշակի զարգացում՝ ներառելով իրավաբանների տեսական մշակումները: «Պրոգրեսիվ համակարգը» պատժի իրավական կառուցվածքի մասն է կազմում և խթանում է դատապարտյալների ուղղման գործընթացը, քանի որ խրախուսում է օրինապահ վարքագիծ դրսևորող դատապարտյալներին, մեղմացնում նրանց պատժի կրման պայմանները և ընդհակառակը՝ պատժի կրման պայմանների խստացում է նախատեսում հակաօրինական վարքագիծ դրսևորողների նկատմամբ: Պատժի կրման պայմանների փոփոխման նախատեսումը մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում անշուշտ կունենա դրական ազդեցություն պատժի կատարման և դրա նպատակների իրականացման արդյունավետության վրա:

Ուղղիչ հիմնարկների տեսակների համապատասխանեցումն անվտանգային գոտիներին և դրանց պայմաններին պետք է իրականացնի քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող Տեղաբաշխման հանձնաժողովը՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը:

Ուղղիչ հիմնարկների մեկուսացվածության աստիճանները անվտանգային գոտու տեսակների հետ համապատասխանեցվում են հետևյալ կերպ.

1. բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են ցածր անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին.

2. կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են միջին անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին.

3. կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են միջին անվտանգային գոտու խիստ պայմանների համար նախատեսված պայմաններին.

4. փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են բարձր անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների առկա խնդիրները

Գործող ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող դատապարտյալներին բժշկական օգնությունը և սպասարկումը մատուցելու է մասնագիտացված կազմակերպությունը, քրեակատարողական հիմնարկներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկների միջոցով: Այս կարգը գործելու է սահմանված չափանիշներին համապատասխան, անվտանգային յուրաքանչյուր գոտու պայմաններն ապահովող բժշկական ստորաբաժանումներ ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի հուլիսի 1-ը: Իսկ ներկայումս դատապարտյալները և կալանավորված անձինք շարունակելու են իրենց բուժումը ստանալ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոցում»:

Երևանի կենտրոնում՝ Արշակունյաց պողոտայում գտնվող փշալարերով պատված **«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ**-ն այս պահին գործող միակ մասնագիտացված բուժհաստատությունն է քրեակատարողական համակարգում: Այստեղ ազատազրկվածները տեղափոխվում են՝ նրանց բուժումը ՔԿՀ-ների բուժմասերի պայմաններում կազմակերպելու անհնարինության դեպքում: Այստեղ են բերվում բոլոր այն հիվանդ դատապարտյալները, որոնք ունեն առողջական լուրջ խնդիրներ. հիվանդները կարող են տեղավորվել նաև քաղաքացիական հիվանդանոցներում համապատասխան հսկողության ներքո:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում առանձին գործում է 10 մասնագիտացված բաժանմունք՝ տուբերկուլոզի, նարկոլոգիական, թերապևտիկ, հոգեբուժական, ինֆեկցիոն, վիրաբուժական, կլինիկալաբորատոր, ատամնաբուժական և ռենտգենոլոգիական: Այս ՔԿՀ-ում առկա է 5 կացարան, 92 խուց:

Չնայած այն հանգամանքին, որ Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ-ն միակ մասնագիտացված բուժհաստատությունն է, ունի բազմաթիվ խնդիրներ: Բացի շենքային պայմանների խնդիրներից, վերջինիս գործունեությանն առնչվող խնդիրներից է նրա աշխարհագրական դիրքը՝ բնակելի շենքերին մոտ լինելը: Այստեղ պահվում են ինֆեկցիոն հիվանդություններով տառապող դատապարտյալներ և կալանավորված անձինք, ինչը կարող է վտանգ ներկայացնել շրջակա բնակիչների առողջության համար: Նշվածը, ինչպես նաև այն, որ շենքը կառուցվել է 20-րդ դարի սկզբին, հնացած է, գտնվում է անմխիթար վիճակում և առկա է փլուզման վտանգ,

մտահոգիչ են և հրատապ լուծում են պահանջում (Քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թթ ռազմավարության ծրագիր, 48): Համանման պայմաններ են գրեթե մնացած բոլոր ինը ՔԿՀ-ներում:

Ամենահին և ոչ բարվոք շենքը **Գորիս ՔԿՀ-ինն** է: Սովետական բանտի տիպային այս շենքում կապիտալ որևէ փոփոխություն չի եղել, շենքը շահագործման է հանձնվել 1870-ական թվականներից: Ներկայումս հիմնարկը հանդիսանում է փակ տիպի ՔԿՀ, սակայն իր մեջ պարունակում է նաև կիսափակ, կիսաբաց և բաց տիպեր: Շենքը որպես բանտ որքան ազդեցիկ է, նույնքան էլ բարոյապես մաշված է: Դժվար է պատկերացնել կապիտալ վերանորոգում այդ շենքում:

«Արթիկ» ՔԿՀ-ն իր տեսակով տարբերվում է մնացած բոլոր ՔԿՀ-ներից, քանի որ միակն էր, որտեղ պատժի կրման բոլոր 5 ռեժիմներն էլ առկա են: Քրեակատարողական հիմնարկն առանձնացված մասնաշենքեր ունի, որտեղ էլ պատիժ են կրում դատապարտյալներն ու կալանավորված անձինք: Այստեղ 8 կացարան կա, 114 խուց:

«Սևան» ՔԿՀ-ում առաջին հերթին աչքի են ընկնում երկարատև տեսակցությունների սենյակները, որոնք կապիտալ վերանորոգված են և կահավորված, սակայն պարադոքսն այն է, որ ամենասարսափազդու պատժախցերը հենց այս ՔԿՀ-ում են: «Սևան» ՔԿՀ-ում 19 ընդհանուր կացարան կա, 12 խուց:

«Վանաձոր» ՔԿՀ-ն միակն է, որի կարճատև տեսակցությունների սենյակում տեսախցիկ է տեղադրված[1]: Կացարանների թիվը 5-ն է, խցերի թիվը՝ 57:

Շուրջ 7 տարի առաջ շահագործման հանձնված **«Արմավիր»** ՔԿՀ-ն իր արտաքին տեսքով թերևս բարվոք վիճակում է գտնվում, սակայն այն նույնպես ունի մի շարք խնդիրներ: Այս ՔԿՀ-ում չկա օդափոխման համակարգ: Կառավարությունը որոշել է 2019-2023թթ. Ռազմավարական ծրագրով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ապահովել օդափոխության համակարգ, ստեղծել կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ, ինչպես նաև զարգացնել բժշկական ստացիոնարի կարողությունները:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ն տարիներ շարունակ եղել է գերբնակեցված, և հիմնական բողոքները հնչել են հենց այստեղից: Բարվոք չեն ոչ միայն խցերը, այլև սանհանգույցները, ընդհանուր օգտագործման տարածքները: Այս ՔԿՀ-ն գտնվում է հոսող հողերի վրա, և մշտապես այստեղ առկա են բազմաթիվ խնդիրներ: «Նուբարաշեն»-ում առկա է 4 կացարան և 120 խուց:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքի առաջին և նկուղային հարկում և դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան: Հիմնարկի շենքը կառուցվել է 1958թ.-ին: ՔԿՀ-ն նախատեսված է 53 կալանավորված և դատապարտված անձանց պահելու համար:

Ինչպես մյուս ՔԿՀ-ները, **«Վարդաշեն» ՔԿՀ-ն** էլ ունի վերանորոգման կարիք: Այս հիմնարկը նախատեսված է իրավապահ մարմինների ազատազրկված նախկին աշխատակիցների և օտարերկրացիների պահման համար: Կացարանների ընդհանուր թիվը 7-ն է, խցերը՝ 44:

«Աբովյան» ՔԿՀ միակ քրեակատարողական հիմնարկն է, որտեղ իրենց պատիժը կրում են կանայք և անչափահասները: Այս ՔԿՀ-ն տարբերվում է մյուսներից առավել բարվոք շենքային պայմաններով, գեղեցիկ, ծառաշատ այգով: Այստեղ

[11] Աշխատակիցների տեղեկացմամբ՝ նախկինում դեպք է գրանցվել, երբ դատապարտյալ ամուսնուն տեսնելու եկած կնոջ և վերջինիս միջև միջադեպ է եղել, ինչից հետո տեսակցությունների սենյակում տեսախցիկ են տեղադրել: Սակայն, ըստ դատապարտյալների, տեսախցիկը տեղադրվել է արգելված իրերի փոխանցումը կանխարգելելու նպատակով:

դատապարտյալ կանանց զբաղվածությունն էլ մյուսների համեմատ ապահովված է: Այստեղ կացարանների ընդհանուր թիվը 7-ն է, խցերինը՝ 42[2]:

Ստացվում է, որ բացի նորակառույց «Արմավիր» ՔԿՀ-ից, մյուս քրեակատարողական հիմնարկներում կապիտալ շինարարական աշխատանքների կարիք կա: Տարիների ընթացքում մասնակի վերանորոգման աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք միտված են եղել զուտ շենքերը փրկելուն: Կալանավորված անձինք և դատապարտյալները շարունակում են պատիժ կրել չօդափոխվող, երբեմն խոնավ խցերում: Ըստ Քրեակատարողական ծառայության 2016թ. հաշվարկների՝ 400 մլրդ դրամ է անհրաժեշտ նոր ՔԿՀ-ների ստեղծման, բարեկարգման, վերանորոգման, կահույքի ձեռքբերման և այլ հարցերի համար (Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ ռազմավարության ծրագիր, 98):

Մի շարք քրեակատարողական հիմնարկներում առկա են նաև շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական հագեցվածության ապահովման խնդիրներ: Օրինակ՝ ՀՀ Արդարադատության նախարարության «Վարդաշեն» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում առկա շենքային պայմանները խիստ անբավարար են և ենթակա են ապամոնտաժման՝ տեխնիկական չափանիշներին չհամապատասխանելու հիմքով: Ավելին՝ նշված քրեակատարողական հիմնարկները տեղակայված են «հոսող հողերի» վրա, ինչը նույնպես պահանջում է հրատապ լուծումներ դրանք այլ տեղամասերում կառուցելու համար:

Ստեղծված առկա պայմանները իրենց ներկա վիճակով անբավարար են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան պատժի կատարումն ապահովելու համար: ՀՀ-ում քրեական արդարադատության համակարգում առկա խնդիրներին հաճախ անդրադարձ է կատարվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետությանն առնչվող մի շարք վճիռներում, որոնք վերաբերում են կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների և ազատությունների պաշտպանության պատշաճ երաշխավորմանը՝ նրանց պահման պայմաններին, բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուն և այլն: Մասնավորապես՝ «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի», «Դավթյանն ընդդեմ Հայաստանի» վճիռներով մատնանշվում է ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման, մասնավորապես՝ ֆիզիկական անձեռնմխելիության, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու, անհրաժեշտ դեղերի առկայությունը երաշխավորելու միջոցով նրանց պաշտպանելու պարտականության ապահովման անհրաժեշտությունը, իսկ «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի», «Կարապետյանն ընդդեմ Հայաստանի», «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» վճիռներով՝ անձնական նվազագույն տարածքի բացակայության առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Վերոգրյալ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր է մշակվել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության» ծրագրով ինչպես նաև 2022 թ. հունիսի 15-ին ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքով: Ռազմավարության ծրագրով ՔԿՀ-ներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և այդ հիմնարկների օպտիմալացման շրջանակներում նախատեսված է հետևյալը՝ 1. Փակել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ները, որի

[12] ՔԿՀ-ներում անձանց պահման պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է համապատասխան ՔԿՀ-ներ ուղարկված հարցումների և այցելությունների արդյունքների հիման վրա:

հետևանքով Երևանի տարածքում կկառուցվի շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց: Երևանի կենտրոնից (մամուլի շենքի հարևանությամբ) կհանվի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն: 2. «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխել նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք: 3. «Հրազդան» ՔԿՀ-ն լուծարել և «Սևան» ՔԿՀ-ի վարչական տարածքում կառուցել «Հրազդան» ՔԿՀ-ի համար սահմանված լրակազմով նոր ՔԿՀ: 4. «Արմավիր» ՔԿՀ-ում ապահովել միջին անվտանգային գոտու մեղմ պայմանների համար անհրաժեշտ պայմաններ, որոնք կհամապատասխանեն միջազգային չափանիշներին:

Օպտիմալացման առավելություններն ու թերությունները

Կառավարության կողմից մշակված քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման ծրագիրը ոչ այլ ինչ է, քան քրեակատարողական հիմնարկների թվաքանակի կրճատում, որի նպատակը հնարավորինս արդյունավետ կերպով ՔԿՀ-ների շենքային պայմանների խնդիրները լուծելն է՝ նվազագույն քանակությամբ ռեսուրսներ օգտագործելով, և ՔԿՀ-ների տրամադրվող ֆինանսական միջոցները կրճատելը: Սակայն օպտիմալացման գործընթացները պետք է միաժամանակ զուգակցված լինեին նաև ՔԿՀ-ներում նոր աշխատանքային մեթոդների ներդրման, ծառայությունների ներդրման, տեխնիկական խնդիրների ավտոմատացման, ինչպես նաև ՔԿՀ-ներում պահվող անձանց հետ տարվող աշխատանքների նորարարության միջոցառումներով: Վերոնշված խնդիրները ակնառու երևում են «Արմավիր» ՔԿՀ-ում, որը նորակառույց է, սակայն շենքային պայմանների որոշակի բարելավումից և գերբնակեցման խնդրի լուծումից բացի քրեակատարողական ծառայության առջև դրված որևէ այլ խնդիր չի լուծել, օրինակ՝ ՔԿՀ-ում պահվող անձանց վերասոցիալականացման կամ հիմնարկի աշխատանքների արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Բացի այդ, ՔԿՀ-ների թվաքանակի կրճատումը և մի քանի մեծ ՔԿՀ-ների կառուցումը խնդրահարույց է ոչ միայն տվյալ ՔԿՀ-ում պահվող անձանց վերահսկելու և վերասոցիալականացնելու տեսանկյունից, այլ նաև կալանավորված և դատապարտված անձանց ընտանիքի անդամների բնակավայրերից ՔԿՀ-ների հեռու լինելով, որը մշտապես դժվարացնում է նրանց տեսակցելու հանգամանքը, հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ ՀՀ-ում ՔԿՀ-ներին մոտ տարածության վրա գործող երթուղային տրանսպորտ չկա: Մեծ ՔԿՀ-ների մյուս խնդիրն այն է, որ շատ ավելի բարդ է հսկողություն իրականացնելը անազատության մեջ գտնվող յուրաքանչյուր անձի վարքի և ՔԿՀ-ում ընդհանուր կարգապահության նկատմամբ:

Կարգապահության ապահովումը և ներգործության միջոցների կիրառումն անազատության վայրերի վարչակազմերի առջև ծառացած ամենաբարդ ներքին խնդիրներից է: Այս խնդրի լուծման համար պահանջվում է մարդասեր և իրատես քաղաքականություն, մասնագիտական բարձր պատրաստվածություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել կիրառվող ներգործության միջոցների համարժեքությունը և արդարացիությունը: Կարգապահության ապահովումն ինքնին այդ հիմնարկների գործունեության կարևորագույն ուղղություններից է և ուղղված է նրանց առջև ծառացած խնդիրների լուծմանը: Ըստ 1987 թվականի Եվրոպական բանտային կանոններին կից բացատրական գրության՝ դրա բաղկացուցիչ մասն են կազմում դատապարտյալների իրավական կարգավիճակի ապահովումը, նրանց հանդեպ հարգանքը և արդարացի ու մարդասիրական վերաբերմունքը: Դրանով հանդերձ՝ անազատության մեջ պահող անձանց նկատմամբ կիրառվող ներգործության միջոցներն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե որպես բացառապես պատժիչ միջոցներ,

այլ նաև որպես դրական նշանակություն ունեցող միջոցներ՝ նկատի ունենալով դրանց վերջնանպատակը: Դրանք երբեք չպետք է կամայականության սկզբունքով կիրառվեն: Փոխարենը փոքր ՔԿՀ-ներում շատ ավելի հեշտ են կանոնակարգվում և լուծվում ՔԿՀ-ների առջև դրված վերոնշյալ խնդիրները:

Զարգացած բազմաթիվ երկրներում ավելի շատ սկսել են ներդնել փոքր ՔԿՀ-ներ, քան մեծ ՔԿՀ-ներ: Արդյունավետ բանտային համակարգերի օրինակներ են Նորվեգիայի, Լոնդոնի բանտային համակարգերը, որտեղ հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման տեսանկյունից ավելի շատ արդյունավետություն ունեն փոքր ՔԿՀ-ները (Gentleman 8):

Փոքր ՔԿՀ-ների առավելությունն այն է, որ վարչակազմը կարողանում է ավելի հեշտ կառավարել այն, հավանականությունն ավելի քիչ է, որ ՔԿՀ-ում պահվող անձանց որոշակի խմբեր կվիճարկեն վարչակազմի պատասխանատուների հեղինակությունն ու վերահսկողությունը, վարչակազմը ավելի հեշտ է տեսնում բանտարկյալների փոխահարաբերությունների բնույթը, ՔԿՀ-ի աշխատակիցները և անազատության մեջ պահվող անձինք ավելի հեշտությամբ են ճանաչում միմյանց և զարգացնում հարգալից փոխհարաբերություններ: Փոքր բանտերը հակված են ավելի քիչ բյուրոկրատական հիերարխիայի, ինչը հանգեցնում է բանտարկյալների կարիքներին ավելի շուտ և հեշտ արձագանքելուն: Փոքր ՔԿՀ-ները հաճախ ավելի շատ հնարավորություններ ունեն գաղտնիության, ինչը հանգեցնում է ավելի քիչ վեճերի այնտեղ պահվող անձանց միջև և շատ հաճախ առկա վեճերը հարթվում են միմյանց միջև ոչ բռնի եղանակներով: Կալանավորվածները և ազատազրկվածները նույնպես դա գիտակցում են. նրանք նշում են, որ փոքր բանտերում իրենք ավելի քիչ սթրես են զգում, ավելի ապահով են և ավելի հարգված անձնակազմի կողմից, և այս բանտերում հանցանք կատարած անձանց վերասոցիալականացումը տեղի է ունենում շատ ավելի արագ ու արդյունավետ (Skarbek 11):

Ուստի կարծում ենք, ճիշտ կլինի ՀՀ-ում կառուցել ոչ թե մեծ ՔԿՀ-ներ, որ ուղղությամբ էլ այս պահին գնում է ՀՀ ՔԿԾ ռազմավարությունը, այլ կառուցել փոքր ՔԿՀ-ներ և այդ հիմնարկներում ապահովել պատժի նպատակների արդյունավետ իրականացում:

Եզրակացություն

Ամփոփելով քրեակատարողական համակարգի առնչությամբ իրավական հիմքերի, դրանց գործունեության փաստացի վիճակի, միջազգային փորձի և այլ գործոնների վերաբերյալ վերոհիշյալ նյութը՝ նպատակահարմար ենք գտնում առանձնացնել հետևյալ եզրահանգումները՝

- քրեակատարողական հիմնարկների շենքային, կոմունալ և մյուս պայմանները հատվածաբար բարելավելու նկրտումներն ընդհանուր ոչինչ չունեն սահմանված միասնական իրավական չափանիշները երաշխավորելու հետ: Ըստ էության, այդ հիմնարկների մեծ մասը ի սկզբանե չեն նախատեսվել ազատազրկման վայրերի համար, այլ հետագայում են հարմարեցվել, ինչի արդյունքում սոսկ վերանորոգման ծրագրերով հնարավոր չէ ապահովել միասնական քաղաքականություն,
- հարկ է ոչ միայն ղեկավարվել ավանդական մոտեցումներով, այլև լրջորեն ներդնել արդի տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք զգալիորեն բարձրացնում են այդ հիմնարկների գործունեությունը և զերծ պահում համակարգն անհիմն ու անհարկի ծախսերից,
- անհարկի խոշոր քրեակատարողական հիմնարկները շահեկան չեն ինչպես դրանց խնամքի, այնպես էլ այդ համակարգի առջև դրված սոցիալ-հոգեբանական խնդիրների լուծման տեսանկյունից: Չպետք է անտեսել, որ խոշոր հիմնարկները ոչ թե ի սկզբանե եղել են իրենց արդարացրած կառույցներ, այլ սոսկ բոլորովին այլ նպատակների ծառայող նախկին կառույցներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Արդարադատության նախարարի հրաման. *«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին Արդարադատության N 348-L հրամանի հավելված»* 16.07.2018, https://www.irtek.am/views/act.aspx?aid=96842:
2. ՀՀ Արդարադատության նախարարություն. *«2020 թվականի ընթացքում ՔԿԾ համակարգում կատարված աշխատանքների հաշվետվություն»,* https://www.moj.am/storage/uploads/prob210216_Strategy_2020.pdf:
3. Եվրոպայի խորհուրդ. *«1987 թվականի Եվրոպական բանտային կանոններին կից բացատրական գրություն»* https://www.coe.int/hy/web/yerevan/home:
4. ՀՀ Կառավարություն. *«ՀՀ ԱՆ թիվ 1755-Ն որոշում»*. 21.10.2021, https://www.e-gov.am/gov-decrees/item/37157/:
5. ՀՀ Կառավարություն. *«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ ռազմավարության ծրագիր»* 28.11.2016 https://moj.am/page/620:
6. ՀՀ Կառավարություն. *«ՀՀ Քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թթ ռազմավարության ծրագիր».* 25.12.2018, https://www.e-draft.am/projects/385/about:
7. ՀՀ Կառավարություն. *«Քրեակատարողական հիմնարկների պատմությունը»*, https://www.penitentiary.am/Պատմություն:
8. *«ՀՀ քրեակատարողական օրենսգիրք»* 24.12.2004 https://www.arlis.am/documentview.aspx?docid=52053:
9. *«ՀՀ քրեակատարողական օրենսգիրք»* 15.06.2022 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164938:
10. *«ՀՀ քրեակատարողական ծառայության մասին օրենք»* 21.06.2020 https://www.arlis.am/documentview.aspx?docID=55538:
11. ՄԻԵԴ.*«Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի»* Գանգատ թիվ 34334/04 15.09.2010, http://www.irtek.am/views/act.aspx?aid=96904
12. ՄԻԵԴ. *«Դավթյանն ընդդեմ Հայաստանի».* Գանգատ թիվ 29736/06, 31.03.2015, http://www.irtek.am/views/act.aspx?aid=96903
13. ՄԻԵԴ.*«Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի»* Գանգատ թիվ 69939/10, 16.06.2019
http://www.irtek.am/views/act.aspx?aid=152278
14. ՄԻԵԴ. *«Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» Գանգատ թիվ* 31237/03, 04.05.2009, https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9261344_13.pdf
15. ՄԻԵԴ. *«Կարապետյանն ընդդեմ Հայաստանի»* Գանգատ թիվ 22387/05, 27.01.10 https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9293907_9.pdf
16. Luis Gargallo Vaamonde, *Development and destruction of the liberal prison system in Spain*, Spain 22.04.2019, https://www1.unicap.br/ojs/index.php/historia/article/view/1082/1256
17. The Guardian, Prisioners and Probation, article, *"Inside Halden, the most humane prison in the world"*, Amelia Gentleman, 18.06.2012. https://www.theguardian.com/society/2012/may/18/halden-most-humane-prison-in-world
18. Oxford University Press's, article, "Smaller prisons are smarter', David Skarbek, 07.09.2020. https://blog.oup.com/2020/09/smaller-prisons-are-smarter/

WORKS CITED

1. HH Ardaradatut'yan nakharari hraman. *«HH AN k'reakataroghakan tsarrayut'yan kanonadrut'yuny hastatelu masin Ardaradatut'yan N 348-L hramani havelvats»* 16.07.2018 [Order of the RA Minister of Justice. "*Appendix of the Order of Justice N 348-*

L on Approving the Statute of the Penal Service of the RA Ministry of Internal Affairs" 16.07.2018] (in Armenian) https://www.irtek.am/views/act.aspx?

2. HH Ardaradatut'yan nakhararut'yun. «*2020 t'vakani ynt'ats'k'um k'reakataroghakan tsarrayut'yan hamakargum katarvats ashkhatank'neri hashvetvut'yun»* [RA Ministry of Justice. "*Report of the Works Performed in the Penitentiary Service System during 2020*"] (in Armenian) https://www.moj.am/storage/uploads/prob210216_Strategy_2020.pdf

3. Yevropayi khorhurd. *«1987 t'vakani Yevropakan bantayin kanonnerin kits' bats'atrakan grut'yun»* [Council of Europe. "*Explanatory Note to the European Prison Rules 1987*"] (in Armenian) https://www.coe.int/hy/web/yerevan/home

4. HH Karavarut'yun. *«HH AN t'iv 1755-N voroshum».* 21.10.2021, *[RA Government. "Decision No. 1755-N of the Minister of Justice of RA".* 21.10.2021] (in Armenian) https://www.e-gov.am/gov-decrees/item/37157/

5. HH Karravarut'yun. *«Hayastani Hanrapetut'yan k'reakataroghakan yev probats'iayi volorti 2019-2023t't' rrazmavarut'yan tsragir»* 28.11.2016 [RA Government. "*2019-2023 Strategic Plan of the Penitentiary and Probation Sector of the Republic of Armenia"* 11/28/2016] (in Armenian) https://moj.am/page/620

6. HH Karravarut'yun. *«HH K'reakataroghakan hamakargum iravichaki barelavman npatakov 2018-2038 t't' rrazmavarut'yan tsragir».* 25.12.2018 [RA Government. "2018-2038 Strategy Program for the Improvement of the Situation in the RA Penitentiary System". 25.12.2018] (in Armenian) https://www.e-draft.am/projects/385/about

7. HH Karravarut'yun. *«K'reakataroghakan himnarkneri patmut'yuny»,* [RA Government. "*The History of Penitentiary Institutions*"] (in Armenian) https://www.penitentiary.am/History

8. «*HH k'reakataroghakan orensgirk'»* 24.12.2004 [" *Penitentiary Code of RA"* 24.12.2004] (in Armenian) https://www.arlis.am/documentview.aspx?docid=52053

9. *«HH k'reakataroghakan orensgirk'»* 15.06.2022 [" *Penitentiary Code of RA"* 15.06.2022] (in Armenian) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164938

10. *«HH k'reakataroghakan tsarrayut'yan masin orenk'* 21.06.2020 » ["*Law on Penitentiary Service of Armenia*" 21.06.2020] (in Armenian) https://www.arlis.am/documentview.aspx?docID=55538

11. MIYED. *Ashot Harut'yunyann ynddem Hayastani* Gangat t'iv 34334/04 15.09.2010 [ECHR. *Ashot Harutyunyan vs. Armenia* Complaint No. 34334/04 15.09.2010] (in Armenian) http://www.irtek.am/views/act.aspx?aid=96904

12. MIYED. *«Davt'yann ynddem Hayastani».* Gangat t'iv 29736/06, 31.03.2015. [ECHR. *"Davtyan against Armenia*". Complaint No. 29736/06, 31.03.2015.] (in Armenian) http://www.irtek.am/views/act.aspx?aid=96903

13. MIYED. «*T'adevosyann ynddem Hayastani*» Gangat t'iv 69939/10, 16.06.2019 [ECHR *"Tadevosyan v. Armenia"* Complaint No. 69939/10, 16.06.2019] (in Armenian) http://www.irtek.am/views/act.aspx?aid=152278

14. MIYED. *«Kirakosyann ynddem Hayastani»* Gangat t'iv 31237/03, 04.05.2009 [ECHR. *"Kirakosyan v. Armenia*" Complaint No. 31237/03, 04.05.2009] (in Armenian) https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9261344_13.pdf

15. MIYED. *«Karapetyann ynddem Hayastani»* Gangat t'iv 22387/05, 27.01.10 [ECHR. *"Karapetyan v. Armenia"* Complaint No. 22387/05, 27.01.10] (in Armenian) https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9293907_9.pdf

SOME CURRENT PROBLEMS OF RA PENITENTIARY INSTITUTIONS

VARDUHI SARGSYAN
Yerevan State University,
Faculty of Law, Master of Law;
RA Chamber of Advocates; Advocate,
Yerevan, The Republic of Armenia

The purpose of this article is to provide a comprehensive view of the current tasks of the penitentiary institutions of the Republic of Armenia. The paper is about the historical background of the penitentiary institutions of the Republic of Armenia, the existing problems and shortcomings of the re-socialization of prisoners and convicted persons in these institutions.

The paper examined twelve penitentiary institutions of Armenia, their structures, activities and obstacles to the execution of punishments as a result of these activities. The necessity of building penitentiary institutions provided for by the program of the strategy of the penitentiary and probation spheres of the Government of the Republic of Armenia for 2018-2038, shortcomings and possible obstacles aimed to improve the condition of arrested and convicted persons under the influence of these changes were analyzed. As a result of the need for the re-socialization of persons who have committed a crime, the inefficiency of large penitentiary institutions, organizational difficulties and difficulties of the reintegration of persons held in these institutions into society in terms of the implementation of the goals of punishment were discussed.

Within the framework of this article, both general scientific and jurisprudence-specific methods, such as methods of legal personality and system analysis, were used.

According to the results of the study, it was recorded that the legislation in force in Armenia regulating the activities of penitentiary institutions fully complies with international standards, but in practice there are no mechanisms for its application yet. Proposals/recommendations were made for the introduction of these mechanisms, the creation of new and small penitentiary institutions. The main changes in the new Penitentiary Code of the Republic of Armenia were also presented, and it was compared with the regulation of the previous code.

Keywords: *Criminal executive service, correctional institutions, re-socialization, execution of sentences, optimization, human rights, safety zones, conditions of punishment.*

НЕКОТОРЫЕ ТЕКУЩИЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНЫЕ УЧРЕЖДЕНИЙ РА

ВАРДУИ САРГСЯН
магистр юридического факультета
Ереванского государственного университета,
адвокат Палата адвокатов Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – дать всестороннее представление о текущих проблемах уголовно-исполнительных учреждений Республики Армения.

В статье сообщается об истории уголовно-исполнительных учреждений Республики Армения, о существующих проблемах и недостатках ресоциализации заключенных и осужденных в этих учреждениях. Были рассмотрены уголовно-исполнительные учреждения: их структуры, деятельность и препятствия, возникающие в процессе исполнения наказаний данной деятельности. Проанализированы необходимость и недостатки строительства пенитенциарных учреждений, предусмотренных стратегическим планом уголовно-исполнительной системы Республики Армения на 2018-2038 годы, и возможные препятствия, направленные на улучшение положения задержанных и осужденных под влиянием этих изменений.

В рамках данной статьи использовались как общенаучные, так и специфические для юриспруденции методы, такие как методы юридического сравнительного и систематического анализа.

Исходя из необходимости ресоциализации лиц, совершивших преступление, обсуждаются неэффективность и организационные трудности крупных пенитенциарных учреждений с точки зрения реализации целей наказания сложности реинтеграции в общество лиц, содержащихся в этих учреждениях.

По результатам исследования зафиксировано, что законодательство, регулирующее деятельность уголовно-исполнительных учреждений, действующих в Республике Армения, полностью соответствует международным стандартам, однако до сих пор отсутствуют механизмы его применения на практике. Внесены предложения по реализации этих механизмов, по созданию новых и малогабаритных пенитенциарных учреждений. Также были представлены основные поправки нового Уголовно-исполнительного кодекса, РА с которым сраваются настройки предыдущего кодекса.

Ключевые слова: *уголовно-исполнительная служба, исправительные учреждения, ресоциализация, исполнение наказаний, оптимизация, права человека, зоны безопасности, условия отбывания наказания.*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, РЕЦЕНЗИИ, REVIEWS

10.52063/25792652-2022.3.14-271

Թեհմինա Մարության. «Գրականագիտական ուսումնասիրություններ. Ա» (Ե., ՎՄՎ-ՊՐԻՆՏ հրատ., 2022թ., 303 էջ:



Գորիսի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ մասնագիտական շրջանակների և գրասեր ընթերցողի դատին է ներկայացվել երիտասարդ գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությանի «Գրականագիտական ուսումնասիրություններ. Ա» ժողովածուն (Ե., ՎՄՎ-ՊՐԻՆՏ հրատ., 2022թ., 303 էջ):

Թեհմինա Մարությանը նոր դեմք չէ ժամանակակից գրաքննադատության ասպարեզում՝ վերջին տարիներին գրական մամուլում նրա հրատարակած բազմաթիվ ուշագրավ հոդվածներն ու ուսումնասիրությունները զարմանք են հարուցում իրենց թեմատիկ ընտրությամբ, ստույգ ձևակերպված գիտական խնդրադրությամբ ու խորապես փաստարկված, հիմնավորված լուծումներով: Դրանք քննադատության ժամանակակից ընթացքի մեջ շահեկանորեն առանձնանում են գրականագետ-տեսաբանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ու իմացականությունը բնորոշող մասնագիտական յուրացումներով ու յուրօրինակ ձեռագրով:

Երկար տարիների աշխատանքի արդյունք սույն ժողովածուն, որ ըստ էության ամփոփում է ամենատարբեր ամսագրերում ու ժողովածուներում սփռված այդ հոդվածները, վաղուց սպասված էր ու անհրաժեշտ մի քանի առումներով: Նախ՝ այս ժողովածուն միատարր ու միօրինակ չէ իր քննության տեսադաշտով. գրականագետը, պահպանելով կառուցվածքային համաչափության օրենքները, իրար կողքի է դնում և քննության ենթարկում սփյուռքահայ գրողների ստեղծագործությունը՝ Սիմոն Սիմոնյան, Հակոբ Օշական, Կոստան Զարյան, ապա ներկայացնում սյունյաց գրողների հրաշալի փաղանգը, իր սիրո ու նոր որոնումների մեջ ստեղծում Ակսել Բակունցի մասին սքանչելի ասք- ուսումնասիրությունը, գրեթե անհամատեղելի թվացող նյութերի համադրությամբ ներկայացնում վերջին տարիների հայ գրականության Արցախապատումը: Թվում է, թե իրար հետ առանձնապես կապ չունեցող այս ուսումնասիրություններով հազիվ թե հնարավոր լիներ ստեղծել ընթացքի պատմություն, տալ գրական ժամանակի ամբողջական պատկերը, որը կբնորոշվեր գեղագիտական օրինաչափությունների և աշխարհայացքային-փիլիսոփայական համարժեքի հաշվառումով: Քննադատին հաջողվել է լուծել այս խնդիրը. իր քննության ենթարկած գրական գործերը՝ ամենատարբեր շերտերով, ենթատեքստերով ու իրացումներով, նա դիտարկում է գրականության նախորդող ընթացքի շարունակականության, չընդհատվող ժառանգորդական շղթայի մեջ՝ առավել բացորոշ տարբերակելով ընդհանրությունները, ապա՝ առանձնահատկությունները, վեր հանելով լույսերն ու լռության մատնված ստվերները: Անշուշտ, որոշ օղակներում մնացել է որոշակի կտրտվածության, պակասող դրվագների զգացողությունը, ինչը բնորոշ է հոդվածների գրեթե բոլոր ժողովածուներին, բայց անգամ այս պարագայում բոլոր հարցադրումների կենտրոնում ինքը՝ գրականագետն է՝

ժամանակի շունչը զգալու, ընթացքը նախանշելու իր կարողությամբ և, որ ամենակարևորն է ու առինքնողը՝ իր քաղաքացիական սթափ կերպարով ու նկարագրով: Անհրաժեշտ է արժանին մատուցել Թեհմինա Մարությանին՝ իր բարեխիղճ ու տքաջան աշխատանքի համար:

Թեհմինա Մարությանը ժողովածուն բաժանել է երկու մասի. առաջին բաժնում հոդվածներն են, երկրորդում՝ հրապարակումներն ու գրախոսությունները: Գիրքն ունի նաև ստվարածավալ ծանոթագրություններ:

Ժամանակակից հայ գրականության տեսությունն իր համապատկերի ամբողջության մեջ արդի գրաքննադատության խնդրադիր և կարևորագույն հարցերից է: Անշուշտ, հետանկախության տարիներին մեզանում կազմավորվել է մի ամբողջական ու ծանրակշիռ քննադատական ժառանգություն, որ զբաղվել ու շարունակում է զբաղվել գրական-ստեղծաբանական ընթացքի, ժամանակակից գրականության գեղագիտական ու տեսական- մեթոդաբանական դրույթների, գրական կենսոլորտի հիմնարար ու համակողմանի քննության, ժանրատեսության, ժանրային փոխակերպումների ու տրանսֆորմացիաների տարաբնույթ խնդիրներով: Չնայած այս ահռելի աշխատանքին՝ գրական, համապարփակ իմաստով՝ մշակութաբանական նոր տարածքի որոնումների վերաբերյալ գիտական գրականության սահմաններն առ այսօր կարծես դեռ հստակորեն ճշգրտված ու կանոնակարգված չեն՝ համապատասխան քանակական վերլուծություններով ու գրական ընթացքի իրողությունների հստակ ճանաչելի նշանների անվանումով: Բացթողումն ավելի ակնառու է դառնում, երբ տեսադաշտում են հայտնվում բազմաթիվ հետազոտողներ՝ իրենց սիրողական դիտարկումներով կամ, լավագույն պարագայում, էսսեիստական- ոչ մի գիտական համակարգ չհանդուրժող փորձարարություններով: Գրականության ընթացքի պատմությունը գիտականորեն հիմնավորված ու տեսականացված հանրագումար է ենթադրում:

Այս համաբնագրում հետաքրքիր ձևակերպում է տրված դոցենտ Թեհմինա Մարությանի ուսումնասիրության գիտական խնդրադրությանը՝ ներկայացնել իր հետաքրքրությունների շրջանակը ձևավորող հեղինակներից մի քանիսի ստեղծագործական որոնումների ընթացքը, նրանց ստեղծագործությունների գրականագիտական վերլուծությունը՝ դրանց մշակութաբանական, փիլիսոփայական համարժեքի մեկնության համալիր դաշտում: Անշուշտ, ասվեց, որ ժամանակային սահմանումով գրականագետի հայացքը մի փոքր լայն հորիզոն է ընդգրկում, նաև՝ Մովսես Բաղրամյան, Ալիշան, Կոստան Զարյան ու «Մեհյան», սակայն գրքի կոնցեպցիան հիմնականում արդի գրականության բնագիրը կազմակերպող բաղադրատարրերով է ամբողջանում, ուստի ժամանակային բնութագիրը, նշանը շարժվում է դեպի արդի շրջան:

Այստեղ նրա նախասիրած հեղինակները մի քանիսն են՝ Ակսել Բակունց, Սիմոն Սիմոնյան, Սերո Խանզադյան, Ալբերտ Իսաջանյան և էլի մեկ-երկուսը, որոնց ստեղծագործության նկատմամբ հետաքրքրությունը քննադատին ուղեկցել է մասնագիտական գործունեության ողջ ընթացքում:

Տարբեր դիտանկյուններից է Թեհմինա Մարությանը ընթերցում լիբանանահայ արձակագիր, հրապարակախոս ու պատմաբան Սիմոն Սիմոնյանի գրական արձակը: Քննության առանցքում Սիմոն Սիմոնյանի՝ առ այսօր Հայաստանի ընթերցողին գրեթե անծանոթ մի քանի գրքերի առթած հարցադրումներն են՝ հայոց պատմության ընկալումը, ցեղասպանության արտացոլումը, հայրենակորույս սասունցիների կերպարները և այլն: Գրականագետի նուրբ փորձառնությունը առաջին հայացքից ընդհանրական պատմություն չստեղծող նյութի մեջ տարանջատում է առաջնայինը երկրորդականից, դասդասում, կանոնակարգում է խնդիրները, առանձին պատումներով ներկայացնելով Սիմոն Սիմոնյանի գրականության աշխարհը, նրա նախասիրած թեմաները՝ իբրև շարունակություն կարոտի ու կորուսյալ եզերքի գրականության: Մարությանը հայոց կենսագրության այս ասքապատումի մեջ այնքան նրբազգաց ապրումակցությամբ է վերապրում Սիմոնյանի գեղարվեստական բնագիրը կազմավորող Ցավը, որ

միախառնված է անարդարության, զարհուրանքի ու կորստի զգացողությանը, այնքան վարպետորեն է գրում տառապանքի մասին, որ տարաշխարհիկ արձակագրի գեղարվեստական էջերում ըստ էության դարձել է երկրորդ ռեալությունը, սուբստանցը հայոց կենսագրության: Բայց ինչպես Սիմոն Սիմոնյանը, այդպես էլ նրան քննաբանող սյունեցի գրականագիտուհին երբեք չի տրվում ցավի մեղկությանն ու տառապանքի դառնաքաղցր թմբիրին. նա գրողի տողատակերում անընդհատ փիլիսոփայական ինքնաստուգման է ենթարկում մե՛ր, հայոց վերածնության ու գոյության հնարավորությունը՝ իբրև նշանակիր ու կառուցակազմիչ անուններ կարևորելով *տոհմ, գերդաստան, հայրենիք, ցեղասպանության մշակութաբանական գիտակցություն, սփյուռքահայ գրականություն, զարթոնքի սերունդ, ազգային հիշողություն* բառերը:

Հետազոտողը ամենայն մանրամասնությամբ քննության է առնում Սիմոն Սիմոնյանի առանձին գործերի՝ հիմնականում մեծածավալ կտավներ, ստեղծագործական հղացման նախադրյալներն ու կազմաբանական- գեղագիտական խնդիրները, դիպաշարային մի շարք «բաց կետեր», որոնք վերլուծության ընտրված համակարգում հնարավորություն են տվել նրան վերարժևորելու ազգային ինքնության երկփեղկվածության, կորուսյալ եսի ներփակ բնագրի գրողական մի քանի կիրարկումներ, սկզբունքային հարցադրումներ, որոնք ցայսօր խորությամբ չեն քննարկվել անգամ մասնագիտական շրջանակներում:

Այս խնդիրները Թեհմինա Մարությանը լուծում է գիտահետազոտական ավանդական և արդիական մեթոդների (պատմահամեմատական, զուգադրական, կառուցվածքային, հերմենևտիկական, միֆաքննադատական) միաժամանակյա, փոխհամակցված կիրառությամբ: Նման սինկրետիկ, համազուգակցված հետազոտական մեթոդի շնորհիվ են քննվում Ղևոնդ Ալիշան-Հակոբ Օշական առնչությունները՝ բացահայտելով ոչ միայն նոր կառուցակարգեր և ուսումնասիրում նոր շերտեր ալիշանյան գրական բնագրում, այլև բավարար հիմք ստեղծում այդ գեղարվեստական տեքստերի տիպաբանական, կառուցվածքային նորովի մեկնաբանության և մինչ օրս չդիտարկված առանձնահատկությունների բացահայտման համար:

Թեհմինա Մարությանը, ըստ էության, գրականության մեջ փնտրում է նախևառաջ նրա ազգային, այսպես կոչված պատմական- էթնիկական հատկանիշը՝ ուղիղ խնդրադրությամբ փորձելով աղերսներ հայտնաբերել երեկվա ու այսօրվա ժամանակները բնութագրող ազգային խնդիրների, հայոց ազգային կյանքի միջուկը ձևավորող և էքզիստենցիալ գոյաբանության ստորոգելին ճանաչելի դարձնող մի քանի իրողությունների միջև: Եթե պատմություն ու ազգային ճակատագիր, ապա ժողովածուի մեջ առանձնանում են Հայոց Արցախին, հինավուրց ու հայաբույր Շուշիին, Արցախյան հարցին վերաբերող հոդվածները, որոնց մեջ ստուգաբանված են բազմաթիվ հարցադրումներ՝ կապված առասպելական այդ հողի էթնիկական նախասկզբի, արցախցու քրիստոնեական աշխարհայացքի ու բնիկության հետ: Արցախահայության ճակատագիրը, ըստ գրականագետի, մի օր, պատմության խառնակ ժամանակներում, շեղվեց իր բնականոն ընթացքից, կատարվեց ողբերգական վրիպումը՝ ծանր փորձությունների ենթարկելով մի ամբողջ ժողովրդի: Թեհմինա Մարությանը, սակայն, իրար կապակցելով պատմության ընդհատված ժամանակները, վերլուծելով-ներկայացնելով հայ նորագույն գրականության Արցախապատումի մի քանի հրաշալի դրվագներ, համադրելով բազմաթիվ փաստեր, հաստատ ու աներեր հավատքով փաստում է, թե այդ սրբազան հողը պարուրված է մարդկային բանականության, հոգևոր ու նյութական ստեղծումների, էթնիկական հիշողությունների այնպիսի աուրայով (նոոսֆերա), որ իմաստուն նպատակաբանվածությամբ պարզապես ստեղծում է ինքն իրեն: Հողը, անկախ մեծապետական բոլոր արհավիրքներից, ապրում է նվիրական հիշատակներով ու իր վրա ապրող մարդկանցով: Սա է քննադատի աշխարհայացքային ելակետը

արցախյան հարցի վերաբերյալ, որ ճշգրտվում է պատմական փաստերով ու արխիվային բազմաթիվ նյութերով: Մեթոդաբանական տեսակետից սա հայոց համընդհանրական, մասերի չտրոհված պատմության գիտական ընթերցում է, որ գրքում ստանում է կոնցեպտուալ, հայեցակարգային նշանակություն:

Ահա այս կետում են հատվում «Գրականագիտական ուսումնասիրություններ» ժողովածուի գրականագիտական, ազգային-հոգեբանական, պատմափիլիսոփա-յական հոսքերը, մշակութաբանական բազմաթիվ հիմնարար հոսքեր՝ մի հետաքրքիր գիտական որակ ու խորքայնություն հաղորդելով գրքին:

Իրար հաջորդող հոդվածները հետաքրքիր անցումներ ունեն՝ Սերո Խանզադյանի մի քանի ստեղծագործությունների ընդհանրական բնութագրումներ, ըստ այդմ՝ ուրվագիծ խանզանդյանագիտության ձևավորման ու զարգացման, ապա Ղևոնդ Ալիշան- Հակոբ Օշական, Ակսել Բակունց ու Արկադի Ծատուրյան, պատմատեսական խնդրահարույց մի քանի հարցադրումներ: Կենտրոնում, միևնույնն է, ազգային հատկանիշն է՝ այդ միջուկից որոշարկվող տարաբնույթ զուգորդություններով: Այս հատկանիշը թերևս ունի համախմբող, համակարգված աշխարհայացքային կիզակետ: Այս սկզբունքով գրականագետը միաժամանակ համադրում է գրականության շարժման համընդհանրական ժամանակ և ազգային գրականության ժամանակ հասկացությունները՝ ոչ թե ավանդաբար ընդունված տրոհման, անջատումի նշանով, այլև հստակ եզրահանգմամբ, թե՝ գրականության ազգային չափանիշ հասկացությունը տեղային-ներփակ իրողություն չէ, այլ պատմական ու մշակութային համարժեք մեծություն այսպես կոչված ստեղծագործական դրույթների ու ընդհանրական, համամարդկային գաղափարների իրացման համաշխարհային չափանիշի նկատմամբ:

Խնդիրները դրված են գիտականորեն հստակ և ճշգրիտ՝ մեկ հեղինակի ստեղծագործական ընթացքով ցույց տալ մի ամբողջ ժողովրդի տիեզերական համաչափ գոյության ընթացքը, ֆիզիկական ու հոգևոր ինքնաստեղծման ժամանակը, ապա ձևակերպել դրա փիլիսոփայական հանրագումարը:

Բացառիկ գեղեցկության ու դրամատիզմի օազիս է գծում Ակսել Բակունցին նվիրված հոդվածը՝ վերնագրված «Կանայք Ակսել Բակունցի կյանքում և իբրև նախակերպարներ՝ ստեղծագործություններում»: Երևի սյունեցին, սյունյաց աշխարհի ողջ հմայքն ու խորությունը իր ներսում կրող գրականագետն այլ կերպ չէր կարող գրել Բակունցի մասին, քան դա անում է Մարությանը: Սա ավելին է, քան գրականագիտական հոդվածը: Իզուր չի, որ մասնագիտական բոլոր սահմանները խախտելով, վերևում այն անվանել եմ Բակունցի մասին ասք- պատում: Հիրավի, երիտասարդ գրականագետն այստեղ գեղարվեստական չքնաղ պատում է ստեղծում՝ անշուշտ, հենվելով բանասիրական ստվարածավալ նյութի ու փաստարկումների խորազնին ու հիմնավոր ուսումնասիրության վրա: Նա նուրբ դիտարկումներով փորձում է առանձնացնել այն հիմնական շերտերն ու մոտիվները, որոնք ոչ միայն արտացոլում են Բակունցի կենսապատումի ինչ-ինչ դրվագներ, այլ որոնց գեղարվեստական արձագանքը տեսնում է գրողի բացառիկ հետաքրքիր կերպարների հոգեբանական դրամայի, մենության և չստացված ճակատագրի պատմության, պատմումի մեջ: Ահա առաջին սիրո արձագանքները Թագուհի Սաֆրազբեկյանի կերպարում՝ զգացողությունները խորն են, գեղեցիկ ու իրական, իրական հեռանկարը՝ անտրիտուր ու անիրագործելի, ահա չքնաղ ու տարաշխարհիկ, աստվածային Խոնարհի նախատիպը՝ սյունյաց Լոր գյուղից Սուքիաս Առուստամյանի երրորդ դուստրը...: Ահա բուռն ու այնքան կենսախինդ, իրական Մարիամ Ասլամազյանը, հետո Ժենյա Գուզալյանը, ում համար մի օր, Հանրային գրադարանում, հոգու թախծության ու անսահման մտերմության մի պահի Ակսել Բակունցը կարդաց «Ալպիական մանուշակը»... Օ՜, երանելի Բակունց, երիցս երանելի կանայք, որ մի օր թրթիռ տվեցիք այս հանճարեղ, «անաստվածորե՛ն» հանճարեղ սյունեցու երազներին, ջերմություն՝ նրա գրչին, ու հայոց նորագույն գրականության ամենաչքնաղ էջերի

հերոսուհիները դարձաք: Զարմանալ կարելի է, թե Թեհմնիա Մարությանը ինչպես է կարողացել այս պատմության ողջ հմայքը փոխանցել:

Ինչևէ: Մեր նպատակից դուրս է հանրագումարի բերել գիտական ժողովածուի ողջ ասելիքը և հեղինակի առաջադրած բոլոր տեսակետները: Ասենք միայն, որ ուշագրավ դիտարկումներ կան նաև «Մեհյան» հանդեսի, Կոստան Զարյանի ու սևակագիտության արդի վիճակի, մեթոդական մի քանի խնդիրների առիթով:

Թեհմինա Մարությանը կատարել է գիտականորեն փաստարկված վերլուծություններ, ապա ներկայացրել դրանցից բխող արդյունքներն ու տրամաբանական եզրահանգումները: Այս իմաստով ժողովածուի գաղափարը լուծված է ըստ ձևակերպված խնդիրների և ընդհանրական բնագիր ստանալու հեղինակային մտադրության: Հետազոտողը միանգամայն տիրապետում է արդի գրականագիտության հիմնարար հարցադրումներին, ժամանակակից գործիքակազմին և ընթերցողին է ներկայացրել կառուցվածքային և տրամաբանական ամբողջականությամբ լիարժեք և գիտականորեն համակարգված ուսումնասիրություն: Գիրքն ունի ճիշտ ձևակերպված գիտական ապարատ՝ ծանոթագրություններն ու գրականության ցանկը կառուցված են ակադեմիական ընդունված չափանիշներով, ամբողջ ժողովածուն կազմված է բացառիկ խնամքով և բծախնդրությամբ: Ողջունելի է հոդվածների այս ժողովածուի ծնունդը, հուսանք, որ այն օգտակար կլինի մասնագետներին, ուսանողներին, կդառնա անհրաժեշտ ձեռնարկ գրականությամբ զբաղվող շատերի համար:

Ամփոփենք: Այս հպանցիկ դիտարկումներն անգամ վկայում են, որ կատարված է գիտական պատշաճ մակարդակի, հստակ համակարգված աշխատանք, ինչը մեզ հնարավորություն է տալիս խոսելու Թեհմինա Մարությանի միանգամայն արգասավոր ու խոստումնալից հետագա ճանապարհի մասին, որ այսուհետ ևս սպասվում է նրան գրականագիտության ասպարեզում:

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
siranush.margaryan.71@mail.ru

А. АВЧЯН, В. ВОСКАНЯН, Учебник талышского языка, Ереван, Издательство ЕГУ, 2022, 214 с.

10.52063/25792652-2022.3.14-276



Изданный в ЕГУ «Учебник талышского языка» (на армянском языке), авторами которого являются специалисты департамента иранистики ЕГУ проф., к.ф.н. В. Восканян и к.ф.н. А. Авчян, –первая попытка издания практического пособия для преподавания талышского языка в сфере высшего образования не только в Армении, но и за ее пределами, в том числе в таких странах, в которых традиционно существовали и до сих пор есть сильные центры иранистики, занимающиеся изучением и преподаванием северо-западных иранских языков (Россия, Германия, Франция и др.).

Кроме упомянутого выше, до сих пор не издано ни одного учебника и учебного пособия для преподавания талышского языка высшими учебными заведениями Азербайджана, во всей южной зоне которого проживает северная часть талышского народа[1]. Уместно также упомянуть, что этот народ также лишен возможности получать высшее, в том числе педагогическое образование по специальности «Талышский язык и талышская литература», которое необходимо для организации хотя и факультативного, но качественного обучения талышскому языку , даже в начальных школьных классах школы. И хотя завотделом по вопросам межнациональных отношений, мультикультурализма и религии администрации президента Азербайджана Этибар Наджафов в 2018 году заявил[2], что в Азербайджане есть 225 школ с талышским языком обучения (для I-IV классов), но в реальности преподавание талышского языка в начальных классах носит только формальный характер. Учебники, изданные в 90-е годы, не переиздаются, а уроки талышского языка либо вообще не проводятся, либо преподаются специалистами по другим предметам (физическая культура, изобразительное искусство и т.п.), которые не только не имеют необходимого образования для преподавания языка, но большинство из них не владеет элементарными основами данного языка и предмета. Фактически, система образования и вузы Азербайджана до сих пор не дают возможности получить высшее образование желающим специализироваться по специальности «Талышский язык и литература», чтобы обеспечить, в том числе и качественное преподавание талышского языка хотя быв 1-4 классах средней школы[3].

---

[1] Другая часть талышей живет в Иране, в основном в провинциях Ардебиль и Гилян на севере Ирана.

[2]Ləzgi dilində 108, talış dilində 225 məktəb var, *Azadlıq radiosu (Азербайджанская служба «Радио Свобода»)*, 26 декабря 2018 г., URL: https://www.azadliq.org/a/ləzgi-dilində-108-talış-dilində-225-məktəb-var-/29677115.html (дата обращения: 24.10.2022).

[3] Подробно см. «Позиционный документ о нынешнем состоянии талышского языка в Азербайджанской Республике и неотложные меры в этом направлении», который по случаю Международного дня родного языка 21 февраля 2020-го года представил азербайджанской общественности Общественный Совет Талышей Азербайджана (Statement by The Talysh Public Council of Azerbaijan in the Republic of Azerbaijan on current status of the Talysh language

Рецензируемый учебник состоит из предисловия (стр. 5-14), излагающего историю изучения талышского языка и различных талышских диалектов, введения (стр. 15-16), содержащего общие сведения о лежащем в основе учебнике северном литературном стандарте талышского языка и об особенностях фонетической модификации письменной системы, а также состоящего из 27 частей и написанного на основе описательных и прикладных методов языкознания основного корпуса (стр. 17-156), 2-х приложений (образцы глагольных парадигм) (стр. 157-161) и краткого словаря (стр. 162-206) из двух разделов (талышско-армянский и армянско-талышский).

Каждый из 27 уроков начинается с грамматического описания, продолжается кратким словарным списком, краткими талышскими текстами для чтения и перевода, и завершается практическими упражнениями для закрепления грамматики, включенной в данный урок. Переводы с армянского на талышский постепенно усложняются в каждом следующем разделе и достигают средней сложности в последних разделах учебника.

В учебнике успешно использован немецкий образцовый опыт прикладной иранистики, в данном случае прикладной лингвистики, получившей особенно широкое развитие со второй половины XX века. С точки зрения структуры рассматриваемый учебник идентичен хорошо известному учебнику афганского языка Манфреда Лоренца (см. Lorenz M., *Lehrbuch des Pashto (Afghanisch)*, Leipzig, VEB Verlag Enzyklopädie, 1979, 303pp.), и также пособию курдского языка Усо Барнаса и Йоханны Зальцера (см. Barnas U. & Salzer J., *Lehrbuch der kurdischen Sprache*, Eigenverlag, Wien, 1994, 320pp.).

В целом, издание этого учебника следует считать важным достижением армянской школы иранистики, которая на протяжении последних 2-3 десятилетий активно занимается научным изучением, т.е. историко-сравнительным и описательным исследованием языков и диалектов иранских, в том числе и проживающих в современном Азербайджане безгосударственных народов[1]. А сейчас открывается новый этап в отношении использования в виде вузовских учебников и учебных пособий части полученных результатов также и в прикладной области иранистики.

АРТЕМ ТОНОЯН
к.ф.н., доцент кафедры иранистики ЕГУ,
научный сотрудник Института Востоковедения НАН РА,
г. Ереван, Республика Армении
artyom.tonoyan@ysu.am

---

and requesting urgent measures in this direction, 21 February, 2021, URL: http://www.talish.org/publ/news_talysh/statement/1-1-0-50 (дата обращения: 24.10.2022), также Abilov A., *An alternative report (prepared by the Public Council of the Talysh People in Azerbaijan on implementation of CE Framework Convention for the Protection of National Minorities in the Republic of Azerbaijan for the protection of Talysh people, covering the period of 2016 – 2021 years)*, Baku, 2021, p. 9-10, URL: https://www.irfs.org/wp-content/uploads/2021/09/An-alternative-report.pdf (дата обращения: 24.10.2022),

[1] Полный список диссертаций по указанной тематике, защищенных сотрудниками и аспирантами кафедры иранистики ЕГУ в разные годы, см. Тоноян А., О некоторых методологических особенностях вузовского преподавания кавказского персидского (татского) языка, *Вопросы востоковедения*, № 16, 2019, Ереван, 153-160.

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության **«Գիտական Արցախ»** պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 4 անգամ:

«Գիտական Արցախ» պարբերականը զետեղված է www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրապարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված (անպայմանորեն պետք է նշված լինի, որ տպագրության է երաշխավորվում «Գիտական Արցախ» պարբերականում):

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.scientificartsakh.com կայքում ծանոթանան «Գիտական Արցախ» պարբերականի գիտական հրապարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկել խմբագրության էլեկտրոնային փոստին: Նյութի հրապարակման և հեղինակին «Գիտական Արցախ» պարբերականի 1 անվճար օրինակի տրամադրման համար գանձվող գումարը կազմում է՝ 1 էջը 2,000 ՀՀ դրամ:

Բոլոր հոդվածներն ունենալու են DOI միջազգային ստանդարտ համարներ:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլին **(հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը),** 2-րդ համարը՝ հուլիսին **(հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը),** 3-րդը՝ հոկտեմբերին **(հոդվածներն ընդունվում են մինչև հուլիսի 15-ը),** իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին **(հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 1-ը):**

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhlib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել www.scientificartsakh.com կայքի միջոցով կամ scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ Arial:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի ձախ

կողմում նշվում է հոդվածի ՀՏԴ-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է (են) հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) նշվում են աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է լինի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել **«Հիմնաբառեր»** և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որը պետք է ունենա ենթավերնագրեր: Տեքստի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են:

MLA ձևաչափում կիրառվում է ներտեքստային հղումների հեղինակ-էջ եղանակը: Համաձայն վերջինիս՝ հեղինակի ազգանունն ու համապատասխան աշխատանքի էջ(եր)ի համար(ներ)ը արտացոլվում են տեքստում, իսկ ամբողջական հղումը զետեղվում է գրականության (հղված աշխատանքների) ցանկի մեջ:

Հիմնական տեքստից հետո «WORKS CITED» բառակապակցության ներքո պարտադիր անհրաժեշտ է կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով, […] փակագծերում թարգմանել աշխատության վերնագիրը և հրատարակության վայրը, որից հետո (…) փակագծերում նշել բնագրի լեզուն, օրինակ.

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler’nayin Gharabagh. Adrbejani irakanacrac’ ceghaspanut’yan anatomian. Step’anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. “Jetnicheskie i regional’nye konflikty v Evrazii. Kn. 1. Central’naja Azija i Kavkaz, Moskva, [“Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Տառադարձումը կարող եք կատարել՝ օգտվելով www.translit.ru կայքից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ **Ավետիք Հարությունյանի** հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»

The journal **«Scientific Artsakh»** of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 4 times a year.

The journal **«Scientific Artsakh»** is posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal (it should be noted that the article is recommended for publication in the Journal «Scientific Artsakh»).

Before sending the article, the authors are obliged to familiarize themselves with the ethics of scientific publications of the journal «Scientific Artsakh» on the www.scientificartsakh.com website and strictly comply with it.

Once the article is accepted by the Editorial Board, the author is obliged to pay the amount provided for the publication of the article within 3 working days and send the scan of the payment order to the the Editorial Board e-mail. The cost of publishing and providing the author with one copy of the journal «Scientific Artsakh» is 2,000 AMD per 1 page.

All articles will have DOI International Standard Numbers.

The 1st issue is published in April **(articles are accepted until February 15),** the 2nd issue – in July **(articles are accepted until May 15),** the 3rd issue – in October **(articles are accepted until July 15),** and the 4th issue – in December **(articles are accepted until October 1).**

The articles published in the journal «Scientific Artsakh» are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent via the www.scientificartsakh.com website or to the scientific.artsakh@gmail.com e-mail, the mobile phone number and the address of the author's residence, indicating the index should also be stated.

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.
Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom)` 20 mm.
Volume: 7-20 pages (summary inclusive).
Text font: Armenian, English and Russian – Arial.
Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree,

title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (ամփոփում, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work containing subtitles with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB.

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References are required.

In the MLA format, the author-page method of intra-text links is used. According to the latter, the author's surname and the corresponding page(s) of the work are displayed in the text, and the full link is placed in the list of references (referenced works).

After the main text, under the phrase «WORKS CITED», it is mandatory to attach a Latin transliteration of the used literature presented in non-Latin letters, placing it in alphabetical order, in square brackets […] indicate the name of the work and the place of publication, after which in round brackets (…) the original language, for example:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)
2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Transliteration can be done by using www.translit.ru. website.

For more information, please contact the Editor-in-chief of the journal «Scientific Artsakh», Ph.D in Law, Associate Professor **Avetik Harutyunyan**, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал **«Научный Арцах»** общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 4 раза в год.

Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи,

рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью (обязательно должно быть отмечено, что статья рекомендуется к печати в журнале «Научный Арцах»).

Перед подачей статьи авторам предлагается ознакомиться с этикой научных публикаций журнала «Научный Арцах» на сайте www.scientificartsakh.com и неукоснительно следовать ей.

После принятия статьи редколлегией, автор обязан в течение 3 рабочих дней уплатить сумму, предусмотренную для публикации статьи, и выслать на электронный адрес редакции скан платежного поручения. Стоимость публикации и предоставления автору одного экземпляра журнала «Научный Арцах» составляет 2,000 драммов за 1 страницу.

Все статьи получат международные стандартные номера DOI.

1-ый номер публикуется в апреле **(статьи принимаются до 15-го февраля),** 2-ой номер – в июле **(статьи принимаются до 15-го мая),** 3-ий номер – в октябре **(статьи принимаются до 15-го июля),** а 4-ый номер – в декабре **(статьи принимаются до 1-го октября).**

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи следует присылать через сайт на адрес www.scientificartsakh.com или на электронную почту scientific.artsakh@gmail.com, при этом должен быть указан номер мобильного телефона автора и адрес проживания (с индексом).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее)` 20 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский, английский и русский – Arial.

Язык представления статей: армянский, английский, русский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (ամփոփում, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, дающий представление о нем без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы с подзаголовками кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть

выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB.

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны.

В формате MLA используется способ внутритекстовых ссылок автор-страница. При этом фамилия автора и страница (страницы) соответствующей работы (страниц) отображаются в тексте, а полная ссылка помещается в список цитируемых работ в конце статьи.

После основного текста под наименованием «WORKS CITED» обязательно приложить латинскую версию использованной литературы в латинской транслитерации и в алфавитном порядке, в скобках […] поместить переведенные на армянский язык название работы и место ее публикации, затем в скобках (…) обозначить язык оригинала, например:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. «Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, [«Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Транслитерацию можете осуществить, используя сайт www.translit.ru.

За дополнительной информацией можно обратится к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту **Аветику Арутюняну**, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(14), 2022

«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 4 անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The journal «Scientific Artsakh» is published four times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит четыре раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
Editor-in-Chief:
Главный редактор:

Ավետիք Հարությունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Գլխավոր խմբագրի տեղակալ,
հայերենի պատասխանատու
Deputy Editor-in-Chief,
Responsible for Armenian
Заместитель главного редактора,
Ответственный за армянский язык

Թեհմինա Մարության
Tehmina Marutyan
Теймина Марутян

Անգլերենի պատասխանատու՝
Responsible for English
Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերենի պատասխանատու՝
Responsible for Russian
Ответственный за русский язык

Ռուզաննա Սարգսյան
Ruzanna Sargsyan
Рузанна Саркисян

Պատասխանատու քարտուղար՝
Executive Secretary
Ответственный секретарь

Մհեր Շահինյան
Mher Shahinyan
Мгер Шагинян

Համակարգչային շարվածքը, ոճը,
տառաձևերը և էջադրումը՝
Computer set, style, font and layout
Компьютерный набор, стиль, шрифт
и верстка

«**Արցախ**» **հրատարակչության**
«**Artsakh**» **Publishing House**
Издательство «Арцах»

Շապիկի ձևավորումը՝
Cover design
Дизайн обложки

Արմինե Քոչարյանի
Armine Kocharyan
Армине Кочарян

Website: www.scientificartsakh.com;
www.aegmm.org, www.artsakhinstitute.org.
E-mail: scientific.artsakh@gmail.com, avetiq.hh@gmail.com.
Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 30.10.2022 թ.:
Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 17,75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 120 օրինակ:

Տպագրված է «ՄՀՄ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: